ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. ՏԱՐԻ ՏԱՐԵԳԻՐՔ ԹԻՒ 1



ՀՕԿ
ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀՕԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՕԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հրատարակելով ՎԵՐԵԼԸ, Ամերիկայի ՀՕԿ-ի Կեդրոնական Վարչութիւնն ու Տարեգրի յատուկ խմբագրութիւնը հաւատացած են, որ հիմնական պակաս մը կը լրացնեն գաղութահայ իրականութեան մէջ:

ՎԵՐԵԼԸ կոչուած է հանդիսանալ Խորհրդային Հայաստանի եւ Գաղութահայ իրականութեան արտայայտութիւնը՝ նպատակ ունենալով ամրացնել գաղութի եւ Խորհրդային Հայրենիքի կապը:

Լիակատար գործ մը հրապարակ դրած ըլլալու յաւակնութիւնը չունինք:

Տարեգիրք մը կը կազմուի եւ կը ձեւաւորուի ամբողջ տարւան մը ընթացքին: Բայց այդ չէր պարագան ՎԵՐԵԼԻ նկատմամբ: Մեր առաջ դրուած հարցն էր գեղեցիկ հրատարակութիւնով մը յաւերժացնել Խորհրդային Հայաստանի Յաղթական 15-րդ Տարեդարձը եւ Ամերիկահայ ՀՕԿ-ի հիմնարկութեան 10-ամեակը: Այդ պատճառով ալ խմբագրութիւնս չափազանց քիչ ժամանակ, մանաւանդ շատ ուշի սահմանափակ հնարաւորութիւն ունէր Տարեգրքի յառաջադրութիւնները լիովին իրագործելու:

ՀՕԿ-ի Կեդրոնական վարչութիւնն ու Տարեգրի խմբագրութիւնը հաւատացած են, որ վերելքի հրատարակութիւնը մեծ ոգեւորութիւն պիտի ստեղծէ ամեն տեղ՝ որպէս Խորհրդային Հայաստանեան շարժման մէկ խոշոր եւաճումը: ՎԵՐԵԼԸ որպէս Տարեգիրք, հետեւաբար որպէս մնայուն հաստատութիւն մը, հնարաւորութիւն պիտի ունենայ իր շուրջ համախմբելու Խորհրդային Հայաստանի եւ գաղութներու լաւագոյն ուժերը:

ՎԵՐԵԼԻ համար որպէս Ամերիկահայ Տարեգիրք, շատ կարեւոր էր պատկերել մեր գաղութի իրականութիւնը: Այդ գործը առաւելապէս եւ ճեռնահասօրէն կրնան կատարել «Բանւոր»ի թղթակիցները:

ՎԵՐԵԼԻ Բ. Տարին այժմէն պէտք է սկսինք խմբագրել:

Կը հրաւիրենք ՎԵՐԵԼԻ յառաջադրութիւններուն կողմնակից բոլոր ուժերը իրենց աշխատակցութիւնը բերել Տարեգրքի յաջորդ հատորին: Կը հրաւիրենք Խորհրդային Հայաստանի հանդէպ բարեկամականօրէն տրամադրուած բոլոր կազմակերպութիւնները, Խորհրդային շինարարութեան սատարող բոլոր հաստատութիւնները՝ իրենց պատուաւոր տեղը գրաւել ՎԵՐԵԼԻ յաջորդ հրատարակութեան մէջ:

VERELK
31 EAST 27th STREET, ROOM 56
NEW YORK, N. Y.
U. S. A.

Մեր մեծ հայրենիքը

Ի. ՍՏԱԼԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԸՆԹԱՑԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱՌ — ԽՕՍԻԱԾ ՍՏԱԽԱՆՈՎԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ)

ՄՈՍԿՎԱ, ՆՈՅԵՄԲԵՐ 17, 1935

1.— Ստախանովեան Շարժման Նշանակութիւնը

Ստախանովեան շարժումը չի կրնար նկատուիլ բանուորներու եւ բանուորուհիներու սովորական շարժում մը: Ստախանովեան շարժումը բանուորներու եւ բանուորուհիներու այնպիսի շարժում մըն է, որ մեր Սոցիալիզմի կառուցման պատմութեան փառաւոր մէկ էջը պիտի կազմէ:

Ի՞նչ է Ստախանովեան շարժման նշանակութիւնը: Այդ կը կայանայ գլխաւորաբար այն լուծութեան մէջ, որ ան արտայայտութիւնն է Սոցիալիստական մրցակցութեան նոր ծաւալումին: Սոցիալիստական մրցակցութեան նոր եւ աւելի բարձր փուլն է այդ:

Ինչո՞ւ նոր է ու ինչո՞ւ աւելի բարձր փուլն է այդ: Որովհետեւ Ստախանովեան շարժումը Սոցիալիստական մրցակցութեան մէկ արտայայտութիւնն է, որ առաջնութեան իմաստով կը տարբերի Սոցիալիստական մրցակցութեան հին փուլէն:

Անցեալին, մօտ 3 տարի առաջ, Սոցիալիստական մրցակցութեան առաջին փուլին, Սոցիալիստական մրցակցութիւնը ոչ անհրաժեշտօրէն կապուած էր տեխնիկայի հետ: Աւելին, այդ ժամանակ, հասատատպէս խօսելով, դժուար թէ նոր տեխնիկա գոյութիւն ունէր: Յամենայն դէպս, Սոցիալիստական մրցակցութեան ներկա փուլը—Ստախանովեան շարժումը— ընդհակառակը անհրաժեշտօրէն կապուած է նոր տեխնիկայի հետ: Առանց նոր, աւելի բարձր տեխնիկայի կարելի չէ Ստախանովեան շարժման մասին մտածել անգամ:

Ձեր առաջ կանգնած են ընկերներ Ստախանովի, Բուսիգինի, Սմետանինի, Կրիվոնոսի, Պրոնինի, Վինոգրատովաների պէս մարդիկ եւ չատ մը ուրիշներ, նոր մարդիկ, բանուորներ եւ բանուորուհիներ, որոնք լծուին տերացած են իրենց գործի տեխնիկային, տերքաւորած են այդ տեխնիկան եւ գայն առաջ մղած: Երեք տարի առաջ մենք այսպիսի մարդիկ չունէինք, կամ հազիւ թէ ունէինք: Առնք նոր եւ մանաւանդ տիպի մարդիկ են:

Հին Տեսակէտները Կը Խորտակուին

Ստախանովեան շարժումը բանուորներու եւ բանուորուհիներու այնպիսի շարժում է, որ իր համար նպատակ կը յառաջդրէ գլխ անցնիլ տեխնիկական ներկա չափանիշները, գլխ անցնիլ գոյութիւն ունեցող ծրագրուած կարելիութիւնները, գլխ անցնիլ գոյութիւն ունեցող արտադրութեան



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ
Գործ՝ ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲԵԱՆԻ

պլաններն ու պլանները: Գլխ ու անգնիլ պահանջք, որովհետեւ այդ չափանիշները մեր օրերուն արդէն հնացած են մեր նոր ժողովուրդին համար:

Այս շարժումը կը խորտակէ հին տեսակէտները տեխնիկայի նկատմամբ: Կը խորտակէ տեխնիկայի հին չափանիշները, ծրագրուած հին կարելիութիւնները, արտադրութեան հին պլանները, եւ կը պահանջէ ստեղծել նոր եւ աւելի բարձր տեխնիկական չափանիշներ, ծրագրուած, արտադրութեան պլաններ: Անոր նպատակն է յեղափոխութիւն մը առաջացնել մեր արդիւնաբերութեան մէջ: Այս իսկ պատճառով Ստախանովեան շարժումը իր էութեամբ խորապէս յեղափոխական է:

Ստախանովեան շարժումը կը ներկայացնէ աշխատանքի բարձր ներդործութեան տեսակ մը, զոր

մեայն սոցիալիզմը կրնա իրագործել եւ կապիտալիզմը չի կրնար իրագործել:

Ինչո՞ւ կապիտալիզմը պարտութեան մատնեց եւ յաղթահարեց աւատապետութիւնը: Որովհետեւ ան առիթ ծնաց աշխատանքի արտադրականութեան աւելի բարձր չափանիշներ. հնարաւոր դարձուց հասարակութեան համար ստանալ անթափառելիօրէն աւելի շատ արտադրութիւն քան ան կը ստանար աւատապետական սիստեմի տակ: Որովհետեւ ան հասարակութիւնը աւելի հարստացուց:

Ինչո՞ւ համար Սոցիալիզմը կրնա պարտութեան մատնել, պէտք է պարտութեան մատնէ եւ անխուսափելիօրէն պիտի պարտութեան մատնէ տնտեսութեան կապիտալիստական սիստեմը: Որովհետեւ ան կրնա աշխատանքի աւելի բարձր օրինակներ տալ, կրնա աշխատանքի աւելի բարձր արտադրութիւն տալ քան տնտեսութեան կապիտալիստական սիստեմը: Որովհետեւ ան հասարակութեան կրնա տալ աւելի արտադրութիւն, եւ հասարակութիւնը դարձնել աւելի ունեւոր քան տնտեսութեան կապիտալիստական սիստեմը:

Ոմանք կը խորհին, որ սոցիալիզմը կրնա հիմնաւորել նիւթական որոշ հաւասարութիւն հասարակութեան մարդոց միջեւ— հիմնած ապրելու խեղճ չափանիշներու վրա: Այդ ճիշտ չէ: Այդ սոցիալիզմի մանրաբուրժուական ըմբռնումն է:

Պէտք է Դիմազանցել Կապիտալիզմը

Իրապէս սոցիալիզմը կրնա յաղթանակել աշխատանքի բարձր արտադրականութեան հիման վրա, աւելի բարձր քան կապիտալիզմի ներքեւ, արտադրութեան առատութեան եւ ամեն տեսակ սպառման առարկաներու արտադրութեան հիման վրա, հասարակութեան բոլոր անդամներու ունեւոր եւ կուլտուրական կեանքի հիման վրա:

Բայց որպէսզի սոցիալիզմը կարենա այս նըպատակին հասնիլ եւ մեր խորհրդային հասարակութիւնը դառնա ամենաունեւորը, անհրաժեշտ է ունենալ երկրի մէջ աշխատանքի այնպիսի արտադրականութիւն, որ գերազանցէ ամենաառաջաւոր կապիտալիստական երկիրներու աշխատանքի արտադրականութիւնը: Առանց ասոր չի կրնար հարց ըլլալ առատ արտադրութեան եւ սպառման ամեն տեսակ առարկաներու արտադրութեան:

Ստախանովեան չարժման նշանակութիւնը կը կայանա այն իրողութեան մէջ, որ անիկա կը խորտակէ տեխնիկական չափանիշները որպէս անթափառ, չատ մը պարագաներուն մէջ կը գերազանցէ ամենաառաջաւոր կապիտալիստական երկիրներու աշխատանքի արտադրականութիւնը եւ այսպիսով կը բանա մեր երկրի մէջ Սոցիալիզմի ալ աւելի հմայուցման կարելիութիւնը, մեր երկիրը ամենաբարեկեցիկ երկրի վերածելու կարելիութիւնը:

Բայց Ստախանովեան չարժման նշանակութիւնը այսքանով չի սպառիր: Անոր նշանակութիւնը կը կայանա ալ աւելի այն իրողութեան մէջ, որ Սոցիալիզմէն Կոմունիզմին անցնելու պայմանները կը պատրաստէ:

Սոցիալիզմի սկզբունքն այն է, որ Սոցիալիստական հասարակութեան մը մէջ ամեն մէկ բանուոր կը գործէ իր կարողութեան համաձայն եւ կը ստանա սպառման առարկաները ոչ թէ իր կարիքներու, այլ այն գործի համաձայն, զոր ան կատարած է հասարակութեան համար: Այս կը նշանակէ, որ բանուոր դասակարգի կուլտուրական եւ տեխնիկական մակարդակը ակաւին բարձր չէ, որ տակաւին դոյութիւն ունի հակադրութիւն մտային եւ ֆիզիքական աշխատանքի միջեւ, որ աշխատանքի արտադրականութիւնը բաւականաչափ բարձրը չէ ապահովելու սպառման առարկաներու առատութիւն մը, որու հետեւանքով հասարակութիւնը պարտադրւած է բաշխել սպառման առարկաները ոչ թէ համաձայն հասարակութեան անդամներու կարիքներուն, այլ համաձայն այն գործին, որ անոնք կը կատարեն հասարակութեան համար:

Կոմունիզմը Զարգացման Աւելի Բարձր Փուլն է

Կոմունիզմը կը ներկայացնէ զարգացման աւելի բարձր փուլը: Կոմունիզմի սկզբունքն այն է, որ կոմունիստական հասարակութեան մը մէջ, ամեն մէկը կը գործէ իր կարողութեան համաձայն, եւ կը ստանա սպառման առարկաներ, ոչ թէ համաձայն իր կատարած գործի, այլ համաձայն կարիքներու, զորս ան ունի որպէս կուլտուրապէս զարգացած մարդ:

Ոմանք կը խորհին, որ մտային եւ ֆիզիքական աշխատանքի հակադրութիւնը կարելի է ջնջել կուլտուրական եւ տեխնիկական որոշ հասնարելցում ստեղծելով մտային եւ ֆիզիքական աշխատանքի բանուորներու միջեւ, իջեցնելով ճարտարագէտներու եւ տեքնիսիէններու կուլտուրական ու տեխնիկական մակարդակը միջին որակի բանուորներու մակարդակին:

Այս կը նշանակէ, որ բանուոր դասակարգի կուլտուրական եւ տեխնիկական մակարդակը բաւականաչափ բարձրացած է յաղթահարելու համար հակադրութիւնը մտային եւ ֆիզիքական աշխատանքի միջեւ, որ մտային եւ ֆիզիքական աշխատանքի միջեւ եղած տարբերութիւնը անհետացած է, մինչդեռ աշխատանքի արտադրականութիւնը բարձրացած է այնպիսի բարձր մակարդակի մը, որ անիկա կրնա ապահովել սպառման առարկաներու լիովին առատութիւնը, որու հնարաւոր հասարակութեան համար հնարաւոր կը դառնա բաշխել այս առարկաները համաձայն իր անդամներու կարիքներուն:

Ասիկա ճիշտ չէ: Միայն մանրաբուրժուա թեթեւսոլիկները կոմունիզմի մասին այսպէս կրնան մտածել:

Իրապէս, մտայնի եւ ֆիզիքական աշխատանքի միջեւ զոյութիւն ունեցող հակադրութիւնը կրնա ջնջուիլ՝ միայն բանւոր դասակարգի կուլտուրական եւ տեխնիկական մակարդակը ճարտարագէտներու եւ տեխնիկիչներու մակարդակին բարձրացնելու հիման վրա:

Ծիծաղելի է երեւակայել, որ այսօրուան վերելք անիրականանալի է: Ասկա լիովին կարելի է Խորհրդային սիստեմի պայմաններու մէջ, ուր երկրի արտադրական ուժերը ազատագրած են կապիտալիմի կաշկանդումներէն, ուր աշխատանքը ազատագրած է չահագործման ճնշումէն, ուր բանւոր դասակարգը իշխանութեան տիրացած է, ուր բանւոր դասակարգի երթեւեկող սերունդը բոլոր կարելիութիւններն ունի տիրապետելու բաւարար տեխնիկական դաստիարակութեան:

Նոր Յառաջդիմացի Սիստեմը

Այս կապակցութեամբ, Ստախանովեան չարժումը ուշագրաւ է այն իմաստով, որ անիկա կը պարունակէ առաջին սկզբնաւորութիւնը, տակաւին թոյլ, ճիշտ է, բայց այնուամենայնիւ մեր երկրի բանւոր դասակարգի կուլտուրական ու տեխնիկական վերելքի սկզբնաւորութիւններն են:

Եւ իրապէս նայեցէք Ստախանովեան ընկերներու վրա: Ի՞նչպիսի մարդիկ են անոնք: Անոնք մեծ մասամբ բանւորներ եւ բանւորուհիներ են, երիտասարդ կամ միջին տարիքի մարդիկ, հաստատուն տեխնիկական պատրաստութեամբ դաստիարակուած մարդիկ, որոնք ղէպի գործը ճշտութեան եւ ուշադրութեան օրինակներ կուտան, ընդունակ՝ որոշելու ժամանակի արժէքը որպէս գործօն իրենց աշխատանքի մէջ, եւ որոնք սորված են հաչուել ժամանակը ոչ միայն վայրկեաններով, այլ երկվայրկեաններով:

Անոնց մեծամասնութիւնը անցած է արդէն այսպէս կոչուած տեխնիկական նուազագոյնը, եւ կը չարունակէ հարստացնել իր տեխնիկական դաստիարակութիւնը: Անոնք զերծ են որոշ ճարտարագիտներու, տեքնիսիէններու եւ գործի վարիչներու պահպանողականութենէն եւ անչարժութենէն:

Անոնք Ճանապարհը Բացին

Անոնք խիտ խօրհուրդներ առաջ կը քաչեն, խորտակելով ժամանակավրէպ տեխնիկական չափանիշները եւ սահմանելով նոր եւ աւելի բարձր չափանիշներ: Անոնք ճշտումներ կը կատարեն ծրագրուած կարելիութիւններու եւ անտեսական պլաններու մէջ, որոնք պատրաստուած էին մեր արդիւնաբերութեան դեկավարներու կողմէ: Ցածախ անոնք կը լրացնեն եւ կը սրբագրեն ճարտարագիտներն ու տեքնիսիէնները: Ցածախ անոնք վերջիններուն կը սորվեցնեն եւ առաջ կը մղեն զանոնք: Ասոնք այն մարդիկն են, որ զարճած են իրենց գործի տեխնիկական վարպետները եւ ընդունակ են քամելու տեխնիկայէն կարելի առաւելագոյնը:

Այսօր տակաւին թուով քիչ են Ստախանովեանները, բայց ո՞վ կրնա կասկածիլ, որ վաղը պիտի տասնապատիկի անոնց թիւը: Պարզ չէ՞ միթէ որ Ստախանովեանները մեր արդիւնաբերութիւնը արդիականացնողներն են, որ Ստախանովեան չարժումը կը ներկայացնէ մեր արդիւնաբերութեան ապագան, որ անիկա կը պարունակէ բանւոր դասակարգի ապագա կուլտուրական եւ տեխնիկական մեկ ճանապարհը, որով կարելի է հասնիլ աշխատանքի արտադրականութեան այն բարձր արդիւնքներուն, որոնք անհրաժեչտ են Սոցիալիզմէն կոմունիզմ անցնելու եւ մտայնի ու ֆիզիքական աշխատանքի միջեւ զոյութիւն ունեցող հակադրութիւնը ջնջելու:

Այսպէս է, ընկերներ, մեր Սոցիալիստական չինարարութեան մէջ Ստախանովեան չարժման նշանակութիւնը:

Ստախանովը եւ Բուսիգինը կը մտածէի՞ն Ստախանովեան չարժման մեծ նշանակութեան մասին, երբ անոնք գործի անցան խորտակելու տեխնիկայի հին չափանիչները: Անչուչտ անոնք չէին մտածեր: Անոնք իրենց սեփական հոգերն ունէին —անոնք կը ջանային իրենց ձեռնարկութիւնը դուրս բերել արտադրական ընկերումէն եւ գերակատարել անուեական պլանները:

Բայց ձգտելով դէպի այս նպատակակէտը, անոնք պիտի ճղէին տեխնիկական հին չափանիչները եւ պիտի զարգացնէին ամենաառաջաւոր կապիտալիստական երկիրները գերազանցող աշխատանքի արտադրականութիւնը: Բայց ծիծաղելի պիտի ըլլար մտածելն անգամ, որ այս հանգամանքը ամենադոյն չափով իսկ կրնա նւազեցնել Ստախանովեան չարժման պատմական մեծ նշանակութիւնը: Նոյնը կարելի է ըսել այն բանւորներու նկատմամբ, որոնք 1905–ին մեր երկրի մէջ առաջին անգամ ըլլալով կազմեցին բանւորական պատգամաւորներու Խորհուրդները:

Անչուչտ անոնք չէին մտածեր, որ բանւորական պատգամաւորներու Խորհուրդները պիտի ծառայէին որպէս հիմք Սոցիալիստական սիստեմի համար: Անոնք միայն ինքզինքին կը պաչտպանէին ցարիզմի դէմ, բուրժուազիայի դէմ, կազմակերպելով բանւորական պատգամաւորներու Խորհուրդներ: Բայց այս հանգամանքը ոչ մէկ կերպով չի փոխեր այն անառարկելի իրողութիւնը, թէ բանւորական պատգամաւորներու խորհրդային չարժումը, որ սկսած էր 1905–ին Լենինգրատի եւ Մոսկվայի բանւորներու մէջողով, վերջ ի վերջո առաջնորդեց կապիտալիզմի կործանման եւ աչխարհի մէկ վեցերորդի վրա Սոցիալիզմի յաղթանակին:

2—Ստախանովեան Շարժման Արմատները

Ամէնէն առաջ, մենք մեծապէս ապաւորեցանք այն իրողութեամբ, որ այս շարժումը սկսաւ ինքնաբերաբար, առանց մեր ձեռնարկութիւններու վարիչներու կողմէ ուէ ճնշումի:

Եւ նոյնիսկ աւելին: Այս շարժումը ծնունդ առաւ եւ սկսաւ զարգանալ մինչեւ որոշ աստիճան հակառակ մեր ձեռնարկութիւններու վարիչներու ցանկութեան, մինչեւ անգամ պայքարելով անոնց ցանկութեան դէմ:

Եւ հենց այն պատճառով որ Ստախանովեան շարժումը ծնունդ առած էր ինքնաբերաբար, հենց այն պատճառով, որ անիկա կուգա վարէն, անիկա արդի ժամանակներու ամենակենսունակ եւ անպարտելի շարժումն է:

Շարժումը Լիովին Հասունցած Է

Պէտք է յիշատակել Ստախանովեան շարժման մէկ ուրիշ յատկանիշն եւս: Այս յատկանշական հանգամանքը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ Ստախանովեան շարժումը տարածուեցաւ մեր Միութեան մէկ ծայրէն միւսը, ոչ թէ աստիճանաբար, այլ աննախընթաց արագութեամբ, փոթորկի պէս:

Ի՞նչպէս խնդիրն սկսաւ: Ստախանով աշխատի արագութեան տեխնիկական չափանիշը բարձրացուց հինգէն վեց անգամ, եթէ ոչ աւելի: Բնաւորիշն եւ Ամեանախն նոյնը ըրին, մէկը մեքենաշինութեան եւ միւսը կօշիկի արտադրութեան մէջ: Թերթերը արձանագրեցին այս իրողութիւնները: Եւ յանկարծ Ստախանովեան շարժման բոցերը պատեցին ամբողջ երկիրը:

Կառուցք Աւելի Երջանիկ Է Մեզ Մօտ

Ի՞նչպէս կը բացատրուի այն իրողութիւնը, որ Ստախանովեան շարժումը հանդէս եկաւ որպէս լիովին հասունցած երեւոյթ: Ի՞նչ է պատճառը, որ անիկա այսքան արագօրէն կը ծաւալի: Որո՞նք են Ստախանովեան շարժման արմատները:

Առնուազն չորս պատճառներ կան:

1.—Ամէնէն առաջ բանւորներու նեւթական կացութեան մէջ տեղի ունեցած արմատական բարւոքումը ծագեցից օրսէն հիմք Ստախանովեան շարժման: Աւելի լաւ են ապրելու պայմանները, բնականաբար: Կանոքը զարձած է աւելի երջանկաւէտ մեզ մօտ: Եւ երբ երջանիկ կապրիս, գործը արագաթափ առաջ կընթանայ: Այսուհէն կը յառաջանայ արտադրութեան չափանիշներու բարձրացումը: Այսուհէն կը յառաջանան աշխատանքի հնարանքն ու հնարամիջոցները: Այսուհէ պէտք է վերադարձ Ստախանովեան շարժման արմատները:

Եթէ մեր երկրի մէջ ճգնաժամ ըլլար, եթէ մենք անգործութիւն ունենայինք, բանւոր դասակարգի այդ մտքանը, եթէ մեր ժողովուրդը ապրէր վատ պայմաններու տակ, եթէ անոնց կեանքն ըլլար զրաժան եւ անհրապոյր, այսպէս չէր կրնար գոյութիւն ունենալ Ստախանովեան շարժումը:

Մեր պրոլետարական յեղափոխութիւնը միակ յեղափոխութիւնն է աշխարհի վրայ, որ կրցաւ ցոյց տալ ժողովուրդին ոչ միայն իր քաղաքական հաւասարութիւնը, այլեւ նեւթական հետեւանքները: Բանւորական յեղափոխութիւններու մէջ մենք ծանօթ է միայն մէկը, որ տիրացաւ իշխանութեան որոշ չափով միայն: Այդ Պարիզի Կոմունան էր: Բայց անիկա երկար չտեւեց: Ձիշտ է, անիկա փորձեց կոտրել կապիտալիզմի շղթաները, բայց անիկա չյաջողեցաւ, անիկա աւելի նեղ յաջողացաւ յեղափոխութեան նեւթական փայլուն հետեւանքները ցոյց տալու գործի մէջ:

Մեր յեղափոխութիւնը միակն է, որ ոչ միայն կոտրեց կապիտալիզմի շղթաները եւ ազատագրեց ժողովուրդը, այլ յաջողացաւ ժողովուրդին տալ բարգաւաճ կեանքի նեւթական պայմաններ: Ասոր մէջ կը կայանայ մեր յեղափոխութեան ուժեղութիւնն ու անպարտելիութիւնը: Լաւ է, անշուշտ, երկրէն վտարել կապիտալիստները, վտարել կալւածատէրները, վտարել ցարի սպասարկուները, պրաւել իշխանութիւնը եւ տիրանալ ազատութեան:

Ասիկա չատ լաւ է: Բայց դժբախտաբար միայն ազատութիւնը չատ հեռու է գոհացուցիչ ըլլալէ: Եթէ կա հացի պակասութիւն, կարագի եւ իւղի պակասութիւն, հնաւանդեղէնի պակասութիւն, եթէ բնակարանային պայմանները վատ են, չես կրնար միայն ազատութիւնով չատ հեռուն երթալ: Շատ դժւար է, ընկերներ, միայն ազատութիւնով ապրիլ:

Կարենալ երջանիկ եւ լաւ ապրելու համար, քաղաքական ազատութեան արշաւքները, պէտք է լրացուին նեւթական արշաւքներով:

Մեր յեղափոխութեան առանձնայատուկ նկարագիրն այն է, որ անիկա ոչ միայն ազատութիւն տուաւ, այլ ժողովրդին տուաւ նեւթական բարիքներ, տուաւ կուլտուրական եւ ունեւոր կեանքով:

Ահա թէ ինչո՞ւ մեր երկրի մէջ կեանքը զարձաւ կենսուրախ եւ Ստախանովեան շարժումը ահեցաւ:

2.— Ստախանովեան շարժման երկրորդ պատճառը, չահագործման խպտան բացակայութիւնն է մեր երկրի մէջ: Մեր ժողովուրդը չի գործեր շահագործողներու համար եւ չի գործեր հարստացնելու համար մակաբոյծները, այլ կը գործէ իր համար, իր սեփական խորհրդային հասարակութեան համար, ուր բանւոր դասակարգի լաւագոյն մարդիկը իշխանութեան գլուխն են:

Այս պատճառով ալ աշխատանքը մեր երկրի մէջ հասարակական նշանակութիւն ունի: Աշխատանքը պատուո եւ փառքի գործ է:

Կապիտալիզմի տակ աշխատանքը անհատական բնոյթ ունի: Եթէ դու աւելի կը չահիս, կը հարստանաս աւելի եւ կապրիս ինչ ձեւով որ դու ինքդ կը

կամենաս: Ոչ ոք պիտի քու մասին եւ ոչ ալ կուզէ պահապ: Դուն կաշխատիս կապիտալիստներու համար, դուն կը հարստացնես զանոնք: Ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ: Անոնք վարձած են քեզ, որպէս զի հարստացնես շահագործողները:

Եթէ ասոր չես համաձայնիր, գնա մէացիր անգործներու բանակին եւ սովահար եղիր ինչ ձեւով որ կուզես: Կապիտալիստները պիտի գտնեն ուրիշներ, որոնք աւելի համակերպող են: Ահա թէ ինչո՞ւ մարդկային աշխատանքը բարձր չի գըներ կապիտալիզմի տակ: Պարզ է, որ այսպիսի պայմաններու տակ չկրնար տեղ ըլլալ Սոսիալիստական չարժման համար: Յորդրդային սիստեմի պայմաններու տակ հարցը տարբեր է:

Այստեղ աշխատող մարդը պատուո կարժանանա: Այստեղ ան չի գործեր շահագործողներուն համար, այլ կը գործէ իր համար, իր զաւակներուն համար, հասարակութեան համար: Այստեղ աշխատող մարդը ինքզինքը չի ղեմ լքած եւ առանձին: Ընդհակառակը, մարդը, որ կաշխատի մեր երկրին մէջ, կը զգա, որ երկրի ազատ քաղաքացին է, հասարակական փիլիսոփա է: Եւ եթէ ան լաւ աշխատի, տա հասարակութեան իր լաւագոյնը, ան աշխատանքի հերոս մըն է եւ փառքով կը պսակի:

Պարզ է, որ Սոսիալիստական չարժումը միայն այս պայմաններու տակ կրնա ծնունդ առնել:

3—Որպէս Սոսիալիստական չարժման երրորդ տպրիւր պէտք է նկատել մեր երկրի նոր տեխնիկան: Սոսիալիստական չարժումը օրգանական կերպով կապած է նոր տեխնիկայի հետ: Առանց նոր տեխնիկայի, առանց նոր գործարաններու եւ փապրիկաներու, առանց նոր սարքաւորման, մեր երկրի մէջ չէր կրնար ծնիլ Սոսիալիստական չարժումը: Առանց նոր տեխնիկայի կարելի է կրկնապատկել եւ եռապատկել տեխնիկական չափանիշները, եւ այ աւելին: Եթէ Սոսիալիստները բարձրացուցին չափանիշները կրկնապատկելէն հինգ կամ վեց անգամ, այդ կը նշանակէ, թէ անոնք ամբողջապէս եւ լիովին ապահոված էին նոր տեխնիկային:

Ակնկ կը հետեւի, որ մեր երկրի արդիւնաբերականացումը, մեր գործարաններու եւ փապրիկանեու վերակառուցումը, նոր տեխնիկայի եւ նոր սարքաւորման առկայութիւնը ծառայից որպէս մէկ ոյնցներէն մէկը, որ ծնունդ տա Սոսիալիստական չարժման:

4—Բայց դուք միայն նոր տեխնիկայով չատ առաջ չէք երթար: Դուք կրնաք լաւագոյն տեխնիկան ունենալ, լաւագոյն գործարաններ եւ փապրիկաներ, բայց եթէ դուք չունիք այն մարդիկը, որ ընդունակ լինիք տիրապետելու այս տեխնիկային, այն ատեն ձեր տեխնիկան պիտի մնա սոսկական տեխնիկա: Որպէսզի նոր տեխնիկան կարենա իր արդիւնքները տալ, անհրաժեշտ է, ունենալ մարդիկ, բանւորներու եւ բանւորուհիներու կադրեր, որոնք ընդունակ ըլլան կանգնելու տեխնիկայի առաջ եւ զայն առաջ վարելու:

Սոսիալիստական չարժման երեւան գալը կը ընձեռնակէ, որ մեր բանւորներու եւ բանւորուհիներու մէջ այսպիսի կադրեր երեւան եկած են:

Երկու տարի առաջ կուսակցութիւնը ըսաւ, թէ երբ մենք կառուցինք նոր գործարաններ եւ փապրիկաներ եւ մեր ձեռնարկութիւնները օժտեցինք նոր սարքաւորումով, մենք մեր պարտականութիւնը կիսով չափ միայն կատարեցինք: Կուսակցութիւնը այդ ժամանակ ըսաւ, թէ նոր գործարաններ կառուցելու համար երեւան եկող ոգեւորութեան վրա պէտք է աւելանա անոնց տիրապետելու ոգեւորութիւնը, որովհետեւ այդ կերպով միայն գործը կարելի է հասցնել իր կատարելութեան:

Բացայայտ է, որ տեխնիկային տիրապետելու եւ կադրեր աճեցնելու գործը այս երկու տարիներուն առաջ է ընթացեր: Այժմ պարզ է, որ մենք արդէն ունինք այդպիսի կադրեր: Պարզ է, որ առանց այս կադրերու, առանց այս նոր մարդոց այստեղ չէր կրնար գոյութիւն ունենալ Սոսիալիստական չարժում: Այսպէս ուրեմն, բանւորներու եւ բանւորուհիներու մէջէն յառաջացող նոր մարդիկը, որոնք կը տիրապետեն նոր տեխնիկային, գործան ուժ մը, որով ձեւ տուին Սոսիալիստական չարժման եւ գայն առաջ մղեցին:

3—Նոր Մարդիկ—Տեխնիկական Նոր Չափանիշեր

Ես ըսի, որ Սոսիալիստական չարժումը աստիճանական կերպով չզարդացաւ, այլ պայթումի մը պէս, որ ամբողջ թումբ մը կը քշէ կը տանի: Ակներեւ է, որ ան պէտք էր յաղթահարէր չատ մը խոչընդոտներ: Կային մարդիկ, որոնք արգելք կը հանդիսանային անոր, մարդիկ, որոնք կը ձեչէին գայն, բայց Սոսիալիստական չարժումը, իր ուժերը կուտակելով, դուրս խուժեց արգելակներէն եւ ոգողց ամբողջ երկիրը:

Ի՞նչ էր ինդիրը: Ո՞վ արգելք կը հանդիսանար:

Հին տեխնիկական չափանիշները եւ այն մարդիկը, որոնք կեցած էին այդ չափանիշներու հետեւ:

Այս մարդիկը կը կառչին մեր բանւորներու եւ բանւորուհիներու տեխնիկական յետամնացութեան, կը յարմարեցնեն ինքզինքին այս յետամնացութեան, յետամնացութիւնը կառնեն որպէս իրենց մեկնակէտը, եւ ի վերջո ինդիրը կը հասնի կէտ մը, ուր իրենք կը սկսին յետամնացութիւն քարոզել: Լաւ, եւ ի՞նչ պիտի ընենք եթէ յետամնացութիւնը անյարատեւ անցեալի ծալքերուն մէջ: Պիտի խոնարհի՞նք մեր յետամնացութեանց առաջ եւ պիտի վերածե՞նք գայն սրբանկարի մը կամ ֆետիշի մը—կախարդական մասունք: Ի՞նչ պիտի ընենք, եթէ բանւորներն ու բանւորուհիները արդէն հասունցած են ու տեխնիկական տեսակէտէ դատարկած: Ի՞նչ պիտի ընենք, եթէ տեխնիկական հին չափա-

նիչները չեն համապատասխանեք իրականութեան: Մինչդեռ մեր բանուորներն ու բանուորուհիները գործնականի մէջ զանոնք դէբալանցած են հինգ անգամ եւ տասն անգամ:

Երբեւիցէ մենք ո՞ւրախ ըլած ենք հաւատարիմ մնալու մեր յանձնառութեան: Ինձ այնպէս կը թւի, ընկերներ, որ մենք այդպիսի ուրախ չենք ըլած:

Ընդունա՞ծ ենք մեզ համար որպէս մեկնակէտ այն, որ մեր բանուորներն ու բանուորուհիները պիտի մնան մշուշի վերջ յետամնաց: Ալ աւելի կը թւի թէ մենք այդպիսի մեկնակէտ չենք ընդունած:

Եթէ այդպէս է, ի՞նչ է իմդիրն ուրեմն: Իրապէս չունի՞նք բաւականաչափ խիզախութիւն կտրելու մեր կարգ մը ճարտարագիտութիւնները եւ տեխնիքներու պահպանողականութիւնը, ճգմելու հին աւանդութիւններն ու չափանիշները եւ տեղ բանալու բանուոր դասակարգի նոր ուժերուն համար:

Մարդիկ գիտութեան մասին կը խօսին: Անոնք կըսեն, թէ գիտութեան փաստերը, տեխնիկայի վերաբերեալ զգեցուն թեւանոն ու ուսեալները կը հակասեն աւելի բարձր տեխնիկական չափանիշներու մասին Ստախանովականներու ներկայացուցած պահանջներուն:

Բայց ի՞նչպիսի գիտութեան մասին է խօսքն այստեղ: Գիտական ուսեալները միշտ սրբագրւած են պրակտիկայով եւ փորձով: Եթէ գիտութիւնը կը կորնչնէ իր կապը պրակտիկայի եւ փորձի հետ, ինչպիսի գիտութիւն է այդ: Եթէ գիտութիւնն ըլլար այն, ինչ որ կը ներկայացնեն կարգ մը մեր պահպանողական ընկերները, անիկա մարդկութեան համար չատոնց կորած պիտի ըլլար:

Գիտութիւնը կը կրէ գիտութիւն անունը, որովհետեւ ան փետուր չի ճանչնար, չի վախար իր ձեռքը բարձացնել ընդդէմ այն ամէնի, ինչ հին է եւ գործածութենէն ինկած, չի վախար յաւիւրատութեամբ լսելէ պրակտիկայի եւ փորձառութեան ձայները: Եթէ հարցը տարբեր ըլլար, մենք գիտութիւն չէինք ունենար երբ եւ իցէ, պիտի դադրէր չունենալ աստղագիտութիւնը, օրինակի համար, եւ մենք տակաւին քարշ պիտի տայինք գաղտնական սիստեմի հետեւից: Պիտի դադրէր չունենալ կենսաբանութիւն եւ տակաւին կանգնած պիտի ըլլայինք դէմ դիմաց մարդու առեղծուածութեան լուծնալի հետ, եւ գիտութիւն պիտի չունենար քիմիաբանութիւնը եւ մենք տակաւին պիտի խոպանինք ալքիմիստներու համայութիւններուն հետ:

Ահա թէ ինչո՞ւ ես կը խորհիմ, թէ մեր ճարտարապետները, տեխնիսիենները եւ վարիչները, որոնք արդէն չատ ետ կը մնան Ստախանովեան շարժումէն, լաւ կընէին եթէ չհաւտչէին տեխնիկական հին չափանիշներուն, եւ ամբողջովին փոխէին, գիտական ճանապարհով, Ստախանովեան նոր ճանապարհով:

Շատ լաւ, պիտի պատասխանեն անոնք մեզի, ի՞նչ կը խորհիք ուրեմն տեխնիկական չափանիշներու մասին ընդհանրապէս:

Ոմանք կը խորհին թէ մեզ անհրաժեշտ չէ այլեւս ուժէ տեխնիկական չափանիշ: Այսիկա ճիշտ չէ, ընկերներ: Աւելին, ասիկա տխմարութիւն է: Դուք չէք կրնար պլանային անտեսութիւն ունենալ, առանց տեխնիկական չափանիշներու: Եւս առաւել, տեխնիկական չափանիշները անհրաժեշտ են առաջ մղելու համար աւելի յետամնաց դանգւածները դէպի ամենայառաջաւոր տեխնիկական չափանիշները: Տեխնիկական չափանիշները այն ամենամեծ կանոնաւորող ուժն են, որ արդիւնաբերութեան մէջ բանուորներու լայն դանգւածները կը կազմակերպեն բանուոր դասակարգի ամենառաջաւոր տարրերուն շուրջ:

Աւելի Բարձր Չափանիշներ Անհրաժեշտ են

Հետեւաբար մենք պէտք ունինք տեխնիկական չափանիշներու, ոչ այն չափանիշներու, որոնք ներկայիս գոյութիւն ունին, այլ աւելի բարձր չափանիշներու: Ուրիշներ կրնան տեխնիկական չափանիշներու պէտք ունենին, բայց անոնք անմիջապէս պէտք է բարձրանան այն մակարդակին, զոր Ստախանովը, Բուսիգինը, Վինոկրատովան եւ ուրիշները նւաճեցին: Այս եւս ճիշտ չէ: Այսօրւան չափանիշները գործնական են ճիշտ հիմա, որովհետեւ այն բանուորներն ու բանուորուհիները, որոնք Ստախանովի եւ Բուսիգինի պէս լաւ են տիրապետած տեխնիկային, պիտի չկարենան իրականացնել այդ չափանիշները: Մենք կուզինք այնուհանդերձ պիտի տեխնիկական չափանիշներ, որոնք հասնին նոր տեխնիկական չափանիշի եւ Ստախանովի ու Բուսիգինի նւաճած չափանիշներու միջեւ իյնող կէտ ճանապարհին:

Առէք, օրինակի համար, Մարիա Դեմչենկոն, որ բոլորին ծանօթ է չաքարեղէնի բանջարի բերքահաւաքի իր ցուցանիշներով: Ան մէկ հեկտարէն ստացաւ 500 տնտներ (55,000 փաունտ) եւ աւելի: Կրնա՞նք այս նւաճումը չափանիշ վերցնել, բանջարեղէնի բոլոր բանջարի ազարակներու համար: Ոչ, չենք կրնար: Տակաւին չատ կանուխ է այդ մասին խօսիլ: Մարիա Դեմչենկոն մէկ հեկտարէն (2·47 արտավար) 500 տնտներ բերքը է ստացեր, բայց Ուզբեքիայի մէջ բերքի միջինը, այս տարի, օրինակի համար, եղած է մէկ հեկտարէն 130 կամ 132 տնտներ:

Ինչպէս կը տեսնէք, տարբերութիւնը փոքր չէ: Կրնա՞նք մենք որպէս չափանիշ չաքարեղէնի բանջարի համար նչանակել հեկտարէն 400 կամ 300 տնտներ: Բոլոր անոնք, որոնք զործին լաւ տեղեակ են, կըսեն, որ տակաւին այս անիրագործելի է: Հեկտարէ մը ստացւելիք բնականոն բերքի չափանիշը Ուզբեքիայի մէջ 1936–ին որոշւած կրնա

նշանակելի 200 կամ 250 անոնքեր: Եւ այս փոքր չափանիշ չէ, որովհետեւ այս չափանիշը իրագործելու պարագային, երկու անգամ աւելի շաքար կունենանք քան որ ունէինք 1935–ին:

Նոյնը կրնա ըսուիլ արդիւնաբերութեան մասին: Ստախանովը վերազանցեց դոյութիւն ունեցող տեխնիկական չափանիշները տասն անգամ կամ աւելի, կը կարծեմ: Տրամաբանական պիտի չըլլար յայտարարել այս նուաճումը որպէս տեխնիկական նոր չափանիշ բոլոր բանւորներուն համար:

Որոշապէս չափանիշ մը պիտի նշանակէ, որ վերազանցէ ներկա տեխնիկական չափանիշը եւ ընկերը Ստախանովի նուաճած չափանիշներու միջեւ իինդ մակարդակը:

Մեծն պարագային, բան մը յստակ է—ներկա տեխնիկական չափանիշները չեն համապատասխաններ իրականութեան: Անոնք եւս կը մնան եւ զարճած են արդելակ մեր արդիւնաբերութեան համար, եւ կարենալ մեր արդիւնաբերութեան յառաջդիմացը ապահովելու համար անոնք պէտք է փոխանակուին նոր եւ աւելի բարձր տեխնիկական չափանիշներով: Նոր մարզիկ, նոր ժամանակներ եւ տեխնիկական նոր չափանիշներ:

4—Անմիջական Ընելիքները

Որոնք են մեր անմիջական ընելիքները Ստախանովեան չարժման օգտի տեսակէտէն:

Առաջին, օգնել Ստախանովեաններուն ալ աւելի զարգացնելու Ստախանովեան չարժումը եւ տարածելու զայն ամբողջ ծաւալով եւ խորութեամբ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան բոլոր չրջաններու եւ մարզերու մէջ: Աւելի մէկ կողմէն: Եւ միւս կողմէն արդելք հանդիսանալ այն ճարտարագէտներուն, տեքնիսիններուն եւ վարչական մարմիններու այն անդամներուն, որոնք յամառօրէն կը կառչին հինին, չեն ուզեր առաջ չարժիլ, եւ սխեմատիկ կերպով կը խոչընդոտեն Ստախանովեան չարժման զարգացումը: Կարենալ Ստախանովեան չարժումը տարածելու համար մեր ամբողջ երկրի վրայ, կարելիութեան ամենալայն սահմաններու մէջ, Ստախանովեանները առանձինն անբաւարար են, անկասկած: Մեր կառավարական կազմակերպութիւնները պէտք է միանան Ստախանովեաններուն եւ օգնեն անոնց չարժումը տարածելու մէջը:

Երկրորդ, օգնել այն վարիչներուն, ճարտարագէտներուն եւ տեքնիսիններուն, որոնք չեն ուզեր արդելք հանդիսանալ Ստախանովեան չարժման, որոնք կը համակրին այս չարժման, բայց որոնք տակաւին չեն կրցած օրբագրել ինքզինքնին, որոնք տակաւին չեն կրցած ղլխաւորել Ստախանովեան չարժումը: Պէտք է ըսեմ, ընկերներ, քիչ չէ թիւը այդպիսի վարիչներու, ճարտարագէտներու եւ տեքնիսիններու մեր երկրի մէջ:

Կը խորհիմ, թէ մեծ մենք ընթացք տանք այս ընելիքներուն, Ստախանովեան չարժումը պիտի զարգանայ իր լիակատար կարելիութեամբ, պիտի ընդգրկէ մեր երկրի բոլոր չրջաններն ու մարզերը եւ մեզի ցոյց պիտի տայ նոր նուաճումներու հրաշագործութիւնները:

5—Մէկ Քանի Դիտողութիւններ

Քանի մը դիտողութիւններ ներկա խորհրդակցութեան չուրջ, անոր նշանակութեան չուրջ: Լենին սորվեցուցած է մեզի, որ միայն այն դեկավարները, որոնք ոչ միայն կրնան սորվեցնել բանւորներուն եւ գիւղացիներուն, այլ կրնան սորվիլ բանւորներէն եւ գիւղացիներէն կրնան ըլլալ իրական Բոլշեվիկ դեկավարներ:

Կային կարգ մը Բոլշեվիկներ, որոնք չսիրեցին Լենինի այս բառերը: Բայց պատմութիւնը ապացուցուց, որ այս կէտի մէջ եւս Լենին հարիւր տոկոսով ճիշտ էր:

Իրապէս, մեքենաւոր աշխատաւորներ, բանւորներ եւ գիւղացիներ կաշխատին, կապրին, կը պայքարին: Ո՞վ կրնա կասկածիլ, որ այս մարդիկը յամպէտս չեն ապրիր, որ ապրելով եւ պայքարելով անոնք կը կուտակեն վերիմաբի գործնական փորձառութիւն:

Կարելի՞ է կասկածիլ, որ այս փորձառութիւնը անտեսող դեկավարները չեն կրնար նկատել իրական դեկավարներ:

Հետեւաբար մենք, կառավարութեան եւ կառավարութեան դեկավարներս ոչ միայն պէտք է սորվեցնենք բանւորներուն, այլ պէտք է սորվինք անոնցմէ: Ես պէտք չէ ժամեմ, որ դուք, այս խորհրդակցութեան մասնակցողներդ, բան մը սորվեցաք կառավարութեան դեկավարներէն: Բայց կարելի չէ նաեւ ժամել այն որ մենք, կառավարութեան դեկավարներս, շատ բան սորվեցանք ձեզմէ, Ստախանովեաններէ, ներկա խորհրդակցութեան մասնակցողներէ:

Շնորհակալ եմ, ընկերներ, ստացած դասերու համար: Շատ շնորհակալ եմ:

ԸՆԿ· ՄԱՆՈՒԻԼՍՔԻ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մեր այս երիտասարդ սոցիալիստական երկիրը, որ Լենինի–Ստալինի կուսակցութեան կամքով ի սպառ է դրած մեզնէջ պրոլետարական յեղափոխութեան չհեղուն ամբողջ աշխարհի աշխատաւորներու առաջ հաչիւ կուտա այն մասին, թէ ան ի՞նչպէս կատարեր է պարտքը անոնց հանդէպ: Այսօր ան իմպերիալիզմի կողմէ հարատեւաբար ու սարսուռազդ մէկուկէս միլիարդոց մարդկութեան կը զգուշացնէ այն մասին, թէ ի՞նչպէս ինքը՝ որ կործանման էր հասցուած կապիտալիզմի կողմէ, վերածնեցաւ սոցիալիզմի շնորհիւ: Իր օրինակով ան ցոյց կուտա չհագեցնող դասակարգերուն, իմպերիալիզմի կողմէ ճնշուած ազգութիւններուն, տնտեսապէս ու քաղաքականապէս արհեստած փոքր պետութիւններուն, իմպերիալիստական պատերազմներու մէջ պարտուած ժողովուրդներուն, ճգնաժամի ճիրաններուն մէջ քայքայուող մեր երկրի տարօրինակ մարդոց:

Իսկ՝ չէ՞ որ ընդամենը տասնեւութ տարի է, որ մեզ կը բաժնէ մեր երկրի տարօրինակ անցեալէն: Ի՞նչ կը նշանակէն այդ տարիները այն հարիւր տարիներու համեմատութեամբ, որոնք անհրաժեշտ էին մարդկութեան զարգացման պատմութեան մէջ տնտեսական դրութիւններն ու քաղաքական ձեւերը փոխելու համար:

1927–28 թուականներուն մենք նոր մեքենաներով մեր ժողովրդական տնտեսութեան վերակազմութիւնը, տնտեսութեան, որ քայքայած էր իմպերիալիստական եւ քաղաքացիական պատերազմներու հետեւանքով՝ այդ թուականներուն դիրքագնելով նախապատերազմեան մակարդակը: Եւ այդ՝ այնպիսի երկրի մը մէջ, ուր դեռ կային հին սոցիալ–տնտեսական դրութիւններ սկսած ամենատարօրինակ՝ սոցիալիստականէն եւ վերջացած նահապետականով: Սոցիալիստական հատուածի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսութեան մէջ 1928 թուականին կը կազմէր 44 տոկոս: Գիւղի մէջ տիրապետող երեւոյթը կը հանդիսանար մանր ապրանքային, փոշիացած գիւղացիական տնտեսութիւնը: Կուլակութիւնը դլուխ կը բարձրացնէր եւ կը ճգնէր հացամթերումներու սաբոթաժով վիժեցնել սոցիալիստական չինարարութիւնը: Երկրի ներսերը եղած կապիտալիստական տարրերը թշնամի իմպերիալիստական շրջապատի բնականոն յեղանոնները կը ներկայացնէին:

Կոմկուսակցութիւնը, իր սոցիալիստական չինարարութեան չափերով կը զարմացնէ ամբողջ աշխարհը: Արդիւնաբերական արտադրանքի աճումը, առաջին հնդամեակի ընթացքին, միջին հաշուով կը կազմէր 22 տոկոս, 1934 թուականին՝ 18·3 տոկոս, 1935–ին (ծրագրի համաձայն)՝ 17 տոկոս: Այսպիսի չափեր պատմութեան մէջ երբեք տեսնուած չեն եղեր եւ ոչ մէկ կապիտալիստական երկրի մէջ:

Նաեւ, գործատէր, մեքենաշինութեան, բեռնատար օթոմոպիլներու եւայլն, արտադրութեան տեսակէտէն մենք առաջին տեղը կը գրաւենք եւրոպական բոլոր պետութիւններու մէջ: Մենք սկսած ենք զարդացնել մեր սեփական դազկահաշիճուքիւնը, բարձրորակ պողպատներու, մոթորներու, թուրպիններու, ճեմերքյքրներու արտադրութիւնը, մեր սեփական քիմիական արդիւնաբերութիւնը, մեր սեփական օթոշինարարութիւնը, մենք կը տիրապետենք զանազան տիպ ամենաարդ մեքենաներու արտադրութեան: Մեր երկիրը կը ծածկուի չինարարութիւններու ելարաններով· ան կը պայթեցնէ լեռներնելներ, կը չինէ թունելներ, կը պատրաստէ տասներ ուղիներու համար ջրանցքներ, կը փորէ եւ կը կառուցանէ ամբարտակներ: Այդ ժամանակ, երբ կապիտալիստական երկիրներու մէջ կը մեռնի արդիւնաբերական ու առեւտրական կեանքը, մեռելային լռութիւն կը տիրէ բանուորական ասպնիզբուն մէջ, միլիոնաւոր մարդիկ գաղապարտուած են հարկադիր անգործութեան, Խորհրդային Միութեան մէջ ժողովրդական խանդավառութեան հսկայական լաւն արբեցով իր ճամբուն վրայի բոլոր խոչընդոտները, կը վերափոխէ երկիրը:

Մեր չինարարութիւնը հասած չէ ընթացած, ինչպէս այդ կարելի էր ենթադրել հետեւեն: Մեկ հարիւրը էր մեռաղ՝ չինարարութեան համար. բայց այդ չէար: Շինանիւթեր էր պէտք՝ բայց անոնց քանակը քիչ էր: Հարկաւոր էր այլ նիւթերն ու մարդկային մեծ զանգուածները նոր վայրերու մէջ փոխադրել, բայց փոխադրութիւնը չնչաղատ կ'ըլլար: Մեր ուսերուն ծանրացած էին հին ռեժիմէն ժառանգութիւն մնացած Ռուսաստանեան հին թափթփուածութիւնը, գործաւոր անգործութիւնը, պիւրոկրատիզմը: Իսկ դասակարգային թշնամին կ'օդագործէր մեր երիտասարդ անփորձ կադրերու (առաջնորդող մասը) իբրեւ քանչիւր թերացումը, փքուն նախահաշիւներ կը կազմէր, կը խանգարէր ծրագիրները, կանխատեսուած անպէտք նախագծեր կը ներկայացնէր, կը փճացնէր մեքենաներ, կը հրկիզէր, պայթեց-

ներ կը կազմակերպէր, կ'ոչնչացնէր թանկարժէք տարբաւորումը:

Այդ բոլոր տարիներու ընթացքին ամբողջ երկրի մէկ ծայրէն ու նեարդները լարած էին ձիզ պատրաստի մը պէս: Մենք կ'ապրէինք մշմիայն մեր կառուցումներով: Ամէն ինչ ենթարկուած էր մէկ նպատակի — մեծ աշխատանքներով ծրագրի կատարման, ծրագիր, որ գրեր էին իրենց առջեւ մեր հուսակցութիւնն ու երկիրը: Երկրի բոլոր նիւթական միջոցներու լարում, զօրակոչի ենթարկուած մարդկային կազմ, կազմակերպուած մարդկային եռանդ, բոլշեվիկեան ճնշում եւ նպատակասլացում: Նա, այդ նպատակն էր, որ կը թելադրէր մեր ժողովուրդի կենսական համեստ մակարդակը: Մեր լաւագոյն մարտիկ Զերժինսքին եւ Քուպիչեվը վառեցան աշխատանքի մէջ՝ անքուն գիշերներ անցնելով անառեսական հաշուարկներու վրա:

Բայց Սաալինեան երկաթեայ անխորտակելի կամքին շնորհիւ չարժման մէջ գրուղ լաւան յառաջ հոսեցաւ: Ան գրաւեց մեր երկրի մէջ կապիտալիզմի վերջին ամրոցները, քոլխոզիվացման (հաւաքական տնտեսութիւն) հիման վրա վերակառուցանելով գիւղատնտեսութիւնը: Այնտեղ, ուր կային 25 միլիոն անհատական գիւղացիական տնտեսութիւններ, ան ստեղծեց 250 հազար հաւաքական գիւղատնտեսութիւն, 5 հազար խորհրդային տնտեսութիւն, չորս հազարէն աւելի մեքենաթրաքթորային կայաններ, որոնք պետութեան վրա արժեցին աւելի քան 9 երկիլիոն ռուպլի: Այնտեղ, ուր կ'աշխատէին պօռն ու ձմրան անօթութենէն քոստոած ձին, ներկայիս կ'աշխատին 300,000 թրաքթորներ, մօտ 50,000 fումպայի, 35,000 բեռնատար օթոմոպիլներ: Հաւաքական տնտեսութիւնները 1934 թուականին մէկ երկիլիոն փութ աւելի ապրանքային հաց են տուած, քան թէ տուած էին այդ նոյն չքաւոր-միջակ տնտեսութիւնները նախ քան հաւաքական տնտեսականացումը: Ամէն թեմիքրու տեսակիչէն, մեր գիւղացիութեան արդիւնաբերութեան վաղեմի յետամնացութիւնը վերնալու վրա է:

1928 թուականին, մենք նոր միայն ձեռնարկեցինք առաջին հնգամեայ ծրագրի կատարման: Մենք ոչ միայն չորս տարւա մէջ աւարտած ենք այդ, այլ յաղողութեամբ կը կատարենք մեր երկրորդ հնգամեայ ծրագիրը:

1928 թուականին համաշխարհային բուրժուազիան եւ անոր գործակալութիւնը՝ մենշեւիկեան սոցիալ դեմոկրատիայի յետագիմական մասը՝ յոյս ունէին գիւղացիութեան ձեռքով հաշուեյարդար ենթարկել սոցիալիզմը եւ վերականգնել կապիտալիզմը: Այսօր գիւղացիական կոչուցած ձեռքերը, բանուոր դասակարգի դեկավարութեամբ, վերցուցին կապիտալիզմը գիւղի մէջէն եւ այդպիսով իսկ ապահովեցին սոցիալիզմի յաղթանակը: 1928 թուականին մենք հարկադրուած էինք հացի քարաեր մրցընել: Այսօր մենք վերցուցած ենք հացի քարտերը. այսօր հացի խնդիրը լուծուած է մեր երկրին մէջ: 1928 թուականին գլուխ բարձրացուցած կուլակը ցանկութիւն ունէր չախչախել սոցիալիզմը: Այսօր սոցիալիզմը գլխովին չախչախած է կուլակը: 1928 թուականին բուրժուազիան յոյս էր դրած Յորհրդային Միութեան կապիտալիստական այլասերման վրա, մեր երկրի ներսերը եղած կապիտալիստական տարրերու հետ համաշխարհային կապիտալի օգնման վրա:

Այսօր ոչ թէ կապիտալիստական այլասերում կ'սպառնա մեր երկրին, այլ կապիտալիստական այլասերումը կ'ուսէ այն աշխարհը, ուր կ'ենթէ բուրժուազին: Այսօր յաղթական սոցիալիզմը աւելի սերտօրէն կը չաղկապի բանուորական չարժման հետ: Այսօր վրա հասած է ոչ թէ սոցիալիզմի մայրամուտը եւ կապիտալիզմի արշալոյսը՝ ինչպէս կը պնդէր սպիտակ պահակային Տրոցքին, այլ սոցիալիզմի արշալոյսը եւ կապիտալիզմի մայրամուտը՝ ինչպէս կը պնդէր մեր Կուսակցութիւնը:

ՆՈՐ ԴԱՐԱԳԼՈՒԽ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԷՋ

Սոցիալիզմի յաղթանակը Յորհրդային Միութեան մէջ պայմաններ ստեղծեց զանգուածներու նիւթական բարեկեցութեան եւ անոնց մշակութային մակարդակի այնպիսի աճման համար, ինչպիսին երբեք երկրին մէջ անգամ չեն տեսած աշխարհի ոեւէ կապիտալիստական երկիր:

Այժմ միայն մենք կարող ենք՝ մարդոց հոգատարութիւնը, իր ամբողջ հասակով, մեր մտքերու եւ գործերուն կեդրոնիներուն մէջ դնել: Մարդը — պատմութեան գոմաղբ չէ, ինչպէս կ'պղարարէ Ֆաշիզմը: Մարդկային զանգուածը մարդկի մը առարկա չէ Ֆաշիստական պատժոնեային համար, որ Նիցչէական գերմարդ կը պատկերացնէ ինքզինքը: Մարդը — սոցիալիզմի ստեղծարարն է, նոր հասարակակարգի ստեղծողը: Պատմութեան մէջ առաջին անգամ մարդը դրած է իր տեղը:

Յորհուրդներու երկրի մարդոց համար ստեղծել ունենալ, մշակութային, առողջ, երջանիկ եւ բախտաւոր կեանք — այս բաներու վրա է, որ ներկայիս յամառօրէն կ'աշխատին մեր ամբողջ կուսակցութիւնն ու երկիրը:

Մենք այսօր արդէն խոշոր նուաճումներ կատարած ենք աշխատաւոր զանգուածներու նիւթական եւ մշակութային մակարդակը արմատապէս բարելաւելու գործին մէջ:

Մեր երկիրը չդիտեր, թէ ի՞նչ է գործազրկութիւնը եւ չգիտի դիտեր ալ այդ բանը: Բանուորներու եւ ծառայողներու թիւը մեր մէջ, 1928 թուականի համեմատութեամբ, ածած է աւելի քան երկու անգամ, աշխատավարձի փոնդը աւելցած է աւելի քան հինգ ան-

գամ, մինչդեռ կապիտալիստական երկիրներու մէջ աշխատաւարձը ինկած է 40–50 տոկոսով:

Մեր մէջ չկա գործազրկութիւն: Մեր գիւղացին չգիտեր, թէ ի՞նչ բան է գործազրկական ձգնաժամը:

Նկատելի կերպով կը բարձրանա աշխատաւորներու մշակութային մակարդակը:

Խորհրդային Միութեան տարրական եւ միջնակարգ դպրոցներուն մէջ կը սորվին աւելի քան 25,000,000 աշակերտներ եւ ղրաղած են 600,000 ուսուցիչներ: Այդ տարւա ընթացքին միջնակարգ դպրոցներու մէջ սորվողներու թիւը աւելցած է տասն եւ հինգ անգամ: Մեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն, թեքնիքական դպրոցներուն մէջ այժմ կը սորվին 1,300,000 ուսանողներ:

Վերցուցէք մեր գրքերու, լրագրի եւ օրագրի տպաւորգանքը: Լենինի ու Ստալինի, պրոլետարական խոշորագոյն դրող Մ. Կորքիի երկերը կը տարածուին տասնեակ միլիոն օրինակներով: Գիւտական գրքերը լոյս կը տեսնեն 50-ական հազար օրինակ չրջաբերութեամբ: Բոլոր թերթերու ընդհանուր չրջաբերութիւնը 1928 թուականին 8·8 միլիոնէն 1934 թուականին հասած է 38·5 միլիոնի: Եւ այսու ամենայնիւ, գիրքն ու թերթը մեր երկրին մէջ ամենապակասաւոր ճիւղը կը հանդիսանան քանի որ այնչափ աւելի արագ ու լայն կերպով կ'աճին մեր մշակութային պահանջները:

Խորհրդային իշխանութիւնը կեանքի կոչեց կապիտալի լուծէն տակ մնացող ամբողջ ժողովուրդներ, օգնեց անոնց տեղծելու իրենց գրականութիւնը, ոտքի կանգնելու եւ որպէս լիագօր անդամներ մանելու Խորհրդային Միութեան ժողովուրդներու համերաշխ ընտանիքի մէջ:

Խորհրդային Միութեան ազգային հանրապետութիւններու ու մարզերու մէջ ժողովրդական տնտեսութեան եւ ձեւով ազգային՝ բովանդակութեամբ սոցիալիստական մշակոյթի չտեսնուած վերելք մը նկատելի է:

Մենք քաղաքական եւ արտադրական գործօն կեանքի հանեցինք բնակչութեան հսկայական այն-պիսի մէկ չերտը, ինչպիսին են կանայք: Պիտութիւնը ամեն ինչ կ'ընէ, որպէս զի աշխատաւոր կնոջ ջանքն ու եռանդ լայն բացէ հասարակական ու արտադրական կեանքի թատերաբեմ գալու ճանապարհը: Այդ նպատակով դիւրութիւններ կը տրուին կնոջ երեխաներու խնամքին համար: Նախապրոցական հիմնարկներուն մէջ կը խնամուին մօտ ութը միլիոն երեխաներ:

Բայց այս բոլոր նուաճումները, որքան ալ մեծ ըլլան նոյն իսկ, չեն բաւարարեր մեզ: Մենք կը ցանկանք, որ մեր բանւորներն ու հաւաքական տրակտորները ապրին չատ աւելի լաւ: Բոլորը, մինչեւ վերջին մարդը, ունենայ ըլլան, ընդհանուր առողջապահութիւնը, հանգիստն ու չարմարութիւնները մեր կողմէ նուաճած բլլան բոլորի համար, որպէս զի մարդ երբեք չյողնի ապրելէն եւ հրճուի կեանքով:

Սոցիալիզմի ընկերային–տնտեսական հիմքի կառուցման հետեւանքով, պրոլետարական դիկտատուրայի պետութեան հսկայական ամրոցը ձեռք է բերած: Մենք այսօր եւս, ինչպէս Հոկտեմբերի յաղթող օրը, կը մնանք որպէս պրոլետարական դիկտատուրայի պետութիւն: Բայց Խորհ. Միութեան մէջ սոցիալիզմի վերջնական ու անվերադարձ յաղթանակով, մենք չտեսնուած բարձրութեան կը հասցնենք մեր Խորհրդային պետութեան դերը: Այսօրուա մեր պետութիւնը ամենահզօր, ամենահատուածուն կարգի սոցիալիստական կարգի պետութիւն կը հանդիսանա, պետութիւն մը, որ խարխլած է ոչ թէ ռազմական ոճրանիզմի տնտեսութեան, այլ յաղթական սոցիալիզմի զարգացող տնտեսութեան վրա:

Լենինը դեռ 1918 թուականին կ'ըսէր, «Խորհուրդները դեմոկրատիզմի բարձրագոյն ձեւն են. նոյն իսկ աւելին՝ դեմոկրատիզմի սոցիալիստական ձեւի սկիզբը»: Ստալինի նախաձեռնութեամբ, Խորհուրդներու ԸՕթներորդ Համագումարի կողմէ ընդունուած պատմական որոշումը՝ մեր երկրի մէջ հաւասար, ուղղակի ու գաղտնի ընտրական իրաւունք մտցնելու մասին, խորհրդային քայլ մը կը հանդիսանա այն սոցիալիստական դեմոկրատիայի իրականացման ճամբուն վրա, որուն մասին կը խօսէր Լենին:

Սոցիալիստական վերաբերներու չրջադիծի ընդարձակման զուգընթաց, պրոլետարական դիկտատուրայի պետութեան սոցիալիստական հիմքերու ծաւալման զուգընթաց, կ'ամրանա նաեւ այդ պետութեան պաշտպանողականութիւնը՝ դուրսէն չրջապատող վայրագ թշնամիներու դէմ:

Կարմիր բանակը, որպէս պրոլետարական պետութեան պաշտպանութեան մէկ օրգանը, իր զարգացման մէջ կ'արդարացնէ այն հսկայական ուշն ուրկէ անցեր են խորհրդային երկիրն ու իր ժողովուրդը:

Անվերադարձ կերպով անցեր են այն ժամանակները, երբ երեսունարդ եւ գրեթէ անդէն խորհրդային իշխանութիւնը պէտք էր աւելի չատ իր բանդակութեամբ եւ հսկայական ոոճերու ու ատելութիւններու դէմ եւ մղէր կապիտալիստական 14 պետութիւններու աւազակային չարձակումները քան թէ ռազմական թեքնիքայով:

Մեր Կարմիր Բանակը, որպէս իւրայատուկ, հրաչալի ձուլածք, տաղանդն է որ կ'իւրացնէ, կը նեղծէ իր մէջ եւ կ'արագացուցնէ մեր բոլոր թեքնիքա–տնտեսական ու ընկերային վերափոխութիւնները, մեր երկրի կեանքին ու տնտեսութեան բոլոր ճիւղերուն մէջ ձեռք բերուող նուաճումները:

Եւ խորհուրդներու երկրի դէմ ուղղուած ոեւէ հաւանական յարձակում կասեցնելու ուղիի զարգացման դէմ, Կարմիր Բանակը, նոյնպէս մեր սոցիալիստական հանրապետութեան բոլոր ժողովուրդ-

ներու ընկերայնօրէն աւելի ու աւելի միասերը, մարտական կազմակերպութիւնը կը դառնա:

Ժողովուրդի մէջէն դուրս եկած, ժողովուրդին ծառայող, անոր չահերը պաշտպանող, ժողովրդական զանգուածներու հոգատարութեամբ ու սիրով թևաւորուած, աշխատաւոր մարդկութեան ծառայելու մեծ նպատակներով ոգևորուող բանակը, արժանաւոր կերպով, պատուով ու պարծանքով կանգնած է մեր սոցիալիստական հայրենիքի համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան ամրոցի պաշտպանութեան դիրքերու մէջ:

Տորհրդային Միութեան մէջ սոցիալիզմի յաղթանակի հետեւանքով տեղի ունեցող այս բոլոր յաջողութիւնները, արդեօք կարո՞ղ էին չանդրադառնալ մեր կուսակցութեան վրա, որ այդ յաղթանկի կազմակերպիչն էր: Մեր կուսակցութիւնը զանգուածները ոչ միայն կը ասնէր դէպի այդ յաղթանակները, այլ ինքն ևս կ'աճէր, կը կոփուէր, քաղաքականապէս կը համախմբուէր եւ սոցիալիստական չինարարութեան յաջողութեացին, կ'ընդառաջելէր իր կողը զանգուածներուն հետ:

Լենինեան Կեդրոնական Կոմիտէի ղեկավարութեան հաստատուն հանդամանքը, ապահովեց մեր հաղթութեան ամենէն ճիշտ ընթացքը, ինչ որ կա տագնապալուր բանուր դասակարգին մէջ: Դաժան ինքնաքննադատութիւնը կը խանգարէր լճացումն ու ինքնագոհութիւնը եւ կը նպաստէր մեր կուսակցական, խորհրդային եւ տնտեսական աշխատողներու յիսապահ կատարելագործման:

Պոլշեվիզմը այսօր քաղաքական մարքի հասնած մը չէ միայն, այլ ժողովրդական հուժկու չարժում մըն է: Ան դուրս է եկած կուսակցութեան չրջանակներէն եւ դարձած է մեր երկրի ամենալայն զանգուածներու աշխարհին ըմբռնողութիւնը:

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԷՋ

Տորհրդային Միութեան մէջ սոցիալիզմի յաղթանակը՝ համաշխարհային նշանակութիւն ունեցող յաղթանակ է: Ան տակաւին չէ հասած կապիտալիզմի տապալման՝ ամբողջ աշխարհի մէջ: Բայց դէպի սոցիալիզմ հուժկու չարժումը, կապիտալիստական երկիրներու մէջ սաացած է եւ պիտի սաանա այնքան աւելի մեծ թափ, որքան աւելի կը խորանա հակադրութիւնը պրոլետարական ծաւալուն դեմոկրատիա ունեցող, յառաջդիմող սոցիալիստական աշխարհի եւ սպիտակ պահակային — ֆաշիստական տանջալից տեսար կիրառող, դէպի կործանում գացող կապիտալիստական աշխարհի միջեւ:

Այսօր արդէն միլիոնաւոր մարդոց մէջ կը խորտակուի կապիտալիստական կարգերու յարիտենականութեան ու անխախտութեան վերաբերեալ դարերու ընթացքին արմատացած պատկերացումներն ու հասկացողութիւնները:

Անոնք կը տեսնեն, որ սոցիալիզմը ազատութիւն է՝ ապահոված այնպիսի կարգերով, որոնց ներքեւ չկա մարդոց տարկացում՝ մարդոց կողմէ: Ջօրանոցային տարկութիւնը ոչնչացած է եւ զանգուածներու ստեղծագործութիւնը թռիչք կ'ստանա, իւրաքանչիւր անհատականութեան աճման պայմաններով:

Եւ կապիտալիզմի բեռը, անոր ձգնաժամերու եւ գործազրկութիւններու ծանրութիւնը իրենց մէջերէն վար կրող ժողովուրդները սկսած են չարժման մէջ մտնել, ինչպէս Ընկեր Ստալին խօսած է այս մասին:

Բանուորական զանգուածները ամբողջ աշխարհի մէջ սկսած են չարժման մէջ մտնել: Կապիտալիզմը անոնց համար չէ ապահոված եւ երբեք ալ չի ապահովիր նախապատերազմեան կեանքի մակարդակը: Եթէ նոյն իսկ բուրժուային ժամանակաւրապէս դուրս դա ձգնաժամի ու անտեսական տագնապի ճիրաններէն, ան գործել անկարող կ'ըլլա բանուորներուն վերադարձնել նոյն իսկ մինչեւ 1929 թուականի ձգնաժամը անոնց ունեցած կեանքի մակարդակը:

Ֆաշիստական կառավարութիւնները կը լուծեն բանուորական կազմակերպութիւնները, կը փակեն բանուորական մամուլը, կ'սպանեն բանուորական չարժման գործիչները, հարկադիր աշխատանքի ճամբարներ (քամփեր) կ'ստեղծեն բանուորներու համար, կը ծաղրեն անոնց դասակարգային գիտակցութիւնը եւ կը նետասացնեն անոնց (բանուորներու) մարդկային արժանապատուութիւնը՝ բանուորական զանգուածներու մէջ արմատացնել փորձելով չովինիստական բարբարոս գաղափարախօսութիւնը, որ կատաղ չան փրփուր կը ժայթքէ միւս ժողովուրդներու դէմ:

Ֆաշիզմը ոչ միայն ներքին պատերազմ է բանուր դասակարգին դէմ, այլ եւ արտաքին պատերազմ — իմպերիալիստական պատերազմ:

Դէպի սոցիալիզմ զարձ կը կատարէ նաեւ ինթելիկենցիայի (մտաւորականութիւն) լաւագոյն մասը, որ կը տեսնէ թէ սոցիալիզմի տակ միայն չկա գերարտադրութիւն՝ գիտնականներու, ինժեներներու, թեքնիքներու, գրողներու, նկարիչներու, դերասաններու: Ան կը տեսնէ, որ ոչ թէ գրամագլուխի իշխանութեան եւ ուժեղներու ածկագութեան, այլ սոցիալիզմի ժամանակ միայն տաղանդը, ընդունակութիւնները ու աշխատանքը համար կը բանան երեսասարդ ձիրքերու համար: Սոցիալիստական կարգերն են միայն, որ կ'ապահովեն սոցիալիստական նոր մշակոյթի իսկական ծաղկումը:

Եւ անոնք, այդ լաւագոյն մարդիկը, ճարպատկած մեչչանականութեան (քաղքենիութեան), ֆաշիստական խաւարամտութեան աշխարհին մէջ յուսահատած մարդիկը, կը վազեն դէպի այն ճիրքը, ուր կը գնահատուին ոչ միայն քաղաքագէտ-

ները, բանւոր դասակարգի կազմակերպիչները, այլ եւ Վոլթերը, Այնշթայնը, Ռոլանը, Պարպիւսը ու Կորքին:

Յեղափոխութիւններու եւ պատերազմներու ներկայ շրջանին, սոցիալիզմի յաղթանակը Որոհրդարանի Միութեան մէջ, քաղաքական նոր դրութիւն կ'առեղծէ, դասակարգային ուժերու նոր փոխ-յարաբերութիւն յառաջ կուգայ միջազգային թատերաբեմին վրա, որոնք կը պարտաւորեցնեն կոմունիստ կուսակցութիւնները այլ կերպ դնել մեր պայքարի ռազմավարական եւ քաղքենական (գործնակերպ) շարք մը հիմնական հարցերը:

Որոհրդային Միութեան մէջ սոցիալիզմի յաղթանակը աշխատաւոր զանգուածներուն վրա հզոր ազդեցութիւն կը գործէ, որը կազիտալիստական երկիրներու կոմունիստ կուսակցութիւններու ձեռքին մէջ կը դառնա հատու զէնք մը:

«Մի՛ազգային յեղափոխութեան մէջ մեր գործունէութիւնը այժմ մենք կ'արտայայտենք անմեսական քաղաքականութեամբ» — կ'ըսէր Լենին, դեռ այն չրջանին մէջ, երբ մենք նոր կ'աւարտէինք միլիոնաւորներու դէմ մղուղ պատերազմը եւ կ'անցնէինք անմեսական շինարարութեան:

Այսօր մենք այդ նեղդործութիւնը կը կիրառենք սոցիալիզմի մի բանի անգամ մեծցած յաղթանակով, որ աւելի լայն եւ աւելի խոր կերպով կը քանդէ կազիտալիզմի զանգուածային հիմքերը: Այսօր այդ յաղթանակը կը պայմանէ բանւորական զանգուածներու մէջ եղած սոցիալ դեմոկրատիայի համաձայնողական քաղաքականութեան ազդեցութիւնը, կ'ուժեղացնէ բանւորներու մէջ կոմունիզմի ձգողական ոյժը եւ խախտելով փաշիզմի զանգուածային հիմքերը, կոմունիստ կուսակցութիւններու առաջ լայն հնարաւորութիւններ կը բանա այն չբոնելու վրա ներդործելու, որոնք մինչեւ այժմ կը տատանէին կազիտալիզմի եւ սոցիալիզմի միջեւ:

Երկրորդ, Որոհրդային Միութեան մէջ սոցիալիզմի յաղթանակը եւ սոցիալիստական շինարարութեան յետզոդութիւնները, աւելի եւս աջքի քաղաքականութիւն կը պահանջեն կոմունիստ կուսակցութիւններէն՝ յեղափոխական պայքարին մէջ բանւոր դասակարգի դաշնակիցներու մէջ — գիւղացութեան, քաղքացւոյ քաղաքային մանր բուրժուազիի, ինթելիկենցիայի եւ այլն:

Երրորդ, Որոհարդներու եօթներորդ Համադումարի պատմական որոշումը՝ հաւասար, ուղղակի եւ գաղանի բնտրական իրաւունքի մասնաւոր պրոլետարական դեմոկրատիան աւելի բնդլայնելու մասին, կը հարստացնէ Մարքս-Ինկիլս-Լենին-Սթալինի ուսմունքը պրոլետարական դիկտատուրայի մասին՝ սոցիալիզմի յաղթանակի եւ անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցման պայմաններու զարգացման ֆոնիքրեք (քննաճրագեայ) փոքճով:

Զորրորդ, Որոհրդային Միութեան գերն ու նշանակութիւնը կը մեծնա, որպէս ժողովուրդնեբրու ազատութեան յենարան: Ժողովուրդներուն ցոյց տալով սոցիալիստական դեմոկրատիայի կենդանի եւ աչքառու օրինակը, կոմունիստները պէտք է ժողովրդական զանգուածները զօրակոչի ենթարկեն պայքարելու համար բուրժուական դեմոկրատիայի ձեւերուն դէմ — առաջին հերթին փաշիզմի դէմ:

Հինգերորդ, Որոհրդային Միութեան դերը կ'ուժեղանա, որպէս ժողովուրդներու միջեւ խաղաղութեան յենարան: Որոհրդային Միութիւնը պատերազմի պէտք չունի, որովհետեւ համաշխարհային երկու սխտեմներու մրցակցութեան մէջ ամեն օր կը յաղթանակէ սոցիալիստական սիստեմը որ ամբողջ աշխարհին ցոյց տալ իր առաւելութիւնները կազիտալիստական սիստեմի յարաբերութեամբ:

Եթէ համաշխարհային բուրժուազին մեր երկիրը հանդիսա թողու տասնեակ մը տարի, Որոհրդային Միութիւնը իր սոցիալիստական նաձմներով կը հասնի երկրագնդի մարդկային հսկայական զանգուածները իր սիստեմի առաւելութիւններով: «Ամենահաղոր» մարդիկ, որոնք այժմ կապիտալիզմի նեցուկը կը հանդիսանան՝ յեղափոխականներ կը դառնան կապիտալիզմի դէմ: Սակայն կապիտալիստական աշխարհը ցանկութիւն չունի թոյլ տալու, որ սոցիալիստական կարգերը խաղաղօրէն զարգանան:

Ան չէ կարող ապրիլ առանց պատերազմներու եւ աշխատաւորները նորանոր պատերազմներու կը քաշէ, իր բոլոր ուժերով:

Որոհրդային Միութիւնը իր շուրջ կը համախմբէ եւ կը խմբաւորէ բոլոր անոնք, որոնք պատերազմ չեն ուզեր: Ասոնք ոչ միայն քաղաքի եւ դիւղի աշխատաւորութեան բազմամիլիոն զանգուածներն են, ոչ միայն դասակարգեր են, անոնց կուսակցութիւնները եւ կազմակերպութիւնները զանազան երկիրներու ներքինը, այլ՝ ազգեր, ժողովուրդներ եւ պետութիւններ են, որոնց անկախութեան կ'սպառնա պատերազմը: Այսպիսինները կան նոյն իսկ իմպերիալիստական խոշոր երկիրներու կառավարութիւններ, որոնք այսօր չեն պատերազմով:

Վեցերորդ, որպէս համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան ամրոց, աւելի եւս աճեր է Որոհրդային Միութեան նշանակութիւնը: Ան ամեն կերպով ուժեղացուցեր է համաշխարհային բանւոր դասակարգի դիրքերը կապիտալիստներու դէմ մղած անոր պայքարով: Աճեր է Որոհրդային Միութեան պրոլետարական առաքելութիւնը համաշխարհային յեղափոխութեան շարժման մէջ: Աճեր է Որոհրդային Միութեան պրոլետարական յատկացած դերը Համամիութենական կոմունիստ (բ.) կուսակցութեան հեղինակութիւնը համայն աշխարհի աշխատաւորութեան մէջ:

Սակայն աւելի իր հերթին կ'ուժեղացնէ Որոհրդային Միութեան դիրքերը՝ խաղաղութեան համար, սոցիալիզմի համար մղած իր պայքարին

Այս աշխատանքների շնորհիւ ՀՕԿ–ը դարձել են արտաահմանի Հայ աշխատաւորութեան համար սիրելի մի անկուսակցական հասարակական կազմակերպութիւն, որի շարքերը մտել են ու մըտնում են բոլոր այն Հայ դեմոկրատիկ ու միջին խաւի աշխատաւորները, որոնց համար Խորհրդային Հայաստանը հանդիսանում է իրրեւ փրկութեան կայան:

Այսպիսով հազարաւոր տանջւածներ լքելով դաշնակ եւ այլ թշնու ազգայնամոլների կուսակցութիւնների շարքերը՝ ոչ միայն մտել են ՀՕԿ–երի մէջ, այլ եւ նրա միջոցով կատարի պայքարի են դուրս եկել մանաւանդ դաշնակ ֆաշիստների դէմ, որոնք չեն դադարել ու չեն դադարում դաւնապան ոճրագործութիւններ եւ աւելը սարքելու Խորհրդային Հայաստանի դէմ: Ուժ զոհեր ընկել են արդէն ՀՕԿ–ի շարքերից:

ՀՕԿ–երը եղել են միակ գործօն եւ ընդդիմադիր ոյժը զանազան երկրներում՝ դաշնակ ֆաշիստների սխրահռչակ գործունէութիւնը հրապարակ հանող եւ դանդւածների սեփականութիւն դարձնողը: Այսօր, ՀՕԿ–երն են, որ գլխաւորում են Հայ աշխատաւորական դանդւածները, նրանց բերում կանգնեցնում Խորհրդային Հայաստանի բարեկամների կողքին:



Ընկ. Ադասի Խանջեան Օքոյով կը ժամանէ Երեւանի Լենինի Հրապարակը Դիտելու Համար Հայաստանի Մարզիկներու Շքերթը

ԱՐՏՈ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ԽՈՐՀ. ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՒԵՍՏԻ ՎԵՐԵԼՔԸ

ԱՐՏՈ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
Ս. Հայաստանի Լուս. Ժող. Կոմիսար

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերջին տարիներս անհնարինթաց վերելք են ապրել մեր գրականութիւնն ու արուեստը:

Մեր կուսակցութիւնը եւ խորհրդային իշխանութիւնն ստեղծել են բոլոր անհրաժեշտ պայմանները գրականութեան եւ արուեստների կատարեալ ծաղկման համար:

Հայաստանի գրական կազմակերպութեան մէջ համախմբուած են մօտ հարիւր գրողներ: Անցեալ հայ գրականութեան մի չարք դէմքեր — ինչպիսին են ժողովրդական գրող, խորհրդային ակտիւիստ վիպասան–գրամատուրգ Ալէքսանդր Շիրվանզադէն, տաղանդաւոր բանաստեղծ Աւետիք Իսահակեանը, Դեմիրճեանը, Ստեփան Զօրեանը, Վահան Թոթովենցը, Զապել Եսայեանը, Մուշեղ Մանուելեանը, առաքեալ Մնկո–Ասլերը եւ ուրիշներ — անկեղծօրէն կանգնեցին խորհրդային պլատֆորմի վրա եւ Հայաստանում պրոլետարական յեղափոխութիւնից յետո հասունացած գրական ստեղծագործողների հետ առաջ են գնում ձեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական մեր գրականութիւնը: Հայ գրքի պատմութեան մէջ իր օրինակը չունեցող չափերի է հասնում պետհրատի յետ ընծայած գեղարուեստական գրքերի տիրաժը: Եթէ 1921 թուին յետ է տեսել 6 գեղարուեստական գիրք, 7 մատուլ, 6 հազար տիրաժով, ապա 1928 թուին տիրաժը հասնում է 1,435–ի, 1931 թուին՝ 400,000–ի, իսկ 1934 թուին (ամբողջ տարին) 800,000–ի:

Մեծ նշանակութիւն են պետհրատի էժանագին գրադարանի հրատարակութիւնները, որոնցից ամէն մի գրքի տիրաժը չատ դէպքերում հասնում է 10,000–ի:

Վերջին տարիների ընթացքում առանձնապէս զարկ է տրւում հայ, ռուս եւ համաշխարհային կլասիկների հրատարակութեան գործին: Արդէն լոյս են տեսել՝ Շիրվանզադէի գեղարուեստական երկերի լիակատար ժողովածուն (8 հատոր), Յ. Պարոնեանի (4 հատորը, լոյս է տեսնելու նաեւ երկուսը), Նար–Դոսի (4 հատոր, լոյս է տեսնելու նաեւ երկուսը), Սունդուկեանի (մի մեծ հատոր 65 տպագրական մամուլից), Մ. Մեծարենցի (երկերի լիակատար ժողովածու), Պ. Դուրեանի, Հ. Թումանեանի, Մուրացանի առանձին երկերը եւ անթոլոգիաները:

Ռուս կլասիկ գրականութիւնից հրատարակւած են Պուշկինի, Տոլստոյի, Շչեդրինի, Դոստոյեվսկու, Տուրգենեվի, Գոգոլի, Զեխովի եւ այլ հեղինակների երկերը: Տպագրութեան են պատրաստւում Գէօթեյի («Ֆաուստ», «Վերթեր», «Հոմմֆական էլեգիաներ»,) Բալզակի, Ֆլոբերի, Ստենդալի մեծագոյն նշանակութիւն ունեցող գրուածքները: Արդէն լոյս են տեսել եւ կամ տպագրութեան համար պատրաստ են ռուս խորհրդային անւանի գրողների հռչակաւոր վէպերը, պոէտական, գրամատիկ ստեղծագործութիւնները:

Հայաստանի խորհրդային գրականութիւնը հանդիսանում է ամբողջ Միութեան գրականութեան առաջաւոր ջոկատներից մէկը: Մենք ունենք արդէն այնպիսի գրողներ եւ ստեղծագործութիւններ, որոնք համամիութենական արժէք են ստացել:

Խորհրդային Միութեան հրատարակչական մարմինները 1935 թուին որոշել են ռուսերէն հրատարակել հայ կլասիկ գրականութեան եւ խորհրդային գրականութեան լաւագոյն նմուշները՝ 170 տպագրական մամուլի ահմանների չափով: Այս փաստը վկայում է այն հետաքրքրութեան մասին, որ առաջացել է դէպի Հայաստանի խորհրդային գրականութիւնը, մանաւանդ պրոզոյի գրողների առաջին համամիութենական համագումարից յետոյ:

Վերջին 3 տարիների ընթացքում Հայաստանի գրողները ուրիշ մեր գրականութեանը մի չարք գործեր — Եղիչէ Չարենցի «Երկերի ժողովածուն» եւ «Գիրք Ճանապարհի» աշխատութիւնը, Աւետիսեանի «Մաքառումներ»–ը եւ «Վաթսունեակը» Հարիւրա–

նում» վէպը պղնձարդիւնաբերութեան կեանքից, Ակսել Բակունցի պատմւածքների ժողովածուն՝ «Մեւ Գիշերի սերմնացանը», Թոթովենցի «Բաղուն» մեծածաւալ վէպը, Գուրգէն Մահարու «Բանաստեղծութիւնների եւ Պոէմների» ժողովածուն, Ազատ Վշտունու բանաստեղծութիւնները (տպագրւում է նրա երկերի ժողովածուն), Մկրտիչ Արմենի «Գաղաթների երգը» եւ «Սկաուտ Թիւ 89»-ը, Նորենցի բանաստեղծութիւնների ժողովածուն՝ «Լիբրիական Ցրոնոս»-ը, Նայիրի Զարեանի «Հաւատածները», Սեւան Զօրեանի «Սպիտակ Բաղաքը», Սարեանի եւ Սոլոմոն Տարոնցու գրւածների ժողովածուները:

Գրական աւագ սերնդի կողքին հասունանում են նոր երիտասարդ կադրեր: Դաշտենցը, Սաւրէն Վահունին, Հրաչեա Բուշաբը, Գարեգին Բեսը եւ ուրիշ երիտասարդ գրողներ յուսատու քայլերով առաջ են գնում:

Մեր գրականութիւնը մասսաների կուլտուրական պահանջների մէջ առաջնակարգ տեղ է գրաւում:

Սակայն, պէտք է արձանագրել, որ գրականութիւնը յետ է մնում այդ պահանջներից: Մեր հարուստ, բազմակողմանի կեանքը դեռ գրականութեան մէջ չի ստացել իր լիարիւն, բարձր գեղարուեստական ընդհանրացումները: Առանձին գրողների առանձին ստեղծագործութիւնները վերծ չեն դաղափարական սայթաքումներից, խորթ խլոլղանների եւ ըմբռնումների արտայայտութիւններից: Գրողների դդալի մասն օրգանապէս կապւած չէ սոցիալիստական շինարարութեան կոնկրետ բնագաւառների հետ:

Մեր խորհրդային գրողները պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնեն այս հանդամանքի վրա, եւ այն ժամանակ կիրառելով սոցիալիստական ռեալիզմը, մենք կ'ստանանք մեր դարին համապատասխան բարձր գեղարուեստական կոտւներ:



Երեւանի Մեծ Թատրոնի Նախագիծը.— Գործ՝ ճարտարապետ Ակադեմիկոս ԹԱՄԱՆԵԱՆԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐԻԵՍՏԸ

Թատերական արուեստը վերջին տարիներում ունեցաւ աննախընթաց աճում ու յաջողութիւն թէ՛ քանակական, թէ՛ որակական տեսակէտից:

Առաջին հնգամեակի ընթացքում, մանաւանդ երկրորդ հնգամեակի առաջին եւ երկրորդ տարիներում մեծ չափով աճեցին, մանաւանդ որակաւորուեցին թատրոնական արուեստի ստեղծագործող աշխատաւորները. բաւական է յիշել այնպիսի ուժեղ սէզոններըլ, որպիսին են վաստակաւոր ուժեխէոր Ա. Մկրտչեանը եւ ուժեխէոր Վարդան Ամէմեանը, որոնք կարողացան յաղթահարել կլասիկներին եւ քննադատօրէն վերաստեղծելու դժուարին արուեստը, տալով թատրոնական այնպիսի խոշոր դերեր, որպիսիք են Բոմարշէյի «Ֆիգարոյի Ամուսնութիւնը» եւ Սունդուկեանի «Պաթմալյան» (Արմ. Գուլլակեան), Ց. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ»-ն ու Շեյլերի «Սէր եւ Խորամանկութիւն»-ը (Ամէմեան):

Նոյնպիսի աճ ցոյց տուին նաեւ մեր հին ուժեխէորներից վաստակաւոր ուժեխէոր Լ. Քալանթարը եւ վաստակաւոր ուժեխէոր Բուբէլեանը: Նոյն ժամանակաշրջանում վերջնականապէս ձեւաւորուեց բեմադրութիւնների արտաքին ձեւաւորման արուեստը, որի ամենատպաւորիչը ներկայացուցիչն է կոմունիստ նկարիչ Մ. Արուչեանը:

Ստեղծուեց նաեւ թատրոնական երաժշտական ձեւաւորման արուեստը: Կատարման արուեստի բնագաւառում աստիճանների կողքին (ժողովրդական դերասաններ Աբելեան, Վ. Փափազեան, վաստակաւոր դերասան Գ. Աւետեան, Ամո Խարազեան) աճեցին ու որակաւորուեցին մի շարք տաղանդաւոր դերասաններ՝ Ա. Աւետիսեան, Հ. Ներսիսեան, Զանեան, Վաղարշեան, դերասաններ՝ Գ. Զանիբեկեան, Ռ. Վարդանեան, Վ. Վարդանեան, Սեբաք, Խաչանեան, Աբուա Աբրեան, Անահիտ Մանամեան, Զարիկ Տէրեան, Գ. Գաբրիէլեան եւ այլն), որոնք իրենց խաղով տաղանդին անմոռանալի տիպեր:

Այդ ժամանակաշրջանում դպալի նուաճումներ ունեցաւ ինքնուրոյն դրամատուրգիան, տեղծելով մի շարք նոր պիեսներ եւ տալ քաչելով նոր դրամատուրգներ՝ այդպիսիներն են — Դ. Դեմիրճեանը, («Բաշ-Նաղարա»), Թոմոյենցը («Բագու-Լոնդոն»), Վ. Վաղարշեանը («Օղակում»), Մ. Զանանը («Շահնամէ», որը չհենց համամիութենական մրցանակը), Տ. Հախումեանը («Աչքերացին») եւ այլն: Անցեալ տարի յայտարարած լաւագոյն պիեսի կոնկուրսի ժամկէտը երկարաձգուեց եւ այս տարուա սկզբում կ'սոանանք դրա արդիւնքը: Այնուամենայնիւ, պէտք է խոստովանել, որ ինքնուրոյն դրամատուրգիան դեռ հետու է մեր թատրոնական աճող պահանջներին բաւարարելուց:

Թատրոնների աճման ուժեղ թափ ենք ունեցել յատկապէս շրջաններում՝ 1934 թ. կազմակերպելով կոլտնտեսական-խորհրդանեսական թատրոններ, որոնք հանդիսանում են քաղաքի եւ գիւղի տարբերութեան վերացման նախնական քայլը: Այդ տիպի թատրոնները չափազանց կարճ ժամանակաշրջանում կարողացան արդարացնել իրենց:

Պէտք է նշուել, որ մեր թատերական արուեստի հետագա զարգացման ուղիները մնում են այն, ինչ սրանից մի տարի առաջ ընդգծել է ընկ. Ստալինեանը. — «Առաջիկայում պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել իմիներոյն դրամատուրգիայի հարցին, վերջնականապէս յաղթահարել բուրժուական արուեստ ազդեցութեան մնացորդները մեր թատրոնի ստեղծագործութեան մէջ, ամէն համարձակ ծաւալել թատերական կադրերի պատրաստման գործը»:

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՖՐՈՆՏԸ

Երաժշտական ստեղծագործական բնագաւառում 1928 թ. մինչեւ մեր օրերը մենք ունեցել ենք խոշոր նուաճումներ: Մեր կոմպոզիտորները մանր ֆորմաներից հետզհետէ անցել են մեծ ֆորմաների ստեղծման, բաւական է յիշատակել այն հանդամանքը, որ մենք բեմադրելու համար միանգամայն պատրաստի ունենք ԹՈՒ 5 ինքնուրոյն օպերաներ — «Անուշ»՝ երաժշտութիւն Արմէն Տիգրանեանի, «Ալմաստ»՝ երաժշտութիւն Ալ. Սպենդիարեանի, «Սեդա» եւ «Ասդղաձոր»՝ երաժշտութիւն Ա. Տէր-Ղեւոնդեանի եւ վերջապէս «Բաչ-Նաղարա»՝ երաժշտութիւն Ցարո Սահակեանի. ունենք մի շարք սիմֆոնիկ գործեր մեծ սիմֆոնիկ օրկեստրի համար, ինչպիսիներն են՝ «Անդրկովկասեան կառուցումից մի պատկեր» — երաժշտութիւն Կ. Զաքարեանի, «Վենինի մահուան առթիւ» — սիմֆոնիկ գործ Հ. Եղիազարեանի, սիմֆոնիա թիւ 1 եւ սիմֆոնիկ նուագախմբի համար՝ Ա. Խաչատրեանի եւ այլն:

Բացի այդ բոլորից, այս շրջանում կոմպոզիտորների կողմից փորձեր են արուում ստեղծել կվարտետային գրականութիւն, որը հիմնականում պէտք է յաղողած համարել: Անհրաժեշտ է այստեղ յիշատակել Կ. Զաքարեանի, Մ. Մոմոմանեանի, Թ. Ցովհաննեսեանի կվարտետային գործերը՝ թւով մօտ տասը կտոր: Մի շարք աշխատութիւններ վիր են առել կվարտետի՝ Գ. Աղամեանի, Ա. Այվազեանի, Ս. Ալամդարեանի եւ ուրիշների կողմից: Այսպիսով ստեղծուել է լարային կվարտետի համար բաւականաչափ ուժեղ տեսակ հայ կոմպոզիտորների ստեղծագործութիւններից:

Մասսայական երգի նշանակութիւնը մեր բանուորութեան եւ աշխատաւոր գիւղացութեան դաստիարակման գործում չափազանց խոշոր է: Այս տեսակէտից մենք ունեցել ենք որոշ նուաճումներ: Մի քանի տարւա ընթացքում մեր կոմպոզիտորներն ստեղծագործել են բազմաթիւ մասսայական երգեր, որոնք մասսայականացել են եւ երգւում են ամենուրեք: Մի շարք երգեր խոշոր ընդունելութիւն են գտել մասսայի կողմից եւ երգւում են մեծ խանդավառութեամբ, օրինակ՝ «Արտերը Մլել են», «Զան Ազբերքան» — Ա. Տէր-Ղեւոնդեանի, «Գնանք Արտե-

րը», «Ես Նուռ եմ», «Աչխարհով Մէկ», «Կոմսոմոլ Էն Տղէն» — Ռոմանոս Մելիքեանի, «Կոլխոզի Աղջիկ», «Գիւրջի Աղջիկ» — Դանիէլ Ղազարեանի, «Ջան Բամբակ», «Մեր Բամբակի Արտերը» — Մ. Մազմանեանի, «Կոլխոզական Պարերգ» — Ա. Սաթեանի, «Մեր Կոլխոզի Արտերը» — Տ. Ալեախանեանի, «Ես Բերքը Բարձ Ա» — Վարդան Բունու եւ մի շարք այլ մասսայական երգեր:

Սակայն մեր կոմպոզիտորներն այս բնագաւառում դեռ շատ խոշոր անելիքներ ունեն:

Մասսայական երգի տարածման եւ առհասարակ երաժշտական առեղծագործութեան զարգացման խնդրում խոշոր դեր է կատարել պետհրատի երաժշտական հրատարակութեան դործի կազմակերպումը, որը համեմատաբար փոքր պատմութիւն ունի (կազմակերպուել է 1922 թ.ից):

Մեծ ուշադրութիւն է դարձւում ազգային փոքրամասնութիւնների երաժշտական հրատարակութիւնների վրա. տպագրւել են քրդական եւ թուրքական դպրոցական երգերի ժողովածուներ, մի շարք թուրքերէն մասսայական եւ էսթրադային երգեր:

Հրատարակւել են նաեւ դասագրքեր մանկապարտէզների եւ աչխատանքային դպրոցների համար:

Մեզանում դոյութիւն ունեն մի շարք արդէն աչքի ընկնող կվարտետներ, ինչպիսին է Կոմիտասի անուան պետական կվարտետը, որը համամիութենական մասչտաբով ամենաչքի ընկնող կվարտետներից մէկն է:

Մեր ժողովրդական երգի հաւաքման խնդիրն այսօր դառնում է ակտուալ խնդիրներից մէկը, ժողովրդական երգը պէտք է հաւաքել, ուսումնասիրել, վերամչակել եւ օգտագործել:

Մեր երաժչտագէտները անցել են մեծ փորձաններ ստեղծմանը, ինչպէս՝ օպերաներ, սիմֆոնիաներ, բալետ, կվարտետային դրականութիւն եւ այլն: Սրան զուգընթաց՝ պէտք է դարկ տալ նոր կենցաղի մասսայական եւ դպրոցական երգերի ըստեղծմանը:

Պէտք է հաչւառման ենթարկել եղած երաժչտական կադրերը, լրացնել նոր երաժչտական երիտասարդ կադրերով: Կադրերի մասսակարտման խնդրում խոշոր անելիքներ ունեն պետական կոնսերվատորիան, Լենինականի երաժչտական տեխնիկումը եւ մի քանի երաժչտական պրոֆդպրոցները:

Երկու խօսք ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ: Մեր ճեռքի տակ եղած գրականութեան մեծ մասը չի բաւարարում մանուկների պահանջը, մանաւանդ տեքստի տեսակէտից: Մեծ մասամբ տեքստերը բարդ են եւ մանուկների համար անմատչելի: Անհրաժեչտ է մանուկներին տալ նրանց հոգեբանութեանը համապատասխան եւ նրանց դիւրըմբռնելի երգեր:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Խոշոր չափով առաջ է գնացել մեր ճարտարապետութիւնը: Համամիութենական կոմունիստ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի Այրերի 23-ի որոչումը մեծ բեկում յառաջացրեց նաեւ այս բնագաւառում: Աչտ սերնդի ներկայացուցիչների (Թամանեան, Բունիաթեան) կողքին մենք տեսնում ենք խորհրդային մանաւանդ դպրոցներն աւարտած ճարտարապետներ (Թոխատ, Մազմանեան, Ահարոնեան, Մարգարեան, Սաֆարեան եւ այլն), որոնք հսկայական աչխատանք են կատարում մեր քաղաքների եւ դիւղերի, խոշոր հասարակական չէնքերի նախագծման ու կառուցման տապարիզում եւ արդէն ունէ են մի շարք որակեալ գործեր (Շարժանկարի չէնքը, Ռնխվերսալ խանութը, Կաբի զործարանը եւ այլն):

Մեր ճարտարապետութեան առջեւ հրամայական պահանջ է դրւում՝ անցեալի ճարտարապետութեան օգտագործման հիման վրա էլ աւելի բարձրացնել մեր կառուցումների որակը, տալ մեծ մեծ էպոխային արժանի կառուցումներ:



Բնակարանային կոոպերացիայի վարչական շէնքի նախագիծը:

Գործ՝ ճարտարապետ Ն. ԲԱՅԵԱՆի

Ղուկաս Ղուկասեանի յուշարձանը, Երեւան
Դարձ՝ քանդակագործ Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

ԿԵՐՊԱՐԻԵՍՏԸ

Վերջին տարիների ընթացքում կերպարուեստը նոյնպէս սոցիալիստական շինարարութեան թեմատիկայի ալարացման, սոցիալիստական բովանդակութեան ճշդրտման եւ յատկապէս որակի բարձրացման ուղղութեամբ ձեռք է բերել խոշոր նաւտումներ:

Եթէ տասնեակում մեծ մասամբ մեր նկարիչների զբաղի մասը վերաբաշխւում էր միայն մեր բնութեան տեսարանների, տալ այժմ արդէն նրանց տեղծագործութիւնների մէջ երեւան են գալիս սոցիալիզմ կերտող նոր մարդը՝ բանուորը, հաւաքատնտեսականը, կարմիր բանակայինը, պիոները, մեր շինարարութեան ամրողջական պրոցեսները եւ այլն: Այդ կապակցութեամբ այտեղ պէտք է նշել ժող. նկարիչ Մ. Սարեանի չատ արժէքաւոր գործերը՝ «Նորքի կամուրջի կառուցումը». «Կոլխոզնիկները», «Կարմիր բանակի երթը», վաստակաւոր նկարիչ Փ. Թերլեմեզեանի՝ Ալաւերդու եւ Ղարսի մետաղամշման պրոցեսների ու հաւաքածային բանուորների նկարները, վաստակաւոր նկարիչ Ս. Աղաջանեանի վարպետօրէն նկարած կարմիր բանակայինները, հաւաքատնտեսականների եռուն աշխատանքը նկարող Ս. Առաքելեանի «Համբակահաւաքը» եւ «Հաւաքածային եղիսաբեթ» նկարները: Զորպետեան հիվրկայանի շինարարութեան ամրողջական պրոցեսի կարեւոր մոմենտները պատկերող Գ. Գիւրջեանի էդիւտներն ու նրա «Անապատասաններ» նկարը, որտեղ ճիշտ կերպով պատկերացած են խորհրդային գաստիարակութեան պղեցիկ ձեւերն ու անխուսափելի դրական արդիւնքները:

Պետական Հրատարակչութեան վերջին հրատարակութիւնների հետ կապած, մեծ չափով բարձրացել է գրքի ձեւաւորման մշակոյթը մեզ մօտ: Այդ գործում պատասխանատու տեղ է գրաւում Նկարիչ Յ. Կոջոեանը՝ Սայեանի, Ա. Խանջեանի, Մաքսիմ Գորկու, Զարենցի, Ա. Բակունցի գրքերի ձեւաւորումներով: Պէտք է նշել նաեւ «Կոմունիստների զնդակահարութիւնը Զանգեզուրում» իւրաներկ մեծ կտաւի նկարը, որպէս մեր իւղանկարչութեան լաւագոյն աշխատանքներից մէկը: Գրքի ձեւաւորման տասարիզում արժէքաւոր գործեր են տուել նաեւ Տ. Խաչվանքեանը (Մարքսի, Լենինի, Յ. Թումանեանի հրատարակութիւնները), Մ. Արուչեանը (Սայեիկով–Շչեդրին, Դոն կիխոտ), Ա. Ղարիբեանը եւ ուրիշները:

Քանդակագործութեան մէջ վերջին տարիներում, քանակով քիչ, բայց որակեալ գործեր են տուել քանդակագործ Արա Սարգսեանը՝ իր Սայեանի, Մ. Նալբանդեանի կիսանդրիներով. նրան է յանձնարարած պատրաստելու քանատեղծ Պուշկինի մոնումենտը, որը դրուելու է Երեւանում Պուշկինի մահուան հարիւրամեակի կապակցութեամբ: Քանդակագործ Ս. Ստեփանեանը վերջացրել է արդէն Մայիսեան ապստամբութեան հերոսներից Ղուկաս Ղուկասեանի գրանիտէ մոնումենտը, որը նոյնպէս 1935 թուի Մայիսին կանգնելու է Երեւանի հրապարակներէն մէկում: Կերպարուեստի բոլոր տեսակներում ամէն ու զգալի որակ են ձեռք բերել նաեւ մեր երիտասարդ կադրերը, որոնք վերջին տարիներում յաջողած գործեր են տուել. դրանցից են՝ Մ. Աբեղեանը («Լիխարեա Մխչեանի տպաւորութիւնը»), Ս. Ռաշմաջեանը («Միտինգ»),

Ա. Զիլինգարեանը (*թատերական ձեւաւորումներ*), Շ. Յովհաննիսեանը, Ս. Յարութիւնեանը (*գրքի ձեւաւորումներ*), Վ. Թերզիբաշեանը (*քանդակագործութիւն*), քաղաքի նկարչական գեղարուեստական ձեւաւորման *ծ.ով՝* Լիվոնեանը, Սավոեանը, Գրիգորեանը, Ազրեանը:

Սակայն, չնայած այդ յաջողութիւններին, կերպարուեստի ստեղծագործութիւնները դեռ յետ են մնում սոցիալիստական շինարարութեան օր ըստ օրէ աճող պահանջներից:

Կերպարուեստի ստեղծագործութիւններում դեռ չէն երեւում այնպիսի մեծ կտաւներ, որոնք կարողանային տալ սոցիալիստական շինարարութեան այս կամ այն օրգանի հերոսական աշխատանքը՝ իր ամբողջութեամբ եւ իր մեծութեամբ: Ճարտարապետութեան, քանդակագործութեան եւ նկարչութեան համագործակցական՝ սինթետիկ արուեստի յետագա լայն զարգացման տեսակէտից, բացւում են խոշոր հեռանկարներ, կապած մեր քաղաքների, գիւղերի վերակառուցման, վերապլանաւորման եւ գեղարուեստական ձեւաւորման հետ: Այն փաստը, որ նոր կառուցւող մեր շէնքերն այժմ ամբողջականում են Հայաստանում ու գեղեցկանում քանդակներով ու նկարներով, ապացուցում է, որ նշած յետագա աշխատանքները կատարելու համար մօտիկ ապագայում արդէն չի բաւարարելու մեր կերպարուեստագէտների սակաւաթիւ կազրը, մի՛այն 1935 թ. կառուցուածների գծով, ճարտարապետ Ա. Թամանեանի, Ն. Բունեաթեանի, Գ. Քոչարի եւ ուրիշների պրոեկտներով որոնք արդէն կենսագործւում են — նկատի են առնւած մի քանի տասնեակների հասնող՝ դեղարուեստական բարձր որակ պահանջող հսկայական մեծութեամբ քանդակներ:

Յատկապէս թոյլ են գործարաններում, հաւաքատներում, ակումբներում կերպարուեստի զանգւածային աշխատանքները: Պակասում են այդ գծով աշխատող նոր կազրեր:

Կերպարուեստի ցուցահանդէսային աշխատանքները նոյնպէս մեծ ծաւալ են ստացել: Ցուցադրած էքսպոնատների թիւը բոլոր ցուցահանդէսների ընթացքում եղել է ընդամենը 2,410 օրինակ:

ԳԻՏԱԿԱՆ–ԳԻՏԱՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՒԱՌՈՒՄ

Մեր հաշւետու ժամանակաշրջանի սկիզբը զուգադիպում է «մեր բեկման տարւա» հետ: 1929 թիւն իրաւ որ մեծ բեկման տարի էր նաեւ գիտութեան բնագաւառում:

Հայաստանի գիտական հիմնարկները եւ գիտութեան ճակատամասի աշխատողները անմասն չեն մնացել սոցիալիստական շինարարութեան այն մեծ գործում, որին լծւած է մեր Միութեան ողջ աշխատաւորութիւնը:

Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի կարեւոր գիտա-հետազօտական հիմնարկներից է Մշակոյթի Պատմութեան Հիմնարկութիւնը: այս հիմնարկութեան գերն ու նշանակութիւնը մեր ձեւով ապագային եւ բոլանդակութեամբ սոցիալիստական մշակոյթի մշակման գործում՝ չատ մեծ է: Խորհրդային Հայաստանի երկրի երեսին եւ նրա ընդերքում հազարաւոր տարիներ, բազմաթիւ էթնոյաջողող ժողովուրդների մշակոյթին է պահւած, այդ մշակոյթը ոչ միայն հայկական, այլ եւ համամարդկային մշակոյթի է, որը դեռ սիստեմատիկ հետազօտութեան չի ենթարկւած: Մինչդեռ այդ անսպառ գիտական-մշակութային հարստութեան լուսաբանումը մեծ չափով ի'օժանդակի մեր երկրի պատմական անցեալի ճանաչմանը եւ կը նպաստի սոցիալիստական շինարարութեան բուռն ամմանը:

Այս մեծ ու գժւարին գործն ընկած է մեր Մշակոյթի Պատմութեան Հաստատութեան ուսերին: Հաստատութիւնն արշաւախումբերի, արխիւային նիւթերի, պեղումների միջոցով (Գեղարդում, Քեոլաղաշում, Թալինում, Վաղարշապատի ձեռագրատունը եւ այլն) զգալի աշխատանք է կատարել Հայաստանի մշակոյթի նոր աղբիւրների յայտնաբերման բնագաւառում: Հաստատութիւնն ստեղծել է հարուստ ֆոլկլորի (ժողովրդական բանահիւսութեան) արխիւ, որի մէջ այժմ են ընդհումը 1,500 հեքիաթներ՝ հայ եւ քուրդ աշխատաւորութեան: Ժողոված է 25 հերոսական վէպ, մի քանի հազար երգ, առակ, հանելուկ եւ այլն: Առանձնապէս արժէքաւոր կտորներ են նկրւած Լենինին եւ Ստալինին: Հաստատութիւնը մշակել է մի չարք այժմէական թեմաներ, օրինակ, Հայ-Քրանտեսութեան պատէրով նա նիւթեր է պատրաստել հին Հայաստանի առոդման սիստեմի վերաբերեալ:

Մի քանի օրինակներ մեր գիտական կադրերի աշխատանքներից:

Պրոֆ. Մ. Աբեղեանը պատրաստել է «Հայ հին գրականութեան պատմութեան» առաջին հատորը: Այդտեղ հեղինակը տալիս է Հայ հին գրականութեան պատմութեան սիստեմատիկ չարադրանքը: Տպագրւում է պրոֆ. Մ. Աբեղեանի մի այլ աշխատութիւնը՝ «Դասակարգային յարաբերութիւնները մինչդարեան առակներում», որտեղ հեղինակը վերլուծում է փեոդալիզմի չրջանի դասակարգային յարաբերութիւնների արտացոլումն առակներում:

Առանձնապէս պէտք է յիշատակել պրոֆ. Հ. Աճառեանի կապիտալ աշխատանքը — հայոց լեզւի արմատական բառարանը եւ մի չարք այլ կարեւորագոյն աշխատութիւնները, որոնք խոշոր նշանակութիւն ունեն լեզւագիտութեան առաջարիում:

Վաստակաւոր գիտնական Թադեւոսեանի գիտական ժառանգութեան մէջ բացառիկ գիտական նշանակութիւն ունի նրա «Հայ ճարտարապետութեան պատմութիւնը» աշխատութիւնը, որտեղ նա սիստեմատիկօրէն չարադրում է Հայ ճարտարապետութեան ծագումն ու զարգացումը:



Երեւանի Աստղադիտարանը

Ամբողջ գիտական արժէք ունեն Հայաստանի պատմագրութեան համար պրոֆ. Հ. Մանանդեանի մոնոգրաֆիկ (մենագրական) հետազոտութիւնները, մասնաւորապէս նրա «Ֆեոդալիզմի պատմութիւնը Հայաստանում» աշխատութիւնը: Ճշգրտութեան արժանի է նաեւ Աչքարհրկի Բալանթարի խմբի աշխատանքը հնագիտութեան բնագաւառում:

Պրոֆ. Մ. Աբեղեանի խմբագրութեամբ եւ Կ. Մելիք-Օհանջանեանի աշխատակցութեամբ կազմուել եւ յանձնուել է հրատարակութեան «Հայ ժողովրդական վէպը»: այդտեղ հաւաքած են Հայ գիւղացու առեղծուածութիւնները, որոնք արտացոլում են այդ գիւղացու սոցիալական յարաբերութիւնները, հոգեբանութիւնը, նրա ու կոչը եւ այլն:

Անհրաժեշտ է յիշատակել ընկեր Ղափանցեանի եւ երիտասարդ գիտական աշխատակից Մեւակի աշխատանքները լեզուաբանութեան ասպարէզում:

Երիտասարդ դիտ. աշխատող Արամ Ղանալանեանը վերջացրել է «Հայ չինականի երգերը» վերտառութեամբ չափազանց ուշագրաւ աշխատութիւնը:

Հասարակական գիտութիւնների գծով աշխատողներից յետ չեն մնում նաեւ մեր գիտական կադրերը, որոնք աշխատում են գիտութիւնների այլ բնագաւառներում. բաւական է յիշատակել քիմիայի բնագաւառում պրոֆ. Սահակեան Ղամբարեանի, պրոֆ. Պապա Քալանթարեանի, պրոֆ. Յակոբ Յովհաննիսեանի (բիոլոգիական քիմիա), պրոֆ Լեւոն Ռոտինեանի, բժշկականութեան ասպարիզում դոցենտ Յանարջեանի աշխատութիւնները, Քալանթարեան Ելենայի հետազոտութիւնը լեռդրի պարապիտի մասին, պրոֆ. Մ. Թումանեանի աշխատութիւնը վայրի ցորենի յայտնաբերման մասին, պրոֆ. Ա. Տէր Պօղոսեանի աշխատութիւնը հիդրո-բիոլոգիայի ասպարիզում, Թամամշեանի աշխատութիւնները, պրոֆ. Ալեքսանդր Յակոբեանի դոցենտ Զրբաշեանի, երիտասարդ գիտական աշխատող Մխիթարեանի, պրոֆ. Տրոյիցկու (Հայաստանի մոլախոտերի ուսումնասիրութիւնները), երիտասարդ գիտ. աշխատող Դաւթեան Արշալույսի (Անդր-Կասպյան Աղը-Ճտաղայիները) եւ այլ գիտական աշխատողների հետազոտութիւնները:

Տեխնիկո-տնտեսագիտական Թանգարանը, որը կազմակերպուել է 1931 թուին, իր երկու հիմնական բաժիններում (արդիւնաբերական եւ գիւղատնտեսական) մշակման է ենթարկում մեր հումքային նիւթերը եւ ցուցադրում: Արդիւնաբերական բաժինը, բացի մեր արդիւնաբերութեան կարեւոր ճիւղերի, օգտակար հանածոների եւ բնական շինանիւթերի ցուցադրումից, կազմել է Հայաստանի օգտակար հանածոների հարուստ հաւաքածուներ՝ իւրաքանչիւր հանքին կցելով նրա տեղերիտրիալ տարածման քարտէզն ու բացատրականը: Թանգարանը կազմել է Հայաստանի Մ. Ս. Հանրապետութեան ռելիեֆ քարտէզը, որն իր մշակածութեամբ եւ մասշտաբով մեկն է քարտէզագիտութեան մէջ:

Բնագիտական թանգարանն իր գործունէութեան վերջին երկու տարիների ընթացքում կազմակերպել է գիտական արշաւախումբեր Հայաստանի զանազան վայրերում եւ հարստացրել է Թանգարանը բազմաթիւ լաւագոյն էքսպոնատներով:

Մշակոյթի Պատմական Թանգարանը հաշուառուած ժամանակաշրջանում ձեռք է բերել մեծարժէք էքսպոնատներ՝ 25,173 հատ, որոնց մեծ մասը վի-

բաներում է մեր անցեալի մշակութային ժառանգությանը: Այս թանգարանը կարողացել է մեծ չափով ծառայել իր ցուցադրական աշխատանքները: Չնայած դրան, թանգարանի աշխատանքներում դեռ կան ղեկլի բացեր, որոնք բացատրում են նրանով, որ բաւարար մարքսիստական լուսաբանութեան չեն ենթարկւած Հայաստանի պատմութեան, դրականութեան պատմութեան եւ արւեստի խնդիրները: Թանգարանի աշխատանքի յետագա ծաւալման համար կարեւոր նշանակութիւն ունի թանգարանի չէնքի ընդարձակման եւ թանգարանային կազմերի հարցի լուծումը:

Վաղարշապատի մատենադարանի նշանակութիւնն ու արժէքը չի սահմանափակւում միայն մեր հանրապետութեան չրջանակներում: Այդ ճեռագրատունն անսպառ չռեմարան է ոչ միայն Հայաստանի, այլ եւ ողջ Մերձաւոր Արեւելքի պատմութիւնն ուսումնասիրելու համար: Անցեալի այդ վիճաչուք յուչարձանի այցելուները (որոնց թիւը տարեկան 15,000-ից աւելի է) մեծ հետաքրքրութիւն են արտայայտում նրա մասին:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր Պետական Համալսարանը, որը հիմնադրւեց Հայաստանի խորհրդայնացման առաջին տարում, իր չրջանաւարտները ունել է արդէն առաջին հնդամեակի առաջին իսկ տարում:

Մինչեւ 1930 թիւը ներառեալ Պետական Համալսարանը ունել է ընդամենը 934 չրջանաւարտ, հետեւեալ մասնագիտութիւններից — գիւղատնտեսներ՝ 283, ինժեներներ՝ 47, բժիչկներ՝ 137, մանկավարժներ՝ 254, սոց. տնտեսագէտներ՝ 213:

Նոյն ժամանակամիջոցում Պետական Համալսարանը պատրաստել է չուրջ 70 երիտասարդ գիտական աչխատուորներ, որոնք այժմ մեր զանազան գիտական հիմնարկներում եւ հատատուած թիւններում աչխատում են գիտական ասպարէզում:

Հիմնական յառաջադրանքները, որ ունի մեր Իչխանութիւնը Պետական Համալսարանին, հետեւեալներն են.—

1. Ամրացնել փակուլտետները բարձր որակի պրոֆեսորական կազմերով:

2. Աւելի մօտ կանդնել մեր տնտեսութեան եւ մչակոյթի այժմէական խնդիրներին, ծառայելով գիտական եւ կրթական աչխատանքները:

3. Արագացնել գիտական եւ կրթական հիմնարկների կազմակերպումը — համապատասխան ներդրումներ կատարելով այս բնագաւառում թէ՛ չինարարութեան եւ թէ տարբերման համար:

4. Բարելաւել կրթական դործը, բարձրացնել նրա որակը:

5. Ստեղծել է՛լ աւելի բարւոք մչակութային-կենցաղային պայմաններ մեր պրոֆեսուրայի եւ ուսանողութեան համար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՄՑՆԵԼ ՄԵՐ ԴԱՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ

Մեծ են մեր նաճախութիւնները, հպարտանալ կարող ենք, սակայն դլխաւորապէս կործանիչ է մեր դործի համար:

Ցետ են մնում մեր մչակութային աչխատանքները դիւղում:

Հաւաքատնտեսական դիւղը՝ բնած ունեւորութեան ուղին՝ հսկայական պահանջ է յառաջադրում մեզ. «քիսկական եւ խոր մչակոյթի նաճախումը հերթական կարեւորագոյն խնդիրն է դարձել,— մչակոյթի՝ ամեն բանում, սկսած, տնտեսական հետաքրքրութեան բարձրագոյն աստիճաններից մինչեւ մչակութային կենցաղն անձնական կարիքներում, ընտանիքում»:

Աւելի մեծ ուչադրութիւն դիւղին — սա պէտք է լինի համադումարի մարտական ուղղութիւնը մչակութային աստղերդում:

«Դիլիաւորն այժմ տեխնիկային տիրապետած մարդիկն են, դրում է «Պրավդա»ն. այս ասած է ոչ միայն մեսալուերդներին: Այս ասած է ամբողջ երկրին: Այս լողունգի իրականացման մէջ է պարփակւած մեր չարժման յաղողութիւնը: 1935 թւականը դառնալու է մարդկանց նկատմամբ ուշնեցած հոգատարութեան հսկայական ածի մեծագոյն տարին: Կոլխոսլիզմը՝ որքան նա վեր է բարձրանում՝ այնքան աւելի վար է դլորում մարդկանց: Սոցխոլիզմի պայմաններում մարդիկ ածում են հասարակական կարդերի հետ միասին: Այտեղ է ահա ընկեր Ստալինի՝ մարդկանց մասին ուած լողունգի պատմական մեծ իմաստը»:

«Ցաղթանակը ծնում է ուելի մեծ յաղթանակ» — այս է խորհրդային դարդացման օրէնքը: Այդ յաղթանակների հիման վրա՝ մշակութային շինարարութիւնը հասցնենք դարի բարձրութեան եւ վիճութեան: Մենք բոլորս կերտում ենք նոր սոցիալիստական հասարակութիւն: Լաւ է ասել Զարենցը, թէ՝

«Նոյն հերկին եմ մեմ հերկում գրչով ու մուրճով,
եւ արօրով, խոփով երկաթէ.—

Հալոցքներում մեր թեժ, մեր դաշտերում տօթ,
եւ գրքերում մեր արդէն —
Նոյն թեքին է բարձրանում ու յորդում,
Նոյն երգը եռանդոտ.—
եւ բոլորիս նոյն ձեռքն է առաջնորդում,
Նո՛յն դեկավարն անդող»:

Այդ մեծ առաջնորդի երկաթեայ կամքի եւ իմաստուն մտքի չնորհիւ դեկավարելիքեմ՝ Կոմկ. Միութեան անբաժան մասը կազմող Խորհրդային Հայաստանի բանւորները, հաւաքատնտեսականները, մասնագէտներն ու ուսուցիչները, գրողներն ու պրոֆեսորները, այդ բոլորը-բոլորը կը կերտեն մեծ սոցիալիստական մչակոյթը:

Ա. ԳԱԼՈԵԱՆ (Նախագահ Ֆիզկուլտուրայի Գերագոյն Խորհրդի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԻՆ

Մեր ֆիզկուլտուրայի կազմակերպութիւնները Խորհրդային Հայաստանի 15-րդ տարեդարձը դիմաւորում են խոշոր յաջողութիւններով: Ֆիզկուլտուրայի չարժումը մեզնում անթօռչէն կապւած է եղել խորհրդային կարգերի առեղծման հետ: Յարական եւ դաշնակցական տիրապետութեան ժամանակ, երբ երկիրը խարխափում էր տգիտութեան ու խաւարի մէջ, ծնծաղուկ կը լինէր խօսել կամ մտածել ֆիզիքական կուլտուրայի մասին: Հատ ու կենտ սկաուտական խմբակներ, որոնք կազմակերպւում էին ամերիկեան ներկայացուցչ ոեւէմիի տակ մանկատներում եւ որբանոցներում — ահա Դաշնակցականների տիրապետութեան օրօք եղած «ֆիզկուլտուրան»:

Խորհրդային իշխանութիւնը եւ կոմունիստական կուսակցութիւնը միշտ էլ խոշոր տեղ են յատկացրել մեր աշխատաւոր մասսաների ֆիզիքական դաստիարակութեան գործին: Ֆիզկուլտուրան երկրին տւել է լաւագոյն կրծքանշանակիր բանւորներ, մեր սոցիալիստական գաւառների հերոսական կոմսոմոլականները, զրոյական կայսրաս եւ առոյգ պատանիները, կարմիր բանակի ամրակուռ մարտիկները: Մեր մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ լոզունգը — «Մենք պէտք է աւեցնենք բանւորների նոր սերունդ, որոնք ընդունակ են բարձրացնելու խորհրդային երկրի հզօրութիւնը, իրենց կրծքով պաշտպանելու այն թշնամու յարձակումներից»— դարձել է այսօր մեր ֆիզկուլտուրայի կազմակերպութիւնների աշխատանքի մարտական ծրագիրը: Այսօր Հայաստանում չկայ մի հիմնարկութիւն, ձեռնարկութիւն կամ կազմակերպութիւն, որն իր ֆիզկուլտուրայի խմբակը չունենայ: Ֆիզկուլտուրան ամենայն եռանդով եւ խոր արմատներ գցելով մեր աշխատաւորական լայն զանգուածների մէջ, յաջողութիւն է ունեցել կենցաղային անհրաժեշտութիւն մեր լայն աշխատաւորական մասսաների համար:

Այսօր, Հայաստանի ֆիզկուլտուրայի 12-րդ տարեդարձի օրը միաժամանակ մեր ֆիզկուլտուրայի զօրատեսի օրն է: Հայաստանի ֆիզկուլտ կազմակերպութիւնները իրենց տարեդարձի օրը դիմաւորում են որակական եւ քանակական մեծ յաջողութիւններով: Հ.Ֆ.(բ)Կ. կենտկոմի բոլշեւիկեան ճիշտ դիւանագործութեան եւ ֆիզկուլտուրայի ջերմ բարեկամ ընկ. Ա. Ժանջնանի մշտական հոգատար վերաբերմունքի եւ գործնական օժանդակութեան շնորհիւ դժուար չափով աճել եւ զարգացել են մեր ֆիզկուլտ կազմակերպութիւնները:

Մինչեւ հիմա Հայաստանի մարզիկները սպորտի տարբեր ձեւերում սահմանել են 184 ռեկորդ: Այդ թւում հանրապետական ռեկորդներ՝ թեթեւ աթլետիկայից — 42, ծանրութիւնները բարձրացման (չառնգի)՝ 36, հեծանւային՝ 14, մոտո՝ 2, դահուկային՝ 10, լողի՝ 7 եւ այլն, ընդամենը 136: Անդրկովկասեան ռեկորդներ՝ ծանրութիւնների բարձրացման մէջ՝ 18, հեծանւային՝ 3, թեթեւ աթլետիկա՝ 9, ընդամենը՝ 39: Համամիութենական ռեկորդներ են սահմանել ծանրութիւններ բարձրացնելու՝ 8 հատ եւ վերջապէս համաշխարհային մի ռեկորդ ծանրութիւն բարձրացնելու մէջ: Սրանք անշուշտ պերճախօս փաստեր են, որոնք խօսում են սպորտի բարձր որակի մասին: Սակայն որակի հետ մէկտեղ բարձրացել է մեզ մօտ նաեւ ֆիզկուլտ կազմակերպութիւնների քանակը: Անցեալ տարւում 68,865 մարդիկների փոխարէն այս տարի մենք ունենք 75 հազար կազմակերպւած մարզիկներ: 35,022 կրծքանշանակիրների փոխարէն՝ մենք ունենք «ՊՄՊ»-ի առաջին կոմպլեկսի նորմաները լրիւ կերպով տւած 38 հազար սպորտսմեններ: Մեր մի չարք առաջաւոր ռազմիկներ՝ ծանր աթլետներ Մանուկեանին, Սիմոնեանին, Մանդալեանին, լաւագոյն վազորդներ՝ Բասոյին, Ալլահվերդեանին, Հեծանւորդներ՝ Կ. Յովհաննիսեանին, Օ. Բոչաբեանին, դնդակ նետող Սամւելեանին, բռնցքամարտիկ՝ Հ. Խաչատրեանին, Պապեանին, թենիսի Անդրկովկասեան վարպետուհի՝ Աֆանասեանին, չեմպիոնուհի Գասպարեանին, ըմբիշ՝ Վարդանեանին եւ այլն — ճանաչում է արդէն ոչ միայն Հայաստանի, այլ եւ Անդրկովկասեան աշխատաւորութիւնը: Իսկ մեր լաւագոյն ծանր աթլետ Ս. Համբարձումեանը յայտնի է այսօր ոչ միայն Միութեան մէջ, այլ եւ արտասահմանում:

Հայաստանի ֆիզկուլտ չարժման մէջ իր փառաւոր տեղն է գրաւում անշուշտ մեր «Դինամո» սպորտային ընկերութիւնը, որն իր ծաղկուն կրթել ու դաստիարակել է բազմաթիւ անդրկովկասեան եւ մէութենական ռեկորդսմեններ:

Այն, ինչ որ թւեցինք մենք այստեղ, անշուշտ մեր նւաճումներն են: Սակայն բաւարարո՞ւմ են մեզ արդեօք այդ նւաճումները, վճռականօրէն պէտք է ասել ոչ···

Ֆիզկուլտուրան աւելի լայն ծաւալուն հնարաւորութիւններ ունենք մենք Հայաստանում, հնարաւորութիւններ, որոնք դժբախտաբար չատ քիչ են օգտագործւում, որի հետեւանքով սպորտի չատ ձեւեր ուղղակի յետ են մնում: Վերցնենք թենիսը ջրային սպորտը: Հայաստանի ջրային հարստութեան լայն պայմաններում սպորտի այդ ձեւը կրնայ քայլերով է առաջ գնում: Նախ, ջրային սպորտի սկզբնը մենք սկսում ենք չափազանց ուշ, եւ, որ զլխաւորն է, լողի մրցումները մեզ մօտ կրում են միանգամայն պատահական բնոյթ: Այնպիսի մի մեծ լիճ, ինչպիսին է Սեւանը, որը կարող է դառնալ ջրային սպորտի մի կոմբինատ-դպրոց, ուր լողի

հետ մէկտեղ կարելի է զարգացնել նաեւ թեւավարութիւնը՝ միանգամայն անտեսած է մեր ֆիզկուլտուրայի կազմակերպութիւնների կողմից: Ցեւին պլանում է գտնւում մեզ մօտ նաեւ թենիսը: Շրջաններում, կարելի է ասել, սպորտի այս ձեւը դոյզոյովին մոռաք չի գործել: Բացի Երեւանից ու Լենինականից մեզ մօտ ուրիշ ոչ մի տեղ թենիս չեն խաղում, մինչդեռ հնարաւոր է եւ անհրաժեշտ սպորտի այդ ձեւը զարգացնել մեր բանւորական եւ բամբակացան շրջաններում՝ Ալաւերդում, Ղափանում, Կիրովականում, Հոկտեմբերեանում, Վաղարշապատում, Դամարլուում եւ այլն: Մեր բանւորները եւ կոլտնտեսականները մօտիկից ծանօթանալով թենիսին՝ սիրով կը կապուեն սպորտի այդ ձեւի հետ: Այնուհետեւ Թոյլ եւ անբաւարար է մեզ մօտ բանգամարտը եւ ըմբշամարտը· յատկապէս բանգամարտը, կարելի է ասել, հանւած է մեր շրջանային ֆիզկուլտ կազմակերպութիւնների սեկցիաների օրացուցային պլանից:

Ֆիզկուլտուրայի ասպարէզում մեր Թոյլ օղակներից մէկն էլ մեր շրջանային ֆիզկուլտ խորհուրդների անբաւարար աշխատանքն է: Գիւղում դեռեւս շրջանային ու տեղական կազմակերպութիւններից ոչ բոլորն են լիովին ըմբռնել ֆիզկուլտուրայի խոշոր դերը մեր արդիւնաբերութեան արտադրողականութեան բարձրացման, ինչպէս նաեւ երկրի պաշտպանութեան գործում: Լենինականի, Կիրովականի, Ալաւերդու, Ստեփանաւանի, Վաղարշաի եւ մի շարք այլ շրջանների ֆիզկուլտ կազմակերպութիւնները դեռ չատ անելիքներ ունեն առաջիկայում: Գիւղական եւ շրջանային մեր ֆիզկուլտ կազմակերպութիւնները դեռեւս սպորտի բարձր ցուցանիշներ չեն ունէ: Թոյլ են կազրերը տեղերում, հողագործները պատրաստում են միջոցներ արամադրել սպորտի ծաւալման համար, պակասում են սպորտհրապարակներն ու սպորտ սարքաւորումը, չունենք պատրաստած մարզիչներ եւ այլն: Հողժողկոմատի հանրապետական ֆիզկուլտ բնագաւառի աշխատանքներում նկատւող ակտիւութիւնն ու աշխուժութիւնն անշուշտ վերջերս զգալի բնոյթ է մացրել մեր շրջանային ու կոլտնտեսական ֆիզկուլտ կազմակերպութիւնների մէջ: Պիտի աշխատել պահպանել եւ ուժեզացնել այդ տեմպը: Հողժողկոմ ընկ. Մամիկոնեանն ունի բոլոր հնարաւորութիւնները աւելին անելու, անհրաժեշտ է միայն, որ նրան լայն օժանդակութեան դան շրջանային կուսակցական, կՎՑԵՄ եւ պրոֆիութիւնները:

Մի հիանդալի կողմ, որի վրա չենք կարող չանդրադառնալ, դա կանանց Թոյլ մասնակցութիւնն է ֆիզկուլտուրայի շարժմանը: Հայաստանի 75 հազար մարզիկներից կանայք կազմում են ընդամենը 5 հազար հոգի: Սա չափազանց չնչին թիւ է: Յատկապէս Թոյլ է կանանց ներգրաւումը ֆիզկուլտուրայի մէջ շրջաններում եւ մանաւանդ ազգային փոքրամասնութիւնների մէջ: Բասարգեչարում, Վեդիում, Ամասիայում եւ այլն Թուրք կանայք չենք մասնակցում ֆիզկուլտ պարապմունքներին, որովհետեւ շրջանային ֆիզկուլտ խորհուրդներն այդ ուղղութեամբ համարեա ոչ մի աշխատանք չեն կատարում: Այս բնագաւառում կազրերի պակասը չափազանց զգալի է: Մենք չունենք ֆիզկուլտուրայի Թուրք կին հրահանդիչներ: Դրութիւնը նոյնն է նաեւ քրդական շրջաններում:

Ֆիզկուլտուրայի 12–րդ տարեդարձին, ի մի դումարելով մեր նւաճումները ու թերութիւնները՝ մեր կուսակցութեան տալինեան դեկավարութեամբ անշուշտ կը կարողանանք վերացնել նկատւող բացերը՝ սպորտի տեխնիկայի բնագաւառում ձեռք բերելով նորանոր յաղթանակներ:



Ս. Հայաստանի Մարզիկներու Երքը Արովեան Փողոցի Վրա

Ռ· ԴԱՇՏՈԵԱՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Դեկտեմբերի 26–ին լրանում է անգրագիտութեան վերացման մասին լոյս տեսած Լենինի դեկրետի 15–ամեակը եւ Հայաստանի «Կորչի Անգրագիտութիւնը» ընկերութեան 10–ամեակը: Այդ օրը Լուսժողկոմատը եւ անգրագիտութեան վերացման գործով զբաղվող հասարակական կազմակերպութիւնները հաշիւ են տալու այն մասին, թէ ինչ չափով են կենսագործել Իլիչի՝ մեր մեծ առաջնորդի պատմական ու խոշորագոյն պատգամներից մէկը — անգրագիտութիւնը վերացնելու դեկրետը:

Մեր երկիրը, որտեղ մինչ խորհրդայնացումը տիրում էին խաւարն ու տգիտութիւնը, որտեղ աղգաբնակչութեան 85 տոկոսից աւելին անգրագէտ էր, այժմ անգրագիտութիւնը հիմնականում վերացած երկիր է դարձել:

1934 թ· հոկտեմբերին Լուսժողկոմատի կողմից կատարուած հաշուառման համաձայն՝ 16–ից 45 տարեկան անգրագէտները են մնում 70 հազար հոգի, որը կազմում է մեր երկրի աղգաբնակչութեան 5·8 տոկոսը: Ուրեմն խորհրդայնացումից մինչեւ այժմ խորհրդային իշխանութեան, կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ 85 տոկոսից աւելի անգրագէտների փոխարէն, մենք ունենք այժմ 94·2 տոկոս գրագէտ աղգաբնակութիւն: Դա մեծ նուաճում է, մեծ յաղթանակ է, որ մենք տարել ենք անգրագիտութեան վերացման բնագաւառում:

Անգրագիտութեան վերացման աշխատանքը Հայաստանում սկսել է 1921–22 ուս· տարուանից: Սկզբնական տարիներում գործը կազմակերպւում եւ առաջ էր տարւում միայն Լուսժողկոմատի եւ նրա օրգանների միջոցով: Սակայն մեծ թուով լիկվիդացիաներ բացել, մեծ թուով հասակաւոր սովորողներ ընդգրկել միայն պետական կամ տեղական բիւջեյով հնարաւոր չէր: Այն ինչ անգրագէտների զրագէտ դարձնելու պահանջը չատ մեծ էր եւ այժմէական: Անհրաժեշտ էր անգրագիտութեան վերացման գործը դարձնել մասսայական գործ, որպէս կուլտուրական յեղափոխութեանց հիմնաքար: Դրա համար էլ 1924–25 ուս· տարում հիմնւում է «Կորչի Անգրագիտութիւնը» ընկերութիւնը — «կանը», որը բացի անգրագիտութեան վերացման գործին նիւթական միջոցներ տրամադրելուց, մոբիլիզացիայի ենթարկելով հասարակական ուժերն ու միջոցները, անմիջականօրէն զբաղւում է անգրագիտութեան վերացման կազմակերպչական գործով:

Հայաստանի խորհրդայնացումից սկսած մինչեւ 1934 թ· անգրագիտութեան վերացման ոլոր ցանցում Հայաստանի մասչտաբով սովորել են 673,053 հասակաւոր անգրագէտներ եւ կիսագրագէտներ: (Ընդգրկման այդ խոշոր թիւը բացատրւում է նրանով, որ որոշ տեղերում վատորակ աշխատանքի, վատ հաչուառման պատճառով եղել են երկու երեք տարով սովորողներ): ԿԱՆԸ–ի գծով սովորողները կազմում են այդ ընդհանուր թւի 35 տոկոսը:

«ԿԱՆԸ»ի գծով բացած բոլոր լիկվիդացիաները պահել են միայն հասարակական միջոցներով եւ ուժերով: Անգրագիտութեան եւ կիսագրագիտութեան ինչպէս եւ կուլտուրական յետամնացութեան վերացման գործին օգնելու նպատակով 1923 թ· դեկտեմբերին Լուսժողկոմատի Անգրագիտութեան վերացման Արտակարգ Յանձնաժողովի նախագահ ընկ· Ալեքսանդր Խնկոյեանի նախաձեռնութեամբ կազմակերպւում է քաղուստ աշխատակիցների մի խմբակ, որը եւ Հայաստանում հիմք է դնում «Անգրագիտութեան վերացման նպաստող ընկերութեանը»: Այդ ընկերութիւնն իր չուրջը համախմբեց մօտ 250 հոգի:

1924 թ· դեկտեմբերի սկզբներին «Անգրագիտութեան վերացմանը նպաստող ընկերութիւնը», որը համարեա արդէն կազմալուծւած էր, վերակազմւում է եւ վերանւանւում է «Կորչի Անգրագիտութիւնը Ընկերութիւն» — ԿԱՆԸ: Ընկերութիւնը կազմակերպւում է բջիջային սիստեմով: Անգրագիտութեան վերացման գծով այդ ժամանակ աչքի ընկնող աշխատանք են կատարում համալսարանը, բանֆակը, երկրորդ աստիճանի դըպրոցները: Հետզհետէ գործն ընդարձակւում է· աւելանում է ԿԱՆԸ–ի բջիջների թիւը, թէ երեւան քաղաքում եւ թէ չրջաններում: Որոշ չրջաններում կազմակերպւում են ԿԱՆԸ–ի գաւառական վարչութիւններ: Վերակազմւում եւ վերամշակւում է ընկերութեան կանոնադրութիւնը:

1927 թ· ԿԱՆԸ–ին միանում է նաեւ Թրքական նոր այբուբենի ընկերութիւնը եւ գործը հետզհետէ սկսում է աւելի ու աւելի ծաւալել ԿԱՆԸ–ի բջիջների միջոցով: ԿԱՆԸ–ի ցանցով անցած բազմաթիւ, անգրագէտ չքաւոր գիւղացիները ոչ միայն չուառով զրագէտ գարձան, այլեւ չարունակիցին սովորել աւելի բարձր տիպի գաղուտ գըպրոցներում, առաջին եւ երկրորդ աստիճանի կուսգըպրոցներում, գիւղատնտեսական բանֆակում, որըն սկզբի տարիներում ամբողջովին համարեա բաղկացած էր բառարհներից· այնուհանդերձ չատերն էլ հասան բարձրագոյն գըպրոցները: Շատ է այդպիսիների թիւը: Նշենք թէկուզ մեկին՝ Տիգրան Բաղդասարեանին, որ երկար ժամանակ բատրակ է եղել, իսկ Խորհրդային իշխանութեան օրոք 1922 – 23 ուս· տարում աւարտել է լիկվիյան,

յետո դասընթացներ, առաջին աստիճանի կուսդպրոց, վարել է մի շարք պատասխանատու պաշտօններ եւ այժմ երեւանի Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի ասպիրանտ է: Նախկին բռնակիր Մուրադ կիրակոսեանն ուսուցել է լիկիայանը եւ դասընթացներ, այժմ ճան. չին. կենսաբանութեան նախագահն է:

Տասնեակ հազարներով անդրադարձ բանուորներ, աշխատաւոր գիւղացիներ, կանայք այժմ հնորհիւ Սորվրդային իշխանութեան գրագէտ են դարձել եւ սոցիալիստական շինարարութեան զանազան բնագաւառներում՝ գործարաններում, կոլտնտեսական դաշտերում, խորհուրդներում մասնակցում են երկրի կառավարման գործերին:

Անդրադարձութեան վերացման գործին լայն մասնակցութիւն են ունեցել նաեւ հասարակական կազմակերպութիւնները, պրոֆիութիւնները, ԼԿՅԵՄ մութիւնը եւ ուրիշներն: Հերոսական աշխատանք է կատարել եւ կատարում է մեր մասսայական ուսուցչութիւնն այդ բնագաւառում:

Բայց եւ այնպէս, այդ նահանգների կողքին, մենք դեռ ունենք 70 հազար անդրադարձ: Սրանց մեծ մասը կայծակը են, այն էլ ազգային փոքրամասնութիւններից՝ քրդուհիներ եւ թրքուհիներ: Սրանց մէջ կատարելիք աշխատանքը դառնում է էլ աւելի պատասխանատու:

Պէտք է ազգային փոքրամասնութեան շրջաններում (Թալին, Ազրարա, Վեդի, Ղամարլու, Աբարան, Դիլիջան) շրջգործկոմները, համաձայն կենսագործման որոշման, կազմակերպեն դասընթացներ՝ քրդուհիներից եւ թրքուհիներից ուսուցչուհիներ պատրաստելն անդրադարձ կանանց դրագէտ դարձնելու համար:

Անհրաժեշտ է էլ աւելի հասարակայնութիւն առեղծել ԿԱՆՀ-ի շուրջը: Կոմերիմիութիւնը եւ ուսուցչութիւնը, պրոֆիութիւնները եւ խորհրդային ինքնիշխանութիւնները, լուսժողկոմատն ու նրա տեղական օրգանները, քաղխորհուրդները, շրջգործկոմները, գիւղխորհուրդները եւ ողջ խորհրդային մասսան էլ աւելի եռանդով լծուն անդրադիութեան վերացման գործին, վերջնի չնչին հարւածը հասցնելու անդրադարձութեան մնացորդներին, Լենինի գիտական ամրողջովին կենսագործելու եւ մեր երկրում 1935 թուին անդրադիութիւնն իսպառ վերացնելու համար:

ՄԱՐՋԻԿՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԸ ԸՆԿ. ԽԱՆՋԵԱՆԻՆ

Նոյեմբերի ծնունդ Հայաստանի Ֆիզկուլտուրնիկների 75 հազարանոց կազմակերպած Աչխատանքի ու Պաշտպանութեան ամրակուռ, կենսունակ բանակի կողմից մեր յաղթանակների կազմակերպիչ Հկ(բ)կ կենտկոմի, ձեզ, ընկեր ԽԱՆՋԵԱՆ, Ֆիզկուլտուրական ջերմագին ողջոյն:

15 տարի առաջ քաղցի, թալանի ու աւերակների դաշնակցական Հայաստանում, այսօր, մեր յաղթանակների 15-ամեակին, նորհիւ Հկ(բ)կ կենտկոմի ու ձեր անմիջական ղեկավարութեամբ, նորհիւ լենինեան ազգային քաղաքականութեան ճիշտ կիրառման, արդիւնաբերական զգալի աճ ունեցող, գիւղատնտեսական զգալի անասնաբուծութիւնների փոխարէն ահել են ունեւոր կեանքի ուղին բռնած կոլտնտեսութիւնները:

15 տարի առաջ Հայաստանում ֆիզկուլտուրայի եւ սպորտի մասին խօսք անգամ լինել չէր կարող, իսկ այժմ Սորվրդային Հայաստանը պայքարում է իր կարմիր ֆիզկուլտուրնիկների վառ դէմքի րոյ, որոնք պատրաստ են իրենց կրծքով պաշտպանելու Սորվրդային Հայրենիքը:

Շնորհիւ կուսակցութեան եւ կառավարութեան անվակցութեան, ձեր ամենօրեայ կոնկրետ ու հոգատար վերաբերմունքի, Հայաստանի ֆիզկուլտուրայի կազմակերպութիւնը մեծ նահանգներ է ձեռք բերել: Մենք այժմ աւելի բարձր ենք թռչում, աւելի արագ ենք վազում եւ ֆիզկուլտուրայի ամուր ենք, քան երբեւիցէ:

Այսօր մենք երկրին աւել ենք 136 համահայասանական, 39 անդրկովկասեան, 8 համամիութենական եւ 1 համաշխարհային ռեկորդ:

15 տարուա պայքարի ու յաղթանակների հնորհիւ այսօր մեր ֆիզկուլտ կազմակերպութիւնը դարձել է ԽՍՀՄ-ի սպորտի առաջատար ջոկատներից մէկը:

Հայաստանի ֆիզկուլտուրնիկները իրենց անյողդողդ կամքն են յայտնում Սորվրդային Հայաստանի յաղթանակների կազմակերպիչ Հկ(բ)կ կենտկոմին եւ ձեզ, ընկ. ԽԱՆՋԵԱՆ, հարկ եղած դէպքում մարտական գործիքները փոխարինելու մարտական հրացանների ու կրծքով պաշտպանելու Սորվրդային Միութեան սահմանները թշնամու յար ձակումներից:

Անդրկովկասի ֆիզկուլտ կազմակերպութիւնների հետ ձեռք-ձեռքի ուած, պայքարելով ԽՍՀՄ-ի սպորտի առաջատար շարքերում, մենք կը նահանջ բուժգուական սպորտի բոլոր ռեկորդները, կը գտանենք ամենաուժեղ, ամենահնուն ու ամենագեղեցիկ մարզիկներին ամրողջ աշխարհում:

Կեցցէ Լենինեան-Ստալինեան կոմունիստական կուսակցութիւնը:

Կեցցէ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ, կարմիր ֆիզկուլտուրնիկների լաւագոյն բարեկամ մեծ ՍՏԱԼԻՆԸ:

Կեցցէ Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական սերտ կապը:

ՀՍԽՀ Ֆիզկուլտուրայի Գերագոյն խորհրդի
Նախագահ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ
Պատ. Քարտուղար՝ Ա. ԱՒՐԱՀԱՄԵԱՆ

Ա.Լ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հայաստանի բուռն աճող ժողովրդական տնտեսութիւնը պահանջում է երկրի բազմակողմանի ու մանրազնին ուսումնասիրութիւնը եւ նրա բնական հարստութիւնների զբաղեցրումը: Այդ կը տա հնարաւորութիւն պարզելու մեր հումոյթի տեսակները եւ նրա ամբողջ պաշարը, որոշելու զբաղով մեր արդիւնաբերութեան ու գիւղատնտեսութեան իրական հիմքը եւ նրանց զարգացման ուղիները:

Այս նկատումներով՝ Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդին կից կազմակերպուեց եւ ներկա տարա յունվարից գործի անցաւ երկրի գիտական գերագոյն հիմնարկը՝ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան, որը համախմբելով գոյութիւն ունեցող բազմազան ինստիտուտները և գիտական մարմինները եւ աշխատանքի լծելով մեր գիտնականներին ողջ կազմը պէտք է նոր ընթացք եւ նոր թափ տա մեր երկրի հետախուզական եւ ուսումնասիրական աշխատանքներին:

Ի՞նչ կազմուածք ունի ակադեմիան եւ ի՞նչ ծրագրեր է մշակել նա իր մօտակա աշխատանքների համար:

Ակադեմիային կից առայժմ կազմակերպուած են երկրաբանական, քիմիական եւ բիոլոգիական ինստիտուտները իրենց մանաճախլերով, որոնք արդէն ծաւալել են աշխատանքները, համախմբելով իրար չուրջը մեր բարձրորակ գիտական ուժերը:

Երկրաբանական ինստիտուտը կազմակերպուած է ճարտարապետ – երկրաբան Հ. Տ. Կարապետեանի հանդարտական հարուստ թանգարանի եւ գրադարանի, Սեւանա լճի ուսումնասիրութեան յարուկ բիւրոյի նիւթերի, նախկին Ժողտնտեսխորհի լեռնային շահագործումների արխիւի ու գրադարանի եւ ջրային հնարաորութեան լաբարատորիայի նիւթերի հիման վրա:

Երկրաբանական ինստիտուտի առաջիկա աշխատանքների շարքում պէտք է նշել նախ ընկ. Կարապետեանի կողմից 30 տարուա ընթացքում կազմուած եւ Իրանում հաւաքուած հսկայական քանակութեամբ նիւթերի մշակումը: Այդ հաւաքածուի մէջ կան հնարաբական նիւթեր՝ ատուֆ, պեմզա, դիատոմիտ, կրաքար եւ այլն, որոնք արդէն լայնօրէն գործածւում են թէ Հայաստանի եւ թէ Հայաստանից դուրս այլ խորհրդային հանրապետութիւններում: Ապա մետաղներ՝ պղինձ, արճիճ, մոլիբդէն, երկաթի եւ ծծմբի հրաքարեր եւ այլն, եւ այլն: Այս նիւթերը պէտք է կարգի բերուն երկրաբանական ինստիտուտին կից բացած երկրաբանական թանգարանում ցուցադրելու համար: Այդ թանգարանի միջոցով մեր աշխատաւոր լայն զանգուածներին ու ուսանողութիւնը կը ծանօթանան մեր երկրի բնական հարստութիւնների հետ:

Երկրաբանական ինստիտուտի երկրորդ խոշոր խնդիրն է՝ Հայաստանի զանազան վայրերում գտնուղ կրաքարի պաշարը եւ որակը ուսումնասիրել: Նկատի առնելով այն հանգամանքը, որ քիմիական արդիւնաբերութիւնը խոշորագոյն ապագա ունի մեզանում, այդ աշխատանքը չափազանց կարեւոր եւ անյետաձգելի է: Ինչպէս յայտնի է, կրաքարը հիմնական հումքն է կիրովականի քիմկոմբինատի, Դավալուի ցեմենտի գործարանի եւ երեւանում ուժեղ թափով կառուցուղ Սինթետիկ կաուչուկի խոշոր գործարանի համար:

Ինստիտուտի երրորդ խնդիրն է՝ Ազմազան լեռնաշղթայի ջրաերկրաբանական հետազօտումը: Այդ լեռնաշղթան հանդիսանում է հսկայական ջրբաժան, որը հայթայթելիս է ընտիր ջուր Արարատեան դաշտի, Կոտայքի եւ Նոր Բայազետի շրջանների ջրագործ ազգաբնակչութեան:

Բացի դրանից, ինստիտուտը ուսումնասիրելու է Հայաստանի երկրաբանութիւնը եւ կազմելու է մեր երկրի երկրաբանական քարտէզը, որի կարիքը շատ մեծ է թէ մեր տնտեսական մարմիններին եւ թէ ուսանողութեան համար:

Այս տարի, ինստիտուտը կազմակերպելու է նաեւ մի շարք գիտական արշաւներ դէպի Հայաստանի զանազան շրջանները:

Երկրաբանական ինստիտուտը դեկավարում է յայտնի ճարտարապետ, երկրաբան Հ. Տ. Կարապետեանը, որը մեծ հռչակ ունի նաեւ հարեւան խորհրդային հանրապետութիւններում:

Քիմիական ինստիտուտը կազմակերպուած է պոլիտեխնիկական եւ բժշկական ինստիտուտների լաբարատոր բաների հիման վրա: Մինչեւ սեփական լաբորատորիայի կազմակերպումը, քիմիական ինստիտուտի փորձնական աշխատանքները կատարուում են այդ լաբարատորիաներում:

Քիմիական ինստիտուտը նպատակ ունի, նախ՝ լուծելու այն խոշոր գիտական խնդիրները, որոնք կապած են Հայաստանի քիմիական արդիւնաբերութեան զարգացման հետ: Ինչպէս յայտնի է Հայաստանի արդիւնաբերութեան մէջ քիմիական արդիւնաբերութիւնը առաջատար ճիւղն է կազմում եւ Հայաստանը մօտ ապագայում լինելու է գերազանցօրէն քիմիական արդիւնաբերութեան երկիր:

Մեր բարձրորակ կրաքարի անսպառ պաշարները ինչպէս եւ ջրածնային ուժը թոյլ են տալիս մեզ արտադրելու քիմիական արդիւնաբերութեան այնպիսի ճիւղեր, ինչպէս, օրինակ, կարբիդ – կալցիումը, որից սաացւում են ացետալէնը, սինթետիկ կաուչուկ, ցիանամիդ–կալցիում, ցի-

ամիզ եւ այլն, որոնք չափազանց կարեւոր են ժողովրդական անասնաբուծման զարգացման եւ բարձրացման համար: Բանական է այստեղ նշել, որ կաթըիզ-կալցիումից ստացւում է մօտ 200 տեսակ արտադրանք, իսկ ֆոսֆամիզ-կալցիումը լաւագոյն պարարտանիւթ է, արդէն փորձած մեր դաշտերում եւ այգիներում:

Քիմիական ինստիտուտը ուսումնասիրելու է նոյնպէս քիմիական հումոյթի նոր տեսակները:

Քիմիական ինստիտուտը բաղկացած է չորս սեկցիաներից՝ ընդհանուր, ֆիզիքական, օրգանական եւ բիոլոգիական քիմիայի սեկցիաներից: Լաբէ խնդիրներ են դրւած նաեւ բիոլոգիական սեկցիայի վրա, որը զբաղւում է Հայաստանի անձնական արդիւնաբերութեան վիտամինների ուսումնասիրութեամբ: Վիտամինի (Vitamine) պրոբլեմով հետաքրքրւում են Հայաստանի ժողոմատը եւ առանձնապէս, պահածոների եւ դինեզործութեան «Արարատ» տրեստները: Հայաստանի գինեգործները խոշոր նաճումներ ունեն արդէն վիտամինների բարձ եւ կարեւորագոյն պրոբլեմի լուծման ասպարէզում եւ նոր վիտամինների մասին մեր գինեգործների դեկուցումները ֆիզիոլոգների եւ բիոքիմիկոսների համամիութենական համագումարը, որը տեղի ունեցաւ 1934 թ. հոկտեմբերին Երեւանում, արժանացան բարձր գոհատանքի:

Քիմիական – ինստիտուտը դեկավարում է պրոֆեսոր Ա. Յովհաննիսեանցը:

Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի երրորդ գիտական հիմնարկն է՝ բիոլոգիական ինստիտուտը, որը բաղկացած է երեք սեկցիաներից՝ կենդանաբանական, բուսաբանական եւ Ծագումնաբանական (դենետիկա): Այդ ինստիտուտի գիտական բազան է կազմում Գիտական Բնա–պատմական Թանգարանը:

Բիոլոգիական ինստիտուտի առաջ դրւած են խոշորագոյն խնդիրներ: Ուսումնասիրել երկրի բուսաբանական (ֆլորա) եւ կենդանաբանական (ֆաունա) աշխարհը, ճոխացնել գոյութիւն ունեցող թանգարանը, որի չնորհիւ մեր աշխատաւորութեան լայն մասսաներն ու ուսանողութիւնը պիտի ծանօթանան բնա–պատմական գիտելիքների հետ:

Բիոլոգիական ինստիտուտի ծրագրերն ու աշխատանքները սերտօրէն կապած են սոցիալիստական գիւղատնտեսութեան արտադրական խնդիրների՝ անասնապահութեան եւ բուսաբանութեան հետ: Այդ տեսակէտից՝ ինստիտուտը ուսումնասիրելու է մեր գիւղատնտեսութեան զարգացման եւ աճման ուղիները, վնասատուների եւ պաթոգիններ ու նրանց դէմ պայքարի ուղիները՝ ապա պարզելու է անասունների կերով, երկրի բուսական հարստութիւններով՝ արօտատեղիներով՝ եւ մարգագետիններով, անկման անասունների սնուցման պրոբլեմով, բազմազան հացաբոյսերի եւ տեխնիկական բոյսերի լաւացման եւ այլ կենսական ու գործնական հարցերով:

Բիոլոգիական ինստիտուտի խոշորագոյն գործերից մէկն է լինելու՝ Հայաստանի Բուսապաշտական Այգու կազմակերպումը Երեւանում իր ենթաճիւղերով՝ Բաշ–Գառնիում եւ Կիրովականում (նախկին Ղարաքլիսա):

Բոլշեվիկներն յաւուրս է կերպարանափոխել ոչ միայն մարդկանց եւ մեքենաները, այլ եւ բնութիւնը: Եւ Բուսաբանական այգու նպատակներից մէկն է՝ Հայաստանի բնութեան պլանաւոր վերակառուցումը եւ կերպարանափոխումը: Մեր բնութեան կանաչազարդման եւ հակայական հոգամասերի անտառապատման խնդիրները լուծումը պիտի պատկանի մեր մեծ էպոխային (չորեան) եւ նրա անդուլ ու անձնւէր կառուցող մասսաներին: Ամբողջ երկիրը կանաչի խիտ գորգով պատելը խորհրդային երկրի սոցիալիստական կենցաղի կազմակերպման կարեւորագոյն նախադրեալներից մէկն է:

Բուսաբանական այգին խոշոր չափով նպաստելու է այդ նպատակի իրագործման: Բուսաբանական այգին լինելու է մի կենդանի լաբարատորիա — ու այդտեղ կը կենտրոնանա Հայաստանի եւ կլիմայի ու հողի տեսակէտից Հայաստանի նման երկրների՝ Մերձին Ասիայի, Թիւրքիայի, Իրանի եւ այլն՝ բուսաբանութեան ամենաարժէքաւոր ներկայացուցիչների ուսումնասիրման աշխատանքը: Եւ այդ աշխատանքը կատարելու է առաւելապէս Հայաստանի կանաչազարդման համար տիպիկ լեռնային կսերոֆիտներին (բոյս), որոնց մէջ կան բազմազան օգտակար եթերատու, ներկատու բոյսեր, կերաբոյսեր, դեղաբոյսեր եւ այլն: Նոյնչափ լայն ծաւալով ընդգրկելու են նաեւ վայրի պտղատու տեսակները՝ նշենի, տանձենի, խնձորենի եւ այլն: Ցատուկ ուշադրութիւն է նըւիրելու վայրի հացաբոյսերի՝ վայրի ցորենին ու վարսակին, որոնց հայրենիքը ըստ ակադեմիկոս Ն. Ի. Վաւիլովի, հանդիսանում է Հայաստանը:

Երեւանի Բուսաբանական այգուն յատկացւած է Աւանի հովտում (Նորքի յետեւում) 200 հեկտար հողամաս:

Բուսաբանական այգու բաժանմունքը Գառնիում բուսական տեսակէտից նմանւելու է Երեւանի կլիմաբոնական այգուն, սակայն առանձին ուշադրութիւն է դարձւելու այստեղ վայրի պտուղներ եւ ծաղկաբուծութեան: Գառնիի պատմական յուշարձանները եւ հոյակապ հռոմէական պատի (1–ին դար) մինչեւ այժմ լաւ պահպանւած մնացորդները ինչպէս եւ այդ հովիտի անզուգական տեսարանները դարձնելու են Գառնիի բուսաբանական այգին լաւագոյն տուրիստական վայր: Գառնիի այգուն յատկացւած է 60 հեկտար:

Հաշւի առնելով արդիւնաբերական անասնապահութեան այժմեական նշանակութիւնը, Բուսաբանական այգու երկրորդ բաժանմունքը կապակցւում է Կիրովականում: Այստեղ կենարոնացւել են լեռնա–արօտատեղային ու անտառային

բոյսերի ուսումնասիրական աշխատանքները: Այդ նպատակային բաժանմունքի համար, Կիրովականում՝ Վանաձորի կիրճում, յատկացած է 40 հեկտար:

Այսպիսով Բուսաբանական այգում եւ նրա բաժանմունքներում մինիատիւր ձեւով կը ներկայացվի Հայաստանի ամբողջ փլորան, ուսումնասիրուած կը լինեն այն տեսակները, որոնք պիտանի են երկրի կանաչազարդման եւ ծաղկազարդման համար եւ կը որոշուեն նրանց ամենաարագ բազմացման եւ անեցման ուղիները եւ պայմանները:

Բուսաբանական այդու աշխատանքների եւ այս կամ այն շրջանի համար պիտանի բուսականութեան ասորտիմենտի ընտրութեան հիման վրա փորձնական աշխատանք կը ծաւալուի տեղերում ջերմոցներ կազմակերպելու եւ ապա մասսայական-օրէն տարածելու համար շրջաններում:

Հայաստանի բուսաբանական այգին համամիութենական նշանակութիւն է ունենալու: Հայաստանի փլորան, ակադեմիկոս Վավիլովի ՎՐԿԱՅԻՒԹԵԱՄԲ, աչքի է ընկնում եւ մի շարք վերին աստիճանի հետաքրքրական առանձնայատկութիւններով եւ միշտ գրաւել է գիտնականների ուրագէտների ուշադրութիւնը:

Բիոլոգիական ինստիտուտը դեկավարելու համար հրաւիրուած է Համաշխարհային հռչակ ունեցող ակադեմիկոս Ն. Ի. Վավիլովը, եւ նրա տեղակալ պրոֆեսոր Ս. Մ. Եուզեպչենկո:

Հայաստանի Ժողկոմխորհի որոշմամբ, Հայաստանի գիտութիւնների Ակադեմիայի գլխաւոր նշանակուած է խոշորագոյն գիտնական ակադեմիկոս Լեվինսոն – Լեսսինգը, իսկ նրա տեղակալ — ընկ. Մելիքը:

Ակադեմիան արդէն կապուել է Համամիութենական գիտութիւնների Ակադեմիայի հետ, միութենական զանազան գիտական հիմնարկների հետ, առանձին ակադեմիկոսների եւ գիտնականների հետ (Զելենսկի, Լազարեվ, Պոլոնսկի եւ ուրիշները), որոնց ներգրաւելու է մեր Ակադեմիայի աշխատանքների մէջ: Սերտ կապ է հաստատում նաեւ մեր առեւտրական եւ կուլտ. հիմնարկների հետ:

Այն հակայական խնդիրները, որոնք դրուած են Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի առաջ եւ այն լաւագոյն գիտնականները, որոնք համախմբուել են նրա չուրջը, դարձնում են Գիտութիւնների Ակադեմիան մեր սոցիալիստական շինարարութեան հզօր եւ ազդեցիկ գործօններից մէկը:

Իսկ այն ջերմ վերաբերմունքը, որ ցոյց են տալիս ղէպի Ակադեմիան մեր պրոֆեսուրան, գիտական աշխատողները, ողջ աշխատաւորութիւնը եւ պետական բոլոր մարմինները, խոստանալով եւ իրագործել Ակադեմիային իրենց ամենաեռանդուն աջակցութիւնը, լաւագոյն գրաւական է, որ նրան կը յաջողւի կատարել սոցիալիստական երկրի առաջ իր պատմական դերը:

Երեւան



Խորհրդային Միութեան մէջ երեխաները ռատիոշինութեամբ կ'զբաղին

Ե· ՋՈՓՈՒՐԵԱՆ

ՄԻ ՆՈՐ ՀՈՅԱԿԱՊ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՒԱՆԻ «ԳՐՔԻ ՏՈՒՆ»–Ը

15 տարւա պատմական կարճ ժամանակամիջոցում՝ Հայաստանի աշխատաւորութիւնը իր եկեղեցը դարձրեց Խորհրդային Միութեան առաջաւոր հանրապետութիւններից մէկը:

Այբուբենաբերութեան եւ գիւղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը հնարաւոր դարձրեց նախկին ցարական այդ գաղութը վերածել էլեքտրիֆիկացիայի, քիմիական արդիւնաբերութեան, բամբակի մշակման եւ վերամշակման կենտրոններից մէկը:

Սոցիալիստական տնտեսութեան յարաճուն վերելքը, աշխատաւորութեան բարեկեցիկ կեանքը, Խորհրդային իշխանութեան պլանային աշխատանքը հնարաւոր դարձրին նաեւ սոցիալիստական կուլտուրայի՝ դրականութեան, կերպարուեստի, թատերական եւ երաժշտական կեանքի այնպիսի ծաղկում, որի նմանը չի եղել եւ էլ չի կարող լինել Հայաստանի պատմութեան որեւէ շրջանում:

Պատմել գաղութահայ աշխատաւորութեանը զանազան ասպարէզներում ձեռք բերած նւաճումների մասին — կը պահանջէր հատորներ գրել: Այս յօդւածի նպատակն է տալ միայն կուլտուրայի բնագաւառում Խորհրդային Հայաստանի կառավարութեան մի նոր հոյակապ ձեռնարկի ուրւագիծը, խօսել Երեւանում կառուցւելիք Հայաստանի «Գրքի Տան» մասին:

* * *

Սկսենք մի քանի թւերով:

Երեւանում գոյութիւն ունեն գիրք հրատարակող երեք հանրապետական կազմակերպութիւններ՝ Պետհրատը (Պետական հրատարակչութիւն), Կուսհրատը՝ (Կուսակցական հրատարակչութիւն) եւ Գիւղհրատը՝ (Գիւղատնտեսական հրատարակչութիւն): Այս երեք հրատարակչութիւնները միասին վերջած հրատարակում են տարեկան մօտ 700 անուն գիրք, 5000 մամուլ, չորս միլիոն տիրաժով: Հաշւելով նաեւ մեւս փոքր հրատարակութիւնները (Մարքսիզմի – Լենինիզմի Ինստիտուտ, Մելքոնեան Ֆոնդ, Համալսարան եւ այլն) երեւանում օրական լոյս է տեսնում 3 անուն գիրք:

Պետհրատի լոյս ընծայած գրքերից իւրաքանչիւրը տպւում է 3—4000 օրինակ, իսկ դասագրքերից իւրաքանչիւրը 40,000, 50,000 մինչեւ 70,000 օրինակ:

Երեւանում գոյութիւն ունի 6 տպարան: Պետհրատի տպարանը 350 բանւորութեամբ, Կուսհրատինը՝ 132, Գիւղհրատինը՝ 45 եւ մեւս աւելի փոքրը տպարաններ 50 բանւորութեամբ:

Երեւան.— Հանրային Գրադարանի Ընթերցասրահը Երէն Մինի

Այսենք նաեւ այն, որ Երեւանում լոյս են տեսնում վեց օրաթերթեր եւ բազմաթիւ պարբերական թերթեր ու ժուռնալներ:

Խորհրդային Հայաստանը տարեկան տպառում է 593 տոն տպագրական եւ 651 տոն լրագրական թուղթ:

Բաւարարո՞ւմ է արդեօք այդքանը մեր աշխատաւորութեան օրէց օր աճող պահանջներին: Այդ հարցին մեկայն մի պատասխան կա. Ոչ:

Այն ժամանակ, երբ բուրժուական աշխարհում՝ «զարգացած կուլտուրայի» երկիրներում օրէց օր պակասում է հրատարակւող գրքերի թիւը, երբ ֆաշիստական Գերմանիայում խարոյկի բաժին են դառնում մարդկային մտքի տիտանների երկերը, երբ խոշոր հրատարակչական տներ եւ տպարաններ ստիպւած են փակել իրենց դռները՝ ընթերցողներ չգտնելու պատճառով, մեկայն Խորհուրդների մեծ երկրում է, որ ծաղկում է սոցիալիստական կուլտուրան, հրատարակչական գործը եւ օրէց օր ստանում հակայական ծաւալ: Եւ այդ նրա համար, որ միլիոնաւոր աշխատաւորներ, որոնք գարերով պահւած են եղել բուրժուաների եւ կալւածատէրերի իշխանութեան տակ խաւերի մէջ, պրոլետարական պետութեան կողմից կոչւել են մտաւոր, կուլտուրական կեանքի:

Մեր սոցիալիստական հայրենիքում աշխատաւորը ծարաւ է գրականութեան. նա անընդհատ պահանջում է և՛ կուսակցական, և՛ գեղարւեստական, և՛ կլասիկ, և՛ ժամանակակից խորհրդային ու արտասահմանեան լեզուներեան գրա-

կանութիւն: Սակայն հակառակ գրականութեան եւ տպագրութեան տպարիզում մեր աննախընթաց վերելքին, դեռեւս չենք կարողանում լիովին բաւարարել գրքի աճող պահանջը:

Ձախողանց պերճախօս են գրականութեան տարածման մասին հետեւեալ մի քանի փաստերը.

1934 թ. Մարքսի – Ենգելսի – Լենինի – Ստալինի երկերը լոյս են տեսել 119,000 տիրաժով եւ սպառուել են: 1935 թ. Մարքսի – Ենգելսի – Լենինի – Ստալինի գործերը լոյս են տեսնելու 243,000 տիրաժով:

Մարքսի «Կապիտալ»ի առաջին հատորը, 15,000 օրինակ, հակառակ նրան, որ բաւականաչափ թանկ էր, այնուամենայնիւ համարեա սպառել է:

Ստալինի նոր լոյս տեսած «Լենինիզմի հարցերը»ը, 15,000 տիրաժով՝ սպառուեց մէկ շաբաթուա ընթացքում եւ այժմ ձեռնարկուած է նոր հրատարակութեան 30,000 տիրաժով:

Նոյն երեւոյթը՝ դեղարուեստական գրականութեան սպառման մասին: 1934 թ. լոյս տեսաւ Ֆիլդինգ «Թոմասմ եւ Սոֆրաթ» պոէմը 5000 տիրաժով եւ որովհետեւ սպառուեց մէկ ամսուա ընթացքում, Գեհրատը ստիպուած եղաւ 10,000 օրինակ եւս տպել էժանագին գրադարանի սերիայով: Այդ տիրաժը եւս սպառուեց երկու ամսուա ընթացքում եւ դեռեւս պահանջ կա ոչ պակաս, քան 10,000 օրինակի:

Թումանեանի «Դեղարեստական երկեր» հանկարծակի եւ չբեղ հրատարակութիւնը 7,000 տիրաժով՝ սպառուեց 4 ամսուա ընթացքում: «Զաթպայեւը» 5000 տիրաժով՝ մէկ ամսուա ընթացքում:

Խորհրդային ժամանակակից գրողների գործերը տպւում են 4000–5000 տիրաժով եւ վեց–եօթն ամսուա ընթացքում սպառում են: Նման փաստեր կարելի է հարիւրաւոր օրինակներով բերել ոչ մի այլ Հայաստանի հրատարակչական գործից, այլ եւ միւս հարեւան հանրապետութիւններից:

Այս յարաճուն պահանջը նկատի ունենալով է, որ Խորհրդային Միութեան կառավարութիւնը, ինչպէս Միութեան այլ մասերում, նոյնպէս եւ Անդրկովկասի հանրապետութիւնների մայրաքաղաքներում կառուցում է գրքի տներ (կառուցել է Բագուում, կառուցումն սկսել է Թիֆլիսում եւ Երեւանում): Ես դանց եմ առնում մանրամասն խօսել Բագուում կառուցած եւ Թիֆլիսում կառուցուղ «Գրքի տներ»ի մասին, որոնք ձեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի մէկ–մէկ օճախներ են լինելու եւ կանգ կ'առնեմ Երեւանի «Գրքի Տան» վրա:

Խորհրդային Միութեան ժողկոմխորհը՝ փետրուարի 8–ի իր որոշմամբ Երեւանում «Գրքի տուն» կառուցելու համար յատկացրեց չորս եւ կէս միլիոն ռուբլի միայն շինքի համար, առանց տարքաւորման արժէքը հաշուելու: Նոյն այդ որոշման մէջ նշած է նաեւ, որ կառուցումը պէտք է սկսւի 1935 թ. եւ վերջանա 1937 թուին, այսինքն երկու տարում: Առանձնապէս կարեւոր է այս հանգամանքն այն պատճառով, որովհետեւ երբ այսօր գոյութիւն ունեցող մեր տպարանները գրականութեան պահանջը հազիւ 50 առ 100–ն են բաւարարում, երկու տարի յետո պահանջն աւելի կը մեծանա եւ անհրաժեշտ է չսահպել այդ գրութիւնից ժամ առաջ դուրս գալու:

«Գրքի տանը» կենտրոնանալու են մեր գրքերի եւ հանդէսների հրատարակութիւնը: «Գրքի տան» կառուցման աւարտումից յետո Պետհրատի ներկա խոշոր տպարանի աշխատանքները վերակառուցելու եւ դառնալու է միայն թերթերի տպարան:

Այժմ պատրաստում ենք «Գրքի տան» յատակագիծը: Նրան յատկացած է 2·2 հեկտար հողամաս, Տէրեան փողոցի վրա, համալսարանական հողամասում, որտեղ կենտրոնացած են բազմաթիւ մշակութային հիմնարկներ, ինչպէս Մարքսիզմ–Լենինիզմի Ինստիտուտը, ընկ. Բերիայի անուան գիւղատնտեսական բարձրագոյն ինստիտուտը, Մելքոնեան Ֆոնդի մատենադարանի շէնքը եւ այլն: Հողամասը չափազանց յարմար գրքի համար — մի կողմից չբղանային մեծ բուլվարն է, միւս կողմից երկրորդ չբղանային բուլվարը, մըննացեալ երկու կողմից Տէրեան եւ Սունդուկեան փողոցները: Տրամվայի գիծն անցնելու է «Գրքի տան» կողքով: Մի քիչ հեռու գտնւում է կառուցուղ «Ժողովրդական տունը», որը կլսսիկ ճարտարապետական հոյակապ մի նմուշ է լինելու ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ Անդրկովկասի մասշտաբով: «Գրքի տունը» ժողտան հետ կազմելու է ճարտարապետական հետաքրքիր մի ամբողջութիւն: «Գրքի տան» յատակագիծը պատրաստելու գործին իրենց մասնակցութիւնն են բերելու Խորհրդային Հայաստանի ճարտարապետական, քանդակագործական եւ նկարչական լաւագոյն ուժերը: Յատակագծի պատրաստութեան համար հրաւիրուած են ճարտարապետ Մ. Մազմանեանը եւ Ս. Գինը: Իսկ բոլոր աշխատանքներին, իբրեւ խորհրդատու մասնակցելու են ակադեմիկ Թամանեանը, Պրոֆ. Բունեաթեանը, ճարտարապետ Քոչարը, քանդակագործ Աբո Սարգսեանը, Սեւիսեանը, Թարեանը, ժողնկարիչ Սաբեանը, վաստակաւոր նկարիչ Կոջոեանը, Արուսչեանը եւ ուրիշները:

Կառուցման ոճը լինելու է հայկական կլսսիկ, չենք փասպը զարգարելու է մեր գրականութիւնը խորհրդանշող քանդակներով, իսկ ներքին նկարազարդման համար օգտագործելու են հայկական մանրանկարչութեան մոտիվները:

«Գրքի տուն»ը բաղկացած է լինելու երեք հիմնական մասերից. տպարան, հրատարակչական շէնք եւ գրադարանութիւններ:

1.— Տպարանը սարքաւորելու է տեխնիկայի վերջին խօսքի համաձայն, ունենալու է ձևոքի զբաղարանոցի, լինոտիպի, մոնոտիպի, ռոտատիվի, ցինկոգրաֆիայի, կազմատան, մեքենայական, լիտոգրաֆիական – օֆսէտ բաժիններ, յարակից բոլոր ենթաբաժիններով: Ամբողջ սարքաւորումը լինելու է խորհրդային գործարանների արտադրանք: Տպարանում եւ օժանդակ ենթաբաժիններում աշխատելու են մօտ 1000 բանւոր եւ արտադրելու են քանակով չորս անգամ աւելի դիրք, քան արտադրում է այժմ Երեւանի տպարաններում:

Որպէսզի հնարաւոր լինի այդքան բանւորութեան համար ստեղծել կենցաղային լաւագոյն պայմաններ, մի քանի տարի ընթացքում տպարանի մօտակայքում, որ քաղաքի ամենաօդասուն մասն է, կառուցելու է մօտ 300—400 սենեակից բաղկացած մի հսկայ բնակարան, իր բոլոր յարմարութիւններով:

2.— Հրատարակչական չէնքը բաղկացած է լինելու մօտ 120 սենեակից, որտեղ տեղաւորելու են Պետհրատի, Կուսհրատի եւ Գիւղհրատի վարչութիւնները, խմբագրութիւնները եւ առեւտրական բաժինները: Այդ չէնքն ունենալու է այն բոլոր յարմարութիւնները, որոնք պահանջւում են արդի հրատարակչական գործից: Բացի գրասենեակային մասից, նա պարունակելու է գրադների համար աշխատանքի սենեակներ, որտեղ գրողը կարգադնա օրւա բոլոր ժամերին առանձնանալ եւ ստեղծագործել: Հենց այդ չէնքում տեղաւորելու է մանանդիւանան մի խոշոր գրադարան 100, 000 գրքի տարողութեամբ, որտեղ հրատարակութեան որեւէ աշխատակից կամ հեղինակ անմիջապէս ձևոք է բերելու իրեն անհրաժեշտ երկը: Այնտեղ լինելու է առանձին թանգարան, որտեղ հաւաքելու են Հայաստանի գրականութեան եւ հայերէն տպագրական գործին վերաբերող բոլոր նմուշները եւ իրենց դասաւորումով տալու են մեր գրականութեան եւ տպագրութեան ամբողջ պատմութիւնը: Եւ վերջապէս այդ չէնքում են կենտրոնացելու ներկայացուցիչների, կինոսեանների, ժողովների համար սիւմբը, ճաշարանը, կաֆէն, ռադիոյի, փոստ, բանկի բաժանմունքները, ամբուլատորիան, հանդստի սենեակը եւ այլն:

Նախատեսւում է Արզնիյում կառուցել մի սանատորիա, որը ծառայելու է բացառապէս գրքի եւ տպարանի աշխատաւորների կարիքներին:

3.— «Գրքի տան» երրորդ բաժինը – ունիվերսալ գրախանութը — իր տեսակի մէջ լինելու է եղակի: Այդ բաժինը բաղկացած է լինելու մի չորք խանութներից, որոնցից իւրաքանչիւրը մի ամբողջութեան մաս կազմելով հանդերձ՝ լինելու է առանձին ամբողջութիւն: Այդտեղ լինելու են՝ գրքախանութ, գրենական պիտոյքների, դասային նիւթերի (գրքոցների լաբորատորիաների), երաժշտական գործիքների, նկարչական պիտոյքների, լուսանկարչական, ռադիոյի եւ այլն խանութներ: Այս մասը կառուցելու է այն սկզբունքով, որ ընթերցող-գնորդը այնտեղ կարողանա գտնել ոչ միայն բոլոր գրքերը եւ բաւարարի իր կուլտուրական պահանջները, այլ եւ ստանա խորհուրդներ իր կարդալիք գրքերի մասին, բացատրութիւններ իր կարդացած գրքերի չհասկացած որեւէ հատուածի մասին, կամ լսել դասախօսութիւններ, մի խօսքով ձևոք բերի իրեն անհրաժեշտ բոլոր տեղեկութիւնները:

Այստեղ առանձնապէս պէտք է հետաքրքրել «մանուկի կուլտուրական պահանջներ»ի բաժնի մասին: Ի՞նչ է լինելու այդ բաժինը: Այստեղ գտնելու է խազալիքների, մանկական դրախանութեան խանութը, իր ընթերցարանով, կոնսուլտացիայով, ցուցահանդեսով եւ այլն: Երեւանի լաւագոյն մանկավարժները այս բաժնում հերթապահութիւն են անելու եւ դեկավարելու են մանուկ-պատանի ընթերցողին, ցուցմունքներ են տալու նրան եւ այլն:

«Գրքի տան» ներքնայարկը պարունակելու է թանաքի, երաժշտական գործիքների եւ խաղալիքների արհեստանոցներ, ինչպէս նաեւ խոշոր պահեստներ, որտեղից ամեն օր գրախանութները եւ գրենական պիտոյքները վաղաններով եւ բեռնատար ավտոներով ուղարկելու են Հայաստանի ամենահեռաւոր անկիւնները:

Բոլոր աշխատանքները կազմակերպելու են կոնվէյէր սիստեմով, այնպէս, որ ձևոագիրը հեղինակի կողմից տպարանին յանձնելուց մինչեւ պատրաստի գրականութիւնը դիւղ հասնելը կատարւի ամենամեծ կազմակերպուածութեամբ եւ լրաքանչիւր պրոցես մտածւած ու սիստեմի վերածւած խոշոր մի ամբողջութեան մասը կազմի:

«Գրքի տան» նախատեսւած աշխատանքները մեծ թափով առաջ են տարւում: Երեւանում «Գրողների տանը» կազմակերպուել մի ժողով, որին մասնակցում էր Երեւանի բանասութեան, կուլտուրական փորնում աշխատաւորների եւ հասարակական գործիչների հոծ բազմութիւն, այդ ժողովն արեց բազմաթիւ առաջարկներ՝ ճարտարապետ Գ.Կոչի դեկուցման առթիւ, որոնք օգտագործելու են կառուցման ընթացքում:

«Գրքի տան» կառուցման գործով մեծապէս շահագրգռւում են Հկ(բ)Կ կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Յանկեան ու ժողկոմխորհի նախագահ ընկ. Ա. Թուլխանը, որոնք իրենց առօրեայ ցուցմունքներով դեկավարում են այս մեծ գործը եւ աջակցում նրա լաւագոյն իրականացման որոշւած ժամանակամիջոցում:

* * *

«Փրքի տան» կառուցումը մի նոր եւ փայլուն ապացոյց է Լենինեան ազգային քաղաքականութեան յաղթանակի: Խորհրդային Հայաստանի աշխատաւորութիւնը՝ դաշնակիների զոհերի տիրապետութիւնը տապալելուց եւ նրանց՝ իր երկրից վտարելուց յետո, 15 տարիների ընթացքում անհամար, փառահեղ նուաճումներ է ձեռք բերել կոմկուսակցութեան ղեկավարութեամբ: Տասնեակ գործարանների ծխնելոյզները սլանում են դէպի երկինք յաղթական կոթողների նման, բամբակի եւ լեռնարդեայանները Իլիչի լամպն են վառում կոլխոզներում եւ գիւղերում, բազմահազար կիլոմետրերով առուներ կենսարար ջուր են հասցնում մեր ցանքսերին, հարիւրաւոր տրակտորներ ակօսում են մեր սոցիալիստական դաշտերը, որտեղ բամբակի կեղուղները, ցորենի հասկերը, խաղողի վառ ողկոյզները, ծիրանի, դեղձի առատ բերքի տակ կքած ծառերը երգում են սոցիալիստական նոր կուլտուրան, բերկրալից, երջանիկ կեանքի հոյակապ սիմֆոնիան:

Խորհրդային իւրաքանչիւր աշխատաւոր, որ ապրել է ցարերի, սուլթանների, դաշնակիների մըռայլ ռեժիմը, այժմ միայն բարձրացնելով աշխատանքի եւ յաղթանակի հպարտութեամբ պահպանած իր գլուխը լիաթոք ներծծում է յոյսով եւ խանդավառութեամբ լի սոցիալիստական կուլտուրան, այն կուլտուրան, որին անմատ էր կապիտալիստների եւ կալւածատէրերի չհագեցածութեան ռեժիմի ժամանակ:

Երեւանի «Փրքի Տունը» այդ նոր սոցիալիստական կուլտուրայի հառագայթման գլխաւոր կենտրոններից մէկն է լինելու ամբողջ երկրում:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՀԻՒՍԻԱԾԵՂԷՆԻ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆԸ



Լենինականը իր հիւսուածեղէնի գործարանով, մսի կոմբինատով եւ որպէս երկաթուղային գծերու հանգոյց, դարձած է Խ. Հայաստանի արդիւնաբերական երկրորդ քաղաքը

Ա· ՄԱՐՏԻԿԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեսրոպեան անուան Պետական Հանրային Գրադարանը, Հ· Մ· Ի· Հ·–ի կենտրոնական եւ կարեւորագոյն գրասենհոցը, ունի թէեւ կարճ, բայց հետաքրքիր եւ ուսանելի պատմութիւն, ունի արդէն որոշ տրադիցիաներ եւ իր յետագա աշխատանքի համար՝ պարզ ու որոշ հեռանկար:

Այսօր արդէն երեւան քաղաքը եւ ընդհանրապէս Խորհրդային Հայաստանը չի կարելի պատկերացնել առանց այդ կարեւորագոյն դիտական հիմնարկութեան, քանի որ գրադարանի աշխատանքն աւելի ու աւելի մեծ թիւով ընթերցողների է ընդգրկում, քանի որ արդէն իւրաքանչիւր ընթերցող ցատկից է Պ· Հ· Գրադարանի ամման դժուարութիւններին եւ աշխատանքի բացերին: Պէտք է խոստովանել, որ մեր բացերը քիչ չեն, որ մենք դեռ եւս ուժեղ տեմպերով երկար պիտի աշխատենք, որպէսզի վերացնենք այդ բացերը, կոմպլեկտաւորենք գրադարանը, լաւացնենք սպասարկումը:

Նպատակ ունենալով այսօր ընորոշել Պետ· Հանր· Գրադարանի կեանքի բոլոր կողմերը, ես ուզում եմ կանգ առնել միայն մեր աշխատանքի երկու հիմնական մոմենտների վրա: Ես առանց թերագնահատելու գրքերի մշակման նշանակութիւնը եւ համարելով այն կարեւորագոյն փունկցիա ամեն մի գրադարանի աշխատանքում,— այնու ամենայնիւ պէտք է մատնանշեմ, որ գրադարանի հասարակական փունկցիան է հանդիսանում նրա կոմպլեկտաւորութիւնն ու սպասարկումը:

Մեծ յեղափոխութեան ժամանակ, Մեսրոպեան անուան Պետական Հանրային Գրադարանը փոքրիկ Հայաստանի պայմաններում հանդիսանում է գրքերի հետաքրքիր, ամենահարուստ հաւաքածուն (մօտ 1,000,000 միաւոր): Բայց դրա հետ միասին Պ· Հ· Գրադարանը, իր տարեցային ամէն հետեւանքով չի կարող պարծենալ իր բաժինների հաւասարաչափ կոմպլեկտաւորումով, դեռեւս չի կարող պարծենալ իր ֆոնդերի լրիւ մշակումով:

Պետ· Գրադարանի բաժինները մեծ չափով կրում են այն գրադարանի (հասարակական եւ մասնաւոր) հետաքրքրութեան կնիքը, որոնց հաւաքածուները կազմեցին նրա հիմքը: Օրինակ, Կովկասագիտական, Արեւելա–դիտական գրականութիւնը թէեւ այնքան էլ լրիւ չէ, բայց եւ այնպէս քիչ թէ շատ սպասիչ է: Ընդհանուր պատմութեան, գրականութեան պատմութիւն եւ մի շարք սոցիալական դիսցիպլիններին վերաբերող գրականութիւնը նոյնպէս վատ չէ հաւաքած, բայց փիլիսոփայութեան, սոցիոլոգիայի, մանկավարժութեան, ազնիկիային վերաբերող գրականութիւնը երբեմն նոյնիսկ անհրաժեշտ մինիմումով չի կարող պարծենալ:

Երեւան·— Մեսրոպեան Անուան Պետ· Հանրային Գրադարանի Հայկական Բաժինը

Գրադարանի կազմակերպման հենց առաջին օրից ամբողջ աշխատանքի ուշադրութեան կենտրոնն է դառնում հայկական տպագրական ամբողջ արտադրանքի հաւաքման գործը, որտեղ եւ երբ էլ որ այդ լոյս տեսած լինի: Այս բարդ խնդիրը աւելի եւս բարդանում էր երկու հանգամանքներով: 1) Նրանով, որ Կովկասում հայկական գրադարաններից եւ ոչ մէկը (բացառութեամբ Էջմիածնի ձեռագրատանից) իր առաջ նման ընդարձակ խնդիր չէր դնում եւ այդ տեսակէտից մենք մեծ ժառանգութիւն չստացանք, 2) ինչպէս յայտնի է, հայկական տպագրական արտադրանքի մեծ մասը լոյս է տեսել Հայաստանի սահմաններից դուրս, Կովկասում, Տաճկաստանում, Ռուսաստանում, Արեւմտեան Եւրոպայի երկիրներում եւայլն:

Այդ հանգամանքները բարդացնում էին եւ բարդացնում են մեր հիմնական խնդրի իրագործումը: Պետ· Հանր· Գրադարանն այդ գործում օժանդակութիւն գտաւ իր մի շարք արտաստահմանեան բարեկամների կողմից, որոնք իրենց արժէքաւոր նուիրատուութիւններով չափազանց հեշտացրին մեր խնդրի (Դէվիզեանց Շերիդոյում, Պըրսից· Թումանեան, Յօհաննէսեան, Սամբրատեան — Լոնդոնում եւ բազմաթիւ ուրիշ անհեզ բարեկամներ): Պետ· Հանրային Գրադարանը հաւատացած է, որ գրահաւաքման իր յետագա աշխատանքում եւս մեծ օժանդակութիւն կը գտնի բոլոր բարեկամների կողմից:

Թէեւ հայկական գրքային եւ պարբերական հրատարակութիւնների պրոդուկցիան դեռեւս եր-

կար ժամանակ լռացնելու կարիք կ'ունենայ, բայց եւ այնպէս մենք այսօր էլ հպարտութեամբ կարող ենք ցուցադրել մեր նամակները, ինչպէս գըրքերի հաւաքման, այնպէս էլ նրանց պահպանման եւ սպասարկման գործում:

Պետ. Հանր. Գրադարանը հաւաքում է այն ամենը, ինչ որ թեկուզ ամենափոքր չափով կարող է արտացոլել մեր կուլտուրան, մեր պատմութիւնը: Գրքերից, թերթերից, ամսագրերից բացի հաւաքում են զանազան տեսակի օրագրություններ, քարտէզներ, ափիշներ, ֆոտո-նիւթեր եւայլն, եւայլն:

Կոմպլեկտաւորման երկրորդ հիմնական խընդիրն է հանդիսանում ամբողջ հայագիտական, կովկասագիտական եւ արեւելագիտական գրականութեան հաւաքման աշխատանքը՝ աշխարհիս բոլոր կարեւորագոյն լեզուներով:

Այս աշխատանքները, որը խիստ հեշտացած է Մոսկվայի նախկին Լազարեան ճեմարանի մեծ ժառանգութեան մեծ մասի եւ այլ ֆոնդերի ստանալով. այնուամենայնիւ աւելի բարդ աշխատանք է, քան առաջինը, որովհետեւ նա համարեա անվերջ է, որովհետեւ արտասահմանեան գիտական հիմնարկների հետ սիստեմատիկ կապ հաստատելը եւ վերանորման գործը հարթելը մի չարք տարիների խնդիր է, որովհետեւ դժուար է հաւաքել այն բոլորը, ինչ հրատարակած է պատերազմի եւ յեղափոխութեան տարիներում, երբ, հասկանալի պատճառներով, կապն համարեա կտրած էր, երբ Միջերկրային Հայաստանը դեռեւս գոյութիւն չուներ:

Մենք համոզուած ենք, որ այս երկրորդ խընդրի կատարման գործում եւս մեզ կ'օգնեն մեր բարեկամները, ինչպէս ՄՍՀՄ-ի սահմաններում, այնպէս էլ ՄՍՀՄ-ից դուրս:

Մեր երկրորդ խնդիրն է հանդիսանում գրադարանի բոլոր բաժինների համամասնասիր կոմպլեկտաւորումը, որպէսզի գրադարանը կարողանա սպասարկել գիտութեան ամեն պահանջները մեր երկրում, նոր կադրեր պատրաստելու եւ ներկայացող սերնդի դաստիարակութեան պահանջները:

Այժմ գրադարանն աշխատում է իր պրոֆիլը ճշտելու վրա աւելի ճշտօրէն է դծում կոմպլեկտաւորման սահմանները, առանձնացնում է այն աշխատանքները, որ կատարելու են առաջին հերթին, եւ որպէս հետեւանք մեր առաջ պատկերանում է մի հարուստ ունիվերսալ գրադարան, հատատարկած կոմպլեկտաւորած բաժիններով, եւ առաջին հերթին, ամենահարուստ հայագիտական, կովկասագիտական եւ Առաջաւոր Ասիայի բաժնով, մի գրադարան, որ ունենալու է հայկական տպագրական պրոդուկցիայի ամենահարուստ հաւաքածուն:

Մեր մեծ ուսուցիչ եւ առաջնորդ Վ. Ի. Լենինը գրադարանների աշխատանքը գնահատում էր ոչ թէ նրանով, որ նրանք այսքան միլիոն գիրք են հաւաքել եւ որ այդ միլիոններից այսքանը ունեկումներ են. այդ ցուցանիշներով չէր կարելի խարխել նրա հանճարեղ տեսութիւնը: Նա գրադարանների աշխատանքը գնահատում էր նրանց կատարած սպասարկման աշխատանքով, համարելով որ իւրաքանչիւր գրադարանի ամենակարեւոր խնդիրը է հանդիսանում մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացումը եւ մասսաների մէջ ընթերցանութեան կուլտուրան արմատացնելը: Այդ պատճառով նա միշտ էլ հիացմունքով էր մատնանշում այդ տեսակէտից առաջաւոր երկրների փորձը, յիշատակում էր սպասարկման գործի փայլուն դրւածքը Շվեյցարիայում, Միացեալ Նահանգներում եւայլն:

Ցեղափոխութիւնը նախկին ցարական Ռուսաստանում գիտական կեանքի կոչեց այնպէս ապրող ազգութիւնների միլիոնաւոր մասսաներ: Այդ միլիոնաւոր մասսաներ գրքերի բացառիկ ու չտեսնւած պահանջ են առաջադրում, որ վկայում են գրադարանի յաճախման պերճախօս թիւրը (*):

	1931	1932	1933	1934
Ցառնախսումների թիւը	98,884	117,859	131,122	103,432
Տրւած է գրքեր	102,921	151,921	165,852	122,432

Այս թիւերն ինքնին դեռեւս չատ բան չեն ասում:

Դժբախտաբար գրադարանը տեղաւորւած է ոչ այնքան յարմար չէնքում, որը նրան հնարաւորութիւն չի տալիս ժամանակին սպասարկելու ընթերցողների բոլոր պահանջները եւ տեխւած է արհեստականօրէն կրճատելու ընթերցողների հոսանքը: Բայց եւ այս բացը, պայմանաւորւած է մեր անցեալ կիսակուլտուրականութեամբ, պայմանաւորւած է այն խղճուկ նիւթական ժառանգութեամբ, որ մասամբ խորհրդային իշխանութիւնը, — մօտակա տարիներում կը վերացուի եւ այն ժամանակ նորակառոյց չէնքում Պետ. Հանր. Գրադարանը կը կարողանա ծաւալել սպասարկման գործը եւ կը կարողանա էլ աւելի օգնել նոր սերընդի կոմունիստական դաստիարակութեան գործին:

(*) Ցառնախսումների թի եւ տրւած գրքերի հանակի նւագումը բացատրւում է նրանով, որ բադամում բացել են· 1) մէկ յատուկ մանկական գրադարան-ընթերցարան, որը ընդգրկել է մեր ընթերցողների աւելի երխտասարդ մասը· 2) Պետ. Համալսարանի գրադարանին կից բացած է ուսանողական ընթերցարան, որն ընդգրկել է ստորին դասընթացքների ուսանողներին:

Հետաքրքիր է ծանօթացանել մի շարք թիւերի, որ բնորոշում են Պետ. Հանր. Գրադարանի գիտական ընթերցանութեան կարիների յաճախումը. 1934 թ.—

Ցաճախումն՝ 12,568, Տւած է գիրք-ընդամենը՝ 18,577, Հայերէն՝ 10,214, Ռուսերէն՝ 8,089, Այլ լեզուներ՝ 274, Որից Կովկաս.՝ 304, Ժուռ. լրագ.՝ 2,198: Գեղ. գրակ.՝ 2,478, Այլ բաժ. 13,597, Մերժւած՝ 993:

Անհրաժեշտ է յիշել, որ 1935 թ. յուլիսի 1-ից գրադարանի մասնայական բաժինը գտնւած է Պետ. Հանր. Գրադարանի սիստեմից՝ քաղաքում կենտր. Գիտական գրադարան կազմակերպելու համար, որ ի հարկէ բաւականին հեշտացնում է Պետ. Հանր. աշխատանքը, քանի որ նոր կազմակերպւող գրադարանը կը կարողանա գրաւել ընթերցողների մի մասը:

Վերեւում բերւած աղիւսակում հետաքրքիր է այն հանգամանքը, որ՝

1) Գրքերի բաւական մեծ տոկոսը կազմում են հայերէն գրքերը.

2) Բաւական մեծ տոկոս է կազմում մատուլը:

Արտածայրում է այն բացառիկ լարւած աշխատանքը, որ կատարում են մեր ուսանողութիւնն ու պետ-աշխատողները անցեալի ժառանգութեան քննադատական իւրացման առաջարկում:

Սա մի բացառիկ ած է, որ ուրախացնում է ամեն մի կուլտուրական մարդու հայեացք, մի ած, որ համընթաց է մեր սոցիալիստական հայրենիքի աճին:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՏԱՂԶԱԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԷՋ

Խորհ. Հայաստանի Առաջին Արդիւնաբերական ձեռնարկութիւնը, զոր նախաձեռնած է ԼՕԿ-ը

ՊԱՏՐԻԿ ՍԵԼԵԱՆ

15 ՏԱՐԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ



Խորհրդային Հայաստանի փոքրորկարշաւ ձեպընթացը Դէպի Նորաւոր Բարձունքներ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՌԱՋԱԽՈՐ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ

Իր արդիւնաբերական եւ մշակութային նաւաճումներով Խորհրդային Միութիւնը զարձեր է համաշխարհային իրականութեան մէջ հզօր դրօշակ:

Խորհրդային Միութեան այդ հզօրութիւնը մասնակից է Խորհրդային Հայաստանը, որ անգամ է աշխատաւորական հայրենիքներու այդ մեծ եղբայրակցութեան:

«Խորհրդային Միութիւնը», կըսէ ընկեր ԱՂԱՄԻ ՄԱՆՏՅԵԱՆ, Հայաստանի աշխատաւորութեան վայլուն ղեկավարը,— ո՛չ միայն փշրեց ցարական Ռուսաստանի ազգային հարստահարման շղթաները, ո՛չ միայն փոխեց ժողովուրդներէ մէջ եղած հին, թշնամական յարաբերութիւնները, ոչնչացուց ազգային ատելութիւնն ու ժողովուրդներուն թշնամութիւնը միմիանց հանդէպ, այլ ստեղծեց Խորհրդային Միութեան բոլոր ազգութիւններուն իսկական եղբայրական, սոցիալիստական համագործակցութիւնը: ՀՈԿԱՁԱԿԱՆ ԲԱՁԵՐՈՎ ՄԵՆՔ ԱՌԱՋ ԵՆՔ ԸՆԹԱՆՈՒՄ ՓԱՍՏԱԿԱՆ, ԱՁՄԻԿՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՆՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՈՐՇՈՒՄ, ԱՆՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, ՈՐՊ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ Է ՄՆԱՑԵԼ ՄԵԶ ՀԻՆ ԿԱՊԳԵՐԻՑ»:

Ընկեր ՄԱՆՏՅԵԱՆՆ այսուհետ մէջ կը բերէ մեծ ՍՏԱԼԻՆի խօսքը.

«ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ ՈՄԱՆՔ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ, ԹԷ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՆ ՎՐԱ ԴՆԵԼՈՎ ԴՈՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ ԼԵՋՒԻ ՀԱՐՑԸ ԴՐԱՆՈՎ ԻՍԿ ԿԱՐԵԼԻ Է ԿՏՐԵԼ ՀԱՆԴՈՑԸ. ՃԻՇՏ ՉԷ, ԸՆԿԵՐՆԵՐ, ԴՈՊՐՈՑՆԵՐՈՎ ՀԵՌՈՒ ՉԵՍ ԳՆԱ: ՆՐԱՆՔ, ԱՁԴ ԴՈՊՐՈՑՆԵՐԸ ՉԱՐԳԱՆՈՒՄ ԵՆ, ԼԵՋՈՒՆ ՆՈՑՆՊԱՏ ՉԱՐԳԱՆՈՒՄ Է, ԲԱՑԱ ՓԱՍՏԱԿԱՆ ԱՆՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ ԴՈՑՈՒԹԻՒՆՆ ՈՒՆԻ, ԻՍԿ ԴԱ ՀԻՄՔ Է ԲՈԼՈՐ ԴԱՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԲՈԼՈՐ ՎՃՌԵՐԻ: ԱՁՍՏԵՂ ԴՈՐՈՑՆԵՐՈՎ ԵՒ ԼԵՋՒՈՎ ՕԶԻԴ ՉԵՍ ԱՉԱՏԻ, ԱՁՍՏԵՂ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԵՐ ԻՐԱԿԱՆ, ՍԻՍՏԵՄԱՏԻԿ, ԱՆԿԵՂԾ, ԻՍԿԱԿԱՆ, ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՕԳՈՒՈՒԹԻՒՆԸ ԿՈՒԼՏՈՒՐԱՊԵՍ ԵՒ ՏՂՆՏԵՍԱՊԵՍ ՑԵՏԱՄՆԱՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ,— ԻՍԿ ՆՐԱՆՔ ՑԵՏ ԵՆ ՄՆԱՑԵԼ ՈՉ ԹԷ ԻՐԵՆՑ ՄԵՂՔՈՎ, ԱՁԻ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՈՐ ԱՌԱՋ ՆՐԱՆՑ ԴԻՏԵԼ ԵՆ ԻՐԵՐԵՒ ՀՈՒՄՔԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ.— ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՁԳՏԵԼ, ՈՐ ԱՁԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՕՃԱԽՆԵՐ ԿԱՋՄԱԿԵՐՊԻՆ»:

Եւ չնորհիւ ԼԵՆԻՆի ու ՍՏԱԼԻՆի ազգային քաղաքականութեան անչեզ կիրառման, քանի արդիւնաբերական օճախներ են կազմակերպուած Խորհրդային Հայաստանի մէջ, տնտեսական ինչպիսի վիթխարի առաջդիմութիւն են տեղի ունեցած, ինչպիսի անճանաչելիութեամբ փոխուած է Խորհրդային Հայաստանի տնտեսական քարտէզը:

Ցարական կնքնակալութեան յետամնաց գիւղատնտեսական ծայրագաւառը, Հայաստան, խորհուրդներու հաստատման 15-րդ տարին, արդէն իսկ վերածւած է ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՑԱՌԱԶԱԻՈՐ ԵՐԿՐԻ:

Ցարի օրով

Արդիւնաբերական 15 հատ ձեռնարկներ, որոնց ընդհանուր արտադրութիւնը հասեր է 20,000,000 ռուբլիի: Եւ այդ 1913-ին:

Դաշնակներու օրով

Արդիւնաբերութիւնը քայքայւած էր մինչեւ այն աստիճան, որ արտադրանքը իջած էր 2,000,000 ռուբլիի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Տակաւին 1934-ին, արդիւնաբերութեան խոշոր միաւորներու թիւը հասած է 127-ի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Արդիւնաբերութեան ընդհանուր արտադրանքը հասեր է 148 միլիոն ռուբլիի:

Իսկ ի՞նչ է եղեր արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան փոխյարաբերութիւնը Խորհրդայնացումէն առաջ եւ Խորհրդայնացումէն վերջ:

Ցարի օրեր

Ամբողջ անտեսութեան մէջ արդիւնաբերութիւնը կը կազմէր հարիւրին 18, իսկ գիւղատնտեսութիւնը 82:

Դաշնակներու օրով

Արդիւնաբերութիւնը 7, իսկ գիւղատնտեսութիւնը 93:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ընդհանուր անտեսութեան մէջ արդիւնաբերութիւնը կը կազմէր հարիւրին 65, իսկ գիւղատնտեսութիւնը հարիւրին 35 միայն:

Եւ վերջին եօթ տարւա ընթացքին Խորհրդային Իշխանութիւնը հիմնական յատկացումներ է ըրած արդիւնաբերութեան մօտ 319 միլիոն ռուբլի:

Այս յատկացումներու մէջ չեն հաշւուած այն վիթխարի գումարները, որոնք յատկացած են Երեւանի արհեստական կաուչուկի գործարանին, Քանաքեռի էլեկտրական հսկային, Լենինականի Մսի կոմպինատին, Լենինականի Տեքստիլի նոր գործարանին, որ քանի մը անգամ աւելի մեծ է քան ներկայիս գոյութիւն ունեցող հսկա գործարանը, Երեւան Ազատաձիա երկաթուղիի կառուցման եւ այլն:

Հայաստանի քարածուխը հիմա ծածկւած է արդիւնաբերական կեդրոններով— Երեւան, Ղափան, Ալլահվերդի, Կիրովական (նախկին Ղարաքիլիսէն), Զորագետ, Փամբակ, Լենինական, Քանաքեռ, Արթիկ-աուփ, Անի-պեմզա, Արարատ (նախկին Դավալու), Մեւան եւ ուրիշներ:

Այն երկիրը, ուր

Դաշնակներու օրով

«Սովը եւ համաճարակը կոտորում են ժողովուրդին: Շատ տեղերում կերակրւում են կենդանիների եւ մեռած մարդկանց դիակներով: Հազարաւոր որբեր անտէր ճանապարհի վրա սնւում են կենդանիների աղբով», այսպէս է արձանագրած Թիֆլիս հրատարակւող դաշնակցական պաշտօնական օրգան «Ցառալ»ի մէջ, 1919, համար 34:

Այդ երկիրը,

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Դարձեր է աշխատաւոր ժողովուրդի բարգաւաճ եւ սքանչելի հայրենիքը եւ յաղթական Հընդամեա պլաններու երկիրը:

Առաջին Ցաղթական Հնդամեակը մեր երկրի մէջ, զուգընթաց Խորհրդային մեծ Միութեան բոլոր հանրապետութիւններու, հիմքը դրաւ սոցիալիզմի:

Երկրորդ Ցաղթական Հնդամեակով, մեր երկիրը, մանաւանդ Խորհրդային Միութեան մեծ երկին, կիրագործէ անդադարկրէ հաստատագրքի կառուցումը, որ ամամասին կընէ չահագործման ամեն հնար մարդկային գիտակցութենէն եւ տնտեսական բոլոր մարդերէն, եւ երկրի բովանդակ անտեսական կարելիութիւններն ու բնական հարստութիւնը կ'օգտագործէ աշխատաւոր բնակչութեան աւելի լիառատ բարեկեցութեան եւ կուլտուրական-կենցաղային ապասարկութեան համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ—ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստան ունի սպիտակ ածուխի անսպառ պաշար:

Սպիտակ ածուխը, այդ Հայաստանի ջուրերն են, որոնք մեծ անկումամիւթեամբ կը նետւին բարձրավանդակներէն վար:

Այդ անկումամիւթիւնը ինքնին էլեկտրական էներգիա է, էլեկտրական ոյժ է:

Եւ Հայաստանի ջուրերու անկումամիւթիւնը լիովին օգտագործելու պարագային էլեկտրական ուժի հանրագումարը կը հասնի 2,125,000 ձիու ուժի:

Այս վիթխարի ուժէ ո՞ր մասը կ'օգտագործւէր յարի օրով, դաշնակներու օրով: Եւ ո՞ր մասը կ'օգտագործւի այսօր, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ:

Ցարի օրով

Կային 10 մանր էլեկտրակայաններ 3,100 կիլովատ կարողութեամբ:

Դաշնակներու օրով

Կայաններու տարողութիւնը կը հասնէր 1,500 կիլովատի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ապահովւած է 1,600,000 ձիու ուժի էլեկտրական կարողութեան օգտագործումը:

1928–1934, *վեց տարուա ընթացքին, Խորհրդային Հայաստանի էլեկտրական ուժը աճեր է ՏԱՄՆ ԱՆԴԱՄ: Այս հսկայական աճը, եւ երկրորդ Հընդամեա Պլանով նախատեսւած էլեկտրական կառուցումներու իրագործումը, ցոյց կուտան Խորհրդային Հայաստանի արդիւնաբերութեան յետագա զարգացման ծաւալը: Որովհետեւ Խորհրդային Հայաստանի արդիւնաբերութեան մղիչ ուժը էլեկտրականութիւնն է:*

Առաջին հնգամեակին, 1928–1932, յատկացւած է մօտ 39,000,000 ռ.:

Երկրորդ հնգամեակին, 1933–1937, որոշւած է յատկացնել 74,500,000 ռ.:

Խորհրդային Հայաստան, լոյսի երկիր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ԱՌԱՒԵԼ ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՒԱՍԱՐ Է ՍՈՑԻԱԼԻԶՄԻ:

Ահա Լենինի պատգամը զոր իրագործելով մինչեւ վերջ, Խորհրդային Իշխանութիւնը կիրագործէ Սոցիալիզմի յաղթանակը մեր երկրի մէջ:

ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԶՈՒԳԸՆԹԱՑ ԱՃԵՐ Է ԲԱՆԻՈՐՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Ամենաարժէքաւոր կապիտալը, այդ մարդկային ուժն է:

Ահա ՍՏԱԼԻՆԵԱՆ ճշմարտութիւնը:

Իսկ արդիւնաբերական զարգացման զուգընթաց, ինչ չափերով կրցած է աճել Խորհրդային Հայաստանի ԱՄԵՆԱԱՐԺԷՔԱՒՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ, բանւորական ուժը:

Մինչեւ—

Ցարի օրով

Ամբողջ Հայաստանի մէջ կային 4,400 բանւորներ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

1934–ի սկիզբը բանւորական ուժը կը հասնի 114,061 հոգիի:

Ահա այն պահակառէլի բանակը, որ անսասան կանգնած է աշխատանքի եւ պաշտպանութեան դիրքերու վրա, որ ՍՏԱԼԻՆԵԱՆ ՏԵՄՊԵՐՈՎ առաջ կը շարժի եւ տոգորւած է իր գրաւած դիրքերը ՈՉ ՈՔԻ ԶԶԻՋԵԼՈՒ վճռակամութեամբ:

Այս փաստաւոր յաղթանակի մէջ, ինչ որ ամենէն հիմնականն է, վերջնականապէս ոչնչացած է վարձու աշխատանքի չահագործումը: Մինչեւ տակաւին 1928–ին, գիւղի մէջ բանւորներու հիմնական զանգւածները կը կազմէին կուլակներու համար գործող բատրակները, ընչազուրկ գիւղացիները, 1934–ին, խորտակած էին կուլակները, վերջ էր դրած բատրակութիւնը, վերածւելով Խորհրդային տնտեսութիւններու, Մեքենա Տրակտորային Կայաններու եւ անտառային տնտեսութեան մէջ աշխատող բարեկեցիկ բանւորութեան, որու թիւը կը հասնէր (1934–ին) 17,000 հոգիի:

«Հիմնական զանգւածը դարձաւ հարւածային—«Մարդիկ, որոնք ոեւ վերաբերմունք ունին

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԻՏԱԿ ԱՇՈՒԽԸ



Սիսիանի Շրջանի Շաֆէի Զրվէժը, Ուր Կառուցած Է 1,500 Ձիու Ուժի Ելեկտրակայան

դէպի աշխատանքը եւ այն պատրաստ գործ են համարում:

Ահա Խորհրդային Պետութեան խօսքը Ութերորդ Համագումարին:

Բայց ի՞նչպէս է, որ աշխատանքը մղձաւանջ է գրամատերական ամէն մէկ երկրի մէջ, իսկ այդ պատուո գործ է Խորհրդային երկրի մէջ:

Բայց ի՞նչպէս է, որ գրամատերական երկիրներու մէջ գործազրկացման մահացնող սիստեմի տակ, իսկ Խորհրդային Միութեան մէջ, բանւորական հիմնական զանգւածը դարձած է հարւածային եւ կուռնացաւ, հետզհետէ յայտնաբերելով ստեղծագործական անսպառ կորով, ծնունդ կուտա Ստախանովեան շարժման, առաջ կը բերէ ՍՏԱԽԱՆՈՎՆԵՐ եւ ԲՈՒՍԻԳԻՆՆԵՐ, որոնք գոյութիւն ունեցող տեխնիկայի արտադրական չափանիշները տասն անգամ կը բազմապատկեն:

*Որովհետեւ գրամատերական երկիրներու մէջ արդիւնաբերութիւնը նպատակ ունի անհատական

Կառուցման Հարուածային Ճակատները

հարատութիւն դիտելու, իսկ Սորվրդային Միութեան մէջ արդիւնաբերութիւնը նպատակ ունի ապատարկիլու հատարակութեան, բարձրացնելու բանուորներու բարեկեցութիւնն ու կուլտուրական նուաճումները:

Մինչդեռ 1928–ին—

Բանուորներու տարեկան եկամուտը 710 ռուբլի էր.

1934–ին—

Բանուորական աշխատավարձը հասեր է 1797–ի:

Երկուք ու կէս անգամ բարձրացուած է:

Եւ ահա Հայաստանի բանուորները 1928–ին ըստացեր են ընդամէնը 30,100,000 ռ., ապա 1934–ին ստացեր են մօտ 205,000,000 ռուբլի:

Բայց Սորվրդային բանուորութեան բարեկեցութեան աճման կատարեալ ապացոյցներ:

Ցաշխատական երկիրներու մէջ—

Մոցած է քարտային սիստեմ, կը տիրէ տնտեսամաթերքի ծաւալուն նուազութիւն, կը բարձրանան կենսամաթերքի գնները: Գերմանացի բանուորը, որ մէկ կիլոգրամ օրերը կարող կուտէր, այժմ անկէ ալ պրկած է, կը կրճատուին աշխատավարձերը մինչեւ Զինաստանի կուլիներու սարկավարձի աստիճան, կաւելնան անգործներու բանակները:

Դրամատիրական բոլոր երկիրներու մէջ—

Կը ճախողին ճգնաժամէն դուրս գալու բոլոր ճիգերը, արդիւնաբերութիւնը իր եկամուտները կաւելցնէ բանուորներու բեռնէն խլելով անոնց հացը: Ամերիկայի մէջ կենսամաթերքի գնները կը բարձրանան 30–40 տոկոս, տոլարի արժէքը աւելի քան քառասուն տոկոս կիյնայ, միաժամանակ տեղի կունենայ աշխատավարձի կրճատում: Նոր Եորքի բնակարաններուն առ նուազն մէկ չորրորդը պարապ է, բայց կը շարունակուին զանգուածային բնակարանաշինութիւնները: Այս տարի Ամերիկայի մէջ աւելի շատ անգործ կա, քան որ նախորդ տարիները եղեր է:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԵՐԿՐԻ ՄԷՋ

Տակաւին 1932–ին վերջ էր դրած անգործութիւնը եւ կամէ աշխատանքի հերոսներու բանակը, հայի քարտերու վերացումէն տարի մը չանցած վերացած է արդէն քարտային սիստեմը ամբողջապէս, կենսամթերքներու լիառատութիւն կը տիրէ, ռուբլին դարձաւ ոսկի հիմքի վրա եւ կայունացաւ, կենսամթերքներու գնները 30–40 տոկոսով կրճատուեցան, բայց այնուամենայնիւ ոչ մէկն ոչ ոքի աշխատավարձը չկրճատուեցաւ, այլ աշխատավարձը բարձրացաւ 15–25 տոկոսով:

Բայց այսքանով չի սահմանափակուիր Սորհրդային բանուորի բարեկեցութեան հարցը:

Սորհրդային բանուորներու բարեկեցութեան կը ծառայեն.—

Ընկերային ապահովագրութիւնը.

Առողջապահական սպասարկութիւնը.

Կրթական ֆոնտերը.

Բնակարանային եւ կոմունալ հնարարութիւնները:

Ի՞նչ չափերով են աճեր այս կարգի յատկացումները Սորհրդային Հայաստանի մէջ:

Ընկերային ապահովագրութեան գծով 1929–ին յատկացած է 4,288,000 ռ., իսկ 1934–ին աւելի քան 21,000,000 ռուբլի:

Այդ հսկա ֆոնտը գործածած է պրոֆիլակտիկ (կանխողական) ձեռնարկումներու եւ ընկերային կենցաղային սպասարկման:

Աշխատանքի պաշտպանութիւնը դրած է բարձր մակարդակի վրա: Այդ ուղղութեամբ հինգ տարուա ընթացքին յատկացած է աւելի քան 2,400,000 ռ.: Ծնորհիւ ձեռք առնած արդելիչ միջոցներու մահացութիւն պատահարներու թիւը 1928–ի հազարին մէկ եւ մէկ քառորդէն իջեր է մօտաւորապէս 6000–ին մէկին: Եւ ահա 1928–ին արդիւնաբերութեան մէջ գործարան պատահարներու հետեւանքով վնասուածներու թիւը կը կազմէր հազարին մօտաւորապէս 3, 1932–ին իջած է մօտաւորապէս 7000–ին մէկին:

Առողջապահութեան գծով— Առաջին հնգամեակին—1928–1932— յատկացած է աւելի քան 11 միլիոն ռուբլի, իսկ երկրորդ հնգամեակի առաջին երկու տարին, 1933–ին եւ 1934–ին, յատկացած է արդէն մօտ 7 միլիոն ռուբլի:

Այդ յատկացումները չեն ներկայացներ Առողջապահութեան ամբողջ պիւտճէն, այլ հիւանդանոցային հնարարութեան հիմնական գործառնութիւնը:

Ցարի օրով

Ամբողջ Հայաստանի մէջ եղեր է 177 հիւանդանոցային մահճակալ:

ՀՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հիւանդանոցային մահճակալներու թիւը կը հասնի 1788–ի:

«Աշխատաւորութեան բարեկեցութեան մակարդակի զգալի բարձրացումը, առողջապահական-կանխողական ծեռնարկումներուն լայն կիրառումը մեծ չափով պակսեցուցել է համաճարակային հիւանդութիւնները, որոնք անցեալում շատ էին տարածուած: Լայն չափով կիրառուում են կանխարգելու պատուաստումները, ուսլացել է ախտահանիչ կամերաների թիւը, 1934–ին հիմնուել է Պետական Սանիտարական Առողջապահական Տեսչութիւն: Վերջապէս մեծ աջակցութիւն են ցոյց տուել համաճարակային հիւանդութիւնների դէմ պայքարելու գործում նաեւ աշխատաւորներից կազմուած առողջապահական գունդերը»:

Մայրութիւնը գլխաւոր հոգածութեան առարկա:

«Խորհրդային բժշկութեան մէջ ուրոյն տեղ են դրաւում մայրութեան, մանկութեան եւ դեռահասների պաշտպանութեան հիմնարկները», ըսած է Հայաստանի Խորհուրդներու 8–րդ Համագումարի առթիւ հրատարակուած նիւթերու մէջ:

Բազմաթիւ հիմնարկութիւններ են կառուցած, որոնք նուիրուած են մօր եւ մանկան պաշտպանութեան:

Աշխատաւոր կինը ունէ զործարանի կամ հիմնարկութեան մէջ ունի մայրութեան յատուկ առանձնաշնորհումներ, որոնք ոչ մէկ դրամատիրական երկրի մէջ գոյութիւն ունի:

Այն հիմնարկները, որոնք կը ծառայեն մանուկներու եւ դեռահասներու պահպանման, 1929–ին 14 հատ էին, 7 բժիշկներով: Մինչդեռ 1934–ին այդպիսի հիմնարկներու թիւը հասած էր 34–ի, մնայուն մահճակալներու թիւը 1787–ի եւ բժիշկներու թիւը 23–ի: Բացի ասկէ, ցանկի եւ բերքահաւաքի շրջանին կազմակերպուելիս են շրջիկան մանկատուներ, որոնց թիւը, 1929–ի 10–ի դիմաց 1934–ին հասեր է 447–ի, իսկ մահճակալներու թիւը 300–ի դիմաց հասեր է մօտ 14,000–ի:

Կոմունալ շինարարութեան գծով.— Առաջին հնգամեակին (1928–1932), մօտ 16,000,000 ռուբլի, եւ երկրորդ հնգամեակի առաջին երկու տարին, 1933–ին եւ 1934–ին, աւելի քան 16 ու կէս միլիոն ռուբլի յատկացում եղած է:

Եւ ի՞նչ կը հասկնանք կոմունալ շինարարութիւն ըսելով—

Ջրմուղ, կոյուղի, բաղնիք, հիւանդոց, լուացքատուն, տրամվայ, օթո-փոխադրութիւն, մայթ, սալայատակ, կանաչազարդում, հրշէջային պաշտպանութիւն, փողոցներու լուսաւորութիւն, փոքր էլեկտրակայաններ, աղբահաւաքում եւ այլն:

Ցարի օրով

Եղեր է մէկ հնչին ջրմուղ, 6 փոքր բաղնիք, հինգ մանր էլեկտրակայան, ապրահաւաքութեան



Երեւանի Պետական Հրատարակչութեան Տոդատիպի Աշխատաւորուհի Հռիփսիմէ Վարդանեան

աննշան փոխադրութեան մէջոցներ, Երեւանի ձիաքարշ հանրակառքը:

Եւ այս ամէնը ոչ թէ Երեւանի կամ Լենինականի մէջ, այլ ամբողջ Հայաստանի մէջ:

Դաշնակիներու օրով

Ոչ մէկ կոմունալ նոր շինարարութիւն: Յաջիմէն ժառանգ մնացած կոմունալ շէնքերը մաեր են քայքայման ասպիճանական փուլի մէջ, իսկ Երեւանի ձիաքարշ հանրակառքը քայքայած է եւ չքացած ամբողջապէս:

ՀՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Եւ միայն Երեւանի մէջ

Ջրբերթ–Բաւազդէն մինչեւ Երեւան բնտռնէ ջրբերուղ, որու ջրային տարողութիւնը կը հասնի 40,000 խորանարդ մետրի: Բաղաքային ցանցի կարողութիւնը 1934–ին կը հասնէր արդէն մօտ 36 կիլոմետրի եւ ջրմուղը միացած էր 504 տան հետ:

Երեւանի մէկ երրորդը արդէն ունի կոյուղի:

Երեւանի փողոցներէն այժմ կը սուրան էլեկտրական հանրակառքերը, որոնք բեռնաւորած են Երեւանի յարաճուն բնակչութեամբ: Մայրաքաղաքը ձեռք է զարկեր հանրակառքի նոր գծեր կառուցանելու: Շուտով արդէն նոր Աւտոները Երեւանին կը կապէին էլեկտրական հանրակառքի երկաթէ գծերով:

Բնակարանաշինութիւնը ուշագրաւ նւաճումներ է կատարած:

Այսօրւա կարդախօսն է—ՈՉ ՄԻԱՑՆ ՑԱՐՄԱՐ, ԱՅԼ ԳԵՂԵՑԻԿ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ:

Մինչեւ Առաջին Հնգամեակ, Խորհրդային Իշխանութիւնը բնակարանաշինութեան վրա ծախսեր է մօտ 15 միլիոն ռուբլի:

Առաջին Հնդամեակին՝ մօտ 25 միլիոն ռուբլի։
Երկրորդ Հնդամեակի առաջին երեւոյթին՝ մօտ 10 միլիոն ռուբլի։

Հանրապետական այս յատկացումներու դուրընթաց, բնակարաններ են կառուցեր առանձին արդիւնաբերութիւնները, որոնք ընդհանուր բնակարանաշինութեան 38 տոկոսը կազմեր են։

Նշագ աչքառու դեր չէ կատարեր բնակարանային կոոպերացիան, որ 5000 անդամ ունի եւ կառուցեր է ընդհանուր բնակարանաշինութեան 30 տոկոսը։

Արդիական բնակարանաշինութիւնը արդէն իսկ իչխող է դարձած Մորդրդային իրականութեան մէջ։ Առաջ են եկած ամբողջապէս նոր թաղամասեր, սոցիալիստական նոր աւաններ, որոնք դիտուղին կըսեն այն մասին, որ դասակարգային հետքը կանհետանան, անդատարկրդ հասարակարգը իր նոր երկիրը կը կերտէ, ուր չեն լինան թաղեր, նեւսա ու մաշած բնակարաններ չեն։

Շուտով արդէն կանհետանան սխալական կառուցածքով հին տներ երկրի հետքերն անդամ։ Կը բարձրանան խորհրդային կարգերու պէս հզօր, Մորհրդային մեծ Միութեան պէս անասան արդիական մեր երկիրը, որ ցմահնոով, տուփով, երկաթով եւ լոյսով կը կառուցւի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

Ցարի օրով
Եղեր է մօտ 1,200,000 բնակչութիւն։
Դաշնակիներու օրով
Բնակչութիւնը լղեր է 700,000–ի։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի բնակչութիւնը արդէն հասեր է 1,300,000–ի։

Ահա ձեզ յաղթական երկիր, կենսաւրախ, առողջ, պղպջատակամ սերունդներով։

Երկիր, որ Մեծ Միութեան ՍՏԱԼԻՆԵԱՆ թափով կամի ու կառնանա։

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ — ՅԱՌԱՋԱԿՈՒՐ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՈՎ

Գիւղացին իջած է Աւանդական էշէն եւ Նստած է Պողպատէ Երիվարի վրա

Ցարական Հայաստանը եղել է յետամնաց գիւղատնտեսութեան երկիր։ Գիւղացին ապրեր է դաշտային մուկերու պէս սոսրերկրեա նկուղներու մէջ, կամ սխոռներու մէջ կողք կողքի անասունների հետ եւ հիւծեր է թշուառութենէն։ Այդ գիւղացին կոդոպաեր են կալւածատէրերը, ցարական իշխանութիւնը, վաշխառուն եւ Մովրեբսաը։

Մորդրդային իշխանութիւնը, 15 տարւա ընթացքին, ոչ միայն երկիրը վերածեց արդիւնաբերական յառաջատը երկրի, այլ բուն թափով առաջ մղեց գիւղատնտեսութիւնը, օժտելով զայն արդիական մեքենականութեամբ, մէկ կողմէն զարկ տալով ոռոգման ծրագիրներուն, մեւս կողմէն գիւղատնտեսութիւնը վերակառուցանելով խորհրդային անտեսութիւններու եւ հաւաքական անտեսութիւններու հիմունքներու վրա։ Այն հիմունքներու վրա, որոնք միայն կարող էին ապահովել գիւղատնտեսութեան կուլտուրական եւ ունեւոր կեանք, որոնք միայն կարող էին արագօրէն վերացնել գաղաքի եւ գիւղի տարբերութիւնը։

Ցարի օրով

Ոռոգած հողերու տարածութիւնը եղեր է ընդամենը 97,000 հեկտար։

Դաշնակներու օրով

45,000 հեկտար: Ցանած հողերու տարածութիւնը համարեա քէ եղեր է չորսին մէկ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ոռոգած տարածութիւններու ծաւալը հասած է 190,000-ի: Խորհրդային Իշխանութիւնը կրկնապատկեր է ոռոգած տարածութիւնները եւ առաջ է անցեր: Այժմ ամէն մարդ կրնա պատասխանել այն հարցին, թէ ի՞նչքան հող է նւաճած Խորհրդային Իշխանութիւնը Հայաստանի գիւղատնտեսութեան համար:

Խորհրդային Իշխանութիւնը, ի հարկէ աշխարհակալական պետութիւն չէ: Բայց նւաճել երկրի ամբողջ արդիւնաբերական եւ գիւղատնտեսական կարելիութիւնները, այդ մի միայն Խորհրդային Իշխանութիւնը կրնա կատարել:

Ինչքա՞ն վոքր էր Հայաստանը ցարերու օրով: Ինչքա՞ն ուշքի ան վոքրացաւ, ամբեցաւ Մայվրիսանեբու Իշխանութեան օրով: Ինչքա՞ն մեծ է ան հիմա ԽՈՐՀՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ, եւ ինչքան մեծ կը լինի վաղը ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԶՕՐՈՒԹԵԱՆ ՑԱՐԱՏԵՒ ԱՋՈՒՄՈՎ:

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԱՍԱՐ Է ՈՒՆԵՒՈՐ ԵՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Խորհրդային Իշխանութեան խոչորագոյն նւաճումը դիւզատնտեսութեան մարդին մէջ պէտք է նկատել ՀԱՒԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ մանր, վոչնչացած անհատական տնտեսութեան դէմ, որու զարգացման կարելիութիւնները վերին աստիճանի սահմանափակ էին:

Ի՞նչ կը ներկայացնէր ինքն իր մէջ Հայաստանի գիւղը Առաջին Հեդմնականի նախօրեակին:

Արտադրութեան հիմնական միջոցները ցրուած էին մանր անհատական տնտեսութիւններու մէջ: Այն ինչ անդամ գիւղատնտեսութեան ամենանախնական գործիքներու հաւաքական օգտագործումը, կրնար խոշոր բարիքներ ապահովել գիւղին:

Կուլակային-ունեւոր տարրը գալի կերպով գերակշռող դիրք ունէր: Այդ կը նշանակէ, որ սակաւաթիւ մարդիկ կը յափշտակէին գիւղի բարեկեցութեան միջոցները:

Կը շարունակէին քոչւորական հնացած ձեւերը, որը արգելք էին անասնարուծութեան զարգացման:

Աւօրի գործածութիւնը գերակշռող էր: Այն ինչ առաջին հերթին աւօրը պէտք էր փոխանակել դութանով, իսկ յետագային դութանը քրաքթորով, կարենալ գիւղատնտեսութիւնը կոմպակերպելու համար սոցիալիստական, արդիւնաբերական հիմունքներու վրա:

Բայց այժմ փոխուած է գիւղի ամբողջ դիմագիծը:

1934-ին կային 67 Խորհրդային Տնտեսութիւններ եւ 956 Հաւաքական Տնտեսութիւններ, որոնք

Հաւաքատնտեսի Ունեւոր եւ Կուլտուրական կեանքը Ամենէն Առաջ կ'արտայայտուի Երեխաներուն Կեանքով

Կիրովականի Շրջանի Վարդանլու Գիւղի Քիւրտ Պիոներներու Ազգագրական Պարը

կը ներկայացնէին Հայաստանի ամբողջ տնտեսութիւններու մօտ հարիւրին 46-ը եւ ցանած էին ամբողջ տարածութիւններու համարեա կէսը:

1935-ի Ցունվարին, Խորհրդներու Ութերորդ Համագումարին, Հաւաքական տնտեսութիւնները կընդգրկէին ամբողջ տնտեսութիւններու հարիւրին 55-ը եւ կը նախատեսէր, որ մինչեւ 15-րդ Տարեդարձ կընդգրկէ հարիւրին 75-ը

Մեքենա-Տրաքթորային- կայանը Խորհրդային եւ Հաւաքական Տնտեսութիւններու արագաթափ աճման դաղտնիքն է:

Այժմ արդէն Հայաստանի ՄՏԿ-ներու թիւը կը հասնի 15-ի:

Տրակտորներու, այդ պողպատէ երիվարներու թիւը կը հասնի մօտ 900-ի, իսկ անոնց ընդհանուր կարողութիւնը աւելի քան 12,000 ձիու ուժի:

Բայց գիւղատնտեսութեան մեքենայացումը Տրակտորով մէայն չի վերջանար:

1934-ին Հայաստան ունէր 825 հացահատիկացան մեքենա:

180 խոտ կապող մեքենա:

123 կալող բարդ մեքենա:

12 կոմբայներ:

Ապա աւօրը համարեա ամբողջապէս վերջ է դտած եւ գիւղատնտեսութիւնը ապահովուած է 27,094 դութանով:

Եղկաբականութեան գործածութիւնը մուտք է գործած գիւղատնտեսութեան մէջ:

1934–ին, 10 կալսիչ մեքենաներ ելեկտրական ուժով աշխատած են Լենինականի, Ալավերդիի, Կոտայքի եւ Վաղարշապատի շրջաններու մէջ։

Բայց 15–րդ Տարեդարձը խոշոր կարելիութիւնները կը բանա գիւղատնտեսութեան յետագա մեքենայացման տեսակէտէն։

Գանի մը ամիս առաջ Ընկեր Ծանջեան հարուածային կոմբայնավարներու կը յայտնէր, որ այս տարի Մեքենատրակտորային կայաններու մէջ եղեր է 21 կոմբայն, բայց յառաջիկայ տարին անոնց թիւը կը կրկնապատկուի–կեռապատկուի։

Ինչ որ կարեւորն է Տրդատի գիւղը հասեր է սոցիալիստականօրէն աշխատանքի բարձր կազմակերպուածութեան։ Շնորհիւ այդ իրողութեան աճեր է բերքատուութիւնը եւ աճած է գիւղացիի բարեկեցութիւնը։

Առանց հաշուելու գիւղացիի եկամուտները իրեն յատուկ օժանդակ տնտեսութիւններէն, աշխատանքի օրւա վարձատրութիւնը, նախորդ տարւա 1 ռուբլի 23 կոպեկէն անցեալ տարի բարձրացեր է 1 ռուբլի 84 կոպեկի, միջին հաշուով։ Որոշ շրջաններու մէջ աշխատանքի օրւա վարձատրութիւնը հասած է 6–7 ռուբլիի, իսկ կարգ մը տնտեսութիւններու մէջ աշխատանքի օրւա վարձքը տրւած է հացահատիկով, աշխօրի դիմաց տալով 20–28 կիլոկրամ հացահատիկ։

Հաւաքական տնտեսութեան անբաժանելի դրամագլուխը հասած է մարդ գլուխ 33 ռուբլիէն 87 ռուբլիի։

Այն ինչ 1928–ին իւրաքանչիւր տնտեսութեան կիմնար 20 ռուբլիի գիւղական մեքենաներ, 1933–ին, իւրաքանչիւր տնտեսութեան կիմնար աւելի քան 76 ռուբլի մեքենականութիւն։

Ահա թէ ինչ է ըսած Հայաստանի Ութերորդ Համագումարի առթիւ հրատարակած յատուկ նիւթերու մէջ։

«Կուսակցութիւնն եւ քանւոր դասակարգը կենսագործելով Լենինեան հաղթականութիւնը, գիւղացիութիւնը տարիե սոցիալիստական ուղիով։ Սոցիալիստական հատւածը իր ցանքերի տարածութեամբ եւ ապրանքային արտադրանքով գիւղում գերիշխող դիրք գրաւեց։ Մենք խոշորագոյն յաջողութիւններ ունեցանք գիւղատնտեսութեան տեխնիկայի բարձրացման բնագաւառում, տրակտորն ու գութանը դուրս մղեցին արօրը, եւ մանգաղն ու գերանդին իրենց տեղը գիջեցին քերհաւաքի ամենաբարդ մեքենաներին։

«Դրա, ինչպէս նաեւ հաւաքական արտադրութեան անցնելու հետեւանքով զգալի չափով բարձրացաւ աշխատանքի արտադրականութիւնը։ Հարաւոր հաւաքական տնտեսութեան անդամները սովրեցին տիրապետել նոր մեքենաներին ու խոշոր գիւղատնտեսութեան արտադրութեան տեխնիկայի։ *ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻ ՏԵՍԱԿ*։

ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ ԴԱՐՁԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՒԱՓՈԽՄԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՒԸ»։

Իսկ Հաւաքական տնտեսութեան ամէն մէկ յաղթանակ, կը քաղէ հակայեղափոխութեան բոյները գիւղի մէջ, նախնախած է արդէն կուլակութիւնը, որ դարձած էր միակ ապաւէնը ամէն տեսակի յետադիմութեան։ Տրտրդային բանւորութիւնն ու գիւղացութիւնը կը ներկայացնեն Տրտրդային Իշխանութեան հզօրութեան անպարտելի միասնական հզօրագոր բանակը, որու դէմ դացող ամէն մէկ ուժ, անպայման կը խորտակէ իր սեփական ճակատը։

ՏՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ—ՀԱՄԱՍՏԱՐԱՑ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ

Տօսել Տրտրդային Հայաստանի կուլտուրայի մասին, կը նշանակէ խօսել երկաասրդութեան մասին։ Բայց Տրտրդային կուլտուրան իր մէջ կընդգրկէ բանւորներու եւ գիւղացիներու լայնածաւալ զանգուածներ, որոնք մինչեւ Տրտրդային հասատաւելը չեն իմացեր գիրն ինչ է։ Եւ այդ իրենց յանցանքը չէ եղեր։ Ցարական յետադիմութիւնը եւ դաշնակցական մսվղերիզմը ապա-

ՏՈՎԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ
12 Տարեկան Պատանի, որ Երաժշտական եւ Նկարչական Արտակարգ Տաղանդ կը Յայտնաբերէ

Ահա Խ. Հայաստանի աճող սերունդը, որու տրամադրութեան տակ դրւած է Տորհրդային հասրեկարգի գիտութեան եւ արւեստի ամբողջ կարելիութիւնները։

ւինները են ապիտութեան, ծայրայեղ դէպքին սոր-վելցուցեր են միայն այնքան, որքան անհրաժեշտ է եղեր պրաճանաչութիւնը իրենց համար: Ցա-րիզմի եւ դաշնակիզմի օրով կրթութիւնը եղեր է ունեւոր դասի մենաշնորհը: Հազիւ նկատելի քի-ւով բանւորներու եւ գիւղացիներու զաւակները յաջողեր են դպրոցները յաճախել, յաղթահարելով կեանքի դժնդակ պայմանները:

Ցարի օրով

Ամբողջ Հայաստանի մէջ եղեր է 465 դպրոց, 1177 ուսուցիչ եւ 35,414 աշակերտ:

Դաշնակներու օրով

Աշակերտներու թիւը իջեր է մինչեւ 15,000-ի:

Իմ տպաւորութիւններու մէջ, մէկ տեղ, այդ մասին ես հետեւեալն եմ ըսեր.—

«Դաշնակութիւնները ամբողջ երկրի մէջ 15,000 դպրոցական աշակերտ էին արձանագրած: Բայց ոչ ոք գիտցաւ, թէ անոնցմէ քանի հոգին դպրոց յաճախեց, քանի հոգին ապրեցաւ եւ քանի հոգին մեռաւ: Դպրոց, աշակերտ, ուսուցիչ, այդ ամենը միայն պիտակ էին արտաքին աչխարհէն ծածկելու համար այն իրողութիւնը, որ մանկավարժակաները բարբարոսութեան արշաւանք էին սկսած այն երկ-րին մէջ, որ դարաւոր կուլտուրայի երկիր է հան-դիսացած, որքան ալ հազաթիւ եղած ըլլային կուլտուրայի օճախները, որքան ալ հազաթիւ մարդիկ հնարաւորութիւն ունեցած ըլլային գի-րենք ծնող ժողովուրդի հանճարը մարմնաւորելու եւ անոր ազատագրական ու դեմոկրատիկ ձգտում-ները արտայայտելու: Որովհետեւ դաշնակցութիւ-նը կը հանդիսանա ամեն մէկ ազնիւ մտածումի եւ յառաջդիմութեան անընդունակ բիրտ ուժը, որ թշնամի է ժողովուրդին եւ ժողովրդական ամեն տեսակի դեմոկրատական իրաւունքներու, իր իշ-խանութեան օրով տրրած է ազատագրական ամեն մէկ յարժումը հայ աշխատաւոր ժողովուրդին, որ մեծ է եղած իր ձգտումներով եւ ազատագրական հերոսական ընդվզումներով»:

Տապալելով այդ յետադիմական բիրտ ուժը, հաստատելով Խորհրդային Իշխանութիւն, մանե-լով Խորհրդային Միութեան մէջ, հայ աշխատա-ւոր ժողովուրդը տեղծած է իր կուլտուրական զարգացման բոլոր առնչութիւնները:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՐԳԱ-ՒԱՃՈՒԹԵԱՆ գործընթաց՝ Խորհրդային Հայաս-տանը հսկայական նուաճումներ է կատարած ազ-գային կուլտուրայի զարգացման մարզի մէջ: Ցա-րիզմեան երկրներու մէջ ազգային կուլտուրա-ներու բարբարոսական ոտնահարման, խորխոր-տային անկումներու դիմաց՝ Խորհրդային Միու-թեան առանձին հանրապետութիւններն ու ազգու-թիւնները գլխի պտոյտ ուղղ բարձունքներ են գրաւած:

«Իրականում, կըսէ Ընկեր ՍՏԱԼԻՆ, պրոլե-տարիատի դիկտատուրայի եւ Խորհրդային Սո-ցիալիստական Հանրապետութիւններու Միութեան մէջ սոցիալիզմի շինարարութեան ժամանակաշըր-ջանը ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ժամանակաշրջան է ազգա-յին կուլտուրաների՝ բովանդակութեամբ սոցիա-լիստական եւ ձեւով ազգային»:

Իմացաք, թէ ինչ ունէինք ցարի օրով, ինչ ունենանք դաշնակներու օրով:

Այժմ իմացէք, ինչ է տեւը Խորհրդային Իշ-խանութիւնը մեր երկրին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

810 տարրական դպրոց:

348 ոչ-լրիւ միջնակարգ դպրոց:

44 միջնակարգ դպրոց:

Ընդամէնը 1202 դպրոց:

Այս երեք կարգի դպրոցները յաճախած են 176,785 աշակերտ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Կանեքի են կազմած 9 բարձրագոյն դպրոցական հիմնարկներ:

Պետական Համալսարան:

Մանկավարժական Ինստիտուտ:

ԲԱԶՄԱՐԻՆՍՏԵԱՆ (Պոլիտեխնիկական) Ինս-տիտուտ:

Բժշկական Ինստիտուտ:

Բարձրագոյն Երաժշտական Դպրոց:

Գիւղատնտեսական Ինստիտուտ:

Բարձրագոյն Կոմունիստական Գիւղատնտեսա-կան Դպրոց:

Տեխնոլոգիա:

Անասնաբուժական –Անասնաբուժական Ինստի-տուտ:

Այս բոլոր հիմնարկներու մէջ ընդգրկուած են 4041 ուսանողներ:

Այս հիմնարկները մինչեւ 1934 թուականը Հա-յաստանին տուած են 2312 բարձրորակ մասնագէտ-ներ:

Բարձրագոյն այս դպրոցներէն անմիջապէս ա-ռաջ կուգան տեխնիկումները, որոնք միջնակարգ դպրոցներ են մասնագիտական թեքումով:

Տեխնիկումներու թիւը, անցեալ տարի, կը հասնէր 43-ի:

Տեխնիկումներու աշակերտներու թիւը կը հասնի 7165-ի:

Կան եւ ԲԱՆՖԱԿՆԵՐ, որոնք բանւորներուն միայն կը սպասարկեն:

Բանֆակներու թիւը կը հասնի 7-ի, իսկ ու-սանողութեան թիւը 1392-ի:

Մասնագիտական դպրոցներու կարգին կը պատկանին նաեւ ԳՈՐԾԱՐԱՆԱՑԻՆ–ԱՇԽԱՏԱՆՔԱ-ՑԻՆ, ԽՈՐՀՐԱՑԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ եւ ԱՐՀՄԻ-ՈՒԹԵՆԱԿԱՆ դպրոցները, որոնց կը յաճախեն 1381 ուսանողներ:

Եւ որպէսզի հնարաւոր ըլլար պիտութիւնը տա-նել մինչեւ ամենայախին անկիւնները, առեղծած են ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ վից բարձրագոյն հիմ-

նարկները, մէկ տեխնիկում, որոնց ուսանողներու թիւը կը հասնի 1,100-ի:

Այսպիսով Խորհրդային Հայաստանի բարձրագոյն ուսուցման ցանցը կընդգրկէ ընդամէնը 15,100 ուսանող:

Ի՞նչ նպատակ կը յառաջադրէ կուլտուրան Խորհրդային Հայաստանի մէջ:

Ժողովրդական տնտեսութեան յետագա զարգացումը ապահովել որակեալ կադրերով, ստեղծել պայմաններ համատարած գիտութեան եւ տեխնիկայի տիրապետութեան եւ պատրաստել գետինը անցնելու սոցիալիստական հասարակարգէն Կոմունիստական հասարակարգ:

Եւ Հայաստանի երիտասարդութեան դաստիարակութեան, զիտական-տեխնիկան կուլտուրային, արուեստի եւ գրականութեան կուլտուրային տէրտիտելու կարելիութիւնը չէ սահմանափակուած Խորհրդային Հայաստանի սահմաններու մէջ: Հազարաւոր երիտասարդներ ընդգրկուած են Անդրկովկասեան հիմնարկներու մէջ: Միայն Մոսկուայի եւ Լենինգրատի մէջ, անցեալ տարի, կը գտնուէին հայ երիտասարդներու թիւը աւելի քան 10,000 էր: Հարիւրաւոր ուրիշ հայ երիտասարդներ, Մութեան մէջոցներով կուղարկուին արտասահման՝ զիտական հետազօտութիւններու եւ իրենց ուսումը լրացնելու համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՐԳԻ ՏԱԿ ԵՐԵՒԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԸ

Երեխաներու մասին հոգ կը տանի միայն Խորհրդային Իշխանութիւնը:

Ահա «Պրաւմայի» մէկ համարգրականի վերտառութիւնը, որ կը խօսի ամբողջ ճշմարտութեան մասին:

ՍՏԱԼԻՆ Խորհրդային նոր մարդու վրա կը նայի որպէս սոցիալիստական կուլտուրայի մեծագոյն արժէքի վրա:

«Այդ մարդու դաստիարակումը կը սկսի, կաւելցնէ «Պրաւման», երեխայի դաստիարակութենէն: Ան կը շարունակուի դէռահասի եւ պատանիի դաստիարակութեամբ: Սոցիալիստական հասարակութեան մէջ չկա եւ չկարող ըլլալ այնպիսի բոպէ, երբ անոր անող զաւակը գոնի առանց իսկական մայրական եւ հայրական հսկողութեան, առանց հոգատար փայփայանքի, առանց սիրազուրջ ուշադրութեան: Եւ եթէ երեխան որբացած է, կորսնցուցած է հայրն ու մայրը, կամ թէ ծնողները կորսնցուցած են երդիրդային բաղաքացիի արժանիքը՝ անխնամ թողնելով իրենց երեխաները, մեր հասարակութիւնը իր վրա կը վերցնէ զանոնք հայրաբար խնամելու գործը»:

Խորհրդային նոր մարդու դաստիարակութիւնը կը սկսի երեխայի դաստիարակութենէն:

Ի՞նչքանով է ուշադրութիւն դարձուցած Խորհրդային Հայաստանը իր երեխաներու դաստիարակութեան գործին՝ պատրաստելու համար Սոցիալիստական կուլտուրայի մեծագոյն արժէքը:

Նախադպրոցական դաստիարակութեան մարզին մէջ Խորհրդային Հայաստանի կառուցած նաճումները իրենց ամբողջ ուժգնութեամբ կարենալ ըմբռնելու համար, պէտք է իր ամբողջ չեշտով յառաջադրել մէկ ուրիշ հարցում:

Եղա՞ր է երբ եւ իցէ նախադպրոցական դաստիարակութիւն Հայաստանի մէջ Խորհրդայնացումէն առաջ:

Ցարի օրով

Բացարձակապէս անտեսուած է եղեր երեխայի դաստիարակութիւնն ու հասարակական հոգածութիւնը:

Դաշնակներու օրով

Ամենէն առաջ մահուան խորշակը զարկեր է մեր ծաղիկ սերունդը: Երկիրը հասեր է դաստիարակական եւ կուլտուրական կանոնքի լիակատար քայքայման: Դաշնակները ոչ միայն չեն կռւեր մեր երկրի կուլտուրական յետամնացութեան դէմ, այլ աւելի խորացուցեր են զայն:

Դրամատիրական երկիրներու մէջ

«ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԱՃԵՐ ՈՒ ԲԱՐՁՐԱՅԵՐ Է ԲԱՆԵՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՈՍԿՈՐՆԵՐՈՒ ՎՐԱ: ԱՆ ԱՃԱԳ ԻՐ ԱՐԻԱՀԱՍՏԵԼԻ ԴՈՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՐԿԻ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ԱՐԻՒՆՈՎ»:

«Պրաւման» ճիշտ է:

Եւ «Պրաւման» այդ ճշմարտութիւնը կը հմտնէ դրամատիրական թերթերու ամէն տեղեկու-

Բախտաւոր երկրի Բախտաւոր Զաւակները
Հայաստան Որբաշխարհը վերածւած կենսուրախ Պատանիներու երկրի

Հայաստանի Պիոներներու Մէկ խումբը

թիւններու վրա եւ կը խտացնէ այդ տեղեկութիւնները հետեւեալ համայնապատկերի մէջ.—

«Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ, միլիոնաւոր երեխաներ կը թափառին ճանապարհներու վրա, կապրին կամուրջներու տակ, խարշ կուգան ապրանքատար դատարկ վագոններու մէջ: Ցաշիստական Գերմանիայի մէջ—յուսահատութեան ծայր աստիճանի հասած գործազուրկ ծնողները կը սպաննեն իրենց երեխաները՝ փրկելու համար զանոնք սովի տանջանքներէն: Պանական Լեհաստանի գիւղերու մէջ, երեխաները փոքրիկ մեռելներու կերպարանք ունին: Անոնք անսարքեր են, յամրաշարժ: Անոնք, որոնց մէջ դեռ կ'առկայծի կեանքի եռանդի կրակը, սովահարութենէն փրկութիւն կը փնտռեն փախչելու մէջ»:

ՀՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

1929–ին եղեր է 55 մանկապարտէզ, 3780 երեխայով, իսկ 270 մանկական հրապարակ 7458 երեխայով: Այս մանկապարտէզներու եւ մանկահրապարակներու մէջ ընդգրկուած երեխաները կը կազմէին Հայաստանի 4–6 տարեկան երեխաներու հարիւրին 12–ն քիչ մը աւելին:

1933–ին մանկապարտէզներու թիւը բարձրացեր է 389–ի իսկ մանկահրապարակներու թիւը 1033–ի: Նախազգոյշական այս հաստատութիւններու մէջ ընդգրկուած երեխաներու թիւը հասեր է 65.547 երեխայի: Այս թիւը կը ներկայացնէ 4–6 տարեկան երեխաներու հարիւրին մօտաւորապէս 55–ը:

1934–ին մանկապարտէզներու թիւը հասեր է արդէն 438–ի, իսկ մանկահրապարակներու թիւը 1545–ի: Երեխաներու թիւը բարձրացեր է 75,–608–ի, որը կը ներկայացնէ 4–6 տարեկան երեխաներու հարիւրին մօտ 61–ը:

Հայաստանի Խորհրդայնացման 15–րդ յոբելեան տարեգարձին, մանկապարտէզներն ու մանկահրապարակները կընդգրկեն 97,019 երեխա, որը կը կազմէ նախազգոյշական տարիք ունեցող երեխաներու հարիւրին մօտ 75–ը:

Եւ երբ մենք կը խօսինք Խորհրդային մանկապարտէզի մասին, Խորհրդային մանկահրապարակներու մասին, չպէտք է երեւակայել սոսկական պասարաններ եւ խաղասրահներ, որտեղ ուսուցչուհիները երեխաները զրաղած կը պահեն երգերով եւ խաղերով:

Խորհրդային մանկապարտէզն ու մանկահրապարակը ունին ընդարձակ, լուսաւոր եւ մաքուր ննջարաններ եւ ճաշասրահներ, որտեղ երեխաները ժամանակին կը ճաշեն եւ կը հանգստանան:

Ահա Հոկտեմբերեան Յեղափոխութեան ջախ ջախիչ յաղթանակը դրամատիրական սովի սխեմային դէմ:

Այդ յաղթանակի հիմքը կը կազմէ Լենինի ցուցմունքը այն մասին, թէ՝

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՉԷ, ԵԹԷ ԱՆ ՄԵԾԱՁՈՁՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՉԻ ՅԱՁՏՆԱԲԵՐԵՐ ԴԷՊԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ:

Երեւանի Երիտասարդութիւնը կը դիմաւորէ Մեկը Չելիւսկեան
Հերոսներէն՝ ԸՆԿԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ



որ մասնակցած է Չելիւսկեաններու օգնութեան հասնող օդանաւային խումբին եւ իմը բարձրացած է օդանաւի վրա այն ժամանակ միայն, երբ խորտակած Չելիւսկինի գիտական արշաւախումբի վերջին անդամը կ'ազատի սառցակոյտի վրայէն:

Ահա թէ ինչպիսի հերոսութեան ընդունակ է խորհրդային երիտասարդութիւնը, որ կը տիրապետէ գիտութեան եւ տեխնիկային եւ պատրաստ է աշխատանքի եւ պաշտպանութեան համար:

Օրոյի եռեւի մասին մէջ կոմսոմոլուհիի մօտ նստած գլխարաց երիտասարդն է Ընկեր Պօղոսեան:

Օրոյի առաջին մասին մէջ նստած է կոմսոմոլի երեւանի կոմիտէի Քարտուղար Ընկեր Արամ Խաչատրեանը:

ՄԱՐԻԵՏՏԱ ՇԱՀԻՆԵԱՆ

ԿԱՐԲԻԴ

Ա.

Կարբիդը — ոնց որ չոհոլաղ: Կար ժամանակ, երբ եղլա էին գնում առանց նրան, յետո սուղծւեց պահանջ եւ այդ ծածկեցին ներմուծումով: Բայց պահանջն աճեց. երկու տարի առաջ նա արտայայտւում էր 170,000 փթով, իսկ երկու տարի յետո բարձրացաւ 300,000 փթի եւ չարունա-

ՄԱՐԻԵՏՏԱ ՇԱՀԻՆԵԱՆ

Ե. Միութեան հոչակաւոր Գրագիտուհիներէն Մէկը Հեղինակ «Հիտրոցենտրալ» վէպին, որու նիւթը առնւած է Զորագեսի կառուցման աշխատանքներէն;

կից անշեղօրէն աճել: Եւ ահա, մեր չոհոլաղի դործարանները դուրս մղեցին չվեցարական Գալա-Պետերը, ինչպէս եւ միութենական զաւոդնեբը դուրս մղեցին ներմուծած կարբիդը:

Բայց այդ ի՞նչ տեսակ բան է կարբիդը եւ ի՞նչի համար է նա պէտք:

Մեզ մօտ առատօրէն կա կոքս: Եւ կա չատ քանակութեամբ կիր: Եթէ մենք որոշ յարաբերութեամբ միաձուլենք կոքսը կրի հետ, ապա կ'ստանանք մի քիմիական մթացութիւն, այսպէս կոչւած՝ կարբիդ-կայլիդ,— գորշաւուն-սեւ լաւա, անսովոր կերպով չատ սառչող, փուխր, չոր: Եւ այդ դանգւածն արդիւնարերութեան համար ունի վիթխարի նշանակութիւն, որի մասին ես կը պատմեմ ներքեւում:

Ինչպէս տեսնում ենք, կարբիդ պատրաստելու նիւթը մեզ մօտ կա առատութեամբ եւ դժւար է պատկերացնել մի վայր երկրագնդի վրա, որտեղ չդտնւէր եւ որտեղից անկարելի լինէր ստանալ այդ նիւթը: Սակայն, չնայած դրան, կարբիդի գործարանները չատ հազւագիւտ բաներ են, իսկ մեր Միութեան մէջ նրանց կարելի է մատերի վրա հաշւել: Մինչեւ վերջին տարիները, նրանցից գլխաւորներն էին «Պերուն» գործարանը (Դրեազնի կողմ վրա) եւ Հայկական «Ալլահվերդի» գործարանը, պղնձահանքերի մօտ: Այստեղ, մեր տեսնւում է էկոնոմիկայի ամենահետաքրքիր երեւոյթներից մէկը:— Հազւագիւտ եւ թանդ մի արտադրանք, որի հում նիւթը չատ տարածւած է եւ կա լի ու լի քանակով: Խնդիրն այն է, որ կարբիդը (ինչպէս եւ ուրիշ չատ բաներ քիմիական արտադրութեան մէջ) հալւում է չատ բարձր ջերմութեան մէջ (3,000 աստիճանից ոչ ցած), յատուկ էլեկտրական վառարաններում: Դրա համար էլ կարբիդ պատրաստելն իմաստ ունի միայն այնտեղ, որտեղ կան էլեկտրական էներգիայի էժան եւ անընդհատ աղբիւրներ, որովհետեւ դիզելները չատ չատ մաչւում են եւ ատելդծում են աշխատանքի ընդհատումներ: Իսկ ամենից ուելի էժան էներգիա տալիս է ջուրը եւ ամենից ուելի արդիւնաւէտ ջրային պաչարներ ունի Հայաստանը, որի լեռնային դետերը, եթէ օդտագործւեն, կարող են տալ էժան էներգիայի մի չարք աղբիւրներ, չնորհիւ իրենց յաչող վայրէջքի:

Հասկանալի է այժմ, թէ ինչու Հայաստանը բռնւած է մի ձգտումով դէպի քիմիական արդիւնաբերութիւնը, մի ձգտումով, որն իրեն արտայայտում է ուելցուկների օդտագործման մէջ, քիմիական գործարանները եւ մետաղաձուլման մեծ հալոցքներն ուելորդ էներգիա ունեցող հիդրոկայանների մօտ կառուցանելու մէջ: Զորագետի կառուցած հիդրոցենտրալն (ջրաէլեկտրակայան) այդ ձգտմանը ուել է ուժեղ խթան:

Եւ այժմ, Երեւանում, վազուց ի վեր աչխատում է կարբիդի նոր գործարանը եւ մեզ էլ արդէն կառուցած է նրանից քիչ այն կողմ: Եւ այդ գործարանների կենսունակութիւնն այնպէս է, որ դեռ ոտքի չկանգնած, նրանք սկսում են աչխատել եւ հրապարակ են նետում իրենց արտադրանքը:

Բ.

Մօտենալով Երեւանի կարբիդի գործարանին, դուք կը կարծէիք, թէ ինկել էք կառուցումների մի վայր: Ձեր ոտքերի տակ դեբաններ, տախտակներ, քարեր: Աչքերի առջեւ՝ վայտեղէնի կոյտեր, անապակի եւ առանց չրջանակների պատուհաններ. բայց այդ կիսակառոյց տան նեբսն արդէն դղրդում է եւ չաչում, չոգին բաց թողնելով ուղղակի կատրից (այն ժամանակ ծխնելոյզը դեռ պատրաստ չէր): Քարատաչները եւ լեռնագործները հանգիստ աչխատում են միասին: Կառուցողներն չատ վերջացնում են, լեռնագործներն չատ կատարում են գործարանային աչխատանքը:

Կարբիդի երկար, թմրկածեւ վառարանն անցնում է գործարանի երկու յարկերով: Վերեւից նրան կերակրում են կոքսի եւ կրի բաժիններով, ներքեւում նա կատարում է մարսողութիւնը եւ

դուրս է նետում կարբիդ–կայլիի պատրաստի լավան: Բանւորները երեք հերթով, դիշեր ու ցորեկ կերակրում են այդ վառարանը, որը չդիտէ ո՛չ չունչ առնել, ո՛չ պարապուրդ, ո՛չ հանդիստ. օր ու դիշեր նրանից հոսում է արտադրանքը, հորդանի մի‌ջից կրակէ հոսանքով դուրս դալով եւ յանկարծ օդի մէջ սառչելով:

Որպէս դի նայեմ վառարանի մէջ, ինձ աւելցին կապոյտ ակնոցներ: Այլապէս՝ այտուղ կը փչացնես աչքերդ: Բանւորները նոյնպէս հագել են ուղղանկիւն ակնոցներ եւ նման են չարժանկարչական բանդիտների: Գեղեցիկ բոցկլտում է վառարանը վոլտային աղեղի դեղնա–սպիտակ բոցով: Նրա չուրջը՝ կրակի կարմիր չուրջպարը: Զդոզահանութիւնն այնքան կատաղի է, որ օդը վառարանից դուրս է չոլրտում կրի փոքրիկ կտորները, ուստի եւ պէտք է նրանց բրիկետացնել (բրիկետներ սարքել) կոքսի հետ, նախքան վառարան նետելը: Իսկ ներքեւում, սայլակների մէջ սառչում է կարբիդ–կայլին, նոյնքան անկայուն, որքան եւ ընդհիմադիր: Եթէ նրան վառելու համար հարկաւոր է վոլտային աղեղի 3,000 ամպիճան, ապա մի ժամը, ոչ աւելի, բաւական է նրա սառելու համար:

Բայց ահա եւ ինքը, այդ դորշագոյն–սեւ գոյնի արտադրանքը, փոշոտ, քանկագին, ինչպէս անուշեղէն: Գնորդները չատերն են.— Մոսկովցիներ, Մէքենատրեստ, Քիմածուխ, անդրկովկասեան երկաթուղիներ եւ նմանները:

Բայց ինչի՞ համար է պէտք այդ հազագիւտ եւ թանկագին, թէեւ ըստ ծագման բազմատարած ճուլածքը:

Գ.

Քարեր հաւաքելու սովորութիւնն ինձ մօտ անջնջելի է: Հասկնալի է, որ նոյն իսկ ինժիների տարօրինակ ժպիտն ինձ եւս չպահեց այն գայթակղութիւնից, որ հաւաքածուիս համար վերցնեմ կարբիդի մի կտոր: Քանի դեռ ես տանում էի Ներսան Երեւան՝ փոշոտ ճանապարհով, նա պահած էր իմ պորտֆելում հանդիստ եւ միամիտ: Տանը ես մօտեցա լաբորատորին, ձեռքերս լանջուլ: Բայց ի՞նչ է այս: Իմ ձեռքերը, հազիւ ջուրը հասած, յանկարծ պճպճացին չարագուշակ փչրոցով եւ ըսկսեցին ծածկուել սպիտակ բշտիկներով: Իսկ սենեակի օ՛դը···: Այդ ի՞նչ տեղի ունեցաւ օդի հետ: Սուր, զզւելիօրէն քաղցր հոտը տարածուեց նրա մէջ, որ դալիս էր ինձանից, իմ պորտֆելից, իմ ներքիններից: Վախենալով, ես վերցրի կարբիդը եւ նետեցի պատշգամբ: Բայց բանն այդ չէր, նա չվհատուեց: Անձրեւ եկաւ: Ընկնելով լճակի մէջ, կարբիդը կատաղի փռչաց, ինչպէս հազար նժոյգ եւ սկսեց ծխել լճակի մի‌ջից սապոնի հսկայական սպիտակ փրփուրիկներով, մէկը մեսի վրա, աւելի եւ աւելի բարձր, աւելի եւ աւելի լայն, մինչեւ որ անչարժացաւ, ինչպէս հարած սպիտակուցը տորտի վրա:

Եթէ այդ բոպէին ես լուցկի վառէի, օդը պիտի բռնկէր եւ այրէր կապոյտ բոցով: Մնկերն այն է, որ ջրի արդեցութեան տակ կարբիդի կայլցիից արտաթորւում է ացետիլէն գազը: Եթէ օդը խոնաւ է, ացետիլէնը նոյնպէս արտաթորւում է եւ այդ տալիս է անտանելի ու սուր հոտ: Երեւանի կարբիդը չատ հարուստ է ացետիլէնով,— աւելի քան Լենինդրադինը: Գործարանը երաչխաւորում է 285 լիտր ացետիլէն մի կիլոյում: Այդ նշանակում է, որ Երեւանի կարբիդն օգտագործելով, ապատողը մի կիլոյից կ'ստանա ամենաքիչը 285 լիտր ացետիլէն (իսկ փոխարէն, նա երբեմն ստանում է 300), մինչդեռ Լենինդրադի գործարանը երաչխաւորում է 250 լիտրից ոչ աւելի:

Հասկանալի է, թէ որպիսի չհաւատութիւն (տեղափոխելիս, տրանսպորտում, դարսելիս, պահելիս) է ներկայացնում իրենից այն գազը, որը վառում է ոչ թէ անմիջականօրէն, ինչպէս նաւթը եւ այլն, այլ վառում է ջրից: Նա չատ աւելի տոնտեսող է: Եւ, վերջապէս, այրելիս, նա տալիս է չափազանց ուժեղ բոց եւ դա է նրա խոշոր արդիւնաբերական նշանակութիւնը: Ացետիլէնի օդնութեամբ տեղի են ունենում.— ա) Մետաղների ավտոգէն զոդումը. բ) Մետաղների կտրումը: Կարբիդի միացումն օդի ազոտի հետ՝ տալիս է հիանալի պարարտացման միջոց, այսպէս կոչած՝ ցիանամիդ: Վերջապէս, ացետիլէն գազն ունի բազմաթիւ այլ արտադրութիւններ.— ացետոն, դիոնու–թթուտա, քացախի սպիրտ, եւ այլն: Ինչպէս ամենուր, քիմիական արդիւնաբերութեան մէջ նրա արտադրութիւնը կարող է իր եռեւից բերել տասնեակ այլ արտադրութիւններ, խթան տալով խոշոր արդիւնաբերական ճիւղերի զարգացման.— կաշի, ներկելու, դարձելու:

* * *

Եղրափակելիս, մի փոքրիկ տեղեկանանք.— Մինչ լաւ չէ «Ջրից վառուել»: Լենինդրադի վերջին մեծ հեղեղման ժամանակ «Գերուն» գործարանի կարբիդի պաշարները ողողուեցին ջրով. Ջուրը հարկադրեց կարբիդին ացետիլէն չնչել: Եւ գազի պաշարը, որ նշանակուած էր կրակին կեր դառնալու համար, կուլ գնաց ջրին, այսինքն՝ անօգուտ կերպով օդը ցնդեց:

ԴԻՄԱԻՈՐԵԼ 15-ԱՄԵԱԿԸ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

Գաղութահայութիւնը, նախմեռ Հայաստանի խորհրդայնացում, սովոր էր շարունակ օգնութեան սիրտ կտրատող կոչեր լսել Հայաստանէն:

Հայաստանի Խորհրդայնացման 15-րդ Տարեդարձին ահա մեզի կը հասնի յաղթական մեր երկրի կոչը յանուն ՀԱՄԱՏԱՐԱԾ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ:

Տիրացած իր բարեկեցութեան եւ խանդավառուած վաղուա ալ աւելի մեծ բարեկեցութեան պայծառ հեռանկարներով, Խորհրդային աշխատաւորութիւնը միջնէն վերջ կը վերացնէ յետամնացութեան եւ անգրագիտութեան մնացորդները:

Այս կոչը հրատարակուած է այն ժամանակ, երբ երկրի մէջ ամբողջ անգրագէտներուն թիւը կը կազմէին 34,000 հոգի միայն:

ՎԵՐԵԼՔ

Սոցիալիստական չինարարութեան ներկայ էտապում համատարած գրագիտութեան համար մղուող պայքարը հանդիսանում է կարեւորագոյն հասկացողութեան մէկը: Կուսակցութեան անմիջական ղեկավարութեամբ մշակութային յեղափոխութեան այս կարեւոր բնագաւառում մենք ձեռք ենք բերել զգալի նւաճումներ. հիմնականում վերացրել ենք մեծահասակ ազգաբնակչութեան անգրագիտութիւնը եւ նախայեղափոխական չրջանի ուրսուն տոկոսի հասնող անգրագիտութիւնն իջեցրել ենք տասը տոկոսի, սակայն մեզ չի յաջողուել ի սպառ վերացնել անգրագիտութիւնը եւ մենք ներկայումս ունենք շուրջ 40,000 անգրագէտներ ու 60 հազար կիսագրագէտներ:

Մշակութային ու տնտեսական հակասութիւնների, ինչպէս եւ գիւղատնտեսութեան սոցիալիստական չինարարութեան ապագրիզում, մեր ձեռք բերած վճռական յաղթանակները ստեղծել են միանգամայն բաւարար նախադրեալներ Խորհրդային Հայաստանը համատարած գրագիտութեան երկիր դարձնելու համար:

Անգրագիտութեան վերացման գործը հիմնական վերակառուցման ենթարկելու, բանւորների, հաւաքատնտեսականների եւ աշխատաւոր գանգւածների գրագիտական ատաճանն էլ աւելի բարձրացնելու նպատակով՝ Հայաստանի Մ. Ի. Լենինական Կոմկուսակցութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի յատուկ որոշման համաձայն՝ վերանում է անգրագիտութեան վերացման մինչեւ այժմ գոյութիւն ունեցող լիակատարների դրութիւնը: Ցառագիկա 1935-36 ուսումնական տարւա սկզբից լիակատարների փոխարէն մեծահասակ անգրագէտների ու կիսագրագէտների համար կազմակերպւում են հանրակրթական դպրոցներ՝ դիւղական վայրերում 3, իսկ քաղաքներում՝ 2 տարւա տեւողութեամբ, որոնց մէջ ընդ մեծահասակ աշխատաւորութիւնն առանձնաց է տարրական դպրոցների ծրագրերի համամասնութեան համապատասխան դիտակէտներ: Ցետագայում այդ դպրոցները դառնալու են բարձր տիպի դրագիտական հիմնարկներ, ուր աշխատաւոր գանգւածը ստանալու է աչքի մի ինքնագործ դպրոցի կրթութիւն:

Ընկեր բանւորներ, հաւաքատնտեսականներ եւ աշխատաւոր դիւղացիներ, մեծահասակների հանրակրթական դպրոցների նորմալ պարապմունքները հոկտեմբերի մէկից սկսելու համար մինչեւ հոկտեմբերի մէկը բոլոր գործարաններում, աշխատանոցներում, հաւաքատնտեսութիւններում, խորհրդային անտեսութիւններում յատուկ քննութեան առարկա գործիչ անգրագիտութեան վերացման պլանները, այդ գործի չուրջն ստեղծենք խորհրդային լայն հասարակայնութիւն:

Հարեւանային հաւաքատնտեսականնե՛ր եւ հաւաքատնտեսուհինե՛ր, սահմանենք այնպիսի հսկողութիւն, որ ոչ մի անգրագէտ եւ կիսագրագէտ հաւաքատնտեսական դուրս չմնա հանրակրթական դպրոցներից. լայն պայքար ծաւալենք «մաղում»-ների դէմ եւ յաճախումները դարձնենք կանոնաւոր:

Լենինեան կոմերիտականնե՛ր, դուք՝ որպէս պարտաւոր ուսման չնե՛ք՝ համատարած գրագիտութեան իրականացման գործում առանձին դեր ունենք կատարելու. եղէք ամենագրգիռ դերում, չարժման մէջ գրկի զանգւածների ուշադրութիւնն անգրագիտութեան լրիւ վերացման մարտական խնդրի կատարման եւ այդ գործի որակի բարձրացման չուրջը:

Ընկեր ուսուցիչներ եւ կուլտ-մարտիկնե՛ր, դուք որ անգրագիտութեան վերացման բնագաւառում հերոսական աշխատանք էք կատարել՝ էլ աւելի կազմակերպւած ձեւով նախապատրաստեցէք անգրագիտութեան վերացման ուսումնական տարին, ստեղծեցէք բոլոր պայմանները, որպէս զի անգրագիտութեան վերացման գործն առաջ տարւի հանրակրթական դպրոցների դրութիւնով եւ ապահովի որակեալ կազմերով:

Մենք վստահ ենք, որ Հայաստանի Կոմունիստ (Բոլշեվիկ) Կուսակցութեան կենտրոնական Կոմիտէի բոլշեվիկեան ղեկավարութեամբ, բանւորների, հաւաքատնտեսականների, կոմունիստ երիտասարդների, լուսաւորութեան աշխատաւորների պայքարի եւ էնտուզիազմի շնորհիւ, մշակութային չինարարութեան այս կարեւոր բնագաւառին կը հաղորդենք աշխատանքի բարձր տեմպ եւ Խորհրդային Հայաստանի տասն եւ հինգերորդ տարեդարձը կը դիմաւորենք համատարած գրագիտութեամբ:

Լուսաւորութեան ժող. կոմիսար՝ *Ա. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ*
ՀԱՄԿՎ-ի նախագահ՝ *ՏԱՆԻՆ*
Հողագործութեան ժող. կոմիսար՝ *ՄԱՄԻԿՈՆԵԱՆ*
ՀԼԿԵՄ Կ. Կոմիտէի քարտուղար՝ *Ա. ՄՈԿԱՑԵԱՆ*

ԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ

ԱԼԱԶԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՐԴԻ, ԲԱՅՑ ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է

ՃԱՌ ԱՐՏԱՍԱՆԻԱՑ՝ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԱԼԱԶԱՆ
Բանաստեղծ եւ «Գրական» Թերթի խմբագիր

Մշակոյթի Պաշտպանութեան Միջազգային Համագումարի Յունիսի 25-ի ցերեկեա նիստում Հանրի Բարբիւսի «Ազգութիւն եւ Մշակոյթ» զեկուցման առթիւ յարակից զեկուցումով հանդէս եկաւ Համագումարի Հայաստանի պատգամաւոր ընկ. Ալազանը:

Իր զեկուցման սկզբում ընկ. Ալազանը յայտարարեց.

«Գրչի ու զօրքի բարեկամներ.

Ես ձեզ չեմ ուղարկուած հեռաւոր երկրից, ուր եռում է սոցիալիստական աշխատանքը, ուր դարերով կուչկռնդած ժողովրդական ստեղծագործական հանճարը նոր թափ ու թռիչք է առել, ուր ապրում է երջանկութիւնը, ուր յաղթականօրէն քայլում է նոր կեանքը, ուր ամենաթարմ տեմպով աճում է մարդկային սերունդը, ուր արշալոյսի պէս պայծառ մանուկները լցրել են մեր քաղաքներն ու գիւղերը, ողողել են կեանքը, յաղթականօրէն քայլում են դէպի ապագան:

Ես ձեզ ողջոյն եմ բերել այն երկրից, որի հոգեկան անապական լոյսերը պատռելով վեր են խոյանում Արարատի յաւերժական սառը գագաթները, որի լեռները բարձր պահած օրօրում են Սեւանի մուխ կապոյտ ջրերը, որի ձորերի յաւերժական մշուշը վալսաւում են սոցիալիստական ելեկտրակայանների հզօր լուսարձակները (ծպտեր):

Ես ձեզ ողջոյն եմ բերել Սոցիալիստական Խորհրդային Հայաստանից, նրա աշխատասէր ժողովրդից, որը խորհրդային իշխանութեան պայմաններում հրաչքներ է գործում, նրա մշակոյթի անխոնջ մշակներից, նրա արուեստագէտներից ու գրողներից, որոնք ինձ ուղարկել են մասնակցելու ներկա պատմական համագումարին»:

Այնուհետեւ ընկ. Ալազանը համառօտակի կանգ է առնում Հայ միջնադարեան գրականութեան վերայ, նշելով առանձնապէս Գուչակի, Նարեկացու, Շնորհալու անունները: Խօսելով աշուղական արուեստի մասին, հռետորը դնահատանքի ջերմ խօսքեր է ասում Հայ հանճարեղ աշուղ Սայեաթ Նովայի մասին:

— Ծանր է եղել Հայ գրականութեան ճակատագիրը,— շարունակում է ընկ. Ալազանը, — մինչեւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաղթանակը Հայաստանում:

Շնորհիւ փեոդալական, դրամատիրական անասելի պայմանների, ժողովուրդների բանս ցարական Ռուսաստանում եւ սուլթանական Թուրքիայում անասելի հալածանքի էր ենթարկւում փոքր ժողովուրդների, որոնց թւում նաեւ Հայերի մշակոյթն ու գրականութիւնը: Փակւում էին դպրոցները, թերթերը, հալածւում էին գրականութեան եւ մշակոյթի մշակները, կամ մատնւում սովամահութեան: Այսպէս օրինակ՝ ցարական Ռուսաստանում «անհետ կորաւ» մեծ վիպասան եւ մտածող Խաչատուր Աբովեանը. իր յառաջդիմական հայեացքների համար Պետրոպաւլովեան բանտում երկար տառապից եւ Կամիշինի աքսորավայրում իր մահկանացուն կնքից հասարակական խոշոր գործիչ, բանաստեղծ, Բակունինի համախոհ ու բարեկամ Միխայէլ Նալբանդեանը: Սուլթանական Թուրքիայում քաղցի ճիրաններում մահացաւ հանճարեղ երգիծաբան Պարոնեանը: Ծայր աստիճան աղքատութեան մէջ քանի տարեկան հասակում թողքսիից վախճանուեց Հայ մեծագոյն քնարերգակ՝ Պետրոս Դուրեանը: Իսկ համաշխարհային արիւնոտ պատերազմի տարիներին դոհ դնացին տասնեակներով Հայ գրողներ եւ արուեստագէտներ:

Այս պայմաններում ընաւ պատահական չպիտի համարել այն հանդամանքը, որ յատկապէս 19-րդ դարի եւ 20-րդ դարի առաջին քառորդի Հայ գրականութեան հիմնական մոտիվը եղել է ազգը, վիշտը: Հայ բուրժուազիան հրահրել է ազգայնական տեսլութիւն ու վրէժ: Պատահականութիւն չէ, որ 19-րդ դարի Հայ գրականութիւնն

սկսում է Աբովեանի «Վէրք Հայաստանի, Ողբ Հայրենասէրի» նշանաւոր վէպով:

Ջնայած այս միանգամայն աննպաստ պայմաններին, Հայ ժողովուրդը կարողացել է 19-րդ դարում եւ 20-րդ դարի առաջին քառորդում տալ մի շարք նշանաւոր ստեղծագործողներ, որոնց արժէքները իսկական գնահատումը կատարւում է միայն Խորհրդային իշխանութեան պայմաններում: Գիշենք Թէոդ Աբովեանին, Պարոնեանին, Թումանեանին, Սունդուկեանին, Շիրվանզադէին, Նալբանդեանին, Խահակեանին, Յակոբ Յակոբեանին, Վ. Տէրեանին, Նար-Դոսին, Դուրեանին, Մեծարենցին եւ ուրիշներին:

Հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան արեգակով միայն բացուեց Հայ ժողովուրդի ինչպէս եւ նրա մշակոյթի ու գրականութեան վերածնութեան արգասաւոր արշալոյսը:

Հոկտեմբերեան յեղափոխութեան փրկարար սուրն ընդ միշտ կտրեց Հայ բնութից լացի ու մորմոքի լարերը: Թաթոխ դարաւոր ամպը՝ հոկտեմբերեան մրրիկներից հալածական՝ ընդ միշտ չքացաւ Հայ գրականութեան երկնքից: Ստեղծուեց իր որակով բոլորովին նոր, կենսախինդ, պայծառ հեռանկարներով, բազմակողմանի նուիրերով, մեջազգայնական գաղափարներով հարուստ մի գրականութիւն, Հայաստանի խորհրդային գրականութիւնը, որն այս պատկառելի համագումարին ներկայացնելու պատիւն ինձ է վիճակած:

Եթէ անցեալում, մինչեւ սոցիալիստական կարգերի հաստատումը Հայաստանում, Հայ գրողը կամ հասարակական գործիչը միջազգային ամբիոն սառնալու պատիւն էր արժանանում, նա լալահառաչ կուրծք էր ծեծում «մեծ պետութիւնների» կաբկեցութիւնը եւ դարձը հայցելու միտումով, նա ողբում էր Հայ ժողովրդի խեղճութիւնը, նրա դառն վիճակը, նա ուշադրութիւն էր հրաւիրում կործանուած երկրի, աւերուած գիւղերի, տասնեակ հազարաւոր որբերի վրա:

Այսօր ես այս պատասխանատու ամբիոնից լուր ամբողջ աշխարհի հպարտութեամբ յայտարարում եմ, որ Խորհրդային Հայաստանը, մեծ Միութեան անբաժանելի մասնիկը, Հայ ժողովրդի հայրենիքը, ոչ ոքի կարեկցութեանը պէտք չունի: Այնտեղ օտար է ողբը, այնտեղ որբեր չի կոն այլ եւս, երբեմնի աւերակ երկրի փոխարէն բարձրանում են նոր բաղաքներ ու աւաններ: Հայրենի ձորերի դարաւոր խաւարը պատռում են վիթխարի էլեկտրակայանները: Սոցիալիստական գիւղատնտեսութիւնը հիմնովին վերափոխել է Հայաստանի յետամնաց գիւղը: Անգրագիտութեան ծանր բեռի տակ անգոյացող Հայաստանը դարձել է համաստարած գրագիտութեան երկիր:

Յեղափոխութեան հենց առաջին օրից Հայ մտաւորականութեան խոշորագոյն եւ ազնիւ ներկայացուցիչները ողջունեցին պրոլետարական յեղափոխութիւնը եւ եկան աշխատելու նրա փրկարար դրօշի ներքեւ: Յեղափոխութեան հենց առաջին օրերին Հայ մեծագոյն բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, մեր բանաստեղծութեան ամենախոշոր դէմքը, Հայաստանի Յեղափոխական կոմիտէին գրած իր նամակով աղջունեց խորհրդային իշխանութեան հաստատումը Հայաստանում: Իր կեանքի վերջին տարիները նա նուիրեց Խորհրդային Հայաստանի չինարարութեան գործին: Նոյն պատասխան ուղին ընտրեցին նաեւ այլոպիսի մեծ ստեղծագործողներ, որպիսիք են Ալ. Շիրվանզադէն, Ա. Խահակեանը, ինչպէս նաեւ արեւմտահայ նշանաւոր գրողուհի Զապէլ Եսայեանը եւ բազմաթիւ ուրիշներ:

Նոյն այդ գրութիւնը մենք տեսնում ենք նաեւ արեւտահ եւ գեռահաս այլ եւ այլ բնագաւառներում: Թէ՛ կեանքաբեսեան, թէ՛ երաժշտութեան, թէ՛ թատրոնի, թէ՛ ճարտարապետութեան, թէ՛ գիտութեան տարբերքում աշխատող բոլոր նշանաւոր ստեղծագործողներն ու վարպետները ողջունեցին Հոկտեմբերեան յեղափոխութիւնը եւ այժմ մեծ եռանդով ու ազնուութեամբ աշխատում են մեր սոցիալիստական մշակոյթի ճակատում: Բաւական է նշել այնպիսի նշանաւոր անուններ, որպիսիք են Մ. Սարեանը, Փ. Թերլեմեզեանը, Ալ. Թամանեանը, Հ. Աճառեանը, Մ. Աբեղեանը եւ տասնեակ ուրիշներ:

Յեղափոխութիւնից առաջ գրական որոշ անուն վաստակած մի խումբ գրողներ յեղափոխութիւնից յետո խորհրդային իշխանութեան տեսնդած միանգամայն նպաստաւոր եւ հոգատար պայմանների չնորհիւ զարգացան եւ ձեւակերպուեցին որպէս իսկական խորհրդային գրողներ, արտադրելով իրենց արժէքաւոր երկերը վերջին տասնամեակի ընթացքում:

Հայաստանի խորհրդայնացումը, սակայն, հրապարակի նետեց գրողների մի ամբողջ հոյլ, որը զարգացեց մեր գրականութեան պայծառ երկնակամարը: Այդ գրողները հանդիսացան յեղափոխութեան բերած նոր գաղափարների, նրա ստեղծած նոր յարաբերութիւնների երգիչները, նրանք խորտակեցին Հայ գրականութեան նեղ, ինքնամփոփ սահմանները,— նրանք դուրս եկան հայկական սահմանափակուածութիւնից: Նրանց քնարը որոտաց համամարդկային բարձր գաղափարներով, նրանց երգերում հնչեց ռուսական մեծ աշխատաւորութեան հերոսական պայքարն ու Հոկտեմբերեան յաղթանակը, ճնշված ժողովուրդների ազատագրման սրբազան երգը:

Շնորհիւ Խորհրդային Միութեան մէջ փոքր ժողովուրդներին ցոյց տրուղ բացառիկ հոգատար վերաբերմունքի, մեր գրականութեան բոլոր արժէքաւոր գործերն անմիջապէս թարգմանւում են ռուսերէնի եւ հրատարակւում ռուսական հեղինակաւոր հրատարակչութիւնների կողմից:

Այսպիսով մեր գրականութեան իւրաքանչիւր արժէքն ու նուաճումն անմիջապէս դառնում է 170

միլիոնանոց մեծ ժողովուրդի սեփականութիւնը: Մի միլիոնանոց Հայ ժողովուրդի գրողը դառնում է 170 միլիոնի գրող, արժանանում է 170 միլիոնի ջերմ խրախուսական վերաբերմունքին:

Հայաստանի խորհրդային գրականութիւնը փոքր ժողովուրդի, բայց մեծ գաղափարների գրականութիւն է (*բուռն ծափեր*): Նա իր հիմքում ունի այդ ժողովուրդի ստեղծած բազմադարեան հարուստ մշակոյթը, որի բոլոր լաւագոյն արժէքների միակ տէրն ու ժառանգը Հայ աշխատաւորութիւնն է: Նա Խորհրդային Միութեան մեծ գրականութեան օրգանական մասն է կազմում: Նրա մշակները գործօն կերպով պայքարում են սոցիալիստական հանրակարգի վերջնական յաղթանակի համար, աշխատաւոր մարդկութեան վերջնական ազատագրման համար: Նրանք պայքարում են համաշխարհային մշակոյթի բոլոր լաւագոյն արժէքների պաշտպանութեան դիրքերում: Նրանք վեր են բարձրացնում իր հայրենիքում խորտակուած Հանրիկ Հայնէի արձանը (*բուռն ծափեր*): Նրանք ֆաշիստական խարոյկներից դուրս են կորզում մարդկային յառաջատար մտքի ստեղծած բոլոր հոյակապ արժէքները (*ծափեր*):

Հայաստանի խորհրդային գրականութիւնը պայքարում է Հայ ժողովրդի թշնամիների դէմ, երկրիս վտարուած Հայ ֆաշիստների — դաշնակցականների դէմ, որոնք միացած համաշխարհային ամենաանբարոյական ուժերին՝ կամենում են վտանգել Խորհրդային Միութեան, Խորհրդային Հայաստանի սոցիալիստական խաղաղ աշխատանքը:

Նա պայքարում է ազգայնական, օտարատեաց գաղափարների դէմ: Նա բարեկամ է, սիրում եւ պաշտպանում է բոլոր ազգերի յառաջատար գրողներին ու մտաւորականներին, որոնք պայքարում են մարդկութեան բարօրութեան համար:

Նա յառաջ է մղում իր սոցիալիստական հայրենիքի բարգաւաճման մեծ գաղափարը: Նա ջերմօրէն եւ եղբայրաբար ձեռք է կարկառում այն բոլոր ազնիւ մտաւորականներին եւ գրողներին, որոնք արիաբար պայքարում են յանուն ճշմարտութեան, յանուն մշակոյթի պաշտպանութեան, պատերազմի սեւ ուրուականի դէմ, ֆաշիզմի դէմ: (*Բուռն, երկարատեւ ծափեր*):

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԷՋ
Դրօշակներով խօսակցութիւն

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ԳԱԼԻՔԻ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Գործ՝ ՅԱԿՈԲ ԿՈՋՈԵԱՆԻ

Նրանք գալիս են գիւղերից ու ֆաբրիկաներից,
Գալիս են հանքերից,
Գործարաններից,
Գալիս են երկրի հեռաւոր ծայրերից,
Գալիս են բոլոր վայրերից.—
Ղեկավարի կանչին, սերունդների կոչին
Գալիս են նրանք հազարներով,
Աշխատանքի այս մեծ զօրակոչին
Գալիս են երկաթեա
Շարքերով:
Անտառների նման հոծ ու խիտ,
Ովկիանի յախուռն ալիքների նման,
Դրոհելով մի ևոր, մի կամքաւոր ուղի,
Որ պայքարի բոցում ամրանում է հիմա,—
Ընդդէմ համուն, հողմին, ընդդէմ հազա՛ր տարի
Այս ափերին խփող մակընթացութեան —
Ահա ելած մարտի մի վիթխարի՝
Ընթանում են յանդուգն մի վեհութեամբ:
Այնտեղ, այս ոյժերի
Զրաբաշխման կէտում,
Անունքներում այս բարձր ոգեւորութեան,
Ուր վերջանում է մշուշը տարիների,
Որպէս մռայլ մի ամպ,—
Այնտե՛ղ, այնտե՛ղ, այնտե՛ղ,
Ուր կուտակած եռանդը կատարող
Եւ մի բռունցք շինած գալիքների կարօտը՝
Անշեղօրէն մղւում է դէպի գրոհ
Այս մարդկային որոտը,—
Այնտե՛ղ, այնտե՛ղ, այնտե՛ղ,
Ուր կոփելու համար ապագայի ընթացքը
Կարծրանում է կամքը, որպէս գրանիտ,—
Այնտեղ, գալիք կեանքի
Այգաբացով յղի՝
Լեռնացել է ինքը —
Ղեկավարը: —
Ելած համայն կեանքի
Ալեկոծուող բովից,
Պայքարներից ելած հազարամեա,—
Ելած անդուլ եփուղ
Սոցիալական ծովից,
Որ, ալեկոծ կրկին,
Մռնչում է հիմա,—
Իր պողպատեա անթեք մկաններով,
Իր ուղեղով, որ պիրկ է, որպէս մկան, —
Տիտանային հայեացքն յառած հեռուն,
Դէպի անդասակարգ ապագան,—
Դասակարգի բոլո՛ր հերոսական
Հանճարների ուղեղը եւ կամքը ամբարած —
Նա վարում է այս մարտը,
Նա մղում է

Մեր բանակները մեծ դէպի վսեմ մի կեանք։—
Ո, դու, երկաթեա դեկավար,
Որ վարում ես այս մարտը, որպէս տիտան,—
կա՞,
Գոյութիւն ունի՞ ես ընթացքի համար
Անյաղթելի մի բան…
Ո, ո՞ր, ո ո՞ր առաջնորդը,
Ո՞ր դեկավարն արդեօք, որ մղել է մարտեր —
Եղել է կարծր այսման
Եւ այսման խոր,
Եւ իր մարտով այսման ուղիներ է հարթել
Նրանք գալիս են գիւղերից ու քաղաքներից,
Գալիս են հանքերից,
Գործարաններից,
Գալիս են երկրի հեռաւոր ծայրերից,
Գալիս են բոլոր վայրերից։
Գալիքների կանչին, դեկավարի կոչին
Գալիս են նրանք միլիոններով,—
Աշխատանքի այս մեծ զօրակոչին,—
Եւ մղում են նրանց Դեկավար
Ես երկաթեա կամքը —
Դէպի գրոհ։
Անծայրածիր երկրի ստեպներից անծայր,
Ու լեռներից, ա՛ւ բարձր քաղաքներից,
Ուղիներից, ուր դեռ մշուշը չի հնձած,
Ուր ապրում էր մարդը, որպէս գերի,—
Ուր տարիներ բազում մահ էր միայն ցանել
կեանքը — ոսկի հանդերձ արքաների ձեռքով,—
Այժմ երևում է կեանքը մի հանճարեղ՝
Խորհրդային այս բորբ արեգակի ներքո։
Եւ թող երգեն էս այս իմ շառաչուն երգով
Լեռնացումը այս վեհ. այս չմարող
Արեգակը՝ վառած այս երկո՝
Անեզրական կամքի անմարելի հրով։
Ո, արեգակ, երած այս երկո՝
Մեր դաշտերում յառնող քաղաքների վրա,—
Ո, արեւմուտք մեռնող, ուր ցորեկով
Լուսիններն են երևում — մահաբեր ու մռայլ…
Ո, Արեւմուտք շռայլ, ուր արքաները ծեր,,
Ուր արքաները կուռ ոստանների,
Շռայլութեան, արեան սերմանողներն անեզր,
Արքաները Ոսկու Տների
Կաղախանն են երևում ու կործանում իրենց,
Ինչպէս չեխին դահիճ, կամ աւազակ,—
Ո, Արեւմուտք, այսօր ուռճանում են քո մէջ
Փոքրիկներ, հողմեր, ուրականներ անշէջ,—
Եւ երգում է ձեզ մահը — ահագնագ…
Ո, Արեւմուտք շռայլ,— ցնցոտիներ,
Ցնցոտիներ հագած բազմութիւններն մեռնող…
Ո, հոգեվար, բայց բորբ բազմութիւններ,
Որ կերտելու էք վաղ—մեզ պէս աշխարհ մի նոր
Ո, առաւօտ, որ հին Արեւմուտքում
Ուռճանում ես՝ մեր բորբ արեգակից վառած,
Մեր պայքարի, մեր մեծ ընդվզումի հետքով
Արեւմուտքում ծագող ո՛, արեգակ անմար…:
. . . . . .

Նրանք գալիս են գիւղերից ու քաղաքներից,
Գալիս են հանքերից,
Գործարաններից,
Գալիս են երկրի հեռաւոր ծայրերից,
Գալիս են բոլոր վայրերից։ —
Ղեկավարի կանչին, աերունդների կոչին
Գալիս են նրանք միլիոններով, —
Աշխատանքի այս մե՛ծ զօրակոչին
Գալիս են երկաթեա
Շարքերով։ —
Անապատ էր այստեղ, անջուր երկիր։
Մահն էր թոչում այստեղ՝ համատարած։
Ունկընդրում էր այստեղ համիների երգին
Մի անօգուտ Զանգու ու մի անբեր Արաբս։
Այս խաների երկրում, այս ցարական
Ծայրամասում, ուր կար միայն համի,
Ուր տարիներ, դարեր այս հողերի վրա
Շոգն էր միայն չոհում՝ չար յովազի նման
Լափլիզելով քէ՛ կեանք, քէ՛ աշխատանք,—
Այս անապատ երկրում բարձրանում է հիմա
Աշխատանքի, կամքի հերոսական մի կեանք։
Այս անջրդի, այս շոգ անապատում
Պիտի երևեն էգուց ճիւնապսյծան վարդեր
Ու ոդկոյզներ պիտի շողան խայտուն —
Այս գարունքի համար ճանապարհ է հարթել,
Հարւածային ընկե՛ր, ես եռանդը արդէն,
Ես գոյամարտն անդուլ…:

Ո՛, ջու՛ր, որ յորդառատ
Այս քարերի միջով այսօր երար մարտի,—
Ես կարկաչումն, ես այդ յորձանոտում վարար
Ես ողջունում եմ շռինդը
Մեր ընդհանուր՛ մարտի։ —
Ես ոչ քէ ճայնն եմ ես — ես կարկաչում լսում,
Այլ որոտը երկար երակների,
Հարւածային անքիւ բանակների լեզուն,
Ոտնաձայնը բազում մեր գնդերի…
Ես լսում եմ դոփիւնը բանակների ըմբոստ,
Որ գնդերով բազում, հազարաւոր՝
Բարձրացել են կոչին դասակարգին մեր նոր,
Բարձրացել են մարտի մեր ընդհանուր…
Ես կարկաչում այսօր ես լսում եմ դոփիւնը
Արեւմուտքում երևող բանակների,
Որոնք փորում են հիմը
Ու հարթում են հիմը —
Մեզ հետ մէկտեղ — գալիք գարունների՛։ —
Ես կարկաչում լսում են Ղեկավարի ճայնը
Որ բոլորիս մարտի է այսօր մղում։ —

Հարւածային ընկե՛ր,— այդ ա՛ն է, ան է.—
Մեր պայքարի որոտը՝
Անպա՛րտ, ու բազմաբեղուն…

1933 թ· Յուլիս 29

Գ. ՍԱՐԵԱՆ

ԱՆԱՒԱՐՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.

Եղել է երկիր մի
Արիւնոտ բարերով,
Աչքը արցունքով լի,
Սիրտը արիւնի ծով,
Եղել է երկիր մի
Շնչել է դարերով
Ու չար դաւերով լի,
Արիւնոտ տէրերով:

Իշխել են այդ երկրում
Վասալ ու թագաւոր···
(Պատմութիւնն է գրում
երկաթագրերով),
Ծծել են եղեգով
Աշտարակի գինի,
Ժողովրդի հեւով,
Նրա արեան գոյնի:

Արծաթեա թամբերով,
Ձիերով ասպազէն,
Քառասմբակ դոփել են
Անտառներ ու ձորեր,
Որսել են եղջերու,
Երէներ ու վարազ,
Դատարկել են գինու
Մառաններ ու կարաս:

Պատմութիւնն է խօսում
Դարերի հետևից,
Ժամանակն է հոսում
Ընթացքով արեւի,
Եղել է երկիր մի
Արիւնոտ բարերով,
Ու չար դաւերով լի
Արիւնոտ տէրերով:

Բ.

Ապրել են այդ երկրում
Գետնաբնակ մարդիկ,
Ու կերել են կաւէ
Ամանների միջից·
Ու տուել են հողին
Եւ արիւն եւ քրտինք,
Կերակրել է նրանց
Հողը՝ որպէս ստինք:

Պատմութիւնն է խօսում
Դարերի հետևից·
Նա գովում է երկրի
Ջորիները ազնիւ,
Բայց չի գրում
Ինչպէս էշել են այրուձի,
Ելել ժողովրդից
Բաժինն առիծի:

Եւ եղել է մի օր,
Շինուել է մի քաղաք,
Ասում են թէ այնտեղ,
Արքան Արշակունի
Կատարել է գողի,
Աւազակի հաւաք
Եւ կոչել է նրան
Արշակաւան քաղաք:

Եւ ո՞վ գիտէ այնտեղ
Աւանում Արշակի,
Որ կոչուել է քաղաք
Գողի, աւազակի,
Չեն ախորժել անմեղ
Հոգիները խիզախ՝
Տէրերի դէմ ուղղած
Որպէս հազար նիզակ:

Պատմութիւնն է խօսել
Դարերի հետևից,
Ու դարերն են հոսել
Ընթացքով արեւի,
Եկել են նոր դարեր,
Նոր իշխողներ, ու նոր
Արիւն–քրտինքով լի
Մի դասակարգ հզօր:

Տէրերը նոր՝ գինուած
Բռնութեամբ դարերի,
Խօսել են արիւնոտ
Ռումբերի որոտով,
Ու դասակարգը մեր՝
Զայրոյթով դարերի՝
Վռնտել է նրանց,
Փախցըրել է ոտով:

Ու մնում է հիմա
Իբրեւ յուշ հների՝
Մի Զւարթնոց մռայլ,
Նաչեմարեր մատռոտ,
Եւ կնուններ կաւի,
Մի պատմութեան աղօտ,
Որ խօսում են մեզ հետ
Տարտամ ու համառօտ:

Գ.

Այժմ կա երկիր մի,
Ուր բացուել է գարուն,
Հայեացքը խինդով լի՝
Ցառել է նա հեռու:
Իշխում է այդ երկրում
Եւ խրոխտ եւ անպարտ,
Արեւներ կառուցող
Մի յամառ դասակարգ:

Ջորերը՝ ուր նրանք
Դուրս են եկել որսի,
Ողողել են անապ
Հեղեղներով լոյսի:
Նրանց մէջ մենք ոսկի
Արեւներ ենք վառել,
Երկիրը ցանցել են
Բիւր ելեմտրալարեր:

Դարձել է այդ երկրում
Բրտինքը յորդ, վարար
Ժայռերի որոտում
Երկրի ծիծաղը վառ.
Փրփրներալս էրքիջով
Ջրերը սրընթաց՝
Թունելների միջով
Թափով իջնում են ցած:

Երկրում այդ հնօրեայ
Սուլիչներ են կանչում,
Գնացքներ են փնչում,
Ռադիոներ են հնչում,
Երկրում այդ ելնում են
Վարդակարմիր տներ,
Որոնց բարերը մենք
Ցոյզերով ենք դրել:

Անում է երկիր մի,
Որ աչքերով լուսէ,
Հոգիներում հիմի
Բիւր երգեր է հիւսել·
Նրան արեւ ու սէր,
Ոսկի օրեր ու կեանք—
Յաւերժական փառք էզ,
Բանւոր դասակարգ:

1932

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԶԵԿՈՅՑԸ ՊԱՐԼԱՄԵՆՏԻՆ

ՄԻ ՀԱՏՎԱԾ «ՊԱՐԼԱՄԵՆՏ» ՊՈԵՄԻՑ

Այս պոեմը կը ներկայացնէ դաշնակցական պարլամենտի մէկ նիստը, ուր կը զեկուցանէն Ներքին եւ Արտաքին Մինիստրները (Նախարար) ՝ի ներկայութեան «դաշնակից» պետութիւններու եւ ամերիկեան յանձնաժողովի պէտ զօրավար Հասկելի:

«Պարլամենտը» առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի այս տարեգրքի մէջ: Ցաւալի է, որ տարեգրքի ծաւալը չի թոյլատրեր պոեմը տպագրել ամբողջութեամբ: Հետեւաբար կուտանք միայն Արտաքին Գործերու Մինիստրի (Արագործ–Մինիստր) զեկոյցի երկրորդ մասը:

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

ԱՐՏԳՈՐԾՄԻՆԻՍՏՐ

Սան Ռամոյի կոնֆերանսումը Դաշնակից մեծ պետութեանց,
Հայկական հարցն եկաւ նիստում, հրատապ հարց,
որը նոր չի:
Սակայն ուշ էր, նիստն ընդհատուեց, պարոն Միլեյան ժամի ուրթ անց
Մեծ ճաշ տուեց լորդ Քըրզոնին, սըր Բալֆուրին,
եւ Լլոյդ Ջորջին:
Յայտնեցին մեր պատւիրակին, որ Հայոց հարցը չի կարչի:
(*Ծափահարութիւններ դահլիճում*):

Կոնֆերանսի երկրորդ նիստին մեր հարցը կար օրակարգում:
Սակայն ժողովն շտապ փակուեց մի կարեւոր դէպքի առթիւ,
Լլոյդ Ջորջն էր ճաշկերոյթով մարշալ Ֆոշին այդ օր յարգում,
Այդ օրէնքի է խիստ կարեւոր կուլտուրական դառնումն արդի:
Իսկ սըր Բալֆուր յայտարարեց, որ Հայոց հարցը կը հարթի:
(*Բուռն ծափահարութիւններ դահլիճում*):

Կոնֆերանսի երրորդ նիստին մէջտեղ բերին մեր հարցը մեծ:
Սակայն ժողովն արագ փակուեց, լոկ բնութիւնով չնչին հարցեր:
Բելջիական մինիստրի կինն այդ օր մի մանչ տղա ծնեց,
Այդ չբնաղ լուրն առաջ բերեց կոնֆերանսում հրճուանք բարձր:
Յայտարարուեց, որ Հայոց հարցն անշուշտ հասուն հարց է դարձել:
(*Խանդավառ եւ երկարատեւ ծափահարութիւններ դահլիճում*):

Կոնֆերանսի վերջին նիստին ուրիշ դրուեց Հայկական հարց:
Արդէն ուշ էր երբ խօսք եղաւ մեր բացառիկ հարցի մասին:
Բայց ցերեկւա ճաշի ժամն էր, կոնֆերանսն էլ փակուեց յանկարծ,
Մեծ ճաշ տրուեց բելջիական մինիստր Կասպար եւ Գիմասին:
Նիստի վերջում, Հայոց օգտին խիստ սրտառուչ խօսքեր ասին:
(*Խելայեղ եւ անդուլ ծափահարութիւններ դահլիճում*):

ՎԱՐԴԵԱՆ
(*Ամֆիթատրոնից*):
Եւ այդպիսով վերջ է տրւում ձեր եւ նրանց սարքած փարսին:

(*Ծիծաղ ամֆիթատրոնում*:
Նախագահը զանգահարում է):

ԱՐՏԳՈՐԾՄԻՆԻՍՏՐ

Պետութիւնները յայտնում են, մեզ մանդատէօր պիտի ճարեն,
Գուցէ հարիւր միլիոն դոլար փոխառութիւն մեզ վճարեն:
Եթէ նրանք մեզ չտվարկեն հարիւր հազար զինուոր զինուած,
Վեց վիլայեթ կը գրաւենք մեր սեփական ուժին չնուած:

Մեր պետութիւնը Մոսկվայի առաջարկին չուն-
կընդրեց,
Տաճկաստանի հետ հաշտութեան ազգակործան
ուղին չընտրեց:
Անշուշտ գիտէէ, որ Ձիչերինը մեզ դիմեց մի
հարց տալով —
Թէ արդեօք մենք չե՞նք գոհանա լոկ Կովկասեան
Հայաստանով:

Կամ Մոսկովի եւ Տաճկի հետ, նրանց գերի,
ստրկացած,
Համաթեա թէ կրօնափոխ, կամ բալշեվիկ, կամ
թրքացած,
Եւ խցկուած մեր ժողովուրդը Կովկասեան Հայաս-
տանում,
Իսկ Հայաստանը Նովից Նով պարզ է այլ նս չենք
ստանում:

Եւ կամ որպէս մի ազգ կրթուած, Արեւելքի լուսա-
ւոր ջահ,
Որ խաւարումը բարբարոս շողշողացել է նա յանախ,
Դաշնակից մեծ պետութեանց հետ լինէինք մի եր-
կիր անկախ,
Դէն վանելով տաճկաց մահիկ եւ Մոսկովեան
մուրճ ու մանգաղ:

Վերջին ուղին ընտրեցինք մենք, նիշտ վարեցինք
մենք անկասկած:
Մերժեցինք մենք Ձիչերինին եւ դիմեցինք կրթուած
ազգաց:
Վեհ Անգլիան, ասպետ Ֆրանսիան, ազատասէր
Ամերիկան —
Հայաստանին բարեկամ են Ձիչերինից աւելի ճան:

ՄԻ ՁԱՅՆ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Տուտուց–տուտուց դուրս ես տալիս, տօ՛, հերի՛ք
ա:

ԽՄԲԱՊԵՏ ՇԱՊՈՒՀ

(*Նայելով դէպի ամֆիթատրոն*):
Զայնդ կտրէ, ծօ՛, սրիկա՛:

ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Մենք ասում ենք ձեզ — հերի՛ք ա:
Ու՞մն էէ առնում, ու՞մն էէ ծախում,
Ու՞մ վրա էէ դուէ ծիծաղում:
Ձեր ճառերով խորթ ու խրթին,
Դուէ խաբում էէ ժողովրդին:

ԽՄԲԱՊԵՏ ՄՈՒՌ

(*Ձեռքը տանելով դէպի դաշոյնը*):
Թորգէէ, լաօ՛, էդոնց փրթեմ:

ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Հա՛ց տուէ խեղճ ժողովրդին,
Հա՛ց տուէ խեղճ ժողովրդին:

ՀԱՑ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

(*Ցուցամատն ուղղելով դէպի ամֆիթատրոնը*):
Տէէ դրանց էիք ու մոքին:
Դրանէ խփում են մեր սրտին:

ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Հա՛ց տուէ խեղճ ժողովրդին:
Ի՞նչ ծովից ծով, ի՞նչ դէս ու դէն,
Հա՛ց տուէ, որ մարդիկ ուտեն:

ԽՄԲԱՊԵՏ ՄՈՒՌ

(*Դաշոյն մերկացնելով*):
Զըմենեմ էլ շուտ էաշուէ հուդէն:

ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Հա՛ց տուէ որ մարդիկ ուտեն,
Ի՞նչ ծովից ծով, ի՞նչ դէս ու դէն:
Հանգիստ տուէ ժողովրդին —
Հային, ռսին, թուրքին, էրդին:

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՆԱԽԱԳԱՀ

(*Զանգահարում է եւ յուզուած ոտքի է կանգնում*):
Պարոննե՛ր, մենք միշտ յարգել ենք ազատութիւն
խօսքի, գրչի:
Դեմոկրատիկ Հայաստանումն ազատ խօսելն եր-
բեէ նոր չի:
Սակայն ատոր խառնակչութիւնն այս աշխարհիցը
քաղ կորչի:
Ինչ կարծիէ են կազմելու մեր երկրի մասին հիւրեր
նորեկ:
Հայաստանի պարլամենտումն եղել է միշտ կարգ
ու օրէնք:
Իսկ եթէ դուէ մեզ խանգարէէ, պարլամենտիցը
դուրս կորէէ:

ՎԱՐԴԵԱՆ

(*Ամֆիթատրոնից*):
Երեւանում ստացել է մի լուր թաւուն —
Երեւանից սովետական դարձալ Բագուն:

ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Սավետակա՞ն դարձալ Բագուն:
Սավետակա՞ն դարձալ Բագուն:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Կեցցէ՛ Բագուն, կարմիր Բագուն, սավետական
իշխանութիւն:
Կորչե՛ն Դաշնակ ու Մուսավաթ եւ բեգութիւն ու
խանութիւն:
Կեցցէ՛ Բագուն, կեցցէ՛ Բագուն, կեցցէ՛ Բագուն,
ուռռռա՛, հաշա՛:

ՄԻ ՁԱՅՆ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Պարոն միքի՛ստր, բոլ ա խօսաս, փասափուսէդ
վըռազ էաշա:

ՁԱՅՆՆԵՐ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻՑ

Շուրա կըզըլ Ազարբայջան, հայ ջա՛ն, հաշա՛:
Զիվա՛ն Բագու, կըզը՛լ Բագու, բըզը՛մ Բագու,
ուռռաաա՛, հաշա՛:

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

ՄԱՐՏԱԿԱՆ

Դիտե՛մ ես, հիմա երբ
Նաւար է ու բուէ,
Ցուրտն անխնա՛ է,
Դիշերը մառ,
Սահմանների վրա
Կանգնել էէ դուէ,
Ազատ մեր աշխարհի
Բախտի համար:

Իսկ ե՛ս, իսկ մե՛նք, այստեղ
Երգում ենք վառ
Հնգաթև մեր աստղը
Վեհ ու անմար,
Բեզ, վիրխարի արեգ,
Հրամարմի՛ն,—
Սեղմած բռունցք դու մեր՝
Բանա՛կ կարմիր...

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

Կը բարձրանանք մենք
Ձեզ հետ մէկտեղ,
Դրիչները մեր
Արած ուին,
Կը խփենք ձեզ հետ
Թշնամուն ննջեց,—
Կը հասնի՛ք ահեղ
Վերջին կռիւն...

...Ցուրտն անխնա՛ է,
Դիշերը մառ,
Սահմանների վրա
Կանգնել էէ դուէ,
Ազա՛տ մեր աշխարհի
Բախտի համար...

1935 թ.

ԹԻՓԼԻՍ

Թիֆլիս,
կովկասեան գեղեցկուհի բեզ ասին,
ու ինչ երգեր,
Թիֆլիս,
չերգեցին fո մասին:
Այդպէս է եղել:
Կուրը fո մէջքին կոր գօտի,
հարս ես եղել դու լուսեղէն,
պարել ես ելած մի ոտի:

Թիֆլիս,
իմ երգը լ՛ինչըդ երգի,
եւ լ՛ինչըդ չերգի իմ երգը,
դու նման վարդավառ վէրիի,—
ահա տես,
պարզել եմ իմ ձեռքը:

Ուզում եմ սիրտդդ շօշափել,
հասկանալ բեզ,
երգել,
զգալ,
թող ոչինչ սիրտս չկապի,
ու թող, որ միայն բեզ զգամ:

Թիֆլիս,
կովկասեան գեղեցկուհի,
Կովկասի նման գեղեցիկ
ու հին:—

Թիֆլիս,
երէկ — անցէր ու անմայիս,
այսօր մայիսաւոր Թիֆլիս:

... Պուշկինն է անցել այս fաղաfով,
* * * * * * * * * * * * * * * * * * * *
բանիծով մի մաշուած լուսնայինն,
այստեղ է հնչել մի օր
շոգ բնաբը մեծն Շոթայի:

Ու անցնում, անցում է ահա,
յուշերիդ շոգ մշուշում,
fւ կենտոն վեհ ու դասական,
մի ձեռքը մրգի բեփշուն:

Ու հինա է բափել արեւը,
արեւը — դարչին ու շաֆրան,
արեւը վերից վառել է
fո մրգի՛ սրտի վրա:

Իսկ շուրջը վրաստանն է,
խրճիթներ,
գիւղեր,
աւանները,
իսկ շուրջը վրաստանն է,
բլուրներ,
վանքեր,
աւանները:

Ու ճայում է լուսէ հրապոյրով,
իր հեռու, երգեցիկ անտառից,
էրոչ պէս մօտիկ ու սիրող
Յինանդալին:

Հասնում է խադողն այնտեղ,
ու գինին է եռում շոգ,
կանգնել են կիսաւեր վանքեր,
ևրա բիլ–կապոյտ մշուշում:

... Իմ դիմաց Թիֆլիսն է ևորից,
խառնուում եմ ևրա փոշուն,
— Լսում եմ լացը Գիէորի,
Պեպոն է կանչում մուժում:

Կանգնել է Մետեխը իմ դէմ,
ճայում է ժանտատես ու մութ,
— անցեալի դժնադէմ Մետեխ.
ապստամբ արծիւների բոյն:

Իսկ հեռու, հեռու օրերից
որպէս սոյլ, կամ որպէս համի,
շաչում է մերկ մարմնին երկրի,
բիբտ դամչին ազնւականի:

Տարիներ են անցել հերթով,
տարիները մոխ են դարձել,
գլորւել են դարեր յետո,
սերունդներ են ընկել, բարձրացել:

Այժմ էլ դու անցիր էս հերթին,
հնամեա այս էաղաքով,
աչքիդ դէմ սիլուետը բերդի,
պարիսպները ևրա հողագոյն:

Այստեղ է Եւրոպան եւ Ասիան,
կողք–կողքի կամ հիւսւած իրար,
այստեղ կա եւ Փարիզ եւ Միլան,
այստեղ է Իրան:

Ո, Իրան,
Իրան,
Իրան,
համամներ, չայխանա ու մզկիթ,
արեւը դեղին, հուրիրան,
վերամբարձ ձեռները պարսիկի:

Իսկ էսան էայլ հեռու վիտրինաներ,
ասփալտի մայթեր,
օթո,
օպերա,
Մոլալակ ու սինեմ,
ելեկտրո–լոյսերի տոն:

Վրաստան, սիրում եմ ես էեզ,
ինչպէս սիրեցի Բագուն,
հնգաթեւ էո աստղը հրկէզ,
վիթխարի վերելքը էո:

ԱԼԱՋԱՆ

ԵՐԳ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

Նրանք բանւոր, գիւղացի, կոմունիստ ու կոմերիտ,
Ձարտարապետ ու բարահատ,— մտան կուի այս դաշտը:
Նրանց դրօշը յաղթութեան արդէն նշան էր լըրիւ,
Եւ արիւն էր շողշողում, եւ առաւօտը հաշտ էր:

Նրանք յախուռն պատռեցին մղոնները ժայռերի
Ու ցրնցուեցին ծունկերը՝ եկեղեցու առափնեա,
Ուժանակի որոտում մեռան զանգերը լըռիկ
Եւ բրոնզասեռ արձանն այն՝ մահը լացաւ իր վրա:

Առան, հասան յաղթութեամբ, մինչեւ բերդը սարդարի,
Որ բեկորները ժողուած, դեռ մնում էր գետափին,—
Որպէս յուշը՝ իր անցած արիւնկրզակ այն դարի,
Որպէս վերջին բեկորը՝ բռնութեան ու սարսափի:

Նա արեամբ է շաղախուել, ոսկորներով բարձրացել,
Աշխատաւոր մարդկութեան, ստրուկների, ճորտների:
Այդ արիւնի լերդացմամբ՝ պարիսպներն են կարծրացել
Եւ հասակներն են ցըցւել հաստաիրան բերդերի:

Փշուր-փշուր հանդեցին պարիսպներն ու բերդերը,
Փոշուն տւին, ցրեցին, անցեալը այդ արնակերտ,
Մորմոքեցին պատմութեան խունացած այս թերթերը
Եւ խոյացումը նրանց — առաջ սուրաց անարգել:

Բ.

Դէմը նրանց բարձրացաւ խաչերի խիտ մի անտառ,
Մամուռ ու էոս եւ դեղին մեռելական բոյսերը,
Ծաղըր նատած, ինչպէս մահ,— մի արոյրէ բուր,
անթարթ,
Շիրիմների խարակոփ ու տըրորուած ուսերը:

Հնամաշ այդ խաչերի ժանգակալած բռունցքի տակ
Գնդապետներ են կըճել՝ ներքեւակ ցարի բանակի,
Մերթ պսակ է բարձրացել խարտեաշնդակ մի հրեշտակ,
Մերթ ընկել են մամռոտած մահարձաններն ահագին:

Նրանք ընկած նահապարի — դէպի փառ ու բրոնզութիւն,
Սալոններից դուրս եկան, թողած կին ու վայելում:
Այստեղ գոան հանգրուան,— խարակոյտ, կամ հոգեթումբ
Ու բեկբեկուն արձաններ՝ փուած Ջանգուլի հայելում:

Ցամառում էր խաչերի հին անտառն այդ մթնամաղձ,
Դէմ էր առել խոյացող այն բանակի արշաւին:
Սակայն նրանք փշրելով դիմադրութիւնն այդ յիմար
Նահանջին նահապարի — դէպի արտեր ծարաւի:

Ու գանկերի վրայով հին ցարական բանակի —
Տարան ջուրը դէպի կեանք, դէպի փթթում, դէպի դաշտ:
Ընկան խաչեր թեւաբեկ՝ մահը առած շալակին:
Նրանք առաջ սուրացին, յաղթելով խաչ ու երաշտ:

Գ.

Նրանք լուսէ սրերով՝ պատրուեցին գիշերը,
Ժայռ ու ափեր հանդեցին — արշալոյսից՝ արշալոյս,
Ցըրիւ տւին մինչեւ մահ — խարափներն այս շերտ առ շերտ
Եւ սլացան յաղթութեան խրամներով խարխարուտ:

Արեւը հուր տեղաց բորբ ու էրտիճով օծանեց —
Նրանց դէմքերը բրոնզէ ու կրծքերը պողպատի
Մերթ լուսաթիր երկինքը՝ իր ժպիտները ցանեց,
Եւ աստղակուռ պսակներ հիւսեց նրանց նահատակի:

Անձրեւի թաց մտրակը՝ նրանց ուսերը ծեծեց
Եւ ամպրոպը որոտաց նրանց գլխի վերեւում.
Մերթ լուսինը կապոյտից դառնաթախիծ նեծնծեց,
Եւ Մասիսը բարձրացաւ մշուշների այն հեռում:

Նրանք սակայն աննահանջ, նրանք սակայն անընկուն,
Գրոհ տւին ու կռիւ, առան պարիսպ ու բերդեր,—
Այս ծերացած ափերում, ուր Ջանգուն էր մորմոքում,
Ուր անցեալը մեռաւ լուռ, ուր Մասիսն է ապրում դեռ:

Նրանք առան թումբ առ թումբ, նրանք առան էար առ էար,
Ու թունդ առան ափերն այս — ուժանակի գոռ թինդով:
Նրանք առան բերդ առ բերդ, նրանք առան ժայռ առ ժայռ,—
Եռանդաեռ, անյողդողդ, զարթադէմ ու խնդուն:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՄ ՄԱՅՐ

Տաժանակիր աշխարհում
Մայրս զառամեց:
Ու մահացու ահաւոր
Տանջանքների մէջ:

Ամբողջ գիշեր մահի դէմ
Մաքառում էր նա:
Այդ մղձաւանջը երբեք
Ես չեմ մոռանա:

Ես որբացած մնացի
Դարբասների մօտ:
Իմ մանկական ճակատին
Կար մութ ու ամօթ:

Եւ երեւում էր նա ինձ
Ամեն երազում,
Ու մայրական ամոթիչ
Խօսքեր էր ասում:

Գալիս էր նա գեղեցիկ
Եւ երիտասարդ,
Մետաքսաշող շորերով,
Երեսները՝ վարդ:

Գրկում էր ինձ ու ժպտում
Արեւի խանդով,
Ոսկեզօծում էր հոգիս
Եւ աշխարհին անդով:

Լալիս էի ես անհաս
Երջանկութիւնից,
Լալիս էի սրտաճաք
Ու զարթնում ինից:

Ու մորմոքուն աչքերով,
Սրտով դառնակիզ,
Իմ բաղցր մայր, իմ երկիր,
Տեսնում էի քեզ:

Մեռնում էիր դու նոյնպէս
Ցնցոտիներում՝
Մարւող աչքերդ յառած
Ամպամած հեռուն:

Տէրերը քո խելագար,
Գայլերդ դաժան,
Լլկում էին ու լափում
Սիրտդ սրբազան:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Նրանք փակում էին քո
Աչքերն ու լեզուն,
Որ չտեսնես փրկութեան,
Աստղը հիւսիսում:

Ո՛ր չլսես լեռնին
Կոչը հուրհուրան,
Որ փայլակում էր ամպոտ
Աշխարհի վրա:

Բայց որդիներդ արթուն
Նայեցին նրան
Քո լեռներից, դաշտերից, —
Ու մարտի եկան:

Նրանք հեռու վանեցին
Լկտի գայլերին:
Ու քո գլխին նոր կեանքի
Վառ աստղ դրին:

Հիմա քայլում էր առյգ
Եւ երիտասարդ:
Կանաչում են քո ճամբին
Կարդ ու անապատ:

Քո զաւակները հերոս՝
Ջեռներով ճարտար՝
Հարթում են քո մեծ ուղին,
Բերում լեռ ու քար:

Նրանք լոյսով, մարմարով,
Զարդարում են քեզ:
Ջեռդ տալիս են երկար,
Երգ ու ժորգէս:

Նրանիք յուրքի դաշտերում
Քո համայնական
Կերտում են քո կեանքը նոր
Եւ քո ապագան:

Այլ եւս չեմ տեսնում ես
Մօրս երազում:
Դու կենդանի ես արդէն,
Մայր իմ սիրասուն:

Նայում ես ինձ քո պայծառ,
Կապոյտ աչքերով,
Եւ ներշնչում ես սիրո,
Պայքարի կորով:

Իմ աչքերի, իմ հոգու,
Իմ երգի վրա —
Քո մայրական համբոյրի
Կնիքն է կրակ:

Ես քեզ համար իմ երգում
Այսման խանդավառ,
Խորհրդային Հայաստան,
Երջանիկ իմ մայր:

Քո տէրերը երէկւա,
Գայլերդ անմուն,
Խելագարած սեփական
Մահուան տեսիլքում:

Քո արեւից կուրացած՝
Ոռնում են հիմա,
Թէ անյայտ է քո ուղին
Եւ գալիքդ՝ մահ:

Քեզ անւանում են նրանիք
«Մայր» ու «հայրենիք»,
Եւ սէր են քեզ երդըւում
Ճիչով վայրենի:

Կոչ են անում աղեկէզ
Քեզ դէպի *Մխիթ*
Դէպի *Սասուն* եւ դէպի
Լեառն առելութեան:

Բայց դու յիշում ես նրանց
Ժանիքները հին:
Ջես հաւատում գայլերի
Ժանօթ ոռնոցին:

Եւ դու չես էլ հասկանում,
Քեզ չի էլ յուզում
Այդ զառամեալ, զառանցող
Ոռնոցի լեզուն:

Մենիք ենիք, ո՛վ մայր, իսկական
Որդիները քո,
Որոնիք թրծում են հոգիդ
Լեռնինեան երգով:

Որոնիք հարթում են ուղիդ,
Քեզում լեռ ու քար
Եւ քեզ տանում են անթեք
Դէպի նոր աշխարհ:

Որոնիք վարդով, մարմարով
Զարդարում են քեզ,
Քեզում են երգ ու երկաթ
Ու քանաքեռգէս:

Որոնիք յուրքի դաշտերում
Քո համայնական
Կերտում են բիւր գանձերով
Լի քո ապագան:

Մենիք ենիք տեսնում ու բուժում
Քո վէրքերը հին —
Մենիք չենիք տա քեզ
Երէկւա քո դահիճներին:

Մենիք ենիք սիրում հողդ սուրբ,
Սարերդ բերրի
Ստեղծարար մեր սիրով
Բոլշեվիկների:

Մենիք ենիք երգում կեանքդ նոր
Ու փառդ անմար,
Խորհրդային Հայաստան,
Հերոսական մա՛յր:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

ԵՐԿՈՒ ՍՈՆԵՏ

1.

Թօք-ափել է ոգիս ազատ՝ բեռը հին,
Ե՛ւ մխոհ, ե՛ւ սիրտ յօշոտող մի դեղին մաղձ.—
Հազարամեայ մոլութիւններն ընչաքաղց,
Որ դարէ դար տիրում էին աշխարհին:

Պաշտամունքը չունիմ հանդէպ իրերի,
Ցկա նախորդ մարդու տենչը՝ ոսկեքաղձ.
Ինձ տրւած է անկապտելի մի նոր գանձ,
Մեծ պարգեւը Հոկտեմբերեան օրերի:

Աշխատաւորի դու իրաւունք սրբազան,
Աշխատութեան հանդէպ վեհ ու կաթոգին,
Որ տիրում էիր մեր աշխարհում անսասան,

Դուք լցրել էք նոր յոյզերով իմ հոգին. —
Գանձ անսպառ, անկապտելի, լուսաւոր,
Որ շատանում ու դիզւում է օրից օր:

2.

Անցեալի նման· ծանօթ, պարզ ես դու,
Եւ բաղձալի ես դու, որպէս գալիք,
Առաւօտի պէս թեթեւ, անճկալի,
Որպէս երեկո՝ ծանր ու իմաստուն:

Երբ աչքերիդ մէջ լուռ խոհն է նստում,
Կամ խինդն է հոսում ալիք առ ալիք,
Լսում եմ երգը արեւագալի,
Կամ մայրամուտի մեծ վէպն եմ թերթում...:

Եւ ինչո՞ւ ես դու, ո՛վ իմ ցանկալի,
Այդքա՜ն հարազատ ու այդքան ազգուն.—
Օ՛, դու բերել ես հո հետ անցեալից

Ինչ միայն լաւ էր, եւ այն ունես դու,
Ինչ որ տալու է գալիքն ըղձալի,—
Վաղուա յոյզերիս չքնաղ կենսատու:

ՍՈՂՄՈՆ ՏԱՐՕՆՑԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

Դու, ո՛վ կարմիր արեւ Նոյեմբերեան
Գր առաւօտն եղար մեր կեանքին պաղ
Եւ անսպառ ակը մեր խնդութեան՝
Ինչո՞ւ չծագեցիր աւելի վաղ:
Ինչո՞ւ շուտ չբացւեց հո այգը վառ,
Երբ մեր հայրենիքն անբախտ, դարերով խեղճ,
Հերկում էին հողը, բայց համում քար՝,
Որ մորմոքում անդուռ աշխարհի մէջ:
Ո՛, քանի սերունդներ սրտով բոլոր,
Մոխիրների վրա, որբեր որպէս,
Իրենց անյոյս հոգով, թոյլ ու մոլոր,
Տեսչացին արեւիդ ծագումը կէզ:

Դու ո՛վ կարմիր արեւ, որ սիրառատ
Մայրն եղար երջանիկ մեր այս մանկանց,
Արցունքի փոխարէն տեսիլ կաթ,
Ու վշտի փոխարէն՝ խնդութեան գանձ,
Ու հոդին տեսիլ ճոյլ-ճոյլ ցոլեն,
Ու լոյսով լցրեցիր գիւղ ու քաղաք՝
Որ մեր հոբիզոնը անհունօրէն
Լայն լինի ու կեանքը բազմազազակ,
Ցաւերժ օրհնութի՜ւն էիք: Դու, որ մեր մուր
Կամարը դարձրիր պայծառ յակինթ՝
Մենք կը պահենք հո մեծ դիօշն աւուր —
Մինչեւ վերջին օրը յաղթանակիդ:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՋԵԱՆ

ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆԸ

Ամառը՝ լիալեցուն մի գեա՝ սոխինքներն ուռցրած հասում է, ծաւալւում է տիրականօրէն: Հողը պոպաւերում է, ու կատաղել է, խանդում է, խելագարւում: Օդի մէջ հասունանում է արեւի կենարար հիւթը — մի բուրմունքից ջերմութիւն, որ շնչառութեան հետ ըմպւում է, երակներն ուռցնում, տանջում կեանքի ուրախութեամբ:

Ծանր հեւում է բերանաբաց ձորը: Մինչ հեռւում թեւատարած արծիւների պէս ճախրում են լեռները: Շոգ է: Եւ անտառը աչքը կպցնում է ծուլօրէն:

Անտառի կանաչ դռներն մօտ մի ճեմարակ տուն — բանւորների հանգստի տունը — ինքն իսկ հանգըստանում է պարտէզով գրկած:

Խոհանոցից հանդիստ էիսոցները են դալիս մի-մեանց հետ, տաք ճենճեռոցային դահլիճներից բուրմունքի եւ մսի ճենճեռոցային դահլիճներից բուրմունքի եւ մսի ճենճեռոցային դահլիճներից բուրմունքի եւ մսի

Քառասուն տարի — առջևը տառերի կասա, կողքին մի պատուհան՝ հէսը դեմը մէջ: Եւ նա չարում էր ու կողքանց նայում պատուհանից դուրս: Ահա այդ պատուհանն է եղել չարունակ իր եւ կեանքի մէջեւ: Այնտեղ, դրսի աշխարհից — մայթից միայն մարդկանց ոտներ էին երեւում: Գալում էին այդ ոտները, քայլում արագ, դանդաղ: Գալում ամէն տեսակի ոտներ: Երբեմն էլ հրաշալի կօշիկներ նագելի ոտներով: Ի՞նչ կեանքեր կային այդ գեղեցիկ ոտների մէջ: Եւ այդ բոլոր գալիս–անցնում–գնում էին: Ու էլի գալիս, անցնում, գնում:

Ինչպէս որ իր ձեռքն էլ տառերը՝ գալիս, չարւում, գնում էին:

Դրանում կեանք կար, բնութիւն, ամարանոց, արեւ: Բայց ինքը միայն չարում էր: Շարում էր տառեր, եւ մեքենայաբար, առանց ուշ դարձնելու իմաստի վրա:

Ի՞նչ էին ասում այդ տառերը...

Իսկապէ՞ս որ... Ի՞նչ էր իմաստն այն ամենի, որ նա չարում էր քառասուն տարի: Միտը չի: Ո՞վ է իմանում: Ինչ որ պատկերներ, վէպեր, ոտանաւորներ: Մինը սիրում էր, միտը ճանճրանում եւ որոնում, եւ երբորդը կարօտում էր, չորրորդը երջանիկ էր: Բնութիւն, գարուն, սէր· սէր, բնութիւն, գարուն... Ուրի՞ց ինքն էլ սիրել: Միտը չի: Ժամանակ չկար:

Նա չարում էր, չարում, չարում:

Իր կողքով էլ պատուհանի մօտով, անցնում էր աշխարհը: Անցնում էր գեղեցիկ աշխարհը: Եւ ինքը նայում էր կողքանց, այնպէս, աչքի տակով:

Ու չարում, չարում...

Եւ ահա հիմա, անսպասելի բացատրում, ընկուզենու տակ ինչ որ հեռուոր բան է յիշում: Հեռուում, շատ հեռուում յիշողութեան մէջ մի բան է խլրտում: Կամաց–կամաց յիշում է թէ ինչ:

Ինքը աշխատում էր: Պատուհանի մօտ կանգնեց աղջիկների մի խումբ, եւ որպէս զի լաւ տեսնեն նեքսը, յետ–յետ գնացին դէպի փողոց: Բոլորն էլ հասարակ՝ ինչպէս ծաղիկներ: Զգեստը թաղերից էին: Տպարանում ոչ ոք չկար այդ պահին: Աղջիկները չարաճճի հետաքրքրութեամբ նեքս նայեցին: Սարգիսը կողքանց մտիկ ուեց նրանց: Մեքենական հայեացք: Աչքատանջը կը լանել էր նրան: Պէտք է «մեքենայի տակ գցէին»: Բոլոր ժամանակ չկար: Մրմռում էր, բարձրաձայն հեգում ու չարում էր: Բայց աղջիկները կանգնած էին դեռ: Ծիծաղում էին:

— Վա՛յ, գիրք են տպում:

Սարգիսը նայեց նրանց եւ մի վայրկեան աչքը կանգ առաւ նրանցից մէկի աչքերին: Սեւերակ, շեղ աչքեր էին, պարսկական նկարների մէջ պատահող, այծեամի աչքեր:

Աղջիկները նայում էին տպարանի առարկաներին ու կատակում:

— Ի՞նչ գեղեցիկ մեքենա է:

— Ինքն ի՛նչ:

Մինչ Սարգիսը կը նայէր՝ աղջիկները քրքջացին ու հեռացան չարաճճի առուների պէս: Միայն «այծեմանիկը» մի անգամ էլ յետ դառաւ, առատներով ծիծաղից ու «ծիկ» անելով փախաւ:

Ի՞նչ եղաւ այդ աղջիկը: Միտը չի: Ժամանակ չեղաւ այդ մասին մտածելու, սկսելու սիրե՛լ մի քիչ· իր չարած տառերի տակին կեանք կար — գլխի չընկաւ: Քառասուն տարի այդ կեանքը ներս էր նայում պատուհանից — այն աղջկա պէս: Բայց ինքը կողքանց նայեց ու կորցրեց:

Թո՜ւ կեանքը ծաի պէս...

Եւ հիմա աչքերը խոտերի մէջ՝ նայում է: Սիրտը լցած է: Ահա տարօրինակ մի լճանակներ մաղլցում են ցցունների վրա եւ հանգելով ծայրին՝ յանկարծ բրթռում են ու նետիների պէս սլանում օդի մէջ: Հազար պստիկ մեղուներ ու հսկա բզէզներ ձգում են իրենց ջուրերի կրում են հա կրում: Ի՜նչ հապճեպ՝ պանք՝ ապրել, ապրել: Եւ աչքատո՜ւմ են, թէ՞ ապրում: — Երկուսն էլ: Աբեւը թափում է նրանց վրա իր նարնջագոյնին, հարբեցնում մինչեւ գժութիւն:

Գինով է Սարգիսը... Երազում է:

Ի՞նչ կը լինի, ինչ կ՚սաես՝ եթէ կարելի լինէր յետ կանչել նրան — այն ծիծաղով լի աղջկան: Եւ ինչպէ՞ս ուշ չդարձրեց նրան:

Տեսնես որտեղ է հիմա...

Հազի՛ր հիմա երկաթէ տրեխներ, ա՛ռ ձեռքդ երկաթէ գաւազան, գնա ընկիր աշխարհէ աշխարհ, փնտռիր որ գտնես նրան: Լաւ ուղարկիր, թող գա: Այսօրւա պէս, այն օրն էլ հեաը բերի:

Մի վայրկեանում կորցրեց նրան ասելի պէս:

Տառերի պէս չարեց ու քանդեց կեանքը ուրիշների համար եւ կեանքից միայն տառերն ընկան ձեռը:

Եւ կոշտեր մատների վրա...

Սարգիսը հառաչեց:

Արդէն ճաշի զանգը ուել էին: Զէր լսել: Նրա տառ էր նա ծառի տակին, յետուն եւ հինդ տարւա կողը ուսին եւ աչքերը չոած, կարծես ուզում էր դուրս պրծնել այդ բեռի տակից:

Անցեալի՛ բեռի:

Եւ ինչպէ՞ս ապրել է ուզում նա իր երիտասարդ ընկերների նման: Հիմա կարող է, հիմա ունի՛ իրաւունք:

Ո՛ւշ հասաւ «Անիրաւը»:

— Սարգի՛ս, Սարգի՛ս,— ձայն ուին նրան,— ճա՛շ է, արի՛:

— Չը՛, ի՞նչ կա,— պարթնեց նա:

— Արի է՛, ճաշ է:

Մի ձայն կատակեց հեռուից.

— Չը՛, չպտում ւ՞ա:

— «Բանդում եմ»,— մրմռաց նա ու վեր կացաւ:

Վ. ԹԵՐՉԻՊԱՇԵԱՆ

ՀԱՅԻ ՀԱՄԱՐ

Ա.

Սոված ամբոխը խռնուել էր հրապարակում, մղկիթի առջեւ: Երեք օր էր, ինչ քաղաքի փուռները փակ էին, ալիւրի պահեստների պատասռուել: Հարուստները չէին նեղուում: Նրանք ամբարած ալիւր ունէին: Առանց այդ էլ նրանք կարող էին նոյն իսկ հաց չուտել, որովհետեւ համեղ խորտիկներ եւ ձիւնի պէս սպիտակ փիլաւը միշտ պատրաստ էին նրանց համար: Հացը չքաւոր դասակարգին էր պէտք, օրւա աշխատանքով ապրող արհեստաւորներին, մշակներին, ջրկիրներին, իշապանաւորներին:

Եւ ահա նրանք խռնուել էին մղկիթի հրապարակում, քաղցից ուժասպառ, մարած աչքերով, աղերսող հայեացքներով:

Բամպուքեան մկլտուղ կանգնած էր մի երեսաստիպ, դունատ, բայց կրակոտ: Նա խօսում էր: Նրան լսում էին: Ասելիք՝ նա երբեմն չարժումներ էր անում եւ աջ ձեռքը երկարում դէպի մի ուղղութիւն, որը թւում էր կապ ունէր խօսակցութեան նիւթի հետ:

Մինչդեռ նա խօսում էր, մի ոստիկան չտապաղ եկաւ եւ դէն հրելով ամբոխը, հասաւ մինչեւ խօսողը:

— Ծանր անուռով հրամայում եմ դադարեցնել այս օյինը, ասաց նա խօսողին:

Մի պահ լուութիւն տիրեց: Ապա յանկարծ բոլորը միաբերան ազաղակեցին.

— Հա՛ց, հա՛ց, թող խանը հրամայի փուռերը բաց անեն:

— Մի խանգարիր հաւաքոյթը: Սա

— Մի՞թէ սա կրօնական հաւաքոյթ է: Սա ուղղակի ապստամբութիւն է,— ասաց ոստիկանը եւ գոռոզով դէպի ճաշախօսը, յարեց.

— Բիլա՛լ, դու գրչռում ես ամբոխին, դու բաւունք չունես խանի հպատակների մաքերը պղտորելու:

— Ծանր հպատակները սովից մեռնում են, իսկ նա ալիւրը անգլիացիներին է ծախում գօրքի համար. հարուստները ամբարել են ցորենը եւ ուզում են գինը թանգացնել, իսկ ժողովուրդը սովամահ է լինում եւ իրաւունք չունի ասելու, թէ սովից մեռնում է: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ժողովուրդը ցանկանում է լսել եւ ոչ իրաւունք չունի արգիլել, երբ ժողովուրդը ուզում է լսել:

Այսպէս խօսեց երիտասարդը, որին ոստիկանը Բիլալ անուանեց:

Ոստիկանը տեսաւ, որ ինքն անզօր է բազմութեան դէմ, որը սկսել էր գազազել, ուստի խելացի համարեց հեռանալ:

Երիտասարդը վերաջրեց իր ճառը: Բազմութեան մէջից մէկը ձեռը բարձրացրեց:

— Լսեցի՛ք, լսեցի՛ք մաշտոցի Բիւրեղն է, լըսենց այս ու այն կողմից:

— Աւա՛ տնաՀ, Բիլա՛լ, ես մի խեղճ արհեստաւոր եմ, թամբագործ, մեծ ընտանիքի տէր. հագիւ եմ ծայրը ծայրին հասցնում, իսկ նա, որի համար թամբ եմ չինում, չգիտէ ի՞նչ ասել է նեղութիւն եւ քաղցածութիւն: Նա պահանջում է, որ թամբը չքեղ լինի, զարդարուն. ես ոսկեզօծ թելով բանում եմ ձիու գլուխը եւ ապարանդակները զարդարում՝ գեղեցիկ փնջերով, մինչդեռ երեխաներս մերկ են, ինքս էլ համարեա կիսամերկ: Եթէ դու իրաւունքի մասին ես խօսում, ասա՛, մեզնից ո՞վ է իրաւատէրը, նա՞ թէ ես: Նա ինձ չնչին, սեւ փողեր է տալիս, սակայն եթէ այդ սեւ փողերն էլ չլինեն, մենք բոլորովին սովամահ կը լինենք: Դուրս է գալիս, որ իմ ապրելու իրաւունքը կախուած է նրա գրածից. ասա, այսպէ՞ս է, թէ ոչ:

Երիտասարդը մի պահ լռեց, ձեռքով չոյեց իր նոթաթոյս մերուքը եւ դառն ժպտաց:

Ամէնքը լուռ էին եւ սպասում էին պատասխանի:

Յանկարծ երիտասարդը ձեռքը բարձրացրեց եւ սկսեց խօսել:

— Ո՛չ, այդպէս չէ՛, քո ապրելու իրաւունքը կախուած չէ հպատակ գրածից, որովհետեւ եթէ դու եւ քո նմանները չաշխատեն, հարուստը ոչ մի փող կ'ունենայ եւ ոչ էլ չքեղ թամբ...: Ապրելու իրաւունք ունի նա՝ ով աշխատում է. նա՛ միայն իրաւունք ունի՝ ո՛վ քրտինք է թափում:

— Մենք բոլորս աշխատում ենք, աշխատում չարաչար, լսեցէ՛ք ձայները...

Մի ջրկիր ջրի տիկը դեռ ուսին, առանց ձայն խնդրելու, սկսեց բարձր ձայնով խօսել.

— Թուլուղչին խօսում է, լսեցի՛ք, ի՞նչ է ասում թուլուղչին... Լսեցի՛ք...

— Վաղ առաւօտից մինչեւ ուշ գիշեր վազվզում եմ դէս ու դէն, ջրի ծանր տիկը ուսիս... Բրտինքը գետի պէս հոսում է մկնդեղից, ճակատից. աչքերս մթնում են, ծնկներս թուլանում, բայց պէտք է վազել քաղաքի մէկ ծայրից մինչեւ միւսը, ամի՛ն րոպէ, ամի՛ն ժամ... Մի՞թէ սա աշխատանո՞ք է... Սա դժո՛խք է... եւ այս ամէնը՝ երկու սեւ փողի համար...

— Դա քո ճակատագիրն է, բարձրացաւ մի ձայն բազմութեան մէջից:

Ջրկիրը լռեց ու սկսեց ծոծրակը քերել, յանցաւորի պէս: Նա իր կեանքում երբեք այդքան երկար ճառ չէր ասել:

— Այստեղ մէկը ճակատագրի մասին խօսեց. ո՞վ է, թող մէջտեղ դա եւ բացատրի մեզ թէ ի՞նչ ասել է ճակատագիրը, հարց ուեց Բիլլը, դառնալով բազմութեան:

Բ.

Բոլորը լռեցին: Բոլորը անձկութեամբ սպասում էին: Սպասում էին, որ մէկն ու մէկը կը յայտնուի ու կը բացատրի իրենց թէ ի՞նչ բան է ճակատագիրը: Սակայն ոչ ոք հանդգնս չեղաւ: Շշուկները ալեկոծեցին բազմութիւնը:

— Ո՞վ է ճակատագրի մասին խօսողը...

— Ի՞նչ է ճակատագիրը...

— Ուրեմն ճակատս գրած բո՞ն կա...

— Գրած է, որ սովից պէ՞տք է մեռնենք...

— Ո՞վ է գրել...

— Աստո՞ծ...

— Աստո՞ծ է գրել, որ սովից մեռնելու ենք...

Յանկարծ իրարանցում ընկաւ բազմութեան մէջ:

— Շէյխը գալիս է, շէյխը...

— Ճանապարհ ուէք շէյխին...

Սպիտակ էշի վրա նստած՝ ձիւնաթոյր զգեստով մի հոգեւորական, երկար, ալեխառն մորուքով, մօտենում էր, լուրջ, հանդիսաւոր:

Նոյն րոպէին, ցնցուղներ հագած մի մարդ վազեց դէպի շէյխը եւ բռնելով էշի սանձը՝ աղաղակեց.

— Աա՛, շէյխ, աա՛, գոյութիւն ունի՞ ճակատագիր:

Շէյխը, չփոթուած՝ մի սուր հայեացք ձգեց դէպի յանդուգն մարդը եւ մի պահ լռեց. յետո, չոյելով իր մորուքը, պատասխանեց.

— Դա ի՞նչ հարց է, ո՛վ մուսուլման. ճակատագիրը Ալլա՛հի կամքն է, եթէ Ալլահին հաւատում ես, ինչպէ՞ս կարող ես չհնարաւորել նրա ամենազօր կամքին:

Սանձից բռնողը չփոթուեց: Զգիտեր, ի՞նչ պատասխանէր:

Այդ ժամանակ, առաջ նետուեց Ջրկիրը ու բուռն թափով գոչեց.

— Շէ՛յխ, ուրեմն Ալլահի կամքո՞վն է, որ սոված՝ կոտորուում ենք:

Շէյխը ալյլուեց: Ու իր չփոթութիւնը ծածկելու համար սկսեց, քթի տակ, աղօթքներ մրմնջալ:

Թամբագործը մօտեցաւ եւ Շէյխին ասաց.

— Շէ՛յխ, դու չպատասխանեցիր քեզ տրուած հարցին: Մենք կարիք ունենք ճշմարտութիւնը լսելու...

Շէյխը հազաց, դարձեալ չոյեց մորուքը ու աչքերը բարձրացնելով՝ խօսեց.

— Հաւատացեալ ժողովուրդ, ես ասացի ինչ որ հարկն էր: Սրբազան Ղուրանի հետեւորդները կարիք չունեն նոր յայտնութիւնների: Մե՛ղք է, մահացու մե՛ղք, մուսուլմաններ, փորձել Ալլահին: Բաւական է, ինչքան դատարկ խօսեցիք: Գնացէ՛ք ձեր գործին եւ ապաւինեցէք Ամենակալի անսահման ողորմածութեանը...

Այդ պահին, յայտնուեց մի դերվիշ, որ բարձր ձայնով երգում էր ինչ որ թախծոտ երգ: Նա երբեմն, անկասկած խօսքեր էր արտասանում: Բոլորի ուշադրութիւնը կենտրոնացել էր դերվիշի վրա:

Դերվիշը լռեց: Ցետո բարձրացրեց իր կիսամերկ բազուկները դէպի երկինք եւ այնպիսի ձայնով, որ գալիս էր կարծես անդունդների խորքից, աղաղակեց.

— Անէ՛ծք, անէ՛ծք բռնաւորներին, ճնշողներին եւ ժողովրդի արիւնը ծծողներին... Մօտեցել է աշխարհի վերջը եւ ահեղ դատաստանը, երբ վրէժխնդիր Ազրայէլը կը դա իր հրացայտ սրով...

Գ.

Ամբոխը սարսռաց, յոթանք ուեց: Ահաւոր էր դերվիշի կերպարանքը: Նրա երկար հասակը, զազանի մորթով կիսով չափ ծածկուած նիհար ու կմախացած իրանը, նրա բազմաչարչար դէմքը, դերեզմանային ձայնը թողնում էին անդրաշխարհից եկող մի ուրուականի տպաւորութիւնը:

Բոլորի հայեացքը ակամա հետեւեց նրա չոր, ջլուտ թեւերի ուղղութեան դէպի երկինք, որն անամպ էր ու պայծառ: Կարծես բոլորն էլ, նոյն րոպէին, սպասում էին, դերվիշի հետ, աշխարհի վախճանին եւ վրէժխնդիր Ազրայէլին...

Ամբոխի հայեացքները մեկնած մնացին օդում: Այնտեղ մի անծանօթ ձեռք չաղ էր ուել թռուցիկներ, որոնք դանդաղօրէն պարելով, սպիտակ փետուրների պէս, ընկնում էին բազմութեան դէմ-լուսների վրա:

Թերթիկները զրաւել էին բազմութեան ամբողջ ուշադրութիւնը: Ամեն մէկը՝ զայն ձեռք բերելու համար, հրում, հրմշտում էր միւսը:

Մարդիկ այլ եւս մոռացել էին իրենց ծանր վիճակը, սպառնացող սովը եւ ահեղ սպասող քաղցած երեխաներին:

Դ.

Այն բախտաւորները, որոնց յաջողուել էր ձեռք բերել թռուցիկները, վախով ու ակնածանքով էին նայում նրանց վրա. զրպէնները փորձում էին կարդալ, իսկ անգրագէտները տատրի ձեւից դուշակում էին, որ իրենց համար հասկանալի լեզուով գրած էին:

Շէյխը՝ իր սպիտակ էշով՝ անյայտացել էր: Մնացել էր դերվիշը: Նա կանգնել էր անշարժ, արձանի նման: Նրա դէմքը մռայլ էր, իսկ հայեացքը՝ յամառօրէն ուղղուած մի կէտի:

Երբ այս արտասովոր պատահարի ցնցող արտորութիւնը քիչ մեղմացաւ, բազմութեան մէջ վերսկսուեց խօսակցութիւնը, նախ չշուկներով, ապա աւելի ու աւելի համարձակ, բարձրաձայն:

— Բիլլը թող կարդա թռուցիկը...

— Այո՛, այո՛, թո՛ղ կարդա, մենք կը լսենք...

— Ի՞նչ ասեմ հօրս, որ ինձ ուսումի չուեց.

հիմի կը կարողանայի ինքս կարդալ, առանց ուրիշի օգնութեան, ասոց մի երիտասարդ իր ծեր հարեւանին:

— Ինձ հայրդ խանի դռնապանն էր, հազիւ օրւա հացը կարողանում էր վաստակել. լաւ եմ յիշում ողորմած հոգուն, լա՛ւ մարդ էր, չա՛ս լաւ մարդ: Զո՛ւր ես դանդաւում, դոնէ սովից կըսղացաւ վրկիլ քիզ, եթէ ոչ տպիտութիւնից:

— Ձկմարիա է, Մուստաֆա, տէրերը մեզ օր ասւու չէն տալիս, պատասխանեց երիտասարդը:

— Լաւեցէ՛ք, մի՛ խանգարէք, էլ՞ք տեսնում Բիլալը կարդում է:

— Կարդո՛ւմ է, կարդո՛ւմ է... լսեցէ՛ք:

Հրապարակում տիրեց խոր լռութիւն: Այդ լռութեան մէջ հնչեց Բիլալի ձայնը պարզ ու որոշ:

Քանի նա կարդում էր, յուզմունք տեսանելանում էր հրապարակում եւ բոլորի մօտ ըստեղծում համամման հոգեվիճակ: Պարզ ու համարձակ բառեր էին դրանք, ըմբռնելի եւ՛ ջրկիրին, եւ՛ հողագործին, եւ՛ մշակին: Նրանք արձագանգում էին նրանց թագուն մաքերին եւ ցանկութիւններին, վշտերին ու ուրախութիւններին...

«Եղբայրնե՛ր...

«... Դարաւոր ճնշման ու հարստահարութեան տակ կացած աշխատաւո՛ր ժողովուրդ... հեռաւոր հեւսխում մեր եղբայրները թօթափել են ընդարձակ երկրներում մեր եղբայրների՝ աշխատաւորների եւ հարստահարողների լուծը... Այնտեղ չողների եւ հարստահարողների՝ աշխատաւորների միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները այժմ ձեր եղբայրների՝ աշխատաւորների դասակարգի՝ բանւորների եւ գիւղացիների դասակարգի՝ բանւորների եւ գիւղացիների միջեւ դասակարգի՝ բանւորների եւ գիւղացիների միջեւ է... Այնտեղ աշխատաւոր մարդը ազատ է իր հայրենի քրտինքին... է իր հայրենի վաստակին, իր արիւն քրտինքին... Ահա ինչու անդամ պատմութեան մէջ աշխատաւոր մարդը, ձեռք է բերում իր իրաւունքը՝ աշխատելու եւ ապատ ապրելու իրաւունք»...

Ամբոխը չունէր պահած՝ հեռուում էր հետեւում ամեն մի բառին: Նա վերջանում էր հետեւում խօսքերով.

«Ձեր ազատութիւնը գտնում է միայն եւ միայն ձեր ձեռքում... Ձեր վճռականութիւնից է ձեր ձեռքում... Ձեր վճռականութիւնից է կախուած ձեր ճակատագրին... Վերցրեցէ՛ք օտար ճնշողների, տապալեցէ՛ք ձեր ընտեցէ՛ք օտար ճնշողներին, տապալեցէ՛ք ձեր ազգային բռնակալներին... Փրկութեան այլ ուղի չկա»:

Երբ ընթերցումը աւարտեց, Բիլալը հայեացքը պտտեցրեց բազմութեան վրա: Հրապարակում տիրում էր դերեզմանային լռութիւն...

Ե.

Հրապարակի ծայրից լսուեց մի սուր ճիչ: Բազմութեան հայեացքը նետի պէս ուղղուեց դէպի այն կողմը: Մէկը ուշաթափուել էր: Ուշաթափուել էր, որովհետեւ չորս օր է, որ ոչինչ չէր կերել:

Բազմութիւնը չանթահարուեց: Ամեն կողմից բարձրացան ցաւսոյի վրէժխնդիր աղաղակները:

— Կորչի՛ն բռնակալները, հարստահարողները... Հա՛ց, հա՛ց...

Ցանկարծ, հրապարակում թնդաց մի աղաղակ.

— Դէպի՛ ամբարները, ցորենի ամբարները:

— Դէպի՛ ամբարները... արձագանգից ամբոխը եւ ալեկոծուեց:

Ցորենի ամբարները գտնուում էին քաղաքի ծայրին, ամրոցի մօտ:

Մի րոպէում բազմութիւնը վերածուեց փոթորկալից ծովի: Մարդկանց ալիքները յորձանք տըւին, կուտակուեցին եւ արագօրէն չարժուեցին դէպի այն փողոցը, որ տանում էր դէպի ամբարները:

Ճիշտ կէս օր էր: Մզկիթի մինարէթից լըսւում էր մուէդդինի կանչը.

— Ալլա՛հու էքպէր, Ալլա՛հու էքպէր...

Բիլալը անցել էր բազմութեան գլուխը: Փաթթոցը կապել էր ճեռնափայտի ծայրին, որպէս դրօշակ:

Հրապարակը եռում էր: Ամեն կողմից վազում էին ծերուներ, կանայք, երեխաներ եւ մխանում հեղեղին:

Նրանց դէմքերը՝ քաղցից պրկուած, մեռելական, ահաւոր էին:

Նրանք գնում էին ալիք-ալիք, անդիմադրելի թափով, հա՛ցի համար, հա՛ցի, որն ամբաւած էր իրենց աշխատանքով, եւ որից զրկուած են եղել չարունակ: Նրանք գնում էին դէպի կեանք, մինչդեռ մուէդդինի ձայնը, որպէս դերուեշեան, ըսպըկութեան, մահւան խորհրդանշան, կոչկոչում էր.

— Ալլա՛հու էքպէր, Ալլա՛հու էքպէր...:

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՆՐԱՆՔ ԴՐՕՇԱԿ ՈՒՆԵՆ

(ՖՐԱԳՄԵՆՏ)

... Նրա թոռը՝ Թորել-կայինը պղինձն ու երկաթը ընկճեց: Պղինձից չինեց փողը, երկաթից՝ սուրը: Եւ փողն ու սուրը սմին տեղ մարդկանց՝ սարսուռ զարձրին: Մէկը չինեց չուկա, միւսը չինեց բերդ: Մէկի կողմն անցաւ վաճառականը, միւսի կողմը՝ զինուորականը:

Եւ սկսեցին վաճառականն ու զինուորականը չահագործել, ծառայեցնել աշխատող ժողովրդին: Բայց երկուսի նպատակը նոյնն էր — փողը, մի'շտ փողը:

Վերջը, դարերի ընթացքին, փողի ուժը դեղազանգեց սուրին, վաճառականը՝ զօրականին: Եւ սուրը զարձաւ փողի հլու զործիքը:

Փողը նուաճեց բոլորին:

Փողը, ի՞նչ է փողը... —

Սմին բան, այս երկրի վրա, արւում է փողի համար:

Սմին բան չուկա եղաւ:

Սմին բան առնում են փողով — սէր, առողջութիւն, ուրախութիւն, տաղանդ, ազատութիւն, կանայք, հպարտութիւն, պատիւ:

Սմին բան ծախում են փողով — սէր, առողջութիւն, ուրախութիւն, տաղանդ, ազատութիւն, կանայք, հպարտութիւն, պատիւ:

Փողն է եղեռնի մղում: Փողն է լցնում բանտերը:

Փողի ձայնն սմին տեղ է — բորսաներում, բանկերում, նախարարութիւնների մէջ, եկեղեցիների մէջ, բոլոր տների մէջ: Փողի համար է աշխարհն սմին կէտի վրա պատերազմ պայքած. սմին մարդ կռւում է փողի համար. սմին մարդ կռւում է սմին մարդու դէմ փողի համար...

Կորչի՛ փողը, Թո'ղ կորչի յաւիտեան:

— Կորչի փողը, կորչի փողը,— ուժով ձայնեցին կլուշարները:

— Բայց ես խոստում եմ նրա կինացը, Թո'ղ նա անպակաս լինի մեր դրպաններից,— ասաց մի կլուշար:

— Ա'յ, ուղտ, ինչքան ուզում ես խմիր, նա քեզ ծառ չի դա,— ասաց կողքին նստածը:

Իսկ ես խոստում եմ ձեր կնացը, կեցցէք դուք, ընչաղուրկներ, այրիներ և որբեր, իմ ազնիւ կլուշար ընկերներ,— տաքացած ասաց Շաւլը բաժակը բարձրացնելով:

— Կեցցէ մեր սիրելի Շաւլը,— պատասխանեցին ընկերները:

Կլուշարներից մէկը խանձած ձայնով երգեց, միւսները զլխի, աչքերի չարժումներով եւ մոմասլով ընկերակցում էին նրա երգին.

Աշխարհն եղաւ ինձ խոստմնազանց,
Խաբեց փորձած մի բոզի պէս:
Երազեցի բախտաւոր կեանք,—
Վաղը պիտի գլխատեն ինձ:

Սատանայիի սէր երդուեցի,
Նա էլ խաբեց ինի բոզի պէս.
Փողոց նետեց ինձ անօթի՝
Ձմրան ճաղցած գայլերի պէս:

Աղտոտ դէմքս, որ ածելի
Հազիւ տեսաւ մի օր միայն,
Վաղը պիտի սափրեն կարգին
Գլխատելու համար սակայն:

Ջուներս ես մի կտոր հող,
Մերկութիւնս ծածկող մի լաթ,
Գուլխ դնելու եւ ո՛չ մի տեղ
Այս լայն ու մեծ աշխարհի մէջ:

Վաղը մի թիզ դաշտ կը տան ինձ
Պատժաձածների գերեզմանոցում.
Մերկութիւնս կը ծածկեն հողով՝
Կտրած գլուխս ոտներիս մէջ:

Սրճարանատէր Վաւին ապշած կլուշարի երգից հետաքրքրւում, փնչալով երկու շիշ գինի դրեց Շաւլի եւ ընկերների առաջը:

— Շա'րլ, էս էլ իմ կողմից:

— Կեցցէ՛ Լէժիօն տ'Օնէօր-ի սպիտակ Միշել Բեռնարը,— դոչեց Շաւլը կլուշարների ձայնակցութեամբ:

Լուի-Միշել Բեռնարը մէկ աչքը ծխծղալի մէջ կռւ գնացած՝ ուսերը վեր նետեց եւ զարթնացաւ Ջինկ-ի հետեւը:

— Տի-տօն, Լուի, ես քեզ համար անգամ ասել եմ, որ զիմում անես Լէժիօն տ'Օնէօր-ի սպիտակ դառնալու: Այս անգամ լսիր ինձ՝ քո հին անկեզծ ընկերդին...

Բոլորը բեհեզը սրբելով հետաքրքրական նշան ուին:

Շաւլը կատակի համար միշտ ասում էր Միշելին թէ՝ դու 30 տարի է սրճարան պահող ես, հարեւանիքին ահագին ծառայութիւն ես մատուցել, տղոյին հետաքրքրական զարգացմանը նպաստել ես, հետեւաբար իրաւունք ունես պատուարեր մարդկանց ցանկի մէջ մտնելու: Մի քիչ փող չարժեցրու, մի սենատորի կերպարս, առ փառաւոր նշանը լամբակիդ անցրու, հետաքրքրական եղանակ-

Ների թեւերդ կախէր, մազամէզ մէւս թեւդ առ եւ հպարտօրէն ցոյց տուր քեզ Պարիզի փողոցներում։ Ուրիշները քեզնից լիՆով են առաւել։

Եւ ամեն անգամ բարի խորհուրդը գոյանում էր զարթ ծիծաղով։

Շարլ Բրեյը յետուն տարեկան կը լինէր. նըրբակազմ, ջղուտ, մոխրագոյն աչքերով։ Սուր դէմք, սուր կզակ, բարակ շրթներով։ Ակհոռոլից առած, փուք առած այտերով։ Երիտասարդ հառաչում էր ժողովրդական թերթերի սակում ժուռնալիստ էր, ժողովրդական աշխատասիրից։ Շատ կրակոտ յօդուածներ էր տառապել օբւա չարիքի, հասարակական հարցերի մասին։ Ոգևից խմիչքներին սէր ունենալով, կամաց-կամաց, տարիների ընթացքում, այդ սէրն ալոսի վերածւից, դարձաւ անբուժելի հարբեցող։ Կամքը բեկւից եւ ընկաւ, իջաւ մինչեւ ընկերութեան յատակը, խառնւից հասարակութեան, այսպէս կոչւած, տականքի հետ։ Սակայն իր զարպէս կոչւած, տականքի հետ։ Սակայն իր զարդացման եւ յարաբերաբար աւելի դրամ ունեցողի դացման եւ յարաբերաբար աւելի դրամ ունեցողի հանդամանքով մնաց ընկաղուրկների մէջ մեկ ազնըւականը՝ «Կլոշար-արիստոկրատը»։ Նրան ակնըւականը՝ «Կլոշար-արիստոկրատը»։ Նրան ակնածանքով լսում էին կլոշար-ընկերները, որոնց սրտերի մէջ խօսում էր նա։ Ապրում էր քրոջ սրտերի մէջ խօսում էր նա։ Ապրում էր քրոջ մօտ։ Տարիներ առաջ՝ դիրք ունեցած ժամանմօտ։ Տարիներ առաջ՝ դիրք ունեցած ժամանակը, քրոջը տեղաւորել էր գրքերի մեծ հրատարակչական մեծ տան մէջ։ Երախտագէտ քոյրը կեչական մեծ տան մէջ։ Երախտագէտ քոյրը կեանքում էր եւ հազցնում զժրախտ եղբօրը։ Շարանքում էր եւ հագցնում զժրախտ եղբօրը։ Շարլըն այլ եւս չէր կարող դրել։ Ձեռները դողում էին, լըն այլ եւս չէր կարող դրել։ Ձեռները դողում էին, եւ բացի այդ, մտածումները մի բան իրականաեւ բացի այդ, մտածումները մի բան իրականացնելու համար, անկաղ եւ անյարիր էին զարցնելու համար, անկաղ եւ անյարիր էին զարձել։

Ամիչքի եւ այլ պէտքերի գոհացման համար, զրաստ պահերին, բուկինիստներից հին գրքեր էր զրաստ պահերին, բուկինիստներից հին գրքեր էր առնում եւ վաճառում նախկին բարեկամներին եւ առնում եւ վաճառում նախկին բարեկամներին եւ մէկնորդչէք տանում։ Շահած գրամն իր ընչազուրկ ընկերների հետ էր ծախսում։ Վերջին ամազուրկ ընկերների հետ էր ծախսում։ Վերջին ամսիրը չէր խնայում ընկերներից։

Արշակն առանձնապէս նրա խնամքի ենթական էր։ Արշակին աւելի կարեկցում էր իբրեւ օտաէր։ Արշակին աւելի կարեկցում էր իբրեւ օտարականի, իբրեւ աւելի անճարակ մեկին։ Այս խարականի, իբրեւ աւելի անճարակ մեկին։ Այս խառնւածքի մարդիկ ամենից շատ կարիք ունին ընկերական օգնութեան։ Նրանք ամենից շատ կարիք ունին ընկերական օգնութեան։ Նրանք ամենից աւելի են ենթակայ ամեն տեսակ դժբաղդութիւնների

սրբապղծութիւն: Ների՛ր նրան, աստուած իմ, աստուած իմ...

— Եկեղեցին, հա՛, հա՛, հա՛, եկեղեցին վարդապետների, եպիսկոպոսների մասուր է,— քըր-քիջով ասաց Պոլը...

— Աստուած իմ, աստուած իմ,— կրկնում էր մաղամ Սուղանը:

— Աստուած չկա,— զոռաց Ժանը բռունցքը սեղանին հարւածելով:

— Անօթի փորն աստուած չունի,— յարեց Ալֆրեաը, քթից-բերանից ծուխ արձակելով:

— Աստուա՜ծ, ո՞ւր է նա, բարի աստուածը, չի տեսանք... Հացն է աստուածը,— հազի մէջ խեղդելով ասաց Մարսելը մի կոտոշ թուռ չորտելով յատակին, որ երկար ժամանակ ոտքով ոտկոչից տրորում էր:

Իսկ Լուին արմունկը դինկին յենած, կզակը ափի մէջ, հեւում էր եւ աչքով-ունքով քաջալերում Շարլին:

— Ասա՛ր, Բրեյ,— զոռաց մեքին Ժանը:

Ընդհատող ոտքի ելաւ Շարլը, արձակից չափիկի կռճակը, որ ճնշում էր կռնորդը եւ կրակած աչքերը զարձրեց Սուղանին:

— Այդ դեռ ոչինչ, այդ դեռ ոչինչ. պէտք է սպանել, ջախջախել, մորթել բոլոր բուրժուաներին, կապիտալիաններին, բոլոր, բոլոր հարուստներին:

— Այո՛, այո՛, այո՛, բոլորին, բոլորին,— զրդուած զոհերն ընկերները, բացի Անտրոլից եւ Աբշակից, որոնք լուռ ու զուսպ լսում էին:

— Բայց չէ՞ որ դուք քրիստոնեա էք: Այս ի՞նչ բարբարոս բաներ էք ուզում. եւ չէ՞ որ հարուստները մեր եղբայրներն են,— սարսափած ասաց Սուղանը:

— Նրանք մեր եղբայրները չեն...

— Ով հաց տա ինձ՝ նա է իմ եղբայրը...

— Եղբայրը՝ եղբօր բերնից հաց չի խլի...

— Այո՛, հարուստները մեր եղբայրներն են, մաղամ Սուղան, բայց նրանք մեր կայէն եղբայրներն են: Այս մէկը լաւ իմացիր,— մօտալ հանդարտութեամբ ասաց Ժանը:

Շարլն առաջ անցաւ.

— Շատ դեղեցիկ, ասացէք խնդրեմ, բայց ո՞վ է խեղճ աշխատաւորի արիւնը ծծում, հոգին հանում:

— Ո՞վ է նրա աղջիկներին պառնիկ զարձնում ու սիրում մայթերի վրա:

— Մեր հարուստ եղբայրները:

Ո՞վ սարքեց այս զարհուրելի պատերազմը, ուր բանն մէկին երեսատասող կանգներ կոտրում, հազարների տակ: Եւ դեռ այդ զաղանը չի յագեցնել:

Ո՞վ միլիարդների հարստութիւնը ծուխ զարձրեց կուռ դաշտերում, մինչդեռ այդ միլիարդները մարդկութիւնը կը բախտաւորացնէին, քաղաքութիւնը կը վերացնէին:

Մեր հարուստ եղբայրները, միշտ այդ հարուստները:

— Ճշմարիտ է ասում Շարլը, ճշմարիտ է ասում,— ձայնեցին կլոշարները:

— Բայց վերջապէս ի՞նչ մեղաւոր են հարուստներն այդ բանում: Պատութիւնն է պատերազմ անողը, հարուստների ձեռքին ի՞նչ կայ... Թղաւորները, նախարարները, եւ այն էլ հայրենիքի համար, — պատասխանեց Սուղանը Շարլին չհայելով:

— Ի՞նչ հայրենիք. սուտ բան է, չկայ հայրենիք: Ինձ համար մի տաք սենեակը հազար հայրենիք արժէ,— կրքոտ հեղնեց Պոլը:

—Հիմա լսիր ինձ, խենթ ծերուկ Շարլի. ասում ես հարուստները մեղաւոր չեն, հա՞: Ես խելքդ չի հասնում, չվիրաւորւես, իմ քոյրս էլ, Մաթիլդը, նոյնպէս է մտածում... Պատութիւնը. ի՞նչ է պատութիւնը.— Հարուստներն են պատութիւնը: կայսր, թագաւոր, նախարարհ, բանակ՝ նրանց ծառաներն են: Դիտես ինչո՞ւ համար են պատերազմ անում քո անմեղ հարուստ եղբայրները — իրենց զրպանի համար, փողի համար, որի կենացը չմահացնենք: Բանկերի, ֆապրիկանաի, կապիտալիստի, բուրժուայի համար հայրենիք չկա ու չի եղել: Հայրենիքը — չուկան է: Միայն չուկա է պէտք նրան. ո՛չ պղպարութիւն, ո՛չ բարոյականութիւն, ո՛չ սէր, ո՛չ մարդկութիւն...

Իսկ մենք ինչո՞ւ պիտի կուենք այդ ոճրագործ չուկանների համար: Ո՞ւմ են հարկաւոր ժողովուրդների կոտորածները, ծերերի եւ մանուկների զարկը. զրանք մեզ հարկաւոր չեն. զրանք բուրժուային են պէտք: Դրանցից նա միլիոնների չահ է քամում, որպէս զի լափէ ու լակէ ոսկէ պալատների մէջ, չամպայնի հեղող թափելով: Այդ սրիկաները խնայում են մի փրանկ տալ քաղցածին, բայց հազարներ են տրում մի պոռնիկի կօչիկից չամպայն խմելու համար...

Իսկ մենք, հայրենիքի զաւակներս, մենք անօթի չնեռս, ի՞նչ ենք որ նրանց համար — մենք՝ մեր որդիներով եւ ամէն մարդ, իրենցից բացի,— «անծանօթ պիւռօ», մեռած կամ տակաւին ողջ եւ ուրիշ ոչինչ...

Ա՛ռ, զրանց բոլորին հաւաքել եկեղեցիների մէջ, քահանաների եւ սրբերի հետ միասին այրել, այրել...

— Անհնա՛, անհնա՛ կոտորել բոլորին... — մեքին Ժանն էր, որ իր զառն ձայնը միացրեց Շարլին, միասները տեսութեամբ զլուխները կախեցին:

Շարլը յաղթականօրէն նաեց: Սիպարեթը զրեց չրթունքին. Աբշակը վառեց լուցկին, իսկ Պոլը լցրեց բաժակը:

Ծանրացաւ մի լռութիւն:

Եօթը բերանից լուռ բարձրանում էր սիպարեթների թանձր ծուխը եւ չերմացած մթնոլորտը զարձնում էր կծու, աչքը ծակող եւ ծանրագին:

Անտրոլը, որ բանից նոր էր զուրս եկել,

սեւ բեմամասով ճղմեց–հանդգրեց վառող սիգարէթի վերջին մնացորդը եւ հանգիստ, խեղճ ձայնով դիմեց Շարլին.

— Շարլ, հազար ներողութիւն, ես էլ մի խօսք ասեմ... Շարլ, մենք ի՞նչ ենք, որ կարողանանք աշխարհը փրկել եւ մեր հաչիւը մաքրել հզօր բուրժուազիայի հետ: Մենք ի՞նչ ենք որ մենք կլուարներբըս, սանկիուլոտներս, խօսքս քո մասին չէ, մենք ոչինչ ենք, մենք փոշի ենք, մենք մարդու հաչի չենք, մեղ իսկի աշխատանք էլ չեն տալիս. մենք կամք չունենք, աշխատելու ընդունակ չենք: Մենք ոչինչ ենք, մենք լումպեն պրոլետարիատս, ինչպէս անուանում է մեզ պրոլետարիատը, այո՛, լումպեն պրոլետարիատը դէրօ է: Խօսքս քո մասին չէ, Շարլ Բրեյ...

Բոլոր ընկերները մէկ նայում էին Անատոլին, մէկ Շարլին:

— Ե՞ս — ես ձեղ հետ եմ, ես պատուաւոր կլուչար եմ. ինձ մի զրկէք այս փառքից: Ես չեմ ուզում ո՛չ բուրժուա դառնալ՝ ուրիշին աշխատեցնող, ո՛չ էլ պրոլետար՝ ուրիշի համար աշխատող: Ես համոզած կլուչար եմ,— բողոքեց Շարլը:

Անատոլը նոյն ձայնով չարունակեց.

— Ես էլ առաջ քեղ պէս էի մտածում, բայց Սանդէյլի բանտում կային բանւորներ, սոցիալիստներ, ցոյցերի մէջ, գաղտնի ժողովների մէջ բռնած, նրանց հետ ծանօթացա. նրանք ինձ չա՜ռ բան սովորցրին, չա՜ռ բան պարզուեց ինձ համար: Նրանք մտածները դրջոյկներ ունէին, ծածուկ կարդում էին եւ ինձ, իմ նմաններին բացատրում: կարգացին Մարքսի մանիֆեստը...

— Այո՛, դիտեմ, երբ տասերդ ժամանակ կարդացել եմ Մարքսի մանիֆեստը եւ շատ բաներ: Ես ժողեսին անձամբ ճանաչում էի, շատ եմ լսել նրան,— ընդմիջեց Շարլը:

— Դա, ի հարկէ, կարդացել ես, կասկած չունեմ, իսկ ես նրա անունն էլ միայն լսել: Բանն այդ էլ: Ես նրանց գործի հետ ծանօթանալով տեսա, որ մենք ոչինչ ենք, լումպեն պրոլետարիատը: Նրանք են ուժը, պրոլետարիատը, նրանց կազմակերպած են ամբողջ աշխարհի մէջ, ընկերութիւններ ունեն, փող ու գանձ ունեն, ժողովներ, թերթեր, դէկավարներ, պարլամենտներում նեղկայացուցիչներ. նրանք դրօշակ ունեն, ամեն տեղ մեւնոյն դրօշակը... մենք ոչինչ չունենք, խոլորովին, բոլորովին: Պրոլետարիատը մեծ ոյժ է, նրանց դրօշակի տակ մեկնումնեն բանւորներ... Ապագան նրանց դրօշակինն է...

— Ըսէ տեսնենք,— խռպոտ ձայնով միջամտեց Ժանը, բայց նրանք կուռղ չեն. վախկոտ են, նրանք հաց ու տուն ունեն, կորցնելու բան ունեն, իսկ մենք ի՞նչ ունենք կորցնելու... մենք անօթի ենք, անտուն, թշւառ, ուրեմն աւելի անվախ կը կռւենք, աւելի վրէժխնդիր — աւելի կատաղի, գազանացած: Մենք ենք, որ պիտի քանդենք, աւերենք, հրդեհենք, ապականենք: Մեր տասածը դեւն է, մեր ընկերը սատանան է... եւ վերջապէս մենք էլ քիչ չենք, մենք էլ ամեն տեղ ենք, ամբողջ աշխարհում...

— Ձէմարիտ ես ասում, Ժան,— հանդիստ ձայնով հակաճառեց Անատոլը,— մենք կատաղի կը կռւենք, մենք դիւացած ենք, մենք կ'այրենք, կ'աւերենք, կ'սպանենք, բայց ի՜նչը — տները, չէնքերը, հարուստներին, բայց մենք չենք կարող քանդել հին կարգերը, հին օրէնքները, կործանել կապիտալիստական ընկերութիւնը. նրանք նորից կը մնան, եւ աւերւածը աւելի փառաւոր կերպով նորից կը չինեն, որովհետեւ մենք նպատակ չունենք, մենք չգիտենք, թէ քանդածի տեղը ի՞նչ դնենք: Մենք դրօշակ չունենք: Իսկ պրոլետարիատը դիտէ, թէ ի՞նչ է ուզում, ինչո՞ւ է կռւում, եւ ի՞նչ պէտք է անէ, ի՞նչ նոր կարգեր պիտի չինէ: Նրանք դրօշակ ունեն:

Ա՛յ, իմ ասածը սա է,— երբ որ պրոլետարիատն էր մեծ կռիւը բանս բուրժուազիայի դէմ, մենք պիտի նրա բանակի մէջ լինենք որովհետեւ նա է այն միակ ոյժը, որ պիտի կարողանա փրկել աշխարհը եւ մարքսի հաչիւները բուրժուազիայի հետ, նա է, որ պիտի կարողանա հին կարգերի տեղ նոր կարգեր դնել, ուր բոլոր մարդկանց համար, ամբողջ աշխարհի մէջ, պիտի լինի հաց, ազատութիւն, երջանկութիւն: Իսկական «ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն», որ ամեն տեղ կարդում ենք, նոյն իսկ բանտի դրան ճակատին, բայց ո՛չ մի տեղ չենք գտնում:

Պրոլետարիատը քանդող եւ չինող ոյժն է, իսկ մենք՝ միայն քանդող:

Ես հիմա մի փափաք ունիմ... Ա՜խ, եթէ կարողանայի մի գործարանի մէջ բանւոր լինել, կը մանէի պրոլետարիատի կազմակերպութիւնների մէջ, կը կանդնէի նրանց դրօշակի տակ, եւ բանատուր կը լինէի, որովհետեւ կեանքիս մէջ նպատակ կ'ունենայի... իսկ հիմա ի՞նչ, հիմա ի՞նչ եմ որ ես, ի՞նչ, ի՞նչ...

Անատոլի ձայնը կամաց–կամաց լքնելով, ադօտանալով մարեց տաք եւ հեղձուկ լուսթեան մէջ:

Շարլը գլուխը հակեց կրծքի վրա: Միւս ընկերները լուռ էին, ծանր տրամադրութեամբ: Աբսէյլը չատ էլ լսել Շարլի ճառերը մի՜չ մի՜եւնոյն իմաստով. բողոք եւ կիրք, զայրոյթ եւ ցասում, որոնք աւելի էին դառնացնում եւ մթագնում նրա հոգին: Իսկ լսելով Անատոլի խօսքերը, մոայլ դէմքը հետզհետէ պարզուեց ու պայծառացաւ: Հիմա նա խանդավառ աչքերով դիտում էր ախորժ, լուռ Անատոլին:

— Գլուխս ծանր է,— ասաց Շարլը,— ձեռքը ճակտին տանելով... Անատոլն իրաւունք ունի, բայց ես կը մնամ միչտ համոզած, պատուաւոր կլուչար... Անատոլը Սանդէյլի համալսարանն է աւարտել. Սորբոնը ոչինչ է, Սանդէյլի միկայականն չ բանը... Միչտ տուն չեմ գնալու. ինձ էլ, Աբշա-

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԱՆՁՐԵՒԸ

Մթին ամպերէն, կապոյտ ձիւներէն եւ սառն աղբիւրներէն ակունքներէց գլոր-գլոր իջնում է Զորագետը, գարնանը՝ հեղեղների ազմուկով, ամառւա տապին՝ զով կոհակներով եւ աշնանը՝ դեղնակարմիր տերեւներով, որ հաւաքում են ջրերը ձորերում: Ցեղո ջրերի վրա, նուրբ արահետների վրա ծանրանում է ցուրտ մառախուղը եւ լռութեան բարձր աշխարհում մազում է ձիւնը:

Տխրութիւն, ահ, լռնային երկրի երկար ձմեռ...

Աբդէն տերեւաթափ են թզենիները: Անտառում երեւում են հացենի ծառերը նարնջագոյն տերեւներով, կաղնիները՝ բաց դեղին եւ կարմիր տերեւներով, տանձիները, որոնց չուրջը չոր խոզալի վրա դիչերում է մի գազան: Ծառից ընկնում են տերեւները, ահաւոր կանչում է կոյր մուշտակը եւ բոլորովին մօտիկ, դեղնած սաղարթի մէջ վայտատարը կուռցով թմրկահարում է կեղեւը: Անտառում մառախուղ է, կաթում է խոնաւութիւնը մամուռների վրա, ծառերի վրա եւ քարափների լանջին: Մի խանգարած մատուռի առաջ դեռ մխում է չորան Սաթոյի կրակը: Ես դում եմ ուշարներէ՝ անձրեւից տաղացած բրդի հոտը: Ցեղո իրար եմ հաւաքում կրակը եւ մոխիրների տակ կարդում դերեզմանքարերի երկաթագիրը՝ «Երեմիա սուրբ ծերունի»... Ուշում են քարափի ուռիները: Բարձրերում բուք կա եւ լռնային բադերը մառախուղի միջով իջնում են դէպի տաք ձորերը:

Ահա քարանձաւը... Նստել է որսկան Զատին, ոտքերի առաջ եղջերուն փռել է բարակ վիզը եւ սառած աչքերով նայում է գորշ մշուշին: Քամուց ակին էլ միւս անկակում տեղ տուր քննեք. մի այնպիսի տեղ, որ այս ազատ օտարականը ոտքերը մեկնած քնի...

Սրճարանի դուռը բացին, որ ծուխը քաշի եւ թարմ օդ ներս գա: Կլուշարներից երկուսը մաքրած սեղանի առաջ տեղ բռնեցին՝ քնելու պատրաստուելով: Մոացածները պառկեցին յատակի վրա, Անատոլը մի պարկ փռեց յատակին, մի երկու լրագիր՝ իրրեւ սաւան պարկի վրա եւ գլխի տակ դրեց տոպրակը:

Ամիսներից ի վեր առաջին անգամ լինելով՝ Աբշակը հանուց եւ ոտներն ազատօրէն տարածելով, պառկեց թախտի վրա: Քունը չէր տանում, ուղեղը բորբոքած էր, մտքերը լարուած:

Անատոլի ասածները յեղափոխել, լուսաւորել էին նրա հոգին: Եւ Անատոլի փափաքը՝ բանուոր լինել՝ իրեն համար էլ տենչալի եւ հմայիչ նպատակ էր դարձել: Զգում էր, որ գտել է իր ուղին՝ այս խաւար գուբից էլնելու:

Զգում էր իրեն փոխուած, կամքով կարծրացած: Աչխարհում իրեն առաջ նգէալ էր տեսնում եւ կեանքի մէջ — խմաստ: Մտնել գործարան, դինուոր լինել պրոլետարիատի բանակում, պայքարել Քչաոութեան դէմ, Քչաոութիւնը ստեղծող մարդկանց եւ կարգերի դէմ: Մեռնել, նոյն իսկ մեռնել Քչաոների ազատութեան, բախտաւորութեան համար:

Ա՛յ, մեռնելը հիմա դիւրին է, այնպէս հեչտ է հիմա մեռնելը, եւ զեղեցիկ այս զազափարի համար, այս կռւի մէջ...

Եւ Աբշակը դիչերւա լռութեան մէջ մեկնում է երկու ձեռքը պրոլետարիատի ազատարար դրօշակին: Իր հոգւով, մարմնով, արիւնով բոլորովին պատրաստ...:

Ծռւում է որսկանի ապետակ միրուքը, նրա ոտքերի վրա բուսել է մամուռը: Կարմիր մասուրները կան մատների վրա: Նա նայում է ինչպէս եղջերուն, չդիտես խեղճ աղերսով թէ՞ անթարթուն աղօթքով: Գուցէ խարոյկի է եղել նրա մօտ: Վառուել է չերուխը խարոյկի կրակից, եւ գիչերւա ահից կուչ եկած թռչո մանուկներին պատմել քարանձաւներում քրքջացող այտերի եւ մարդադող ալքերի հեքեաթը, երկա՛ր, ինչպէս լռնային երկրի ահաւոր ձմեռը:

Գիվում է ձորը անյայտ ազմուկից, դողում է գետինը, դողում են ծառերը եւ տարտամով տեղում աշնան անձրեւի ծանր կաթիլները:

Գիվում է քարանձաւը եւ լսում եմ մի ձայն, որ արձագանգի պէս հնչում է մութ վչակից:

... Էս խոր ձորերում
Էս իմ չորս քսան տարիս լրացաւ,
Ոչ մի խնդութիւն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անդամ աչքս լիացաւ:

Ուշում են մասրինները, որ բուսել են քարափի լանջին, որոնց խառնուել են այն տեսիլք ծերունու մեռած մազերը: Ցեղո ազմում է ամբողջ անտառը, քամին է չառաչում եւ հողմահալած մառախուղը կորչում է վչակներում, մթնին քարանձաւներում: Կաղնիների բաց դեղին սաղարթի մի չից աշնան արեւը լուսաւորում է փափուկ արահետները:

Ծաղող խնդութեամբ իջնում եմ գետափը:

Վերեւում քարանձաւների առաջ, մնացին այն լուսերես ծերունիները, որոնք ապրեցին «ամեն մեռնողին երանի տալով», ոտքերի առաջ մի մեռած եղջերու...

* * *

Գետը:

Գետի վրա, գողպատառ լաթերից կախած օ-ձորւում է մի կամուրջ: Այն ափին բարձրացել է հիդրոցենտրալի բամմայարկ չէնքը, որի վիթխարի ապակիներն արտացոլում են Լոռու ձորի ժայռերը, անտառը, աւերակ մատուռը եւ այն երեք տունը, որ ծառել են քարափի գլխին:

Շէնքի ներսը՝ այս ձորերին անծանօթ նոռ-դեռով խլրտում են մարդիկ, որոնք հերոսական ջանքերով եւ դժւար զրկանքներով հաստատեցին լոյսի այս ամբոցը: Ահա երկաթակուռ բետոնի անկործան եւ անփոխարէն հունով, Ձորագետի ջրերը բարձր ժայռից իջնում են ծանր տուրբիններին վրայ: Ամէն թափով պտտւում է սիւնը, հաղիւրաւոր մէքենաներ դարձ են անում, ոլիմպոյ գառնում եւ վերեւի ընդարձակ դահլիճում դենեռատորը երկնում է հազար-հազար կիլովատ:

Մէքենաների ժխորի մէջ լսում եմ տարիների յամառ աշխատանքի պատմութիւնը — «Երեք ապ-րիզատ, իւթաքանչիւրը 10,500 ձիու ուժ... բացի դրանից, մի պակաս ազրեգատ... ընդամէնը 32 հազար ձիու ուժ: Օդային փիդերները տանում են այդ ուժը դէպի պղնձաձուլարանները, դէպի գիա-նամիդի եւ գրանիտի գործարանները, դէպի Սեւ-ծովեան: Ցեւտագայում մի պիծ կը միանան Քա-փանեան: Ցեւտագայում մի պիծ կը միանան Լենի-նականը, Երեւանը, եւ հիմք կը դրւի Հայաստանի էներգետիկ հզօր հանգոյցին»:

Զարթ աղմկում են մէքենաները, եւ դժւար է լսւում այդ պատմութիւնը: Բայց պատուհանից նոռ-դեռով նայում է տատասկների մօտ եւ ուշադրութեամբ նայում է պղնձէ սլաքների ընթացքին: Նա երբեմն բաց է անում պատուհանից նայում է դիմացի լեռներին, անտառին եւ այն երեք տանը, որ կուչ են եկել քարափի գլխին:

Նրա կապոյտ աչքերից, նիհար եւ բարձր հասակից երեւում է այդ լեռների մարդը, անբան հովիւների չառաւիղը՝ լոռեցի բանւորը: Ոչ ահ կա սրտում, ոչ խոնարհ վախ աստծուց, քամից, ջրերից ու չարչուց:

Լոռու ձորում կը նստի ձմեռը եւ ծմակներում կը ոռնա քաղցած գազանը, հոտոտելով նա կը հասանի մինչեւ քարափի եզերը եւ ահից չէտ կը դառնայ մինչեւ գարնան ողողած ձորը:

Նա, երբ ուռնի լոյսերով ողողած ձորը:

Ձմռան գիշերը լուսաւորը դահլիճում մարդը կը լսի մէքենաների դարթ ազմուկը, ապա նորը կը ճանապարհներով կը գառնա տուն եւ իր թուխ մանուկներին կը պատմի, որպէս մի առասպել, այն ժամանակները, երբ քար ու քարափների վրայ, մէջերը կթած, մէջերին ծանր բեռ, բարձրանում էր լոռեցին իր գիւղը՝ խաւարի ու աղքատութեան մագիլներում: Այն ժամանակները, երբ «մի տուն լիքը մանուկներ» ահով էին լսում եւ բաբել ոռնոցը, եւ պարտատիրոջ ոռնաձայնը... Ապա կ'անցնի նորագ օրերի պատմութեանը, երբ Լոռու ձորում մի խեղճ Զաոի սպանից թաւալին եւ «գրկանը» նրան քշեց Սիբիր: Կաւանդի եւ բռնական նոյեմբերը, որպէս նոր պատմութեան սկիզբ, կը պատմի եւ նրանց մասին, որոնք այս ամայի ձորում բարձրացրին լոյսի առաջին ամբոցը...

...Դուրսը մագում էր բարակ անձրեւ ջրերի վրա, արահետների վրա եւ գեղնակարմիր անտառի վրա...

Այն կապուտաչեա լոռեցին մերթ նայում էր պղնձէ սլաքներին եւ մերթ արահետին, որով մի օր էլաւ քարափի գլխին ծառած տներից եւ այս-տեղ, այս նոր ամբոցի կառուցման հետ, նրա ներսն ամբացաւ մի նոր հաւատ, նոր բարբառ...

* * *

Ես նայում եմ նրան եւ լիշում իմ երկրի հին պատմութիւնը:

Քարերն ու մագպաստներն աւանդում են նրա քաղաքների կործանումը եւ սուր, եւ գաղթ:

Ինչպէս մի եղգն՝ նա խոնարհել է գլուխը հողմերի առաջ եւ խաղաղութեան ժամին նորից յառնել: Նա սարսափահար փախել է իր գիւղերից, ինչպէս նախիրը հրդեհւող անտառից, ապատուն է չհնել քարափների վրա եւ անձրեւախառն քամին ծեծել է նրա հոդաշէն խրճիթը:

Մեր երկրի ժայռերի վրա յաղթողները անապարդ ոճով փորագրել են աւարառութեան եւ կողոպուտի պատմութիւններ, իսկ խաւար խուցերում պատմագիրը յօրինել է նոյնքան անամէջ առասպելներ հին փառքի մասին:

Ամէնին անմռունչ պահել է խանի, թալադի եւ սպիտակ ցարի մարակի տակ, երբեմն ըմբոստացել, որպէսզի միւս օրն ապաւինի իր տխուր երգերին եւ նորից քաշի հին լուծը: Նա հեռկել է ուրիշի հողը, սերմել է արիւն-քրտինք, իսկ աւիւծի բաժին առել են ոսկը, վանքը եւ ռուբլու արքան:

Նրա գոշ հիւղերի վրա երկինքը մաղել է արտասուքեան անձրեւը:

Ես նայում եմ այս նորագ մարգու աչքերին եւ կարդում նոր պատմութիւնը: Դեռ ինչպիսի չէնքեր պիտի բարձրանան մեր լեռների լանջերին եւ ձորերում, ինչքան քաղաքներ պիտի յառնեն տափարակների վրա եւ գործաձայն հնչեն կառուցողների նոր երգերը:

Երկրի եւ մարդկանց վրա, հերկած հողերի վրա, իջնում է աշնան բարերար անձրեւը...:

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

ՇՐՋՈՒՄ ԷՐ ԷՆՏՈՒԶԻԱՍՏԸ...

1.

Շրջում էր ֆնտուղիաստը երեւանի ծայրամասերով եւ մտածում էր: Նրա գլուխը լցած էր բազմաթիւ մտքերով եւ աչքերը՝ նոր տպաւորութիւններով: Եւ նա չէր կարող ընդհատել իր ճանապարհը, վերադառնալ...

Նրան գիւղում էին նեղ նրբանցքները, ապա յանկարծ լայն դաշտը, նորից նեղ նրբանցքները եւ հանդիպող ծառաչատ պարտէզները: Բարձր պարիսպներն իրենց եռեւում հազար ու մի հրաշքներ էին թագցնում նրա աչքից եւ չրջում էր նա, —ֆնտուղիաստը...

Շրջում էր ֆնտուղիաստը: Շրջում էր եւ նրան տանում էին նեղ փողոցները, կանգնեցնում մի դրան առաջ, ապա նորից քայլել տալիս: Եւ նա գնում էր, եւ նա ուրախ էր, որ չդիտեր, թէ ուր էր գնում: Իւրաքանչիւր անկիւնն իր եռեւում մի նոր տեսարան էր թագցրած լինում եւ իւրաքանչիւր թեքւածքը՝ նոր տպաւորութիւն:

Մի ժամ էր, ինչ նա ներս էր մտել մի նրբանցք եւ գնում էր, բայց դեռ ուրիշ փողոց չէր դուրս գալիս: Օձապտոյտ նրբանցքը դեռ ձգւում էր հազար ու մի քամահաճ զիգզագներով եւ հիացած ֆնտուղիաստը գնում էր...

Ահա նա դուրս եկաւ մի լայն փողոց: Լայն եւ ամայի: Փողոցի մի ծայրը թեքւում էր դէպի ինչ որ կողմ եւ կորչում, իսկ միւս ծայրը բացւում էր դէպի լայն եւ անծառ դաշտը: Թւում էր, թէ այդ փողոցով վերջանում էր նրբանցքների պատոմաան: Բայց ֆնտուղիասան իր փնտռող հայացքով դեռ մի ուրիշ նրբանցքի բացւածք այդ լայն փողոցում եւ կարօտով ներս մտաւ...

Նորից չրջում է ֆնտուղիաստը... Նա ոչ մի տեղ չի տեսել այս ամենը եւ երեւանը նրան թւում է աշխարհի ամենահետաքրքիր քաղաքներից մէկը: Ոչ մի տեղ չկան ծայրամասային այս զարմանալի անդորրը, այս ամայութիւնն ու չոգի այս թմրեցնող յատկութիւնը: Ոչ մի տեղ չկան այս տարօրինակօրէն նեղ եւ մարդկային հետաքրքրութիւնն այդքան զրաւող նրբանցքներ...

Ոչ մի տեղ չկա,—ստո՛պ...—ահա այս տեսարանի նման մի ուրիշը...

Ֆնտուղիաստը կանգ առաւ հիացմունքից քարացած:— Նրբանցքի միապաղաղ զոյչ պատերի չարունակութիւնն ընդհատելով՝ կանգնած էր երկարկանի տան մի պատ: Ինքնին, այդ պատը ոչնչով հետաքրքիր չէր: Բայց ահա, երեւում է տան ճակատը, որը գոնւում է պատէդի մէջ:

Տան ճակատը... Արեւելեան ո՞ր դեղեցկուհու ճակատն այդքան զարդարուն է եղել եւ այդքան դոյզդոյն... Եւ ո՞ր դեղեցկուհու աչքերն են այնքան խորհրդաստ եւ հետաքրքիր երեւացել իրենց եռեւում թագցրած զաղանիքներով, որքան այս լուսամուտները...

...Եւ ո՞ր աղջկա կուրծքն է այդքան զրաւիչ եւ սքանչելի թւացել, որքան այս երկար պատըզամբը...

Շրջում էր ֆնտուղիաստը եւ կանգ առաւ: Պարտէդի ծառերն իրենց խիտ տաւերի տակ ծածկել էին այդ դեղեցիկ տունը: Եւ այդ տունն ինչի՞ էր նման.—տա՞ն էր նման, թէ՞ պալատի, տա՞ն էր նման, թէ՞ երգի, տա՞ն էր նման, թէ՞ երգի...

Եւ ներսից, պարտէդի պատի եռեւից, լըսւում էր, թէ ինչպէս խոխոջում էր ջուրը եւ գնում էր, չգիտես որտեղից եկած եւ դէպի ուր չարունակելով: Ֆնտուղիաստը չէր յիշում, որ իր չրջագայութեան ընթացքում նա այս մօտակայքում ջուր տեսած լինէր...

Զարմանալի էր եւ սիրելի... Իսկ չուրջը, նրբանցքում, ոչինչ որոշել չէր կարելի: Երեւում էին միայն նրբանցքի երկու ծայրերը, որոնք կորչում էին իրենց թեքւածքներում: Ուրիշ ոչինչ չէր երեւում եւ ֆնտուղիաստը չէր կարող որոշել չրջակայքի պատերը նոյնիսկ մօտաւոր չափով: Բարձր պատերը, նեղ նրբանցքը եւ նրա զիգզագութիւնն իրենցով թագցնում էին այդ տեղերի զաղանիքը:

2

Բայց ահա պատչամբը... Այնտեղից, երեւի ամեն ինչ կերեւա... Երեւի մի անսովոր տեսարան կը բացւի դէպի նրբանցքների, պարտէդների ու տների խճճւած ցանցը...

Այսքան ժամանակ էր, որ չրջում էր ֆնտուղիաստը, բայց ոչինչ որոշել չէր կարող...

Առաջին միտքը, որ պատկերւեց ֆնտուղիաստին, այդ այն էր, թէ ովքե՞ր են ապրում այդ տանը: Անհնար էր, որ նման դեղեցկութիւնն իր մէջ թագցրած չլինէր աւելի նուրբ, աւելի խորը մի դեղեցկութիւն...

Անհնար է,—մտածեց ֆնտուղիաստը,—որ այս տեղ պատահներ եւ ծերեր ապրեն: Անհնար է, որ տղեղ կամ չար մարդիկ ապրեն այդտեղ: Անհնար է ենթադրել ,որ այդ երգի նման տանն ապրում են չոր, զործնական մարդիկ...

Իսկ ո՞վ, ո՞վ է ապրում այդտեղ...

Ֆնտուղիաստը մտածում էր: Նրա մտքերը չրջում էին բոլոր ուղղութիւններով, բոլոր կողմերով եւ կանգ էին առնում միեւնոյն կէտի վրա: Այդ տանն ապրում է մի լա՛ւ, մի սիրելի՛ աղջիկ...

—Կարինէ,— մտածեց ֆնտուղիաստը:

Նա նորից նայեց պարտէդից երեւացող ծառերի գագաթներին, պատչամբին, լուսամուտներին, որոնք փակ էին եւ վարագուրած:

—Կարինէ՛,— մրմնջաց Հնոտուղիաստան ինքնիրեն:

Պատշգամբի վրա կախւած ծառի ճիւղերը խըշշացին եւ նորից կանգ առան: Մի թեթեւ հով եկաւ եւ անցաւ: Հնոտուղիաստին թւաց, թէ մէկն իրեն դուրգուրեց:

Վերեւում, տան դուռը բացւեց պատշգամբի մէջ եւ՝

—Կարինէ՛,—բացականչեց Հնոտուղիաստը:

Աղջիկը չլսեց: Նա գնաց դէպի պատշգամբի մէւս ծայրը եւ այնտեղից վերցնելով մի կապոյտ ջրաման՝ վերադարձաւ: Նրա բարակ ղդեստի տակ ղողացում էր աղջկա կազմւածքի ամբողջ դեղեցկութիւնը: Ոտները մերկ էին եւ երեւում էին իրենց կաթնագոյն գոյնով: Նրա մի ուսն անփութօրէն բացւել էր եւ նրա կրծքի սպիտակութեան վրա ծառն իրա կանաչաւուն լոյսն էր գցել: Նա ունէր երկար մազեր, որոնք շող էին եկել մէջքի վրա:

Իսկ դէմքը...

Հնոտուղիաստան այդպիսի դեղեցկուհին չէր տեսել...

—Կարինէ՛— մրմնջաց նա:

Մի վայրկեա՞ն տեւեց դա, թէ՞ մի ամբողջ ժամ,— Հնոտուղիաստան ասել չէր կարող: Միայն այն ժամանակ նա սթափւեց, երբ աղջիկը նորից ներս մտաւ տուն:

—Կարինէ՛— մտածեց Հնոտուղիաստը, կրկնելով իր տարիներով երազած, բայց անգո աղջկա անունը...

... Նորից չրջում է Հնոտուղիաստը, բայց նրա մտքերն անդադար զբաղւած են աղջկանով: Ահա մի քանի քայլ եւս գնաց, բայց չարունակել չի նա մի քանի քայլ եւս գնաց, բայց չարունակել չի կարող: Նա վերադարձաւ: Նա նորից չտեսնում է դէպի

— Կարինէ՛...

Պատահականօրէն յայտնւած

— Կարինէ՛...

Սքանչելի տունն ու պարտէզը

— Կարինէ՛...

Եւ դէպի անծանօթ, հրաչալի աղջիկը...

Դարձ է Հնոտուղիաստը: Կանգնում է իր նախկին տեղը եւ նորից նայում է: Նրա կուրծքը լիքն է սիրով ու վշտով, կարօտով ու տանջանքով: Նա ուզում է ճչալ, կանչել նրան, նայել վերեւ դէպի պատշգամբը եւ խօսել նրա հետ... խօսել... խօսել նրան, որ երկար տարիներ ինքը նրան է փնտռել եւ նրան է երազել: Բայց ոչ մի տեղ չի գտել եւ չի էլ գիտցել, թէ ուր է տպրում նա,— կարինէն...

Եւ ահա, ահա յայտնւել է նա... Այսպէս յանկարծ եւ այսքան պատահաբար... Մի՞թէ այժմ պէտք է ընդմիշտ բաժանւել, հեռանալ: Մի՞թէ Կարինէն եւս չի սիրում իրեն, մի՞թէ նա եւս իրեն չի երազել եւ այժմ մի՞թէ չի մեկնի իր սպիտակ բարակ թեւերը եւ չի մրմնջա.

—Եկ վերեւ, ինձ մօտ եկ, Հնոտուղիաստ...

3.

Հնոտուղիաստը կը նստի պատշգամբում, կը լսի ջրի եւ ծառերի խշշոցը եւ իր կարինէին մեղմ կը դրկի... իր կողքին կը նստեցնի նրան եւ կը նայի նրա նուրբ եւ փխրուն կազմւածքին, մարմնի գուռնատ- կաթնաւուն երանգին, կանաչ աչքերին եւ կը չոյի նրա թոյլ երկար թեւերը...

Ո՛վ կարող էր ենթադրել, որ Հնոտուղիաստն հենց այստեղ պիտի գտնէր նրան, ում այնքա՜ն փնտռել է...

Ահա իր երջանկութիւնը... Նա եկել է, մտել այս նրբանցքների լաբիրինթոսի չգիտես թէ որ անկիւնը, բնակւել է այս տանը, որպէսզի մի օր էլ, իր եռեւից, կոյր պատահականութեամբ իր մօտ բերի Հնոտուղիաստին...

—Կարինէ՛...— մրմնջում է Հնոտուղիաստը եւ չի համարձակւում կանչել նրան, թէեւ վստահ է, որ Կարինէ է նրա անունը եւ նա այս տանն ապրում է մենակ...

Նրան զեղեցիկ չի թւում այդ.— կանչել աղջկան: Նա նորից դուրս կգա պատշգամբ: Եւ երբ նորից դուրս գա, Հնոտուղիաստը կը նայի նրան իր սիրող աչքերով եւ աղջիկը կդգա այդ...

... Իսկ երբ նա նայի Հնոտուղիաստին, Հնոտուղիաստը կտա նրա անունը.

— Կարինէ՛...

Հնոտուղիաստը, որն այդքան չրջել էր եւ յոգնութիւն չէր զգացել, այժմ յոգնեց այդ ներքին հոգեկան լարւածութիւնից: Նա յեծւեց դիմացի պատին եւ սկսեց սպասել: Նրա աչքերն անթարթ սեւեռւած էին դէպի պատշգամբ, ուր ոչ ոք չէր երեւում: Երբեմն միայն, քամին չարժում էր պատշգամբի վրա կախւած ծառերի ճիւղերը եւ այդ ժամանակ Հնոտուղիաստին թւում էր, թէ նորից գալիս է նա,—Կարինէն...

Եւ գոհ էր Հնոտուղիաստը, որ ծառերի կանաչն արդէն յոգնեցնում է իր աչքերը: Երբ որ դուրս գա այդ սպիտակ աղջիկը, նա Հնոտուղիաստի յոգնած աչքերում կանաչ լոյս հազածի պէս կերեւա եւ այդ աւելի երազական կը լինի...

4.

Երկար չսպասեց Հնոտուղիաստը: Ահա նորից դուրս եկաւ աղջիկը եւ սկսեց պատշգամբն աւելել: Աւելելիս, կացած դիրքով, նա տեսաւ Հնոտուղիաստին եւ հետաքրքիր նայեց:

Հասել էր վայրկեանը Հնոտուղիաստի համար: Նա հիացմունքով նայեց աղջկա աչքերին եւ չչնչաց.

— Ո՞վ ես դու...

— Ե՞ս: Ամալիա Յարութիւնեան, կոմսոմոլուհի: Ի՞նչ ես ուզում, ընկեր...

Հնոտուղիաստի աչքերը մթնեցին: Մի վայրկեանում չգացաւ նրա երազը:

— Ես այստեղ կորցրի իմ Կարինէին... — մրմնջաց նա:

ՍՏ· ԶՈՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

ՍՏ· ԶՈՐԵԱՆ

Ես չեմ տա այս մարդու ո՛չ անունը, ո՛չ ազգանունը, կասեմ միայն, որ ես նրան հանդիպեցի երևաքուղային վագոնում, նոյեմբերեան մի գիշեր:

Այդ գիշերը՛... Կրկին ահա պատկերանում է ինձ այդ մռայլ գիշերը վագոնում:

Մեր գնացքը նոր է դուրս եկել Թիֆլիսից եւ, մալականի ֆուբրդոի արագութեամբ, չբնկոցով չարժւում է առաջ՝ դէպի Կարս: Կէս գիշերից անց է· դուրսը բուք է ու խաւար· նոյեմբերեան այն բուք ու խաւարը, որ միշտ սարսափ է ազդում ուշացած ճամբորդներին եւ մենաւոր տան բնակիչներին: Մեր չուրջը բուքն հեծեծում է խաւար դաշտում եւ, կարծես, մոլեգնած գազան՝ վայրագ մռնչոցով, վագում է կառախմբի եւեւից: Վագոնի մեր մասում բոցկլտում է կիսավառ մոմը եւ իր երերուն լոյսով ուրւագծում հարեւաններիս դիրքն ու կերպարանքը: Ութ հոգի՛ են, եօթը հայ գինուորներ՝ չինելներով ու մոխրագոյն, գործովի փափախներով, իսկ ութերորդը քաղաքացի է՝ հագցրած վերարկուով եւ կաշէ դեղին զանկապանոներով: Նրա լեցուն, կլոր եւ ինքնագոհ դէմքը, փափուկ սպիտակ ձեռները եւ մատների չողչողուն մատանիներն այն տպաւորութիւնն են թողնում, որ նա կամ նոր հարստացած գաւառացի է կամ հարուստ ընտանիքի փեսա: Կարճ կտրած մազերը, խուզած բեխերը եւ յարաչարժ աչքերը վկայում են, որ այդ երիտասարդ քաղաքացին զբօսնական մարդ է:

Թիֆլիս կայարանից նոր ենք դուրս եկել· բոլորն արթուն են· կատարւում է սովորական հարց ու փորձ, թէ ո՛վ ո՞ւր է գնում, ո՞րտեղից է գալի՛ս: Պարզւում է, որ գինուորները գալիս են ռումինական սահմանից (կուբի դաշտից), իսկ գանկապանոներով պարոնը՝ Թուսաստանից: Ձորս տարուա պատերազմից յետո գինուորներն, առաջին անգամ, գնում են իրենց տները, քաղաքացի պարոնը էլ՝ հայրենիքի պաշտպանութեանը մասնակցելու, իսկ ես՝ կարս:

— Այդ լաւ է· մենք ուղեկից ենք,—ասում է պարոնն ուրախ տեսքով դիմելով ինձ.— միասին՝ ճանապարհը ձանձրալի չի լինի...

Ծանօթանալուց յետո, ես բարձրանում եմ վագոնի վերին մասը՝ քնելու, թողնելով պարոնին եւ գինուորներին մեասին: Կարճ մի ըոպէում նրանց միջեւ սկսւում է մտերմական եւ հայրենասիրական զրոյց: Ասում են պատերազմի մասին, թէ ինչ է սպասում Հայաստանին: Իսկ ես, լեզու չխմացող օտարականի պէս, լուռ լսում եմ նրանց:

—Շատ ուրախ եմ, որ դուք, հայրենակիցներ, օտար փրոնտներից վերադառնում էք ձեր հայրենի փրոնտը,— ասում է նորածանօթ ուղեկիցս գինուորներին:— Դա շատ ուրախալի է: Ժամանակ է, վերջապէս, որ հայերս կատարենք մեր պարտքը մեր հայրենիքի հանդէպ, մանաւանդ հիմա, երբ այնքան մեծ կարիք կայ կուռ ուժերի... Դուք, ի հարկէ, էրզրո՞ւմ էք գնում:

— Ոչ,— պատասխանեցին գինուորները,—մենք առայժմ գնում ենք մեր տները. չորս տարի է՝ չենք տեսել:

Ուղեկիցս զարմացաւ.

—Իո՞նչ էք ասում. իսկ ես կարծում էի՝ ուղղակի այնտեղ էք գնում... Այնքա՜ն կարիք կա կուռղների, գիւղե՞ր, այնքա՜ն կարիք կա...

Գինուորները լուռ են:

Ուղեկիցս շարունակեց.

— կարինէ՞.— հարցրեց աղջիկը վերեւից.— այստեղով, որքան որ գիտեմ, մարդ չի անցել: Ի՞նչ տեսակ կին էր, պառա՞ւ, թէ ջահել...

Ապա մի րոպէ մտածելուց յետո, բացականչեց·

— Սպասիր ամուսնուս հարցնեմ... նա երկար ժամանակ պատշգամբում նստած էր: Գուցէ տեսած լինի...

Ապա րղավեց—

—Վահա՞ն...

Ու մի քիչ սպասելուց յետո, տեսնելով, որ ամուսինը դուրս չեկաւ, նա ինքը գնաց ներս, նրան հարցնելու: Եւ երբ նորից դուրս եկաւ, բերելով բացատական պատասխան, ներքեւում, փողոցում, ոչ ոք չկար:

Ինտուիտիւան արդէն անհետացել էր...

— Ես էլ ահա գնում եմ այնտեղ՝ պարտքս կատարելու։ Ջնայած՝ հայրս էջեր թողնում, բայց այսպիսի մի ժամանակ հայ տղամարդը կարո՞ղ է տանը նստել...

Այո, նա գնում է ուղղակի զօրքի մէջ մտնելու եւ մտադիր է ծառայել իբրեւ հասարակ զինուոր, որովհետեւ միմիայն այդ ձեւով կարելի է սպասաւորել հայրենիքին։ Հէնց է, իհարկէ, բարձր պաշտօններ վերցնել եւ հրամաններ տալ. սակայն հայրենասիրութիւնը դրա մէջ չի. հայրենասիրութիւնն այն է, որ մարդ արհամարհելով ամէն տեսակ վտանգ՝ գնաց առաջին շարքերում կռուելու, իբրեւ հասարակ զինուոր։

— Այնպէ՞ս չէ, հայրենակիցներ։

— Ի հարկէ, ի հարկէ,— ասում են զինուորները։

— Այդպէս էլ ես, որոշել եմ արհամարհել ամէն տեսակ վտանգ եւ գնալ կռւել իբրեւ հասարակ զինուոր։ Եթէ վիճակուած է մեռնել, կը մեռնենք, միայն թէ հայրենիքը...

Յօսելով, ուղեկիցս հեռուհեռէ բարձրացրեց ձայնը, եւ նրա ձայնի վրա վագոնի հարեւան մասերից կարճ մէջտեղում մի խումբ զինուորներ չէր-ըղձացին նրան՝ նոր բաներ լսելու։ Դրանք ջոպատեց

Ես հաւատիացրի նրան, որ առանձին վտանգ չկա, իսկ եթէ լինի, երկաթուղու վարչութիւնը, կոնդուկտորները, մեքենավարը կը յայտնեն:

— Դո՛ւ,— արտասանեց ուղեկիցս եւ չարունակեց չվշվոցով նայել դուրս:

Ապա հանեց մի պապիրոս ու սկսեց ծխել:

Ես պատրաստւեցի քնելու: Եւ, չգիտեմ, որքան էի նընջել, մէկ էլ՝ յանկարծ, ականջիս դիպան հետեւեալ խօսքերը·

— Բարեկամ, մարդասպաս դնացքները ո՞ր կայարանում են հանդիպում իրար:

Հարցնողը ուղեկիցս էր:

Վագոնի հարեւան մասից նրան պատասխանեցին, թէ դնացքների հանդիպումը տեղի կունենայ հենց առաջիկա կայարանում, ուր հասնելու ենք չուտով:

—Իսկ այնտեղ հո վտանգ չկա՞,— լուսց նորից ուղեկիցն ձայնը, այս անգամ մեղմ, դղրւաւոր:

— Չէ՛,— պատասխանեցին դիւղացիները քընաթաթախ ձայներով:— Վտանգը դէնն ա, երկու սահնցի դէնը...

Ուղեկիցս նորից եկաւ լուսամուտի առաջ եւ նորից սկսեց չվշվացնելով նայել դուրս: Այս անգամ, կարծես, որոնում էր մէկին, որ հետը խօսակցի: Այդ երեւում էր նրա անհանգիստ հայեացքից, որ չուտ-չուտ նետում էր չուրջը: Եւ, իրաւ, մի քանի րոպէից նա նորից դարձաւ ինձ.

—Պարո՞ն... արթո՞ւն էք:

— Այո՛:

— Դիտէ՞ք ինչ դժրախտութիւն է պատահել ինձ:

— Ի՞նչ,— հետաքրքրւեցի ես:

Նա ձեռը տարաւ դէպի ծոցագրպանները:

— Երեւակայեցէք... Մի չատ, չա՛տ կարեւոր թուղթ եմ մոռացել Թիֆլիսում:

— Ոչի՛նչ, երբ հասնէք Էրզրում, կը գրէք՝ ի՛ուղարկեն,— հանգստացրի ես:

— Օ՛, ինչ էք ասում. անհրաժեշտ թուղթ է, կարող է կորչել:

— Պահանջեցէք, որ ապահովւած ուղարկեն:

Ուղեկիցս մոածմունքի մէջ ընկաւ:

— Ոչ, դժրախտաբար, ձեզ պիտի թողնեմ մենակ: Ստիպւած եմ վերադառնալ,— ասաց նա եւ, փոքր ընդմիջումից յետո, աւելացրեց:— կարսում, երեւի, կը հանդիպեմք:

Ուրա՞խ կը լինեմ: Ու յայտնեցի հաւցէս:

Այդ միջոցին չոգեկառքը սուլեց եւ, քիչ յետո, կայարանի լոյսերը մէկը միւսի ետեւից մեզ աչքով անելով՝ նահանջեցին կառամատի կողքով:

Ուղեկիցս պայուսակը վերցրեց:

— Դեհ, մնաք բարով,— ձեռը մեկնեց նա:— Յաւում եմ, որ ստիպւած եմ վերադառնալ: Դիէ՞ք, այնքա՞ն կարեւոր թուղթ է..

Ու դնաց:

Տասը րոպէ անց, երբ ես մեր վագոնի լուսամուտից դլուխս դուրս հանեցի օդ ընչելու, տեսա նրան պայուսակը ձեռին Թիֆլիս մեկնող, բայց առայժմ կանդ առած կառամատի երկարութեամբ վաղելիս:

Նա տեղ էր որոնում:

* * *

Անցաւ ամսից աւելի այս ճամրորդութիւնից, երբ ես կրկին վերադարձա Թիֆլիս, եւ մի երեկո, արդէն բոլորովին մոռացած իմ ուղեկցին, յանկարծ հանդիպեցի նրան կաֆէ Եունիոնում: Նա՝ երկու օրիորդի հետ նստած՝ թէյ էր խմում:

— Ա՛, բարեւ ձեզ— բացականչեց նա ինձ տեսնելով եւ, տեղից ելնելով, սպիտակ վարվիկ ձեռը մեկնեց ինձ:— Արդէն վերադարձո՞ղ էք. իսկ ես, երեւակայեցէ՛ք, կորցրած թուղթս դեռ չեմ դտել,— հառաչեց նա:— Իսկ այնտեղ այնքա՞ն կարիք կա կուղղ ուժերի, այնքա՞ն կարիք կա... Չգիտեմ՝ ինչպէս անել... Առանց այդ թղթի էլ՝ չեմ կարող դնալ...

Եւ նա դլուխը չարժեց վչտահար ու մտահոդ:

Ես չգիտէի ինչ խորհուրդ տալ, ուստի եւ չուտով բաժանւեցինք: Սակայն՝ ախո՛ռս, մոռացա հարցնել, թէ ի՞նչ թուղթ էր դա: Բայց մինչեւ այսօր էլ, ենթադրում եմ, որ այդ թուղթը մեր հայրենիքի պաշտպանութեան համար մեծ նշանակութիւն պիտի ունենար...

ՍԻՐԱՍ

ԿԵԱՆՔԻ ՄԱՐԴԸ

ՍԻՐԱՍ
Լենինականի «Բանուղ» Օրաթերթի խմբագիր

— Ամենաթանդ բանը երիտասարդութիւնն է, — կրկնում էր յաճախ Շերվանզադէն, ինչպէս իր գրած-քների, այնպէս եւ մեղ հետ խօսելիս:

Կը դար, փայտը տըկտըկացնելով յատակին, հայեացքով կը չափէր չորս կողմը ու կը նայէր թէչարանում կամ ճաշարանում որեւէ սեղանի մօտ եւ տրամադրութիւնն այնչափ կը բարձրանար, եթէ հետը խօսէիր երիտասարդութեան, սէրու, արկածների եւ առհասարակ կեանքի մասին:

Նա կեանքի մարդ էր, բառի բովանդակ իմաստով. նա մարդ էր ու ոչինչ մարդկային խորթ չէր նրան... իր կենսուրախութեամբ նա համակում էր ամենքին, զրկուն, քաջալերը էր արտայայտում սիրած բաների մասին ու ցաւում՝ տառապող մարդկանց ու տեսնէլ երեւոյթների մասին:

Մէկ անգամ ընկերներով Շերվանզադէին առած մէջնեղս թէյում էինք. խօսացկութեան նիւթը դրականութիւնն էր. յանկարծ դրողների մը դրական-ութիւնն էր. յանկարծ դրողների «կեանքը բոլոր կեանքը: Նոր էր լոյս տեսել «կեանքի բոլոր» առաջին հատորը, ուր այնքան հարուստ տեղեկութիւններ կային դրողների կեանքի մասին: Ցանկարծ որտեղից որտեղ խօսակիցներից մէկի գլխին փչից հաչել, թէ հին սերնդի դրողներից քանիսն մնացել. իսկ միւս խօսակիցը սկսեց հաչել, թէ ո՛ր դրողը ո՛ր տարիքում է մեռել...:

Շերվանզադէն այլ եւս չէր լսում, նա մտայլուեց, թւում էր թէ ինչ որ մի նոր բան է ուզում ասել, բայց դեռ սպասում էր. իսկ դրոյթի նիւթը չէր փոխուում: Շերվանզադէն յանկարծ փայտը նշանակալից խփեց յատակին ու ցասումով բացականչեց.

— Ես չատ եմ սիրում երիտասարդներին էլ են նստել ու խօսել, բայց երբ երիտասարդներն էլ են սկսում մահից խօսել, այդ չեմ սիրում:

Այնուհետեւ բոլորը զգուշանում էին եւ նրա ներկայութեամբ այդպիսի բաների մասին չէին խօսում: Նա չէր սիրում ծերունիների համար սովորական դարձած խօսքերը կրկնել, թէ՝

— Իմ ժամանակն անցաւ, մի ոտս գերեզմանումն է... կեանքը ձերն է...

Ո՛չ, այդպիսի բան նա չէր ասում. կեանքը նա իրենն էր համարում, նա ապրում էր ինչպէս երիտասարդ, թարմ ու պայծառ զգացումներով: Եւ այդ ոչ միայն խօսքով, այլ եւ իր կեցուածքով, իր չարժուձեւով էր ուզում ապացուցանել այդ:

1933 թուին Գրողների Տանը մի փոքր ժողովից յետո Շերվանզադէի հետ միասին դուրս եկանք փողոց. ես նրան ուղեկցում էի տուն. Գնունեան փողոցի անկիւնում նա ասաց.

— Մտնենք «Տուրիստ» մի մի բաժակ կոֆէ խմելու:

— Մտնենք,— ասի ես եւ ուղղուեցինք դէպի կաֆէ:

Փողոցը քանդուած էր ինչ որ վերանորոգման պատճառով... մայթը նեղ էր եւ անզգոյշ չարժուձեւ կարելի էր ընկնել առուակը... ես Շերվանզադէի թեւից բռնած առաջնորդում էի:

— Այս փողոցը լաւ չեն լուսաւորել, ասաց նա:

Ես հասկացա, որ նա ղրանով ուզում էր ասել, եթէ լոյս լինէր, նա կարող էր քայլել առանց իմ օգնութեան:

Այդ պահին նրա ոտքը ինչ որ բանի դիպաւ, նա խօսքն կանգ առաւ: Ես նայելով նկատեցի մի բաւական խոշոր քար՝ ընկած մայթի մէջտեղն ու անմիջապէս կացաւ, վերցրի այն ու շպրտեցի փողոցը: Շերվանզադէն զարմանքով ձեռնափայտով ստուգեց մայթը ու առաջ անցաւ եւ քիչ յետո դառնալով ինձ ասաց.

— Աբի քեզ մի առակ պատմեմ:

— Մեծ հաճոյքով լսում եմ:

— Արեւելեան մի քաղաքում,— սկսեց նա,— իր բակում փռած խալու վրա նստած էր մի իմաստասէր. ծխում էր ղէյլանը ու մտածում տիեզերքի բաների մասին: Դիմացի փողոցով անցնում էին ուղտի կարաւաններ, երիվարով ու հետիոտն մարդիկ: Ճամբի մէջտեղ ընկած էր մի քար. բոլոր անցորդները դիպչում էին քարին, ցաւեցնում իրենց ոտքը եւ բարկութեամբ առաջ շարժւում: Առաւօտից մինչ երեկո իմաստասէրը նայում էր այդ տեղին, դիտում մարդկանց ու ինքն իրեն ասում.

— Մի մարդ չտեսանք, մի մարդ չանցաւ մեր առջեւով:

— Ինչպէ՞ս, ով իմաստուն,— ասաց նրա ծառան լսելով այդ խօսքերը,— ընդհակառակը, այս-օր ամենից շատ մարդիկ անցան... ահա՛, տե՛ս,

ՎԱՀԱՆ ԹՈՒՐՎԵՆՑ

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

(Մէկ Հատուած Ծիրանի Ծառ Նորավէպէն)

ՎԱՀԱՆ ԹՈՒՐՎԵՆՑԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Քաղաքացիական պատերազմը բռնկեց եւ Աբեւհատի արեւուտ երկրում: Հրացանները սուլեցին եւ նահապետական գիւղի բարձունքներում: Ոմի էին ելել բոլոր գիւղացիները, որ տկլոր էին եւ որոնց մարմիններն այրել էին մարակների հարւածներից:

Եւ, մի գիշեր, գիւղն ամբողջ զարթնեց. Բրնդանօթները գոռում էին սարի կատարում:

— Եկա՜ն, սպիտակները եկա՜ն,— ձայն ուին գիւղի բոլոր ծայրերից:

Յուեաան սկսեց:

Սպիտակները մթնշաղին գրաւեցին գաւառական փոքրիկ քաղաքի երկաթուղային կայարանը եւ լցեցին դաշտը: Ապստամբ գիւղացիները նահանջեցին գիւղից, գիւղի հիւսիսային լեռնաշղթայով ձգուեցին դէպի նոր դիրքեր, իսկ սպիտակները խուժեցին դէպի գիւղը: Գիւղի բնակիչները եւս բարձրացան սարերը՝ ապստամբների ետեւից: Աբեւհատը կանչեց:

— Նանի՛, ա՛ռ, նանի՛, բոլորը գնացին, մենք մնացինք:

— Աղջի՛, մտի՛ր դոմը,— արձագանգ ուեց Նանին կիսախլացած վիճակում:

Աբեւհատը եւ Նանին չկարողացան փախչել եւ մնացին գիւղում:

Աբեւհատը մտաւ դոմը, փաթաթուեց «Մարո»-յին: «Մարոն» բառաչեց աղկոտուր:

Դրսում լուեց ծանր ոռնաձայնների ազմուկ, ձիերի խրխինջ, իսկ գիւղի հիւսիսային լեռնաշղթայից սուլում էին հրաձգանները:

Սպիտակները, զայրացած եւ այլանդակուած, բռնեցին գիւղում մնացած պառաւներին:

— Ո՞րտեղ են գիւղի ջահել աղջիկները:

— Դիւղում ջահել աղջիկ չկա, բոլորը փախան, — պատասխանեցին մի քանի պառաւներ:

Բայց նրանք պառաւներին ապտակեցին եւ պահանջեցին ջահել աղջիկ: Պառաւներից մէկը, պաշտպանելու համար իր հարազատ ջահել աղջկան՝ մատնեց Աբեւհատին:

Եւ սպիտակները մտան նանու տունը, խուզարկեցին ամեն մի անկիւն եւ դէս դիշերից յետոյ գան Աբեւհատին՝ «Մարո»ի կողքին կուչ եկած:

Ձչաց Աբեւհատը, աղկոտուր ձայնեց.

— Նանի՛, նանի՛...

Ոչ մի ձայն. մի վիշտը կոպիտ ձեռքերով բզտնել էր արդէն նանիի բերանը:

Բարացած մթից մղուց անմեղութեան արիւնը կաթիլ առ կաթիլ, ասոմները կրճտացին մոլուցքից, երկնքի բոլոր աստղերը գարձան առուլ, թոան երկնակամարից եւ խաւարեց աշխարհը:

— Վերջապէս մի մարդ անցաւ, բացագանչեց խմաստասէրը:

Ծառան նոր միայն հասկացաւ, թէ ինչ էր ուզում ասել խմաստասէրը:

— Առակս պի՞նչ ցուցանէ, հարցրի ես, երբ Շերմանդպէնն ուարակ իր առակը:

— Առակս ցուցանէ, որ մայթերը պիտի յարմար լինեն քայլելու համար:

Ձեռագրում, երբ միտքն քայլում էինք, կամ հանդիպում մաքուր փողոցներում, ես կատակով ասում էի.

— Այսօր չատ մարդիկ են անցել փողոցներով:

— Այո, մարդկանց թիւը աւելանում է, ժրպտում էր նա...

զարձնալ տասը, քսան մարդ իրար ետեւից անցնում են... ա՛ւ, նրանք բոլորը դիպան փողոցում ընկած քարին ու անքալով, հայհոյելով առաջ են գնում:

— Ոչ մի մարդ չի անցնում, ոչ մի մարդ չեմ տեսնում, պնդում է խմաստասէրը:

— Ինչպէ՞ս... բայց ծառան չհամարձակուեց հակաճառել:

Անցան գարձեալ բազմաթիւ մարդիկ եւ երեկոյեան կողմը վերջապէս մի անցորդ եկաւ ու հասնելով չարաբաստիկ քարին, ոտքն անզգուշաբար դիպցրեց նրան, բայց ոչ ոքի չհայհոյեց, այլ կատաւ, քարը գլորեց, քցեց ճանապարհից հեռու մի անկիւն եւ ապա միայն շարունակեց իր ճամբան:

Առաւօտեան, երբ սարերից բարձրացաւ արեւը, նրա սպիտակ շղարը թաթախեցին արեան մէջ եւ արեւն արեւնակալեց:

Սպիտակ ջոկատները երկարեցին դէպի լեռնաշղթան:

Նաներն վազեց դաշը, զրկեց Արեւհատի անչնչացած, այլանդակած եւ սպիտակ մարմինը եւ ողբաց խելագար ճչերով:

— Մեռնեմ քո լոյս երեսին, մեռնեմ քո արեւ հասակին:

Եւ նաներն լսեց, որ դիակը պատասխան էր տալիս եւ ասում.—

— Աչխարհը մութն է, նաներ:

Փլեց կապոյտ եւ ջինջ երկնակամարն Արեւհատի չուշանների վրայ, պատուեց նաներ սիրտը եւ հոսեց մայրական արիւնն ուղիս առ ուղիս:

Գամին ողբում էր սարերի լանջերի ոսոխների մութ անտառներում, իւրաքանչիւր ասեղնագործ տերեւ կարծես կաթում էր մռայլ արցունքներ, դաշտի բարձր խոտերն օրօրւում էին յետ ու առաջ, ծառը ոլիմով, որովհետեւ մահը, դուրս գալով մութ հովիտներից, թափառելով տափաստաններ, կոխոտելով եւ աւերելով ընդարձակ եւ հարուստ պարտէզները՝ եկել էր եւ ահաւոր կաղկանձում էր գաշտում:

Բայց գարնանը ծաղկեց ծիրանի ծառը, հոտաւէտ եւ սպիտակ, բեղմնաւորեցին ծաղիկները եւ ամառը վառեցին որպէս արեւի կանթեղներ, առուները կարկաչեցին բլուրներից վար, իսկ գաշտի կուրծքը սկսեց լցնել ասղերով, երբ աշնան սկզբին շղշղացին խաղողի հասիկները:

Կառախումբը մաաւ հին ու մթին կիրճը, սուլեց սուր, բայց նրա արձագանգը վերադարձաւ երբեւ ահաւոր օրոտ: Եւ ահա կառախումբը, դուրս գալով կիրճից, սոզոսկից կանաչ դաշտերով եւ կանգ առաւ զաւառական փոքրիկ քաղաքի երկաթուղային կայարանում:

Երեկո է: կայարանի ճակատին փայլում է կարմիր եւ հնդաթիւ ասղը: կարմիր պարտիզանը ժպտաց եւ իջաւ գնացքից: Գրեթէ ամէն իջնել փոխած է: Ամէն անգամ այդ կայարանն իջնելիս, նա հետն ունենում էր ուսանողական պատասխանը, զրքեր, հագին ուսանողական զգեստները, դասագրքերով. այժմ՝ զորքներ, դեղին եւ փայլուն կոճակներով. այժմ՝ ոչինչ, ուսից մի ռուդրակ, ռուդրակում մի կոռ չինել

Նայեց ոչ իբրեւ մահւան դործիք, այլ մի դործիք՝ որ միացած իմացականութեան հետ՝ ստեղծեց նոր աշխարհը եւ պիտի ամբացնի այն:

* * *

Փակուեց սրտի ծալքը:

Լուսամփոփից արծաթ էր հոսում մարմարեա սեղանին եւ այն մասեանի վրա, որ յեղաշրջեց դարը եւ փոխեց աշխարհի ընթացքը:

Դիտնականի ունդունքներում տակաւին բուրում է Արեւհատի ծաղկաւոր զգեստի հոտը: Սրտի փակուած ծալքի մէջ նորից մնացին ծիրանի ծառի երկու տերեւ, անվթար եւ զւարթ, եւ չուշանի պէս սպիտակ մի ձեռք:

Վեր կացաւ դիտնականը, դնաց պաշտամբ:

Աստղազարդ դիշեր:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, բիւրաւոր կապոյտ սարերի եւ կանաչ դաշտերի նուէ բարձրանում է ծիրանի ծառը: Նրա կրծքից կախուած են արեւադոյն ծիրանները, ինչպէս աստղերը երկնակամարից:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, բիւրաւոր կապոյտ սարերով եւ կանաչ դաշտերով վազում եւ կարկաչում են առուակները, վազում ու ընդդում է եւ մարդկային սիրտը, արիւնալիքը եւ տաք:

Եւ ոսկեհնչուն մի ձայն է թրթռում առաւօտի բարձունքից:

Ո՞վ է: Արեւհա՞տը: Ո՛չ:

Լուսարացի չաղում արտոյտն է երգում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԵԱՆ

ՄԱՐՏԻԿԸ--ԵՐԿՐԻՆ

Երկիր իմ, պայծառ գարուն,
Իմ սրտի շէնդ անուն,—
Երգս վարդերիդ·
Դու մայր իմ, հոյր ջերմաշունչ,
Իմ հոգու պայծառ անուրջ,—
Շուրթս շուրթերիդ:

Նոր երկինք աստեղացո՛ղ,
Լոյսերի շող տեղացող,—
Աչքս լոյսերիդ,
Դարերի հունը կիսող,
Դէպի նոր եզերք հոսող,—
Սիրտս յոյզերիդ:

Երկիր իմ, շառաչ ու երգ,
Շինարար երկաթէ ձեռ,—
Ջեռս ձեռքերիդ·
Տափաստան հունձի, հերկի,
Մեծ մառան անհուն բերքի,
Շունչս բերքերից:

Մարտիկդ խիզախ, արի,
Բռնել է մեծ պայքարի
Լուսաւոր ուղիդ·—
Վտանգիդ ամեն ժամին
Երկիր իմ, վերջին կաթիլ
Արիւնս հողիդ···

Կապի վաշտ

ԼԵՒՈՆ ԽԱՆԴՈՒՆԻ

ԳԵՐԱԶԱՆՑ ԿՐԱԿ

Երբ հրացանը սեղմեց իր կրծքին —
Ժպիտը անցաւ աչքերից նրա —
Ինչ որ արնոտ դէմք, քւաց քէ, կրկին
Եկաւ, պատկերւեց քիրախի վրա:

Նա յիշեց հերոս հօրը՝ կոմունար,
Նավթահանքերի բանւորին անվախ,
Որ շարքերի մէջ այն բազմահազար,
Ընկել էր, ինչպէս մարտնչող խիզախ:

Յիշելով մոայլ անցեալը ոխով,
Երբ հօր արնաթաւ աչքերը, խկոյճ
Դողաց մարմինը անասվոր դողով,
Յասումը տիրեց իր սրտին զգօն:

Զգաց մեծ պարտքը իր երկրի հանդէպ
Որի համար էր զոհուել հայրըն իր,—
Յետո սուլեցին գնդակներ կարմիր
Ու դիպան ուղիղ բիրախին անքեթ:

— Կեցցէ՛, չորս կողմից — կեցցէ՛ ասացին,
Երեք գնդակն էլ դիպել են տառին:

Առաջին դունդ, 1934 *թ.*

ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԵՐԲ ԴՐՕՇՆԵՐԸ ՓՈՂՓՈՂՈՒՄ ԵՆ

Այնտեղ մի ժամանակ ամայի դաշտ էր, ծածկուած խոտով եւ մասրենու թփերով: Անցուդարձ գրեթէ չէր լինում: Երբ գօրամասերը գալիս էին ճամբար՝ ամայի դաշտն սկսում էր կենդանանալ, միայն ստորաժանումները այնտեղ կատարում էին տակտիկական պարապմունքներ եւ վարժութիւններ, բայց այդ բոլորը տեւում էր մինչեւ ճաշ: Ճեմ կատարելիները իջնելով ամախարակը՝ քաշւում էին իրենց վրանները եւ դաշտը նորից ընդունում էր իր նախկին ամայի տեսքը:

Այլ է դրութիւնը ներկայումս: Ամայի դաշտն ամբողջապէս փոխել է իր դէմքը, այդ ընդարձակ տարածութիւնը վեր է ածւել հրաձգային մարզադաշտի: Մասրենու թփերը, որոնք մի ժամանակ ծառայում էին որպէս ապաստարան նապաստակների եւ վայրի թռչունների՝ ոչնչացւել են: Նրանց ների եւ վայրի թռչունների՝ ոչնչացւել են: Նրանց ների եւ վայրի թռչունների՝ ոչնչացւել են: Նրանց տեղերը ամբողջ դաշտում ձգած են զուգահեռ փոխարէն ամբողջ դաշտում ձգած են զուգահեռ ծառուղիներ եւ ծառուղիների երկարութեամբ՝ սպիտակ վրաններ, որոնց առաջ ստեղծւել են դեղեցիկ ծաղկանոցներ, իսկ աւելի հեռու՝ կրակի բնազդներ: Գիշեր ու ցերեկ, երբեմնի այդ ամայի դաշտում՝ փոփոխում են կարմիր դրօշակները եւ լսւում են կարմիր բանակայինների ուրախ երգի եւ նւագի ձայներ:

Մարզադաշտի արեւելեան մասը յատկացած է անայպէներին, որոնք հանդիսանում են դիմելիք պատրաստութեան ու պարծանքը: Այնտեղ, հրաձգային վարժութեան վայրում, անայպէները յաճախակի փոփոխման պայմաններում՝ սովորել են, թէ ինչպէս պէտք է կրակել, թէ ինչպէս պէտք է հասնել դէպի նպատակ արդիւնքների:

Ահա եւ տեսչական ստուգման առաջին օրը:

Ընդարձակ հրաձգավայրն ստացել է տօնական կերպարանք: Իւրաքանչիւր քայլափոխում դրօշակներ, լոզունգներ, պլակատներ: Նշագրամասերն անընդհատ նշագրում է: Առաւել տօնական տեսք է ստացել անայպէների հրաձգավայրը: Կրակի գծում ոչ ոք չի երեւում: Անայպէները, թիկունքում խնամքով քօղարկած հրացաններն ամուր պահած ձեռքերում՝ սպասում են ազդանշանին՝ առաջ շարժւելու համար, բոլորը համակած են մի կամքով՝ անպայման ոսկի դերազանց արդիւնք:

Հաւաքի զինկոմ ընկ. Կլոեանը դանդաղ յետ ու առաջ է քայլում: Նա սովորականից աւելի քիչ է խօսում: Երբեմն այս կամ այն ընկերոջ հարցին պատասխանում է ժպտալով՝ ցուցմունքներ տալիս ու նորից ամփոփւում ինքն իր մէջ:

Նրանցից հեռու տարածութեան վրա, Ալաեարի ժայռերն են, այնտեղից պէտք է երեւան նշանները:

Հաւաքի պետ ընկ. Գասպարեանն իր հայեացքը չի հեռացնում սեւ թմբերից, մերթ ընդ մերթ հեռախօսով ստուգում է նշան ցոյց ուղղիչներին:

Հրաձգավայրում բարձրանում է թեթեւ քամի, որը զնալով սկսում է աւելի ուժեղանալ: Նորատունկ ծառերն օրօրւում են ուժեղ քամուց եւ դեղին տերեւներն սկսում են թափւել ներքեւ պառկած անայպէների վրա: Մի քանի ընկերներ կասկածում են, արդեօք քամին չատ չի՞ ազդի զնդակների թռիչքի վրա:

Նրանք ընդամենը երեք հոգի էին, երեք հարւածայիններ՝ Զանազեանը, Ավդոյէ եւ Անտոնեանը, որոնց վրճակւած էր կատարելու տեսչական ստուգման առաջին ձիգը: Սեւեռ, անխոռով հայեացքով նրանք դիտում էին հեռու բլինդաժները եւ այն ճանապարհը, որտեղից նրանք պէտք է առաջ շարժւէին:

Բայց ահա կրակի համար մեաց մի քանի րոպէ:

Հրաձգավայրը հետզհետէ դատարկւում է: Իւրաքանչիւրը գալում է իր տեղը: Հեռախօսիչ Վարդանեանը նորից ամրացնում է իր տեղը, մի աւելորդ անգամ ստուգում է ապարատը եւ հեռախօսի փողը դնելով ականջին՝ սպասում է հրամանի:

Ընկ. Գասպարեանը վերցնելով հեռադիտակը՝ անցնում է կրակի դիծը: Նա, ձախ ձեռքով, հեռադիտակը դրած աչքերին, մի վերջին անգամ հետախուզում է իր առջեւ ընկած տարածութիւնը: Այդ ձեռքով առանց յետ նայելու վայրկենապէս բարձրացնում եւ իջեցնում է:

Հրաձգութեան նշանը տուեց:

— Զանազեան, Ավդոյէ, Անտոնեան, առա՛ջ, — լսւում է դասակի հրամանատարի կտրուկ հրամանը:

Մի ակնթարթ, եւ ահա նրանք նետւում են առաջ:

Այժմ բոլորի հայեացքը կենտրոնացած է հեռու նշաններին եւ այն երեք պառկած անայպէներին, որոնք արդէն սկսել են կրակը վարել:

Դասակի հրամանատարը հեռադիտակով հրամայում է, թէ արդեօք զնդակները կպչո՞ւմ են նպատակին թէ ոչ: Նա դոհ է կրակից, որովհետեւ իւրաքանչիւր ձիգից յետոյ, նշանի ուղիղ յետեւում բարձրանում է փոշի, որից կարելի է եզրակացնել, որ զնդակները կպչում են նպատակին: Սակայն եւ զգում է, որ այդ համոզմունքը վերջնական չէ: Վերջնականը կը լինի այն ժամանակ, երբ բլինդաժներից հեռախօսով կը յայտնեն արդիւնքները:

Առաջին հերթի կրակողներն, այն երեք անայպէները վերջացնելով կրակը, դասակի հրամանա-

տարի հրահանգով արագ բարձրանում են իրենց տեղերից ու զարձեալ քօղարկուած ձեւով վերադառնում են թիկունք:

Մուտդողը մօտենում է հետախօսին, լսում է արդիւնքները եւ իր մօտ նշանակումներ անում: Քանի գնում նրա դէմքը սկսում է պայծառանալ, նրա աչքերում փայլուն է գոհունակութեան ժպիտ, այլ եւս կարիք չկայ երկար մտածելու: Մուդդողի ուրախ ժպիտը մատնում է ամեն ինչ: Նա նորից մուդդելով նշանակած թիւերը արագ չուռ է գալիս եւ մօտենում սեղանին:

— Զանազան — կրակել է եւ տւել է 5–ից 4–ը, Ավդոյչն 5–ից 4–ը, Անտոնեանը 5–ից 5–ը,— հանդիսաւոր կերպով յայտարարում է մուդդողն ու յետո աւելացնում,— դուք բոլորդ էլ կրակել–էք վերազանց, դուք արդարացրիք ձեր անայպերական կոչումը եւ կատարեցիք ձեր պարտքը կուսակցութեան, խորհրդային իշխանութեան եւ բանւոր դասակարգի հանդէպ:

Մուդդողի այս վերջին խօսքերը յուզում են բոլորին: Սակայն բոլորից չատ յուզւում են նրանք՝ այն երեք հարւածային անայպերները, որոնց վիճակւեց առաջինը կրակել եւ տալ վերազանց արդիւնք ու երեքի մէջից մէկերան եւ ազդու կերպով հնչում է՝ «Ծառայում ենք յեղափոխութեանը» խօսքը:

Մուդդողը որպէս վերազանց կատարման նշան իւրաքանչիւր հրաձիգի ուրնից ամրացնում է փոքրիկ կարմիր դրօշ ու նորից ամուր սեղմում է նրանց ձեռքը:

Մնայպերները հրացաններն ուսերին, լի հպարտութեամբ ու յաղթականօրէն վերադառնում են յետ: Նրանց ուրնների վրա ամրացած կարմիր դրօշակները ուժեղ քամուց սկսում են պղպջղել, հետից կարմիր բանակայինները նկատելով այդ՝ օդը թնդացնում են հզօր ուռռայով:

Կեցցե՛ն մեր անայպերները:

Եւ այսպէս, կրակի զծում անայպերների հերթերը յաջորդում են իրար ու վրնեջ բոլորն ա–ռանց բացառութեան վերազանց՝ վերադառնում են թիկունք:

Եւ ամեն անգամ, երբ ուրնների վրա սկսում են փղփղել փոքրիկ դրօշակները, դրան անմիջապէս յաջորդում են կարմիր բանակայինների հզօրակոչ ուռռաները ու կեցցէները, որոնք աղջունում են իրենց ընկերներին, տեսչականի բնագծից յաղթականօրէն վերադարձող վերազանց անայպերներին:

ԾԱՂԿԱԶՈՐԻ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՄԱՐԱՆՈՑԸ

Այսօրւա Պիոներական Պահակը եւ վաղւա կարմիր Բանակայինը

Ա· ԼՈՒՍԵՆՑ

ՆԱՄԱԿ ՄԱՅՐԻԿԻՍ

ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿ, ընդունիր խնդրեմ
Իմ բարեւները սրտագին ու ջերմ:
Եւ ներիր, ներիր, որ նամակներիդ
Ես ժամանակին չեմ պատասխանում,
Մարտական ուսման այս գրահներին
Ազատ ժամանակ բիչ եմ ունենում:
Նամակներիդ մէջ, մայր իմ կարեկից,
Ինչո՞ւ անհանգիստ միշտ հարցնում ես ինձ,
Թէ ո՞նց եմ ապրում կարմիր Բանակում,
Ու ֆա՞ջ եմ թէ չէ, լա՞ւ եմ կրակում···
Օ, մի՞թէ, մի՞թէ դեռ չես իմանում,
Որ մեր բանակում,
Այս մեր միաձոյլ սերտ ընտանիքում
Բոլորն էլ ֆաջ են, լաւ են կրակում:
Ո՛ւր է առաջւա ցրւած ֆո տղան
Նապաստակի պէս վախկոտ անսահման,
Որ գիտէր մի միայն երգեր գրել
Եւ աղջիկների մազերով գերւել:
Չկա նա արդէն, անցաւ ու գնաց
Ինչպէս մանկուքեան օրերի մի լաց,
Եւ տեղը հիմա ուրիշն է կանգնած՝
Մի մարդ, որ երկրորդ անգամ է ծնւած···
Նման է հիմա խելահաս մարդի,
Անել է որպէս գեղուդէշ բարդի,
Վառ աստղ է խփել գլխարկի ճակտին
Եւ դարձել երկրի պանծալի որդին:
Մարտիկ է դարձել տոկուն եւ ուժեղ,
Մտքերը պայծառ են, իսկ կամքը՝ անշեղ···
Այնքան դիպուկ եմ հիմա կրակում,
Որ ոչ մի նշան ես չեմ վրիպում,
Անգամ պացող թռչունին օդում
Ես ցած եմ բերում մի ակնթարթում···
Սակայն չկարծես, իմ անոյշ պառաւ,
Որ քնքշութիւնը սրտումս մեռաւ,
Որ ես մոռացել — դարձել եմ կռպիտ,
Որ չունեմ սիրտ էլ ոչ մի ժպիտ:
Կարո՞ղ եմ միթէ մոռանալ ես այն,
Երբ դու կարիճի, ցաւի յանդիման
Կեանքդ դարձրած ինձ համար վահան
Պահում էիր ինձ աչքի լոյսի պէս,
Որ քոյ ֆաշեմ ես,
Եւ միշտ վառ պահած իմ գլխի վերեւ
Մայրական սիրտ պայծառ մի արեւ
Տալիս էիր ինձ եւ՛ ոյժ, եւ՛ թեւեր···
Օ՛, չեմ մոռացել, սիրում եմ ես ես
Հիմա աւելի տաք ու հրակէզ: —
Երբ երէկ թերթում
Պատկերդ տեսա ջահելցած, ժպտուն
Եւ կարդացի թէ՝ հիմա տեխտիլում
Առաջինն ես դու կտաւ գործելում,
Օ՛, գիտես որքան, որքա՜ն զգացւեցի,
Որքան պարծեցա ու սէր զգացի
Եւ՛ որպէս որդի, եւ՛ ֆաղաֆացի···
Եւ բոլոր, բոլոր ընկերներիս մօտ
Զգալով մանկական անսպ մի կարօտ
Դէպի նկարդ յուզւած թեֆւեցի
Եւ համբուրեցի···
Բայց սիրուց բացի կա իմ լայն սրտում
Եւ այնքան խորին մի ատելութիւն
Հանդէպ կատաղի թշնամու անհուն,
Որ անվերջ կուի առիթ է սարհում:
Հենց այդ է ահա
Ստիպում ինձ հիմա
Ընկերներիս հետ եռանդով անմար
Մկանով, մտքով տրճնել միշտ յամառ,
Միշտ կռվւել գալիք մարտերի համար,
Որ երբ շառաչի արնինէ ֆաշին
Ես կազմ ու պատրաստ հղնիմ նոյն ժամին:

ՍԻՐԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ՈՂՋՈՅՆ ՀԵՐՈՍԱԿԻՆ

Վառ տենչերիս զոհարափայլ գագաթից,
Ողջո՛յն, ողջո՛յն, պայֆարատենչ իմ երկիր,
Ջուրիմ ուրիշ սէր առւել թանկագին,
Քան հրավառ տենչերը բորբ իմ սրտի:

Ողջոյն հողիդ՝ բազմաբեղուն, լիաբեր,
Եւ հանճերիդ՝ ոսկեբերակ, ոսկեբերք,—
Ցորդած ուժիդ, որպէս գարնան յորդ թերեֆ՝
Միշտ ճգտում է դէպի կեանքի նոր ափեր···

Ողջոյն բրոնզեա արեգնակամէմ բանակիդ,
Եւ գրեթերիդ՝ խոհական ու ոսկեքառ,—
Առաջնորդիդ՝ բազմահանճար, խոհավառ,
Որ նայում է վստահաբար Գալինիդ···

Բագու

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԸ

ԱՂԱՒՆԻ

ՄԱՅՐԸ

Նիւրում եմ Զանգեզուրի կուիւներում ընկած Արտաշէսի մօրը.

Էն սարի ետեւ մութ ու ամպամած
Կա մի սիրուն գիւղ, գիւղում մի խրճիթ,
Առաջդ պարտէզ, բաղ ու ցանկապատ
Ու կապոյտ մի լիճ, խորունկ ու վճիտ:

Ապրում է էնտեղ մի բարի պառաւ,
Մազերը ճերմակ, ասես Արագած,
Սիրտն անմար սիրով, հարուստ ու առատ,—
Գարնան ջրի պէս յորդ ու վարարած:

Մի օր բաղդն ինձի էդ գիւղը ճետեց.
Բարի պառաւին ես հիւր գնացի,
Սիրով, ծիծաղով նա ինձ ընդունեց
Ու բաժին հանեց իր անուշ հացից:

Կերանք, խօսեցանք լուից, չարքերից,
Ես իմն ասացի, ինքն իրը պատմեց,
Ու մէկ էլ աչքս ընկաւ թարեքին,—
Դրւած էր էնտեղ մի սիրուն պատկեր:

Երկար նայեցի, նայեցի, ապա՝
Ուզեցի հարցնել ո՞վ է էդ տղէն,
Հագին չերքեզի, մէջքին սուր կապած,
Տեսնես պառաւի նա ի՞նչն է եղել.

— Ո՞վ է,— ասացի,— էդ տղէն կտրին,
Ո՞ն ի՞նչն է, մայրիկ ես ո՞ւր է հիմա···
— Է՛հ, նրա նանի արեւը կտրի,
Մինիկ տղէս է, կորած անգիւման···

— Մինիկ տղէս է, կարմիր պարտիզան,
Որ մի օր կապեց թուր, գէնք ու զրահ,
Թողեց տուն ու տեղ ես ջահել խիզան
Ու կռիւ գնաց դաշնակի վրա···

Նրա հետ ինչքան տղերք գնացին,
Մէկից դատարկուեց մեր ամբողջ գիւղը.
Մնում էի ես, թէ ճամբէն բացւի
Ու վերադառնա օջախս ծուխը:

Մնում էի ես, աչքս իր ճամբին,—
Երբ թոփն էր գւում, կամ գիւլլէն լալիս,
Թւում էր սրտիս, թէ ծխի ամպից,—
Կտրին բալէս է հրէն ինձ գալիս:

Էսպէս անց կացաւ ուղիղ մէկ տարի,
Ցետո էլ թռաւ մի բանի ամիս,
Ձիւնը վեր կացաւ դիմացի սարից
Ու համակն արեց մեզ չար թշնամին:

Թշնամին գնաց, փախաւ մեր գեղից,
Կռանիք խաղաղուեց, ապրուստն հեշտացաւ,
Շատերը դարձան իրենց տուն-տեղին,
Բայց մինիկ բալէս չվերադարձաւ:

Էն օրից բանի՛ տարի է անցել,
(Ոչ գիր եմ ջոկում, ոչ թիւ ու հեսաբ)
Ու միշտ իմ դուռը կրնկին բաց է
Եւ աչքս ճամբին, ոնց որ դու տեսար —

Էս իշխանութան գործերի վրա
Ինչքան տղերք կան ու ինչքան խիզան,
Թող գան, վայելեն ու յիշեն նրան,—
Էն չիւան տղին-կարմիր պարտիզան:

Ու թող ետ գնան պատմեն բոլորին
Որ մօր ջիգեարը ցաւել է վէրքից.
Բայց տունը շէն է ու սիրտը բարի
Եւ չի անիծում նա էս աշխարհին,

Այլ ցանկանում է բոլոր բաջերին,
Որ պատւով անցնեն իրենց մեծ ճամբէն,
Թող ցաւ չնստի նրանց աչքերին
Ու պայծառ բաղդի սարերը չամպեն···
. . . . . .

Ու մայրը լռեց· շեմքին բարացած
Մնում էի ես, շլար ու ցաւով,
Էլի նա խօսեց ու էսպէս ասաց,—
— Մի տխրի, բալա, այլ վարդ ծիծաղով,

Գնա, աշխատիր էս կեանքի համար,
(Տեսնում եմ, դու էլ գործի տէր մարդ ես)
Ու դու էլ ասա աշխարհին արար,
Որ սրտիս նարէն փակւում է արդէն:

Մենակ՝ ես ճամբին թէ հանդիպեցիր
Էն մեծ, մեծ մարդուն, անունն Ստալին,
Ասա, որ թէեւ ցաւով ծնեցի,
Բայց սի՛րով տւի պարտիզան բալին···

ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՍԵԱՆ

ԵՐԳ ՍԵՒԱՆԻՆ

Ո՛ կապուտաչեա դու լիճ բիւրեղեա
Ափերով ծիծղուն·
Արշալոյսների, վերջալոյսների
Լոյսով երանգած···
Քո կապտավարար ծփանքդ խորիմաստ,
Լեգենդներ հիւսող·
Գրկեց իմ հոգին, ու ես լցւեցի
Նոր իմաստութեամբ···

Ու ակնթարթի մի խենթ քոիչքով,
Դարեր ապրեցի,
Դարեր, որ մարդու միտքն է կերտել —
Կերտել ու ճամբել···
Ու իր հանճարեղ վրձինով լուսէ,
Պատմութեան փոնին,—
Թողել աւանդներ հազար ու հազար
Անցած տոհմերի···

Պարզ ու փիրուզեա ջուրն ակօսելով
Խոհերով յղի,
Լողացել են լուռ, մակոյկներ բանի,—
Հոգիս ու փոթորկում···
Ամեն մի·ալիք, ամեն մի կոհակ
Կաթստով մի լի
Օրեր են ճամբել, աճուռնի հեռուն,
Ու ապրել կրկին···
Ինձ նման բանի բանիսն են թերթել
Գիրքը յուշերիդ,
Որոնց ծալքերում այնքան գուշագեղ
Ու վառ հեքիաթներ···
Առասպելական մի ամբողջ աշխարհ
Լի բեթրոռներով···
Յանգի ու վանկի, լոյսի երկեր է մի —
Գիրքը յուշերիդ···

Ու քո ծփացող ալիքները նուրբ
Շուշան փրփուրով
Որքան ժպիտ են բաղել շուրթերից
Զահել ու դիւրիչ···
Բանի–բանի սիրտ են յուզել թախուն,
Իմ սրտի նման···
Իմ սրտի նման գինով ու խնդուն,
Ու արեգական···

Ո՛ կապուտաչեա դու լիճ բիւրեղեա,
Ափերով ծիծղուն·
Արշալոյսների, վերջալոյսների
Լոյսով երանգած···
Քո կապտավարար ծփանքդ խորիմաստ,
Լեգենդներ հիւսող,
Գերեց իմ հոգին, ու ես լցւեցի
Նոր իմաստութեամբ···

Բագու.

ՀՌԻՓՍԻՄԷ ՊՕՂՈՍԵԱՆ

ՈՂՋԿԱ ԵՐԳԸ

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԼԻՐԻԿԱ

Ինչպէ՞ս ես ծաղկել, երկիր իմ ջահել,
Ինչպէ՞ս ես մասին այսօր չը երգել:

Արեւն է քառել ընդներիդ դալար,
Ոսկի է փռել ճամբերիդ ճանաչ:

Նոր հիւթ է ծծում ամեն մի լալա,
Ոսկի է հնչուն ամեն մի կարկաչ:

Սարերի լանջին նոր դաշտ է, նոր բերք·
Աշունը պէս–պէս մրգեր է բաշխում·
Ամեն առաւօտ նոր խինդ է ու երգ,
Ամեն երեկոն՝ սադաֆ է նախշուն:
Ինչպէս ես ծաղկել, երկիր իմ ջահել,
Ինչպէ՞ս ես մասին այսօր չը երգել:

Լուսինը վերից ցօղում է արծաթ
Մեր նոր տների կտուրի վրա,
Այգի է դարձել ամեն մի բացատ,
Շնորհալար են կազմել ծառերը ահա:

Եւ դէմքը տւած հովին ես մարմանդ,
Գիւղեր, քաղաքներ գուգուում են, փոխւում,
Հակա է դառնում ամեն մի աւան,
Հարո՛ւստ ես, հարո՛ւստ, երկիր իմ շողուն···

Ինչպէ՞ս ես ծաղկել, երկիր իմ ջահել,
Ինչպէ՞ս ես մասին այսօր չը երգել:

ՄԵԱՍՆԻԿԵԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Գրեց՝ ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Լուռ նայում եմ· մի անկիւն
Ու մի բարէ փիգուրա,
Բայց կենդանի է այնքան
Պայծառ ժպիտը նրա:

Ինչ կա աւել բախտաւոր,
Քան այս բարը ցուրտ ու հին,
Որ գրկում է նրա խոր
Կերպարանքն ու ջինջ հոգին:

Լուռ նայում եմ ես կրկին
Տխուր կանգնած նրա մօտ,
Նա լցնում է իմ հոգին՝
Եւ սէր, եւ կեանք, եւ կարօտ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐ

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԻՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Ասիր — ծովեր եմ անցել, ծովեր եմ անցել,
Ոնց որ շուշան դաշտերից հովեր եմ անցել. —
Եկել–տեսել եմ ջահել երկիրը ձեր վառ,
Որին նեցուկ են կանգնել դարերը պայծառ:
Ասիր — սրտով անձկալի՝ ծովեր եմ անցել,
Ոնց ձեր շուշան դաշտերից՝ հովեր եմ անցել:

Ասիր — ձեր լոյս դաշտերում գարուն տեսանիմ, բա՛րկ,
Ստեղծագործ, երջանիկ մի սեգ դասակարգ, —
Որ խրճիթից՝ արեւի պալատն է հասել
Եւ լեռնանեան աչքերով աշխարհն է տեսել.
Ասիր — ճակատը կարմիր, սէրը՝ կրծքի տակ,
Մեր երկիրը տեսաք՝ բաց Մասիսն անխորտակ:

Ասիր — ձեզ եմ աւետում մահն հին աշխարհի,
Արշալոյսը՝ մեր պայծառ սրտի սարերի,
Ուր դարաւոր կաթոտով մութն էր սաւառնում
Հիմա կուի արեւն է ահի՛ղ թեւ առնում,
Ասիր — գալի՞ս է, գալիս ալիք առ ալիք,
Մեր անկապան ապագան, մեր լոյսը գալիք:

Ասի — ծովեր էք անցել, ծովեր էք անցել,
Մեր աշխարհից ինչպէս որ հովեր էք անցել. —
Ցեսաննիերով խոցում էք հին կեանքը հիմի —
Նա թղթէ բերդ, մենք նրա դէմ սահում–համի:
Ասի — խնդով–շունդով երբ գաք դուք մէկ էլ՝
Կը տեսնենք որ գունդն հողի կարմիր է հագել:

ԱԽԵՏԻՔ ԲԱՐԵԱՆ

ՁՕՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

Ո, դու հասել ես վճիտ պարզութեան,
Որին ձգտում են պոէտներ բազում,
Եւ ես երգերում ջինջ ու գեղջկական,—
Շողում է Լոռու երկինքը լազուր:

Եւ ես երգերում այնքա՜ն իմաստուն,—
Կարկաչում են ժիր տուներն արծաթ,
Եւ ես յոյգերի լոյսերն անհատնում,
Լոյս արեւի պէս շողում են պայծառ:

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻՆ

Միգաոծող, մշուշապատ, երազում,
Թոյլ ու վհատ, թաց աչքերով դու եկար.
Երգում էիր տխուր գիշեր, մեղմ աշուն.
Ու տրտնջում կարգերի դէմ ապիկար:

Եւ հիւսիսի սառնամանիք ցրտերում,
Ձայնը ես նուրբ սրտակոտուր հեկեկաց.
Ես ցուրտ հոգին առանց արեւ, անգարուն,
Երգեց գիշեր, երգեց աշուն ու գնաց:

Ցրել եմ ցուրտ, մշուշ ու մէգ,
Արեւն այժմ կիզում է վառ,
Խառնած իրար ադմուկ ու երգ
Լոյսեր, յոյգեր, սէր ու պայքար:

Հին թախիծը կորաւ անհետ,
Աղմկում է սէրս վարար.
Ո՞ւր ես··· կեանքի ծարաւ պոէտ,
Ուրախ երգես գարունը վառ:

ՀԱՆԻԿ ՀՐԱՉԵԱՆ

* *
*

Ես միշտ երազել եմ այս օրն ու տարին,
Եւ ևս թւացել է ինձ անհատ ու հեռու —
Ինչպէս տափաստանը լերան կատարից,
Որ երկնքի լազուր բարձունքներն է բերում···

Եւ ևս, ահա՛, եկաւ···
Ջինուոր եմ ես,
Կարմիր զինուոր, երկրիս պահակը արքունի:
Կը կրեմ այդ կոչումը հպարտ ու վէս
Եւ ուսուցումն պահին, եւ գալիք մարտում···

Դ· ԴԶՆՈՒՆԻ

ՀԱՅ ՇԱՐԺԱՆԿԱՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՏԱՍՆ ԵՒ ՀՆԳԱՄԵԱԿԻՆ

ՇԱՐԺԱՆԿԱՐԸ ՎԻԹԽԱՐԻ, ԱՆԴՆԱՀԱՏԵԼԻ ՈՑԹ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌԲԻՆ»։

ՍՏԱԼԻՆ

Լրացաւ խորհրդային չարժանկարչութեան 15-ամեակը։ Կուսակցութեան եւ նրա սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ ձեռք բերուած չտեսնուած նուաճումների ու յաղթանակների յորելեանն է դա, որ կատարում են մեր ողջ Միութեան բանուորները, հաւաքատեսականները, արուեստի աշխատաւորներն ու չարժա-

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ «ՆԱՄՈՒՍ»ԷՆ
որ մինչեւ այժմ ալ կը մնայ մունջ շարժանկարի արժէքաւոր նմուշ մը

նկարիչները։ Կուսակցութիւնն ու կառավարութիւնը բարձր պարգեւների արժանացրին չարժանկարի ճակատի ղեկավար աշխատաւորներին եւ չարժանկարի արուեստի ականաւոր վարպետներին։ Դրանով իսկ էլ ասելի խոշոր խնդիրներ դրեցին չարժանկարի աշխատաւորների առաջ՝ «չմնալ ստեղծագործական ձեռք բերուած յաղողութիւնների (ֆիլմ) հանդարտեցնողին չարձր ժապաւէնների (ֆիլմ) համար, որոնք դասախրակում են դանդաղածնեերին բնկերվարութեան ոգով, սիրուած են դանդաղածնեերի կողմից եւ հասկանալի են նրանց — յանուն խորհրդային չարժանկարչութեան տեխնիկայի յետսպատ առաջնակարգ մասնագէտ՝ չարժանկարագրային

գործարաններում եւ չարժանկարի թատրոններում, յանուն չարժանկարների լայն տարածման Խորհրդային Միութեան բոլոր քաղաքներում եւ գիւղերում» (Համամիութենական Կոմունիստ (Բոլշեվիկ) կուսակցութեան կենտրոնական Կոմիտէի ողջոյնից)։ Ահա տասնեակ եւ պատերի մի հսկայական ծրագիր, որ յառաջադրում է կուսակցութիւնը խորհրդային չարժանկարչութեան։

Ո՞րն է խորհրդային չարժանկարչութեան տարուկտուրան։ Դա ազգային խորհրդային չարժանկարի արեւտանների՝ ռուսական, ուկրաինական, թուրքմենական, ուզբեկ եւ տաջիկ չարժանկարչութեան միաւորումն է։ Եւ այդ պատճառով, խօսելով խորհրդային չարժանկարչութեան տասն եւ հնգամեակի մասին, մենք պէտք է խօսենք ազգային չարժանկարի արեւտանների ամման մասին։ Այդ կապակցութեամբ որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում այդ ազգային արեւտանների մէկի՝ Հայ Շարժանկարի անցած ուղին, նրա նուաճումներն ու թերութիւնները իր գործունէութեան տասն եւ երկու տարուա ընթացքում։

Ի՞նչ էր ներկայացնում իրենից Հայտասանի

«չարժանկարչութիւնը» մինչեւ խորհրդայնացումը: Երկու խարխուլ չարժանկարային թատրոն Երեւանում ու Լենինականում — ահա ամբողջ չարժանկարային ցանցը», եւ ոչ մի մետր ֆիլմ սեփական արտադրութիւն: Հիմնադրելով 1923 թւի Ապրիլին, Հայ Շարժանկարը իր գործունէութիւնն սկսել է՝ չառանալով անցեալից եւ ոչ մի ժառանգութիւն, չունենալով չարժանկարային ցանց, չարժանկարային գործարան, ստեղծագործող կադրեր, սարքաւորում եւ այլն: Իսկ ի՞նչ ունի այժմ Հայ Շարժանկարը իր ակտիվում՝ — չարժանկարային գործարան, աշխատանոց եւ լաբորատորիա, 28 գեղարուեստական ֆիլմ, 37 ագիտ–պրոպ, 6 վիտա–ուսումնական ֆիլմ եւ 110 համար կինո–խրոնիկա (քրոնիկ): Աւելացրէք սրան 115 կինո–կէտ մեր քաղաքներում ու գիւղերում, — եւ պարզ կը լինի, թէ ինչպիսի նւաճումներով է դիմաւորում Հայ չարժանկարը խորհրդային չարժանկարչութեան տասն եւ հնգամեակը: Իսկ նրա տնտեսական գործունէութեան ցայտուն ցուցանիշն է — 60 ռ. մտից բարձրացել, որով Հայ Շարժանկարը սկսել է իր գործունէութիւնը 1923 թւին, եւ 4 միլիոն ռուբլի առ մէկն Յունվարի 1935 թւի:

Ո՞րն է Հայ Շարժանկարի արտադրած ժապաւէնների նիւթը, բովանդակութիւնը, ի՞նչ խնդիրներ է նա յառաջադրել իր ստեղծագործող կադրերին:

Այս տեսակէտից Հայ Շարժանկարի արտադրած ֆիլմերը կարելի է բաժանել չորս տեսակի — անցեալի զրական ժառանգութեան էկրանիզացիա, Հայաստանի եւ հարեւան ժողովուրդների յեղափոխական–ազատագրական պայքարը, սոցիալիզմի շինարարութեան եւ պայքարի խնդիրների դրսեւորումը եւ մանկական ֆիլմեր:

Առաջին տեսակի նկարների շարքին են պատկանում — «Նամուս», «Զարէ», «Նոր եւ Նորը», «Զար Ոգի», «Փիւոր», «Աւուշ» եւ «Պեպո»: Ցատկանշականն այս ֆիլմերի նկատմամբ այն է, որ բեմադրող դերասանը հին կենցաղի խնդիրներին մօտեցել է այսօրւա դիտողի դիրքերից, վեր հանելով երեւոյթների սոցիալական արժէքները, ծաղրելով բացասականները եւ ստիպելով դիտողին համեմատել իր տեսածն այսօրւա իրականութեան հետ, պայքարել հին կենցաղի եւ սովորոյթների մնացորդների դէմ՝ ի սպառ վերացնելով այն «էկոնոմիկայից եւ մարդկանց գիտակցութիւնից»: Սրան պիտի աւելացնել եւ այն, որ վերոյիշեալ ֆիլմերն իրենց դեղարուեստական որակով չատ բարձր են, երբեմն նոյն իսկ խորհրդային ողջ չարժանկարչութեան լաւագոյն ֆիլմերի չարքն են դասւել («Նամուս», «Փիւոր», «Պեպո»): Իսկ այս յաջողութեան համար մենք պարտական ենք վաստակաւոր դերասանուհի Հ. Բեկնազարեանի, դերասանուհի Պ. Բարխուդարեանի եւ դերասանուհի Մարտիրոսեանի բարձրորակ ստեղծագործական աշխատանքին, այլ եւ մեր մեծ գրողների՝ Ա. Շիրվանզադէի եւ Ց. Թումանեանի երկերի գրամատիկական բարձր կառուցուածքին: Դասականների վերարտադրութիւնը յատկապէս եւս պէտք է տեղ դանի Հայ Շարժանկարի արտադրական պլանում: Ցատկանշական այս ֆիլմերի նկատմամբ այն է, որ բեմադրող դերասանուհին

ւած վիճակին ու յուզափոխական պայքարն ընդդէմ իրենց երկրի հոգեւորականութեան, ֆէոդալներէ եւ բուրժուազիայէ, ինչպէս եւ անգլիական ու ռուսական իմպերիալիզմէ: Այս կարգի ֆիլմերի մէջ լաւագոյններն են՝ «Խազփուշը», «16–ը դը», «Տունը Հրաբուխի վրա» եւ «Մեխսիկական Դիպլոմատները», որոնց մէջ մեր լաւագոյն դերասոյցները կարողացել են տալ աշխատաւորութեան եւ գիւղացիութեան յաղթական պայքարն ընդդէմ դաշնակիզմի, մաղձերիզմի, սպիտակ–գվարդիականութեան, մենչեվիզմի եւ մուսավաթիզմի: Ամենայայտնի յեղափոխական պայքարի նիւթը պէտք է յաւաջիկա տարիներում աւելի մեծ տեղ գրաւի Հայ Շարժանկարի ստեղծագործական աշխատանքներում: Վերջինս դեռ նոյն չի կարողացել մեծ կատներ կերտել Մայիսեան հերոսական սպառամարտութեան կամ քաղաքացիական կռիւների շրջանից. Զրահակիրը, Սարուխանեանը, Ենոքը, կամ Տաթեւի բարձունքներից անդունդը նետուած կոմսենախատները դեռ նոյն սպասում են իրենց ստեղծիչներին, որոնց յեղափոխական ներքին եւ դերասոյցներին, պարտականութիւնն է տալ հայկական Զապայեւներ, տալ մեր մեծ էպոխայի լաւագոյն դեղաբանութեան պատկերասրումը:

Երբորդ տեսակի ֆիլմերն են՝ «Հինգը ՝ննդան», «Գոբին», «Երկիր Նայիրի», «Քրդեր–եզիդներ», «Գոյը», «Մի Դէպք Սեն–Լուի քաղաքում», «Լոյս եւ Ստուերներ», «Անքաղը» եւ «Հայաքը»: Սրանց նիւթերը արդիական խնդիրներն են, սոցիալիզմի հինաբարութեան տարբեր բնագաւառները: Այստեղ են՝ Խորհրդային Հայաստանի տնտեսական նաճումները, բանւորական դիւտարարութիւնը, աշխատաւորութեան ոգեմակացումը, գիւղական ուսուցչի դերը մշակութային յեղափոխութեան ասպարիզում, պայքար պարապուրդի եւ խոտանի դէմ, պայքար հաւաքատնտեսային դաշտերում, մրքերումները գիւղում, գրագիտութեան տարածումը քրդերի մէջ եւ, վերջապէս, դաղութահայ աշխատաւորութեան պայքարն ընդդէմ Դաշնակցութեան: Այս տեսակի ֆիլմերից առանձնապէս բարձրորակ են՝ «Երկիր Նայիրին», «Քրդեր–Եզիդները» եւ «Սեն–Լուին»: Սակայն ընդհանուր առ-

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ «ԱՆՈՒՇ»ԷՆ
Խորհրդային Հայաստանի շարժանկարային արտադրութիւններէն մէկը, որ գնահատուեցաւ ժամանակին Ամերիկեան մամուլէն, մէջն կը, որ գնահատեցաւ ժամանակին Ամերիկեան մամուլէն, մէջն
ըլլալով «Նիւ Եորք Թայմզ»ը

առաջ արդիական նիւթեր չօչափող ֆիլմերը թէ՛ ըստ քանակի եւ թէ՛ ըստ որակի չատ հետու են բաւարար համարելուց: Դալիք տարիներում թեմատիկ պլանի աւ նադն երկը–չորրորդը պէտք է նիւրած լինի արդիականութեան հարցերին, եւ դործարանի լաւագոյն ստեղծագործ ուժերն այս ասպարիզում պէտք է առաւելագոյն չափով հանդէս բերեն իրենց կարողութիւնները: Մեր չարժանկարի դրամատուրգների եւ դերասոյցների ուչադրութիւնը պիտի գրաւեն ճարտարապետը, եւ ինքնարականացումը, հաւաքական անտեսութիւնը եւ այս բոլորի մէջ նոր մարդը, իշխանութիւն դեկավարող ու սոցիալիստական կեանք կառուցող բանւորն ու հաւաքատնտեսականը:

Ապա գալիս են մի չարք ոչ պակաս կարեւոր հարցեր՝ պայքար տեղական ազգայնականութեան եւ մեծապետական ազգայնամոլութեան դէմ, տնտեսական մասնագիտական իրաւունքների խնդիրը, նոր կենցաղի պայքարը հին դէմ եւ այլն, եւ այլն, — խնդիրներ եւ հարցեր, որոնք առաջ նրանք կարող են մասնակարաբել թէ՛ սցենարիստին, թէ՛ ռեժիսորին, եւ որոնք իրականում պէտք է վերակշռող տեղ գրաւեն Հայաստանի չարժանկարչութեան յետագա զարգացման ճանապարհին:

Ցաւերգ տեսակի ֆիլմերի նիւթը մանկական նիւթն է: Այստեղ պէտք է սկզբից եւ եթ յայտարարել, որ Հայ Շարժանկարը բաւարար հոգատարութիւն չի ցուցաբերել դէպի մանուկները: 12 տարի ընթացքում արտադրել է ընդամենը երեք մանկական ֆիլմ՝ «Առաջին ճառագայթները», «Կիւր հերթապահ» եւ «Միշտ պատրաստ», որոնք իրենց որակով այնքան էլ բարձր չեն: Այս բացը Հայ Շարժանկարը պէտք է ծածկի, առաւելագոյն հոգատարութիւն ցուցաբերելով մանկական թեմատիկայի բնագաւառում, արտադրելով ամեն տարի ոչ պակաս, քան մէկ մանկական ֆիլմ:

Արդիական գեղարուեստական ֆիլմերի պակասը որոշ չափերով լրացնում են ագիտպրոպֆիլմերը (քարոզչական պրոպագանդայի ժապաւէնները) եւ քրոնիկները: Այս տիպի նկարներում իրենց արտացոլումն են գտել մեր երկրի արդիւնարերութիւնը («Կաչի», «Համրակ», «Պղինձ», «Ցեքսիլ», «Ցեմենտ», «Տրանսպորտ», «Ավտոդոր» եւ այլն), գիւղատնտեսութիւնը («Արեւի գաւակը», «Կոլտնտեսական գարուն», «Երբ ծաղկում են այգիները», «Մորտակած վիշապները», «Այդըր Լիճ», «Անասնապահութիւն», եւ այլն), մշակութային յեղափոխութիւնը («Ձիշտ ուղի», «Պոլիտեխնիկ գարոց», «Բուժական բոյսեր» եւ այլն), կոմերիտմիութիւնն ու պիոներիան («Հետամտիլների կոմսոմոլ», «Վաղերային կեանք»), Կարմիր Բանակը («Մանէօվրներ», «Պ.Վ.Ո» եւ այլն եւ այլն) — սոցիալիստական չինարարութեան գրեթէ բոլոր բնագաւառներն այս կամ այն չափով գրսեւորել են վերոյիշեալ մշակութային ֆիլմերում: Իսկ Հայ Շարժանկարի քրոնիկը արձագանգել է մեր երկրի բոլոր կարեւոր դէպքերին եւ երեւոյթներին, ցոյց տալով պատասխանի վրա սոցիալիստական չինարարութեան ամենագաղափարական բնագաւառները եւ ծանօթացնելով ոչ միայն մեր երկրի աշխատաւորութեանը, այլ եւ ողջ Միութեանը՝ Խորհրդային Ս. Հ. Միութեան ընտանիքի մէջ մտնող Խորհրդային Հայաստանի սոցիալիստական ածի եւ վերելքի հետ:

Սակայն այս բոլոր արտադրած ֆիլմերը, ինչպէս եւ այլ ազգային չարժանկարի արեւտրների արտադրանքը չէին տեսնի մեր բանւորն ու հաւաքատնտեսականը, եթէ չստեղծէր չարժանկարային ցանց թէ՛ քաղաքում եւ թէ գիւղում: Ի՛նչ խօսք, որ 115 կինո-կէտը ոչ մի կերպ չի կարող բաւարարել մեր երկրի մօտ հազարի հասնող գիւղերը եւ ամած քաղաքները: Ցառաջիկա տարիներում Հայ Շարժանկարը պիտի ընդարձակի իր չարժանկարային ցանցն այն հաշւով, որ երկրորդ հնգամեակի վերջին հասցնի կինո-կէտերի թիւը առ նուազն

«ԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ»
Հայկինոյի ցնցող արտադրութիւններէն մէկը, որ հին կեանքին կը հակադրէր խորհրդային կենցաղը: Նկարը կը ներկայացնէ հայ գիւղացիի կեանքը Դաշնակներու տիրապետութեան ժամանակ

ԱԻԵՏ ԱՒԵՏԻՍԵԱՆ ՊԵՊՈՅԻ ԴԵՐԻՆ ՄԷՋ
Բեմադրութիւն Պետ. Ա. Կարմրադրօշ Թատրոնի

450–ի յաւուրն ուշադրութիւն դարձնելով մնայուն չարժանկարներուն վրա: Յանգէտ լայնացմանը դուռ տալու պէտք է բարելաւել ցուցադրութիւնները բակը, գպրոցների կինոֆիկացիան, համր կինոների հնչիւնաւորումը (արդէն 1935 թուին 15 չրջանային հնչիւնաւորումը (արդէն 1935 թուին 15 չրջանային հնչիւնաւորում են), կառուցել չարժանկարան յատուկ չէնքեր, կիրառել բաժանորդագրութեան դրութիւն եւ այլն, եւ այլն: Չարժանկարութեան դրութիւն եւ այլն, եւ այլն: Չարժանկարչական ասպարէզում Հայ Չարժանկարը դեռ եւս չափան անվերիզում Հայ Չարժանկարը դեռ եւս խոշոր անելիքներ ունի, սակայն նրա բոլոր մէջոխոշոր անելիքներ ունի, սակայն նրա բոլոր մէջտաւումներն ի դերեւ կ'անցնեն, եթէ չենք չէջտաւումներն ի դերեւ կ'անցնեն, եթէ չենք չէնաչէն կուսակցական, խորհրդային կոմունիստ ենաչէն կուսակցական, խորհրդային կոմունիստ բիտասարդական եւ արհեստակցական միութենբիտասարդական եւ արհեստակցական միութեական կազմակերպութիւնների առաւելագոյն օժանական կազմակերպութիւնների առաւելագոյն օժանդակութիւնը, մի բան, որ մի չարք չրջաններում դակութիւնը, մի բան, որ մի չարք չրջաններում դրդեպ բացակայում է: Բնորոչն այն է, որ չարդրեպ բացակայում է: Բնորոչն այն է, որ չարժանկարչացման գործը լաւ է այնտեղ, ուր ապաժանկարչացման գործը լաւ է այնտեղ, ուր ապահովաբար է եղել չրջանային օժանդակութիւնը: Այդպիսի չրջանների թուին են պատկահոված է եղել չրջանային օրգանների օժանդակութիւնը: Այդպիսի չրջանների թուին են պատկաթիւնը: Այդպիսի չրջանների թուին են պատկաթիւնը: Այդպիսի չրջանների թուին են պատկաթ

յատուկ նպատակի ֆինուլտուա, ուր ստեղծագործական կազմերի հետ սիստեմատիկ պարապմունքներ են տեղի ունենալու դրամատուրգիական պատմութիւնից, արուեստի տեսութիւնից, քաղաքատնտեսութիւնից, լենինիզմից, դիմամատից եւ այլ առարկաներից: Անհրաժեշտ է յետագայում աւելի համարձակ կերպով թատրոնի աշխատողներին, յատկապէս դերասուդիներին ներգրաւել չարժանկարչութեան ասպարէզը: Կազմերի գծով երկու հիմնական բաց եւս ունի Հայ Շարժանկարը, դա՝ սցենարիստների եւ դերասանների հարցն է: Հայ Շարժանկարը միշտ փորձել է մեր գրողներին ներգրաւել չարժանկարի թատերագրների չարքերը, կապել նրանց չարժանկարի հետ, սակայն արդիւնքը չի կարելի բաւարար համարել. բացի Ակսել Բակունցից եւ ե. Չարենցից, որոնք աւել են մեզ մի չարք բարձրորակ սցենարիաներ, մնացած գրողների կապը սիստեմատիկ բնոյթ չի ունեցել (Վ. Տեառնի, Զարենց, Ալազան, Նարիւ Զարեան, Սա. Բաղդասարեան, Թոթովենց, Տ. Հախումեան, Աբգալ, Տարօնցի, Ան. Վարդանեան, Մ. Մանուէլեան, Մ. Գրիգորիչ Աբմէն եւ ուրիշներ): Անհրաժեշտ է աւելի խորացրած եւ սիստեմատիկ ներգրաւման միջոցներ մշակել, որովհետեւ գրող-կինո-դրամատուրգն այսօր դարձել է ֆիլմի արուեստի որոշող հիմնական դէմքերից մէկը՝ դերասուդիայի կողքին:

Գալով դերասանական կազմերին, Հայ Շարժանկարը ունի չորս հնորհալի մշտական դերասաններ՝ Տ. Մախմուրեան, Մ. Գարագաշ, Մ. Զրպետեան, Ա. Քեֆէյեան: Անհրաժեշտ է ստեղծել մշտական դերասանների աւելի մեծ կազր, եւ այս խնդրում մեր թատրոնները պէտք է դան մեզ օգնութեան՝ տպատելով որոշ կարող դերասաններին եւ մշտապէս տրամադրելով չարժանկարին:

Զենք կարող չյիշատակել մեր թատրոնների այն դերասաններին, որոնք իրենց սիստեմատիկ մասնակցութեամբ Հայ Շարժանկարի նկարահանած ֆիլմերում խոշոր չափով նպաստել են այդ ֆիլմերի գեղարեստական բարձր որակին՝ ստեղծելով մշտյուն եւ ամրողջական օբրազներ: Դրանցից յիշատակութեան արժանի են՝ ժողովրդական դերասան Յ. Աբէլեան, վաստակաւոր դերասան-դերասանուհիներ Յասմիկ, Աւետեան, Ներսիսեան, Աւետիսեան, Զաւեան, Մանուէլեան, Գուլազեան, դերասաններ՝ Տ. Այվազեան, Ն. Մանուչարեան, Հ. Խաչատեան, Դ. Մալեան, Ա. Ամիրբեկեան, Ա. Պապեան, Գ. Գաբրիէլեան, Վ. Վարդանեան, Օրի, Գավրոշ, Բրեշէ, Մ. Բերոեան եւ ուրիշներ:

Ամենահրամայական պահանջը, որ այսօր դրւած է Հայ Շարժանկարի առաջ, դա նոր չարժանկարային դործարանի կառուցումն է, որտեղ աեւ գոյութիւն ունեցող դործարանն իր տեխնիկայով ի վիճակի չէ լրիւ բաւարարելու բարձրորակ ֆիլմի պահանջները: Նոյնքան կարեւոր եւ անյետաձգելի խնդիր է երեւանի եւ Ալլահվերդու նոր

ԱՐՈՒՍ ՈՍԿԱՆՅԱՆ
Պետական Առաջին Կարմրադրօշ Թատրոնի Վաստակաւոր Դերասանուհի եւ Եղիշէ Չարենցի Գործերու Լաւագոյն Արտասանողը

բակատյց չարժանկարային թատրոններէ չէնքերի չինարարութեան աւարտումը 1935 Թ-ի ընթացքում:

Մոչոր նաեւ-մներով է դիմաւորում Հայ Շարժանկարը խորհրդային չարժանկարչութեան 15-ամեակը, սակայն կ'ւ աւելի խոշոր խնդիրներ են ծառացած նրա առաջ՝ վերացնելու համար եղած ղղալի թերութիւնները, յատկապէս «հանած նկարների որակական կողմի ընդհանուր առմամբ անբաւարար լինելը եւ գիւղի անբաւարար չարժանկարչացումը» (Ընկ. Ա. Ստանչեանի զեկուցումից Հայաստանի Կոմունիստ (Բոլշեվիկ) Կուսակցութեան Իններորդ Համագումարում): Այս խնդիրների եռանդուն եւ բոլշեվիկեան իրագործումը Հայաստանի չարժանկարչագէտների ամենօրեայ սիստեմատիկ պայքարի բովանդակութիւնը պիտի կազմի:

Ենարհիւ Հայաստանի Կոմունիստ (Բոլշեվիկ) Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի եւ Հայաստանի կուսակցական կազմակերպութեան առաջնորդ ընկ. Ստանչեանի բոլշեվիկեան, օպերատիւ զեկավարութեան՝ Հայաստանի պրոլետարիատը կարողացաւ ոչնչից ստեղծել չարժանկարչային արեւտ իր երկրում, ձեռք բերել ղղալի նուաճումներ, եւ նոյն այդ բոլշեվիկեան զեկավարութեամբ Հայաստանի չարժանկարչագէտները կը տան երկրին նոր «Զապայեվ»ներ, «երջոք Մորհուրդենի երկրին արժանի ֆիլմեր. մեծագոյն լաբատուրութեամբ կը պայքարենք մեր գիւղով՝ յանուն սոցիալիզմի, որը կառուցում է ամրողջ երկիրն ընկեր Ստալինի գլխաւորութեամբ (չարժանկարչութեան ստեղծագործող աշխատողների դիմումից ընկ. Ստալինին):

Այս բոլորի համար անհրաժեշտ ուժերը, բոլը եւ սէրը դէպի չարժանկարն ունեն Հայաստրող ենք հաստատացնել կուսակցութեանն ու կառավարութեանը՝ յաղթանակի ոտնակատարութեան այս փառապանծ օրերին:

Լ· Մ·

1934-35 ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԱՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐ

ՆՈՐ ԱՃԻ ԵՒ ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

Առաջին պետթատրոնն աւարտեց 1934–35 թատրոնական տարին: Այդ տարին մտաւ մեր թատրոնական կուլտուրայի պատմութեան մէջ որպէս նոր աճի եւ հասունութեան տարի:

Եթէ նայինք մի թուղթիկ հայեացք նետենք անցեալ սեզոնում կատարուած աշխատանքի վրա, տպա կը տեսնենք, որ աւելի են բարձրացել մեր աշխատաւորական մասսաների, մեր կողմակիցների հանդիսական դեղաբեւեռական պահանջները: Խորհրդային թատրոնի հանդիսականներին այժմ չեն բաւարարում ամեն տեսակի բեմադրութիւն ու դերակատարում: Նրանք պահանջ են առաջադրում, որ իրենց տրւի արւեստի բարձրորակ գործ՝ լաւ բեմադրութեամբ եւ բարձրարժէք խաղով:

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՌԵՎԻԶՈՐԻՆ
Բեմադրութիւն Պետական Ա· Կամերային Թատրոնի

Ոչ մի տարակոյս չկայ, որ առաջին պետթատրոնի անցեալ սեզոնի ռեպերտուարում, քիչ թացառութեամբ, արժէքաւոր պիէսներ կան:

«Պեպո», «Խաբարաւա», «Մակբէթ», «Ռեվիզոր», «Եգոր Բուլչէև», «Ֆիգարօ», «Ամպրոպ», «Շահնամէ» եւ միւսները առաջնակարգ պիէսներ են եւ դրանց յաջող բեմադրումը չի կարող չգրաւել, իրեն չկապել մեր հանդիսականին, չի կարող չբաւարարել նրա յարաճուն պահանջները: Հենց այդ տեսակէտից բոլորովին զարմանալի չէ, որ բոլոր ներկայացումներին, լինեն նրանք նոր, թէ կրկնուող բեմադրութիւնները, դահլիճը մչտապէս լիքն է եղել: Եւ թատրոնական սեզոնում երեւանի պետթատրոնի 217 ներկայացումներին յաճախել են մօտ 130 հազար հանդիսական:

Յատկանշով կրկնուող բեմադրութիւնների մասին որոնք ժամանակին անհրաժեշտ գնահատութիւն ստացել են մեր թատրոնական հասարակութեան եւ մամուլի կողմից, մենք աւելորդ չենք համարի մի քանի խօսք ասել անցած թատրոնական սեզոնի նոր բեմադրութիւնների մասին:

Ինչպէս յայտնի է, Սունդուկեանի «Պեպո»-ն երկար ժամանակ է, որ մեր բեմից չի իջնում· սակայն ռեժիսէօր Գուլլակեանը, քաջ գիտակցելով «Պեպո»յի բեմադրական լայն հնարաւորութիւնները, այս սեզոնում «Պեպո»ն դրեց նոր բեմադրութեամբ: Այն փաստը, որ «Պեպո»ն մեր թատրոնում ունեցաւ իր 100–րդ ներկայացումը, պերճախօս կերպով վկայում է այն մասին, որ «Պեպո»ն՝ հայ կլասիկ դրամատուրգիայի այդ գագաթը, ամենակենսունակ երկերից մէկն է եւ դեռ երկար կը յուզի մեր թատրոնական հասարակութեանը:

Չի կարելի առանձնապէս չընդգծել այս թատրոնական սեզոնում ինքնուրոյն մի պիէսի, վաստակաւոր դերասան Ջանանի «Շահնամէ»յի մեծ յաջողութիւնը առաջին պետթատրոնում: Լաւագոյն պիեսների համամարդկային կոնկրետում 3–րդ մրցանակի արժանացած այս պիեսը,— վաստակաւոր ռեժիսէօր Գուլլակեանի բեմադրութեամբ եւ Արուսեակեանի արտաքին ձեւաւորմամբ, այս թատրոնական սեզոնի կարեւոր ելոյթներից մէկը հանդիսացաւ:

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՖԻԿԱՐՈՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԻՆ
Բեմադրութիւն Պետ· Ա· Կամերային Թատրոնի



ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՍՆԴՈՒԿԵԱՆՑԻ ԽԱՏԱՐԱԼԱՑԵՆ
Բեմադրութիւն Պետ. Ա. Կարմբադրօշ Թատրոնի
Դերասան Ատետ Ատեփհան վաճառականի
Դերին Մէջ

Ինքնուրոյն դրամատուրգիայից անցեալ սեզոնում բեմադրուեց Դ. Դեմիրճեանի «Նապոլեոն Կարկոտեան» կոմեդիան, որը 22 անգամ ներկայացուեց:

Թատրոնի յատկապէս երիտասարդական ուժերի մասնակցութեամբ այս սեզոնին բեմադրուեց կիրշոնի նոր պիես «Հրաշալի ձուլածքը», Գ. Գաբրիէլեանի բեմադրութեամբ: «Հրաշալի ձուլածքը» ոչ միայն արժէքաւոր է այն տեսակէտից, որ ժամանակակից թեմատիկայով գրուած մի սրամիտ կոմեդիա է, այլ եւ այս պիեսի բեմադրութեամբ մեր երիտասարդ կազդերը փայլուն քննութիւն բռնեցին, տալով ըստ ամենայնի յաջող խաղ:

Այդ պիեսի բեմադրութիւնը պէրճախօս իրիտասարդիա է այն բանի, որ մեր պետթատրոնում հոգատար վերաբերմունք կայ դէպի նոր, ընդունակ երիտասարդ ուժերը եւ որ նրանք իրօք ստեղծագործական լուրջ աճ են ցոյց տալիս մեր Խորհրդային թատրոնի կենսաբար հոդում:

1934–1935 *թատրոնական տարին փակուեց Ա. Օստրովսկու «Ամպրոպ» դրամայով: Այդ դրամայի բեմադրութիւնը մի տեսակ եղրափակում հանդիսացաւ առաջին պետթատրոնի բեղուն աշխատանքի համար: Օստրովսկու այդ խորը հոգեբանական մտքերով եւ վարպետի ընտիր գրուած կլասիկ դրաման մեր բեմում յաւ հնչեց. նա լիակատար չափով ընդունեց մեր խորհրդային հանդիսականի կողմից, գնահատելով իր բարձր արժէքի համաձայն: Մեր թատրոնի ակտիւական ոճն իր ամբողջ փաքթմատութեամբ ծաղկեց այդ պիեսի բեմադրութեամբ: Վաստակաւոր ռեժիսէօր Գալստեանն այդ պիեսի բեմադրութեամբ երեւան բերեց անցեալ դարի կէսերի ռուսական կենցաղի խորը ճանաչողութեան կարողութիւն:*

Այդ դրամայի բեմադրութեանը մասնակցում են մեր թատրոնի առաջնակարգ ուժերը, որոնք ընդհանուր առմամբ բարձրորակ խաղ են տալիս եւ Օստրովսկու հոյակապ երկը վարպետութեամբ հանդիսականներին են հասցնում:

Այս թատրոնական տարում ստեղծագործական նոր աճ ունեցան արդէն յայտնի մի շարք դերասանները: Ժող. դերասանուհի Յասմիկը «Ամպրոպ»ում խաղացած իր դերով (կարանիխա) ցոյց տուեց որ ընդունակ է մեծ վարպետութեամբ դէմ տալ այդպիսի տիպեր, որ սովորաբար չհան նրա ամպլուայում:

Ժող. դերասանուհի Ա. Ոսկանեանը, որը փայլուն եւ տաղանդաւոր կերպով կարող է կերտել յատկապէս ռոմանտիկական տիպերը, նոյն պիեսում իր դերակատարութեամբ ցոյց տուեց, որ միանգամայն ընդունակ է հարազատութեամբ եւ անկեղծօրէն դէմ տալ ռուսական կենցաղից վերցրած ռէալիստական հերոսուհու տիպը: Վաստակաւոր դերասաններ Ջանան ու Վաղարշեանն այս տարի աւելի խորացրին լուրջ արտիստի իրենց ունակութիւնները:

Այս տարի աւելի քան ցայտուն կերպով երեւան եկաւ այն հանգամանքը, որ Հ. Ներսիսեանը եւ Ա. Աւետեանը լայն դիապազոնի դերասաններ են եւ որ նրանք կարողանում են վարպետօրէն կերտել մէկը մեւսից հոգեբանութեամբ, մտածողութեամբ, ինչպէս նաեւ սոցիալապէս տարբեր եւ ներհակ տիպեր: «Հրաշալի ձուլածք» պիեսի բեմադրութեան մասնակցած երիտասարդ ուժերը՝ Վ. Մարգունի, Թ. Դիլսէեանը, Գ. Մուշեղեանը եւ մի քանիները լուրջ առաջխաղացում կատարեցին այս տարի:

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՄԱՔՍԻՄ ԿՈՐԴԻԻ ԵԿՈՐ
ԲՈՒԼՅԻՋԵՎ, ՏՐԱՄԱՁԻՆ
Բեմադրութիւն Պետ. Ա. Կարմբադրօշ Թատրոնի
վաստակաւոր դերասան Վաղարշեան Բուլիչեվի
եւ վաստակաւոր դերասանուհի Յասմիկ Մայրապետի դերերուն մէջ

Անուշ Օպերայի հաճախարեղ կոմպոզիտորը
ԵՐԱԺՇՏԱԳԻՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Այս ամրան դերասանական երկու կոլեկտիւ պէտք է գործուղուին Հայաստանի մի շարք շրջանները բրիգադային ներկայացումներ տալու համար: Բրիգադի համար արդէն պատրաստուած է Աբրաւոմի «Վեց սիրելիները»:

Նոր թատրոնական սեզոնը ևնթադրւում է բացել հոկտեմբերի սկիզբներին: Ռեպերտուարը դեռևս օրիէնտիր է: բեմադրելու են մի քանի նոր պիեսներ, որից երկուսն ինքնուրոյն:

Պէտք է մատնանշել, որ ինքնուրոյն պիեսների հարցը մեր թատրոնում դեռ մնում է կենսրոնական խնդիր, նոր հեղինակների լաւագոյն գործերի ցուցադրումը թատրոնի կարեւորագոյն աշխատանքներից մէկն է լինելու առաջիկայում: Կլասիկներից, ի միջի այլոց, նոր թատրոնական սեզոնում նախատեսւած է բեմադրել Շեքսպիրի «Աբքա Լիրը»:

Թատրոնը նախատեսում է Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձի առթիւ կազմակերպել մեծ ինսցենիրովկա, որը պէտք է պատկերի մեր յեղափոխական անցեալը, քաղաքացիական կռիւները եւ սոցիալիստական շինարարութիւնը: Անհրաժեշտ է, որ այդ գործին ընդհուպ մօտենան դրականութեան եւ արւեստի մեր գործիչները, որպէսզի թատրոնը հնարաւորութիւն ունենա լայն կերպով երեւան բերել մեր յեղափոխական անցեալը, հերոսական առօրեան, սոցիալիստական մեծ յաղթարշաւի փառաւոր էջերնան:

Շեյխսպիրի Արքա Լիրը խորհրդային Հայաստանի Պետ. Ա. Կարմրադրօշ Թատրոնի բեմին վրա

Խորհրդային Հայաստանի առաջին պետական թատրոնը լուրջ նւաճումների հանրագումարով է փակում իր թատրոնական տարին. մնում է, որ թատրոնի աշխատողները եկող սեզոնին նորանոր բարձունքներ նւաճեն սոցիալիստական մեծ արւեստի նւաճման ճանապարհին:

Մ· ԴՈՒՐԳԱՐԵԱՆ

ՄԵԾ ԱՐԻԵՍՏ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

(ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ)

Լենինականի Պետ· Երկրորդ Թատրոնի Ռեժիսոր
ԸՆԿԵՐ Ա.ՃԵՄԵՆԱՆ

Լենինականում եւ երեւանում վերջերս կազմակերպեցին տիկնիկային թատրոններ, որոնց պահանջը շատ մեծ էր:

Երկու թատրոնն էլ սկսեցին իրենց համեստ, անաղմուկ աշխատանքը եւ բաւականին դժուարին պայմաններում, ճիշտ է, սակայն Լենինականի ու Լուսժողկոմատի եւ սակաւաթիւ ընկերների ակնկալութեամբ — չարունակում են իրենց գործը:

Լենինականի թատրոնն ունի արդէն «իր անցեալը»· երկու ամսուա ընթացքում նա ունել է 19 ներկայացում, մօտ 3000 հանդիսատեսներով: Այս թատրոնը մեծ հետաքրքրութիւն է առաջացրել թէ՛ մեծերի եւ թէ փոքրերի մէջ:

Թէ՛ երեւանում եւ թէ՛ Լենինականում այս նոր գործի չուրջը համախմբուել են «մանկական արուեստի սիրահարներ, իսկական էնտուզիաստներ, որոնք աշխատում են հաճոյքով, հպարտութեամբ՝ որ գլխաւորում են մի նոր չարժում, նոր կուլտուրա, որոնք ապրում են իրենց գործով եւ ոգեւորւում հետեւկորներով:

Մենք խորապէս համոզուած ենք, որ ընկերները, երեխաները էնտուզիաստ կոլեկտիվները, այս նոր գործի պիոներները կ'արդարացնեն իրենց եւ ակնկալը կը գնեն մեզ մօտ մի նոր կարեւոր արեւսաի, որը չատ կարճ ժամանակամիջոցում կը գրաւի հազարաւոր երեխաների ջերմ համակրանքը եւ կարեւոր դեր կը խաղա մատաղ սերնդի դաստիարակութեան գործում:

* * *

Լենինականն իր «Թատերական սեզոնը» բացեց «Ցեղափոխական Տաճեան» (ըստ վերնագրի պատմուածքի) պիեսով, «Կապիկն ու հայելին» յայտնի առակով ու պարերով: Պիեսի ձեւաւորումը՝ ե՛ւ բեմը, ե՛ւ «դերակատարները» պատկանում է ռեժիսէօր Գեղոզլանի. կահաւորումը չքեղ է, դուրեկան· խաղը՝ կայտառ, զուսպ, մտածուած· տիպերը բնորոշ են, լիարիւն: Պարզ է ու դիւրիչ փոքրիկ Տանեան իր խելացի, հետեւողական խաղով, յեղափոխական բանուորն իր տոկունութեամբ, ծնողի-մանկավարժի դուրգուրանքով դէպի յեղափոխական աղջիկը· սրամիտ է Թուղթկինների ամբոխը տեղն ու տեղը եւ հանդիսատեսների մէջ ցրիւը: Աբտաանութեան թերութիւններն ու աղքատ երաժշտութիւնը (միայն դաշնամուր) ժամանակաւոր երեւոյթներ են եւ արդիւնք դեռեւս անբաւարար պայմանների:

Ընկ· Հ· Գիւլազեանն այժմ աշխատում է իր նոր բեմադրութեան վրա «Աներես գողը մարդ դարձաւ», որի նիւթը վերցած է Բելոմոր — Բալթիկ ջրանցքի կառուցումից եւ արտաուէշ կերպով պատկերացնում է «վերադաստիարակուած մարդուն», նախկին «խուժանին», իբրեւ սոցիալիստական հոյակապ գործի չքանչանակիր:

Երեւանի թատրոնն աշխատանքն սկսեց հապճեպ: Եւ չունենալով ձեռքի տակ աւելի յարմար (պարզ, թեթեւ, զարճալի) պիես, ընտրեց «Զարեանցի Պետիկը» (ըստ Մարչակի, Մ. Դուրգարեանի մշակման)· ընկ· Ռեջաեանը (դեկտար), գործին դեռեւս անծանօթ, մեծ սիրով ու տոկունութեամբ՝ իր ընկերների հետ ձեռնարկեց այդ պիեսի մշակման, սկսնակ ընկերները գործն անշուշտ կ'ուենեան իր թերութիւնները եւ ունի — սակայն պիեսում պահպանուած է կենդանութիւն, ոիթմ՝ խաղի մէջ, առողջ հումոր: Ցաղող չեն դեռեւս տիկնիկները:

Աւելի հետաքրքրական է միւս բեմադրութիւնը՝ «Շունն ու կատուն» ըստ Թումանեանի, հետեւելով հիմնականում երաժիշտ Մուրատեանի մշակմանը (մանկ· օպերա)· պիեսն ըստ Թումանեանի՝ կազմել է ռեժիսէօր Ա· Աղաեանը: Թումանեանի տեքստն օգտագործուում է ամբողջութեամբ, սակայն անխուսափելի «վերադրներով»· սրամիտ է ու արժէքաւոր դասարանի տեսարանը, որտեղ պանդան անձեր հանդէս են գալիս կենդանիների կերպարանքով ու վարքով:

Այստեղ է, ինչպէս եւ գրուածքի «սոցիալական մեկնաբանման» մէջ — ներկայացման թոյլ կողմը· Թումանեանի տեքստը խնամքով լրացնել հնարաւոր չեղաւ դեռ եւս· մշակումը կատարուած է չատ, սակայն խաղն անցնում է աշխոյժ (տեղ-

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԴԵՐԱՍԱՆ ՋԱՆԱՆ

Հեղինակ ՇԱՀՆԱՄԷ տրամային, որը արժանացաւ Համամիութենական երկրորդ մրցանակին եւ կը բեմադրի Խորհրդային Միութեան շատ մը թատրոններու եւ երեւանի Պետ. Ա. կարմ-րադրօշ Թատրոնի մէջ մեծ յաջողութեամբ

ԴԵՐԱՍԱՆ ԱԻԵՏ ԱԻԵՏԻՍԵԱՆ

որը հռչակեցաւ որպէս վարպետ մը, ընդունակ՝ կատարեայ յաջողութեամբ ներկայացնելու իրարու բոլորովին հակոտնեայ տիպեր

տեղ աղմկալի), խօսքի ու խաղի զգալի ներդաշնակութեամբ (մանաւանդ Քուչին): Ձեւաւորումը հետաքրքրական է, գրաւիչ, թէպէտ տեղ-տեղ պրիմիտիվ: Խօսքի սիմեմը դեռ եւս թերութիւններ ունի: Դիմակները կոպիտ են, անհամաչափ. միակ ջուխտն անոր է տալ խաղի ու խօսքի (չարժման ու ձայնի) հարուստ կոլորիտը: Առաջիկայում, աւելի նորմալ պայմաններում, թատրոնը դեռ շատ կզբաղի այս պիեսով, եւ Թումանեանի այդ հիւթեղ ու կենսուրախ գործը կը մշակի իրեն անհրաժեշտ խնամքով ու հոգատարութեամբ, դառնալով տիկնիկների թատրոնի լաւագոյն գործերից մէկը:

* * *

Շատ անելիքներ ունեն մեր՝ առ այժմ թոյլ, սակաւանդամ, նիւթական սուղ պայմաններում աշխատող այս երկու թատրոնները, որոնց վիճակից օգտուել խորհրդային թատրոնի փորձերից՝ այս հնագարեան կուլտուրան («Ղարա-Գյոզ», «Փահլեւանի», Եւրոպայում՝ Պենչ, Պոլիշինել, Պուլչինելլոս եւ, վերջապէս, հանրածանօթ Պետրուշկան Ռուսաստանում) ժառանգելու, իսկական արուեստի պահանջներով մօտեցնելու եւ օգտագործելու համար:

Մեր հիմնական հարցերից է Դրամատուրգիան ստեղծելը: Մեր եւ հարեւան ժողովուրդների ֆորկլորը, կլասիկ գրականութիւնն ու արդի իրականութիւնը՝ հեքիաթի, պոեմի, բալլադի, պատմուածքի, առակի, կատակի եւ սոսկ դիալոգի մի-

ջոցով — ահա ինչ անսահման նիւթ ունի տիկնիկների թատրոնը: Իսկ առօրեա՞ն, ուեւէ համբոյրը, հանդիսատեսների յարուցած խնդիրնե՞րը, միջամտութի՞ւնը, մասնակցութի՞ւնը:

Ոչոր խնդիրը է Պետրուշկայի տրադիցիաները ժառանգելը, նրա «օբրազն» ու ոճն օգտագործելու պրոբլեմը. կարծում ենք այստեղ պէտք է շրջանակել խորհրդային «Պետրուշկայի» բազմազան փորձերը. Պետրուշկան՝ իբրեւ ստիլ, իբրեւ բեմական տիպ եւ թատերական փիգուրա, թերեւս դոյութիւն չունենա, սակայն Պետրուշկան եւ առհասարակ տիկնիկային թատրոնը «մաքուր վիճակում» եւ սինթեզի ենթարկելով արուեստի միւս ճիւղերի հետ (կինո, երաժշտութիւն, պար, կերպարուեստ) կարող է զարգանալ եւ նոր, լիարժէք տեղ գրաւել մասսայական արուեստների մէջ:

Պարզել թատրոնի էական տարրերից մէկի՝ երաժշտութեան ընոյթը, մշակել այն, հարստացնել նորանոր ձեւերով, սկսած պարզ մելոդիայից մինչեւ յաղթական հիմն ու մանկական սիմֆոնիան — ինչ հոյակապ գործ է սպասում մեր երաժիշտներին, յատկապէս մանկավարժ երաժիշտներին:

Իսկ մեր քանդակագործներն ու նկարիչներն ամենալայն հնարաւորութիւններն ունեն նաեւելու այս արուեստը եւ խոշոր չափով նպաստելու նրա գեղարեստականացմանն ու մասսայականացմանը:

Վերջապէս, պէտք է զարգացնել նաեւ թատրոնի տեխնիկան, մտածել նոր, որակեալ կադրերի մասին եւ մեծ արուեստի բարձունքներից հասնել մինչեւ կոլտնտեսական ակումբ, մանկահրապարակ ու պիոներ կոլեկտիվ:

ԻՆՉՈՒ ԵՍ ՉԵՄ ԾԵՐԱՆՈՒՄ

(ԺՈՂՈՎՐԴ. ԳՐՈՂ Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՃԱՌԸ՝ Ե. ՄԻՒԹԵԱՆ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ)

Ես չեմ չօշափէ գրական խնդիրները, քանի որ գրականութեան մասին բոլորը խօսեցին, խօսեց եւ իմ ընկերներից մէկը, պատգամաւորութիւնից: Ես կը խօսեմ իր կարծիքով աւելի քան կարեւոր հարցի շուրջը — այն մասին, թէ ի՛նչ է արել Հոկտեմբերեան յեղափոխութիւնը կովկասի եւ ղլխաւորապէս Հայաստանի համար:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը եկաւ կովկաս, երբ Հայաստանը կործանւում էր քաղցից, երբ մենշեվիկեան վրաստանը եւ մուսաւաթիստական Ադրբեջանը քայքայած էին իմպերիալիստական բանակներից:

Այն ժամանակ մարդկային արիւնը լցւում էր բաղուի եւ Թիֆլիզի փողոցները, Հայաստանի գիւղերն ու քաղաքները, իսկ իմպերիալիստական բանակներն արտասահման էին արտահանում վրաստանից՝ մանգանից, Ադրբեջանից՝ նաւթ, քաղցած ու ապքաւացած Հայաստանի՝ գիւղատնտեսական վերջին մթերքները:

Այդ ժամանակ երեւաց Հոկտեմբերեան յեղափոխութեան բանակը եւ իր խօսքն ասաւ: «Կա՛նգ առ, բռնակա՛ն է, այս ձեր տեղը չէ, հեռացէ՛ք այստեղից: Մենք չենք թոյլ տա ծաղկած երկիրը ձեր գաղութը դարձնել»:

Նա դիմեց վրացի աշխատաւորութեան, հա՛յ թո՛ւրք աշխատաւորութեան ու ասաւ.— «Ու՞մ համար էք պատերազմում, կեանքը ձեզ չի տրւած նրա համար, որպէս զի ոգանէք մխիթանց, այլ նրա համար, որպէս զի եղբայրաբար օգնէք մխիթանց ապրել»:

Ի՞նչ ստացաւ Հայաստանը, Խորհրդային Իշխանութեան յաղթանակից յետո:

Ինչ որ 13—14 տարւա ընթացքում երկրի դէմքն այնպէս փոխուեց, որ անճանաչելի դարձաւ:

Դաշնակցական Հայաստանում ոչինչ չէր մնացել, աւերակներից բացի: Այժմ կառուցւել խուզարկութեան փոխարէն կանգնեցւած են վիճաբեր չինուորական ժողովների փոխարէն դիւցազուներն ունեն երեքարական լուսաւորութիւն:

Երեւանցին թատրոններ, քանդարաններ, դրամանութիւն: Հիմա փոքրիկ Երեւանում երեք թատրոն կա, իսկ ողջ Հայաստանում՝ տասը: Վերջապէս անգրագիտութիւնը վերջնականապէս վերացւած է: Դպրոցներում հարիւր հազարաւոր աշակերտներ են ընդգրկւել, տասնեակ հազար ուսանողներ սովորում են բարձրագոյն ուսումնական հիմնարկներում եւ տեխնիկումներում:

Չին Հայաստանում չկար այս: Ես չեմ ուզում ասել, թէ չկար գրականութիւն — այդ կար, սակայն ճնշւած էր այն ու բարոյալքւած: Եւ ինչով է Հայ ժողովուրդը պատասխանում այս բոլորին: Մեծագոյն երախտագիտութեամբ: Եթէ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ (ՇԻՐՎԱՆԶԱԴԵ)

դուք չրջէք փոքրիկ Հայաստանը, ապա նոյն իսկ նրա ամենախուլ անկիւններում, գիւղերում կը հանդիպէք Լենինի ու Ստալինի անուններին: Այդ անունները երեխաներն են կրում:

Ես հին սերունդի մարդ եմ: Ես տեսել եմ երեք թագաւորների երեք թագաւորութիւն: Ես մի հանի ռեժիմներ եմ ապրել — ցարական ռեժիմ, կերենսկու ռեժիմը, դաշնակների ռեժիմը եւ այլն: Ես 76 տարեկան եմ: Բայց հաւատացնում եմ ձեզ, ես երբեք ինձ չեմ զգացել այնպէս ազատ, ինչպէս վերջին 8 տարիները, որ ես ապրում եմ Խորհրդային երկրում (Մոսիահարութիւններ):

Մարդիկ յաճախ ինձ հարցնում են, ի՞նչ է անում, ի՞նչ է անում, որ չէք ծերանում: Երբեք չեն հասկանում, ինչու ես չեմ ծերանում: Ես չեմ ծերանում նրա համար, որ ապրում եմ Խորհրդային իշխանութեան ժամանակ (Մոսիահարութիւններ), եւ ես էլի կ'ապրեմ, որովհետեւ ուզում եմ վերջին ուժերս, նոյն իսկ ոչ վերջին, այլ նախավերջին ուժերս տալ Խորհրդային երկրին: (Բուռն ծափահարութիւններ):

ԴՐԱՍՏԱՄԱՏ ՍԻՄՈՆԵԱՆ

ԾԱՆՐ ԿՈՐՈՒՍՏ

Շիրվանզադէի մահը ծանր կորուստ է Խորհրդային Հայաստանի գրականութեան համար:

22 տարեկան երիտասարդ Ալեքսանդր Մովսիսեանը գրական ասպարէզ մտաւ այն ժամանակ, երբ Կովկասահայ իրականութեան մթնոլորտը թունաւորուած էր ծայրայեղ ազգայնամոլութեան քարոզով, երբ դրականութիւնը սկսել էր պատրաստել իրական կեանքը: Շիրվանզադէն չէրպատրաստում այն կեղեւային փայլով, որ 80–90-ական թուականներին ձեռք էին բերում անգամ ամենաչնչին, դեռեւիկ գրողն ու հրապարակախօսը, եթէ նրանք գովերգում էին «Հայ անցեալ փառքը» եւ փաղաքարում Հայ ազգասեռնչ բուրժուազիայի ձգտումների առաջ: Շիրվանզադէն բռնեց այլ ուղի: Դժւարին էր այդ ուղին, լի հնարաւոր յուսախաբութիւններով սկսնակ գրողի համար: Տիրող գրական ճահմարտակների կողմից նա որոշ ժամանակ մատնուեց անուշադրութեան: Բայց Շիրվանզադէի չողշոդուն տաղանդը բացեց այն լայն ճանապարհը, որով սկսեց ընթանալ գրական յետագա սերունդների մեծ մասը: Այդ ճանապարհը ռեալիզմի ճանապարհն էր, իրական կեանքը ճշդրտօրէն արտացոլելու ճանապարհը: Հայ վիպագրութեան մէջ Շիրվանզադէն բացեց նոր գրական եւ նոր հորիզոններ: Եւ այժմ, երբ սոցիալիստական ռեալիզմի մեթոդին տիրանալու անհրաժեշտութիւնը հրամայական պահանջ է դարձել մեր ծաղկող ու աճող խորհրդային գրականութեան համար, մենք երախտագիտութեան զգացումով պէտք է արժէքաւորենք առաջին Հայ ռեալիստ վիպասան Շիրվանզադէի ծառայութիւնը Հայ գրականութեան զարգացման գործին:

Շիրվանզադէն, իր առաջին իսկ վիպական գրւածքում՝ «Հրդեհ Նաւթագործաքաղաքում», իրական վառ գոյներով նկարեց Բագուի — Աղգրկովկասի արդիւնաբերական այդ քաղաքի հարստահարիչների, թշւառների կեանքն ու կենցաղը: «Գործակատարի յիշատակարանից» գրւածքի մէջ նա պատկերեց խարդախ, չհամոզ, միջոցների մէջ խտրութիւն չդնող առեւտրականին, որը «բարեգործութեան» դիմակի տակ ձգտում է բարի անուան արժանանալ հասարակութեան կողմից: «Քառասի» — իր այդ գլուխ գործոցի մէջ Շիրվանզադէն ուշադրութիւն հարուստների այլանդակ, ապականւած դիմանկարը, նրանց գէշ ու չլայտ կեանքի պատկերը: Միաժամանակ նա համակրական զգացումներով արտացոլեց Բագուի այլազգի բանւորների ծանր կացութիւնը, նրանց չհատուցւած ու հարստահարումը: Մեր երկրում նոր հանրակարգ կառուցող, նոր, երջանիկ կեանք կերտող աշխատաւորները Շիրվանզադէի երկերի մէջ տեսնում են իրենց նախնիների տառապանքներն ու ցաւերը, որ մեծ ռեալիստի վրձինով պատկերել է ականատես արուեստագէտը: Շիրվազադէի բեղմնաւոր գրական գործունէութեան այս կողմը առանձնապէս բարձր գնահատականի է արժանացել մեր երկրի աշխատաւորների կողմից:

Ցառաջադէմ լուսաւորականը «Նամուսի», «Ցաւագարի» մէջ խարտանեց հայրենի բնաշխարհի նախապաշարմունքները, անձուկ, գաւառական կեանքի յետամնացութիւնը:

Վիպագիր Շիրվանզադէն խոշոր երախտիք ունեցաւ Հայ Թատերագրութեան զարգացման ասպարէզում: Նրա ազամանդեա գրիչը Հայ Թատերագրութիւնը հարստացրեց այնպիսի արժէքներով, որոնք անմահ Սունդուկեանի ռեալիստական Թատերագրութիւնը հանեցին նեղ, տեղագրական չրջանակներից: Հայաստանի Գրողների Միութիւնը համոզւած է, որ Հայ Թատրոնների կողմից Շիրվանզադէի յիշատակի լաւագոյն յաւերժացումը կը հանդիսանա նրա Թատերական որոշ երկերի եւ ամենից առաջ «Պաուէ համար»ի՝ մեր ազգային գրգռամատուցդիայի այդ գանձի տեւական պահպանումը մեր բեմի վրա:

Շիրվանզադէն Խորհրդային Գրողների Միութեան ընտանիքում ամենայարգւած, ամենասիրւած անդամն էր ոչ միայն իր գրական խոշոր արժանիքների համար, այլ եւ այն պատճառով, որ նա նւիրւած խորհրդային քաղաքացի էր: Շիրվանզադէն իր հեռաքայանց մտքով, իր ջերմ յոյզ սրտով բուրժուական նեխուող աշխարհի մըռայլ երկնակամարից դիմադարձ եղաւ դէպի մեր սոցիալիստական երկիրը, ուր պրոլետարական դիկտատուրայեամբ ծագել էր մարդկութեան նոր կեանքի արշալոյսը: Մեր երկրի աշխատաւորները դրկարաց ու սրտագաց ողջագուրեցին մեծ գրողին: Խորհրդային հողի վրա Շիրվանզադէն, արժանացած ժողովրդական գրողի պատւաւոր կոչումին, ապրեց ու մեռաւ իբրեւ օրինակելի քաղաքացի:

Հռչակաւոր Հորացիոն ասում էր. Մուսաները չեն կարող թոյլ տալ, որ արժանաւոր մարդը մեռնի: Մեր երկրում նոր կեանք, նոր մշակոյթ, երջանիկ ապագա պարգեող աշխատաւորների մուսաները անմար կը պահեն Շիրվանզադէի պայծառ յիշատակը:

ԳՈՒՐԳԷՆ ԲՈՐԵԱՆ

ՍԱՅԼՈՒՐ ՏՂԱ...

ԳՈՒՐԳԷՆ ԲՈՐԵԱՆ

Փոբրի՛կ տղա, սայլւո՛ր տղա,
Կարմրաքո՛ւշ, պայծա՛ռ տղա,
Տեսա ես ֆեզ գիւղի ճամբին,
Գիւղի ճամբին — լճի ափին,
Փոբրի՛կ տղա, սայլւոր տղա,
Արեւի պէս պայծա՛ռ տղա:

— Հօ՛, հա՛, եզօ՛, ջանիդ դուրբաս,
Իմ մարալ եզ ուժիդ դուրբաս,—
Ձայն ես տալիս գուլալ ձայնով,
Ո՛ր, հրեւած եմ ես ֆեզանով.
Սայլւո՛ր տղա, փոբրի՛կ տղա,
Կարմրաքո՛ւշ, պայծա՛ռ տղա:

Հագիդ ունես կապոյտ շապիկ,
Կապած բարակ, կարմիր գօտիկ,
Ջլի՛ր եզդ, երգիր ուրախ,
Շուտ մեծացիր, եղիր անվախ.
Սայլւո՛ր տղա, փոբրի՛կ տղա,
Ազատ երկրի — ազա՛տ տղա:

Արեւն ելաւ կապից կամար,
Փոբրիկ արեւ — դու մեզ համար,
Լիճը ծփաց ալիք-ալիք,
Աչքերիդ մէջ պայծառ գալիք.
Պզտի՛կ-պզտի՛կ, ջա՛ն իմ տղա,
Սեւ մազերով սայլւո՛ր տղա:

Այսօր փոբրիկ մի մանուկ ես,
Մեր լայն երկրի դալար ճիւղն ես,
Վաղը կ'երթաս կարմիր Մոսկով,
Կը գաս լեցուն ոսկէ խօսքով...
Սայլւոր տղա, հէ՛յ ջա՛ն, տղա,
Մեր մեծ երկրի ազատ տղա:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

ԿՈՎԿԱՍ

Մեր աշխարհի քախտի ցոլքով մարգարիտի սա՛ր
ես դու,
Երբէ ձեռով միշտ վեր բռնած պերճ գագաթի ֆա՛ր
ես դու,
Միգում փայլող սէգ սարերիդ շղթաներով երկնա-
հաս —
Հին գանձերի անզուգական, չքնաղ մի աշխա՛րհ
ես դու:

Հարիւր հազար աչքի փոխուած ջրերն ահեղ գետերիդ
Ծիծաղում են ամեն գիշեր — մութն է դարձել հէզ
գերիդ,
Բիւր գիւղերում վարդ են սփռում լոյս թաթիչ-
ներն աչերիդ,
Թէ աշխարհը մի սազ լինի, նրան ոսկի լա՛ր ես դու·

Քանի անուն լեզու ունես, բոլորն իրար հարազատ,
Դու, աշխարհի երկնքի մէջ՝ հանց Ալագեազ սա՛րն
ազատ,
Զուարես ուրիշ անուշ ճամբա երջանկութեան ճամ-
բից զատ,
Այս երջանիկ դալար կեանքին ալմաստի պատա՛ր
ես դու:

Դու մարգարտեա բաժակ վսեմ, ոսկեջրած, գինով
լի,
Ու ֆեզ այնպէս բարձր բռնած,— երբէ ախպեր,
սիրով լի՝
Նոր աշխարհին կենաց ասին ու խմեցնին գինով լի...
Քո կազդեկի նման վսեմ, մարգարտակուռ սա՛ր
ես դու:

Ռ· ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ

ՀՆՉԻՒՆՆԵՐԻ ՎԱՐՊԵՏԸ

Ա·

Ծանր հարուած հասաւ մեր երաժշտական մշակոյթին: Մահն անժամանակ ընդհատեց մեծատաղանդ արուեստագէտ, ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ հարուստ կեանքը:

Ռոմանոս Մելիքեանի մահով մենք կորցրինք ոչ միայն խոշոր ստեղծագործողին, հնչիւնների մեծ վարպետին, այլ եւ այն արուեստագէտին, որը ճիշտ հետեւկարներ էր գծում Հայ երաժշտութեան յետագայ զարգացման համար, որը իր սեփական ստեղծագործութիւններով լոյսեր էր վառում այդ մեծ ճանապարհի վրա, ձեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական երաժշտական մշակոյթի բարձունքները գրաւելու համար: Ահա թէ ինչու մեր կորուստը կրկնակի է:

Այսօր, երբ մենք տակաւին չենք սթափուել այդ ծանր կորուստից, այսօր, երբ սիրտդ կաթօտով բաբախում է սիրելի Ռոմանոսի համար, մենք դեռ եւս անհրաժեշտ չափով չենք պատկերացնում այն հարուածը, որ ստացաւ մեր երաժշտութիւնը: Ժամանակը Ռոմանոս Մելիքեանի կորուստը խորապէս զգացնել կը տայ:

Հիմա չատ ծանր է խօսել Ռոմանոս Մելիքեանի մասին, երբ թարմ է նրա հոգեթովմբը, երբ նոր են լռել արուեստագէտի թաղման մահերգի ծանրը հնչիւնները:

Բ·

Թուացեալ մի ակնարկում դժուար է անդրադառնալ խօսք ասել Ռոմանոս Մելիքեանի մասին իբրեւ երաժշտական գործչի: Երեք տասնեակ տարին ստեղծագործող դէմքի համար հարուստ մի ուղի է, որի գնահատութիւնը պահանջում է ժամանակ եւ մանրամասն ուսումնասիրութիւն: Այդ պատճառով էլ, մեր հակիրճ գնահատականը պէտք է սահմանափակի մի միայն ստեղծագործող Ռոմանոս Մելիքեանի չուրջը:

Մեր երաժշտութեան մէջ, բնականը դէպի ինքնուրոյն ստեղծագործութիւնը սկսւում է 1907 թուականին. մինչ այդ հրապարակի վրա եղած նման աշխատութիւնները չափազանց հեռու են ազգային երաժշտական արուեստի յատկանիշներից: Մենք նկատի ունենք բազմաթիւ գործերում լոյս տեսած երկերը:

Ինքնուրոյն ստեղծագործութիւնների սկզբնաւորութիւնն էնա միաժամանակ, ժողովրդական երգի հաւաքումն ու մշակումը չի դադարում օրամերկրի այժմէական խնդիր լինելուց. ընդհակառակն՝ նա ստանում է նոր թափ, մտնելով զարգացման նոր հունի մէջ: Ելնելով տարբեր ձա-

ԵՐԱԺՇՏԱԳԼՏ Ռ· ՄԵԼԻՔԵԱՆ

նապարհով, նրանք հիմնականում նոյն նպատակին հասնելիս էին — պահպանել ազգային երաժշտութեան բոլոր առանձնայատուկ գծերը: Այս-մեղ ստեղծագործական սկզբունքի տեսակէտից ոչ մի տարաձայնութիւն չկար. նպատակը նոյնն էր. նրանք լրացնում էին միմեանց:

Ռոմանոս Մելիքեանը հենց իր առաջին ստեղծագործութեամբ «Հակադրուեց» ժողովրդական երաժշտական արուեստին: Այդ հակադրութիւնն անշուշտ կատարում էր դրական իմաստով եւ նպաստակ չունէր պայքարի դուրս գալ ժողովրդական երաժշտութեան մշակման ու օգտագործման դէմ: «Զմրուխտի» եւ «Զառվան» երգերում՝ հեղինակը խոշոր չափազանց է կատարում հարաբաժօրէն վերամշակելու ժողովրդական երգը. տարրերի ընթացքում նա ուելի ու ուելի մօտենում է այդ երաժշտութեան ոճին: Այս տեսակէտից էլ ներքին խոշոր կապ կա Կոմիտասի եւ Ռոմանոսի ստեղծագործութիւնների միջեւ. նրանց նպատակը մէկ է: Ռոմանոս Մելիքեանը ամենայն իրաւամբ կոմիտասեան դպրոցի առաջնակարգ ներկայացուցիչն էր:

Ռոմանոս Մելիքեանի անդրանիկ ստեղծագործութիւնը՝ «Աչեան երգը», առաջին անգամ տպուեց 1907 թուին, արուեստի վաստակաւոր գործիչ Գարեգին Լեւոնեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Գեղարուեստ» հանդիսում: Կարճ ժամանակից յե-

ՌՈՒԲԻՆ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ
Խ. Հայաստանի Ցայտոնի երաժշտական Քննադատ եւ Կազմակերպիչ

տա որպէս նոյն այդ սերթայի օրգանական չարունակութիւն, լոյս են տեսնում «Վարդը», «Անջատում», «Վայրի Դաղիկ», «Ուռենին» (դուդուկ) եւ այլն: Ահա սրանք են կոմպոզիտորի առաջին շրջանի ստեղծագործութեան հիմնական կորիզը: Այս երգերի խրատքանչիւր նախադասութեան մէջ թափւած հնչիւնները եւ պատկերները Տէրեանական արտասուի չունչ ունեն: Ռոմանոս Մելիքեանը մեր երաժշտութեան Վահան Տէրեանն է, յատկապէս իր ստեղծագործութիւնների առաջին շրջանում:

Այս շրջանի աշխատութիւնները բնորոշ են ամենից առաջ երգերի արտայայտութիւնները, որոնք ընթանում են լուռուսը եւ ինքնուրոյն ստեղծագործական ուղիներ հարթելու եւ նուաճելու ուղղութեամբ: Ռուսական դասական դպրոցի ազդեցութեան տակ գրած այս գործերը մեր նորագոյն երաժշտութեան համար իրրեւ նոր երեւոյթ, իրրեւ օրանութիների նոր շրջան, անպայմանօրէն նշանակալից են եւ ուշադրութեան արժանի:

Ռոմանոս Մելիքեանի երաժշտական ժառանգութեան մէջ գլուխ գործոց են համարւում «Զմրուխտ» երգերը: Այդ երգերով արւեստագէտը մտել է ստեղծագործական վառ շրջան: Ներա նէ, նա վճռական ու համարձակ քայլերով մօտենում է ժողովրդական երգի բարմահարուստ աղբիւրին, այդ երգի ոճաւորմանը: Սա խոշոր, նշանակալից մի շրջադարձ էր, որը վճռական նշանակութիւն ունեցաւ Ռոմանոս Մելիքեանի արւեստի համար: Ինքնուրոյն ստեղծագործութիւնների ֆոնի վրա մօտեցում դէպի ժողովրդական երգի ոճը, նրա խորքերը — ահա այսպիսի խնդիր է լուծում երգահանը «Զմրուխտ» երգերում: Վերյաչիւալ ստեղծագործութիւնների մէջ զարգացնելով այս սկզբունքային խնդիրները, հեղինակին յաջողւել է արտայայտել այն էմոցիաները, այն խոր յոյզերը, որոնք անքան լի ու հարուստ են մեր ժողովրդական երգերում:

Ժողովրդական երգի ոսկի ճանապարհով անհապաղ եւ օտար է արւեստագէտ Ռոմանոս Մե-

լիքեանին. Նա վերցնում է նիթը, բնորոշ: «Զմրուխտ» երգերի մէջ, որոնք գրած են լակոնիկ, խտացած եւ մոտ գոյներով, տառից աւելորդ մի հնչիւնի, Ռոմանոս Մելիքեանը կարողացել է արձագրել ու չօշափել մեր երաժշտութեան կազմաւորման ինդիրները:

«Զմրուխտ» եւ «Զատիկ» երկերում մեր ականջներին այլ եւս չեն հնչում արտուամների ձայները: «Աչեան տոներից» հեղինակն արդէն լայն բանահիւսական ուղի է բաց արել, ուր հնչում են ժողովրդական երգի հարուստ ձայները: «Զմրուխտ»ման ամէն երգի վրա նկատելի է պարզութեան ու յստակութեան խոր կնիքը: Այս երգերի հիմքն այնքան հարազատ է մեր ժողովրդական ինքնաբուխ երգի հնչին, որ անգամ եւրոպական երաժշտութեան ձեւերով պատրաստած եւ մշակուած լինելով հանդերձ, նրանք չեն կորցրել իրենց իւրայատուկ ազգային բնոյթը:

> «Զմրուխտի շարքը կազմող ութ երգերը, — գրում է երաժշտագէտ Կոմիտաս Լևիեցկին, — գրած են խորապէս ազգային ոգով. սակայն հեղինակի անխորհրդաւոր եւ անժխտելի տաղանդը կարողացել է այնպիսի ճեւաւորում տալ այդ երգերին, որտեղ չի զգացւում այլ եւս ոչ մի ազգայնական սահմանափակութիւն եւ ոչ էլ իմիջապարփակութիւն: Ժողովածուն հիմք եւ հնարաւորութիւն է տալիս ենթադրելու, որ հայկական գեղարուեստական երաժշտութիւնը մեծ ապագա է խոստանում»:

Ռոմանոս Մելիքեանի յոյս ներած աշխատութիւնները ցոյց են տալիս, որ նա յստակ ու հետեւողական կերպով պատկերում է հայկական երգերի ինտոնացիան, ռիթմը, երանգները, կոլորիտը: Ահա սրանք են Ռոմանոս Մելիքեանի արուեստի կենտրոնական չարժիչ ուժերը եւ սրանք են այն ամուր պատուանդանները, որոնց վրա հիմնուած արուեստագէտն այնքան վառ ու պայծառ էջեր կերտեց մեր նորագոյն երաժշտութեան պատմութեան մէջ:

Ռոմանոս Մելիքեանի արուեստի ներքին բնոյթը մինոր է: Նա դերազանցապէս լիրիկ է, այս արուեստի տատնձակարգ ներկայացուցիչը մեզանում: Սակայն արուեստագէտ երաժշտական ժառանգութեան մէջ կան նաեւ պրոմաթիմի խտացած ու պոռթկացող գոյներ:

Նոյեմբերեան յեղափոխութիւնից յետո, Ռոմանոս Մելիքեանն առաջին երջանն էր, որը կապուց Սորբոնդային Հայաստանի երաժշտական մշակոյթի հետ եւ 1921 թուին, քաղաքացիական կռիւներից յետո, անհետաքրքիր տարիներին, երեւանում վառեց երաժշտական առաջին ջահը, հիմք դնելով երաժշտական առուդիային: Միաժամանակ նա էր առաջին երգահանը, որ թեմատիկայի խնդրում վճռական չրջադարձ կատարեց: Նրա գրչին են պատկանում կարմիր բանակային, պիոներական, աշխատանքային, կենցաղային ու զանգուածային բազմաթիւ երգեր: Այս բոլոր երգերի հիմքը նոյնպէս հանդիսանում են Հայ ժողովրդական երաժշտութեան ակունքները: Ռոմանոս Մելիքեանի երգերը հնչիւններ, երաժշտական ձայների զուտեր են՝ լի հարմոնիայով եւ թափանցիկ մելոդիով: Այդ մեղեդիներով արուեստագէտը կարողանում է խորապէս յուզել ունկնդրի ներքին աշխարհը: Երաժշտական հնչուածքների եւ ոլորտների միջոցով նա վարպետ է բոլորին:

Գ.

Ռոմանոս Մելիքեանի մահով մենք կորցրինք բարձր մշակոյթի եւ հազուագիւտ ձաշակի տէր մի արուեստագէտի, որն իր ստեղծագործութիւններով նոր ուղիներ նշեց մեր երաժշտութեան զարգացման բնագաւառում, լրացնելով ու ամբողջացնելով կոմիտասի կերտած հոյակապ երաժշտական մշակոյթը:

Ռոմանոս Մելիքեանը ապրում էր ստեղծագործութեան այնպիսի մի վայրկեան չրջան, երբ «բոլոր պատուհները սկսել էին հրթիռով լցուել այդ հզօր ծառի ճիւղերի վրա» (Լուսինաբարսկի. Ռիխարդ Վագների մասին):

Մահն էր դադարեցրել իրը. Նա գետին տապալուց հրթիռով ու բոլորով հարուստ այդ հզօր ծառը:

«Ֆիլարո» Թատերախումբի Հարսնիքի Տեսարան Մը



Նկար՝ վաստակաւոր նկարիչ Մ. ՍԱՐԵԱՆի

ՀՐ. ՔՈՉԱՐ

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱՊԵՐԸ

Մեր ամենօրեա հանդիպումները Խնկո Ապոր հետ այնքան ուրախ էին, այնքան խնդագին ու Ապոր մշտական յանդուգն սրախօսութիւններով ու սրամտութիւններով լի, որ դժուար է այս վերը յօդուածով հաղորդել ընթերցողին:

Մով չի ճանաչում Խնկո Ապորը. հարցրէք ուսուցիչներէ, որոնք անդէմ պիտեն նրան դեռ աշակերտական նստարանից, հարցրէք խորհրդային ակերտութեանը, հարցրէք հաւաքատեսական դաշտերի հաւաքագիներին, հազարաւոր գիւղքոլեկտիւնականներին, որոնք անսահման սիրով էին Ապորը եւ տարածում նրա դաստիարակիչ առակներն ու ասանաւորները:

Այսօր նրանք բոլորը պէտք է լան, որ այլ եւս չկա իրենց սիրելի Ապորը, աշխատասէր գիւղացիութեան հին բարեկամը, մանուկների սիրելին:

* * *

... Ալագեազում 12—13 տարեկան գառնատած էի, դեռ գարուց չգնացած, որ անդէմ պիտէի Խնկո Ապոր — Աթարեկ Խնկոեանի առակներն ու ասանաւորները եւ սոսկութեամբ էի բոլորին:

Աման, ազէս աւերես,
Ինձ մի աւի սեւերես...

Մենք այն ժամանակ հասկացողութիւն չունէինք հեղինակի մասին, բայց ուրախանում էինք այդ առանաւորներով եւ հպարտանում, որ անգիր գիտենք: Երբ ես արդէն գրագէտ էի, 1926 թուին «Մանկալ»ում կարդացինք Խնկո Ապոր մի բանաստեղծութիւնը՝

... Մանկութիւնից մինչեւ այս թիւ
Ես հովիւ եմ, գիւղ-հովիւ
Իմ աւունը Գրիգոր
Իմ բաժինը սար ու ձոր:

Կարդացինք այդ առանաւորը. դուբ եկաւ եւ մի չարաճճի չարչարելուց յետո խմբով թարգմանութեան նեցինք քրգերէնի:

Թարգմանութիւնն ուղարկեցի «Մանկալ»ին եւ մի քանի օր յետո առացա Խնկո Ապոր երկտողը, որով նա հաւանել էր թարգմանութեան յանգերն ու վանկերը եւ ենթադրել էր, որ յաջող կը լինի թարգմանութիւնը: Ես Խնկո Ապոր այդ երկտողը ցոյց էի տալիս բոլորին եւ պարտասանում: Յիշում

եմ մի անգամ կուեցի հօրաքրոջս հետ Ապոր համար: Ապոր ծաղրանկարը չեմ յիշում որտեղից էի ճարել եւ խլել էի մեր տան պատին: Հօրաքրոջս ծաղրանկարն իսկական նկարի տեղ դնելով ծիծաղեց: Ես վիրաւորուեցի, կուեցի ու ատելիք փախ՝ կուի հետեւանքներից խուսափելու համար…: Այսպէս էինք սիրում մենք Ննկո Ապորը գիւղում, նրա լաւ առակների ու բանաստեղծութիւնների համար: Յետագայում ես էլ տեղափոխուեցի Երեւան եւ ծանօթացա Ապոր հետ, նա յիշելով իր ռուսահայրի քրդական թարգմանութիւնը, իմ անունը դրեց Քուրդ:

— Բարեւ, Քուրդ Լան, ո՞նց ես,— հարցնում էր նա ինձ. իսկական անունս տալիս էր նա այն ժամանակ, երբ տրամադրութիւնը տեղը չէր լինում կամ չատ լուրջ բան էր ասում:

Վերջին անգամ հանդիպեցի նրան այս տարուա Օգոստոսին, Պետհրատում, ուր նա հետաքրքրւում էր իր ժողովածուով: Վերցրինք ժողովածուն եւ սկսեցինք միասին թերթել: Ապերը երեխայի պէս ուրախանում էր, երբ ես նրա բոլոր այն ոտանաւորները, որ նա ուզում էր կարդալ ինձ համար, անգիր գիտէի ու արտասանում էի աւելի չուտ, քան նա կը կարդար. յետո նա կարդաց մի ոտանաւոր եւ ասաց որ ինքն այդ ոտանաւորում ինտերնացիոնալիզմ է քարոզել դեռ մեծ պատերազմի տարիներին: Ես հաւանեցի:

— Դու ինձ աւելի չատ ես սիրում, քան ես կարծում էի, Քուրդ Լան,— ասաց նա: Ես խոստովանեցի, որ չատ եմ սիրում, աւելացնելով, որ փոքր ժամանակ Թումանեանից էլ չատ էի սիրում, իսկ հիմա չեմ կարող նոյնն ասել:

— Ապրիս, անկեղծ ասացիր, չնորհակալ եմ, ի հարկ է նրան պէտք է չատ սիրել…

Յետո նա պատմեց, որ Լենինգրադում այս տարի առաջին անգամ տեսել է Կրիլովի հիանալի արձանը, որի պատւանդանի վրա քանդակած է նրա առակների հերոսների ողջ աշխարհը…:

Յետո նա կարդաց մի փիլիսոփայական ոտանաւոր մասին, կարծեմ եսասիրական հեքիաթ, որի մէջ կայ Ննկո Ապոր համար ոչ բնութագրական թախիծ, տխրութիւն եւ այն միտքը, որ բնութիւնը խելօք բան է, նա չի սխալւել, որ մահ էլ է ստեղծել…: Երկուսս էլ տխրեցինք, երբ նա վերջացրեց: Ես զգացի որ դա Ապոր վերջին խոսքն էր եւ այդ վատ զգացումը կատարւեց, բնութեան օրէնքների ուժին այլ եւս դիմադրել չկարողացաւ մեր Ապերը, տաղանդաւոր բանաստեղծն ու մանկագիրը, Օհան Ապոր (*) նման բոլորին սիրելի Ննկո Ապերը:

(*) Ա. Խնկոյեանը Յ. Թումանեանին անւանում էր Օհան Ապեր:

ՍԻՄԱԿ

ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈԵԱՆ

Աթ. Խնկոեանին ճանաչում եմ դեռ 1904—1905 թւականներից — Ռուս ճապոնական պատերազմի չրջանից, երբ նա մի երգիծական ոտանաւորով ծաղրում էր այդ ժամանակւա նորելուկ բանաստեղծներից մէկին (մոռացել եմ թէ ում), նրա մտորումներն ու ցանկութիւնները պատերազմի եւ դեներալների մասին: Ոտանաւորը դրւած էր ոչ տպագրելու համար, տեղ-տեղ բամբասական բառերով.— ձեռագիրը տարածւել էր մեր մէջ — կարդում էինք ու անվերջ ծիծաղում: Շատ սրամիտ էր եւ վկայում էր, որ երիտասարդ հեղինակն անպայման չնորհալի պրող է լինելու: Ձիշտ է, դեռ դրանից չատ առաջ Խնկոեանը հրատարակել էր մի փոքրիկ տետր — բանաստեղծութիւնների, բայց դրանք պատանեկական խակ փորձեր էին եւ մեր չրջանի մարդիկ Խնկոեանին իբրեւ բանաստեղծ ճանաչեցին այդ երգիծական ոտանաւորով: Զգիտեմ որեւէ մէկի ժօտ մնացե՞լ է արդեօք այդ ոտանաւորը, թէ ոչ:

1905 թուին Լիսիցեանի խմբագրութեամբ լոյս էր տեսնում «Հասկեր» մանկական հանդէսի հրատարակութիւնը, մի խումբ երիտասարդ ուսուցիչներ հաւաքւեցինք այդ հանդէսի չուրջը:

Խնկոեանն սկսեց թղթակցել հենց առաջին համարներից — այն ժամանակ նա ուսուցիչ էր Լեռնիական չրջանի գիւղերում: Զգիտեմ 1908 թէ 1909 թուին նա տեղափոխուեց Թիֆլիս — ուսուցչի պաշտօն ստացաւ այնտեղի ծխական դպրոցներից մէկում. եւ այդ ժամանակից սկսեցին «Հասկեր»ի նշանաւոր խմբագրական ժողովներն ու մեր ընկերական մտերմութիւնը: Այդ ժողովները նշանաւոր էին, որովհետեւ մեծ քանաստեղծ Թումանեանը եւ Աթ. Խնկոեանը — եւ՛ չատ բան էին սովորեցնում մեզ դրականութեան ու գեղարւեստի մասին եւ՛ մեր հոգին հանում էին (մանաւանդ Ա-դամարբէ) իրենց սրամիտ երգիծանքով: Շատ էին վախենում ոմանք, մանաւանդ Խնկոեանի չատ տեղին, չատ կարճ, բայց սաստիկ խայթող ու յաճախ բամբասական սրամտութիւններից:

Խնկոեանը գրում էր թէ՛ արձակ եւ թէ՛ չափածո: Պատահում էին ժողովներ, որտեղ միայն նրա գրածներն ու փոխադրածներն էին կարդում: Շատ քիչ էր պատահում, որ նրա գրած որեւէ նիւ-

քը՝ ժողովը չընդունէր: Այդպիսի դէպքերում նա չէր նեղանում ոմանց նման, այլ ծիծաղով ասած նկատողութիւններին սրամիտ ու մեծ մասամբ յանդուգն պատասխան էր տալիս ու ծալում գրածքը:

Մինչեւ այժմ էլ նա իր հին ընկերների հետ համարեա միշտ յանդուգն է խօսում: Յանգերով խօսելն այժմ նրա համար արհեստ է դարձել:

Նա այն մարդկանցից է, որոնք ոչ միայն չատ լաւ են հասկանում մանուկների ցանկութիւնները ու մտքերն, այլ եւ կարողանում են խօսել մանուկի հետ, նրա մտքի եւ զգացմունքների լարերին խիթել:

Երեխաները չատ են սիրում Մնկո Ապոր գրածները կամ «ասղացրածները»: Ոչ միայն սիրում են, այլ եւ չատ հեշտութեամբ ճանաչում են իրենց սիրած հեղինակի գրածները:

Նա չատ անգամ «ասղացնում» է, սարքում է երեխաների համար ոչ միայն ժողովրդական նիւթեր, այլ եւ ուրիշ ազգութեան հեղինակների գրածները: Զարմանալի ընդհգ ունի ամեն ինչ մանկացնել, մանուկներին հասկանալի դարձնել: Ամեն տեղ, ամեն ինչ ընտրում է «յարմարեցնում», մանուկների համար «ասղացնում»: Ցիշում եմ, պատահեմ մեր գիւղացի յայտնի վարպետ «պայտասաչ» քեռի Ասեաքի հետ մի անգամ անցնում էինք անտառով: Նա չարունակ նայում էր չուխի երկու կողմն եղող ծուռերին եւ ասում.— «Ա՛յ, էս լաւ մաճ կը լինի, էն լաւ առաւտ, էս՝ սայլ, էն փոցխ, էն՝ սամի, էն՝ կացնի կոթ, էն՝ էլ դդալ»: Ու այսպէս անվերջ: Նրա համար բոլոր ծառերն ու փայտերը միայն երկրագործական գանազան գործիքներ լինելու համար էին: Մեր Մնկո Ապերը չատ է յիշեցնում քեռի Ասեաքին,— նրա համար ժողովրդական հասարակ առակներն ու աւանդութիւնները, բոլոր հին պինակների ամեն տեսակի գրածքները, մեր հզօր կեանքի բոլոր կողմերի ամեն տեսակ հերոսութիւնները՝ առեղծուածներն նրա են մանուկներին մատուցանելու:

Մանկական գրականութեան խոշոր վարպետներ Ազատանից ու Թումանեանից յետո մեր գրականութեան մէջ (խօսքս արեւելահայ գրականութեան մասին է) Ա. Մնկոեանն ամենայն իրաւամբ կարող է երբորդը համարուել: Այն միտքը՝ թէ՝ Պետրոսը մատղիք է Մնկոեանի լաւագոյն երկերը մի գրքով հրատարակել, միանգամայն ողջունելի է:

ԳՐՈՂ — (փայտագրութիւն) Նկար՝ ՍԱՐԳԻՍ ԱՎԵՍԱՆԵԱՆԻ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԺԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գ. ՔՆԱՐԵԱՆ

ՊԱՐԱՐԻԵՍՏԻ ՏԵԽՆԻԿՈՒՄԸ

Այս ուսումնական տարւանից տեխնիկումի վերածւեց պարի պրոֆ–տարուդիան, որը դոյութիւն ունէր հինդ տարւայ ի վեր:

Տեխնիկումն արդէն սկսել է իր կանոնաւոր պարապմունքները: Տեխնիկումի հանրակրթական տարրականների բաժնում ընդունւած է քառասուն աշակերտ, իսկ պարի տարուդիայում՝ 160: Պարւեստի հանդէպ լայն հետաքրքրութեան իրրև ապացոյց բաւական է յիշատակել այն, որ ընդունելութիւնների տեղիւ ներկայացել է 600 դիմում: Տեխնիկումում դասաւանդում են հինդ պարի մասնագէտներ եւ ինը ուսուցիչ՝ հանրակրթական առարկաների համար: Պարապմունքները դասաւորւած են այն հաշւով, որ աշակերտները օրական 2 ժամ անցնեն մասնագիտական առարկաներ, իսկ 5—6 ժամ՝ հանրակրթական:

Տեխնիկումի մասնագիտական ծրագրում նախատեսւած է չորս կուրսի համար 1425 ժամ տեսական–մասնագիտական առարկաների համար (մարքսիստական արւեստագիտութիւն, կենսաբանութիւն, պարի պրանցում, պարի պատմութիւն եւ ժամանակակից հոսանքներ, ալիմպիկայի մեթոդիկա եւ այլն). գործնական առարկաների դասաւորման (ալիմպիկա եւ դանդաժային պարեր ու խաղեր) 350 ժամ, արւնաճի համար՝ (պլաստիկ եւ դասական արւնաճ, ձեռքերի եւ իրանի արւնաճ, եւ այլն) 1750 ժամ, սեմիոտիկայի՝ (միմիկա եւ ժեստ) 100 ժամ, ռճի՝ (արեւմտեան, արեւելեան, կովկասեան եւ հայկական պարեր եւ այլն) 450 ժամ. տեղծագործութեան՝ (իմպրովիզացիա, պարային քայլեր, ռեժիսուրա եւ այլն) 400 ժամ: Յատուկ պարապմունքներ կան նաեւ գործնական առարկաների եւ պոլիտեխնիզացիայի գծով (գլխիմ, մասսաժ, պարատեղիր դաշնամուր, սոլֆեջիո, խմբական երգ եւ երաժշտութեան թեորիա, կար ու ձեւ եւ այլն, եւ այլն):

Ինչպէս տեսնում ենք՝ տեխնիկումը ծանրաբեռնւած է բաւական բարդ առարկաներով եւ միայն դիրեկցիայի ու Լուսժողկոմատի համապատասխան օրգանների խիստ հսկողութեան շնորհիւ հնարաւոր է ապահովել նախատեսւած պլանների եւ սրակի իրականացումը, ամբողջական իւրացումը աշակերտութեան կողմից:

Պարի պրոֆտարուդիան, ինչպէս եւ տեխնիկումը արդիւնք են խորհրդային հասարակայնութեան մեջ ծագող հսկա պահանջի պարարւեստի ուղղութեամբ: Ոչ միայն մեր հասարակութիւնը բուռն փափաք ունի դիտելու դեղարւեստօրէն մշակած պարեր ու բալետներ, այլ եւ ինքը ցանկանում է պարել եւ պարում է: Սհա թէ ինչու չատ մեծ յոյսեր են դրւած պարի պրոֆտարուդիայի վրա Խորհ. Հայաստանի բանւորներին ու հաւաքատեսեսականներին, աշխատաւոր զանգւածներին տալու սովորեցնող կադրեր եւ միաժամանակ կադրեր պատրաստել հասարակական ելոյթների եւ բալետի համար:

Դժբախտաբար հինդ տարւա ընթացքում պարի պրոֆտարուդիան չի արդարացրել այդ ուղղութեամբ իր վրա դրւած յոյսերը: Մինչեւ այժմ տարուդիան մեր ակումբներին, դպրոցներին, պիոներ կազմակերպութեանը եւ այլ կազմակերպութիւններին տւել է քանի չափ սովորեցնողներ, որոնք չէին համապատասխանում: Եւ մենք քիչ ու չատ որակեալ ստրատողներ կ'ունենանք մեկ–երկու տարի յետոյ:

Այս տագարիզում պարի տարուդիայի ամենից դժբախտ կողմերից մէկը եղել է այն, որ մինչեւ այժմ ընդունելութիւնները կատարւած են «սերւոյ» տարրերից եւ քիչ ու չատ ճկուն մանուկներից եւ պատանիներից, որոնք սովորել են տարրեր պարդացներում եւ մի տեսակ ժամանցի համար յաճախել են պարի տարուդիան: Պարը իրենց համար մանագիտութիւն ընտրելու, սովորեցնելու եւ պրոֆեսիոնալ պարողներ լինելու որոշում տւած աբիտուրիենտներ քիչ են եղել: Ծնողներն իրենց երեխաներին պարի տարուդիա են ուղարկում ոչ թէ իրենց երեխաներին տեսնելու տագադայում մեր բալետների կամ զանգւածային ելոյթների համար իրրեւ մշտական կադր, այլ այնպէս, որովհետեւ իրենց երեխան «պարելու ընդրջ ունի եւ թող մի քիչ սովորի»:

Տեխնիկումի դիրեկցիան ունի լայն եւ պահպանելի հետանկարներ աշխատանքները թէ՛ տեսականօրէն եւ թէ գործնականօրէն խորացնելու համար: Եթէ անցեալ հինդ տարին համարենք որոշ չափով կորած ժամանակ, այս տարւանից պէտք է համարել սկիզբը սեփական աշակերտութեամբ աշխատանքի անցնելու: Տեխնիկումի աշխատանքների յաջող ընթացքը, աշակերտութեան որակաւորումը առաջադրում են յետագայում, իրրեւ հասունացած խնդիր. դեղարւեստական բարձրագոյն Ուսումնական Հիմնարկի կազմակերպումը:

ՄԱՎԶԵՐԻՍՏՆԵՐԸ Նկար՝ Յ. ԿՈՉՈՒՆԱՆԻ

Տէրենիկումի առաջ դրուած է մի ժամանակ ուսումնական տարում հասարակական ելոյթներ կազմակերպելու խնդիրը: Այդ ելոյթները կազմակերպելու են ուսուցիչների եւ աշակերտների մասնակցութեամբ, ինչպէս անցեալ տարի: Այդ ելոյթները Անդրկովկասեան ռուսախօսութեամբ եւ երեւանի թատրոններում, որքան էլ դեղարուեստական տեսակէտից ունեն կատարման թերութիւնները, բայց ընդհանրապէս արժանացել են դնահատանքի: Մի ժամանակ այդ ելոյթները հանդիսանում են ցուցանիչ դպրոցում կատարած աշխատանքի համար: Տնօրէնութիւնը ծրագրել է յատկացնել «Լապտերների Տօնը Չինաստանում», «Եգիպտական Գիշերը», «Պիոներիա» եւ զանազան դիվերտիսմենտներ:

Տէրենիկումը ունի բոլոր հնարաւորութիւնները տեսական ու գործնական աշխատանքները դնելու ցանկալի բարձրութեան վրա: Տնօրէն Սբբուհի Լիսիցեանը, Գուրիմեան, Սիրունեան, Վարոսեան եւ ուրիշները պարապում են մանկավարժական առարկաներ, իսկ ընկ. Ղուդուրիանը նշանակած է հանրակրթական առարկաների վարիչ: Սակայն տնօրէն Մ. Լիսիցեանը ունի չատ ծանրաբեռնուած է վարչական աշխատանքներով եւ դրանից անպայման կը տուժի ստեղծագործական աշխատանքը:

Տէրենիկումը մինչեւ այժմ սահմանափակուել էր երեւանի աշակերտութեան ընդունելութեամբ: Այս տարուանից ընդունել է 16 հոգի չբլանններից, ապահովելով նրանց թոշակով եւ հանրակացարանով:

Տէրենիկումի մանկավարժական պարապմունքները ընթանում են տնօրէն Մ. Լիսիցեանի դպրոցով, պայքար դասական պարի հին դպրոցի դէմ:

Այդ ըմբռնումով էլ կատարում են եւ կատարելու են բոլոր ելոյթները, ձգտելով ստեղծելու ինքնուրոյն թատրոն:

Անտարակոյս չատ եւ սիստեմատիկ աշխատանքով, Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի չարատեւ օգնութեան եւ հսկողութեան միջոցով, տէրենիկումի տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը պիտի կարողանան վերացնել սկզբնական չբլանի չատուկ կազմակերպչական եւ այլ թերութիւնները, ապահովելով պարապեսի նորանոր կադրեր մեր երկրին:

Ն· ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԿԵՐՊԱՐԻԵՍՏԻ ՆՈՐ ՈՒԺԵՐՈՒ ԴԱՐԲՆՈՑԸ

Երեւանի մեկուսացած եւ խաղաղ մի անկիւնում, Կոնդի բլրակի հարաւ–արեւմտեան լանջին, 14 տարի է, որ ծաւալել է Հայաստանի կերպարւեստի նոր կաղապերի համեստ դարբնոցը — Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարիատի կերպարւեստի Տեխնիկումը:

Կերպարւեստի տեխնիկումը, իր գոյութեան 14 տարիների ընթացքում քիչ դէր չի կատարել կերպարւեստի կադրերի պատրաստման գործում, մեր երկրին տալով մօտ երեք հարիւր շրջանաւարտներ, որոնցից շատերն այժմ աշխատում են նկարչութեան, քանդակագործութեան ճակատում եւ մանկավարժութեան տարածքում: Այս ըղձրոյի պատերի մէջ են տաքացել մի շարք շնորհալի ուժեր, որոնք յետագայում շարունակելով իրենց ուսումը, ներկայումս աչքի ընկնող կադրեր են մեր կերպարւեստի բնագաւառում: Քանդակագործ Վ· Թերզիբաշեանը, Ռաչոյեանը, Նըկարիչ Ռաշմաջեանը, Մ· Արեգեանը, Մարուսիա Ալամդարեանը, դրաֆիկներ՝ Տաճատ Պաչվանքեանը, Ն· Խոմայէլեանը, Մ· Մարութրոսեանը եւ ուրիշներ կերպարւեստի բոլոր են անցել:

Միայն կերպարւեստի Տեխնիկումն ուսուցիչների իրենց տեղն ունեն արդէն արւեստի այդ բնագաւառում: Յովհ· Շուարշը, Հ· Գալստեանը, Մամիկոնեանը, Վ· Վարդանեանը, Գաբամաջը, Վ· Աբրահամեանը, ուսիներնիկումի շրջանաւարտներն են: Բազմաթիւ են տեխնիկումի այն ուսանողները, որոնք քազաքի եւ շրջանների զպրոցներում կերպարւեստի առարկաները են դասաւանդում:

Այնքանում նկարչական զպրոցի հետ սերտօրէն կապած են եղել մեր ականաւոր կերպարւեստագէտները: Զպրոցի կազմակերպման նախաձեռնողներից մէկը Հանդիսացել է Հանրապետական ժողովրդական արւեստագէտ ընկ· Մարտիրոս Սարեանը: Տեխնիկումում դասաւանդել են Արա Սարգսեանը, Սա· Թարեանը, Առաքելեանը, վաստակաւոր նկարիչ Կոջոեանը, Գևորգեանը եւ ուրիշներ: Տեխնիկումի ներկայիս մանկավարժական–մանեդիտական կազմում կան վաստակաւոր նկարիչ Ազաջանեանը, Նկ· Գայֆիջեանը, քանդակագործ Մ· Սաֆիանեանը (Ղուկաս Ղուկասեանի արձան կերտողը)· նկարիչ–ճարտարապետ Գ· Սիրանեանը, երիտասարդ կադրերից՝ դրաֆիկ Իսրայէլեանը, նկարիչ Յովակ Ազիզեանը:

Պէտք է ընդգծել, որ այս տարի նկարչական մասնագիտական դասախօսական կազմի օրակը վատ չէ: Իսկ դա կարեւոր պայմաններից մէկն է բարձրարակ ուսուցման դրութիւնն ապահովելու համար:

Տեխնիկումը, որ իր ուսումնական տարին սկսեց ձիշտ սեպտեմբերի 15–ից, այժմ ունի վեց կուրս, երկու հիմնական բաժիններով, գեղարւեստական–մանկավարժական, որը բոլոր տիպի դէպքոցների համար նկարչական դասատուներ է պատրաստում եւ գեղարւեստական ձեւաւորումների բաժին, որտեղ սովորում են նկարչութիւն եւ ձեւաւորում: Այս բաժինը պատրաստում է թատրոնների, բանւորական եւ հաւաքատեսական ակումբների, ինչպէս նաեւ հրատարակչութիւնների մշկին որակի ձեւաւորողներ:

Բացառիկ ընդունակութիւն ունեցող երեխաների համար յատուկ բաժին գոյութիւն չունի, նախատեսւում է եկող ուսումնական տարում բաց անել առեղծագործական յատուկ բաժին, որտեղ պէտք է ընդունուեն բացառիկ ընդունակութիւն ցուցաբերող ուսանողներ: Իսկ այդպիսիները կան: Տեխնիկումի չորրորդ կուրսում բացառիկ ընդունակութիւն են ցուցաքանում ուսանողներ Մուշեղ Անտոնեանը, Մելիքսէթ Ավագեանը, Աբշալոյս Զիվիլեկեանը: Երրորդ կուրսում՝ Սուրէն Սահակեանը, Սեդա Կարապետոզեանը, Շանթ Սարգսեանը: Երկրորդ կուրսում Վաչագան Թեւոսեանը, Հայկ Աւետիսեանը:

Երեւանի Կերպարւեստի տեխնիկումը նեղ մասնագիտական չէ· այստեղ անցնում են նաեւ հանրակրթական բոլոր անհրաժեշտ առարկաները, այնպէս որ տեխնիկումն աւարտածը միայն նկարիչ կամ քանդակագործ չի դառնում, այլ եւ նա մի շարք գիտելիքներ է ձեռք բերում, որը եւ հնարաւորութիւն է տեղծում ընդունել բարձրագոյն զպրոցներում եւ ինստիտուտներում:

Այս ուսումնական տարում տեխնիկումը բացել է կերպարւեստի աշխատանոց, որտեղ ուսա-

Պիոներներ՝ Քանդակ ՍՏԵՓԱՆ ԹԱՐԵԱՆԻ

նողները ծանօթանում են դասական եւ Հայ նըկարչութեան լաւագոյն նմոյշների հետ: Աչխատանոցը դեռ կազմակերպչական չրջանում է, նրա լաւ կահաւորումն անպայմանօրէն խիստ օգտակար կը լինի ուսանողութեան համար: Նախատեսւում է բացել նմանապէս պլաստիկ անատոմիայի եւ պատմութեան աշխատանոց, սակայն համապատասխան դասանիւթեր չկան: Տեխնիկումի երկու դասանիւթերը յատկացած են ուսանողական հանրակացարանի: Տեխնիկումը հանրակացարանի չունք չունի եւ դրա հետեւանքով չըրջաններից եկածներին անհրաժեշտ չափով ընդունել չի կարող: Թէեւ այս տարի դասաւանդումը կատարւում է չունքի տեսակէտից աւելի բնականոն պայմաններում, մանաւանդ ատաղձագործները յատուկ սենեակ ունին, մինչդեռ անցեալում հանրակրթական եւ մանագիտական առարկաների դասաւանդումը տեղի էր ունենում մեկնոյն դասասենեակում, բայց եւ այնպէս տեխնիկումի զարգացման հեռանկարները այդ ուղղութեամբ լուրջ պահանջ են յառաջադրում:

Նախատեսւած է տեխնիկումին կից ունենալ նկարչական ստուդիա՝ ընդունակութիւն ունեցող մեծահասակների համար: Իսկ այդպիսիներ կան: Մեր գործարանային եւ հաւաքատեսակական ակումբներում կան շնորհալի նկարիչներ, որոնք բնատուր ձիրք ունեն, սակայն ոչ մի հնարաւորութիւն ունեն զարգացնելու այն: Այժմ որպէս բացառութիւն, քանդակագործական դասարանում ընդունւած է Ղամարլուի չրջանի Այդեհատն գիւղի հաւաքատեսակական Բաղրատ Աւետեանը, որը լուրջ ընդունակութիւն է ցուցաբերում քանդակագործութեան առարկայում:

Երեւանի կերպարուեստի տեխնիկումը կերպարուեստի կադրերի պատրաստման հիմնական չըղթան է: Պէտք է ամուր բռնել այդ չղթայից: Աւելի հոգատարութիւն դէպի տեխնիկումի պահանջները: Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատը պէտք է հանի իր ազգակաթը գործատանը Տեխնիկումի չունքից, այլ կերպ դժուար է պատկերացնել Տեխնիկումի արդիւնաւէտ աչխատանքը: Կերպարուեստագէտների Միութիւնը էլ աւելի պէտք է մօտ կանգնի տեխնիկումին, օգնի, աջակցի նրան, որովհետեւ հիմնականում այնտեղից է, որ պիտի գան կերպարուեստի մեր ապագա կադրերը, ապագա նկարիչներն ու քանդակագործները:

Վ. Ս.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ

Թատրոնական կադրերի պատրաստման խընդիրը դարձել է չափազանց այժմեական հարց:

Մեր համարեա բոլոր չրջաններում արդէն գոյութիւն ունեն թատրոնական խմբեր, իսկ պիոներական հաւաքատեսակական ակումբներին կից ինքնագործ թատերական խմբեր:

Եւ այդ բոլորի հետեւանքով, նրանց առաջնեւում թատրոնական աչխատողների թիւը հասնում էր տասնեակների, այն էլ գլխաւորապէս կենտրոնացած քաղաքներում, ապա հիմա թատրոնական աչխատողների եւ ընդհանրապէս արուեստի տարբեր բնագաւառում աչխատողների թիւը, հասնում է հարիւրների ու հազարների, որոնք ցրուած են մեր երկրի բոլոր արդիւնաբերական ու գիւղական վայրերում:

Այս խոշոր մասսային անհրաժեշտ է ճիշտ գործօն գեկավարութիւն: Արուեստի աչխատանքների այդ լայն ծաւալն ինքնըստինքեան վկայում է այն աճող պահանջի մասին, որ առաջադրում է մեր աչխատաւորական գանգուածը:

Մեր չրջաններում՝ Կիրովականում, Ալլահվերդում, Ղամարլուում, Գուրիսում եւ այլն մենք արդէն ունենք գործին նւիրուած ընդունակ ուժեր, որոնք իրօք խոշոր դրական աչխատանք են կատարում գանգուածների գեղարուեստական սպասարկման գործում:

Մինչ այժմ մեր թատրոնական գործը գեկավարող կենտրոնական օրգանները յատուկ հրահան-

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԴԵՐԱՍԱՆ ՎԱՂԱՐՇ՝
Եկար Բուլեիչեվի Դերին Մէջ

պիչներէ մինչեւյայ օժանդակել են կամ ուել են այս կամ այն ցուցմունքը մեր տեղական ինքնադործ խմբակիներին: Զգազարեցնելով, ընդհակառակը, ուելի ուժեղացնելով հրահանդչական աչխատանքները, մենք պէաք է լուրջ ուչադրութիւն դարձնենք թատերական կազրերի պատրաստման գործի վրա, որոնք լաւ տիրապետեն թատրոնական արուեստի բոլոր ձեուերին:

Այս նպատակի համար Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարիատն այս տարի բացել է տեսերական տեխնիկում, որը գործում է սեպտեմբերի երկրորդ կիսից:

Տեխնիկումն արդէն ունի 81 ուսանող, որից 24–ը թուրք եւ մնացածը հայեր: Այդ քանակից 12 հոգի կանայք են, որից չորսը թրքուհիներ:

81 ուսանողները նախապէս աչխատել են տեղական թատերական խմբերում եւ հետեւաբար հասկանալի ունեն թատրոնական արուեստը խորացնելու: Տեխնիկումում դասաւանդում են հետեւեալ առարկաները: Դերասանի վարպետութիւնը, արտասանութեան արուեստը, դրամատուրգիայի պատմութիւնը, թատրոնի պատմութիւնը, դրիմի արուեստը, ռիթմիկա–պլաստիկա, կոմբինացիա՝ կապած թատրոնական բեմադրութիւնների հետ: Պարապում են ընկերներ Շամիրխանեանը, Ռուզաննա Վարդանեանը, Վ. Վարդանեանը, Դուրինեան եւ այլն:

Այս բոլորին զուգընթաց տեխնիկումում պարապում են նաեւ հանրակրթական առարկաներ, Մանկավարժական տեխնիկումի ծրագրով: Վերեւ յիչած մասնագիտական առարկաները լաւ իրացումը կ'ապահովի մեր նոր թատրոնական կազրերի բարձր որակը:

Այս կազրերի աճեցումը, նրանց պարապմունքների ապահովումը կարեւոր խնդիրներ են: Այսուհետեւ յուրաքանչիւր ընկերները պիտի դնան մեր չորչանային ու հաւաքականական թատրոնները՝ օժանդակելու այդ թատրոններին իրենց բարձրութեան վրա դնելու համար:

Ի՞նչ իսօք, որ այդ 81 հոգին դեռ չատ քիչ է՝ համեմատած այն պահանջին, որ ունեն տեղերը,

ՍՈՒՐԷՆ ՓՈՁԱՐԵԱՆ
Ըլիր երցանուրեան եւ Արուեստագիտութեան վարպետը

մանաւանդ որ այդ կազրերը մենք կարող ենք չորչան ուղարկել դեռ երեք տարուց յետոյ:

Ազիզբեկովի փողոցի վրա Շինարարական տեխնիկումի չորս կառուցած հանրակացարանի մի քանի սենեակում տեղի են ունենում եւ՛ պարապմունքները եւ՛ մի երկու դասարան էլ ծառայում են իրենց հանրակացարան:

Կազրերի պատրաստման գործը ամենաէական եւ լուրջ գործն է, սկսած աչխատանքը ինչքան որ երախտաւէլի է, այնքան էլ անհրաժեչտ է ուչադրութիւն դարձնել նրան թերութիւնները վերացնելու, որպէս զի նա լի ու լի արդարացնի իրեն:

Վ. Մ.

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

ՄԵԾ ՃԱՌ - ԽՕՍՈՒԱԾ "ՆԵՂ" ՇՐՋԱՆԱԿԻ ՄԸ ՄԷՋ

Տեղը Փարիզ: Ամառնանը կը բանախօսէ առաջին ունենալով հետեւեալ կոնպրեսը:

Եւրոպայի ուժերը եւ մեր դժբերը.— կարկառ տեղաց.— իրրեւ արծիւ.— Թող կորընչեն տաճիկները.— ընթացիկ հարցեր.— քանի կարծիք, այնքան բիւրո.— աշխատանքի ինվալիդը:

«Ընկերներ, անյապաղելի արագութեամբ կը մօտենայ ըղձալի ժամը: Եւրոպան ահա կը պատրաստուի սուրը պատեանէն հանել, արշաւելու Մոսկվայի վրա, արշաւանք մը, սակայն, որուն չի կրնար իր համեստ մասնակցութիւնը չբերել մեր կուսակցութիւնը:

Մեր մասնակցութեան հարցը սկզբունքով վճռուած ըլլալով հանդերձ, կուսակցութիւնը պիտի պարզի, թէ յատկիկ արշաւանքն կրօնական՞ ընոյթ պիտի կրէ, թէ քաղաքական: Եթէ Պապն իր սկսելիք խաչակրաց արշաւանքին համար այօր կ'ոգեկոչէ Փիլիպ Ագիւթասիրատներու, մենք ալ ունինք մեր Գայլ Վահաններըը, գայլեր, որոնք ոչնչով ետ չեն մնար Եւրոպայի ուժերէն (ատանա-Ծարիբ):

Շարժումն աշխարհիկ ընոյթ ունենալու պարագային, մենք հարկաւ պէտք չենք ունենար այնքան պատմական խորերը երթալու: Դաշնակցութեան քառասունամեայ պատմութիւնը հերոսութեան անթիւ նմոյշներ կուտա, որոնց մեծ մասը, չխոտակ է, կրկնած են քանի մը անգամ, բայց կան ալ, որոնք մէկ անգամ ևն միայն պատահած եւ որոնց ամենայն իրաւամբ կրնանք կրկնել:

Մեր կատարած հերոսութիւնները, ճշմարիտ է, չունեցան անմիջական արդիւնքներ, սակայն, երբեմն առատ նեխի տուին աշխուժութեան իր ժամանակին եւ մեզի ալ տուին օտարութեան մէջ յիշողութիւններ, որ սա տասը տարի է, օր գիշեր կը յիշենք մեր բոլոր թերթերու մէջ, ու դեռ վերջ չունին:

Ընկերներ, սա չարաթի մըն է՝ մենք խօսքէն գործի ենք անցեր: Մեր գինուորական չտարը Ժընեւի մէջ «Ազգային երգարանն» առած՝ արշաւանքի տենդոտ պատրաստութիւններ կը տեսնէ: Արդէն «Մանասարի» պլանը հարիւր տարուան պատրաստ է, ինչպէս կ'ուսեալ հեռագիրը, ու մենք կրնանք իսկոյն եւ եթ կարկառ տեղալ ուր որ պէտքն է: Բայց կ'սպասենք: Իւրաքանչիւր ժամ նոր պլան մը կը բերէ մեզի ժընեւէն: Սասունի յանձնաժողովը իր խօսքը դեռ չի ըսեր. չատ կարելի է, որ մենք բախտ ունենանք «իրրեւ արծիւ սաւառնելու լեռ ու ժայռ» ու թնդացնելու աւազ վերաբերեալ բոլոր բաները:

«Բանկ Օթոմանի» սեկցիան կը խոստանայ աշխարհասաստան ցոյց մը կազմել՝ եթէ մենք համապատասխան «արտաքին ձեւաւորումը» տանք: Ի՞նչը կը պակսի ցոյցին: Բանկ՝ բոլշեվիկեան Հայաստանն ունի: Մեր կողմէ «Կոմունալ» բանկի դրաւումը հարկաւ չէր կրնար աննկատելի անցնել քաղաքական հորիզոնէն: Հոս դժբարն միայն ծովի խնդիրն է: Ինչի՞ վրա լողացնենք այդ նաւը: Սեւանի ծովը շատ հեռու է: Թոխմախան կ'ըսէր... ո, եթէ հնար ըլլար դէթ քանի մը կանգուն մեծցնել... մկի ափէն կը նայինն, մեւս ափը կ'ելլէին, հանդիսա, ապահով: Ահա, ընկերներ, մեր կուսակցութիւնը մեծ գործ մը կատարելու նախօրեակին յաճախ ասանկ պզտիկ արգելքներու կը հանդիպի ու կանգ կ'առնէ: Ու ես կ'ըսեմ, եթէ Ազգայնանը «էքստերիտորիալ» Հայաստանի մէջ մոռցեր է ծովը դնել՝ կոպէկի չեմ առներ այդ Հայաստանը: Իմ կարծիքով՝ երկիր մը, երբ մասնաւոր նոր կը չինուի, պէտք է չինուի՝ բոլոր յարմարութիւններով...

Ժընեւի չորրորդ սեկցիան զբաղած է մեր ազգային մեւս կուսակցութեանց բերելիք մասնակցութեանը յատկապէս մեծ գործին:

Ահա, ընկերներ, մենք Ժընեւի մէջ մեր փորձաղէտներն ասանկ փաստերը պլաններ կը չինեն, մեր Փարիզի դիւանագիտական սեկցիան պարապ նստած չի մնանք: Մեր կուսակցութեան նպատակը է բոլոր ճակատները համաքայլ ընթացնել: Ինչի՞ կը նմանէը, օրինակի համար, եթէ մենք յանկարծ Հայաստան իջնայինք, ու պարզուէր, որ մենք Թուրքերու հետ մտեր ենք թշնամանալ: Ու յանկարծակիի չգալու համար չարեթ մը է վեր է կ'աշխատինք Փարիզի թուրք դեսպանի միջոցով թշնամանալ Քէմալի կառավարութեան հետ եւ յոյս ունինք, որ մեր այդ քայլը յաջողութեամբ պսակուի: Ընկերներ, ես վերջացուցի դիւանագիտական մասը: Հիմա ձեր ուշադրութիւնը կը

ԽԱՏԻՍԵԱՆ Ա.

հրաւիրեմ երկու խնդիրի վրայ, որոնք ընթացիկ հարցեր։

Առաջինը մեր կուսակցութեան բնոյթը որոշելու հարցն է։

Ինչպէս գիտէք, մենք ունինք ընդհանրը երկու բևեռ — արեւելեան եւ արեւմտեան, որոնք այլ եւս չեն համապատասխաններ ներկայ կացութեանը։ Ինչո՞ւ։ Վասն զի, եթէ ընդունինք «ինչքան կարծիք՝ այնքան բևեռ» բանաձեւը, կը տեսնենք, որ մեր կուսակցութեան մէջ եղած կարծիքները անհամեմատ աւելի չատ են, քան մեր բևեռները։ Ու մենք հետեւողական ըլլալու համար պէտք է, որ արեւելեան բևեռի քովը չարենք հարաւ–արեւելեան բևեռ մը ու դէմ յանդիման՝ հիւսիս–արեւմտեան բևեռ։ Ու այսպէս, քանի կողմ՝ այնքան բևեռ։ Սակայն, այս վարչական բաժանումը հիմք չունի, ինչու որ մեր կուսակցութիւնը ներկայիս տեղաչարժուած է։ Հիմա մեր բոլոր կողմերն ալ արեւելք են մեզի։ Այդ պատճառով ահաւասիկ առաջարկ կա վերացնել այդ բաժանումը բուն աշխարհագրական կողմերու եւ դանել նոր անուններ։

Այս մեկ։

Երկրորդ, ընկերներ, մեր ընկեր Աւետիս Ահարոնեանը, որ ամբողջ կեանքի մէջ մեզ համար լացաւ, այսօր կորնցուցիք է եւ իր աչքի լոյսը։ Բնականաբար՝ կուսակցութեանս առջեւ գրւեցաւ անոր՝ իբրեւ «աշխատանքի ինվալիդ»ի նկատմամբ բաւարարելու խնդիրը։ Ի կատարումն կուսակցութեանս հրահանգի, Ահարոնեանը ներկայացուցեր է մեզի 36 տարու լալու առաջ։ Կուսակցութիւնս առարկեց այդ առաջին, ինչու որ վկայականին մէջ հաշիւ է առնուած նաեւ ծնած առաջին երկու տարւայ լացը, չըլլան մը, երբ մենք բոլորս ալ կուլանք՝ եւ առոր համար ոչ օքի գրամ չի տրւիր։ Խնդիրն ուսումնասիրելու համար մասնախումբ մը ընտրւեցաւ, որն քննութեան առնելով հարցը, գտաւ, որ Ահարոնեանը անընդհատ չէ լացեր, ունեցեր է բաղմաթիւ «պրոգուլներ» ու բացթողումներ։ Իր ողջ կեանքի ընթացքին գրբոպանն ունեցեր է ընդամէնը պզտիկ թաչկինակ մը։ Մինչդեռ նման «գիշանոտ» լացողի մը թաչկինակը պէտք է ըլլար ոչ փոքր քան մեծ նաւու մը առագաստը։

Բացի այդ, մասնաժողովի փոքրամասնութիւնը գտեր է, որ Ահարոնեանի լացը որակապէս եղեր է չատ ցած ու չի համապատասխանած ազգի կրած տառապանքին։ (Աղային մաներու պահասի մասին է խօսքը, Լ. Կ.)։

Սակայն, եթէ անգամ գուա ջուր թափած ըլլա Ահարոնեանն իր աչքերէն, այնու ամենայնիւ մի բան արժէ։ Մենք կրնանք չհաւնիլ արհեստաւորին գործին, բայց պարտական ենք զէթ մատնեխալի վրամը վճարել։ Ու մենք որոշել ենք վճարել։

Ես վերջացուցի։

Ես ալ վերջացուցի։

1929 թ.

ԱՀԱՐՈՆԵԱՆԻ 40–ԱՄԵԱԿԸ
Նկար՝ ԴԱՆԶՈՑԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Այս տարի Փարիզի մէջ մահացաւ տաղանդաւոր Կոմիտաս վարդապետը, որ հայ երաժշտութեան հանճարեղ մշակներէն մէկը հանդիսացած էր:

Բռնադատուած Թուրքիոյ Հայաստանէն եւ զաղթականութիւնը յարգեց Կոմիտասի յիշատակը սարքելով համերգներ եւ կազմակերպելով սգոյ նիստեր:

Կոմիտաս հաւաքելով ժողովրդական երգերը եւ հանճարեղ վերամշակման ենթարկելով զանոնք ապահոված է Թուրքիոյ Հայաստանի երաժշտութեան համար հսկայական ժառանգութիւն:

Տաղանդաւոր Կոմիտասը ապրեցաւ Հայաստանի Թուրքիոյացումէն յետոյ, համապատասխան 15 տարի, բայց անհատորդ մնաց այն ժողովրդականութեան, որ իւրաքանչիւր կը վայելէ Թուրքիոյ Հայաստանի մէջ եւ շնորհիւ Թուրքիոյ կարգերու դարձած է 170 միլիոնանոց ժողովուրդի երաժշտական անժրջտելի մէկ արժէքը:



ԿՈՄԻՏԱՍ Նկար՝ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԷԿ ՁԵՌԱԳԻՐԸ ՆՎԻՐՈՒԱԾ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԳՐ. ՍԻՒՆԻԻ



ՍՄԵՐ ՀՅՈՓ



ԸՆԿԵՐ Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐՀՕԿԻՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
ՆԱԽԱԳԱՀ

ПРЕДСЕДАТЕЛЬ Ц. И. К. С. С. Р. Армении	E. S. Ş. Ç. Mərkəzi İçr. Qomitəsi SƏDRİ

№ 939 Երևան 12/I 193 5 թ. Ցնրվամ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Ե-րորդ
Սուրբ Էջմիածին

Ձեր "Ասիա" շոգենավով ուղարկված ինձ ուղղված նամակը ստացա։ Ինչպես Ձեզ հայտնի է, ես Ձեր հրավերին ընդառաջ եկել եմ Ձեզ մոտ, որպեսզի անձամբ հանդիպեմ Ձեզ հետ։

Ձեր նամակում հիշատակում եք Ս. Մարտիկեանի անունը, որի մասին ես ունեցել եմ իմ կարծիքը հայտնելու հնարաւորութիւնը։ Ես ուրախ եմ, որ Ձեր նամակում ինքներդ էլ ընդունում եք, որ Մարտիկեանը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ աշխարհի առաջադէմ մարդկութեան ներկայացուցիչներից մէկն է եղել։ Ես ինքս էլ ամենայն հաճոյքով կ'ընդունեմ Ձեր հրաւէրը՝ այցելելու Ձեզ Էջմիածին, որպէսզի Ձեզ հետ միասին կարողանանք ոգեկոչել Մարտիկեանի յիշատակը։

Ձեզ յարգանքով

Մ. Գորկի։

ԵՐԿՈՒ ՄԵԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Երկու լուսաշող ծօներ, երկու յաղթական տարեդարձներ...:

Մէկը՝ Յորդ. Հայաստանի 15–րդ տարեդարձն է, միւսը՝ Ամերիկայի 204–ի տասնամեակը:

Յորդ. Հայաստանի աշխատասիրութիւնը կը ծանէ հոյակապ նուաճումներու, փառաւոր վերելքի եւ սոցիալիզմի կառուցման 15–րդ տարին: Այս յոբելեանական ծանակատարութիւնը տեղի կ'ունենայ բացառիկ պայմաններու ներքեւ եւ արտակարգ միջոցներով:

Հայաստանի հերոսական աշխատաւորութիւնը զմայլելի հաւատամտութեամբ եւ անօրինակ խանդավառութեամբ գերակատարած է իրեն յանձին տրուած աշխատանքի եւ կառուցման խոշորագոյն մասը: Յորդ.–ի 15–րդ տարեդարձին մեր աշխատաւորական հայրենիքը չհասած է նորանոր նուաճումներ եւ յաղթանակներ եւ հպարտ ու ինքնավստահ կանգնած է դէմ առնելի հսկա մեծագործութիւններու փառաւոր ճամբին:

Հայաստանի մէկ ծայրէն միւսը կը բարձրանան արդիւնաբերական բազմաթիւ հսկաներու հոյակապ հասակը — գործարաններ, էլէքտրակայաններ, մշակութային եւ հասարակական չքեղ հիմնարկներ:

Յեղաշրջն ոգորմելի խթիմներու փոխարէն արագօրէն եւ գրեթէ գեղեցկութեամբ կ'երեւին արդիական բնակարանները — չինած տուփ, կոմնեսթ, մարմարէ, Յորդ. Հայաստանի այնքան հարուստ ու գեղեցիկ չինանիւթերէ:

Հաւաքական մեռեսութիւնը յաղթականօրէն յառաջ կը խոյանա Հայաստանի կանաչացող եւ բերքառատ դաշտերու մէջէն: Ժողովրդական բարեկեցութիւնը կը հիմնաւորի փառահեղօրէն եւ ամենէրու երկրի անխուսափելի դրութիւնը իր բոլոր դառնութիւններով անցեալին կը յանձնուի:

Անգրագիտութիւնը կ'անհետանայ եւ ընթերցասիրութեան սպառիչ եւ անհուն պահանջի մը առջեւ չատ փոքր կուգա մեր վիթխարի ազգագրական արտադրանքը:

Թատրոնը, սինեման, օպերան կը գտնան կենսունակ, որակաւոր եւ հզօր հիմնարկներ — Հայաստանի աշխատաւորութեան վայելքի եւ մշակոյթի լուսաւոր ապրանքներ:

Երեւան կուգա արեւատպէսներու, գրողներու եւ գիտութեան մշակներու նոր եւ պանչելի սերունդ մը՝ օժտուած փառահեղ տեսլեքով եւ հեռատեսական հաւատամտութեամբ:

Սոցիալիզմի կառուցումը յառաջ կը տարի տիտանական աշխատանքով եւ եռման հաւատամտութեամբ:

Կ'ուժեղանայ Յորդ. Հայաստանի քաղաքական դիրքը Մոսկուայի ուժեղացումով եւ կարմիր բանակի ոյժի անպարտելիութիւնով:

Հայաստանի խորհրդայնացման 15–րդ տարեդարձը խնդութեան, վերելքի եւ յաղթանակի ու փառքի մեծ ծօն է:

Գաղութահայութիւնը եւ մանաւանդ ամերիկահայ գաղութը անսահման խանդավառութեամբ կը մասնակցի այս լուսաշող ծօնին: Նա իր այս անհուն խանդավառութիւնը ժողովրդական տաւարանին պատգամաւորութեան մը միջոցով կը հաղորդէ Յորդ. Հայաստանի հերոսական աշխատաւորութեան, այս կերպով անգամ մը եւս չեշտելով այն պղպջատակուռ միասնականութիւնը, որ գոյութիւն ունի Յորդ. Հայաստանի եւ արտասահմանի միջեւ:

Մեծ ծօնը Ամերիկայի 204–ի տասներորդ տարեդարձն է:

Յորդ. Հայաստանի անպարման բարեկամ այս մարտական կազմակերպութեան տասը տարիներու արագաթափ զարգացման, բերելազգացումի եւ հզօրացման տասներորդ հանդրւանին ենք հասած: Այս հանդրւանէն յետադարձ ակնարկ մը Ամերիկայի 204–ի անցեալ տասը տարիներու վրայ որքան խրախուսիչ, արտասովոր եւ մանաւանդ դասալարակիչ է:

Այս տասը տարիներուն, արդիւնաշատ եւ ճակատագրական տարիներու ընթացքին, 204–ի հետ, արդիւնի հսկայական կեդրոնատիպութեան է ենթարկուած նաեւ ամերիկահայ աշխատաւորութեան մտայնութիւնն ու դիրքաւորումը Յորդ. Հայաստանի հանդէպ: Համարեա թէ թշնամական եւ ապա զգոյշ կեցուածքի մը յաջորդած է ջերմ համակրութիւն մը եւ ապա բոցավառ խանդավառութիւն մը: Ամերիկահայ գաղութի աշխատաւոր, խանութպան եւ արհեստաւոր խոշոր զանգուածները պատմական խանդավառութենէ գործի եւ գրական աշխատանքի խմաւորութեան են հասած:

Ամերիկահայութիւնը իր պատմութեան եւ մեկնման բաժինն է բերած Հայաստանի աշխատաւորութեան սոցիալիստական եւ կառուցողական հոյակապ աշխատանքին: Այնօրինակ արագ թափով աճող մեր գեղեցիկ մայրաքաղաքի — Երեւանի — չուրջ այսօր կը ծագկին ու կը բարգաւաճին տասնեակ նորակերտ, աշխոյժ եւ սիրուն ագարակներ: Այնոնք ամերիկահայ գաղութի տուրքն են մեր երկրի չինարարական հսկա գործին: Այս գործի եւ կենսուրախ ագարակներու մէջ եկած հաստատած են դեռ երկկ Թիւրքիայի, Պալքաններու եւ Սուրիոյ մէջ անցյս եւ անել վիճակի մատնուած Հայ աշխա–

տաւորները: Վերջերս ալ այս բանաը Ֆրանսահայ աշխատաւորութեան է վիճակած: Անոնք երկնց ոտքի փոշիներուն հետ, ղրամատիրական այդ մոալ երկիրներու մէջ են թողուցեր անպատժութեան, հայածանքի եւ սովի զարհուրելի մըթնաւոլորտը եւ այս նոր աւանիներու մէջ բուռն եւ հարատեւային աշխատանքով դէպի հաւաքական բարգաւաճում, դէպի համամարդկային բարեկեցութիւն — դէպի համատարած երջանկութիւն եւ վայելք կը դիմեն:

Իր գոյութեան տասնեակ օրէն սկսեալ Ամերիկայի ՀՕԿ–ը յատկէ յատկաւորութիւնով եւ անհանգիստ ջանգատուրեամբ ամերիկահայ գանգուածներու ազգային տարեր է Մորս. Հայաստանի անպատման բարեկամութեան եւ անվարան պաշտպանութեան պայծառ գրօշը: Ֆաշիստական եւ քաղաքամէ ուժերու բոլոր կրիտոյն ու վայրագութիւնները արհամարհած՝ ՀՕԿ–ը չարունակեր է իր փառահեղ եւ յաղթական երթը: Եւ գանգուածները՝ հետզհետէ իրենց ուսերէն եւ մաքէն թօթափած անտարբերութեան եւ նախապաշարմունքներու ծանր փոշին՝ յուսով եւ ոգեւորութեամբ հետեւած են ՀՕԿ–ի պարզած լուսաւոր դրօշակին:

Չէ եղած գաղութահայ ոեւէ դէպքերի ձեւնաւորէ, վերաշինական ոեւէ արժէքաւոր աշխատանք, Մորս. Հայաստանի պաշտպանութեան ոեւէ մարտական արշաւ, որ դլխաւորած եւ առաջնորդած չըլլա ՀՕԿ–ը:

Այս է պատճառը, որ ամեն յաջորդ տարի անհամեմատ չափերով աճած է Մորս. Հայաստանի տարեգարձներու ժողովական հանդիսութեան թիւը. եւ վերջին տարիներու ընթացքին բազմահազար հանդիսականները այս ժողովատարութիւնները վերածած են համակրանքի եւ Մորս. Հայաստանի ու Մորս. Միութեան պաշտպանութեան խանդավառ եւ հզօր ցոյցերու:

Մորս. Հայաստանի պայծառ իրականութեան հետ զուգընթացօրէն աճած է եւ հզօրացած Ամերիկայի ՀՕԿ–ը, ինչպէս նաեւ ամերիկահայ աշխատաւորութեան համակրութիւնն ու սէրը դէպի այդ փառաւոր Մորսերդներու երկիրը: Բազմաթիւ մտաւորականներ եւ արուեստագէտներ լքած են անտարբերութեան եւ հակահեղափոխական դրութիւնները ճակատը եւ եկած են կանգնելու Մորս. Հայաստանի պաշտպան բանակի չարքերուն մէջ: Եկած են արհեստաւորներ, եկած են խանութպաններ, եկած են նոյն իսկ ունեւորներ:

ՀՕԿ–ը եղած եւ կը մնա գաղութահայութեան եւ Մորս. Հայաստանի միջեւ յարատեւօրէն ազդ բարեկամութեան եւ մշակնակութեան հզօր կապը:

ՀՕԿ–ի այս փառաւոր դերը ճանչցած եւ գնահատած են Հայաստանի պետական դեկավարները եւ խորհրդային մտաւորականութեան առաջաւոր դէմքերը:

Ամերիկայի ՀՕԿ–ը՝ դիտակից իր պատասխանատուութեան բարձրագոյ լրջութեան եւ իր կատարած խոշոր նւաճումներուն՝ այսօր հրապարակ է եկած գաղութահայ ժողովրդական համագործակցութեան այժմէական կալգախօսով: Նա կ'առաջադրէ Մորս. Հայաստանի պաշտպանութեան, շինարարութեան եւ ներգաղթի չուրջ մեացեալ եւ արգիւնաւոր աշխատանք՝ Մորս. Հայաստանի բարեկամ բոլոր տարրերու մէջեւ:

Աչքի առջեւ ունենալով Ամերիկայի ՀՕԿ–ի կատարած երկար եւ արգիւնաւոր համրան, ամենայն վստահութեամբ կրնանք յայտարարել, թէ մեացեալ գործի այս դեղեցիկ առաջադրութիւնը պիտի կենսագործէ չատ մօտիկ ապագային: Այս բաղձալի քայլը պիտի դա մեծապէս արագացնելու ներգաղթի հրամայողական գործը, որ Հայաստանի պաշտպանութեան գործին հետ կը կազմէ գաղութահայութեան ամենէն կարեւոր եւ այժմէական խնդիրը:

Երկու պատճառ այս տարեգարձները յատկանշելու նպատակով է, որ Ամերիկայի ՀՕԿ–ը հրապարակ կը դնէ ներկա հրատարակութիւնը:

Այնտեղ չբնդ մշտնակնութեամբ կողք կողքի երեւան կուգան Մորս. Հայաստանի գրողներն ու արուեստագէտները, ամերիկահայ գրողներու եւ մտաւորականներու հետ:

Այս եղբայրական արուեստի եւ մտքի դինակցութիւնը կուգա անգամ մըն ալ անախալելի կերպով չեշտելու գաղութահայութեան եւ Մորսերգային Հայաստանի պայպատեա միասնականութիւնը, որու հզօր օդակը կը հանդիսանա Ամերիկայի ՀՕԿ–ը:

ԳՐ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ (1921) ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (1924)

Հայաստանի Օգնութեան Կոմիտէն (ՀՕԿ) ծը-նունդ առաւ այն պահուն, երբ նոր խորհրդայնացած Հայաստանը ներկայացնում էր մի աւերակ աշ-խարհ, ուր հաւաքւել էին ինչպէս Թուրքիայից, նոյնպէս Ռուսաստանի զանազան կողմերից եկած հարիւր-հազարաւոր Հայ աշխատաւորներ եւ 50 հազարից աւելի որբեր…:

ՀՕԿ-ը կազմակերպւեց այն ժամանակ, երբ սովի ճիրաններում տապալւող զանգւածները՝ Հայ թէ Ռուս, թաթար թէ Քուրդ, եղիաի թէ Ա-սորի՝ բոլո՛րը, բոլո՛րը հա՛ց, հա՛ց էին աղաղա-կում…:

ՀՕԿ-ը հիմնադրւեց այն պահին, երբ տիֆն ու այլ համաճարակները հաղարաւոր, տասնեակ հազարաւոր զոհեր էին խլում այն աշխատաւոր ժողովրդի շարքերից, որը հարկադրւած էր մնալ զանազան խոտերով…:

Եւ վերջապէս ՀՕԿ-ը հրապարակ իջաւ այն օ-րերին, երբ Հայաստանի աշխատաւոր զանգւած-ները դեռ նոր էին փշրել մահմեդիականների իշխա-նութեան լուծը ու առնդել իրանց իշխանութիւնը՝ Խորհրդային Հայաստանի բանւորա-գիւղացիական իշխանութիւնը:

Այո՛, ճիշտ այդ ճգնաժամային օրերին է, որ հրապարակ է եկել Հայաստանի Օգնութեան Կոմի-տէն, նպաստակ դնելով՝ ա) Նպաստել ու աջակցել Խորհրդային Հայաստանին՝ ազատելու իր օրհաս-կան դրութիւնից Հայաստանի աշխատաւորութիւնը՝ առանց այն էլ հիւծւած ու մաշւած, ինչպէս ևր-կարատեւ համաշխարհային պատերազմի, նոյնպէս ազգամիջեան եւ քաղաքացիական կռիւների հե-տեւանքով:

«Հայաստանի Օգնութեան Կոմիտէն» ծնունդ էր ուրեմն իր ժամանակի անհեռա-քաղաքական կռնկրետ պայմանների:

Հաբիւրից աւելի կուսակցական թէ անկուսակ-ցական, բանւոր թէ մտաւորական քաղաքացիներ կազմակերպեցին ՀՕԿ-ի առաջին Համագումարը 1921 թ. սեպտեմբեր 18-ին: Մեծարգելին եւ վա-ւերացրին ՀՕԿ-ի սահմանադրութիւնը եւ ներկայացրին Հայաստանի Ժող. Կոմիսարների Խորհրդին՝ ի հաստատութիւն:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախա-գահ՝ Հանդուցեալ Ա. Մյասնիկեանը ոչ միայն ան-միջապէս հաստատեց այդ, այլ եւ ջերմաւորելով ՀՕԿ-ի հրապարակ գալը՝ խոստացաւ ամեն հնա-րաւոր աջակցութիւն՝ նպաստելու համար նրա բեղմնաւոր գործունէութեան:

Համագումարը ընտրեց ՀՕԿ-ի Գլխաւոր վար-չութիւնը, որի մշտական կեդրոնն էր լինելու Եր-եւանը:

Առաջին Գլխ. վարչութեան նախագահ ընտ-րւեց մեր մեծ բանաստեղծ ողբացեալ Յովհ. Թու-մանեանը, որի բնակավայրը լինելով Թիֆլիս, չը-նպաստաւորեցին չունէր առանձնելու ՀՕԿ-ի գործա-վարութիւնը: Երկրորդ նախագահ ընտր. Ադամա-յիս Երզնկեանին վիճակւեց հետեւաբար ՀՕԿ-ի գործառոյթն ղեկավարութիւնը:

ՀՕԿ-ի Գլխ. վարչութեան առաջին գործն ե-ղաւ անմիջապէս կապ հաստատել Հայ գաղութների հետ, ծանօթացնել նրանց Հայաստանի աշխատա-ւորութեան մտայղ կացութիւնը եւ կոչ ուղղել հա-նելու նրանց օգնութեան:

Ահա՛ այս նպատակով էլ, ՀՕԿ-ի Գլխ. վար-չութիւնը 1920 թուին ուղարկեց Կ. Պոլիս նախագահ Յովհ. Թումանեանին, որին ընկերացաւ Ե. Թա-դեւոսեանը:

ՀՕԿ-ի Գլխ. վարչութեան պատւիրակութիւնը խոկոյն յարաբերութեան մէջ մտաւ տեղական Հա-յաստանի Օգնութեան Մարմնի (ՀՕՄ) հետ, որ յանձն առաւ ոչ միայն Կ. Պոլսի Հայ գաղութի լայն աշխուժութիւնը փութացնելու Խորհ. Հայաս-տանի աշխատաւոր զանգւածներին, այլ եւ դիմեց չոլոտ միջոցների, որպէս զի իր խողովակով մեծ հեռաւոր Հայ գաղութներն էլ լաւն եղբայրական օգնութեան ղործին:

Պէտք է խոստովանել, որ սովի եւ համաճա-րակների այդ ահաւոր չէզոնին՝ Կ. Պոլիսն ու գա-ղութներից շատերը՝ ի յայտ բերին բացառիկ ո-ղեւորութիւն: Եւ ահա մեկը մեծ եռեւեռ ՀՕԿ-ի Գլխ. վարչութիւնը սկսեց ստանալ դրամ, ալիւր, լուբիա, հագուստեղէն, կօշկեղէն, ուսումնական պիտոյքներ, դեղօրայք եւ նոյն իսկ թժշկական մի առաքելութիւն՝ կարմիր Խաչի գծով: Ուղարկւած այս բոլոր իրեղէնները բացարձակ անհրաժեշտու-թիւններ էին կազմում այն ժամանակ:

Խորհրդային Հայաստանի աշխատաւորութեան պայքարը կատարի էր ընդդէմ սովի եւ բազմատե-սակ համաճարակների: Պէ՛տք էր փրկել Հայաս-տանի զանգւածները՝ առաջին հերթին՝ ֆիզիքա-պէս:

Ու այդ կռիւը յաղթականօրէն վերջ գտաւ 1923 թուին մեր աշխատաւորութեան միակամ ու վրճ-ռական աշխատանքով:

Զբաղան բոլորովին եւ՛ ահաւոր սովը, եւ՛ զար-հուրելի համաճարակները: Հայաստանի աշխա-

տաւորութիւնը սկսաւ հանդիսաւ չունչ քաշել մանաւանդ որ զգալուել էին ընդ միշտ հրացանների եւ թնդանօթների որոտը, թէ՛ երկրի ներսում եւ թէ՛ սահմանների վրա:

ՀՕԿ–ը, ուրեմն, ոչինչ չխնայեց օգտակար լինելու համար այդ չրջանին: Ու պիտի ընդգծել, որ նա յաջողացաւ իրագործել կանոնադրութեամբ սահմանուած նպատակը: Այն բոլորը ինչ սահմանում էր, նա ժամանեց կամ քաղաքների եւ կամ գիւղերի ամենադարիքաւոր զանգուածներին:

ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութիւնը՝ սակայն էր վարելու մինչեւ 1924 թ. «սպառողական» քաղաքականութիւն: Այնքան խոշոր աշխատանք կար այդ ուղղութեամբ, որ կարելի չէր մատնել ուրիշ աշխատանքի մասին:

Եւ 1923 թ. վերջերը ՀՕԿ–ը վերաքննեց իր աշխատանքի մեթոտները, յարմարելու համար օրւա պահանջներին:

Քանի որ Խորհ. Հայաստանի կառավարութիւնը սկսել էր դրաւելբ իր սոցիալիստական շինարարեան ծրագրերը, եւ ոչ միայն ծրագրել, այլ եւ որոշ չափով ձեռնարկել էր նոյն իսկ գործնական աշխատանքի, ՀՕԿ–ին մնում էր փոխոխութեան ենթարկել իր աշխատանքի նպատակները ու ձեւերը, կարենալ քայլերու համար նոյն ուղիով:

ՀՕԿ–ի Գլխ. Վարչութիւնը իր ժամանակին ըմբռնելով այս անհրաժեշտութիւնը, 1924 թուին հրաւիրեց երկրորդ Համագումարը:

Այս Համագումարին ներկա էին ՀՕԿ–ի հիմնադիր անդամները՝ թէ՛ երեւանից եւ թէ Մոսկուայից, կոոպերատիւ այլ Հայ գաղութներից, ինչպէս եւ պատւիրակներ Մոսկուայից, Ռոստովից, Հիւսիսային Կովկասում այն ժամանակ գոյութիւն ունեցող Մասնաճիւղերից, նաեւ եւրոպական գաղութներից: Փարիսեայից եւ Անգլիայից ևս էին քաղաքացիներ եսայի Կարիկեան եւ Դոկտ. Տիհնեան:

Համագումարը տեւեց ամբողջ մի շաբաթ, որի ընթացքին եղան ընդարձակ զեկոյցներ ՀՕԿ–ի մինչեւ այդ կատարած, ինչպէս ապագայում կատարելիք աշխատանքների մասին:

Համագումարը որոշեց ՀՕԿ–ի առաջին նպատակը դնել — «Աչքակոչել Խորհ. Հայաստանի սոցիալիստական շինարարութեան եւ արդիւնաբերական վերելքին: Իսկ գործնել երկրորդ նպատակ՝ իր առաջին նպատակը՝ այն է օգնութեան փութալ Խորհ. Հայաստանին ադէտի դէպքում՝ սով, համաճարակ, կամ երկրաշարժ:

Ջնայելով, որ ՀՕԿ–ը՝ երեքորդ Համագումարից յետո՝ ոտք էր դրել սոցիալիստական շինարարութեան եւ մշակութային ճակատի աշխատանքների չրջանը, դժբախտաբար նրան զրաղեցրեց գործնել իր երկրորդ նպատակը Լենինականի եւ Զանգեզուրի երկրաշարժների հետեւանքով, որոնց դոհերին սփոփելց փութացնել իր անմիջական օգնութիւնն ու աջակցութիւնը:

Երկրորդ Համագումարից անմիջապէս յետո, Գլխաւոր Վարչութիւնը իր ուշադրութիւնը դարձրեց արտասահմանի Հայ աշխատաւորների վրա, ՀՕԿ–ի միջոցով հաւաքելու նրանց Խորհ. Հայաստանի չինարարութեան չուրջ:

Այս նպատակով էլ՝ Գլխ. Վարչութիւնը, 1925 թւի աշնանը, արտասահման զործուղեց ՀՕԿ–ի առաջին պատւիրակութիւնը, որի չանքերի չնորհիւ եւ տեղական ընկերների աջակցութեամբ, կազմակերպուեցին ՀՕԿ–ի բաժանմունքներ՝ Եւրոպայում, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայում, Ինչպէս նաեւ Բալկաններում եւ Պարսկաստանում:

Մասնաճիւղերի թիւը 150–ը անցաւ, իսկ ՀՕԿ–ի անդամներինը հասաւ մօտ 8,000 հոգւոյ:

Դադութեամբ ՀՕԿ–երի կազմութեամբ ՀՕԿ–ի աշխատանքները նոր թափ ստացան եւ առավ քաչեցին գործունէութեան նոր ձեւեր ու նոր մեթոդներ:

! ՀՕԿ–ը «սպառողական»ից անցնում է արտադրական եւ չինարարական աշխատանքների:

Այսպէս, Մոսկուայի ՀՕԿ–ի չրջանային վարչութեան նիւթական օժանդակութեամբ՝ Գլխաւոր Վարչութիւնը կառուցում է Խիլիւրի չրանցքը, որը չրում է 4–5,000 հեկտար հող:

Երեւանում, Քաղ. Ե. Կարիկեանի զեկավարութեամբ կառուցւում է կահկարասիների մի գործարան՝ «Կարմիր Հոկտեմբեր», մի արդիական ձեռնարկ, որը գործ է հայթայթում երեւաղէմից հոգի որբերին: Այս գործարանին վրա ծախսւց մօտ 150,000 ռուբլի: Ապագային՝ «Կարմիր Հոկտեմբեր»ը յանձնւց ՀՕԿ–ի կողմից քաղաքին: Այդ գործարանը մինչեւ այժմ էլ գործում է Անաստասեւսի մեծ գործարանին կից: Միաժամանակ Գլխ. Վարչութիւնը կազմակերպեց Երեւանում ատաղի գործարանը եւ այն էլ յանձնեց հրկին քաղաքին:

1924—1926 թթ., ՀՕԿ–ի Թիֆլիսի չրջանային կոմիտէի նախաձեռնութեամբ հիմնեցինք Հայաստանի գիւղատնտեսական կենտրոնական վայրեում՝ Երեւան, Լենինական, Ղարաքլիսա, Դիլիջան եւ այլն, գիւղատնտեսական գործիքների խանութներ, որոնք չքաւոր գիւղացիութեանը բաց էին թողնում եւ՛ էժանագին, եւ՛ մաս մաս վճարովի գումարի, գերանդի, մանգաղ, մուրճ, մեխ, եւ այլն:

Պէտք է ընդգծել, որ ՀՕԿ–ի արտասահմանեան ճիւղերը սկսել էին արդէն ցոյց տալ նիւթական զգալի աջակցութիւն Գլխ. Վարչութեանը:

ՀՕԿ–ի առաջին պատւիրակութեան վերադարձից յետո, Գլխ. Վարչութիւնը ձեռնարկեց «Ամերիկահայ Աչխատաւորութեան Տան» կառուցման գործին: Այդ տունը, որ ունի քսան եւ հինգ բնակարան՝ բաղկացած երեքական սենեակից, եւ մի խոհանոցից, արժել է Գլխ. Վարչութեանը մօտ 250,000 ռուբլի:

Պէտք է աւելացնել, որ այս աշխատանքներին զուգընթաց, Գլխ. Վարչութիւնը չզլացաւ իր նիւթական աջակցութիւնը նաեւ այն չքաւորներին,

ԴՆԿ· ԱՐՍԷՆ ԵՍԱՅԵԱՆ
ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութեան Նախագահը

որոնք լրիւ օգնութեան կարիք կ'ին զգան: Այսպէս՝ նա առանձին ուշադրութիւն կ'ընծայէ նեղ–դաղթող այն քաղաքացիներուն, որոնք ծանրաբեռնուած կ'ին բազմանդամ ընտանիքներով:

ՀՕԿ–ը աշխատանքի բոլոր ճակատներուն մէջ–տեղ կ'ունենայ մինչ դործնական: Նա կազմակերպել կ'ընդունի արտելներ Երեւանում, ինչպէս դերձակներու, կօշկակարներու, երկթարգէմանների՝ տպահոլիւս նեթգոյծողների համար աշխատանք:

Հանրնականի երկաշարժի ոչնաւերներին անմիջապէս հասցուց նաեւ 10,000 փութ ցորեն: ՀՕԿ–ի Գլխ· Վարչութիւնը՝ 1928 թ·, ուղարկեց արտասահման իր երկրորդ պատուիրակութիւնը: Նրա վերադարձից յետո մեծ չափով զարդացաւ արտասահմանից Հայաստան ուղարկուղ դործիքներն եւ այլ պիտոյքների մատակարարումը: Գլխ· Վարչութիւնը Հիւս· Ամերիկայից, Ցունաստանից, Ֆրանսայից ստացաւ, վերջին երեք–չորս տարիների ընթացքին, մօտ 75 մարզատար եւ տասնեակներով բեռնատար ինքնաշարժներ, որոնց նշանակութիւնը անչուշտ չատ մեծ է: Բացի դրանից՝ ստացել ենք Ամերիկայից 150–ից աւելի զրամիքնաներ, որոնք բաշխած են մեր պետական մարմիններին ու հասարատութիւններին: Ստացել են նաեւ կօշկի ամերիկեան երկու մեքենաներ եւ այլ բազմաթիւ մանր–մունր զործիքներ ու բազմապիսի պիտոյքներ, նաեւ կիսագործուած կամ նոր հագուստեղէն ու կօշիկներ, թէ՛ Հիւս· Ամերիկայից եւ թէ՛ Ֆրանսայից: Հարաւային Ամերիկայից էլ ստացուել զուլպայի մեկ մեքենա:

Առանձին յիշատակութեան արժանի են մեքենագրային գրութեան այն չորս աքանչելի արտադործները, որոնք ստացուեցին Հիւսիսային Ամերիկայից Մորմ· Հայաստանի տասնամեակին եւ անմիջապէս տեղափոխուեցին Զանգեզուր: Ուրիշ առիթներով էլ ստացել ենք տասնից աւելի արտադործներ:

ՀՕԿ–ի Գլխ· Վարչութեան զրասենեակը ամեն օր եւ ամեն ժամ լիքն է այցելուներով, որոնցից մեկը օգնութիւն կ'ուզէ, միւսը՝ խորհուրդ, երրորդը՝ լուր արտասահմանի բարեկամներից, չորրորդը՝ ապագրանք ունի կամ խնդիր: Պիտի չիշ–

տեմ, որ բոլորը անպատճառ դուրս են եկել ՀՕԿ-ի դրասենեակից այս կամ այն կերպ դժգոհությամբ ստացած:

ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութիւնը մեծ գործունէութիւն է ծրագրած նաեւ մշակութային-կրթական ասպարէզում: Այսպէս՝ նա աշակցել է մի քանի գիւղական դպրոցների եւ կառուցել՝ իր միջոցներով իսկ, գիւղական դպրոց: Ապա օգնել է մեր Համալսարանին եւ հասարակութիւններին ու բարձրագոյն ուսումնական դպրոցներին, մասնակարաբերով նրանց բազմապիսի եւ այլ եւ այլ կարիքների մասնագիտական դրքեր, մանրադրամներ եւ, վերջապէս, ինչի որ կարիք են զգացել:

Մասնակարաբել է բարեմաթիւ դեղօրայք՝ քինին, եւ այլն, մեր Առողջապահական Կոմիտաբանութեան, հիւանդանոցներուն եւ Կարմիր Խաչին:

1930 թ.-ից՝ Գլխ. Վարչութիւնը ասանձին ուշադրութիւն է դարձրել պիոներների դաստիարակութեան գործին, նիւթապէս աջակցելով նրանց ամառնային պատանեների կազմակերպման: ՀՕԿ-ը օգնել է անդամ Մորմ. Հայաստանի ֆութպոլիստներին, հեծելանուրդներին:

Գլխ. Վարչութեան աչքի պարնող մշակութային աշխատանքներից կարելի է համարել նաեւ հեռուեւանները. Հայ զանազան գրողներին գրական պատէրներ տալով՝ քաջալերել է նրանց աշխատանքը: Օրինակ՝ հրատարակել է պրոֆ. Յովհ. Յակոբեանի «Մորմ. Հայաստան»ը, Զապէլ Եսայեանի՝ «Պրոմէթէոս Ազատագրուած»ը, Թոթովինցի՝ «Նոր Բիւզանդիոն»ը, Ա. Բահունցի՝ «Ծովածոփան Մարչ»ը, Տ. Բուդաղեանի՝ «Սպիտակ ածուխը Մորմ. Հայաստանում»: Ձեռքի տակ ունի Ե. Լալայեանի՝ «Առակներ եւ հեքիաթներ»ը (անտիպ), Էջօի՝ «Արեւմտահայ Ցեղասպանութեան Գաղափարախոսները» եւ Պօղոս Արփիարի «Մորմ. Հայաստանի Վերելքը Թւերով» գործը, եւն.:

Բացի այդ՝ Գլխ. Վարչութիւնը՝ գնահատելով Պետական Թատրոնի աշխատանքները, նրա տասնամեակի առիթով, տրամադրել է Լուսաւորութեան Ժող. Կոմիսարիատին 15,000 ռուբլի, որպէս զի դրի առնի Հայ Թատրոնի պատմութիւնը: Երաժշտանոցին նուիրել է՝ տասնամեակի առիթով՝ 5,000 ռուբլի գաշնամուր դնելու համար: Իսկ անցեալ տարի Պետական Օպերան կազմակերպելու գործին նպատեց 25,000 ռուբլի:

Այս չէ բոլորը: Գլխ. Վարչութիւնը, նկատի ունենալով Պետական Օպերայի համար ինքնուրոյն թատրոնի մը ունենալու մեծ կարեւորութիւնը, պատմանաւորել է արդէն մի քանի յայտնի գրողների եւ երաժշտագէտների հետ՝ որպէս զի Հայաստանի կեանքից վերցրած օպերաներ գրեն եւ ձայնագրեն: Այս գործի համար նախատեսուած է մինչեւ 50,000 ռուբլի:

Չպիտի մոռանամ ընդգծել նաեւ այն, որ Գլխ. Վարչութիւնը ընդառաջելով Մասունցի, Մշեցի, Վանեցի, Մնուսցի եւ այլ բազմաթիւ վայրերից՝ Արագածի փէչերի վրա վերջնականապէս տեղաւորուած տասնեակ հայրենակից ախտառաւորների դիմումին, անցեալ 1932 թ. կառուցեց նրանց գիւղերի կենտրոնում՝ Թալինի չրջանում, մի բանական խոշոր մօտրաղաց, չոգեշարժ ազօրիք, որպէս զի ցուրտ ձմրան նրանք ստիպուած չլինեն ցորեն տալ տալու համար գնալ հեռու տեղեր, նկատելով որ նրանց ջրաղացները սառչում են ձիւնասառամանիքից: ՀՕԿ-ի մօտրաղացը գործում է արդէն այսօր, մեծ հրճուանք պատճառելով գեղջուկներին:

Ընկերներ, տալով ձեղ ընդհանուր գծերով՝ Երեւանի Գլխ. Վարչութեան կատարած աշխատանքների պատկերը, ես կը ցանկանայի լրացնել այն, մասնաւոր անելով այն տեւական ու հետեւողական աշակցութիւնն, որ բերել է ՀՕԿ-ը Հայրենակցականների չինարարական գործին:

ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՏՈՎ

ՀՕԿ-ի Գլխ. Վարչութեան կատարած աշխատանքները ու հասարակ չատ քիչ են յայտնի զանգուածահայ զանազաններին եւ առանձնապէս նրա ընձեռած դիւրութիւնները՝ Հայրենակցականներին: Հասել է ժամը որ իւրաքանչիւր Հայրենակցական Միութիւն պարտ համարի իր տարած աշխատանքները վերաքննութեան ենթարկել եւ վերջնականապէս ճշտել իր դերը հանդէպ Մորդրամային Հայաստանի սոցիալիստական չինարարութեան:

Հայր. Միութիւններից առաջին ծիծեռնակը հանդիսացել է Հնուս. Ամերիկայի Արաբկիրցիների Միութիւնը, որը՝ հանդէպ յարուցած բազմաթիւ խոչընդոտներին, դեռ եւս 1925 թուին ձեռնարկել է «Նոր Արաբկիր»ի կառուցման: Ի պատիւ Արաբկիրի Հայր. Միութեան, պիտի յայտարարեմ, որ այսօր Նոր Արաբկիրը, չնորհիւ նրա թափած ջանքերին, գարձել է մի փոքրիկ քաղաք, իր մէյարկանի եւ երկարկանի սիրունատես տուներով: Նոր Արաբկիրը՝ թատած Երեւան մայրաքաղաքի ուսերին, կազմում է նրա գեղեցիկ արւարձաններից մէկը, ուր արդէն բնակւում են 1800 հոգուց աւելի Արաբկիրցիներ, որոնց սուարագոյն մասը խումբ խումբ գաղթել են Հին Արաբկիրից (Թիւրքիա):

Գլխաւոր Վարչութիւնը եռանդուն աջակցութիւն է ցոյց տուել Նոր Արաբկիրին եւ այժմ էլ չարունակում է իր հոգածու խնամակալի դերը: Նոր Արաբկիրը այսօր եռ ու գեռի մէջ է, մանուածային՝ ինքնատուր: Ոչ մի անգործ: Մերթերն ու պատանիներն անգամ յիւած են իրենց համար յարմար աշխատանքի: Գործում է մանիսայի մեծ գործարանը, կիսով չափ մեքենայացած: Տարեկան արտադրանքը մէկ միլիոն մետրից աւելի է: Արտադրութիւնը ձեռքից ձեռք է խլրում մինչեւ Բաղուից այն կողմը, եւ պահանջներին չի կարողանում ապրանք հասցնել: Ունենն արհեստի, գործի՝ նոյն գործարանին յարակից, նաեւ հօչակաւորական արհեստանոց: Ունենն ցանքեր,

անկած են այլևներ եւ անտառները, արդէն խմում են Ղըրխ-Բուլախի աքանչելի ջրից (երեւանի ջուրը), որը խողովակներով բերել են Նոր Արարկիր: Ունեն դպրոց, մանկական մսուր ու հրապարակ, ակումբ, թատրոն, պլոնեթական, երիտկոմական ու այլ կազմակերպութիւններ: Տնային նիստ ու կացը բաւական նման է Հին Արարկիրին: Այսպէս, դեռ եւս գոյութիւն ունի նրանց մօտ «սէտիքը» (թախտ), իր երկարավիզ բարձերով: Արարկիրցի կանայք ժրաջան ու մաքրասէր են: Տանը ներսը, ինչպէս եւ դուրսը, տիրում է օրինակելի մաքրութիւն:

Նոր Արարկիրը ունի մեծ ապագա: Նա հանդիսանալու է Երեւանի ամենամերձակայ ամարանոցը:

Այնուհետեւ հերթը գալիս է Մալաթիա Հայր. Միութեան, որը մի քանի տարի առաջ ձեռնարկել է եւ կառուցել Նոր Մալաթիան, Երեւանից Աջափակ տանող ճամբի վրա, եօթը կիլոմետր հեռու մայրաքաղաքից: Նոր Մալաթիայի շինութիւնը նոյնպէս տարած է ՀՕԿ–ի Գլխ. Վարչութեան ընդհանուր ղեկավարութեամբ: Մալաթիան կառուցած է մի զեկցիկ հարթավայրի վրա, Աչտարակի խճուղու երկու կողմերը բռնած: Մի կողմից Աբարտանի դաշտն է բացւում դիտողի առաջ, միւս կողմից՝ քանաքեռի եւ Նոր Արարկիրի տարածութիւնները: Ժիր եւ աշխատասէր են Նոր Մալաթիացիք: Նրանք դեռ թուով չատ չեն, մօտ 250, եւ տների քանակն էլ երեք–չորս տասնեակի չափ: Սակայն ինչ որ կառուցել է՝ հիմնական է եւ դիզիկ: Ունեն մանրաշէն աւելի փոքր դործարան, կօշիկի արհեստանոց, օրինակելի ճաշարանատուն: Կազմակերպած են հաւաքական տնտեսութիւն եւ ծրագրել են ունենալ հոտաւէտ ջրերի (parfumerie) գործարան, որի համար հրաւիրել են Ֆրանսիա աւարտած յատուկ մասնագէտ, տնկել են մեծաքանակ ծաղիկներ:

Նոր Մալաթիան ունի նշանաւոր լոյս եւ մշակութային այլ եւ այլ հաստատութիւններ: Կը սպասւի, որ Ամերիկայի եւ այլ վայրերի Հայրենակիցները եւ Վերաշինացները հրապարակ բերեն աւելի եւ աւելի թափ, եւ շինելով նորանոր բնակարաններ՝ հնարաւորութիւն ընծայեն այնտեղ տեղաւորելու այն բոլոր աշխատաւոր Հայրենակիցներին, որոնք Եւրոպա, Սուրիա եւ Ամերիկա թափառում են անդորձ:

Մալաթիացիները, եթէ կամենան, կարող են մեծ գործեր գլուխ բերել:

Սրանցից յետո, թէեւ քիչ ուշ, հրապարակ է ջաս Սեբաստիա Հայրենակցականը, ապա՝ Համաբերատիականը, որոնք, նոյնպէս, կարողացան՝ ՀՕԿ–ի Գլխ. Վարչութեան անմիջական դեկավարութեամբ, պատւաւոր տեղ գրաւել Մոր. Հայրենանի Հայրենակցական գծով կատարւող շինարար աշխատանքների մէջ:

Մինչեւ 1931 թ. վերջերը, աշխատանքները դրեթէ չին չատ դանդաղօրէն, սակայն 1931–1932–ին նրանք սուացան մեծ թափ եւ 1932 թ. վերջերին, Նոր Սեբաստիան, իր կողքին ունենալով նաեւ Նոր Թոմսորգան (որ այժմ կոչւում է Նոր Կեսարիա), ունեցաւ մի այնպիսի տեսիլք, որ դժուար էր նախատեսել:

Նոր Սեբաստիան ունի արդէն տասնի չափ երկրնակարանային չէնքեր, 32 անհատնոց երկյարկ մի փառաւոր շինութիւն, ժամանակաւոր դպրոց, սպա զորգի եւ մեւաքանդկեն զործատեղեր, նաեւ չատ հիւանդոց զործարաններ: Սրանց մէջ աշխատում են մօտ 70 աշխատաւորներ, կազմակերպած է հաւաքական տնտեսութիւն, որը վարում է բոլոր տնտեսական աշխատանքները:

Նոր Սեբաստացիների մի մասը պարապում է հողագործութեամբ եւ այգեզործութեամբ: Բնակիչների թիւը հասել է արդէն 400–ի: Նոր Թոմարգան ունի 60–70 հոգի, որոնք բնակւում են նորաչէն սիրուն երկրնակարանային տներում, կառուցած Նոր Սեբաստիայի դէմ առ դէմ, խճուղու միւս կողմը: Այդ երկու տաներն էլ ունին աքանչելի տեսարան:

Հիւս. Ամերիկայի Այգ–Աբամեան Ուսումնասիրաց ՀՕԿ–ի Գլխ. Վարչութեան հետ պայմանաւորւել է այս տարի սկսելու «Այգ–Աբամեան» վարժարանի շինութիւնը, որը ծառայելու է այգ տեղերի բնակչութեանը, իբր գիւղատնտեսական–այգեզործական թեքում ունեցող տեխնիկում:

Նոր Սեբաստիայի եւ Նոր Մալաթիայի միջեւ հեռաւորութիւնը մօտ մէկ եւ մէկ ու կէս կիլոմետր է: Գլխ. Վարչութիւնը որոշել է եւ սուագել Բազաքային Խորհուրդի համաձայնութիւնը, կառուցելու նրանց մէջտեղում՝ Նոր Տիգրանակերտը, որին մաս կը կազմեն, երեւի, Նոր Եոզղատը, Նոր Բալուն, եւ այլն:

Ոչ պակաս հետաքրքիր են նաեւ Նոր Եւդոկիայի աշխատանքները: Նոր Եւդոկիան կառուցել է ՀՕԿ–ի Գլխ. Վարչութիւնը, համաձայն այն պայմանագրի, որ կնքել է Հ. Բ. Ը. Միութեան եւ ՀՕԿ–ի Գլխ. Վարչութեան միջեւ, դեռ եւս 1923–24 թուերին: Այդ պայմանագրով՝ Մէօթէմէհանի կամակով զոյացած դումարը դրւեց ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութեան տրամադրութեան տակ: Այս վերջինն ուղարկւեց նաեւ, տարէ տարի, կալածներից զոյացած դումարը, որոնց վրա աւելցնելով նաեւ իր կողմից տասնական հազարներ, Գլխ. Վարչութիւնը վերջնականապէս կառուցեց՝ Վաղարշապատի անմիջապէս կողքին, Իգդիրի խճուղու ձախակողմում, Նոր Եւդոկիան՝ որ բաղկանում է այժմ մօտ երեսուն տնից, ամէն մէկը երկու բնակարանից:

Նոր Եւդոկիացիները եւս կազմակերպած են հաւաքական տնտեսութիւն եւ պարապում են բամբակագործութեամբ: Իւրաքանչիւր բնտանիքի թոյլատւած է ցանել իր պէտքերի համար ցորեն:

Նոր Եւդոկիայի աշխատաւորութիւնը, տանելով օրինակելի աշխատանք, չատ սիրելի է դարձել իր հարեւանների, մանաւանդ Վաղարշապատ-

ցիներին: Արհեստաւորները զործ ունեն վաղարշապատում:

Ամերիկայի Եւդոկիայի Ուսումնասիրաց ընկերութեան համաձայն, ՀՕԿ-ի Գլխ. Վարչութիւնը ներկայացրել է մի ծրագիր, կառուցելու, Նոր Եւդոկիայում, մի երկյարկանի շինութիւն, զիւղական խորհուրդի եւ զիւղի մշակութային-կրթական կարիքների համար: Այդ շինութեան մէջ պիտի տեղաւորուին՝ Գիւղական Խորհուրդը, մանկական մըսուրը, մանկապարտէզը, պիոներների եւ կոմսոմոլի ակումբը, իսկ վերի յարկը՝ զիւղի ակումբը, թատրոնը եւ ժողովատեղին: Կը սպասենք վերջնական պատասխանի: Հ. Բ. Ը. Միութիւնը խոստացել է իր կարելին անել՝ ուժեղացնելու Նոր Եւդոկիան, նրութեան նոր ազրիւրներով:

Նշալ խրախուսելի չէ նաեւ Նոր Խարբերդը, որ կառուցած է դէպի Ղամարլու ձգուղ խճուղու ճանապարհամաս, երեւանից մօտ վեց կիլոմետր հեռու: Շինուած են բաւականաչափ տներ, երկուական բնակարաններով, լաւ տներ են օժտուած բոլոր յարմարութիւններով:

Նոր Խարբերդը մեացրել է իր աշխատանքները՝ Թպաս-Գիւղի խորհրդային տնտեսութեան հետ, որ կոչւում է Նոր Խարբերդի խորհ. Տնտեսութիւն: Նոր Խարբերդցիները աշխատում են այդ մեծ տնտեսութեան մէջ: Անզործներ դոյութիւն չունին: Ունի զպրոց, ակումբ, նաեւ պիոներների եւ կոմսոմոլի կազմակերպութիւն, եւ այլն: Ամերիկայի Խարբերդցիների Հայրենակցական Միութիւնը շատ ուշի կարող է անել, քանի որ իրանք մեծ մեծ են կազմում եւ համեմատաբար էլ ուշի բարեկեցիկ վիճակ ունին:

Ընկերնե՛ր, մի քանի խօսք էլ Նուպարաշէնի մասին: Նա չինում է Երեւանի Հարաւ-արեւմտեան կողմում, կարճ ճամբով 8-9 կիլոմետր հեռաւորութեամբ մի զեղեցիկ բարձրաւանդակի վրա: Հ. Բ. Ը. Միութիւնը մեր կառավարութեան է յանձնում նրա կառուցման անհրաժեշտ զումարները, եւ մեր կառավարութիւնը արդէն ձեռնարկել է շինութեան: ՀՕԿ-ի Գլխ. Վարչութիւնը ի հարկ է չէ պլանում իր ամենալրեմ աշխատակցութիւնը:

Մինչեւ 1932 թ. Հոկտեմբերը, երբ ես մեկնեցի Հայաստանից, Նուպարաշէնում աւարտած կամ կիսաշէն կային քառասունի չափ տներ, երկուական բնակարաններով: Արդէն մօտ 400 հոգի, մեծ մասը Ցունաստանից նորեկներ, տեղաւորուել էին մի կերպ, եւ աշխատանքի լծուել: Վերջանալու վրա էր զպրոցական մեծ ու զեղատեսիլ շէնքը: Ձեռնարկած էր խմելու ջուր բերելու աշխատանքներին, սառցուել էին Գեղմանիայից խողովակները: Ջրային Տնտեսութիւնն էլ թափով առաջ էր տանում Ղոի ջրանցքի կառուցումը, որը անցնում է Նուպարաշէնի մէջտեղից: Առ այժմ ջուրը վազում է Նուպարաշէնից նեբքեւ: Երեւի այս տարի Նուպարաշէնի մասն էլ կը զործէ: Այս տարի՝ կարեւոր աշխատանք կատարելու է այնտեղ: Հ. Բ. Ը. Միութիւնը հարկ եղած զումարը փոխադրել է արդէն կառավարութեան, որ իր կարդին ուժեզացրել է աշխատանքի թափը: Յոյս կա որ այս տարի չինուեն հարիւրի չափ տներ:

Ահա, ընկերնե՛ր, այն խոշոր զերը որ առանձնել է ՀՕԿ-ի Գլխ. Վարչութիւնը: Ղեկավարելու համար Հայրենակցականների չինարարական աշխատանքները, նա պահում է յատուկ ճարտարապետ, որ հսկում է թէ՛ կառուցողական աշխատանքներին եւ թէ կատարող ծախքերի վրա: Գլխաւոր Վարչութիւնը՝ իր հաշւապահների միջոցով՝ միշտ քննում է եւ տեղեկում է Նոր Ասաններէն չինութեան ծախքերը: Այս աշխատանքը զրած է նրա վրա, պետական համապատասխան բարձր մարմիններէն կողմից:

Այսպէս, ՀՕԿ-ի աշխատանքները՝ թէ՛ Խորհ. Հայաստանում եւ թէ արտասահմանում, սերտ կապերով շաղկապած են ա՛յն Հայր. Միութիւնների ու վարչականների եւ Ուսումնասիրացների հետ, որոնք կեցած են Խորհ. Հայաստանի կողքին: Ու այդ կապերը հետզհետէ ուժեղանում են: ՀՕԿ-ը այն խողովակն է, որով Հայրենակցական Միութիւնները պիտի տանին իրենց կառուցողական աշխատանքները:

Գլխ. Վարչութիւնը յոյս ունի, որ դեռ եւս անչարժութեան մատնուած Հայրենակցականները դէմ առ դէմ կը տարժին եւ կը կատարեն իրենց պարտականութիւնը հանդէպ իրենց Հայրենակիցների եւ հանդէպ իրենց աշխատաւորական հայրենիքի:

Հ. ՔԱՐԱՄԵԱՆ

ՀՕԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամէն հասարակական կամ քաղաքական կազմակերպութիւն ծնունդ կ՚առնում որոշ չրջանի պայմանների պահանջներից: Քանի հարթաւոր է տալիս այդ պահանջներին՝ նա կայուն է, կենսունակ եւ ուժեղ: Երբ փոխւում են այդ չրջանի հասարակական-տնտեսական պայմանները, փոխւում են նաեւ այդ կազմակերպութիւնների ծրագիրը, նպատակները կամ գործելակերպը: Հակառակ պարագային նրանք դնալով նւազում են, կորցնում իրենց դոյութեան իրաւունքը եւ վերջապէս բոլորովին անյայտանում պատմութեան ասպարէզից:

Նման երեւոյթներ դոյութիւն են ունեցել բոլոր ազգերի մէջ, պակաս չեն եղել նաեւ մեր Հայ իրականութեան մէջ:

ՀՕԿ-ը, լինելով գաղութներում ամենաօրոշ հասարակական կազմակերպութիւն, բնական է որ այդ ընդհանուր պատմական օրէնքից դուրս չէր կարող մնալ, կազմելով բացառութիւն: Նա ծնունդ առաւ Խորհրդային Հայաստանի իրականութիւնից եւ հենց իր սկզբնական օրերից մինչեւ հիմա հետեւել է միեւնոյն նպատակին: Իսկ այդ նպատակն եղել է՝ ծանօթացնել Հայ գաղութները Խորհ. Հայաստանի իրականութեան հետ, կազմակերպել գանգւածները եւ մղել նրանց օժանդակելու Բ՚նիւրապէս եւ Բ՚ բարոյապէս մեր երկրին եւ վերջապէս պաշտպան կանգնել նրան սպառնացող ամեն տեսակի թշնամիների դէմ:

Սակայն, ՀՕԿ-ի այդ երեք հիմնական կէտերի իրականացման մէջոցները, ձեւերը ժամանակի ընթացքին ենթարկւել են որոշ փոփոխութիւնների, համաձայն յառաջացած նոր պայմանների:

Շնորհիւ երկրի փոթորկալից վերելքի, որի նմանը տակաւին չէ արձանագրած մեր ամբողջ պատմութեան մէջ, տարէ տարի, ամէն ամիս փոխւում էր Խորհ. Հայաստանի դիմագիծը, ապրելակերպը, պահանջները: ՀՕԿ-ը ստիպած էր շարունակաբար հետեւել այդ զարգացման ընթացքին եւ համաձայնեցնել իր գործունէութիւնը դրա հետ:

Երբ Հայաստանը յայտարարւեց խորհրդային, նա ժառանգեց նախկին դաշնակ կառավարութիւնից բոլորովին հիւծած, աւերւած, սովից ու հիւանդութիւններից տառապող մի երկիր, որը գտնւում էր իր ճակատագրային դրութեան մէջ: Այդպիսի մի չրջանում միայն մի հրաշապ հարց էր դրւած բոլոր առաջ՝ փրկել ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, պատուել նրան մահուան ճանկերից:

Ահա այդ ժամանակ էր, որ մեր ցեղի երկու մեծագոյն ներկայացուցիչները մտածեցին առեղծել մի նոր կազմակերպութիւն, որի նպատակը պիտի լինէր օգնել մեր երկրին եւ գաղութահայութեան ծանօթացնել նրա նոր իրաւակարգը: Առեղծւեցաւ ՀՕԿ — Հայաստանի Օգնութեան Կոմիտէն:

Բնական է, որ գաղութներից սպասւում էր այդ չրջանում գլխաւորապէս նիւթական օժանդակութիւն, լինի դա դրամով, կենսամթերքներով կամ գեղօրայքով: ՀՕԿ-ը երեւան եկաւ բաւարարելու այդ անմիջական պահանջներին: Գործը նոր էր եւ դժւար: Գաղութներում, Խորհ. Թշնամիների յերեւրած թշնամական տարրեր, սառն կամ անբարեացակամ տրամադրութիւն էր տիրում դոյութիւն ունեցող հասարակական կազմակերպութիւնների մօտ: Սկսւեց յամառ պայքար այդ բոլոր չարիքները վերացնելու համար: Երեւան եկան ժողովրդական օժանդակութիւնը կազմակերպող նոր գործօններ: Կամաց կամաց սկսւեց հոսել գաղութներից եղբայրական օժանդակութիւնը դէպի Խորհ. Հայաստան:

Սակայն, այդ սուր կարիքի չրջանը երկար չտեւեց: Շնորհիւ փոթորկալից վերելքի, մեր երկիրը կարճ ժամանակամիջոցին, կարողացաւ ոտքի կանգնել, բուժել իր վէրքերը եւ իր հերթին օգնութեան հասնել Հայ գաղթականներին, որոնք տառապում էին զրամաթրական երկիւղներում, Խորհ. համատարած եւ երկարատեւ տնտեսական տադնապի: Մեր երկիրը հասած էր արդէն զարգացման այն կէտին, երբ կարող էր սկսել ներգաղթը:

Համապատասխան զրան փոխւում է նաեւ ՀՕԿ-ի դիմագիծը, նրա գործելակերպը: Այն օրւանից, երբ ծնունդ առաւ ՀՕԿ-ը անցել է աւելի քան տասն եւ չորս տարի, եւ այդ կարճ ժամանակամիջոցում ահի ու սարսափի, սովի ու մահւան հայրենիքը վերածւել է սոցիալիստական չինարարութեան մի երկրի, ուր այդ բոլոր դառն չէշտութիւնները վազուց է վիր յանձնած են պատմութեան անցեալին: Սակայն ՀՕԿ-ը չդադարեց իր գոյութիւնը: Նա երբեւ մի կազմակերպութիւն, ոչ միայն չեռուցաւ, այլ ընդհակառակը՝ երբեք այդչափ ուժեղ եւ կազմակերպւած չէ եղել, ինչպէս ներկայումս: Երբեք նա այնչափ խորը չի թափանցել գաղութահայութեան ներքին չերտերը եւ չի եղել այնչափ զանգւածային մի կազմակերպութիւն, ինչպէս այսօր:

Այո, ՀՕԿ-ը այսօր լայն զանգւածների կողմից սիրած եւ յարգած մի կազմակերպութիւն է: Ապացոյցներ: Ցիշեցէք վերջին երկու տարւա նրա համագումարները Նիւ Եորքում եւ Բոստոնում, որոնց նմանը չէ ունեցել արտասահմանեան որեւէ Հայ կազմակերպութիւն:

Աւելին: ՀՕԿ-ի ծաւալման եւ զանգւածայնացման պիտի վերագրել նաեւ այն փաստը, որ

բոլոր Միջերկրային Հայաստանի ֆշնամիները եւ ապստամբական կուսակցութիւնների մութ տարրերը, առանց բացառութեան, անհաշտ պայքար են յայտարարել ՀՕԿ–ի դէմ, քանալով, ինչ գնով էլ որ լինի, վարկաբեկել, քայքայել այդ կազմակերպութիւնը եւ հետ պահել իրենց չարքաշիները մէկտեղից: Տակաւին մի քանի տարի սրանից առաջ, նրանք նոյն իսկ իրենց ուշադրութեանը չէին «արժանացնում» ՀՕԿ–ի գոյութիւնը եւ անառակում էին նրան: Մինչդեռ այսօր պինակոչի են ենթարկել իրենց լաւագոյն ուժերը եւ պայքարում են մեր դէմ, առանց մէջբոցների մէջ խորութիւն դնելու: Հակառակ այս բոլորին, չարքաշիները իրենց առողջ բնազդով սկսել են հասկանալ ճշմարտութիւնը եւ մօտեցման նշաններ ցոյց տալ: Այդ բոլոր երեւոյթները մի անգամ ընդ միշտ պէտք են հաստատուելու, որ ՀՕԿ–ը այժ է դաշտիների մէջ, այն էլ խոշոր այժ:

Սակայն, մտահոգութիւններ, ապատագումներ, ահա այն դէնքերը, որոնցմով մեր ֆշնամիները աշխատում են վարկաբեկել մեր կազմակերպութիւնը, հետամուտ լինելով, որ մեր վարկաբեկման, կամ ոչնչացման մէջ է գտնւում իրենց փրկութիւնը, եթէ կարելի է ընդհանրապէս խօսել փրկութեան մասին:

ՀՕԿ–ի այդ խոշոր դերը մեր դաշտերային իրականութեան մէջ, սոսկում է ամեն մի անդամին էլ ունել լուրջ, էլ աւելի պիտակից վերաբերմունք ցոյց տալ դէպի իր պատասխանատուութիւնները: Նախ քան որեւէ քայլի դիմելը, մենք պիտի լուրջ քննենք եւ տեսնենք — որչափ է այդ համապատասխանում կազմակերպութեան հիմնական դէմին, նրա պայմանները: Յաճախ մեր մի սխալը, մեր չհամաձայն մի գործը կամ խօսքը աւելի են վնասում կազմակերպութեանը, քան թէ մեր հակառակորդների ամիսների վատաբանութիւնները:

Ամեն մի ՀՕԿ–իստ նախ եւ առաջ պարտաւոր է իր համար պարզ դարձնել ՀՕԿ–ի հիմնական տեսակէտները եւ ապա հասկանալի դարձնել իրեն չբջապատողներին: Ամեն մի ՀՕԿ–իստ մի մարտիկ, մի պրոպագանդիստ է մեր չարքերում, եւ նրա վրա դրւած է ծանր, պատասխանատու, բայց եւ պատուաբեր պարտականութիւն: Նա պիտի կարողանայ պատասխանել դէպք եւ այդ բնաւն տակից:

Սակայն ինչպէ՞ս: Նախ եւ առաջ, ամեն մէկը մեզանից պիտի պարզ գիտակցի, որ ՀՕԿ–ը անկոնսպիրատիվ մի կազմակերպութիւն է, եւ ոչ միայն ինքը պիտի հասկանայ այդ հիմնական կէտը, այլ եւ կարողանայ հասկանալի դարձնել այդ մեր ընկերներին: Նա պիտի կարողանայ պարզ եւ մատչելի լեզուով բացատրել, թէ ի՞նչ է նշանակում կուսակցութիւն եւ ինչո՞ւ ՀՕԿ–ը չի մտնում այդ բնորոշման մէջ: Այդ չատ կարեւոր է այն տեսակէտից, որ մեր հակառակորդները չարունակ փորձեր են անում ձուլելու մեզ որեւէ կուսակցութեան հետ եւ մասնաւորապէս կոմունիստ կուսակցութեան հետ: Որ եւ է քաղաքական կուսակցութիւն մենք հասկանում ենք որոշ դասակարգի չահերը պաշտպանող անհատների խմբակցութիւն, հետաքրքրւած որ եւ է քաղաքական, տնտեսական եւ ընկերային ծրագրի չուրջ: Այդ կուսակցութիւնները երբեմն հրապարակ են գալիս մասնաւոր չեշտելով այդ դասակարգերի որոշ չերաւորութիւնների վրա:

Բոլոր կուսակցութիւնների հիմնական նպատակը մէկ է. — ձեռք ձգել երկրի իշխանութեան դիկը եւ չանալ կենսագործել իրենց գծած ծրագրի կէտերը:

ՀՕԿ–ը նման նպատակ կամ ծրագիր չունի: Նրա բոլոր հոգսերը բոլորւած են Միջերկ. Հայաստանի չուրջ: Մեր կազմակերպութիւնը անդամակցում են բոլոր հայերը առանց որ եւ է խորութեան, բաւական է միայն, եթէ նա յայտարարում է իրեն Միջերկ. Հայաստանի բարեկամ: Մեզ կարող են ասել, որ հենց այդ պայմանի մէջ է գտնւում կուսակցականութիւնը եւ Ա. Հայաստանի պատասխանատու գործիչ որդէն բոլշեւիկի է, հետեւաբար ՀՕԿ–ն էլ կոմունիստ կուսակցութեան երկրորդ հրատարակութիւնը, կամ նրա վարդապետութեան գաղտնի տարածողը: Այդ բոլոր առարկութիւնները ոչինչ են, եթէ ոչ պարզ ամբռնաւարութիւն, այն էլ չափազանց ժան ձեւերից, հնարած մի միայն միմիտների կամ քաղաքականապէս խակ տարերքի համար: Պարզ իրականութիւնը այն է ցոյց տալիս, որ մեր չարքերում կոմունիստները կազմում են շատ չնչին տոկոս: Համարեա թէ նոյն քանակութեամբ ներկայացած են նաեւ ազգայնական կուսակցութիւններից, իսկ մնացորդը մասը անկուսակցականներ են, լինելով մանր ուեւտրականներ, արհեստաւորներ, բանւորներ, մտաւորականներ: Հասկանալի է, որ չատերը մեր կազմակերպութեան անդամներից, ունին իրենց ուրոյն քաղաքական կամ կրօնական համոզումները, որոնք բնաւ արգելք չեն դառնում նրանց լինել մեր չարքերում եւ աչխատել միասին:

Պարզ է, որ մեր մէջ կը լինէին էլ աւելի մեծ չափերով ազգայնական կուսակցութիւնների պատկանող անհատներ, եթէ իրենց զեկավարութեան յետադիմական տարրերը չդիմէին ամբռնաւարութեան եւ չպայքարէին մեր դէմ: Այդ բոլոր սխալների լաւագոյն բժիչկը մեր չամառ պայքարն է եւ Միջերկ. Հայաստանի պայծառ իրականութիւնը: Մենք պիտի էլ աւելի լաբենք մեր պրոպագանդի մէջ եւ բոլոր խաւերին էլ հասկանալի դարձնենք մեր անկեղծ նպատակները եւ պարզ ծրագիրը: Մենք չպիտի թոյլ տանք, որ որեւէ մէկը փորձի ազատել այդ նպատակները եւ պարոր չրի մէջ ձուկ որսալ: Մենք պիտի կարողանանք օգտւել այն բաւոն համակրանքից, որը ունի հանդէպ մեզ դաշնակցականութիւնը:

Հետու չէ այն օրը, երբ բոլոր Միջերկ. Հայաստանի ազնիւ բարեկամները, որոնք հազարաւորներով գալիս են մեր ռեռնակատարութիւններին եւ

հանդէսներին, պիտի համոզուին, որ ՀՕԿ–ը կուսակցութիւն չէ եւ ոչ էլ բարեգործական մի կազմակերպութիւն եւ տեղական քաղաքական կամ կրօնական հարցերի մէջ չի խառնւում: ՀՕԿ–ի անկուսակցական լինելու լաւագոյն ապացոյցն այն է, որ նոյն իսկ մեր հակառակորդները երբեք չեն կարողացել փաստել, որ մենք երբեւէ կազմակերպութիւն մասնակցելիս ենք եղել տեղական ընտրապայքարներին, զանազան բանւորական յարժամներին, բողոքներին եւ այլն: Աւելին: ՀՕԿ–ը երբեք չէ փորձած ահմանափակել իր անդամների անհատական ազատութիւնը, եւ թոյլ է տալիս կազմակերպութիւնից դուրս վարուել այնպէս, ինչպէս իրենց խղճմն ու համոզմունքներն են թելադրում: Մեր ամեն մի անդամը ազատ է մասնակցելու որ եւ է քաղաքական կամ հասարակական յարժամներին, կամ թէ անդամակցել այս կամ այն կուսակցութիւններին: Միակ պայմանը, որ մենք դնում ենք, հետեւեալն է՝ այդ բոլորը չվիժէ հակառակ լինի Ազգ. Հայաստանի շահերին: Ցաճախ մենք նկատում ենք, որ մի ՀՕԿ–եան կրմնքում հաւատացեալ է, կանոնաւորապէս յաճախում է եկեղեցի, իսկ միւսը՝ հակակրօնական ուժեղ պրոպագանդ է տղում եւ անդամ է տեղական կոմիտեին: Այս երկու ծայրայեղութիւնները բնաւ ոտղեյք չեն հանդիսանում նրանց գտնուելու միեւնոյն կազմակերպութեան մէջ, սիրելու ու պաշտպանելու Ազգ. Հայրենիքը: Նրանց միացնողը այդ վերջին երկու կէտերն են: Դրանցով են հրապուրւած երկուսն էլ:

Սակայն, մենք չէզոք չենք կարող մնալ այն պարագային, երբ որեւէ քաղաքական կամ հասարակական կազմակերպութիւն փորձում է յարձակումներ կատարել Ազգ. Հայաստանի վրա, կամ վարկաբեկել նրան: Այդ ժամանակ ՀՕԿ–ը ոչ մի այն կարող է, այլ եւ պարտաւոր է իր բոլոր լարւած ուժերով յարձակումը չետ մղել, սակայն մերկացնել եւ տալ իրողութիւնները իր իսկական ձեւերով: Դա ըստում է ՀՕԿ–ի ընդդէմ, դա՝ նրա հիմնական նպատակներից մէկին է: Նման դէպքեր յաճախ են հանդիպում թէ՛ ամերիկեան եւ թէ՛ մանաւանդ հայկական ֆաշիստական եւ կիսաֆաշիստական պարբերականներում: Այդ դէպքերի մասով, ինչպէս ասացինք, ՀՕԿ–ը իրրեւ կազմակերպութիւն, անտարբեր չի կարող անցնել:

Ամեն մի ՀՕԿ–եան համար պարզ պիտի լինի նաեւ մեր կազմակերպութեան երեք հիմնական կէտերը, որոնցմով մենք տարբերւում ենք միւսներից: Այդ կէտերն են— եղբայրական օգնութիւն Ազգ. Հայաստանին, լինի դա նիւթական կամ բարոյական, ծանօթացնել նրա կեանքը ու վերելքը գաղութահայութեան, եւ վերջապէս մեր բոլոր ուժերի կարողութեամբ պաշտպան կանգնել նրան ոտնձգող վտանգների դէմ: Այդ երեք հիմնական նպատակների մէջ կա խորը ներքին տրամաբանական կապակցութիւն: Եւ իսկապէս, ինչպէ՞ս կարելի է դիտակցօրէն օգնել մի երկրի, առանց ծանօթ լինելու նրա հետ: Կամ հակառակը, ինչպէ՞ս կարելի է չօգնել Ազգ. Հայաստանին, մնալ անտարբեր, երբ մենք ծանօթանում ենք նրա տոբեա պայքարների հետ բոլոր բնագաւառներում, նոր կենցաղ, էլ աւելի փայլուն նոր ապագա ստեղծելու համար: Կամ թէ, ինչպէ՞ս կարելի է ծանօթանալով եւ օգնելով այդ երկրին, հետեւաբար կապւելով եւ սիրելով նրան, բուռն փափաք չզգալ պաշտպանելու այն թշնամու սուր ոտնձգութիւններից:

Ճիշտ է, որ կան մի շարք այլ կազմակերպութիւններ, որոնք նոյնպէս սիրով եւ համակրանքով են կապւած Ազգ. Հայաստանի հետ, ինչպէս եւ մենք, բայց իրենց նպատակները սահմանափակել են չատ նեղ շրջանակով եւ այդ ուղղութեամբ են միայն աշխատում: Այդպիսի կազմակերպութիւններ են, օրինակի համար, զանազան հայրենակցական միութիւնները: Սակայն, ՀՕԿ–ը ամեն կերպ ոյժ տալով նման կազմակերպութիւններին, ինքը չի կարող մնալ նման նեղ շրջանակում: Ճիշտ երեք կէտերը նրա համար կազմում են անբաժանելի մի միութիւն:

Ցաճախ մեր «բարեկամ»ները մեզ ասում են՝ «համեմատելով այն հսկա ոյժի հետ, որի անունն է Ազգ. Միութիւն, իր 170,000,000 բնակչութիւնով, ի՞նչ աջակից կարող է ունենալ մեր երկրի համար ձեր նւաղ կազմակերպութեան պաշտպանութիւնը: Միթէ ծիծաղելի չէ՞ ձեր բոլոր երեխայական թոթովանքները»: «Այս բոլորը, բայց մնասից, ուրիշ որեւէ օգուտ չի կարող բերել», չարունակում են նրանք: Եւ իրրեւ «բարի խրատ», մեզ չատախ թելադրում են՝ սահմանափակել մեր գործունէութիւնը նեղ շրջանով, միայն նիւթական օժանդակութեամբ, նոյն իսկ խուսափել բարոյականից: Այլ խօսքով ՀՕԿ–ը վերածել բարեգործական մի ընկերութեան:

Ամեն մի ծանօթացման կամ պաշտպանութեան քայլ, նրանք փորձում են բացատրել, իբրեւ բոլշեվիկեան պրոպագանդա, հետեւաբար եւ ՀՕԿ–ը կոմունիստական մի կազմակերպութիւն: Պարզ է, որ նման «բարի խորհուրդներ» ուղղները, իրենք էլ չատ լաւ են հասկանում, որ մի բան սիրելուց, բոլշեւիկ պրոպագանդ, հետեւաբար եւ ՀՕԿ–ը կոմունիստական մի կազմակերպութիւն: Պարզ է, որ նման «բարի խորհուրդներ» ուղղները, իրենք էլ չատ լաւ են հասկանում, որ մի բան սիրելուց, բոլշեւիկ պրոպագանդ է նրան պաշտպանելու ցանկութիւնը: Սիրել եւ չպաշտպանել, դա նոյն իսկ կենդանական աշխարհին խորթ եւ անբնական երեւոյթ է: Բայց երբ մեր հակառակորդները քարոզում են նման անբնական մի վարդապետութիւն, չի կարծէք, որ այդ անում են անգիտակցաբար, կամ թէ տգիտութիւնից դրդւած: Բնաւ ոչ: Նրանք չատ լաւ են հասկանում ինդրի բուն էութիւնը եւ ըստ այնմ էլ գործում: Իսկ էութիւնը հետեւեալն է՝ մեր պատմութեան ամբողջ շրջանում, Հայաստանը ունեցել է չատ տարբեր վարչաձեւի սիստեմներ, եղել է նաեւ «անկախ եւ ազատ հանրապետութիւն», բայց միշտ մնացել է՝ «մեր հայրենիքը թշւառ, անտէր»: Այսօր նա ունէ բոլորովին տարբեր վարչաձեւ եւ այլ եւս ո՛չ թշւառ է եւ ոչ էլ անտէր: Նա մի ան-

դամ ընդ միշտ, կտրելով իր կապերը անցեալի դասերի յիշողութիւններից, բաւել է վերելքի, երջանկութեան եւ պայծառ ապագայի ուղին: Այդ երեւոյթը սկսել են հասկանալ ազգայնական կուսակցութիւնների չարքայիններ եւ ապրում են ներկայումս նախկին դաղափարների վերաքննութեան չրջանը: Այդ չրջանը չատ վտանգաւոր է յիշեալ կուսակցութիւնների յետագիմական ղեկավարների համար: Նրանք իրենց դոյութիւնը պահպանելու համար, ստիպւած են հետու պահել միամիտ չարքայիններին Սորհ. Հայաստանի պայծառ իրականութիւնից, ուրեմն եւ թոյլ չտալ մտնել ՀՕԿ-ի չարքերը:

Մեր կոմմակերպութիւնը անվերապահօրէն կանդնած լինելով Սորհ. Հայաստանի կողքին, հարց անդամ չի կարող յարուցել՝ պաշտպանե՞լ թէ օգնել նրան: Այդ երկուսը, ինչպէս ասացինք, յաճախ անբաժան են միմեանցից: Եւ իսկապէս, օգտագործելի հանգամանութիւն է կոմմակերպում ՀՕԿ-ը դաղութներում: Ի՞նչ է դա. օգնութի՞ւն թէ պաշտպանութեան քայլ է: Կարելի՞ է բաժանել մէկը մեւսից: Օգնութիւն է, որովհետեւ մենք օժանդակում ենք երկրի փոխադրութեան միջոցներին, պաշտպանութիւն է, որովհետեւ դիւրացնել փոխադրութիւնը, ատաարել է երկրի պաշտպանութեան:

Մեր ուժերը թոյլ են: Այո, թոյլ են, բայց այդ թուլութիւնը արդեօ՞ք պատճառ է, որ մենք հանգնջնենք մեր պարտաւորութիւններից: Արդեօք այդ թուլութիւնը չի՞ հարկադրում մեզ կրասրահան դիրք բռնելու փոխարէն, էլ աւելի ջանք թափելու մեր ցիր ու ցան եղած ուժերը ի մի բերելու եւ ստեղծելու այնպիսի մի կոմմակերպութիւն, որի մէջ լինեն առանց բացառութեան ամբողջ դաղութահայութիւնը: Չէ՞ որ մեր դաղութների 90 տոկոսը արդէն սերում է եւ կապւած Սորհ. Հայաստանի հետ: Չէ՞ որ տասնեակ հազարներով նրանք դալիս են մեր ազնականաւարութիւններին ու հանդիսաներին: Այդ խոշոր ոյժ է, պէտք է սոլորել այդ ոյժը կոմմակերպել եւ համագրել:

Մեր նպատակը չէ միայն անհատներ ներդրաւել ՀՕԿ-ի մէջ, այլ եւ ստեղծել սերտ համագործակցութիւն միւս բոլոր կոմմակերպութիւնների եւ կուսակցութիւնների հետ: Այդ մարմինները, լինելով բաղեկամաբար տրամադրւած հանդէպ Սորհրդային Հայաստանի, ունին իրենց ծրագրերի մէջ մի չարք կէտեր, որոնք ունինք եւ մենք: Պատճառ չկայ, որ այդ կէտերի չուրջ մենք չկարողանանք համաձայնութեան գալ, եւ ստեղծելով ժողովրդական համագործակցութիւն, յաւալ տաննենք մեզ բոլորիս սրտին մօտ գործը: Տարբեր կոմմակերպութիւնների մէջ դոյութիւն ունեցող դանազան սկզբունքային կամ գործնականական տարբերութիւնները չպիտի խանգարեն մեր մօտեցումը:

Ասենք օրինակներով: Թէ՛ Հ. Բ. Ը. Միութիւնը, թէ՛ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, թէ՛ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ թէ մի չարք այլ կազմակերպութիւններ ցանկութիւն են յայտնում օգնելու Սորհ. Հայաստանին, հանդանակութիւններ կատարելու, լինի դա ներդաղթի կամ այլ նպատակների համար: Ի՞նչ պատճառ կա, որ մենք բոլորս էլ միացեալ ուժերով չկատարենք այդ հանդանակութիւնը: Չէ՞ որ դրա արդիւնքն էլ տանտպատիկ պիտի լինի որից օգուտը միայն մեր Սորհրդային Հայրենիքն է:

Ինչպէս ասացինք, նման ընդհանուր նպատակներ չատ կան եւ ՀՕԿ-ը պիտի ջանա ամեն գնով դանել գործունէութեան ընդհանուր հող եւ իրականութիւն դարձնել համագործակցութեան խնդիրը մի չարք հարցերի չուրջ:

Ռամկավարները կամ այլ կազմակերպութիւնների ղեկավարները կարող են մեզ ասել՝ «ինչպէ՞ս մենք կարող ենք համաձայնեցնել մեր եւ ՀՕԿ-ի գործունէութիւնը, երբ վերջինս չի ուզում հրաժարւել Սորհ. Հայաստանի պաշտպանութեան խնդրից, որին մենք հակառակ ենք»: «Կամ թէ փաչիզմի դէմ պայքարելը մենք համարում ենք քաղաքական խնդիր, որով ՀՕԿ-ը պէտք չէ որ դրաղւի»: Մենք բնաւ նպատակ չունենք վիճաբանութեան բռնւելու նման տեսակէտներ պաշտպանողների հետ: Մենք կարող ենք միայն առաջարկել նրանց հետեւեալը՝ այն կէտերը, որոնց չուրջ համաձայնութեան չենք կարող գալ, մենք մի կողմ կը դնենք եւ ամեն մի կոմմակերպութիւն իր հասկացած ձեւով կը գործէ: Իսկ համաձայնութեան պայմանի մէջ կը մտցնենք այն կէտերը, որոնց չուրջ կարող ենք որոշ հասկացողութեան գալ: Ներդաղթի կամ այլ նպատակների համար կազմակերպելիք հանդանակութիւնները, ասնակատարութիւնները կամ դաղրցական խնդիրները հարցեր են, որոնց չուրջ ամեն մի անկեղծ Սորհ. Հայաստանի բարեկամ կարող է եւ պէտք է որոշ համաձայնութեան գա: Ժողովրդական համագործակցութիւն՝ որչափ կարելի է լայն չրջանակի մէջ գրած՝ ահա ՀՕԿ-ի գլխաւոր գործերից մէկը: ՀՕԿ-իտները թող լինին առաջինը, որ պարզեն իրենց եպրարտական ձեռը միւս բոլոր կոմմակերպութիւններին: Մենք վստահ ենք, որ այդ ձեռքը օղում կախւած չի մնա: Ցոյց տանք, որ մենք մեր խորհրդային երկրի արժանի դաւակներ ենք, այն երկրի, ուր բոլորը միացած, մի կամք ստեղծած՝ վերակառուցում են բոլորիս հայրենիքը: Եթէ այնտեղ յաղողւեց վերացնել երկպառակութիւնը, պատճառ չկա, որ այստեղ էլ չյաղողւի: Ժողովրդական համագործակցութիւնով պայքարել Ս. Հայաստանի բոլոր անուղղելի թշնամիների դէմ եւ միացեալ ճակատով ատաարել երկրի վերելքին:

ՀՕԿ-ն իր գլխաւոր նպատակներին չպիտի հասնէր, եթէ լուրջ ուշադրութիւն չդարձնէր երիտասարդութեան եւ մասաղ սերնդին վրա: Հակախորհրդային տարրերը ուզում են դրաւել երիտասարդութիւնը, դործածելու համար Սորհրդային Հայրենիքի եւ Հայ ժողովրդի չահերի դէմ: Այդ

չարիքի դէմն առնելու համար է, որ ՀՕԿ–ը եւ Գ. Հ. Գ. Միւթը ձեռք ձեռքի տուած, քացում են իրենց մանկական պղտոցները, ուր սուում է խորհրդային հայաստանեան դաստիարակութիւն, մեր մտաւոր սերունդին պատուաստում ենք իրենց նոյածին հայրենիքի սէրը:

Նոյնը վերաբերում է նաեւ պատանիներին: Կամենալով երիտ–ՀՕԿ–ով, մենք աշխատում ենք պատրաստել նրանցից ապագայ արժանի քաղաքացիներ եւ մեր չարժչիչ ժառանգորդներ: Ինչպէս ամէն ճակատներում, այստեղ էլ մենք պիտի աշխատենք համաձայնութեան եկը գտնել, փոխադարձ հասկացողութեան գալու միւս կողմակիցների հետ: Այդ պարագային էլ ՀՕԿ–իսը առաջինը պիտի մեկնէ իր բարեկամական ձեռքը:

ՀՕԿ–Ի ՎՈՒՐԹԱՒՒՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ՀՕԿ–Ի ԹՈՒԼԻՏՈՑԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՀՕԿ–Ի ՖՐԵԶՆՈՑԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Նախանցեալ տարւայ Հոկտ. 12-ին, ՀՕԿ-ի Ութերորդ Համագումարի որոշումով, խորհրդային Հայաստան մեկնեցաւ Ամերիկահայ Առաջին Պատւիրակութիւնը, ամրացնելու համար Ամերիկահայ գաղութի եղբայրական կապը խորհրդային հոյակապ մեր հայրենիքի հետ:

Պատւիրակութիւնը մասնակցեցաւ խորհուրդներու Ութերորդ Համագումարին եւ Ամերիկահայ աշխատաւորութեան անունով ողջունեց Համագումարը: Պատւիրակութեան ողջոյնը ռեյտիոյի վրա ունկնդրեց ամբողջ երկիրը եւ Անդրկովկասեան եղբայրական հանրապետութիւններու հայ աշխատաւորութիւնը, անգամ Մերձաւոր Արեւելքի հայ գաղութները: Պատւիրակութեան ողջոյնը Համագումարի մէջ ստեղծեց անօրինակ ոգեւորութիւն: Գաղութահայ աշխատաւորութեան անունը խանդավառութեան փոթորիկներ առեղծեց:

Պատւիրակութեան կողմէ ողջոյնի խօսքն արտասանեց Ընկեր ՊԱՏՐԻԿ ՍԵԼԵԱՆ:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԻՒՆ
Ձախէն աջ՝ Պատրիկ Սելեան եւ Օգսէն Սարեան

Ընկերներ, մեր պատւիրակութիւնը երջանիկ է Ամերիկահայ աշխատաւորութեան եւ անոր առաջատար ջոկատ ՀՕԿ-ի կողմէն ողջունելով Հայաստանի Խորհուրդներու Ութերորդ Համագումարը:

Հայաստանի խորհրդայնացումէն ի վեր անցեր է 14 տարի: Այդ 14 տարւան ընթացքում Ամերիկային չատ տարբեր են եղեր ու վերապրեր իրենց հետ բերելով տարբեր տեսակի տպաւորութիւններ:

Ամերիկահայ աշխատաւորութեան հետաքրքրութիւնը դէպի Խորհրդային Հայրենիքը աճեր է այնպիսի չափերով, որ ան այլեւս չի բաւականանար տարբեր տպաւորութիւններով: Ամերիկահայ աշխատաւորութիւնը առաջին անգամ լինելով կապ մակերեսից այս պատւիրակութիւնը, որպէսզի լրիւ չափով ծանօթանայ խորհրդային կեանքի իրականութեան եւ անոր սոցիալիստական բովանդակութեան:

Եւ եթէ 14 տարւա ընթացքում մեզ չի յաջողուած պատւիրակութիւններ ուղարկել Խորհրդային Հայաստան, այդ պէտք չէ վերագրել մեր անտարբերութեանը: Այդ հետեւանքն է եղեր մեր պայքարի ընդդէմ Դաշնակցութեան եւ Խորհրդային Հայրենիքի մասին կարգի թշնամիներուն: Մենք չատ դժուարութիւններ ենք յաղթահարեր 14 տարւա ընթացքին, մեր կազմակերպութիւնը աճեր է եւ մեզ հետաքրքրութիւն առաջին պատւիրակութիւնը կազմակերպելու: Եւ եթէ այս անգամ մենք եկեր ենք 2 հոգով, մենք ձեզ խօսք կուտանք, որ յաջորդ տարիներ մենք կը կազմակերպենք պատւիրակութիւններ 5-ով, 10-ով, 20-ով:

Ընկերներ, ՀՕԿ-երը ծնունդ են աւեր խորհրդային իրականութենէն: Անոնք աճեր ու ամրացեր են մէկ կողմէն խորհրդային Հայրենիքի յարաճուն վերելքի, միւս կողմէն կապիտալիստական տնտեսութեան անհման պայմաններու տակ: Մենք կազմակերպեցինք ՀՕԿ-ը այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանը վճռական պայքար կը մղէր հաւելեալ ենթարկելու ցարիզմի եւ Դաշնակցութեան ժառանգութիւն — թշուառութիւնն ու յետամնացութիւնը: Այդ օրերուն գաղութահայ հասարակական կազմակերպութիւնները առանց անտարբերութիւն ցոյց կուտային դէպի Խորհրդային Հայաստանը, չնորհիւ այն իրողութեան, որ այդ կազմակերպութիւնները կը գտնուէին հայ բուրժուազիայի ազդեցութեան տակ: Կարենալ գաղութահայ աշխատաւորութեան համակրութիւնը գրաւելու դործի վերածելու համար՝ մենք կազմակերպեցինք ՀՕԿ-ը: Վերջին տասնամեակին, Ամերիկայի մէջ, ՀՕԿ-ն է,

որ Պետական Հայ Կարմիր Խաչի գործակցութեամբ եւ իրեն զօրավիղ ունենալով հայբնակցական միութիւնները աճող չարք մը, կը ղեկավարէ հայ աշխատաւորութեան նախաձեռնութիւնն ու խանդավառութիւնը դէպի Սորվրդային Հայաստան:

Դժուար է այս կարճ ժամանակի մէջ տալ ՀՕԿ-ի նպաստներու լրիւ պատկերը եւ խօսիլ սոցիալխոտական այն օժանդակութեան մասին, որը Ամերիկահայ աշխատաւորութիւնը ուղի է Սորվրդային Հայաստանին ՀՕԿ-ի միջոցով:

Պէտք է ըսել, սակայն, որ վերջին երկու տարուա ընթացքին Սորվրդային Հայաստանի պաշտպանութեան յղումները ՀՕԿ-ները վերածուեցին զօրքի:

1933 Թուի Յուլիս 2-ին, Շիքագոյի համաշխարհային ցուցահանդէսի կապակցութեամբ, հայ առևտրականները— դաշնակցութեան եռանդուն մասնակցութեամբ կազմակերպեցին հայկական օր: Հայկական օրը ինքնին հակախորհրդային ցոյց մըն էր իր յայտարարով: Դաշնակցութիւնը փորձեց հակախորհրդային այդ ցոյցը մինչեւ վերջ օգտագործել եւ պարզեց իր արիւնոտ մահի դրօշ եռագոյնը: Այդ արարքը անօրինակ զայրոյթ առաջ բերաւ ցուցահանդէսի սրահներու մէջ հաւաքուած աշխատաւորութեան մէջ: 3,000 թագուհիներէն 2,850 հոգի քէյարկեցին ընդդէմ եռագոյնի եւ յանուն Սորվրդային Իշխանութեան:

Սորվրդային Հայաստանի դէմ սարքուած ցոյցը աշխատաւորութիւնը վերածեց խորհուրդներու պաշտպանութեան ցոյցի:

Այնուհետեւ Շիքագոյի դէպքը հրդեհի պէս բռնկեցուց բովանդակ Ամերիկահայ գաղութը: Բոլոր գաղութներու մէջ կազմակերպուեցան Սորվրդային Հայաստանի բարեկամութեան մեծաժասով եւ մասնական ցոյցեր: Գաղափար Դաշնակցութիւնը դիմեց աւելի ակտիվ տեսորի եւ մատնութեան, դիմեց ոճրագործութեան:

Հայ աշխատաւորութիւնը, սակայն, չվախցաւ Դաշնակցութեան տեսորէն: Ան ոչ միայն ժողովներ սարքեց իր զայրոյթը յայտնելու, այլեւ հարեւաններով եւ հազարներով փողոցներն ու հրապարակները լեցուելու փաչիզմի եւ պատերազմի դէմ ու Սորվրդային Հայրենիքը պաշտպանելու համար:

Եւ եթէ մենք կը կռնինք Դաշնակցութեան դէմ ոչ անոր համար է, որ Դաշնակցութիւնը նկատելի ուժ է: Դաշնակցութիւնը որպէս կազմակերպութիւն ոգորմելի ձեռնմխութիւն մըն է: Այդ ոգորմելի ճղճմխութիւնը, սակայն, կ'ապաստանի իմպերիալիստական պետութիւններուն, փաչիզմի ու ասիմիլեացիոնի, եւ կը դաւէ աշխատաւորութեան դէմ, կը մատնէ ու կ'սպաննէ Սորվրդային Հայաստանի բարեկամներու առաջաւոր տարրերը: Այնուամենայնիւ մեր չարքերը կ'աւելնան եւ մեր մասսակցութիւնը կ'աճի: ՀՕԿ-ն այսօր Ամերիկահայութեան մասսայական ամենախոշոր կազմակերպութիւնն է: ՀՕԿ-ին յաջողեցաւ հաւաքել իր անդամավճարներու 95%-ը, որպիսի նախընթաց չունի ոչ մի կազմակերպութիւն գաղութներու մէջ:

Մեր բոլոր հաճախողները, ընկերներ, կը պարտինք մեր տարած յաղթանակներուն սոցիալիզմի կառուցման ճակատի վրա:

Կարլ-Մարքսը, իր ժամանակին ըսեր է.— Հասարակական պատմութեան մէջ հարիւր տարին կարճ ժամանակ է, բայց կուգան այնպիսի օրեր, երբ տասնեակ տարիներ հարիւրաւոր տարւա նշանակութիւն կ'ունենան:

Երկու ամիս մնացինք Սորվրդներու աքանչելի հայրենիքի մէջ եւ մենք անձամբ տեսանք, որ Հայաստանի համար վերջին 14 տարին մէկ ամրոյզ դարու նշանակութիւնն է ունեցեր: 14 տարւա ընթացքին դուք կարեր էք այնքան ճանապարհ, որքան ամենաառաջաւոր կապիտալիստական երկիր մը կրնար 100 տարւա ընթացքին:

Ընկերներ, երբ մենք Հայաստան եկանք, մեր բոլոր բարեկամները մեզի կ'ըսէին, թէ մենք աւելի կանուխ պէտք է եկած ըլլայինք — կարենալ վայելելու համար Հայաստանի արեւոտ աշունը, եւ քաղցրահամ միրգը:

Ոչ ընկերներ, մեր պատրաստութիւնը, անպատակարար, ամենալաւ ժամանակը ընտրած է Հայաստան դալու: Մեր այցելութիւնները զուգադիպեցան Սորվրդներու վերընտրական կամպանիային: Մասնակցելով այդ կամպանիային, ներկա ըլլալով Աբարանի եւ Կոտայքի շրջանային համագումարներուն եւ Լենինականի Քաղխորհրդի պլենումին, մենք տեսանք թէ որքան ճշմարիտ էր Լենինը, երբ ան կ'ըսէր, թէ խորհուրդները, պրոլետարական դիկտատուրայի այդ օրգանները, աւելի դեմոկրատական են, քան նոյնիսկ ամենադեմոկրատական կապիտալիստական պետութիւնները:

Եւ կապիտալիստական դեմոկրատիան բուրժուական դիկտատուրայի օրգանն է: Ան, բանի մը տարիի անգամ մը, պատեհութիւն կուտայ բանուորներուն իրենց էէզով որոշելու, թէ բուրժուազիայի որ մէկ ներկայացուցիչները պիտի կառավարեն երկիրը յաջուն շահագործումի:

Եւ երբ բանուորները կը դիտակցին իրենց չահերուն ու կ'սկսին աճող չարքերով քէարկել իրենց դասակարգի ներկայացուցիչներուն համար, կապիտալիստական դեմոկրատիան կը վերածուի փաչիզմի: Բայց այդ չի վերկեր բուրժուազիան վերջնական խորտակումէն: Այդ միայն նշան է, որ բուրժուազիան չի կարողանար երկիրը կառավարել մինչ այդ սովորական զործած ձեւերով: Այդ նշան է, որ սերտ դասակարգը կանգնած է դժուարին օրերու առաջ, իր սերտակուռութեան կործանման առաջ:

Ուրիշ ամենացայտուն երեւոյթը Սորվրդային Միութեան մէջ — աղգային հարցի լուծումն է: Սորվրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւնը ինքնին մեծագոյն կոթողն է Լենինիան-Ստալինեան աղգային քաղաքականութեան: Այդ մեծ միութեան հաւասարազօր մասնի-

կը, Հայաստանը եւս, աչքառու նուաճումներ է ըրած Լենինեան–Ստալինեան քաղաքականութիւնը անշեղ կիրառելով:

Ձեր փորձով, ընկերներ, դարլութեամբ աշխատաւորութիւնը կը սորվի, որ ազգային առանձնաթիւնները ոչինչ ունին հատարակաց բանւորներու եւ գիւղացիներու չահի հետ: Ազգային առանձնաթիւնները արդիւնք են բուրժուազիայի չահագործման եւ չուկաներ գրաւելու ախորժակին: Դաղութեամբ աշխատաւորութիւնը ոգեւորած է այն իրողութեամբ, որ այս մեծ համագումարին հայ, թուրք, քուրդ, ռուս, վրացի եւ զանազան ազգութիւններու պատգամաւորներ հաւաքած են խօսելու բոլորին համար հատարակաց մէկ մեծ հարցի շուրջ — սոցիալիզմի կառուցման, չահագործման հետքերը մարդկային գիտակցութենէն եւ տնտեսութեան բոլոր մարզերէն ոչնչացնելու հարցի շուրջ:

Եւ յիրաւի մեծ նուաճումներ են կատարած ամբողջացած հատարակարգ ստեղծելու համար մղուղ մարտերու մէջ:

Պէտք է ըմբռնէք, ընկերներ, որ ամէն անգամ, երբ կուլակի մը տնտեսութիւնը կը քայքայուի եւ ոչնչու մինաոնուս մը կը ներգրաւուի հաւաքական տնտեսութեան մէջ, խորհուրդներու երկրի ջնջումները, որոնց կարգին դաշնակները, ահազանգ կը հնչեցնեն այն մասին, որ բոլշեվիկներու տնտեսական քաղաքականութիւնը չի բղխիր հայ ժողովուրդի ցանկութիւններէն:

Ամէն անգամ, որ խորհրդային արդիւնարերութիւնը նոր յաղթանակներ կը տանի, խորհուրդներու ջնջումները պրովոկացիայի կը դիմեն: Երբ դուք կը պայքարիք երկրին աւելի պզինձ տալու համար, երբ մէկը միւսին հաւէն կը բարձրանայ Սեւան–Զանգու կասկադի էլեկտրական հսկաները, գլուխը կորցրած դաշնակները ահազանգ կը հնչեցնեն այն մասին, թէ բոլշեվիկները կը պարպեն երկրի ընդերքները, կ'ասեն Սեւանի գիտցկութիւնը:

Խորհրդային չինարարութիւնը վարկաբեկելու այդ փորձերը չեն յաջողիր, թէկուզ ամենափոքր չափով, նեմացնելու սոցիալիզմի կառուցման իմաստը յաչս դաղութեամբ աշխատաւորութեան:

Ընկերներ, մենք չատ յաղթանակներ ենք տարած Դաշնակցութեան դէմ, սակայն կուիը դեռ չէ վերջացած: Աւելի վճռական պայքարներ կ'սպասեն մեզի: Այդ պայքարի մէջ դուք պիտի օգնութեան հասնիք դաղութեամբ աշխատաւորութեան. դուք կարող էք այդ պայքարի մէջ օգնութեան հասնիլ դաղութեամբ աշխատաւորութեան, ամրացնելով եւ ծաւալելով կոլտնտեները, կատարելով պլանները, պատուով ի գլուխ հանելով երկրի ելեկտրոֆիկացիան:

Կոլտնտներու ամրացման եւ պլաններու համար մղուղ պայքարը, պայքար է համաշխարհային յեղափոխութեան համար, եւ ընդդէմ կապիտալիզմի:

Ընկերներ, կուելով Դաշնակցութեան դէմ մենք ամէնամակաւոր չենք ազգային շրջափակի մէջ: Մենք միաժամանակ կը կուինք ֆաշիզմի եւ պատերազմի դէմ:

Դաստակարգային վճռական թշնամին ապաննեց սոցիալիզմի կառուցման աննկուն մարտիկներէն եւ գեկավարներէն մէկը, ընկ. Կիրովը: Այդ զարերալի ամրով թշնամին նպատակ ունէր խուճապ ստեղծելու սոցիալիզմի կառուցման գեկավար չաթըի մէջ: Այդ չյաջողեցաւ թշնամիին: Երկիրը միակամ կանգնեցաւ Խորհրդային Իշխանութեան կողքին եւ յայտնաբերեց սոցիալիզմի նուաճումները պաշտպանելու վճռակամութիւն ու յաւաջադրեց սրել դասակարգային զգօնութիւնը: Խորհրդային Միութեան բանւոր–գիւղացիութիւնը թշնամիին ուաւ անոր արժանի պատասխանը, բայց միայն Խորհրդային Միութեան բանւոր–գիւղացիութիւնը չէր որ պատասխանեց սոցիալիզմի կառուցման թշնամիներուն, այլ համաչխարհային բանւորութիւնը: Բոլոր երկիրներու մէջ բանւորները գրաւեցին հրապարակները եւ յայտարարեցին խորհուրդներու երկրի թշնամիները — չի համարձակիլ ձեռք վերցնելու մինեռուն — չի համարձակիլ ձեռք վերցնելու ՄՍՀՄ–ի վրա, որովհետեւ ՄՍՀՄ–ն համաչխարհային բանւորութեան հայրենիքն է եւ ան պատրաստ է պաշտպանելու իր հայրենիքը ամէն վտանգի դէմ:

Հարեւածային բանւորներ, կոլտնտականներ, գիտութեան եւ արուեստի աչխատաւորներ եւ ուսանողներ, կարմիր բանակայիններ մենք ձեզ կը վստահանք, կարմիր բանակայիններ մենք ձեզ կը վստահանք, որ դաղութեամբ աշխատաւորութիւնը կը ջրնենք, որ դաղութեամբ աշխատաւորութեան դէմ եւ կը կուի պատերազմի պատրաստութեան դէմ եւ կը կուի պատերազմի պատրաստութեան դէմ եւ կը կուի պատերազմի պատրաստ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՐԱՍԱՆ ԱԲԷԼԵԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒՆ

Ժողովրդական Դերասան Յ.Ով. ԱԲԻԼԵԱՆ

Երբ ՀՕԿ–ի Առաջին Պատւիրակութիւնը, անցեալ տարի կը գտնուէր Խ. Հայաստան, ժողովրդական դերասան Յ. Աբէլեան հանդէս եկած է նկար Բիւրեղչեվի դերով: Այս առթիւ Պատւիրակութիւնը նամակով մը ողջունած է ժողովրդական դերասանը: Դերասան Աբէլեան, որու բեմական գործունէութիւնը նաեւ ծանօթ է Ամերիկահայ լայն զանգուածներուն, Պատւիրակութեան երեւանէն մեկնելու օրը, աճուր յանձնած է գաղութահայութեան եւ մասնաւորաբար դերասաններուն ուղղուած հետեւեալ նամակը:

Նամակը կարդացած է Պատւիրակութեան խորհրդային գրողներու եւ արուեստագէտներու հանդիպումի ատեն եւ ստեղծած է անմոռանալի զգեստութիւն:

Երեւան, Յունվ. 14, 1935 թ.

Ամերիկայի ՀՕԿ–ի Յարգելի Պատւիրակութեան Սիրելի Ընկերնե՛ր,

Սառցա ձեր Յունվար 13–ի գրութիւնը եւ ըստացած եմ պատասխանել:

Ես էլ ձեզ պէս՝ չեմսած՝ հաւատացի աշխատաւորութեան այժին. ևկա Ամերիկայից եւ լծւեցի աւերակ հայրենիքի վերականգնման հսկայական գործին: Եւ այժմ հպարտութեամբ եմ նայում այն բոլորին, ինչ որ կատարւել է եւ կատարւում է: Թող Ամերիկայի մեր եղբայրները հաւատան, որ մեկ կառավարութիւնը, որ կարող էր երջանկացնել մեր հայրենիքը, մեր ժողովուրդը, դա է — խորհրդայինը: Մենք ունենք բացեր, բայց օրէ օր վերանում են դրանք: Թող իմանան մեր հայրենակիցները, որ Երեւանի Դրամատունը ունի մի միլիոնից աւելի դրքեր: Թող իմանան իմ ընկեր դերասանները, որ մենք ունենք 16 թատերական խումբեր եւ որքան նոքա պիտանի կարող էին լինել այդ խմբերում: Դուք տեսաք թէ ինչպիսի՞ հանդով ես, 70 տարեկան ծերունիս, ո՛չ, երիտասարդս աշխատում եմ, գործում եմ, նոր նոր դերեր եմ պատրաստում: Միթէ իմ Ամերիկեան ընկերները ինձ չե՞ն նախանձում: Ասացէք նրանց, որ ամօթ է ողորմելի դոյութիւն քարշ տալ օտար երկիրներում, թող դան եւ լծւեն հայրենիքի աշխատանքին: Ես կը միջամտեմ նրանց վերադարձը յաջողցնելուն:

Մաղթում եմ ձեզ բարի հանապարհ. իմ ջերմագին բարեւներս եւ տաքուկ համբոյրներս ամերիկահայ աշխատաւորութեան:

Խորհրդային Հայաստանի Ժողովրդական Դերասան եւ Աշխատաւորի Հերոս՝ *Յ.Ով.Հ. ԱԲԻԼԵԱՆ*

Ամբողջ երկիրը կը Դուրգուրա Մեծ Բանաստեղծի Յիշատակին վրա



Յովհաննէս Թումանեանի Անկիւնը Խ. Հայաստանի Թանգարանին Մէջ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱՒԱԳ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՑԱՌԱԲԱՐ ԲԱԽՏԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Արեւմտահայ գրական աւագ սերունդի տաղանդաւոր ներկայացուցիչ Զապէլ Եսայեանը հետեւեալ նամակը գրած է Ամերիկահայ Առաջին Պատւիրակութեան անդամ ընկեր Պատրիկ Սեդեանին:

Զապէլ Եսայեանի այս նամակը հոյակապ փաստաթուղթ մըն է խորհրդային պայծառ իրականութեան մասին: Իր ամբողջ բովանդակութեամբ այդ նամակը կը պատկանի Ամերիկահայ աշխատաւորութեան: Այդ պատճառով ալ զայն կը հրատարակենք շատ չնչին կրճատումով մը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեւան, Ա. Հայաստան
Յուլիս 22, 1935

Մեր կեանքը կը չարունակէ այնպէս, ինչպէս որ գիտէք, աշխատանքով, ոգեւորութեամբ եւ ուրախութեամբ: Վերջին ժամանակները չկըրցայ «Բանւոր»ին յօդուած ղրկել, որովհետեւ անելիքներուն կերպով զբաղած էի, չունէ ատենլու ժամանակ չունէի: Երեւակայեցէք որ հակառակ ինձ ընծայուած բոլոր դիւրութիւններուն, վճռեցի ամառնոց չերթալ որովհետեւ կը վախնամ իմ ըզբաղումներս ընդհատել: Բայց մեծ յոյս ունիմ որ յետագային ատելի թեթեւցած կ'ըլլամ եւ այլ եւս կանոնաւոր կերպով կ'աշխատակցիմ «Բանւոր»ին: Հայաստանի խորհրդայնացման տասն եւ հնգամեակի համար, պրոյեկտս պիտի երթանք ըզբրիգատները եւ մեր տպաւորութիւնները պիտի գրենք: Ինձ բաժին ինկաւ ներգաղթողներու մէջ (հին թէ նոր) աշխատիլ եւ մեծ յոյս ունիմ որ կարող պիտի ըլլամ հետաքրքրական նիւթեր հաւաքել: Այդ աշխատութիւններէն բաժին կը հանեմ նաեւ «Բանւոր»ին: Մտադիր եմ (եւ սկսեր եմ) նաեւ վիպակ մը գրել որուն խորքը կ'ըլլայ Բանաքնդիսը: Նայնպէս, հետաքրքրական է որ Սոֆիկը վաճառքին հետ երթայ Զանգեզուր Պատանի Հանդիսատես Թատրոնի դուռնէին հետ: Յանձնարարեր եմ իրեն իր տպաւորութիւնները նօթագրել եւ գրել Ֆրանսերէն հրատարակութեան համար: Հայերէն թարգմանութիւնը կը ղրկենք «Բանւոր»ին:

Ռոմանոսի մահը մեզ, ամենուս վրա ծանր տպաւորութիւն ըրաւ, ինչպէս նաեւ Տիգրան Մուշեղեանի մահը: Ռոմանոսի մահուան առիթով ըզգացի, թէ ինչ կը նշանակէ հարատեւ երկրի մէջ աշխատիլ եւ մեռնիլ: Այն ինչ որ ունայ եւ զգացի, գիս հաշտեցուց մահուան դաժան զգացումին հետ: Մարդս կ'զգա որ իր կեանքը կ'երկարաձգէ հարատեւ, եւ առողջ եւ զէպ ի նոր բաները յայտնաներեր գացող նոր սերունդներու մէջ: Այս պայմաններու մէջ, մահը՝ մահ չէ: Ձիշտը ըսելով, հազար անգամ անդրադարձեր եմ որ արեւմտահայ աւագ սերունդէն, բացառիկ բախտաւորութիւն ունեցայ ես: Ոչ միայն իմ աչքերով տեսայ մեր սիրելի երկրի վերածնուղ կեանքը, այլ եւ կ'ապրիմ եւ կը մասնակցիմ այդ կեանքին: Ինձ կը մնայ արժանի ըլլալ այդ բախտաւորութեան: Հոգւոյս խորքէն կը ցաւիմ բոլոր անոնց վրա, որոնք հեռուէն կամ մօտէն չեն բաժներ այն մեծ պզացումները եւ բուռն յուզումները, որ մեր Խորհրդային Հայրենիքի բարդ եւ բազմակողմանի կեանքը կը ներշնչէ: Երբեմն, հաւատացէք ինձ, այնպիսի խոր երախտապարտութիւն կ'զգամ, որ ինձ կը ներշնչէ ձգտում մեծ անձնազոհութիւններու: Ամեն օր եւ ամեն ժամու առիթ կ'ունենամ զգալու որ չըջապատուած եմ սիրելի եւ հարազատ մարդոցմէ: Ոչ թէ բացառիկ առիթներու, այլ մեր առօրեայի մէջ կ'զգանք այդ եւ ի՞նչ կարելի է ապահել աւելի չքեղ: Իսկ արտասահմանի մէջ դեռ մարզիկ կան, որ կը յանդգնին կարծել թէ Ռոմանոսի պէս արժէք ունեցող մէկը բաւականին գնահատած չէր: Դուք տեսաք, թէ ինչպէս սիրուած

Ամերիկահայ Առաջին Պատւիրակութիւնը եւ Զապէլ Եսայեան «Ավանգարդ»ի խմբագրութեան Հետ

Նստածներ՝ ձախէն աջ.— Օգսէն Սարեան, Զապէլ Եսայեան, Պատրիկ Սեդեան եւ Ավանգարդի խմբագիր՝ Միրզոեան: Ոտքի վրա կանգնած են Կոմսոմոլ մը եւ խմբագրութեան երկու անդամները:

եւ գնահատած էր ան: Իսկ այն կարգ մը գժուարութիւնները, որոնց ամենքս ալ ենթակա ենք, հետեւանք են դէմ հինէն մնացած ժառանգութեան եւ որոնց պէտք է տակնուվրայ ընենք եւ կը յաղթահարենք: Զէր Մեկնելէն ի վեր մեծ վոխոութիւններ յառաջ եկած են եւ ամեն օր երեւան քաղաքը կը յառաջդիմէ: Անցեալ երեկո կը բարձրանայի Արովեանէն. օրուան մէջ չատ չոգ էր բայց երեկոն զով էր. էլեքտրական լոյսով ողողած, կը լսէի բարձրախօսէն արձակուղ երաժշտութիւնը: Կը քալէինք խումբով եւ յանկարծ լսեմ. «Եթէ այս պահը, ինչպէս որ կա, ուզենք նկարագրել, մեզ չեն հաւատար»: Աքանչելի պահ մըն էր, զովութիւն, լոյս, երաժշտութիւն եւ դէմ մարդոց բարմութիւն, որոնք կարծես ամէն մէկ էին:

Ւ՛հ, դիշեր բարի, մենք իրար կը հանդիպանք եւ այդ բաւական է: Ջերմ եւ սիրալիր բարեւներ եւ բնակեցական բարեւներ ձեզ, ընկ. Սարեանին եւ ամենուն:

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ

ԻՆՉ ՏԻՏԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆԵՐ, ԻՆՉ ԱՏԵԼԻԵԱԳՈՐԾ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՆԿԱՐԻՉ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ
Մեծ վարպետը նկարած երեւանի Իր Աշխատասենեակին Մէջ Իր Իճճեանկարի Հետ

1928–ին իմ ցանկալի Խորհրդային Հայաստան վերադարձա: Այն իմ տեսած ոգեւորմէլի երեւոյթը չկար, անմիջապէս աչքի ընկաւ մտայնութեան ու միջավայրի տարբերութիւնը: Դանդաղօրէն սկսայի հասկնալ, որ տեսակի եւ զործնականի ճնշածոն է կոմունիզմը: Ես, որ Փարոսի հանգ զարձարանները պատելիս, բոլորովին անուշադիր անցկր էի բանւորական սեւ մասսայի կողքով, այժմ պաղանք մը ունէցա ճանչնալ բանւորութիւնը: Անմիջապէս մեկնեցի Ղափանի պղնձահանքերը:

Մթնոց մը դիշեր ու ցերեկ հետեւում էի աշխատանքներին, եւ քանի խոսանում էր գիտակցութիւնս, այնքան ամէնի էր դառնում հիացքիս թափը: Ւ՛նչ տիտան գեղեցկութիւններ, ւ՛նչ տաղանդ կարողութիւններ: Պարզ էր: Ճկուն ու հուժկու մթնոց — գեղարուեստը պէտք է ծառայեցնել բանւոր դասակարգի նպատակներուն իրագործման:

Ամենք կը հարցնէին, թէ ինչո՞ւ Ամերիկան թողիր եւ եկար: Կը պատասխանէի, — եկա իմ բրտերքս խանդելու այն շաղախին, որով համազուած ու անվհատ գործիչներ կառուցում են մի նոր, սոցիալիստական երկիր:

Ա· ԱԶԴՈՒՆԻ

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԸ

ՀՕԿ–ի Իննեւրորդ Համագումարի ընթացքին, պատգամաւորներու կողմէ կատարուած ճնշումը եբեւոյթ մը ի յայտ բերաւ, որուն կարելի է մասամբ վերագրել կազմակերպութեան դանդաղ աճումը: Այնպէս կ'երեւի, թէ ընկերներէն ոմանք ուրիշներու հանդէպ կարճ եւ կտրուկ վերաբերմունքի որոշ հակումներ ցոյց կուտան: «Մատնություն», «մկրտուելու», «մաքրագործելու», եւ այս կարգի ուրիշ գործողութիւնները կարծես առեակ մը համլաք ունին անոնց համար:

Այդ մտայնութեան ամենէն աչքառու պատկերը նեղկայացուց Մէջին Արեւմուտքի մասնաճիւղերէն մէկուն նեղկայացուցիչը: Այդ ընկերը Մորմ. Հայաստանի անկեղծ բարեկամներէն եւ ՀՕԿ–ի հաւատարմագիր աշխատողներէն մէկն է անտարակոյս: Սակայն, ան յայտարարեց, թէ իրենց մասնաճիւղը, ասկէ առաջ ունեցած մօտ 150–ին փոխարէն, այժմ ունէր միայն 73 անդամներ: Ինչ էր պատճառը որ անդամներու կէսէն աւելին կորսուած էին: Ընկերը պատգամաւորը, զրուցասէրի զորձ մը կատարողի ակնոցին տակնուվրայութեամբ բացատրեց, թէ չնորհիւ իր եւ վարչութեան ուրիշ անդամներուն կատարած «մաղում»ին, բոլոր անբաղձալի, կամ անհաւատալուն անձերը կազմակերպութենէն դուրս ձգուած էին, եւ թէ այժմ

ՀՕԿ–ի ԻՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

մասնաճիւղը կը բաղկանար կատարելապէս բաղձալի եւ վստահելի տարրերէ: Իր բացատրութիւնը չարունակելով, ընկերը ըսաւ, թէ այդ «մաքրագործման» իրրեւ հետեւանք, մասնաճիւղը պատուած էր մօտ 12 տոլարի տարեկան ծախքէ մը, որուն պիտի ենթարկուէր եթէ այդ դուրս ձգուած անձերուն հարկ ըլլար ճամրել անդամական ժողովի հրաւերագրերը եւ այլ թղթակցութիւններ: Սակայն, ընկերոջ հաւատամքով, «մկրտութիւն»ին առաւելութիւնը հոս ալ չէր վերջնանար, քանի որ մասնաճիւղի քարտուղարին գործն ալ այժմ կէս առ կէս թեթեւցած էր: Մինչ նախապէս 150 հոգի

մաբ, կը յօժարի քարտ մը առաքագրել եւ անդամագրումը վճարել: Այդչափ միայն: Իսկ անկէ վերջ, ոչ ժողովներու ներկա կ'ըլլայ, ոչ ալ ուրիշ տեսակի աշխատանք կը կատարէ: Միւս կողմէ, սակայն, իրմով ոչ ոք կը հետաքրքրուի, եւ այդպէս ժամանակ մը չարունակելէ վերջ, զգամնալի չէ որ «ցանկին վրա դոնուող» այդ մեռելը ցանկէն դուրս ձգելու հարցը կը ծագի:

Պարզ է, եթէ այդ ձեւով անդամագրութիւն է տեղի կ'ունենայ, նախընթացի է որ ընաւ չըլլայ, քանի որ, ուրիշ օգտակարութիւնէ ուրիշ, միաս կը հասցնէ կազմակերպութեան: Նախ, որովհետեւ սին եւ անհիմն կարծիքներ կ'առնչուին անդամագրութեան թէ մասին: Երկրորդ, որովհետեւ երբ անհրաժեշտ կ'ըլլայ իրական կացութիւնը վիճագրաւել, այն ատեն ան կարող է որոշ յատկութիւններ յառաջացնել: Իսկ երրորդ, եւ ամենէն կարեւորը, այդ ձեւով «ներգրաւած» եւ վերջը դուրս ձգուած անձ մը, անխուսափելիօրէն կ'ենթարկուի աննպատակ մտածումներու կազմակերպութեան հանդէպ, եւ նոյն չափով կը դժուարանայ վինք անդամ մը եւս ներս բերելու փորձը:

Կազմակերպութեան ամէն մէկ անդամին, իր կարելիութեանց սահմանին մէջ, պէտք է աշխատանք յառաջգրել, որպէս զի գոյն կատարելով իր մէջ զարգանայ այն համոզումը, թէ իր պարտականութիւնը տուրք վճարել չէ միայն, այլ ալ մեքենաբար ժողովներու ներկա դոնուիլ, այլ ինքն ալ այլ հետաքրքրութեան մարմնին մէկ կենդանի օրգանը մանուկն է: Եւ ինչ չափով որ այդ անդամը իր աշխատանքին արդիւնաւոր ըլլալը կը տեսնէ, եւ ինչ չափով որ մասնաճիւղը կը դնահատէ իր ջանքերը, այն չափով ալ ան աւելի սերտօրէն կազմակերպութեան կը կապուի:

ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութիւնը, Համագումարին համրած իր պատգամ–հետագրին մէջ, հետեւեալը կ'ըսէ.— «Ներկայ դարձնել զինքը ամենքին»: Ներգրաւել ՀՕԿ–ի մէջ գործունեութեան այն բոլոր տարրերը, որոնք անկիզօրէն կանգնած են Ազգ. Հայաստանի կողքին եւ կ'ուզեն կարելի ամէն միջոցներով օժանդակել հոն կատարուող շինարարութեան: Գործիչն ունեցող պատմականը կը պարտադրէ ամէն անոնց, որոնք իրապէս կը սիրեն Հայ ազգը, որ ըմբռնեն, թէ այսօր Ազգ. Հայաստանի օժանդակութիւն առաւել չափով կը նշանակէ՝ Ազգ. Հայաստանի պահպանութիւն:

Երբ մենք կը խօսինք գանգուածներու ներգրաւելու մասին, խոշ. Հայաստանեան կազմակերպութիւնները ժողովրդականացնելու մասին, մեզի սրոչ պէտք է ըլլան այն պայմանները, որոնք այդ բաղձալի արդիւնքը կարելի պիտի դարձնեն: Հասկնալի է, թէ ուրիշներ ներս բերելու մասին խոշհնչէ առաջ, անհրաժեշտ է պահել անոնք, որոնք արդէն իսկ ներսն են: Պարզ այն պարագան, թէ մէկը անդամ դրուած է ՀՕԿ–ին, ցոյց կուտայ, թէ Ազգ. Հայաստանի հանդէպ անոր ունեցած համակրութիւնը այնքան մը զօրաւոր է արդէն, որ ան պատրաստ է իր օժանդակութիւնը բերելու գործնական կերպով:

Եթէ նոր անդամի մը դադափարները բարելաւելու այն չեն, ինչ որ մենք պիտի ուզէինք որ ըլլային, եթէ չատ մը հարցերու շուրջ ան դեռ չմտածելու մէջ է, մինչ այլ իրաւունք կուտանք մեզ մեկուսի, որ անոր հանդէպ արհամարհական վերաբերմունք ցոյց տրուի: Այդպիսի ընթացքի մը արդիւնքը այն պիտի ըլլայ, որ նոր անդամը աստիճանաբար պիտի ուժգնանայ կազմակերպութեան, եւ ի վերջս պիտի լքէ զայն այն հիման վրա, թէ իր բարի կամեցողութիւնները չեն դնահատուիր, եւ թէ հոգ իր տեղը չէ: Ուրէք ընկերը, որ իր վաղեմական ընթացքով համակիրը տարրեր կը հետա-

ՀՕԿ–ի ՆԻՒ ՊՐՈՒՆՔՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ՀՕԿ–ի ԹՐՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ցնէ, պարտի հաւատալ, թէ խնամ վասն ծառայութիւն կը մատուցանէ մեր Միջերկրային Հայրենիքին: Ինչպէս ժողովրդական առածը կ'ըսէ, «չունը չհնձուս փոխարէն՝ ան աչք է որ կը հանէ»:

ՀՕԿ–ի նոր անդամագրումը անձ մը կրնա դնել առանց նիւթական բլլալ գոհացման հասնելու ոգեկոչումին մը: Ան կրնա ՀՕԿ–ի մէջ գալէն վերջն ալ երկար տարի պահել այդ զգացումները, եւ նոյն իսկ անոնցմէ երբեք ալ բաժնուիլը չպատուիլ: Իսկ եթէ մենք բլլանք բաւականաչափ ճկուն եւ բաւականաչափ ճարտար, ունենանք բաւականաչափ հասկացողութիւն, եւ պէտք է ունենանք այդ տրամադրութիւնները, եթէ կ'ուզենք արդիւնաւոր աշխատանք կատարել, տալ ուրիշ մենք կը յաջողինք այդ նոր ընկերներու զգացումներուն մէջ յատակութիւն յառաջացնել, իրազեկութիւններու իրական լոյսի տակ: Եւ այն չափով, որչափով մեր գործակիցները յատակ են, որչափով մեր հասկացողութիւնը ուղիղ է, այդ չափով ալ մեզ կը յաջողի ուրիշներուն օգտակար հանդիսանալ:

Սակայն, ոչ իսկ մէկ վայրկեան պէտք է մտահան բնել այն պարագան, թէ եթէ մենք այսօր ինքզինքնիս կը նկատենք Միջ. Հայաստանի ջերմ բարեկամներ, ամենայն հաւանականութեամբ ամէն առնն իրաւունք չենք ունեցած այդ պատուաւոր կոչումին: Թերեւս միայն կարճ ժամանակ առաջ էր, որ մենք եւս կը գտնէինք անապրբեկներու, կամ նոյն իսկ հակառակորդներու չարքերուն մէջ: Պէտք է վերյիշել, թէ մեզմէ շատ շատերուն համար եւս անհրաժեշտ եղաւ յաղթահարել նախապաշարմունքը, սուտերն եւ զրպարտութեանց ամբողջ տարան մը, թէ ինչպէս մենք եւս ունեցած ենք մեր տարակոյսի եւ վհատութեան նոպաները, մինչեւ որ մեր մէջ բաւականին դիտակցութիւն արթնցած է, եւ մենք անխախտօրէն վարած ենք Միջ. Հայաստանին, եւ անոր վարչաձեւին:

Փոխանցման այդպիսի չրջաններու մէջ, խնամ արժէքաւոր եղած են մեզի հանդիպ ցոյց տրուած բարեկամական վերաբերմունքը, ընկերական համբերատարութիւնը: Մենք երբեք չպիտի մոռնանք, թէ մեր մէջ արթնցող դիտակցութիւնը բացատրելս մեր անձնական արժանիքին արդիւնքը չէ, այլ տուեալ վերապրելի է իրազեկութիւններու անդիմադրելի արամադրութեան: Իսկ եթէ կ'ուզենք մենք մեզի հանդիպ կատարելագործ համեմատ եւ պարկեշտ դառնալ, այն ատեն պարտինք ընդունել, թէ այնքան ալ մենք առաքինութիւն մը ցոյց տուած չենք բլլար, երբ կը հանդիսանք արեւի պես փայլող ճշմարտութիւն մը, երբ կը խոստովանինք, թէ մեր ցեղի դարաւոր Գողգոթային վերջ, խորհրդային իրատակրդը հանդիսացաւ անոր փրկարար արշալոյսը:

Ուստի, եւ ոչ մէկ ընկեր իրաւունք ունի ինքնիրեն արտօնելու որ ուրիշներու վրա «վերէն» նայի, տեսակ մը «օրօրոցէն ընարեալ» կեցուածք առնէ, քմծիծաղով կամ արհամարհանքով պատասխանէ իրեն եղած թերեւս պարզ, եւ սակայն անկեղծ ու լուրջ հարցումներու: Այնն ժամանակ եւ ամէն տեղ, մեր մօտեցումը պէտք է որ բլլա ընկերական, համբերատար, մեծամտութեան առանց սեւ չեղին նշանի: Մենք կը փափաքինք, որ մեր չորժումը եւ մեր կազմակերպութիւնները ընդգրկուն ժողովուրդի տարր խառնուը: Մենք պիտի չանդրք դուրս դալ այժմու մեր բաղդատաբար նեղ չրջանակէն, եւ ներգրաւել ոչ միայն համակիր տարրերը, այլ եւ հակառակորդ հոսանքներու չարքայինները, որոնց իրական տեղը մեզի հետ է: Մենք պիտի ձգտինք այդ արդիւնքը ձեռք բերել փաստերու հիման վրա, ցոյց տալով, թէ աշխատութիւնը՝ որուն համար մեր աշխատաւոր նախնիքը զարերով երազեցին ու տառապեցան — կարելի եղաւ ունենալ խորհրդային կարգերու տակ միայն. ապատութիւն մը, որ աւելի կատարեալ է քան մեր աշխատաւոր ժողովուրդը կարող էր երազել երբ եւ իցէ: Կանոքը ինքնին ամէն օր առատ նիւթ կը հայթայթէ այդ ուղղութեամբ, եթէ միայն մենք գիտնանք զայն լիովին օգտագործել:

Մենք վստահ ենք թէ ՀՕԿ–ի եւ խորհ. հայասանեան ուրիշ կազմակերպութեանց չուրջ հաւաքուած հայութիւնը անկեղծօրէն կապուած է Միջերկրային Հայաստանին: Մենք վստահ ենք նոյնպէս, թէ այդ կազմակերպութիւններէն դեռ նաեւ գոյութիւն մեր հայրենակիցներու մեծամասնութիւնը ընդունող մեր հայրենակցութեան մեծամասնութիւնը այնպէս ամենայնիւ եւ աճող համակրութեամբ պիտի տեսնէ մեր երկրի բարգաւաճումը: Իսկ մեր կը

ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՕԿ-Ը



ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ
ՀՕԿ–ի Բարտուղար

Հայրենակցական միութիւնները զգուշաւորութեան մէջ հասարակական նկատելի գործօններ են. անոնց մէջ կազմակերպուած են ժողովրդական լայն զանգուածներ:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՅԱՆՁՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Եգիպտոսի, Ամերիկայի եւ այլ զգուշաւորութեան մէջ մօտաւորապէս կէս դարէ ի վեր գոյութիւն ունին հայրենակցական եւ կրթասիրաց բազմաթիւ միութիւններ:

Թէեւ մեր ձեռքի տակ չունինք ամբողջական ցուցակ մը, բայց զանազան աւանդներու վրա հիմնուելով, կարող ենք ըսել, որ հայրենակցական եւ կրթասիրաց միութիւններու թիւը զգուշաւորութեան մէջ երկու հարիւրէն աւելի է, որոնց ճնշող մեծամասնութիւնը կազմակերպուած են ամբոխահայ գաղթականներու կողմէ, նախախորհրդային շրջանին: Հայրենակցական միութիւններու նպատակը կարելի է ամփոփել երկու կէտերու մէջ:

ա.– Օգնել իրենց ծննդավայրերու կրթական եւ մշակութային հիմնարկութեանց:

բ.– Գրամական օժանդակութիւն հասցնել կարօտեալ հայրենակիցներու:

Համաշխարհային պատերազմի ընթացքին, հայ ժողովուրդը եւ առաւելապէս արեւմտահայութիւնը, իմպերիալիստական խաղերու զոհ դարձաւ, միլիոնաւորներ իրենց կեանքը կորնչուցին եւ ապրուստներն ալ ցրուեցան աշխարհի չորս կողմերը: Վերջ տրուեցաւ թրքահայութեան եւ այսպէսով վերջ դրաւ նաեւ ծննդավայրի կրթական եւ մշակութային գործի օգնութիւնը: Պատերազմի ընթացքին եւ զինադադարէն անմիջապէս վերջը, հայրենակցական միութիւնները իրենց ուշադրութիւնը դարձուցին գլխաւորաբար ապէտեալ հայրենակիցներու օդնութեան:

Բայց հայրենակցականները տեսնելով, որ պատերազմէն տարիներ յետոյ, մինչեւ անդամ տասն եւ հինգ տարի յետոյ, այսօր, իրենց հայրենակիցները չկրցան ապաւինիլ զաղթականի եւ նպաստարկելի գրութենէն, եկան այն եզրակացութեան, որ պահանջ կարելի կ'ըլլայ ինքնապահ դարձնել մեզի հիմնելով նոր աւանները Սորհ. Հայաստանի մէջ:

ՀՕԿ–Ի ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԿԱՊԸ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Իր գոյութեան առաջին օրէն սկսած՝ ՀՕԿ–ը մշակած է սերտ գործակցութիւն եւ կապ հայրենակցական միութիւններու հետ, իր ամբողջ վարչական մեքենան ի սպաս դրած է հայրենակցականներու. Խորհրդային Հայաստանեան գործունէութեան:

Տանք այսուհդ ՀՕԿ–ի գլխաւոր նպատակները եւ մեզ համար պարզ կը դառնայ, թէ գոյութիւն ունին հայրենակցականներու եւ ՀՕԿ–ի միջեւ փոխադարձ սերտ յարաբերութիւն եւ յարաճուն բարեկամութիւն:

ՀՕԿ–Ի ՀԱՐԹՓՐՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

Ա.— Օգնել Խորհ. Հայաստանի տնտեսական եւ մշակութային վերելքին:

Բ.— Ծանօթացնել Խորհ. Հայաստանը գաղութահայութեան:

Գ.— Ամրապնդել Խորհ. Հայաստանի եւ գաղութահայութեան փոխադարձ բարեկամութիւնը:

Ուշադիր ընթերցողը անմիջապէս պիտի նկատէ որոշ նմանութիւն հայրենակցական եւ կրթասիրաց միութիւններու ու ՀՕԿ-ի նպատակներու մէջ: Եթէ առաջիններու նպատակի մէջ ծնընդավայրը փոխարինենք Խորհ. Հայաստանով, եւ կարօտեալներու դրամական օժանդակութիւնը՝ ընտրարական օգնութեամբ, կը տեսնենք թէ անոնց դործը կը նոյնանայ ՀՕԿ-ի նպատակի առաջին կէսին հետ:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՆՈՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒԹԻՒՆ

Թէեւ հայրենակցականներէն ոմանք դեռ կը դործածէն իրենց հին ծրագիր-կանոնագիրը, բայց կեանքն իսկ փոխեր է անոնց գործունէութեան դաշտն ու ձեւը: Իմիերիալիստական ոճրագործ պատերազմը եւ Հոկտեմբեր-Նոյեմբերեան ազատագրական յեղափոխութիւնը հիմնովին փոխեր են Հայ ժողովուրդի դրութիւնը: Զկան ծննդավայրերու կրթական եւ մշակութային հաստատութիւնները, չկա եւ անոնց օգնութեան հարցը. կա Խորհ. Հայաստանը՝ կառուցուղ, զարգացող, խանդավառ եւ ազգար, կա եւ անոր վերելքին մասնակցելու մեծ դործը:

Հայրենակցականներէն ոմանք այս իրողութիւնները լմբռնեցին Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիներուն, եւ անցան դործի: Վա՛ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐԸ, ՆՈՐ ՄԱՀԱԹԻՒՆ: Բայց ուրիշներ իրենց դէմքերը դէպի Խորհ. Հայաստան դարձնելու եւ չինարարութեան թեւերու համար պահանջկին մեծ լուսարանական եւ պրոպագանդական աշխատանք ու չօշափելի փաստեր: ՀՕԿ-ը եւ Խորհ. Հայաստանի բարեկամ այլ կազմակերպութիւններ կատարեցին եւ կը կատարեն պրոպագանդային եւ լուսարանական աշխատանքը, իսկ Խորհ. Հայաստանի արագաթափ վերելքը հայթայթեց բազմաթիւ եւ բազմապիսի չօշափելի փաստերը:

Վերջին տարիներուն հայրենակցական միութիւններու մէջ նկատելի է ոչ միայն Խորհ. Հայաստանի մէջ չինարարութիւն կատարելու յարաճուն տրամադրութիւն, այլ եւ այդ գործը աւելի արդիւնաւոր ընելու առողջ տրամաբանութիւն: Շատ մը փոքր ու մեծ գիւղական եւ քաղաքային հայրենակցականներ եւ կրթասիրացներ միանալով կը կազմեն շրջանային եւ նահանգային մեծ միութիւններ: ՀԱՄԱՀԱՐԵՐԴՑԻԱԿԱՆԻՆ հետեւեցաւ ՀԱՄԱՀՂԵՑԻԱԿԱՆԸ: Իր կազմութեան շրջանին մէջ է ՀԱՄԱԿՈՒԱՐԱՑԻԱԿԱՆԸ. մտայնութիւն կը պատրաստէ ՀԱՄԱՍԵՒԱՍՏԱՑԻԱԿԱՆԻ համար: Այս առողջ չարժումը Խորհ. Հայաստանի եւ չինարարութեան կողմնակից ամեն անհատի քաջալերանքին արժանի է: Պէտք է կեդրոնացնել ուժերը, աւելի արդիւնաւոր ընելու աշխատանքը: Համահայրենակցական չարժումները պէտք է նկատել ժողովրդական համագործակցութեան ամուր յենարաններ:

ՀՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Շատ սեղին է չեշտել, որ ինչպէս ՀՕԿ-ի կազմութիւնն ու գործունէութիւնը, նոյնպէս ալ հայրենակցականներու Խորհ. Հայաստանի մէջ սկսած աշխատանքները թշնամանքի առարկա դարձան հակախորհրդային տարրերու կողմէ: Անոնք երբեմն ջատագովեցին Մարքիս մէջ ասաններ չինելու եւ գաղութներ հաստատելու տեսակէտը, որ լաւ կը համապատասխանէր անգլօ-ֆրանսական իմպերիալիստներու շահերուն: Այս ուղղութեամբ ա-

ՀՕԿ-Ի ՓԱՍԱՏԻՆԱՑԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԸ

ՀՕԿ–Ի ՍՓՐԻՆՓԻԼԴԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

Նոյնք չատ ջանք թափեցին թէ՛ իրենց հետեւորդներու մէջտեղ հայրենակցականներու մէջ, եւ թէ՛ իրենց մամուլով: Անոնք այդպէսով կը ջանային մէկ քարով երկու ճնճղուկ զարնել, թէ՛ ծառայել իրենց իմպերիալիստ տէրերուն եւ թէ՛ վնասել Խ. Հայաստանի շինարարութեան:

Անոնք երբեմն մարդասէրի եւ հայրենասէրի պատմուճանը հագած, հայրենակցականներուն խրատ ուղին իրենց նեղմտական միջոցները արամադրել հոս ու հոն ցրուած կարօտեալ հայրենակիցներու: Երբեմն Սովհ. Հայաստան ուղարկած դրամներու կորուստը «վաճառը» մատնանշելին. եւ վերջապէս ըրին ամէն ինչ խանգարելու, արգիլելու հայրենակցականներու մասնակցութիւնը Խ. Հայաստանի շինարարութեան, եւ միաժամանակ պատրաստ գումարները հոս, իրենց մօտ պահելու համար: Չէ՞ որ այդ գումարներու Սովհ. Հայաստանի մէջ նոր ուսանելու շինարարութեան յատկացելիք վերջնականապէս այդ գումարներէն օգտուելու իրենց յոյսերն ու պատեհութիւնները կը չքացնէր:

Հակառակ ոտիկն Սովհ. Հայաստանի թշնամիներու ամէն տեսակ ջանքերուն, ՀՕԿ–ի, եւ Խ. Հայաստանի բարեկամներու աշխատանքը ուսեւ դէմ պիտի սա, իր գործան արդիւնքը: Սովհ. Հայաստանի շինարարութեան իրենց մասնակցութիւնը կը բերեն — Ազարկիրի, Մալաթիա, Սեբաստիա Վեբաչինացի, Սեբաստիա Այդի, Պարտիզակի Վեբաչինացի, Ցագիճ Գիւղի, Եարասարի, Կամխա Գիւղի, Կամխա Գիւղի, Տիգրանակերտի Հ. եւ Վ.ի, Կեսարիա Վեբաչինացի, Խէրկէկի Հայրենակցականներ, Էֆքէրէկի Կրթասիրացի, Ֆէնեսէկի Ռազբինեաններ, Ամասիա, Հաճընի, Մուշլու–Թիւրքմենի, Բայբուրթի, Վասպուրականի, Կիւրինի, Զուգուչի, Զարմչիածդի Հայրենակցականի, Համահայրենակցական Համագործակցականի, Թոմարզայի Միացեալի, Գոչ Հիսարի Վեբաչինացի, Արմաշանի եւ Թոզանլի Կրթասիրաց Միաբանութիւնները, որոնց թիւը օրէ օր կ'աճի:

Որքան ՀՕԿ–ի եւ Հայրենակցականներու յարաբերութիւնները կը սերտանան, որքան անոնք կ'աշխուժացնեն նոր ուսանելու եւ այլ տեսակի շինարարական աշխատանքները, նոյնքան ճիգեն եւ յուսահատական պէնքերու կը դիմեն հակախորհրդային տարրերը: Այս պարագան մանաւանդ պարտականութիւն կը դնէ Սովհ. Հայաստանի ամէն մէկ բարեկամի, շինարարութեան կազմակերպ ամէն մէկ հայու, եւ վերջապէս Հայ ժողովուրդի սէր ունեցող ամէն մէկ գիտակից մարդու վրայ, աչալրջօրէն հսկելու, եւ տեղն ու տեղը չախչախելու հակախորհրդային եւ յառուկ չափը հետապնդող այդ տարրերու բոլոր խարէն ու դաւերը:

ԻՆՉՈ՞Ւ ՀՕԿ–Ը ԿԱՋԱԿՑԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ՀՕԿ–ի նպատակներէն մէկն է օգնել Սովհրդային Հայաստանի շինարարական եւ մշակութային փոխադրին: Յետսորհրդային պայմաններու մէջ հայրենակցականներէն չատեր իրենց նպատակ են գրեր Սովհ. Հայաստանի մէջ չինել նոր ուսաններ եւ հոն փոխադրել իրենց գաղթական հայրենակիցները, որոնք, տակալ պայմաններու տակ, լուսպոյն կը լուծեն կարօտեալ հայրենակիցներու նիւթական եւ մշակութային օգնութեան հարցերը, եւ թէ կը նպատան Սովհ. Հայաստանի շինարարութեան եւ մշակոյթին: Ուրեմն ինչ կա ուելի բնական քան ՀՕԿ–ի աջակցութիւնը հայրենակցականներուն, որ անոնք կատարեալն նոր ուսաններ մեր Սովհրդային Հայրենիքին մէջ: Չէ՞ որ ՀՕԿ–ն այդպէսով իր իսկ նպատակը կենսագործած կ'ըլլայ:

ՀՕԿ–ը լաւ կ'ըմբռնէ նաեւ, թէ հայրենակցականները չինելով նոր ուսաններ, օժանդակելով ներդաղթին, ուելի կը հետապրքրին Սովհ. Հայաստանով, ուելի լաւ կը ծանօթանան մեր Սովհ. Հայրենիքին եւ ուելի մեծ սիրով ու գազափարով կանուի կը կապին անոր հետ: ՀՕԿ–ը այսպէս ծառայած կ'ըլլայ նաեւ իր նպատակի երկրորդ եւ երրորդ կէտերուն:

ՀՕԿ–Ի ԻՍԹ ՊՐՈՆԳԻՍ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

Ահա այս տեսանկիւնէն ալ պիտի դիտել ՀՕԿ–ի եւ Հայրենակցական Միութիւններու յարաբերութիւնները: Մինչեւ այսօր Ամերիկայի ՀՕԿ–ը Հայրենակցականներու համար ունէր քան 150,000 տոլարի գրամական փոխանցումներ եւ դնումներ կատարած է: Հայրենակցականներու գործերը ՀՕԿ–ի Կեդրոնական գրասենեակի աշխատողներու ժամանակի 40–50 տոկոսը կ'առնեն: ՀՕԿ–ը նոր առաւելութիւն եւ հայրենակցական մրցութիւններու մէջ հազարզանազան խոչոտիք մը հանդիսացեր է եւ կը հանդիսանայ. ու այս բոլոր աշխատանքները կը կատարէ առանց մէկ անձի սառնասրտութեան, որպէս իր պարտականութիւնը, իր բնական գործը:

ՀՕԿ–ը որպէս կազմակերպութիւն, ամէն կերպ կը քաջալերէ իր անդամները, որ պատկանին իրենց գիւղի կամ քաղաքի հայրենակցական միութեանց, այժ տալու անոնց գործունէութեան, աշխուժացնելու չինարարական աշխատանքները, եւ ի նպաստ չինարարութեան ու ներդպրի մատնութիւնը խորացնելու եւ տարածելու:

Պարզ է ուրեմն, որ ՀՕԿ–ն ու Հայրենակցական Միութիւնները, անոնք որոնք կ'ուզեն լաւագոյնս ծառայել իրենց հայրենիքներուն, բնական գործակիցներ, գաղնակիցներ են: Մ. Հայաստանի կառավարութիւնը նկատի ունենալով այս պարագան, նոր աւանները չինարարութեան գործը դրաւ ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութեան գնկավարութեան տակ: Եւ պիտի ընդգծել այն պարագան, որ ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութիւնը ոչ միայն գնկավարեց ու կը գնկավարէ չինարարութիւնները, այլ եւ իր գանձէն հարթեր հազարներու հասնող դրամարներ է յատկացուցեր այդ նպատակին:

Ահա այս է պատճառը որ նոր աւաններու ժողովուրդը ջերմ սիրով կապած է թէ՛ ՀՕԿ–ի Գլխ. Վարչութեան եւ թէ պատասխանատու ՀՕԿ–ականներու հետ: Ամերիկայի ՀՕԿ–ի գերջին Համագումարին, նոր աւաններէն հեռախօս բաներով կ'արտայայտին իրենց զգացումները.—

ՀԵՌԱԳՐԻ ՊԱՏՃԷՆ

Օգոստոս 27, 1935
Երեւան, Խ· Հայաստան

Ամերիկայի ՀՕԿ–ին, Նիւ Եորք

Խորհրդային Հայաստանում կառուցած եւ կառուցւող նոր աւանների աշխատաւորութեան կողմից սրտանց ողջունում ենք Ամերիկայի ՀՕԿ–ի Համագումարը: Մենք իմ ներս շարունակելով մեր աշխատաւորական հայրենիքում նոր աւանների կառուցողական աշխատանքները, խօսք ենք տալիս, ՀՕԿ–ի Գլխ· Վարչութեան գեկավարութեամբ, ոչ թէ միայն այժ տալ կառուցումների ֆանակին, այլ եւ որակին, բարձրացնելով իրար ետեւից երկու երեք յարկանի բարաշէն տներ, ինչպէս նաեւ մշակութային, առողջապահական հիմնարկներ: Մենք Ամերիկայի վերաշինացները, նաեւ բազմաթիւ Միութիւնները, Ուսումնասիրացները, Կրթասիրացները, լիայոյս ենք որ բոլորելով Ամերիկայի ՀՕԿ–ի շուրջը, գօրավիգ կը լինեն այն նշանակելի աշխատանքին, որ այսօր անդուլ կերպով յառաջ կը տարի այստեղ: Կեցցէ ՀՕԿ–ի եւ վերաշինացների համագործակցութիւնը, կեցցէ Խորհրդային Հայաստանը:

Ստորագրութիւններ

Նոր Բիւրականիա ՏԷՄԻՐՃԵԱՆ
Նոր Արաքսիր ՄԵՍՈՒՄԵԱՆ
Նոր Մալաքիա ԱՍԼԱՆԵԱՆ
Նոր Եւդոկիա ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ
Նոր Սերաստիա ՎԱՌԵԿԵԱՆ
Նոր Խաբբերդ ՄԱԶՄԱՆԵԱՆ
Նոր Կեսարիա ՉՈՓՈՒՐԵԱՆ
Նոր Թումարզա ԿԻՒՐԻՆԵԱՆ
Նոր Տիգրանակերտ ԳԱԶԱՆՃԵԱՆ
Նոր Բղի ԱԼՈՅԵԱՆ
Նոր Մճնուր ՊԵՏԻԿԵԱՆ

ՀՕԿ–ի Քլիվլենտի Մասնաճիւղը

ԿԱՐՄԻՐ

ՍՈՒՏԻ ԵՒ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԸՐՍԹԵԱՆ ԱՐՇԱԻԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Մի քանի նահանջներու մէջ, յատկապէս վերջին տարւան ընթացքին, նոր թափ ստացեր է հակախորհրդային արշաւը: Բոլոր յետադիմական ու ֆաշիստական մութ ուժերը համադրած են իրենց ջանքերը՝ աշխատաւոր զանգուածներու առաջ վարկաբեկելու համար կառուցուող Սոցիալիզմի երկիրը: Այս մոլեգին արշաւին նպատակն է նախ՝ կտրել ազդեցութիւնը աճող խորհրդային գաղափարախօսեան, որ անդիմադրելի ալիքի մը նման սկսած է հեղեղել Ամերիկայի աշխատաւորական բոլոր չերջանիները, երկրորդ՝ ճանապարհ բանալ կազմակերպուող ֆաշիզմին, որ կը ձգտի իր արիւնոտ սերպասաւորութիւնն հաստատել այս երկրին մէջ:

Ցորհ. Մութիւնը աշխարհի վրա կը հանդիսանա մեկ երկիրը, ուր աշխատաւոր զանգուածները ազատագրած են դրամատիրութեան տնտեսական, քաղաքական ու մշակութային լուծէն: Աչխատող նոր մարդկութիւն մը, առաս ու երջանիկ կեանք մը կը կառուցէ: Մարդկային տառապանքը անցեալի երեւոյթ մըն է այլ եւս եւ բնաւ չպիտի վերադառնա խորհրդային սահմաններէն ներս: Սոցիալիստական Հայրենիքը փարոս մըն է, որ օր ըստ օրէ աւելի պայծառօրէն կը փայլի դրամատիրական աչխարհի սրտան ծովին վրա:

Ամերիկայի մէջ, ուր այսօր, 11 միլիոն հոգի տեւականապէս անգործութեան դատապարտուած է եւ 8 միլիոն թշուառներ պետական ողորմութեամբ կ'ապրին, կը տեսնեն այս լուսատու խորհրդային փարոսը եւ իրենց քայլերը կ'ուղղեն դէպի անոր լուսաւորած ճամբան:

Ահա թէ ինչո՛ւ դրամատիրական Ամերիկայի բոլոր յետադիմական ուժերը ճիգ կը թափեն խափանելու լոյսը փրկութեան ու յոյսի այդ փարոսին: Ահա թէ ինչո՛ւ անոնք մոլեգնօրէն կը ձգտին վարկաբեկել, սեւցնել Խորհրդային Միութիւնը, ժամանակ մը եւս մթութեան մէջ պահելու համար ամերիկեան աշխատաւորութիւնը:

* * *

Ամերիկայի մէջ հակախորհրդային արշաւը յատուկ կը մղի տուութեան, դրպարտութեան, կեղծիքի եւ քաղաքական ամպարտութեան այն բոլոր զարնելի դէնքերով, զոր կարող է յղանալ ու հնարել բուրժուական միտքը:

Վատահամբաւ ու անբարոյական մարդիկ, մինչեւ իրենց ոսկորները ընկերայնապէս նեխած անձեր, մարդկային բարձրութիւնէն խորապէս ինկած անհատներ են, որ կ'առաջնորդեն հակախորհրդային արշաւը:

Ամերիկեան դրամատիրութիւնն այնքան է սրնանկացեր բարոյապէս, որ չկրնար իր դաւին համար կուռ ապնիւ պնուրներ ճարել: Ան հրապարակ է դրեր զրամի լուանտները եւ քաղաքական պտոնիկները, որոնց առաջին չարքերուն վրա կը պատի Վիլիըմ Ռանտոլֆ Հըրսթ, զառամած՝ բայց արտակարգ այս առաքնօր, երեսունի մօտ օրաթերթերու եւ հոլիքան ալ չարաթաթերթերու ո տատարերու այս ազգականած հրատարակիչը, Ամերիկայի այս ճիճկօ հայրենասէրը եւ արք-փաչխոր:

Հըրսթին յետո կուգա Պերնար Մաք Ֆետտըն, նոյնքան ազգականած, նոյնքան անբարոյական, սեռային առոր զրահանութեան մէլլենտաէր փեթզակը:

Այս երկու ազգեանները եռեւ կանգնած են ամերիկեան հասարակութեան ուելի նուագ ծանօթ դէմքը — Համիլթըն Ֆիշ, Մաթիու Վոլ, Իպլի, Տիքսթայն, Վեյլըն, Օ'Պրայըն, Մաք-Քորմիք եւ ցարգանքը կաշառակիր փալիթիշըններու, Աչխատ. Դաշնակցութեան գաւաղիր առաջնորդներու, լեգէոնական զեկավարներու, մինչեւ Ամերիկեան Յեղափոխութեան պատուած Դուստրերը եւ «արծաթ չապիկաւորները», մինչեւ Տիքրոյթի ոտոխոյլ քահանան՝ Զաըլս Քոխլին եւ Լուերիանայի ծեռակուսականը՝ Հիւի Լոնկ, որ՝ վերջերը, իր տըխրահռչակ զործունէութեան համար քանց իր յանցանքները, զոհւելով վրէժխնդիր ահաբեկչի գընդակին:

Որքան կ'ուժի ու կ'ամբանա Խորհրդային Միութիւնը, որքան հասատատուն կը բարձրանա սոցիալիզմի պանծալի չէնքը աչխարհի մէկ վեցերորդ մասին վրա, այնքան կատաղօրէն այս մարդիկ կը ջանան վարկաբեկել Բանւորական Հայրենիքը՝ սուտերու ամէնէն պրտատոզը եւ զրպարտութիւններու ամէնէն գաղրելին գործածելով ատոր դէմ:

* * *

Վիլիըմ Ռանտոլֆ Հըրսթ ամէն օր սխեմատիկ կերպով կը թունաւորէ իր թերթերը ամէն կողմ խօսած սուտերն ու զրպարտութիւնները, որոնք ուղղած են Ցորհ. Միութեան դէմ, անխիղճապէս տեղ կը գտնեն Հըրսթի մամուլին մէջ: Հըրսթ, Հիթլերին տած իր վերջին այցելութենէն ի վեր, յայնօրէն կ'օգտուի դերմանական նացի թերթերէն ու լրագրողներէն, որոնք կանոնաւոր կերպով տեղեակ կը պահեն զինքը բանւորական պետութեան դէմ հնարած վերջնագոյն սուտերուն:

Հըրսթի բարձր պին վճարելով կը դնէ արտակարգ առախօս դրչակներ, որոնք իրենց այլասերած մաքին ու երեւակայութեան թռիչքը տալով սեւցնել կը փորձեն Մարշ. Ս. Շ. Միւութիւնը: Հըրսթի խմբագրութիւն չգիներ իրեն ծառայողները ընտրելու մէջ: Ան կը դնէ «սոցիալիստ» Հ. Լինկի դրպարտիչ գրչին, կը դնէ բուրժուա Թոմաս Վոքըրը, կը դնէ խեղդամահ Ռ. Ռիփլին, կը դնէ «Կոմունիստ» Անկիրը եւ ասոնց նման հարեւրաւորներ, բաւական է որ այս մարդիկ հայհոյեն Մարշ. Միւութեան դէմ:

Բոլոր այս վարձկան գրչակները չէշար կը դնեն պլեասուր սուտի մը վրա: Անոնք անամօթաբար կը յայտարարեն, թէ «Մարշրդային Միւութեան մէջ ժողովուրդը սովամահ կ'ըլլա»: Բայց այս մարդոց վկայութիւնը հաստատուած չըլլալով անոնց իրականութեան վրա, չի մերկանա իր կեղծիքին առաջին իսկ լուրջ քննութեամբ:

Հըրսթեան գլխաւոր առախօսը, Թոմաս Վոքըր, յօդուածներու շարք մը գրեց իր տիրոջ համար: Ան յայտարարեց, թէ իր բոլոր գրածները իր աչքովը տեսած է Մարշ. Միւութեան մէջ, երբ անցեալ տարի երկու ամիսի չափ գտնուած է այնտեղ: Վոքըր պնդեց, թէ ան նշան մը մլլեան մարդիկ մնացած են «սովին», չնորհիւ Սաալինի քաղաքականութեան: Եւ որպէս զի իր բանծներուն ճշմարտութեան գոյն տա, Թոմաս Վոքըր իր յօդուածներուն հետ հրատարակեց նաեւ բազմաթիւ նկարներ, որոնք, ըստ, ինք լուսանկարած է Մարշ. Ս. Շ. Միւութեան մէջ գտնուած ժամանակիս: Այդ նկարները ցոյց կուտային սովահար երեխաներ, անխնամ դիակներ, ուտելած դիակներ ու ուտողներ, անմշակ ու խոպան դաշտեր, եւ այլն:

Թոմաս Վոքըրի գարհուրելի սուտերը, սակայն, երկար կեանք չունեցան: Հըրսթի Մոսկուայի սեփական թղթակիցը՝ պր. Փարրոթ, եւ «Թայմըզ»ի թղթակիցը՝ պր. Տիւնթ, հրապարակ իջան հերքումին ներքին ուռը սուտերը: Պր. Տիւնթի նոյն իսկ հետադրեց իր թերթին. «Այս թղթակիցը ինքզինք կը գտնէր անցեալ Յուլիսին, այսինքն այն ատեն, երբ իբր թէ մարդիկ կը մահանային սովէն, բայց ոչ հաղարին եւ ոչ ալ գիւղերուն մէջ անօթութեան հետքն անգամ չտեսաւ»:

Թոմաս Վոքըրի ոչ միայն յօդուածներուն, այլ եւ նկարներուն կնճռ ու սուտ ըլլալը փաստեցաւ: Մանուածքները ապացուցին, թէ երկու ամիս Մարշ. Միւութեան մէջ ապրողի մը համար ԱՆԿԱՐԵԼԻ չի լուսանկարել գանոնք, պարզ այն պատճառով, որ այդ նկարները կը պատկերացնէին տարբեր չորս եղանակները — գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Մանուածքներն իրաւամբ դիտել տուին, որ եթէ Թ. Վոքըր ամառ ժամանակ գըտնուած է Մարշ. Միւութեան մէջ, ինչպէ՞ս կրնա ձմեռնային տեսարանները լուսանկարել: Սակայն, յետո հաստատուեցաւ, որ Հըրսթի թերթերուն հրատարակած բոլոր այդ նկարները քաշած են պատերազմի ժամանակ եւ կը պատկերացնեն մեծ ըմպանդի սարսափները:

Թոմաս Վոքըրէն յետո Հըրսթի հրապարակ դրաւ Ռ. Ռիփլին: Այս առախօսն իր տիրոջ հաճելի ըլլալու համար յայտարարեց, թէ Մարշրդային Միւութեան մէջ սովէն մեռնողներու թիւը ոչ թէ վեց միլիոն է, այլ հարիւն միլիոն: Ռ. Ռիփլին եւս, որպէս ականատես, իր վկայութիւնը տուաւ Մարշ. Միւութեան դէմ: Բայց այս Հըրսթեան վարձկանը մոռցաւ, որ Մարշ. Ս. Շ. Միւութենէն վերադառնալէն անմիջապէս յետո, «Նեշ» ամսագրին մէջ յօդուած մը գրեց, ուր ըսաւ. «Սովհոդմը յաջողած է Ռուսաստանի մէջ: Պէտք չէ սխալիլ: Ջախջախումի շրջանը այժմ անցած է: Իմ կարծիքս այն է, որ տասը տարւա մէջ Խորհ. Միութիւնը պիտի ըլլա աշխարհի ամենահզօր սեփականատիրական մէկը»:

Տեսնք թէ Հըրսթի տէրերն ինչպէս փոխեցին պր. Ռիփլիի միտքն ու լեզուն:

Մէկը մեւսին հաւէն իր ականատես վկայութիւնը, սակայն, չյաւատացուցոց Վ. Ռ. Հըրսթը: Ան հրապարակ գալեց Նիւ Եորքի «Ֆորվըրտ» թերթի «սոցիալիստ» խմբագիրը, Հ. Լինկը: Այս վարձկանի Հըրսթի թերթերուն աշխատակիցը այնպիսի զայրոյթ ու բողոք յառաջ բերաւ սոցիալիստ շարքայիններուն մէջ, որ Սոցիալիստ կուսակցութեան վարիչները հարկադրեցան Լինկը կախակալել կուսակցութենէն, ոչ թէ Մարշ. Միւութեան դէմ գրած ըլլալուն համար, այլ Հըրսթի դեղին մամուլին աչքատակիցլուն համար: Այս պարագան ցոյց կուտա, որ Ամերիկայի Սոցիալիստ Կուսակցութեան ղեկավարներն եւս մաս կը կազմեն այն խաչակրութեան, որ ամերիկեան դրամատիրութիւնն բարկրած է ընդդէմ Մարշ. Միւութեան:

Հըրսթի մամուլը, սակայն, չբաւականանար Մարշ. Միւութեան դէմ սուտեր ու զրպարտութիւններ տարածելով: Այդ դեղին մամուլը միջոցներու մէջ բնաւ խորութիւն չի դներ նախապաշարելու համար ամերիկեան աշխատաւորութիւնն ընդդէմ Սոցիալիստական Հայրենիքին եւ անոր պայծառ դաղափարախոսութեան: Օրերով ու չորեքներով Հըրսթի թերթերը հրատարակեցին մեծատառ եւ յատուկ չրջանակի մէջ առնուած հետեւեալ նախադասութիւնը, զոր իբր թէ գաղած էին Լենինի աշխատութիւններէն, հատոր 18, էջ 361.—

«Պրոլետարական դիկտատուրան ուրիշ բան չէ, եթէ ոչ իշխանութիւն մը հիմնուած ոյժի վրա եւ սահմանափակուած ոչնչով — ոչ մէկ օրէնքով եւ բացարձակապէս ոչ մէկ կանոնով»:

Այս նախադասութեան հրատարակութեան նպատակն էր նախապաշարել ամերիկեան գանգուածները ընդդէմ պրոլետարական դիկտատուրային, զայն ներկայացնելով բռնութիւն մը՝ ուղղած բոլոր դասակարգերուն դէմ: Բայց Լենինի յիշեալ

դրքին, յիշեալ էջին վրա այդպիսի բան գրած չէ, ընդհակառակը, մենք այնտեղ կը կարդանք.—

«ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ... ՄԻ ՄԻԱՅՆ ԲՌՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԶԻ ԸՆԴԴԷՄ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐՈՒ, ԵՒ ՆՈՅՆ ԻՍԿ ԴՐԱԽԱՒՈՐԱԲԱՐ ԲՌՆՈՒԹԻՒՆՆ ԱԼ ԶԻ» (Լենին, հատոր 18, էջ 361)։

Լենինի այս մեկնութիւնը կը խեղաթիւրեր Հըրսթեան խմբակիցներէն մէկը, «Ճիքակո Ամերիքըն»ի խմբագիրը, երբ ըսողը բանւորական պատգամաւորութիւն մը ներկայացուց իրեն, այսպէս պատասխանեց. «Դուք ինձմէ հեռքում մը չպիտի կարողանաք առանալ։ Այդ նախագասութիւնը գրած է թերթին մէջ եւ չի կարելի հերքել։ Լենինը ճող անիծեալ ըլլա։ Այս երկիրը Միացեալ Նահանգներն է, ոչ թէ Ռուսաստանը։ Մեզ նշանակութիւն մը չունի, թէ մենք Լենինի մեկնութիւնը չհասկանայինք ենք, թէ ոչ...»։

Հըրսթեան վարչաձեւութիւնը չի սահմանափակիր միայն մեկուկի մէջ։ Հըրսթ եւ իր բազմաթիւ գործակիցները կ'օգտագործեն ատոնք՝ թունաւորելու համար ամերիկեան հասարակութեան մեկնութիւնը ընդդէմ աշխարհի առաջին բանւորական պետութեան։ Այս սուտ մարդիկ աննկատ չեն թողած նաեւ սրճեման, բանը, նկուղային ու զբոսավայրերը։

1935 թ. Յունուար 5–ին, Վիլիըմ Ռանտոլֆ Հըրսթ, 70–ամեայ այս փաչխառը, երեսուսարդ եւ դեղնիկ Մերիըն Տեվիսի այս վաւաշոտ սիրահարը, սեռային բարոյականութիւն քարոզող՝ բայց սեռային անբարոյականութեան մէջ թաղած այս հնամոլը, ելոյթ ունեցաւ ատենոյն վրա եւ յայտարարեց՝ «Խորհրդային Միութիւնը ահաւոր անկում մըն է»։ Բայց չարաթ մը վերջը, Յունուար 14–ին, Հըրսթի թերթերուն եւրոպայի ամենանշանաւոր թղթակիցը, Հ. Ռ. Նիքըրպոքըր, «Նիւ Եորք Ճըրնըլ»ի մէջ գրեց. «Խորհ. Միութիւնը անհրկեպայ ամրացուցած է իր տնտեսական դիրքը։ Բոլշեվիկները յաջողապէս հասած են իրենց առաջին նպատակին՝ հնգամեայ ծրագրի իրագործման։ Ռուսիոյ ներտարաբնեստը այն աստիճան զարգացած է, որ եթէ հարկ ըլլա, կարող է շարունակել ու կատարելագործել զայն, առանց արտաքին աշխարհի օգնութեան։ Սա կը նշանակէ թէ բոլշեվիկները անգործութիւնը ոչնչացուցած են»։

Հըրսթ նոյն ատենո–ելոյթին ժամանակ ոգեւրեպրականօրէն բսաւ. «Սովը միայն կը տիրապետէ բովանդակ Ռուսիոյ վրա»։

Իսկ պր. Նիքըրպոքըր, Հըրսթի սեփական թղթակիցը, չարաթ մը վերջը գրեց. «Բոլշեվիկները տպաւորիչ սկզբնաւորութիւն մը ունեցան՝ դէպի կատարելագործումը երկրորդ հնգամեայ ծրագրի գլխաւոր նպատակին, այսինքն՝ կրկնապատկեցին ուտեստի պաշարը, եռապատկեցին ըսպառման ապրանքներու բանակը եւ շարունակեցին երկրի ճարտարարեստականացման ընթացքը»։

Որքա՜ն հակառակ են Հըրսթի ըսածները եւ իր թղթակցի գրածները։

Խորհրդային Միութիւնը սուտերով ու խեղաթիւրումներով վարկաբեկելու իր աշխատանքին, վ. Ռ. Հըրսթի ձեռքն է Լենինի աբժանատոր յաջորդի, ներկա ժամանակներու բանւորական ամենամեծ առաջնորդի՝ Ստալինի նկարագիրը սեւացնել։ Հըրսթի թերթերը կ'աշխատին ցոյց տալ Ստալինը որպէս անգութ բռնակալ մը, որ իր անձնական շահին համար կը հալածէ, կը կողոպտէ եւ կ'սպրկացնէ «անօգնական ռուս ժողովուրդը»։ Հըրսթի այս գաղտնի սուտը հերքելու համար ուրիշ ապրիւրներու դիմելու կարիք չկա, բաւական է առնել նոյն Հըրսթի «Ճիքակո Ամերիքըն» թերթի 1932 թ. Սեպտեմբեր մեկի թիւը, ուր խմբագրական յօդուածի մը մէջ բոլորովին տարբեր կերպով ներկայացած է Ստալին։ Այնտեղ ըսած է.— «Ստալինը, որ կարող է միլիոնաւոր ռուպլիներ մսխել մէկ տարւան մէջ, կամ կարող է միլիոնաւոր ռուպլիներ արտասահման ուղարկել իր ապագա ապահովութեան համար, ինչպէս Սպանիո բագատորը եւ այլ երկիրներու տէրերն ըրած են, Ստալին պարզապէս կը գոհանա միջակ գործատորի մը կեանքը վայելելով։ Երեսուն եւ հինգ տարի Ստալինի մտքին մէջ միայն մէկ խորհուրդ կար, որուն գոհեց իր երիտասարդութիւնը, ապահովութիւնը, առողջութիւնը, կեանքի բոլոր պարգեւները, ոչ թէ կառավարելու նպատակով, այլ այն նպատակով, որ իր խորհուրդներուն համապատասխան կառավարութիւն մը ստեղծէ»։

Այս ողղերը գրած են երեք տարի առաջ։ Բայց այսօր Հըրսթի թերթերը հիմովին տարբեր մտքեր կը յայտնեն մեծ Ստալինի մասին։

* * *

Հըրսթի հակահոսրդային արշաւի մասին երկար ծանրանալ հարկ եղաւ, որովհետեւ Ամերիկայի մէջ ներկայիս ան է ֆաշիզմի զրօշակակիրը։ Բայց Հըրսթէն անմիջապէս յետո կուգա մելիոնատէր ուրիշ հրատարակիչ մը, որ նոյնքան նենգ արշաւ մը կը մղէ աշխատաւոր դասակարգին դէմ։ Այս թիւ երկու ֆաշիստը կը կոչուի Պերնար Մաք–Ֆեատըն, յետոյ ու զրպրիչ գրականութեան փերեզակը։

Հըրսթ եւ Մաք Ֆեատըն աշխատանքի բաժանում ըրած են իրենց միջեւ։ Երբ առաջինը իր արշաւի թափը ուղղած է Սորհ. Միութեան դէմ, երկրորդը՝ կը ջանա թումբ կանգնեցնել Ամերիկան հեղգզղող խորհրդային զաղափարաբանութեան դէմ։

«Կախեցէք գաւաճանները» կ'ազդարարէ Մաք Ֆեատըն, մասնացոյց ընելով զինակից բանւորները, Խորհրդային Միութեան բարեկամները եւ բոլոր անոնք, որոնք թշնամի են գրամատիրական շահագործութեան դրութեան։

Ցնծալով Հըրսթեան սուտերու վրա, Պերնար Մաք Ֆեատըն կրակ կը տեղա առելի բոլշեվիկեան դէմ, որովհետեւ, ի՛րաւ, «կը թունաւորէն մեր

դպրոցները», «ի՛այլասերեն իր կազմաւորման մէջ եղող մեր երիտասարդութիւնը»:

Ո՞վ է, սակայն, ամերիկեան երիտասարդ սերունդի այս ասպետական պաշտպանը: Ան դատապարտած վերնակ մըն է պոռնիկպրութեան համար, դատապարտած՝ դրամատէրերու գաղնակցային դատարանէն: Ան մէկն է, որ անբարոյական պատկերներու եւ սեռային զրկիս պատճառող գրականութեան վաճառքով մէլիոնատէր է դարձեր: Ան մէկն է, որ սիտեմատիկօրէն այլասերը է ամերիկեան պատանիներն ու աղջիկները: Ան մէկն է, որ պղծեր է «իր կազմաւորման մէջ եղող մեր երիտասարդութեան» միտքն ու հոգին:

Պր. Մաք Ֆեւսըն այն ցած արարածն է, որուն լսածներն ու դրածները նոյն իսկ չէրցան մարսել ապահանած կապիտալիստական դատարանները: Լսեցէք Միացեալ Նահանգաց Դաշնակցային Դատարանի վճիռը ընդդէմ Մաք Ֆեւսընի.—

«Մեղադրեալը դատապարտած է բաւարար փաստերու հիման վրա··· պատմութիւնը, որու հետեւանքով դատապարտած է ան, թելադրականօրէն գէշ, անառակ եւ ցոփ է··· ան պարզօրէն կը հայթայթէ սաստիկ գրգռիներ···: Ֆիզիքական մըշակոյթի մասին շարք մը յօդուածներ··· որոնց չէ կարելի մաճուր վկայական տալ, ինչպէս նաեւ շարք մը ծանուցումներ եւ գրութիւններ, որոնք կը գտնուին այնտեղ՝ (Մաք Ֆեւսընի թերթին մէջ)··· կարող են անչափելի վնասներ յառաջացնել, որովհետեւ երիտասարդներու մէջ կարդացելու նպատակով գրած են անոնք···: Մենք վստահ ենք, թէ այս հրատարակութիւնը ցոփ, անառակ, գրգռիչ եւ վաւաշոտ է··· Զգտումն է ապականել եւ պղտորել»:

Ահաւասիկ այն կարծիքը, որ ունին նոյն իսկ կապիտալիստական դատաւորները Պերնար Մաք Ֆեւսընի եւ իր տարածած գրականութեան մասին:

Եւ այս մարդն է, որ այսօր Հըրսթի հետ հրապարակ իջած է կռուելու Միջերկրային Միութեան եւ բոլշեվիզմի դէմ, բոլոր ազնիւ ու յեղափոխական բաւարներու դէմ, որոնք իրր թէ «ի՛այլասերեն երիտասարդութիւնը»:

Հըրսթ եւ Մաք Ֆեւսըն նեղկայացուիչներն են այն տարրերուն, որոնք կատագի ու մոլեգին թշնամութեամբ լեցած են Միջ. Միութեան դէմ: Ամերիկեան գրամատիրութիւնը Հըրսթին եւ Մաք Ֆեւսընին բարձր մարդիկ չունի, որ իջէ իր հակահոգեվարքային արշաւին: Աշխատաւորները ծանօթանալով անբարոյականութեան ու կեղծաւորութեան, սուտի ու գրպարտութեան այս երկու ապահովներուն՝ ծանօթացած կ'ըլլան Սոցիալիստական Հայրենիքին մէւս բոլոր թշնամիներուն — Ֆիշին ու Վալըն, Բակլինին ու Լոնկին, Տիքսթայնին ու Մաք-Քոմիքին, Հուվըրին, Վեյլընին, Օ՛Ռայլընին եւ Իլլիին:

* * *

Ամերիկեան Փաշիզմի կատագը արշաւը Միջ. Միութեան դէմ, եւ ամեն բանի դէմ, որ կապած է այդ մեծ ու զեղեցիկ երկրին հետ, աննպատակ արշաւ մը չէ: Միջ. Ս. Միութեան դէմ ուղղած բոլոր հարձակեալները կը հետապնդեն նպատակ մը, այն է՝ նախապատրաստ եւ թշնամական մտայնութիւն ստեղծել դանգուածներու մէջ՝ զէնքացնելու համար բանւորական հայրենիքին դէմ նիւթող իմպերիալիստական պատերազմը:

Երբ Հըրսթը Ամերիկայի մէջ կատագի արշաւ կը մղէ ընդդէմ Միջ. Ս. Հ. Մ.ի, նոյն բանը կ'ընեն Լորա Ռոթերմերը Անգլիա մէջ, Կէօպէլսը՝ Գերմանիա մէջ, Մուսոլինին՝ Իտալիա մէջ, բոլոր երկիրներու զեկավար Ֆաշիստները իրենց տեղերուն մէջ: Միջազգային համագործակցութիւն ըստեղծած են խիթերիալիստները եւ անդադար պատերազմ կը հրահրեն Միջ. Ս. Հ. Միութեան դէմ, որովհետեւ, ինչպէս այս յօդուածի սկիզբը ըսեցինք, Միջհ. Միութիւնը այն լուսատու եւ պայծառ փարոսն է, դէպի ուր կ'ելքեան բոլոր երկիրներու տառապող աշխատաւորները փրկելու համար զրամատիրական չահագործութենէն:

Դրամատիրութիւնը վճռած է ամեն գնով խափանել, մթագնել յուսատու այդ կարմիր փարոսը, որովհետեւ ան ցոյց կուտայ չահագործութեան անարդ սիստեմի ոչնչացման եւ աշխատաւոր զանգուածներու ազատագրութեան ճանապարհը:

Բոլոր երկիրներու եւ ազգերու բանւորներն ու դիւցազնները, բոլոր չահագործուղ եւ տարկացուած մարդիկ, բոլոր անոնք, որ բարգաւած կեանքի մը եւ երջանիկ մարդկային ապագայի մը կը ձգտին, պէտք է միացնեն իրենց ջանքերը դրամատիրական այս նենգ դաւը ի դերեւ հանելու համար:

Հըրսթ դաշինք է կնքեր Հիթլերի հետ եւ պատերազմ կը պատրաստէ մեր աշխատաւորական հայրենիքին դէմ: Պոյքոթ պէտք է յայտարարել Հըրսթի մամուլին դէմ, նաեւ բոլոր այն թերթերուն դէմ, որոնք իրենց ներշնչումը կ'առնեն Հըրսթէն:

Ամերիկահայ աշխատաւորները պատասխանած կ'ըլլան պատերազմի հրձիգներուն, Միջ. Միութեան բոլոր փաշիստ թշնամիներուն, Վիլեամ Ռ. Հըրսթին եւ Մաք Ֆեւսընին, եթէ դանգուածօրէն մանան ՀՕԿ-ի շարքերը, անդամագրուին ՊՀԿՄ-ին եւ ամեն կերպ զօրացնեն Հայ Աշխատաւորական Միութիւնը: Ամերիկայի մէջ հայկական այս կազմակերպութիւններն են, որ բարձր բռնած են Միջհ. Հըրդային Հայաստանի վառ դրօշակը:

ԽՈՍՐՈՎ ՔԵԱԹԻՊԵԱՆ (Քարտ. Կեդր. Կրթ. Մարմնի)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ամերիկայի ՀՕԿ-ի եւ Պետական Հայ Կարմիր Խաչի (ՊՀԿԽ) նահանջներէն մէկն է նաեւ Հայ Ժողովրդական Դպրոցները, որոնք ներկա դպրոցական չրջանին սասցան ամբողջ կազմակերպած ընոյթ եւ արժանացան ժողովրդական հոգածութեան:

Ահիկ քանի մը տարի առաջ Խորհրդային Հայաստանի իրականութեամբ հետաքրքրուող տարրեր, ՀՕԿ-ի դիմաւորութեամբ, հիմնեցին գպրոցներ: Այս քայլն առնելով, անոնք համոզուած էին, որ կարելի չէ նոր սերունդը իր Խորհրդային Հայրենիքին հետ կապել առանց անոր սովրեցնելու մայրենի լեզուն եւ սիրելի դարձնելու խորհրդային մշակոյթը:

ՊՀԿԽ-ն, իր 1934-ի պատգամաւորական ժողովին, զգալի նոր սերունդը ունեցած իր պարտականութեան խոր գիտակցութեամբ, որուչեց իր մտահոգութիւնը բերել կրթական գործին, ՀՕԿ-ի հետ միասին յառաջացնելով Կեդրոնական Կրթական Մարմին մը:

Շնորհիւ Խորհրդային Հայաստանի անհնարին թափ ու յարատեւ վերելքին, շնորհիւ ՀՕԿ-ի եւ ՊՀԿԽ-ի տարած անխոնջ աշխատանքին, այդ իրականութիւնը ծանօթացնելու գաղութահայութեան, շնորհիւ մեր գպրոցներու չուրջ հաւաքուած ընկերուհիներու եւ ընկերներու, ինչպէս նաեւ անձնէր ծնողներու անթիւ զոհողութիւններուն, այսօր մեր գպրոցները պատրաստ են կոչելու Հայ ժողովրդական Դպրոցներ:

Իսկապէս ժողովրդական են մեր դպրոցները, որովհետեւ.

Առաջին.— Անոնք կը կրեն ժողովրդի սրտին ամենամօտ անուններ, ինչպէս՝ Եսայեան, Սահակ Տէր Գաբրիէլեան, Աբովեան, Միսաքեան, Շահումեան, որոնց ամէն մէկը սիրելի եւ մեզի եւ ներչնչող:

Երկրորդ.— Մեր գպրոցները կը գտաւանդեն հայերէն լեզուն, որ մեր գաղութի ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւններու հիմնական եւ ժողովրդական լեզուն է, մեր հայրենիքի պետական լեզուն է: Եւ մեր գպրոցները հայերէնը կը գտաւանդեն մանկավարժական նորագոյն մեթոտներով եւ մեր գտաւարքերու բովանդակութիւնը կը կապէ ներկա խորհրդային եւ գաղութահայ իրականութիւնը: Վկա մեր «Մայ եւ Աչխատանք» գտաւարքերը, որ ոչ միայն մեր գպրոցներու մէջ կը գործածուի, այլ յանձնարարուած է Առաչնորդարանի Ուսումնական Խորհուրդի եւ բարմաքիւ Հայ Մանաւորականներու ու մանկավարժներու կողմէ: Նպատ ժողովրդականութիւն չէ որ կը վայելեն մեր նոր յայս անուած «Գիտ եւ Աչխատանք» գտաւարքերը, որոնք կը գործածուին ոչ միայն ժողովրդական Դպրոցներու, այլ եւ բոլոր այն գպրոցներու մէջ, որոնք տակաւին ոչ մէկ կապ հաստատած են ժողովրդական Դպրոցներու Կրթական Կեդրոնական Մարմնի հետ: Մեր գպրոցները միակն են, որ ունին Խորհրդային Հայաստանի աչխարհագրութեան եւ պատմութեան գասընթացքներ, գասընթացքներ, որոնք մեր պզտիկներու մէջ նախախորհրդային պատմութեան ատեղծած տարաբնոյթ պատմութիւնն ու տեղ կը մչակեն յաղթական հայրենիքի հպարտութիւնը: Այսու ամենայնիւ մենք անտես չենք ըրած նախախորհրդային պատմութիւնը, անցեալի յատկանչական տարրերն ու փայլուն դէպքերն եւս մեր սերունդի սիրտը կանուխ զարձնելու համար:

Երրորդ.— Անոնք այլ եւս չեն պատկանիր ոչ ՀՕԿ-ին եւ ոչ ալ ՊՀԿԽ-ին, այլ այն ծնողներուն, որոնք բարեսիրտ եւ իրենց զոհողութիւններով յատուկ կը մղեն զանոնք: Այնպէս ըլլալով նաեւ ուսուցիչ մը, մեր այս գպրոցներէն մէկուն մէջ, չեմ կրնար չխանգավառիլ եւ չնորչակալ այն նուիրումին եւ հոգածութիւնին, զոր Հայ ծնողները ցոյց կուտան ժողովրդական Դպրոցներու հանդէպ:

Ինչէն է գաղտնիքը, որ ամերիկեան վարժարաններու օրական վեց-եօթ ժամ գաստիարակչին կանքէն յետո մենք կը կարողանանք մեր պզտիկները կրկին գասարան մղնել — հայերեւոր մը զոնեւորով հետու իրականութեան մը մասին ծանօթութիւններ տալու, սովրեցնելու լեզու մը, որ երեխան պիտի գործածէ ընտանեկան նեղ չրջապակի մը մէջ միայն: Երբ առաչին անգամ փոքրիկը գասարան կը մանէ, գաղտնիքը իր ծնողներուն զգալ Խորհրդային Հայաստան ունեցած հետաքրքրութիւնն ու սէրն է: Երբ փոքրիկը կը չարունակէ յաճախել գասարան, գաղտնիքն այն է, որ ան կ'ողեւորուի Հայաստանի խորհրդային իրականութեամբ, խորհրդային երեխաներու կեանքով: Այդ կը նչանակէ նաեւ, որ մեր ուսուցիչները պիտի չհամելի գարձնել գասատուդութիւնը:

Կատարեա՞լ են մեր դպրոցները:

Երբեք:

Մենք ունինք բացեր. օրինակ՝ մենք չունինք տակաւին Խորհրդային Հայաստանի պատմութեան եւ աչխարհագրութեան գասագրքեր, մեր հին պատմութեան վերարերեալ արդիական գասագրքեր, որ հիմնուած ըլլա վերջին տասն եւ հինգ տարուան ընթացքին Խորհրդային Հայաստանի պատմաբաններու եւ գիտնականներու անկաչկանդ յայտնարերումներու վրա: Շատ տեղեր մենք չունինք գպրոցները չեն բաւարարուած մանկավարժական ուժով տարրերով. մենք հնարաւորութիւն չենք ու-

նշյած օժանդակելու մեր դաստիարակիչներուն բարձրացնելու համար անոնց մանկավարժական մակարդակը: Թէ՛ յաջած ենք մեր դաստիարակիչներու թոշակները վճարելու գործին մէջ: Տնտեսական ապահով վիճակ ստեղծել դաստիարակիչներու համար, մեծ նշանակութիւն ունի ժողովրդական Դպրոցները զարգացնելու տեսակէտէն:

Ուշ տարրական դպրոցի մէջ դասաւանդելու համար ուսուցիչ մը տարիներու նախապատրաստութիւն կ'անկնկալի: Անհրաժեշտ է, որ մեր ուսուցիչներն ու ուսուցչուհիները մեր դպրոցներու յատուկ մանկավարժական հմտարիկ մը ունենան, տարին գոնէ մէկ քանի ամիս դասընթացք անցնելու: Անոնք պէտք է ունենան տարեկան համադասմարներ իրենց փորձառութիւնները իրարու փոխանակելու եւ դէկոյցներ լսելու իրենց դասերու հետ կապած նիւթերու մասին: Կարելիութիւններ պէտք է ստեղծենք անոնց հետեւելու Խ. Հայաստանի առօրեային, որ այնքան արագօրէն եւ հակայաքայլ կ'ընթանայ դէպի այն հասարակարգը, ուր մանուկը պէտք է աշխատի խելացի պայմաններու տակ եւ պէտք է հասնի իր ընդունակութիւններու լիակատար զարգացման կարելիութեան:

Այնու ամենայնիւ, հակառակ այն իրողութեան որ մեր ուսուցիչներն ու ուսուցչուհիները այս դիւրութիւններէն ի սպառ զրկած են եւ ունին սահմանափակ նախապատրաստութիւն, կրցած են խանդավառող արդիւնքներ ձեռք բերել իրենց դպրոցներու մէջ: Այդ կը պարտինք մեր ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու զէպի մեր հայրենիքը տածած խորհրդային հայրենասիրութեան եւ իրենց ստանձնած պաշտօնի հանդէպ իրենց ցոյց տուած նւիրատուութեան:

Յարգանք մեր այս զաղափարի մշակներուն:

Կեցցէ ՀՕԿ–ը, որ նախաձեռնողը եղաւ կրթական այս մեծ չարժումին:

Կեցցէ Պ.Կ(բ)Ն–ն, որ իր մտանկցութեամբ սատարեց կրթական այս մեծ չարժումը ժողովրդականացնելու:

Կեցցէ Խորհրդային մեր մեծ Հայրենիքը, որու իրականութեան ծնունդն է Հայ ժողովրդական Դպրոցը:

ԱՌԱՔԵԼ ԹԱԹԵԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յանձին Ամերիկահայ երաժշտական Միութեան, առաջին անգամ ըլլալով, մենք կ'ունենանք կամշակերպութիւն մը, որ կարող պիտի ըլլա լուրջ նւաճումներ ձեռք բերել չնորհիւ ուժերու համախմբման եւ ծրագրւած գործունէութեան:

Երաժշտական կամշակերպւած գործունէութեան նախընթաց չունենալով, քիչ թէ շատ պատրաստւած ուժերու հաւաքական գործունէութիւնը ապահովելը մեր առաջին դժուարին խնդիրն է այսօր:

Առ հասարակ Հայ երաժիշտները, ըլլան անոնք մտնուպէտներ կամ սիրողներ, իրենց արւեստը մշակած են եւ զարգացուցած ոսկական իրենց անհատական ոյժի սահմաններու մէջ եւ չեն կապրցացած միմեանց հետ գործակցութեան գիտին տեղծել: Այդ իսկ պատճառով պէտք է յաջողութիւն նկատել այն հանդամանքը, որ մինչեւ հիմա կարողացած ենք մեր շուրջ հաւաքել երաժշտական տարրեր ոյժեր, սակայն գիտակից ու խոսամնալից կորիզ մը:

Կամշակերպւած երաժշտական գործունէութեան բնձեռած առաւելութիւնները եւ տալիք անհամեմատելի արդիւնքները բնականաբար ժամանակի ընթացքին երաժիշտներու աւելի աւտար թիւ մը պիտի կապէ Ամերիկահայ Երաժշտական Միութեան:

Մեր Միութեան գործունէութիւնը, սկզբնական շրջանին, բնականաբար պիտի ըլլա երգչախումբեր կազմել:

Կարեւոր է հակիրճ կերպով տալ այդ ուղղութեամբ մեր ձեռք բերած արդիւնքները:

Սակի առաջ անհատ խմբավարներու ջանքերով կազմակերպւած երգչախումբերը, ընդհանրապէս, եղեր են քոյլ եւ կարճատեւ: Միայն խմբավարի անհատական նախաձեռնութեամբ կամ հաւատացէք օգնութիւնով կազմակերպւած երգչախումբերը զուրկ ըլլալով երաժշտական հմտնական դաստիարակութենէ, նկատելի թիւով կազմերը չեն ուած եւ երբ խմբավարը հեռացած է կամ հանգիստւոր տարիքը անցած, արդէն երգչախումբըն ալ անգործութեան դատապարտւած է:

Այս մենք գիտենք մեր սեփական փորձով: Ընկերը Գ. Սիւնիի անխոնջ ջանքերով կազմակերպւած երգչախումբերու մեծ մասը, յորելեանական նւո ու պեհ յիտս, դադրեցան գործօն հանգամանք մը ներկայացնելէ:

Մեր երգչախումբերը, մէկ քանիներու բացառութեամբ, միայն հանդէսներու պատրաստին եւ բեմեան եկած են միաձայն, երբեմն բազմաձայն երգեցողութիւն տալու հանդիսականներուն: Եթէ նկատի առնենք նաեւ այս խումբերու յաւատարիմ սահմանափակութիւնը, կրնանք վստահ ըլլալ, որ դադրեցած երաժշտական սպասարկութիւնը բաւարար ըլլալէ շատ հեռու է:

Երգչախումբերու որակաւորումը, երաժշտական Միութեան երկրորդ կարեւոր խնդիրն է: Երգչախումբերը երաժշտագէտ խմբավարներով օժտելը, զեկավարական չնորհք ունեցողները յա-



ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԴՐԻԳՈՐ ՍԻՒՆԻ

Որուն Քառասնամեայ երաժշտ. Գործունէութեան Յորելեանը՝ Անցեալ Տարի Մեծ Շուքով Տօնուեցաւ Ամերիկայի Հայաշատ Քաղաքներուն՝ Ինչպէս Նաեւ Երեւանի Մէջ

ամէ քաշելը, որոշ չափով պիտի լրացնէ այդ պահանջը:

Երգչախումբերը օրակարգելու տեսակէտէն ձայնապրութեան եւ երաժշտական նախնական պահանջներու խմբական դասաւանդութիւնը կարելի չէ թերագնահատել: Որպէսզի յանգաժային դասախօսականութեան այս ձեւը մեզի կրնանք խուսափ անդամները պատրաստել օրակարգ երգեցողութեան համար, եւ պիտի գիւրացնենք երգչախումբերու մէջ ներգրաւումը երգելու չնորհք ունեցող նոր տարրերու եւ միաժամանակ ամէն պիտի առնչենք մեր երաժշտական յայտարերը ընդլայնելու:

Միջերգային Հայաստանի երաժշտագէտները հետաքրքրութեամբ կը հետեւին մեր երաժշտական գործունէութեան: Մենք արդէն սկսած ենք յարաբերութիւն մշակել Միջերգային Հայաստանի երաժշտական հաստատութիւններուն հետ, որ մեզ կ'ապահովէ օգտակար անոնց երաժշտական նեամուներէն եւ ցուցմունքներէն: Անոնք մեզ կը խոստանան հայկական երգեր երաժշտական լաւագոյն տեղամշակութիւններով: Այդ արդէն կը նշանակէ, որ մենք չատ մօտ առնչէն պատեհութիւն պիտի ունենանք մեր երաժշտական յայտարերը ճոխացնելու:

Մեր Միութիւնը իր գործը պիտի չսահմանափակէ իր սեփական երգչախումբերու գործունէութեամբ: Ան պատրաստ է ակնկալել ՀՕԿ-է, Գ. Հ. Կ. Միչի կամ դպրոցներու նախաձեռնութեամբ կազմակերպուած չափահասներու եւ կրտսերներու յատուկ երգչախումբերուն:

Ի վերջո, նկատի ունենալով որ մեր երգչախումբերը կոչուած են ըլլալու Ամերիկայի երաժշտական գործունէութեան գաշտերը, կարեւոր նոնք իրենց մշակութային արժանի բարձրութեան վրա դնելու համար, մեր Միութիւնը կը յատուկ ուժերու համակերպոնացում եւ իր երաժշտական ապագայութիւնը կը արամադրէ խորհրդային Հայաստանեան եւ ժողովրդական բոլոր կազմակերպութիւններուն:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

Կ· ՍԻՏԱԼ

ԱՄԵՐԻԿԱ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԵՂՕՆ

Ամերիկա՛,
լուսաշող ես ու գովական մի երազի նման շքեղ,
չքնաղ իրանդ մշուշաբոյ փոքր ես ջինջ ու դիւթական,
երկու ովկիան կը փայփայեն անծայր ափերդ հրաշագեղ,
կը շողշողան հազար գետերդ որպէս պարան արծաթանման:

Ամերիկա՛,
տեսեր եմ ես լեռները քո կանաչ հագած եւ ծաղկազարդ,
քո հանդերը՝ նորահարսի ծոցի նման քաղցր ու բեղուն,
դաշտերը քո՝ ծովերու պէս ոսկեծածան ու բերքառատ,
եւ ճամբաներդ՝ հազար ձեւով, հազար թեւով ճգւած հեռո՛ւն:

Ամերիկա՛,
անծայրածիր անտառներուդ հողմածփուն պա՛րն եմ տեսած,
եւ անսպառ քո հանքերու գանձերն հարուստ, յաւերժական·
տեսեր եմ մեծ քաղաքներուդ շէնքերն ահեղ, երկնասլաց,
գնացքներուդ երկաթագիծ ցա՛ցցն անհամար ու անվախճան:

Ասերիկա՛,
տեսեր եմ ես գործարանի թաղերը քո հսկայական՝
ելած հզօր բերդերու պէս, անտառներու ելած նման·
տեսեր եմ քո Նիագարան — ամբարն ուժի, գեղեցկութեան,
բանակի՝ անթիւ բանւորներուդ, թափը անոնց, ուժն ու մկան:

Ամերիկա՛,
բնութիւնը տուեր է քեզ այնքա՛ն դիւթանք, երգ ու ծիծաղ,
այնքա՛ն գանձ է թափեր ծոցդ, այնքա՛ն բարիք, ուժ ու կրակ,
որ կեանքն ամբողջ կրնար դառնալ յաւերժօրէն խնդում եւ խաղ –
մի մեծ համերգ եւ սաւառնում եւ կառուցում եւ յաղթանակ:

*
* *

Մռայլ որպէս ամպոտ գիշեր, ցաւառ ինչպէս մի վէրք դաժան
կեա՛նքն է եղած արեւիդ տակ եւ քո հողի վրա ծաղկող·
իշխողներու չար մի վոհմակ — անկուշտ ու վատ որպէս գազան՝
յափշտակած է ամեն բան — եւ ծի՛լ ու գանձ, եւ հաց ու շող:

Եւ ստրուկներ հողի, հանքի ու բանւորներ գործարանի,
եկած բոնի կամ կամաւոր բոլոր երկրի չորս ծագերէն,
շառաչին տակ գոռ տէրերուդ արիւնաքոր խարազանի,
ի՛նչ կերտեցին շա՛տ գերազանց «հազար ու մէկ գիշերներ»էն:

Ո՛ւր որ նահին էր ու մացառ, շէնքեր ելան ամպերու հետ,
հո՛ն, ուր ժայռ էր անմատչելի, անկից անցաւ բանուկ նամբան.
եւ բարձրացան բեռնշոգ ու պայտաձգերու մէջ հոտաւէտ,
որ տէրերու վայելքին մնա միշտ անրաւեր ու անխափան:

Իսկ ան՛ուճ որ չինեցին ժամ ու գործարան ու ֆաբրիներ.
Եւ ան՛ուճ ոչ տնկեցին շատ այգի, ծաղկոց եւ մրգաստան,
մութ հանքերէն հանեցին լոյս, ուժ ու մարմար ու մետաղներ.
անոնց համար երա՛զ մնաց մարդավայել ապրիլն անգամ:

Եւ անթի՛ւ են այդ գրկւածներ — բազմամիլիո՛ն ու վիթխարի,
այդ անքաժին ու գործազուրկ բանւորներու հզօր բանակ
հիմա ելած է մարտական զօրակոչի ու պայքարի,
եւ կը դիմէ կուռ շարքերով դէպի կռիւ եւ յաղթանակ:

*

* *

Ամերիկա՛,
նոր կենցաղի եւ ֆե՛զ համար է երբը մեր եւ մեր պայքար —
ֆո դաշտերու եւ սարերու անպատմելի թովիչն համար,
ֆո ծովերու եւ ջրերու կենսաւորոգ երգին համար,
ծաղիկներուդ, զեփիւռներուդ եւ օրերուդ փառին համար:

Ամերիկա՛,
Մայիս Մէկի մեր մեծ տօնին դո՛ւ անմման եւ դիւթիչ ես,
դաշտերդ հագեր են գարնան ֆո ցօղափայլ վառ պատմուճան,
ծառերդ ծաղկեր են գունագեղ մեր դրօշակի, յոյսերու պէս,
եւ ջրերդ կ'երգեն այսօր մեր ռազմերգներն որոտաձայն:

Ամերիկա՛,
մեր սովետի եւ ֆե՛զ համար պիտի վարենք մենք այս պայքար՝
ահեղ որպէս Նիագարան, անգուսպ նման այն ջրերուն,
ու շարքերով ինչպէս անտառ եւ երգերով մեր խանդավառ
պիտի տանինք կարմիր դրօշակ դիրքերու վրա մեր թշնամուն:

Ամերիկա՛,
երբ առջեւէն մեր գրոհին իյնան տէրերն — իրենց բանակ —
ինչպէս ամպեր որ մըրիկէն կը խորտակւին պատառ-պատառ,
եւ երբ ծագի նոր կենցաղի եղբայրական մեր արեգակ՝
անդասակարգ ֆո երկնքի հորիզոնի վրա պայծառ,

Ամերիկա՛,
պիտի կոչենք ֆեզ նոր կեանքի, մեծ վերելքի մեր հայրենիք
եւ մեր կամքով ստեղծագործ եւ մեր պողպատ բազուկներով
պիտի կերտենք հազար անգամ ֆեզ հռչակապ ու գեղեցիկ,
եւ դարէ դար պիտի ծաղկիս մեր յաղթութեան դափնիներով:

Ապրիլ, 1935

Ֆիլատելֆիա, Փա.

Կ· ՍԻՏԱԼ

ՀԱՏԻԱԾՆԵՐ "ԱՆՀԱՍ ԲԱՐՁՈՒՆՔ" ԷՆ

Դ·

Սարի զառ լանջին գիւ՛ղն էր կծկւած·
Գետնափոր տներ — տրտում եւ անհաց·
Գիւղը՝ լաց, արիւն, գիւ՛ղն էր տառապանք՝
Ուր եւ՛ կեղեքում եւ սարսափ էր կեանք:

Տաշւած քարերէ՝ մեծ բերդի նման՝
Ժա՛մն էր բարձրացեր տիրող ու դաժան·
Այնտեղ Աստուծո կամքովն անյեղլի՝
Տէրտէրը կ'օրհնէր լուծր իշխողի:

Եւ գիւղի վերեւ — մի բլրի կատար
Բեկի մեծ տունն էր կանգներ վեհափառ·
Շէն ու ահագին, քարիւոով առատ
Նեղն գիւղի վերեւ բազմեր էր հաստատ:

Տուն չէր այն կարծես — պատի՛ժ անվախճան
Գիւղացու մէջքին նստած անբաժան·
Եւ որպէս վիշապ ծածկեր էր արեւ
Եւ պատ աղրիւրի եւ կեանքի վերեւ:

Ագահ մի տո՛հմ էր տունն այդ ժառանգած
Եւ գիւղն ու դաշտերն այդ յայնատարած·
Դառնըն կը դատէր մի ողջ ժողովուրդ
Պահելու համար տունն այդ անյագուրդ:

Ծնած առաջին գառը բեկին էր,
Բեկին էր հարսի առաջին գիշեր·
Անոր էր բերքի էն խոշոր բաժին,
Եւ շատն ու ընտիրն բրդին ու գաժին (*):

Թի՛ւ, համրանք չունէր հօտն անոր անծայր·
Անո՛րն էր ջուրը եւ արօտն ու սար·
Ցորենի արտերն հարուստ եւ յուրթի —
Իսկ գեղջկին՝ միայն հողերն անջրդի:

Այդ գիւղը ունէր երկու ժողովուրդ —
Մէկը՝ հայ գեղջուկն ու միւսն՝ անբախտ բուրդ·
Երկուքն ալ տեսած գրկանք անյատակ
Վայրագ տէրերու բիրտ կրունկի տակ:

Երբոր հանդիպէր գայլ, գող կամ ասկեար
Բուրդ կամ թէ հա՛յ — բնաւ հարց չէր տար·
Երկուքն ալ գրկած, թշւառ դրացի —
Վէրքերով հարուստ եւ առանց հացի:

(*) Գաժ — չուռ այծի մեռաքանման մազը:

Կ· ՍԻՏԱԼ

Եւ տէրտէրն ու բեկն ու ռեսն ու մոլլան
Կ'ըսէին երգեր վրէժի եւ արեան·
Որպէս զի համայնքն այդ խեղճ ու անհաշտ
Դառնար կեղեքման լայն ու յարմար դաշտ:

Շարունակ կախած մէկ մէկու դէմքէն,
Նո՛ր վէրքն ստացած ու՛ր անգութ ձեռքէն՝
Չէին գիտեր թէ ու՛րկէ կամ ինչպէ՛ս
Այդ ոխն էր դիզեր Արեւս սարի պէս:

Է·

Գիշերն էր ճգեր թովիչ ու պայծառ՝
Արեւս սարերուն որպէս մի կամար·
Այնտեղ, մի գլգլան աղբիւրի ակին
Գիւղի հայ պետերն հաւաքեր էին:

Եկեր էր հայդուկ մի խումբ զինավառ՝
Գիւղի հայերը զինելու համար·
Եկեր էր ռեսը, տէրտէրն էր եկեր,
Այնտեղ էր գիւղի ամեն ազգասէր:

Խմբապետն ելաւ՝ փափախը գլխին՝
Եւ ուսէն կախած շողշողուն մոսին —
«Եղբայրնե՛ր, կանչեց, դեռ բանի՛ տարի
«Գազան թիւրքին ձեռ մեռնի՛ մենք գերի:

«Ռումէնն ու բուլգարն, յոյնն ելան ոտքի,
«Փշրեցին լուծր արիւնոտ թիւրքի·
«Լոկ մե՛նք մնացինք գերի ու թշւառ
«Մեր ինչքը թողած բրդերուն ետեւ:



Ա. ԿՈՐԳԻ
Ապստրակտ Նկարչութեան Յայտնի Մէկ Ներկայացուցիչը՝ եւ Իր Գործերէն Երկու Նմուշներ
Կորգին Այս Ցարի Կը Նկարագրէ Պենետ Օդանաւային Կայանի Դիլետանտ Շէնճի Պատերը: Վարի Նկարը Մէկն է Այդ Շէնճի Որմանկարներէն:



«Զարկինք խանասոր, թուն դալ Սասուն,
«Աշխարհը հնչեց հայդուկի անուն·
«Մենք ուժով առինք բանկը օտոման —
«Հայերուս հուչակն ցնցեց Եւրոպան:

«Ոտքի կը կանգնին Մուշ, Կարին ու Վան,
«Ըռուսը կուգա մեզի օգնութեան·
«Ին մեր բաջերու արդար արիւնով՝
«Կ'առնենք Հայաստան ծովէ մինչեւ ծով···»

Յուզմունքի ծո՛վ էր որ հալա կարծես·
Կուրծքերն ուռեցան մէկ մէկ սարի պէս·
Տէրտէրը յուզած ու ջերմ կ'աղօթէր —
«Հայի Աստուածը ձե՛զ պահէ, բաջեր»:

Եւ շարունակեց Հայդուկը կրկին·
«Բասեն հրացան մեր գիւղի բաժին·
«Թող եգնե՛ր ծախէ, ո՛վ որ ե՛զ ունի·
«Ոչխա՛ր թող ծախէ, ով որ ե՛զ չունի,

«Թող ցորե՛ն ծախէ, ով չունի ոչխա՛ր
«Ես գնէ իրեն մի գէնէ փրկարար·
«Ձեր հոգուն մեռնիմ, ձմեռը չեկած
«Թող այս իմ պատէրն լինի կատարած»:

— «Դու՛ անհոգ եղիր, հերոս անվեհեր»,
Ձայնեցին ռեսը, բաջերն ու տէրտէր·
«Կեցցէ՛ Հայ բանակն ու ազատութի՛ւն,
«Կեցցէ՛ հայկական յեղափոխութի՛ւն»:

— Խմբապե՛տ, ըսաւ հովիւն ալեւոր,
Դպրոց չեմ տեսած եւ չեմ կարդացուր,
Գուցէ ա՛յդ է որ խելքը չոքանի
Ձի հասնիր երբեմ այսպիսի բանի:

Երկիրն այս, որ շա՛տ, շատ հին ժամանակ,
Հայոց արքայի հողն էր անմահական·
Հիմա կը պահէ երեք ժողովուրդ —
Մէկը՝ մեր հայը եւ տանիկ ու Քուրդ:

Կ'ըսես որ ծանր է լուծը Օսմանի,
Որ մենք կը դառնենք — թիւրքը կը տանի·
Բայց ես տեսնեմ եմ ամե՛նին են բշտառ —
Ո՛վ որ գեղջուկ է եւ գրկած ռենջպար:

Կը տեսնեմ ծանրը հարկի, պարտքի տակ
Բոլորն անօթի եւ ձեռքը՝ դատարկ·
Ի՞նչ պիտի ընէ հայ մեծատունը,
Որ չէ կառարած թիւրք թագաւորը:

Մէկ է մեր դատը, մէ՛կ է մեր վարը,
Մէկ է մեր ցաւը, մէկ է մեր ճարը·
Ինչո՞ւ վերցնենք գէնէ մէկ մէկու դէմ,
Ինչո՞ւ մենք վառենք նոր կռիւ ու բէմ:

Մեր թշնամին են բեկն ու հաղատէր,
Տանիկ մեծատունն ու հայ փողատէր·
Իսկ ամեն ազգի մշակն ու ռենջպար
Մեզ՝ գէնիի ընկեր եւ դատի եղբայր:

Որու՞մն է երկիրն եւ որու՞մն կուտամ
Մեր ինչի՞ն է պէտք տէրութիւն եւ փառք,
Երբ նորէն մտած էրտիներ ու արիւն
Նայն հարկն պիտի տանիմ մեր հայ տէրերուն:

Մեծերու կռի՞ւն է այս, իմ աղբեր,
Բոներ մեզ խեղճերս ալ մէջն են բաշեր,
Որ ի՛նչ է եկնենք ու ջարդենք գիրար
Անոնց շահերու եւ հաշւի համար···

Լռեց հովիւը· իր պարզուկ խօսքեր
Դաշոյնի նման ոմանց էր դպեր·
Խմբապետն՝ կրծէն յուզած կը դողար·
Իսկ ռեսը տեղէն ցատկեց դողահար·

— «Ամո՛ր ես, հովիւ, ճերմակ մազերուդ,
«Ամո՛ր է ձգի պահէ այդ լեզուդ·
«Դու տես որ պատրաստ լինի խորոված»·
Պոռաց ռես Յովան սաստիկ կատաղած:

Շատ շատե՛ր կային ծեր հովիւն հասած·
Բայց վախէն չելաւ մէկ ծպտուն ու ձայն·
Միայն Զարոն էր որ անվախ գոռաց·
«Շիտա՛կ է հովւի ամեն մէկ ասած»:

«Ամօթ մեր ռեսին, եւ ամօթ անո՛ւնց,
«Որ այստեղ կտրեր են կրակ ու բոց·
Իսկ բեկի առաջ կը դառնան կատու
«Քանդելու համար տունն անտէր մարդու»:

— «Լռի՛ր, սրիկա, լռի՛ր, անզգամ,
«Այդ անգութսպ լեզուդ կտրել պիտի տամ·
«Դու՛ բրդու աղջկա լկտի սիրահար,
«Դու՛ անօթի շուն, դու անխելք տաւար···»

Զարոն վեր ցատկեց առիւծի նման·
— «Կը պատռեմ, ըսաւ, այդ աղտոտ բերան,
Դու՛ երկչոտ ըստրուկ եւ լիրը կեղեհող,
«Դու բեկի արնոտ ձեռքերը լզող···»

Մէջտեղ անտանեցան հովիւն ու տէրտէր·
— «Տեղդ նստիր, Զարո, տեղդդ, տղեաւեր·
«Ախբեր նա ռեսն է ու տարիքին առած,
«Ի՛նչ ես գազանի նման գազազած:

«Զարոյին այդպէս մի խօսիր, ա՛յ ռես,
«Կատաղի է նա վարար գետի պէս·
«Աչիին չերեւար ո՛չ մարդ, ոչ գազան
«Երբ կուի ելնէ այդ սարի չոբան»:

Վէճը դադրեցաւ· բերին խորոված,
Կարագ, մեղր ու սեր եւ թարմ լավաշ հաց·
Ճառե՛ր խօսեցան, իղձեր խանդավառ
Հայոց աշխարհի փրկութեան համար:

Իսկ բարի հովիւն այծմէն կը տեսնէր
Վաղուա արիւնոտ, անմխիթ կռիւներ,
Թշուառ հայն ելած սոված բրդի դէմ —
Դիա՛կ եւ մոխիր եւ արցունք ու էնե...

Իրեն թւեցաւ որ այդ խորոված
Մեռելի մի՛ս էր իր առջեւ դրւած·
Ինքն ալ մի անխիղճ, անարգ մարդասպան·—
Սարսափէն գլխին ճաշեց իր արաւ...:

ՅԱԿՈԲ ԱՆՏՈՆԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Պարտէզ հրաշիի, երանաւէտ առաւօտ,
Ո՛վ մանկութիւն, ես կ'երազեմ այս գիշեր·
Հով մը թերեւ, ո՛ր ափերէն, չեմ յիշեր,
Ինծ կը բերէ շունչն օրերուդ բուրումնոտ:

Ծիրանիներիննւած մշուշի մը ետեւէն,
Կը ժպտիս դուն, անմեղօրէն երջանիկ·
Մինչ ես՝ խոնաւ ծաղր աչերով հիացիկ,
Կը նշմարեմ դէմերը որոնիդ ոչ եւս են:

Պարուսս անցաւ շքեղութեամբ մ'անստուեր,
Ամբաւս արեւն ալ վար կ'իջնէ գեղիքէն,
Աշնան ձայներ տակաւ կու գան ինծ օդէն,
Դեղնե՞ր է դաշտս ու որաներս են կապոյտ:

Եւ հիմա ես կ'ոգեկոչեմ, ես որ հին
Ուխտաւոր մ'եմ իմաստութեան՝ եւ հասուն
Միտքերու լոյսն ու սիրտերու տենչն անհուն
Սիրեցի եւ կը սիրեմ դեռ հոգւոյն:

Քեզ հետ խօսի՞լ, այսպէս հանդարտ, լրջօրէ՞ն...
Բայց չէ՞ որ միշտ կը նրմանիմ իրարու:
«Տըղայ մը կայ դեռ մէջդ», ըսաւ ինծ հերու,
Գլուդ ձայն մը սիրող սիրտի մը խորէն:

Հին սէրս ունիմ անկարելի բաներուն,
Նոյն լաւատես հաւատս անխոց, կենսունակ.
Նոյն դիրութիւնն յոյզերու մէջ հակառակ.
Նոյն աչերը կեանքը պնդող. երազուն:

Երբ նորոյթը, զրկելով թեւերէն,
Առվորոյթի ճամբով յանգի ճանճրոյթի.
Քեզմէ ժպիտ մը սիրտիս մէջ կը կաթի.
Ու կը ծաղկին նոր տեսիլներ լուսեղէն:

Քեզ կը պահեմ միշտ հոգւոյս մէջ կենդանի,
— Իբրեւ ոսկի երիզն ամպոտ օրերուս,—
Փառք կուտամ որ ըէ՛ հասուն եմ, ըէ՛ թերուս,
Հոգւով մանուկ ապրողներուն՝ երանի՛...:

ԸՆԿԷ· ԶԱՊԵԼ ԱՐԱՄ
Ամերիկահայ Ցայտնի երգչուհի

ԼՈՒԹՖԻ ՄԻՆԱՍ

ԳՐՈՀ

ԼՈՒԹՖԻ ՄԻՆԱՍ

Եկեր ենք մենք՝ իբրեւ վըճի՛ռ, իբրեւ արի՛ւն,
Իբրեւ փըրկի՛չ գալիք բոլոր բազուկներուն:
Եկեր ենք՝ մեր տունն ու սիրտը թողած այլուր,
Հացը մեզի նոր լեզու է ախորժալուր,
Երգ է ահեղ, կը փոթորկէ մեր լուռ հոգին,
Որովհետեւ մե՛նք ենք ցեղը աշխատաւորին:

Մե՛նք կերտեցինք սա որմերը երկնասլաց,
Յատակները՝ մարմարիոններով, ներկով բանուած,
Եւ սողացող ցուրտ գիծերը երկաթներուն,
Շոգեկառքը՝ որ կը բըռնէ փախչող հեռուն:
Մե՛նք փըռնցինք ուղիները գետինին տակ,
Բարձրացուցի՛նք տաճարներն ալ ոսկեթանգակ:

Մե՛նք փըշրեցինք սա լեռներուն կողերն հըզօր.
Քարածուխի, իւղի համար՝ որոնց այս օր
Տէ՛ր էք դարձեր իբրեւ օրէնք եւ ազատ գող·
Անիւներուն կ՚ընէէք լեռն իսկ հըպատակող:
Մե՛նք յաղթեցինք կամուրջներով ջուրին վայրի·
Մե՛նք վառեցինք իւրաքանչիւր լոյսը երկրի:

Եւ մենք բացի՛նք դուռը գործին, մեծ աղմուկին,
Հո՛ն, հըրակէզ մետաղներու մուրը կըրկին
Զարկի՛նք, զարկինք օձագալա՛ր, կատաղօրէ՛ն,
Մինչեւ մութը նկաւ, բաժնեց մեզ կըռիւէն,
Մինչեւ շոգին սուլեց դադա՛ր, խաղաղութի՛ւն·
Իբրեւ վաստակ մենք տո՛ւն տարինք հազ մը արթուն:

Եկե՛ր ենք մենք ամէն հանքէ, ծըխնելոյզէ·
Ամէն գործիք մեր ձեռքին մէջ հըրազէ՛ն է:
Մեր բոլորիս կուրծքը խըրա՛մ, բե՛րդ անառիկ·
Եկե՛ր ենք հոս՝ մենք որպէս տէ՛ր, հացի մարտիկ,
Ու կը բախենք ձեր ճակատին, ձեր օրէնքին,
Անակրնկալ կայծակի մը նըման ուժգին:

Եկե՛ր ենք մենք· բազմահազար ուրիշներ կան,
Ծովի անվերջ ալիքներուն նըման կուգան:
Քաղցածնե՛ր ենք, բէ՛ բացակա եւ բէ՛ ներկա,
Մեր աչքերուն ապըստամբող աշխա՛րհ մը կայ:
Պիտի կըռւի՛ք անօրինակ, հըզօրակա՛մ,
Յաղթանակը մեր վըճի՛ռն է՝ ալ այս անգամ:

ՀԵՌԱՆԿԱՐ

Այգին ըլլար աշնանագեղ՝ մեր հին այգին,
Համբո՛ւյր տայի ամէն բերրի որթատունկին:
Ու կըքէի խաղողն ատոմ՝ ըստինքը մութ·
Գինին անոր՝ իմ մատներէս կաթէր պուտ–պուտ:

Գինին անոր՝ աղջըկան պէս վառ ու զըւարթ,
Տա՛ր շըրթներուս, տա՛ր այտերուս ծիծաղ ու վարդ
Այդ գինիով՝ այս իմ սըրտիս հարսնիքն ըլլար·
Հարսնիքիս մէջ՝ պար ու էրնար ուրախալար:

* * *

Սի՛րտ իմ անուշ, օր մը կ՚երթաս դուն երեւան
Ու կը մըտնես այգին գունե՛ղ, բազմաբուրեա՛ն·
Մեր յոյսերու, ջինջ օրերու կեանքի՛ն համար,
Նորէ՛ն կ՚ըմպես՝ Հայոց գինին արեւավառ:

Սի՛րտ իմ անուշ, օր մը կ՚երթաս դուն Հայաստան:

ԱԼ· ԳԼԸՃԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

«Ո՛ տայր ինձ զծուխս ծխանի եւ զառաւօտն նաւասարդի···»
Որ երկհազար տարիներու Հայ հեթանոս տարագ հոգեզմայլ
Սեւ պարտութեանց գոյժերուն դէմ դառնար ռազմերգ, շեփոր յաղթի,
Դուն մեզ եկար նորահրաշ ո՛վ Նոյեմբեր կամրջաշառայլ:

Խոնճարարուհդ չի ճանչցա՛նիք ինչ մեր վազիին մէջ խուճապահար,
Մրրկարշաւ Հիւսիսն անիար Հայ մսուրին երբ ինչ բաշխեց·
Ու կարծեցիք թէ աչխերդ են գեհենատիպ վիհեր մթար,
Ձիչդ անսովոր՝ հուսկ մահերգը երկրին ահեր ու հողմածեռ:

Չի ճանչցա՛նիք ինչ,— եւ վաշխառու իշխանութեան մականին վարժ,
Մենք դեռ երէկ ուրացա՛նիք ինչ իրրեւ մանուկ խորք ու անյայտ·
Բայց արդուիքի հասած ասպետ կորովարիր ու հոգեշարժ,
Կուգաս այժըմ շոպել հարսըդ,— Հայ սրտերու ուխտն ալեցայտ:

Ուխտը մե՛րն է, հողի՛ն, ջուրի՛ն, վերապարթեւող Հայ ճո՛ր գրին·
Յաւէրժական որպէս փարոս դուն մե՛րն ըլլաս յուսատարած·
Կարշնեղ բազկիդ գիտնա՛ս պահել հայրենատենդ պերճ թուրը ինի,
Ան որ լինց զայն վատօրէն դարձաւ անէծք թափառյած:

Արդ կը ջնջենք, մեծ Նոյեմբեր, մեր պաշտումի խորանիներէն
Թիւ ու տօնակ զոր մեր պարտուած աստուածներէն ժառանգեցինք·
Ինչ որ մնաց ինի հաւատոէն կենսաճորոգ՝ մենք համօրէ՛ն
Այժմ անվարան ինչ կ'ընծայենք մեր շուրթերով տաղերգեցիկ:

Նորաշաւիղ *մեծ համերգին* դուն վառ ի վառ մէկ փոփոխակ՝
Կը խառնես մեզ համայնական մտքի յոյսին յորդ, անսուտեր·
Աշխարհ մեզի՝ մենք աշխարհին՝ ոգւով ազատ ու անսայթաք՝
Արեւափառ Հայաստանի նորհերդային Ցօ՛ղ Նոյեմբեր:

ՀԱՆԴԷՍ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Հայաստանի Թերթողներուն

Ձոզած ինի Հայն է
Որ դեռ կը ձայնէ·
— «Ապրի՛ֆ, շէ՛ն մնաֆ, աղհատա՛ց համար···»:
պնակը շրջուն՝
Ծանօթ բայց զառամ
Ձերդ շուն մ'անատամ՝
Շնորհը գրկած կարծես կը սոնիա՛,— որպէս զի անհուն,
Գանձէն այս՝ Հայկա
Նահին ուռճանա!!

Ձոզած ինի Հայն է
Որ դեռ կը ձայնէ·
— «Կարի՛լ մը արցունիֆ յանուն գաղթական որբի, սովելոց···»
Ու կ'իյնա անվերջ
Դողդոջ մի կեղերջ՝
(Հեգնա՛նիքն անպատում յարաբեան երգի զանին վիրավոց)
Ցատսկը ճահին,—
Վատերուն մահին:

* * *

Այլ եւ կա ճո՛րը,
Հաւատոով խորը:
Թիկունքին՝ երկնամերձ Մասիսին յեցած՝ ոսկոր աւ ոսկոր,
Իբրեւ անհահանջ
Մշակ բարձրականջ,
— «Թիճնե՛մ մուրացկան եղբօր պնակին,— կենցաղը մեր ճոր՝
Արդար վաստակի
Մուրհակն է ոսկի»:

Հա՛, կա եւ ճո՛րը
Հաւատոով խորը:
Յաղթարշաւ կեանքի գալիքը բեղուն իրրեւ շինանիւթ,
Իրրեւ բազմալար
Ե՛րգ մը վրկարար,
Կը խառնէ հողին Նայիրեան երկրի դարերով անհիւթ
Ձաթա՛ծ շերտերուն,
Խոնջա՛ծ սրտերուն···:

Նիւ Եորք, Մարտ 1935

ՀՐԱՀԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՆՈՐ ՀԵՔԵԱԹ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՊԱՏՄԻԱԾՔ

Նոր կենցաղի հեխեարն է նոր,
Որ պատմում են ամեն օր···
Նոր օրերի մարտերգն է որ,
Գոռդում է ամեն ուր···

Ասում են թէ՝ օր ու գիշեր,
Ծովն ու ցամաք որ կտրես,
Վառ ու կայտառ կեանքի աղբիւր՝
Մի նոր աշխարհ կը հասնես:

Այդ նոր երկրում մարդը՝ մարդուն,
Կեանքի ընկեր ու եղբայր···
Աշխատանքի բերքը յորդուն,
Ամենքին է հաւասար:

Ամենքն այնտեղ տէրն են կեանքի,
Ըմպել կեանքի երգը նոր···
Ամենքն մէկի, մէկն համայնքի,
Ճամբան կերտում լուսաւոր···

Ասում են որ ազգ ու ցեղեր,
Բազմալեզու, բազմածով,
Սիրո անգիր դաշն են կռել,
Աշխատանքի հնոցով···

Եւ աճում են, հասակ ֆաշում,
Երկնասլաց խոյանքով,
Հանդ ու արտեր, դաշտերն ամ–
հուն,
Թնդում իրենց վառ երգով:

* * *

Պատմում են թէ ինչպէս մի օր,
Մի վառ, կարմիր Առաւօտ՝
Ձնշուածների հոծ մի թափօր,
Լցրեց ճամբէքն արեւոտ···

Թողին նրանք սալն ու գնդան,
Մուրն ու մանգաղ եւ արօր·
Գործարանները, գիւղն ու Աւան,
Հիւղն ու հիւղակ գետնափոր···

Յորձանք տալն կարմրով հզօր,
Դէպ՝ դարպասներն մեծ ֆաբրի···
Խորհուրդ արած՝ որ հենց այդ օր,
Մարտը մղեն նոր կարգի···

«Էլ չենք ուզում» ասին նրանք,
«Ոչ մեծաւոր, ոչ արքա,
«Կերտենք պիտի մենք նոր մի կեանք,
«Ուր ոչ շղթա, ոչ սով կա»:

Ու ֆանդեցին հիմքից նրանք,
Հին աշխարհը տէրերի···
Մեծ պալատներն ու ապարանք,
Կրկէս դարձան պայթարի···

Եւ ի՞նչ պայթար··· ասես մէկէն,
Հազար երկինք որոտար···
Ասես երկրի խոր ընդերքէն,
Հազար ամպրոպ դղրդար···

ՌՈԶ ԶՈՒԼԱԼԵԱՆ
Ամերիկահայ ցայտնի երգչուհի

Յուրա՜ց, հասա՜ւ արձագանգն այդ,
Մինչ ֆաղաքներն հեռաւոր···
Իշխողները՝ մեծ ու անյայտ,
Առին սաքսուռն ահաւոր···

Ու դարերի տառապանքով՝
Կամքերն իրենց անթեղուած,
Պրոլետար ամբոխր ծով՝
Գրոհ կըտար ալեկոծ···

Կը հրդեհէր շարքերն իրենց՝
Նոր գօտեմարտն ամեն մէկ···
Թէ մէկ իյնար՝ պատրաստ էր հենց
Տեղը բռնել հազար մէկ···

Տարտղնեցին չորս հովերին,
Ամեն շղթա ու կապանք···
Լուց արիւնն բոսորածին՝
Դարերի բի՜ւր տառապանք···

Կրծքերն իրենց ամբարտակած՝
Որպէս պարիսպ անառիկ···
Երէկ ստրուկ··· այժմ յաղթա–
պանծ
Տէրն են կեանքին բարգաւաճ···

Այժմ Մուրճի ու Մանգաղի,
Հարուածների տակ յուրթի,
Ասում են որ, նոր կենցաղի
Լոյս բերկրութիւն կը յորդի···

Այդ նոր կեանքի հուր տենչովն է,
Որ այրում է մեր հոգին···
Նոր Արեւի վառ շունչովն է,
Որ թափ կը տանի մեր երգին:

Մոռացել ենք անիրական՝
Հեքեաթները մենք բոլոր,
Ու մեր սրտում, ուխթական՝
Մրրկում է երգը նոր···

Կանգնել ենք մենք շէմքին հիմա,
Լուսաբացի մեծ Մարտին
Ունկնդրում ենք խօսքերն ամ–
ման
Նոր կենցաղի հեխեարին:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Արեւո՜ւտ երկիր,
Անվերջ արշալոյս,
Ցոյսերու հեղեղ,
Կարմի՜ր խնդութիւն,
Ողջո՜յն օրերուդ
Այս ոսկեծածան,
Փառի արշալոյդ
Վսեմ ու վառուռան···
Հրաշքի ծաղիկ,
Լեռնեհան ուէր,
Երէկ չկայիր,
Այսօր կեանք ունիս
Բոցք ու լուսահիւս···
Իմ անգին երկիր,
Իմ Կարմիր Աշխարհ,
Իմ նոր Հայաստան···:

Տրտմութեան վիրապ,
Յաւ ու մղձաւանջ,
Արիւն ու արցունք
Իմ հի՜ն Հայաստան,
Որքա՜ն ես փոխուեր
Գարնան օրերով,
Ալվան շողերով
Ծիածան գոտի
Ես կապեր մէջքիդ
Ո՜վ իմ յաղթական,
Արի Հայաստան,
Լուսաբե՜ւ բռնչէ,
Անվե՜րջ օրհնութիւն···:

Կը նայիմ ճեզի,
Աչքերուդ խորունկ,
Իմ հին բարեկամ,
Զորեղ ես անհետ
Թախիծներդ յորդ,
Արցունքներդ ադի
Շոգի ես դարձեր···
Ու բիբերուդ մէջ
Նոր կեանքի կայծեր.
Աստղեր կը բռնչին···
Իմ տրտմաթախիծ,
Իմ երկիր «անբաղդ»,
Վշտի պատմութիւն.
Ու արեան հանուէս.
Չր ճանչցա ես ճեզ.
Որքա՜ն ես փոխուեր·
Դուն՝ ա՛լ հինը չես.
Պատուն այն կթոտ.
Որ շալկին առած
Դառն ու ցաւակոծ

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Անցնող դարերուն
Բեռները բոլոր
Կը տնքար ահեղ···
Երբ տէրը կ'իշխէր
Ու Հայ գիւղացին
Կարօտ էր հացին,
Հայոց Աշխարհի
Սեւ երկնիքին տակ
Չկար սրտի խինդ,
Ո՛չ իսկ կեղծ ժըպիտ···
Մշուշն էր իջեր
Մասիսի գլխին,
Մասիսն ալ խոհուն
Ծանրութեամբ ամբողջ
Սեւ սուգ էր դարձեր,
Մարդոց սրտերուն
Մէջը ծանրացեր···
Իմ հին Հայաստան,
Գերեզմա՜ն աշխարհ,
Լացի, ողբի տուն,
Տրտում շարականն···
Չերգեցիր երբե՛ք
Խնդութեան մի երգ,
Շրթներդ վտիտ
Չր բռաւ երբե՛ք
Գոհութեան զայրք,
Պայծառ խօսքի շիշտ,
Սառած մնացին
Իտէալներդ հուր,

Դարերը անցան,
Ցաւոտ ու անձայն
Ու խանի տէրեր
Եկան, հեռացան,
Վէրքերդ անբոյժ
Մնացին յաւէտ···
Իմ արիւնաքամ,
Վէրոտ Հայաստան···:

* * *

Բայց նոր օրերու
Դուն վեհ թռիչք,
Մե՜ծ ներհուղնարու
Լուսաթիւ խոյանք,
Կարմիր Հայաստան,
Ոսկեվարս հերոս,
Զմրուխտեա արեւ,
Իմ անոյշ երկիր.
Համակ խնդութիւն
Ու երգ ես դարձեր,
Երգի՜ Հայաստան,
Բերքի Հայաստան···:

Տօնի օր է այս,
Բերկրանքի հեղեղ,
Նորածագ երկիր,
Լեռնեհան հրաշք,
Քեզ հազա՜ր ողջոյն,
Հազար արեգակ,
Մեր սիրտը ուէր,
Անմահ Հայաստան.
Լոյսի հեղեղատ,
Նոր կեանքի եղեմ····
Ողջո՜յն քազուկիդ,
Իմ անյա՜ղթ երկիր,
Ողջո՜յն հանճարիդ
Գերազոյն, անհաս,
Իմ խորհրդային,
Իմ ժի՜ր Հայաստան,
Խաւարէն ծաղկեալ
Ոսկի արշալո՜յս···
Գալիքն էիր դուն
Եկեր ես արդէն···:
Անթիւ հերոսներ,
Մեռնողներ անթիւ,
Իրենց արիւնով
Քեզ ծնունդ տուին,
Որ սերունդները
Այսօրւա ժպտուն,
Երջանիկ ապրին···:

Ու ի՜նչ շքեղ ես
Ո՜վ իմ լուսերես
Լոյսէ Հայաստան,
Խաւար երկնքիդ
Ծոցին ես վառեր
Լեռնենեաւ լամպեր,
Վարդագոյն տուփէ
Շեմերը կը շինես
Ռու բանւորներուդ·
Գիւղացին բաժին
Կ'առնէ կալոզէն···
Առատ կեանք կ'ապրին
Երջանիկ երգով
Զաւակներդ բիւր···
Հայաստանը ճոր
Կ'երգէ ցնծագին
Մեհենաներու
Երգը շառաչիւն···
Թաղեր ես ի սպառ
Հայաստանը հին
Այն ինչ որ սեւ էր,
Տխուր, լալագին···
Պարտութեան մատներ
Կուլակն ու դաշնակ,
Ու դասակարգի
Թշնամիները
Բոլոր արիւնուշտ···:
Նոյեմբերի մեծ
Հոդմերու ծնունդ,
Դուն ալ հոդմ դարձած՝
Կ'երթաս լուսածաք
Ճոց ուղիներով,
Կ'երթա՜ս հեռուներ,
Վա՜ռ, արեւաւոր,
Աւելի շքեղ,
Գեղեցիկ կեանքի
Եռագին աղուր,
Որ մարմին կ'առնէ
Սրտիդ յոյզերով,
Արդար հանճարիդ
Վերպայց ճիգով···:

Իմ երկիր բեղուն,
Երկիր մրգաշատ,
Արեւի ոգի,
Լոյսի փոթորիկ,
Դուն ի՜նչ գեղեցիկ
Եւ ի՜նչ թովիչ ես,
Յաւիտեան Գարո՜ւն,
Յաւիտեան Ամառ·
Դուն միշտ կը ծաղկիս,
Պաղատու երկիր,
Երգ առատութեան···
Իմ Նո՛ր Հայաստան,
Յոյզի, խրախոյսի
Իմ երգս լսէ,
Երգս այս լուսէ···

Վաղը ես կ'ըլլամ
Փոշի, յիշատակ՝
Երկի՜ր անխորտակ,
Բայց դուն յաղթական
Յառաջ կ'ընթանաս,
Ու պռէտներ ճոր
Գալիք դարերու
Քո փառդ կ'երգեն···
Գուցէ կը յիշեն
Օր մը պոէտն այս,
Որ կոլոմպոսի
Այս հին աշխարհի
Դառնակոծ կեանքի —
Աղջամուղջին մէջ
Լոյսէ երգ երգեց···
Եւ իր երգերը
Հայ բանւորներուն

Բոլոր ըմբոստութեան
Կրակով վառեց···
Հոգիներն մոլար
Տեսիլիդ վսեմ
Սէրով վարարեց···
Եղար փողահար
Վառ արշալոյսիդ···
Իմ անոյշ երկիր,
Իմ վա՜ռ Հայաստան,
Լեռնենեան հրաշէ,
Կարմիր բուրաստան,
Ողջո՜յն օրերուդ
Այս ոսկեծաճան,
Ողջո՜յն էեզ՝ ընկեր,
Իմ կարմիր Աշխարհ,
Իմ խորհրդային,
ԻՄ ՆՈ՜Ր ՀԱՅԱՍՏԱՆ···:

Ս· ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Այսպէս կ'երգեմ գովէդ հզօր,
Խորհրդային իմ Հայաստան·
Քո կայծակէ վագրը հզօր
Բանւոր, ռէնջքէր, ջան Հայաստան:

Ինչպէ՜ս չասեմ, ով էեզ տուեց,
Կեանք ու արեւ, իմ Հայաստան·
Ով էեզ սիրեց ու գուրգուրաց,
Համայնավար, ալ Հայաստան:

Գերահրաշ կոմունիզմի,
Էն կենսատու շնչով սնող·
Ցեղափոխած բանւորներիդ՝
Արգասիքն ես, վառ Հայաստան:

Քո գազազած թշնամիներդ
Ինչ֊ինչ կ'ուզեն թող որ ոռնան·
Ինչո՞ւ չասեմ ճրաւիք շուտով՝
Աւօթահար ծունկի կը գան:

Պիտի ասեմ, ինձ դյժ տիր,
Բանւոր ձեռքիս գիրչ տիր,
Որ ես պատմեմ փառքդ երգով,
Իս իմ թոթով բացատ լեզուով:

Այսպէս կ'երգեմ գովէդ հզօր,
Խորհրդային իմ Հայաստան·
Քո կայծակէ վագրը հզօր,
Բանւոր, ռէնջքէր, ջան Հայաստա՜ն:

Շիրակցի, Իլլ·

Ա· ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ԵԶԵՐՔԻՆ

Անաթթա, իմ բարի Անաթթա…

Այսօր նորէն, երկիւան պէս, անցնող բոլոր օրերուն պէս, յիշատակիդ մէջ աչքերուս խռնուութեան մէջ: Ու տարիները որ փորձեցին իրենց ներկը ու դաւադրող աւերներով մշուշել քեզ, ահա կը հառնին զարձեալ, ցաւս հեղեղին տակ եւ վայրի հառաչիւնով մը կը ձեղքուի խորհուրդի թաւմանդիկ ու զգայնական թուխերուն վրայ:

Ա՜հ, իմ սիրելի Անաթթա…

Այսօր նորէն, երկիւան պէս, անցնող բոլոր օրերուն պէս, փշրուած ողնասիւնիդ ճարճատիւնը յուսահատօրէն կը ճանչէ, ախորժէն կը հեկեկա անկողնիներուս մէջ: Իրաւ, մոգական եմ թէ պրուքլինի ո՛ր ազարանոցին մօտ կը շնչէր այն խարխուլ զորձատունը, զոյնզոյն թիթեղներով եւ տախտակներով կարկատած, ուր այս երկրին աչխատանքի առաջին շարաթս ահաւոր հիասթափումով մը ցրնցուեցաս: Բայց ներէ այս մոռացումին, ճակատագրի եղբայր: Որովհետեւ ամէն նոր ցերեկ, նոր դիչերան մը հիւսած երազին վիրաւոր, հաչմած կամ խեղդամահ պիտի նետուէ յիչողութեանս զեղմանոցին մէջ…:

Այդ երազները, յաւիտենօրէն եւ անեզրայ նէնկուլ մը քեզացող իմ բարի Անաթթաս, յուսավառ ժպիտներն են իմ եւ քու եւ բոլոր մեզի բախտակից ազգ: Անոնք գիս պարմանի — գիտես դուն թէ որքան անզգամ ու անզգաստանալի է հացին հրամանը — քեզի եւ ինծի պէս պարմանի, իրենց վերիս մտանելով եւ զիս բարեկի եղունգներով կառչեցան կեանքի եզերքին, ուրկէ չշունչ մը անդին, լայնեբան կը բառաչէր խաւար ու սպանիչ անդունդը, որը այսօրս մարգկային ընկերութիւն կը կոչենք մենք:

Ու այնպէս ցաւագին է հեծեծանքը այդ ժպիտներու կմախքներուն, գիտե՞ս դուն…:

Եւ կը տեսնես դուն, կը տեսնե՞ս դուն, Անաթթա, որ այսօր նորէն, երկիւան պէս, անցած բոլոր օրերուն պէս, յիշատակիդ ծիծաղքին կը խռովի աչքերուս պղտոր լիճը, եւ զանոնօրէն անդադար, իր ափերը ծեծելէն, կը մաղցի կեսկերուս թաւմերուն վրայ: Հան նատած՝ իր բոլորտիքը կը դիտէ, փնտռելով քեզ, փնտռելով քու պայծառ ու արեւոտ ժպիտդ: Բայց հիասթափ, բայց յուսախաբ, կ'ինկնէ մինչեւ թաթիչներուս եզերքը եւ անկէ, զահավէժ, ինքզինքը կը նետէ իրեն համար անծանօթ եւ անհուն միջոցի մը մէջ…:

* * *

— Հա՜լօ, ճանի՛:

Ու բարեւդ, իմ բարի Անաթթա, սիրազեղ ու բարի նայուածքի մը պէս ողողեց գիս: Դեռ անծանօթ քեզի, վեց տարուրի դնուած յանճնարարական մը ձեռքիս, բոլոր գանգրէն մերժուած, յոգնած ու յուսահատ երբ կեցա գոյնզգոյն թիթեղներով եւ տախտակներով կարկանած ձեր զործարանին մուտքին առջեւ, արեւի չափ տաք ու բարի բարեւդ, իմ բարի Անաթթա, ինկաւ ներսս արեւի մը ջերմութեամբ, պայծառութեամբ, ու լոյս ու օձեց դիս լոյսով, յոյսով, կեանքով…:

— Բարի լոյս, ընկի՛ր…

Եւ դուն թեթեւս զարմացար պատասխանիս անսովոր քերթուժէն: Եղբայրական այդ հոգի, ուրիչ դէմքերու վրա հեգնական ծամածռութիւններով այնքան չատ խարեց, այնքան չատ ծաղրեց դիս, Անաթթա՛ս, որ աննենգ եւ մաքուր բարեւ մը փոխադարձելը հծծող կաթսա մը զարձեր ու կ'այրէր լեզուս, հաւատա՛, կ'այրէր ու կը ձեղքուէր լեզուս: Անոր համար թեթեւս գուն զարմացար պատասխանիս չատ թափանցիկ յուզումին եւ տարօրինակ զորովին վրա…:

— Հա՜լօ, ճանի՛:

— Գալի մէկա՛, Անաթթա…

Բայց յաջորդ օրւան մեր բարեւով ա՛լ չսպասեցիք զիրար: Գուն կը ճանչնայիր զիս: Եւ ես գիտէի որ իմ դէմքի հրդեհին լեզուները ալեր էին քեզ դէպի ծով… դէպի Ամէնք, ուր հրաչքով մը միացեր էիր ընտանիքիդ:

Օր մըն ալ, չի յիչեցիր թէ ինչպէս, ինքզինքդ զատր Պրուքլինի կամուրջին վրա, ենթուղիին մէջ, որ խաւարէն լոյսին խոյացող մոլեղնած ցուլի մը պէս, երկաթագիծերը կը փերէր կատաղորէն, երկամէ ամբակներով…:

* * *

Դարձի չեկար չորեքչաբթի: Գիտե՞մ: Ամբողջ դիչերը հակիպէր քրտնդ սնարին վրա: Ծանրօրէն հիւանդ էր քոյրդ ու խուժդուժ հեւք մը նստեր էր կոկորդին: Ճակատը կ'այրէր, բերանը կ'այրէր, այտերը կ'այրէին կարմիր ու վայրագ ջերմի մը կրակէն: Ու դուն ամբողջ դիչերը զողացիր անոր վրա: Ա՜հ, իմ սիրելի Անաթթա, ես ալ գիտեմ թէ ինչ հրեչտաւակային արտասուներ են քոյրերը, բարի քոյրերը, ես ունեմ անոնցմէ… ու դուն հրակեցիր հիւանդ քրտնդ ցաւին: Ու աչխատանքի չեկար չորեքչաբթի:

Բայց երբ երկինքը, երկաթի ապտակն, ժանգէն ու փոչիին լացած, հագած դուրս կ'ելլէինք զործատանէն՝ տեսա քեզ վարպետին խցիկին մէջ եւ ըսի ընկերներուս որ քեզի սպասենք: Իսկ ի՞նչ խօսեցար դուն որ փոխելացաս վարպետը:

— Ինչպէ՞ս, ատ՝, ինչպէ՞ս… այսօր չեկար, վա՞ղն ալ չի գաս, ը՞… եւ ինչո՞ւ, ինչպէ՞ս… հապա ի՞նչ պիտի ըլլա իմ վիճակս, եթէ չգործես

դուն... չի՞ս խորհիր թէ ի՛նչ պիտի ուտեմ ես, ը՞... ըսէ՛ նայիմ, ի՞նչ պիտի ուտեմ ես եթէ չի գործես դուն եւ չգործեն քու ընկերներդ... ըսէ՛ նայիմ, ը՞, ի՞նչ պիտի ուտեմ ես...:

Ցետս բացաւ դուռը եւ դուրս նետուելով՝ այս նոյն խօսքերը կրկնեց մեզի, առանց անդրադառնալու որ արդէն լսեր էինք մենք: Ապա կրկին դարձաւ դէպի քեզ պայրոյթով, եւ գրեթէ ոռնալով պոռաց.

— Եթէ վագը չդա՛ս, ա՛լ մի դար, հասկցա՞ր...: Եւ մտաւ իր խուցը:

Բայց դուն եկար «վագը»: Եկար: Բայց դարձեալ ամբողջ գիշերը քրտնդ հոգիին հանգիչ վերջ: Տեսա որ յոգնած էիր ու քնատ: Ըսի՝ դանդգղ գործէ, մի ամաչարեր, իմ պատրաստած օգնականէս մաս մը քու անհիւնդ կը նետեմ գայտնիչ Ու դուն ժպտեցար: Եւ վերջինը եղաւ այդ...: Որովհետեւ... մեր նայիչ վիթխարի ձողը բարձացեր էր ու պիտի իջնար... եւ դուն, ա՜հ, իմ բարի Աստղիկս, յոգնած էիր ու քնատ... կը գայէիր մչուչած նայածքով... կը գայէիր կիսափակ աչքերով, երերալէն, ու չի տեսար ձողը որ անտարբեր, խնամատարիդ ու խորտակեց... խորտակեց:

Աստղիկ, հաւատացիր եղբայր...

Այսօր նորէն, երկրկան պէս, անցած բոլոր օրերուն պէս, փչրած ողնասիւնիդ ճարճատիւնին արձագանդները կը ծփան աչքերուս պղտոր լճերու մակերեսին ու կը խռովեն անոնց գառնութիւնը...: Բայց, Աստղի՛կ, այսօր նորէն, այն ժանգոտ ու արիւնաբրու չղթան, որուն մէկ նիհար օղակն էր վարպետդ, դյորւած, գալարւած է անհամար, անծանօթ Աստղասեներու կողերուն ու կը ճղմէ, կը կոտրտէ դանոնք... ա՛ի, ինչո՞ւ, ինչո՞ւ մենք մեր մուրճերը չենկեցնենք այդ անարդ չղթայի օղակներուն, դանոնք չախչախելու եւ ո՛չ թէ պաշտպանելու համար...:

ԼՈՐԻՍ

ՄԻ ԳԼՈՒԽ "ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅ" ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Անասունի եւ մարդու
Աշխարհ գալու իսկ օրից,
Մի երկասյրի ու հատու
Հարց է ծագել հենց... փորից:

Ու մարդն՝ ասուն-անասուն
Տասն եւ ութ դար շարունակ
Մի՛շտ ծուռ, երբեմն էլ հոսուն
Արձակել է բարունակ:

Բնազդն՝ անմի՛տ դեկավար
Թիւ մէկին թէ երկուսին,
Ջուտո պոկելու ճոխ աւար,
Թէ՛ մէկին թէ երկուսին

Մինչեւ՝ իճնի հենց կիսուն
Մի վատ Ջահի միտն էր լոկ,
Որ յայտ բերաւ անասուն
Մարդուց՝ տխպարն ու շայլոկ:

Չետեղել է ուղեղում
Դաղափարը սին եսի,
Ինչպէս Մեծ Ցոյնն է ասում՝
«Արամազդի ու եզի»:

Ու էն օրից, «ես»ն ու «մենի»
Ձակատ-ճակտի, թուր-թրի,
Ղոչաղ մարդն ու դերը նենգ
Մարտ են մղում սուսերի:

Ու իրր արդիւնք այդ գործի,
Կուռդ շան ու կատւի պէս,
Ենթարկւել են միշտ փորձի՝
Ժանիքաւոր «դուն» եւ «ես»:

Թէ ո՞ր մին է դուրս գալու
Էդ գրոհից յաղթական.
Ցաշի՞զմ... ճուտիկը գիլո՞ւ
Թէ՝ Սովետը մարտական:

Եսը՝ թէպէտ թւով հիչ,
Բայց էնճան վատ է եղել,
Որ իր ճանկով կեղեքիչ
Ողջ աշխարհն է հեղեղել:

Հարցրէ՛ք դուք ձեզ· ու շողը
Գլխում պիտ՝ գա ձեր փորից:
Վեցից մէկ մասն առնողը՝
Մի՛ւսն էլ կ՝առնի մօտ օրից:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԽԱԳԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

ՈՒԻԼԵԶՄ ՍԱՐՈՅԵԱՆ

ՅՈՎՀ. ԱԽԱԳԵԱՆ

Ուիլեըմ Սարոյեան՝ որ յանկարծական երեւումի մ՚ունեցաւ, եւ կարճ ժամանակի մէջ համբաւ մը ապահովեց իրեն Ամերիկեան գրականութեան մէջ, սովորական պատմողէ մը աւելի մեզի կը թուի յաչս խորհրդածութիւններու, քեմիւ խմաւսսուրութեանց համակէտ դուրգուրացող, կարեկից հոգի մը՝ որ մերթ լրջութեամբ եւ յաճախ ալ հեգնանքով կը ձագկէ անարդար կարգերը, կը մտրակէ զասակարգային խորութիւնները, կը բարձրացնէ խոնարհները, եւ կարի բնական եզրնակաւ մը մեզ դէմ վրա կը դնէ ազնուականն ու հասարակ խուճ անհատը:

Բաւական լայն դաշտ մը կ՚ընդգրկէ Սարոյեանի գրականութիւնը՝ որ սովորական պիծերէ դերծ՝ իր պարզուկ այլ թափանցող նկարագրութեան նիւթ կը դարձնէ, օրինակ, ամբրիչի խառնուրդը, բանտերու կեանքը, փողոցի ծաղկավաճառը, վախի յաճախանքը, աղքատիկ ուսանողը, անուաղ դպրոցականը, խեղճ ու կրակ գոնապանը (ճնշիքը), կօշիկ ներկողը, ու աւերեւոյթս հպանցիկ տողերու ներքեւ ընթերցողին մէջ կ՚սեղծէ աւելի կարեկցութիւն, աւելի գիտակցութիւն, աւելի արթնութիւն քան զոր ցարդ յայոդած են բանաղծել յաւէտ ասնթիմանթալ շնչտերու հակամէտ գրիչներ: Եւ իրօք մարդու կեանքին պարզ նկարագրականը ինքնին բաւական է հարկ եղած կարեկցական եւ կամ ըմբռնական զգացումը յարուցանելու ընթերցողին եւ կամ ունկնդրին սրտին մէջ: Մինչ չափազանցած գոյներն եւ պոռոտ գիծերը կրնան ծիծաղելի դարձնել պատկերը ու խաթարել վրձինել չանացած նկարը: Կարեւորը մարդն է, մարդը՝ իր պարզութեան ու այդու իր վհուկթեան, իր վսեմութեան մէջ: Ու Սարոյեան չատ լաւ կը յատկանշէ ինքզինք, երբ անկեղծ շեշտով մը կը բացագանչէ. «Ես պատմող մրն եմ ու մէկ պատմութիւն կը սիրեմ միայն,— Մարդը:» Ու անիկա այս պատմութիւնը կը պատմէ մէկդի թողլով գրագիտական օրէնքներն ու չարադրութեան ընկալեալ ձեւերը: Կը բաւէ որ բան մ՚ունենա ըսելիք: Կը գրէ առանց հանգիստաւոր ձեւեր առնելու, այնպէս ինչպէս մարդ պիտի խօսէր, պիտի խօսակիցէր իր ընկերակցին, իր մտերմին, իր հաւասարին հետ: «Մարդով կը չահագրգռիմ միայն», կ՚ըսէ Սարոյեան ու կը յարէ,— «կը սիրեմ կեանքը եւ մահուան առջեւ կը խոնարհիմ: Ձեմ կրնար վախնալ մահէն վասն զի զուտ ֆիզիքական է այն: Ճիշտ չէ՞ թէ այսօր ես ու հայրս՝ երկուքս ալ կ՚ապրինք, եւ իմ մարմնոյս մէջ համախմբուած է մարդու մը բովանդակ անցեալը: Բայց ես ու հինէ կը գրեմ բանագատութիւնը ու գանօրէն կ՚սեմ գանոնք որ կը յղանան ու կը գործագրեն զայն: Ապրող անհատի մը վերջին մտածումը մը անհունօրէն աւելի ազիտաբեր ու մահացու կը նկատեմ քան անոր բնական մահը: Ու երբ մարդկի բաղմութեամբ կը մահանան պատերազմի մէջ, կը մղեմ վշտի մը՝ որ խելայեղութեան ահմանները կը մերձենայ: Զայրոյթէս անկարութեան կը մտանեմ: Մեկ զինքս է լեզուս, ու գիտնալով հանդերձ թէ անիկա գնազարներէ աւելի ուժեղ է, կը յուսարեկիմ որովհետեւ աստանձինս չեմ կրնար բնաջնջել քանդումի գաղափարը՝ զոր վերջաղանտիսթները կ՚արձագանեն մարդոց մէջ: Ես ինքս ալ, սակայն, վերջաղանտիսթ մըն եմ, եւ բուն իսկ այս պատճառով կը ջանամ վերազարձնել մարդը իր բնական արժանապատուութեան ու ազնուութեան: Կ՚ուզեմ ինքզինքին վերագարձնել մարդը:» Ու Սարոյեան բոլոր մարդիկը հաւասար կը նկատէ.— «Ի՞նչպէս կրնա ապրող անհատ մը ուրիշէ մը աւելի մեծ ըլլալ:»

Սարոյեան երեւոյթներու՝ իրերու խորը թափանցելու զուարճալի մտածում մը ցոյց կուտայ: Իրեն համար ամեն քերթուած, պատմուածք, վէպիկ կամ ճառ՝ ինչպէս եւ ամեն երաց՝ մէկ բառն է այն լեզուին զոր չենք թարգմանած դեռ... Լայնարձակ է երկիրը: Եւ երկրին հետ լայնարձակ են բոլոր իրերը,— երկնալացիկ չէնքն ու խոտին տերեւիկը: Աչքը կը խոշորցնէ երբ մխքն ու հոգին թոյլատրեն: Այլ ամենէն լայնարձակն է հոգը:

Եթէ երբեմն յախուռն են Սարոյեանի դատողութիւնները,— որոնք իր երիտասարդ տարիքին ու աւիւնին —, յաճախ առողջ են անոնք: Իրատեսը են այսօր, ու նախ՝ վաղը, այլ կա ու կը մնա արեւսաը՝ յաւիտենօրէն ճշդիւս ու մշտնջենական: Ու արեւսային չափ ալ ուժեղ է գրասիրութիւնը: Երբեմ ու թուղթի սիրահար սեւ անձ՝ ցուրտէն սառելիք ալ ըլլա, դժուար թէ ուզէ հրաժարիլ հաւարի մը էջէն, անով տաքցնելու համար պարզեն ընդարմացած իր մարմինը:

Խանգաւառութեամբ դէպուն դրուց մըն է Սարոյեան, որ գիտէ բնական ու բանաւոր յարաբերութիւններ իր տաղերուն մէջ։ Կարգադրէ՛ր իր եւ Մարդը՝ (And Man), ու զուք ալ պիտի վարակուիք այն ապաւառոյ՝ որ այնքան բնականօրէն կը հոսի երակներու մէջէն, երբ առաջին անգամ՝ իմա՛ անոյշին բնագրէն՝ մարգկութեան գարթնումը կ'ըլլայ մարդ իր նեղսկրնի։ Այլ ա՛լ հեղհեղանք, երբ չեն հանդարտիր քերթողները, իր անհերները, իր ուսուցչը, աշակերտահիւսները, գոլորշի անօրէնը, եւ նոյն իսկ այն ապիկիր զոր... կը սիրէ, եւ որ մարգկութեան գիտակցութիւնը արթնցուց իր մէջ։

Հակառակ ատարկայականի արտաքնականութեան, էապէս ենթակայական դրուց մըն է Սարոյեան. ի՞նչ փոյթ, եթէ յաճախ ատարկայականի վերագրում կ'ընէ ինքն իրեն, ու այնպէս ցոյց կուտայ թէ ցուրտ դիտող մըն է ինք։ Ամէնուրեք։ Տարբերուն, բաւարար հոգի մըն է յատկ որ գիտէ չափի ու ներդաշնակութեան մէջ պահել իր յուզումը, եւ ուրիշներու տառապանքին անդրադարձը դանել իր սեփական եղկի մէջ։

Ինձի համար հոգեբանական գմայլելի էջ մըն է Ծիծաղը՝ (Laughter), ուր Սարոյեան անսպասելի ճարտարութեամբ մէկ մէկու բնդհարուած է աչալկերտին չարաճճիութիւնն ու վարժուհիին ցասումը։ լացն ու ծիծաղը, ու այդ բնական լացին ու բնաղատանալ այլ անպատկեր ծիծաղին մէջէն տակաւ յառնող այն անանուն զգացումը՝ որ հեզհեզակ տիրական հանդամանք մը կ'առնէ, ու յարդանքի, ու հրապոյրի, ու ակնածանքի աստիճաններէն արագ արագ բարձրանալով իրարհակացողութեան այլ մտնուազ անմանկ սիրտ ալարանները կ'ընդգրկէ։ Ոչ քարոզարանութիւն կ'ընէ հեղինակը այս կատրին մէջ եւ ոչ ալ խրատաւորութիւն։ Վերլուծական, մեկնաբանական յետին ճերմն իսկ կը բացակայի այստեղ։ Պատմուածքը կը սահի իր բնական ընթացքով, այլ անտեսանելի, աննշմարելի մագնիս մը մէկիկ կը կապէ պատժող աչակերտն ու պատժող վարժուհին։ Ամենէն հմուտ մանկավարժն անգամ այդօրինակ կենդանի էջ մը պիտի չի կրնար արտագրել։

Բարոյապէս ինկածներուն հանդէպ ալ Սարոյեան՝ գաւառցի մը խժռոտ կեցուածքէն ատելի՝ գորգոգացող, մեզգոտ, ցասող հզօր մը կեցուածքը ունի։ Այս է պատճառը որ Սէր խորագրով պատմուածքին մէջ, հանդուգնով, անտարբեր թիւրին քով գրած է ատելի ուժով, ատելի ապատարիչ թիւր մը,— կարկեհից ինկածին, արբշիռ նոյնին հարազատ սիրով, ու ջանադիր՝ զուր քաշելու զայն ապականութեան գահէն։

Տիպերու նկարագրութեան մէջ Սարոյեան ունի զուսպ այլ չէշտակի մեթոտ մը՝ որ հիացում կ'ստեղծէ։ Այս մասին գաղափար մը տալ ըլլալու համար՝ ահա մէկ քանի հատուածներ իր Կոր Գիծ մը (A Curved Line) խորագրով պատմուածքէն։—

«...Գիրուկ կին մը կար որ կը հեւար երբ կը խօսէր, ու միշտ կը խօսէր։ Վարժուհին

ՈՒԻԼԵԼՄ ՍԱՐՈՅԵԱՆ
Անգլիագիր Հայ Գրագէտ

կը, եւ գոյ ըրած էր արտասուի վրա խօսող դէրքերէն կարգ մը բաներ, ու երբ իր ձայնը ինծի լսելի ըլլալու սահման մօտեցաւ, ականջալուր եղա իր հեւքին, ու լսեցի որ կ'ըսէր։—

«Հինգ արտասուներ կան, նկարչութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն, երաժշտութիւն եւ բանաստեղծութիւն։» Վարժուհին գայթ կ'ըսէր չափահաս տարիքի տէր չոփ չոր կնոջ մը՝ որ հիացած՝ գրիչէ ապշած էր։ Այո պարտիկ կինը գէտ նոր այդ գաղարաններ եկած էր ու բնաւ չէր լսած տառը մասին։ Իրեն համար նորութիւն էր, ու կը պոմպռար որ հինգ արտասուներ կային։ Այնպէս կը թւէր թէ իր կարծքով մէկ արտասուն բաւական էր իր աշխէ, սեղանին վրա կային թերթ մը ճերմակ թուղթ, մատիտ, չէշ մը մեքան եւ գրիչ։ Ամբողջ դաղափարը կը հրաւիրէր դինք։ Սկսրիչ։ Ամրողջ դաղափարը կը հրաւիրէր դինք։ Սկսաւ գծել Մարլին Տիթրիխի նկարը։ Տասը սենթաւ գծել Մարլին Տիթրիխի նկարը։ Տասը սենթաւ նոյ պատկերախաղի թերթ մը ունէր, ուրկէ պիտի ընդօրինակէր, բայց իր ընդօրինակութիւնը չէր ընդօրինակէր, բայց իր ընդօրինակութիւնը չէր նմաներ Մարլին Տիթրիխի։ Ամեն ինչ անհամեմատական էր։ Շատ տղոց մը կը նմանէր։ Շատ տղոց մը կը նմանէր։ Ամէն մէկ գիծ որ կ'ընէր՝ Մէյն չատ խորամանկ արտասուի քննադատ մը պիտի կրնար ըսել թէ անիկա Մարիա Մաքին մը չէր։ Անարտասուն ամէն նրբամտութիւն ունէր։ Անարտասուն ամէն նրբամտութիւն ունէր։ Իրօք կնոջ մը դէմքն էր։ Չոփ չոր կինը ուրիշ բան մը նկարելու մասին չէր կրնար խորհիլ։ Մարլին Տիթրիխի նկարները գծող ուրիշ երեք կիներ ալ կային։ Աւելի գասընթացքին մէկ մասը կը կազմէր։

«Այրերը ծանուցման քարտեր կը նկարէին։ Անոնք երեսնց եկամուտը չատցնելու վրա կը խորհէին։

«Լսեցի որ կիներըը նկրչնման մասին կը խօսէին, ու աւելի դեռատի կիներէն մին իրօք ներչնչած կը թւէր, բայց կ'ենթադրեմ թէ քիչ մը հիւանդ էր։

«Այրերէն մին գրիչով ու մելանով լինքրնի պատկերին ընդօրինակութիւնը կ'ընէր։ Բացարձակօրէն ներչնչած էր։ Չինք տեսած վայրկեանին

Խորհրդային Հայաստանի այս փառաւոր յաղթութիւնները ամէն ճշմարիտ հայու սիրտը կը լեցնեն մեծ խանդավառութեամբ: Սակայն եւ այնպէս, այսօրուա յորելեանական տարեդարձի առիթով պէտք է չեշտել կրկին ու կրկին, թէ այս բոլոր վերմարդկային նուաճումները կը պարտինք 1920–ի Նոյեմբերեան յեղափոխութեան, որով Հայ աշխատաւորը կրնայ իր բախտը Խորհրդային Միութեան հետ, մի անդամ ընդ միշտ արմատախիլ ընելով պառակտրդային չտպաւորումի կործանարար դրութիւնը եւ այդպիսով հնարաւոր դարձուց մեր Խորհրդային Հայաստանի հրաշալի վերածնութեան գործը: Այլապէս, Խորհրդային Հայաստանի յառաջադիմութիւնը պիտի տրտնջար նոյն թշուառ ու տարտախտ վիճակին, որուն այսօր կը տրտնան տասնեակ միլիոնաւոր բանուորներ ու գիւղացիներ դրամատիրական երկիրներու մէջ:

Այո, անշուշտ, կեցցէ՛ Խորհրդային Հայաստանի կառաւարձ հոգի եւ հրաշալի յառաջդիմութիւնը այս կարճ տարիներու մէջոցին, բայց, հիմա, միշտ ու յաւիտեան կեցցէ՛ն 1917–ի եւ 1920–ի բոլշեվիկեան վառաւոր յեղափոխութիւնները:

Կեցցէ՛ Խորհրդային Միութիւնը:

Կեցցէ՛ Խորհրդային Հայաստանը:

ԼԵՒՈՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Ֆրեզնո, Քալիֆ.

ՀԱՐՏԱՆՈՒՄ Է ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԸ

Գունանկարչութիւնը, արձանագործութիւնը, գրաֆիկան, դեկորատիվ արուեստը եւ մանաւանդ պէս պիտութիւնն ու թատերական արուեստը ներկայումս ունեն իրենց խոշոր եւ ընդունակ վարպետները, աչքի ընկնող տաղանդները, որոնք հաբրստացրել եւ հարստացնում են մեր երկրի մշակոյթը:

Աւելորդ է վիճաբանել մենք ունենք մեծահարուստ ժառանգութիւն, մասնաւորապէս անապատ են ձեռագրերի էջմիածնի պետական թանգարանում գտնուղ նկարչական ադբիւրները: Ջահանց արժէքաւոր եւ ուսանելի է նաեւ վարպետ մանրանկարչների ստեղծագործութիւնը:

Ես անյետաձգելի եմ համարում մեր մանրանկարների ժողովածուի շուտափոյթ հրատարակութիւնը, քան որում այդ պատկերացնում եմ մեծ որպէս նրբաճաշակ ակադեմիական հրատարակութիւն:

Անցած տասն եւ հինգ տարուա ընթացքում խորհրդային իշխանութեան ստեղծած միանգամայն նպաստաւոր պայմաններում ամէն են նոր կապրեր, որոնք կատարելագործում են:

Ծաւալած սոցիալիստական չինարարութիւնը ծնում է զարմանալի հերոսներ, կերպարեւսող վարպետներին տալիս է հրաշալի թեմատիկա, եւ ոչ մի կասկած չի կարող լինել, որ մեր նկարչական կադրերը կը կարողանան օգտագործել մեր օրուա թեմատիկան, կը կարողանան սոցիալիստական աօրհասի եւ ազնակատարութիւնների վառ ու յաղեցած գունագեղութիւնը վերածել գեղարեւստական արժէքների եւ տալ մեր սոցիալիստական հայրենիքին մեր մեծ գարաչրջանին համահնչուն բաեւգծագործութիւնները:

Ժողովրդական Նկարիչ՝

ՅԱԿՈԲ ԿՈՋՈՒՆԱՆ

Երեւան

ԿԵՑՑԷ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Մինչդեռ եւրոպական եւ ամերիկեան բոլոր պետութիւնները անտեսական ծանր ճգնաժամի ազդեցութեան տակ ամաւր մը վախած են օտար բանուորներու մուտքը՝ իրենց սահմաններէն ներս, եւ ամէն ներելի եւ աններելի մէջոցներու կը դիմեն արդէն հոն գտնուղներու աշխատանքի իրաւունքը սահմանափակելու եւ նոյն իսկ իրենց սահմաններէն հեռացնելու, անդին դեռ տասն եւ հինգ տարի առաջ սովի, համաճարակներու ճանկերէն եւ մեծ ու պզտիկ պատերազմներու սարսափներէն հազիւ ազատած վոքրիկ հոգւոմաս մը՝ չնորհիւ իր աշխատաւորութեան հերոսական ջանքերուն եւ զրկանքներուն, չնորհիւ Խորհ. Միութեան թէ՛ նիւթական եւ թէ բարոյական օժանդակութեան, ոչ միայն ապահոված է իր աշխատաւոր քաղաքացիներուն բարեկեցիկ կեանք մը, այլ եւ լայն բացած է իր դռները, օտարութեան մէջ անվերջ թափառող եւ գործազրկութեան տառապանքներու ենթարկուած իր արեւակիցներու առաջ:

Աւելորդ է վիճաբել հոն տիրող հասարակական կարգերու առաւելութիւնները հասատատող ասելի պերճախօս վառաւ մը:

Ներգաղթը ոչ միայն խորհրդանիշ մըն է մեր երկրի անտեսական եւ քաղաքական ներկայ կացութեան, այլ եւ անքակտելի վառահութեան հաւատիք մը ապագայի անդուսպ յառաջդիմութեան:

Կեցցէ՛ Խորհրդային Միութիւնը:

Կեցցէ՛ անորմկ անբաժանելի տասն եւ հինգամեայ Խորհրդային Հայաստանը:

Բժ. Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Փարիզ, Ֆրանսա

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ (ժողովրդական նկարիչ)

ՊԱՆԾԱԼԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Այն ժամանակ դա իմ ամենահետաքրքիր ճանապարհորդությունն էր Մոսկվայից: Ես իմ նկարիչ ընկ. Մինասեանի հետ 1901 թվին նորան հիւր եկա իր մայրենի Երեւան քաղաքը: Այն ժամանակ Երեւանը տիպիկ արեւելեան քաղաք էր, ուսումնական տերապետութեան 60 տարին փիչ էր անդրադարձել պարսից տարգմանների քաղաքի վրայ: Ամենը երկու երեք փողոց եւ կառուցել էին մի քանի կազմոնների տուն:

Այս հետաքրքիր ծայրամասը ծառայում էր որպէս աքտարավայր ապստամբութիւնների համար, որոնց մասին ցարական իշխանութիւնը զգուշացման էր ենթարկում Հայաստանը:

Այս վիճակում էր գտնում Երեւանը մինչեւ իմ վերադարձս Պետերբուրգ: Իսկ պատերազմը յայտարարելուց յետո քաղաքը զարձաւ արեւմտեան Հայաստանից գաղթած բազմաթիւ գաղթականների վերնդմանը: Արկածախնդիր դաշնակցականների տերապետութեան կարճ ժամանակաշրջանն էլ լիովին քայքայեց երկիրը, միանգամայն ազգասպրեց այդ:

1920 թվի Նոյեմբերի 29-ի պատմական օրը Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութեան ալիքները հասան Հայաստանին:

Խորհրդային իշխանութեան գոյութեան սան եւ հինգ տարիները մինդամայն փոխեցին երկիրն եւ Երեւան քաղաքի կերպարանքն ու բովանդակութիւնը: Ես չեմ խօսելու հակ չինարարութեան մասին: Կը չօչափեմ միայն այն բնագաւառը, որտեղ ես եմ աշխատել:

Իմ բարեկամ՝ խորհր քաղաքական գործիչ եւ Երեւանի մարդ Ա. Միասնիկեանի հրաւէրով 1921 թվի Սեպտեմբերի 13-ին ես Երեւան եկա եւ իմ կոյն աշխատանքի անցա:

Անդրկովկասում խաղաղութիւնն ամրացնելուց յետո՝ խորհրդային իշխանութիւնը ձեռնամուխ էր եղել երկրի վերականգնման աշխատանքին:

Պատերազմի տարածներից յետո ազատօրէն չունչ քաշող Հայաստանի աշխատաւորները ձեռք գործեցին երկրի չինարարութիւնը:

Ես աշխատում էի Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի գծով թանգարանների, նկարչական գպրոցի, Հնութիւնների պահպանութեան կազմակերպման եւ այլ գծերով:

Մենք կազմակերպեցինք կենտրոնական թանգարանը, նկարչական, հնագիտական, սպառազրական, պատմական-գրական բաժիններով, ինչպէս նաեւ յեղափոխութեան թանգարանը: Այսօր, Հայաստանի խորհրդայնացման տան եւ հինգամեայ կին, թանգարանի այս բաժինները վերածուել են էքսպոնատների արժէքաւոր հաւաքածոներով ինքնուրոյն թանգարաններ, որոնց համար Մշակոյթի Տան դահլիճներում յատկացած տեղը արդէն նեղ է, եւ այս կապակցութեամբ ներկայացս յատուկ թանգարանային չենք կառուցելու անյետաձգելի հարցն է կանգնած մեր առջեւ:

Նկարչական մշակոյթի կազրը պատրաստելու համար մեզանում արդէն յաջողութեամբ գործում է Նկարչական տեխնիկումը, որը մեր երկրին տուել է մի շարք երիտասարդ տաղանդաւոր նկարիչներ:

Պատմութեան, ճարտարապետութեան եւ հնագիտութեան յուշարձանների հսկայական քանակութիւն ունեցող այնպիսի մի երկրում, ինչպիսին Հայաստանն է, Հնութիւնների պահպանութեան կազմակերպման գործն ունէր միջազգային նշանակութիւն: Եւ մեզ ծօտ այդ գործն այնպէս է կազմակերպւած, որ Հնութիւնների պահպանները ներկայումս արդէն ի վիճակի են կատարելու որոշ վերականգնման աշխատանքներ, ինչպէս օրինակ առաջին դարի յուշարձանը Հանդուսացող հռչակաւոր Գառնիի տաճարի (Տրդատեան) վերականգնումը: Հնութեան յուշարձանները տարէ տարի աւելի ու աւելի են գրաւում տուրիստների եւ ինտուրիստների ուշադրութիւնը:

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից բոլշեվիկների իմաստուն իշխանութիւնը չինարարական եւ մշակութային աշխատանքի է կոչել մի ամբողջ շարք մասնագէտների, տպա ստեղծել է նոր կադրեր, որոնք պատուով են կատարում իրենց աշխատանքը:

Մենք է կերպարուեսի հակառակ՝ դասնքաղաքների, արձանագործութեան եւ նարտարապետութեան բնագաւառում կատարող աշխատանքը: Զանգւածների մշակութային մակարդակի բարձրացման կապակցութեամբ, կերպարուեստագործների առաջադրող որակական պահանջները գնալով աւելի ու աւելի են մեծանում: Խաղաղութեան եւ անճակատութիւնն աւելի ու աւելի են մղում դէպի յետին ծրագիրը: Մեր նշանաբանը՝ ԼԱՒԱԳՈՑՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻՆ՝ անհրաժեշտ է էլ աւելի եռանդուն կերպով արմատացնել կեանքում: Որովհետեւ աշխատաւոր ժողովուրդը կառուցում է իր համար, իսկ իր համար պէտք է կառուցի աւելի լաւ, քան կառուցում էր առաջ իրեն շահագործողների համար:

Իմ ցանկութիւնն է, որ Հայաստանի խորհրդայնացման քսանամեակին մենք ունենանք թանգարանի յատուկ չէնք, բարձրագոյն նկարչական դպրոց եւ վերականգնած լինենք համաշխարհային գեղարուեստական պատմական նշանակութիւն ունեցող մի ամբողջ շարք յուշարձաններ:

Երեւան

ԵՍ ԳՈՀ ԵՄ, ՈՒՐԱԽ ԵՄ, ԵՐՋԱՆԻԿ ԵՄ

Երբ հասատա որոշել էի դալ Մորհուրդներու երկիրը, իմ նախկին «ընկերները» խորհուրդ էին տալիս ինձ չգնալ բարբարոսների, մարդկութեան ու մշակոյթի թշնամիների երկիրը, այդ 1922 թուին էր:

Ձեշտ չի լինի, եթէ ասելու լինեմ, որ Մորհրդային երկրի հասարակական – քաղաքական դրութիւնը, նրա նպատակները ես որոշակի գիտակցութեամբ ըմբռնում էի, ո՛չ, ես շատ աղօտ պատկեր ունէի:

Երեւանի Պետական Թատրոնը ինձ ընդունեց ջերմ գրկաբացութեամբ եւ զորովանքով:

Ես տեսա, որ Մորհրդային Հայաստանը կառուցում է մի նոր, անցեալում չտեսնուած թատերական հաստատութիւն, որը պահանջում է անձնանուիրութիւն, խորհրդային բարձր գիտակցութիւն եւ սէր:

Ես տեսա, թէ ինչպիսի հոգատար եւ ուշադիր վերաբերմունք ունեն դէպի թատրոնը եւ դերասանները մեր կոմունիստական կուսակցութիւնը եւ պետութիւնը:

Եւ այդ ջերմ վերաբերմունքի շնորհիւ մենք այսօր ունենք մի թատրոն, որը Մխութեան թատրոնական ընտանիքում ունի իր պատուաւոր տեղը, մենք այսօր ունենք չարժանկարի արդիւնաբերութիւն, որի նկարները արժանացան խորհրդային եւ արտասահմանեան մամուլի բարձր գնահատանքին:

Մենք, դերասաններս զարձել ենք խորհրդային հասարակութեան սիրելի աշխատաւորները, իսկ այդ հանգամանքը մեզ ստեղծագործական աշխատանքների մէջ, այդ հանգամանքը մեզ թեւաքերում է ունելի բեմնատուր, ունելի խոր ու իմաստալից գեղարուեստական ստեղծագործութեան ճանապարհ:

Մեր երկրի տան եւ հնգամեակի սեմից ես յանկութիւն ունեմ բարձրաձայն աղաղակելու եւ բոլոյն վաղոցներում Թատրոդ իմ նախկին «ընկերներ»ին, որ ես պոհ եմ, ուրախ եմ, երջանիկ եմ:

Վաստակաւոր դերասան՝
Հ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

Ամերիկահայ քանդակագործ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ Գործ՝ քանդակագործ Յ. ՓԱՓԱԶԵԱՆԻ Նկարած երեւանի Թանգարանին

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մ. ԴՈՒՐԳԱՐԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ

Կուսակցութեան վերջին տարիների որոշումները դպրոցի եւ պիոներ կազմակերպութեան մասին, ինչպէս նաեւ «Պրավդա»յի (1935 թ. փետր. 28) եւ կուսակցական-խորհրդային ողջ մամուլի կողմից տասնապատիկ՝ դանդաժային–դասախրակտիկական աշխատանքների ծաւալման եւ ուժեղացման

Մ. ԴՈՒՐԳԱՐԵԱՆ

անհրաժեշտութիւնը սրեցին խորհրդային հասարակայնութեան ուշադրութիւնը մանուկների դաստիարակութեան, նրանց հանգստի ու ժամանցի կազմակերպման, նրանց դեղարուեստական սպառման չուրջը: Կուսակցական–կոմերիտական կազմակերպութիւնների եւ ժողովրդական լուսաւորութեան օբլանների նախաձեռնութեամբ այսօր, Խորհ. Միութեան բոլոր վայրերում սկսել է լայն դանդաժային շարժում: Եւ ամեն ուրեք յայտարարւած են դանդաժային մրցումներ՝ լաւագոյն դաստիարակչական աշխատանքի, մանկական հիմնարկի եւ երեխայի հոգատարութեան խնդիրների չուրջը, սկսել է արտադրական արշաւ դպրոցական չինարարութեան բնագաւառում, աշխուժացել է դեղարուեստական հիմնարկների դրծունէութիւնը, ծաւալւում է մանկական ինքնադրծ խմբակների աշխատանքը Երեւանում եւ այլ վայրերում:

«Նպատակ ունենալով հրապարակ հանել եւ մեր երկրի աշխատաւորութեան սեփականութիւնը դարձնել տաղանդաւոր երեխաների ստեղծագործութիւնները, Հայաստանի Լենինեան Կոմունիստական Երիտասարդական Միութեան կենտրոնական կոմիտէն եւ Լուսաւորութեան Ժողովրդական կոմիսարիատը, 1935 թ. Մարտի մէկից մինչեւ Մայիսի մէկը յայտարարել են պիոներների ու դպրոցականների լաւագոյն գրւածքների եւ նկարների համրապետական մրցում:

Մրցման մասնակցութեան են հրաւիրւել 8–14 տարեկան մեր պիոներներն ու դպրոցականները՝ իրենց նկարներով, բանգակներով, փորագրութիւններով, մակետներով, արձակ ու չափածո գրւածքներով, երաժշտական աշխատանքներով:

Մեր պատանեկութեան մէջ սկսած լայն դանդաժային շարժումը փաստօրէն ուելի լայնացրեց մրցումի դրած պայմանները. ոլիմպիականներում եւ իրենց նկարչական–երաժշտական ստեղծագործութիւններով հանդէս եկան նաեւ ութից ցածր տարիքի երեխաները (սկսած չորսից) եւ 14–ից բարձր՝ պատանիներ (մինչեւ 16–17 տարեկան):

Բացի թւած աշխատանքներից կենսրոնական եւ տեղական ժիւրիներն ստացել են ու ցուցադրել նաեւ տեխնիկական մոդելներ, մանկական գիւտարարութեան նմոյշներ, ասեղնագործներ, դեղարուեստական գծագրումներ եւ այլ աշխատանքներ:

Մրցումի ընթացքը դեկավարելու եւ կազմակերպչական օժանդակութիւն ցոյց տալու համար, Հայաստանի Լենինեան Կոմունիստական Երիտասարդական Միութեան կից գործում էր հանրապետական ժիւրին, որի կազմի մէջ, բացի Հայաստանի Լենինեան Կոմունիստ. Երիտ. Միութեան եւ Լուսաւորութեան Ժող. Կոմիսարիատի պատասխանատու ներկայացուցիչներից, մտնում են նաեւ մեր անւանի նկարիչներից՝ Մ. Սարեանն ու քանդակագործ Ա. Սարգսեանը, մեր երաժշտագէտներից՝ Մ. Ազաեանը, հանգուցեալ Ռ. Մելիքեանը, գրողներից՝ Ալազանը, մանկավարժներից՝ Սանթրոսեանը, Դեղրզարեանը, ինչպէս նաեւ արւեստի այլ ճիղերի ու մամուլի ներկայացուցիչները:

Մրցումի խնդիրների ժողովրդականացման գործում մեծ դեր կատարեց մեր մամուլը («Պիոներ Կանչ», «Ավանգարդ», «Խորհրդային Արւեստ», «Խորհրդային Հայաստան»), մանաւանդ «Պիոներ Կանչը» որն իր վրա վերցնելով էքսպեդիտորների (ցուցադրւած առարկաների) եւ գրական–կերպարւեստական ստեղծագործութիւնների ընդունումն ու զնահատումը, միաժամանակ կազմակերպեց Երեւանի եւ հանրապետական ցուցահանդէսները եւ լաւագոյն գրական–նկարչական ստեղծագործութիւնների ծաւալման եւ այդ աշխատանքների որակի բարձրացման համար, սրելով նաեւ մեծերի (դպրոցի, ուսուցչի, կոլվարի (պիոներական հա-

տաքականության վարիչ), ծնողի ուշադրությունը:

Մինչեւ այժմ կատարած աշխատանքները ըստ նպատակի եւ նախնական որոշ եղրակացություններ հանելու նպատակով մենք կանգ կ'առնենք ըստ ժողովրդական եւ կատարողական արվեստի որոշ ճիւղերի վրա, նշելով աչքի ընկնող եւ բարձրարակ ու բնորոշ գործերը:

ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովրդականացման համար ամենայարմար նիւթերը գրական ստեղծագործութիւններն են, սրանցից մեր մանուկները ու պատանիները ուշարկել են մօտ երեք հազար թէ՛ երեւանից եւ թէ մօտակա ու հեռաւոր չրջաններից (Գոբիս, Նոր Բայազետ, Մարտունի, Մեղրի եւ այլն), ինչպէս նաեւ Հայաստանի գրքից:

Հեղինակները են՝ մեր հոկտեմբերիկ եւ պիոներ գպրոցականները 8–15, երբեմն եւ աւելի տարիքի: Սակայն «բանաստեղծներ» խոշոր մասը 12–15 տարեկաններն են. «Պիոներ կանչում» հրատարակած բանաստեղծութիւնները՝ մեծ մասամբ անփոփոխ են տպագրած, երբեմն՝ չնչին լեզուական ուղղումներով: Անչուշտ ստեղծագործութիւնների որոշ մասը գտնում է մեր բանաստեղծների ու գրողների տղայութեան տակ. կան նմանութիւններ Տէրեանին, Զարենցին, Թումանեանին, Մնկոյեանին եւ այլն: Սակայն կան նաեւ «ինքնաբուղխ» անմիջական ստեղծագործութիւններ, որոնք անկեղծ են, յուզական, թէպէտ նախնական: Անշուշտ գրած քերթի (չափածո) արժեքը թոյլ է, երբեմն տարբական կանոնների ու պահանջների խախտումով: Սակայն բոլոր գրած քերթերում համարեա աչքի է ընկնում մի խոշոր առաւելութիւն-հակիրճութիւն, որը չատ յաճախ չի յաջողւում նոյն իսկ չափահաս գրողներից չաւելին:

Մանուկ ու պատանի ստեղծագործողները չատ հարուստ նիւթ են օգտագործում. դպրոց-պիոներութիւն, մանկական կեանք, յաճախ ենթակայական, քնարական ապրումներ, «խոհեր» ու իղձեր, գիւղական, գէթազանօրէն հասարակական կեանքը, բնութեան նկարագիրը, զգալի չափով տեղ է տրւում յեղափոխութեան առաջնորդներին, սոցիալիստական չինարարութեան առօրեային:

Բաղմաղան են նաեւ գրական ձեւերը, որոնց մէջ, ինչպէս նկատել է նաեւ ընկ. Այտպանը՝ աչքի են ընկնում հեքիաթն ու առակը, — այն գրական ձեւերը, որոնք աչքաթող էին արւած վերջին տարիներս մանկական գրականութեան ու մանկավարժութեան կողմից: Այս կարգի նիւթերից առանձնապէս ուշադրութեան արժանի է Նորիկ Նազարեանի (Երեւան, Թէլմանի անուան գպրոցի 7-րդ դասարանի աշակերտ) «Մոծակների Հաքսանիքը», որը գրած է սրամտօրէն, երգիծանքով, միանդամայն գրագէտ կերպով, եւ չնայած գրած որոշ տգեղութեան (մնկոյեանի), վկայում է պատանի հեղինակի գրելու շնորհքը:

Դեղցցիկ է Ծողիկ Առաքելեանի (Մեղրի) «Կոլանառուհու երգը». որը «ծոնօթ մոտիվներ» է յիշեցնում.—

… Ոսկէ խուրձեր —
Ցորնի խուրձեր
Մարգագետնին
Մենք կը շարենք
Շարքերով.
Դու էլ, արտուտ,
Լուսածագին
Աշխատանքի
Դովէրը կ'անես
Երգերով:

Հետաքրքրական լուծում է տալիս «Զալիկ ձիու դանդաղին» Վ. Մուրադեանը (Երեւան, կենտրոնական դպրոց, վեցերորդ դասարան).—

… Փոխանակ ինձ խնամելու,
Առողջ ու զէր ինձ պահելու,
Հայհոյում են միշտ կռպտաբար
Եւ խոշտանգում գազանաբար:

— Այսպէս ապրելն անհնար է,
Զիլ խրխնջաց Զալիկը ֆայ,—
Լաւ է գնամ ու բադրեիմ
Մանուկներին կարմրավզկապ:

Ռոհամանութիւն, փորձ ու ճաշակ է նկատւում Ռաֆիկ Արամեանի (Մասւանի անուան դպրոց, երկրորդ դասարան) ձօնում Վ. Տէրեանին.

Տխուր սիրտդ էռ կեանքի պէս վիրաւոր,
Որպէս դրօշ դու պարզեցիր բոցավառ,
Արեւներին, աշխարհներին հեռաւոր
Ու չհասար մեր օրերին լուսավառ:

Իր նպատակադրւածով, պարզութեամբ ու հակիրճութեամբ գրաւիչ է 11 տարեկան Մ. Շատուրեանի (Լենինական) «Մայրն ու ալյոն» ոտանաւորը.—

— Իմ սիրուն իկ,
Անուշ բալիկ,
Որ մեծանաս,
Ի՞նչ կը դառնաս:
— Դառնամ պիտի
Հերոս մարտի:

— Իմ սիրուն իկ,
Անուշ բալիկ,
Որ մեծանաս,
Ի՞նչ կը դառնաս…
— Մեր վառ երկրի
Պահակն արի:

Նոր պատկերացում է տալիս պիոներին Նարիկ Հայրապետեանը (14 տարեկան, Կիրովական)։—

... Մկանուտ են ձեռքերը իմ,
Այդ ձեռքերով պէտք է մի օր
Գրոհի գնաս յամառ կամքով,
Գրոհ հուժկու եւ անաւար։

Դու այդ կռւում պէտք է յաղթես,
Ոսոխներին մեր ջնիամար,
Պէտք է ծագի արեւ մի քեզ,—
Սոցիալիզմի արեւն անմար...

Մեր նշանաւոր բանաստեղծի (Զարենցի) գրական ազդեցութիւնն անչուշտ նկատելի է այստեղ...

«Պիոներ կանչը յատուկ էջ է նւիրել 15-ամեայ չնորհալի ստեղծագործող Հրաչ Ծովհաննիսեանին (Երեւան, Շահումեանի անուան պալոց), տպագրելով նրա մի քանի չափածո գրւածքները.— «Գիշեր», «Վերջալոյս», «Մխածան»։

Անհամեմատ քիչ են արձակ գրւածքներն ու պիէսները (եղակի փորձեր)։ Արձակ գրւածքների մէջ աչքի են ընկնում Ռաֆիկ Արամեանի (15 տարեկան) «Դահիճները», Ռուբիկ Պարսամեանի (15 տարեկան) «Վարոս ամին», Վ. Քոչարեանի (12 տարեկան) «Վերջին մարտը» եւ Հ. Խաչատրեանի (14 տարեկան) «Դաւաճանի որդին», որոնք գլխաւորապէս հին կենցաղն ու բուրժուական-դրամատիրական կարգերը եւ հերոս-յեղափոխականների կեանքն են պատկերացնում։

ԿԵՐՊԱՐԻՆՍՏԱՑԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մրցումի նիւթերի մէջ թէ՛ քանակով եւ թէ՛ որակով խոշոր տեղ են գրաւում նկարները, մասամբ նաեւ մակետները։ Մեր նկարիչներից ու քանդակագործներից ոմանք հիացել են այդ գործերով, պատանի ստեղծագործողների հմտութեամբ, նուրբ ճաշակով առաւելապէս՝ վառ երեւակայութեամբ։ Նկարիչ-մանկավարժ Վ. Գայֆէճեանը բարեխղճօրէն ուսումնասիրել եւ ունէ է իր դնահատականը («Պիոներ կանչ» թիւ 27, «Սորհրդային Արեւտա» թիւ 8)։—

«Սուրիկ Խոսրովեանը չնորհալի տղա է... Գ. Թորոսմանեանը ցուցադրել է ջրանկարով կատարած մի քանի յաջող գործեր... Ծովակ Մեսրոբեանը (12 տարեկան) իր գծային էսքիզներով յայտնաբերել է ուժեղ դիտողութիւն եւ աշխատանքի մէջ ցուցաբերել է ուժեղ դիմադրութիւն... Զի կարելի աչքաթող անել Վ. Խանգուտեանի էտիւդները. նա միանգամայն ճիշտ ճանապարհի վրա է կանգնած։ Ս. Արուտչեանը նոյնպէս խրախուսանքի արժանի գործեր է ունէ... Լաւ են Վ. Սամուէլեանի գունաւոր մատիտներով գործերը՝ իրենց բովանդակութեամբ եւ իւրայատուկ կատարումով... Գ. Աւագեանի բազմաթիւ մատիտանկարները կատարած են բնականից, որոնց վրա երեւում է նրա սուր դիտողութիւնների կնիքը»...



Նկար՝ ՅԱԿՈԲ ԵԿՄԱԼԵԱՆԻ
Երեւանի Շահումեան Պղրոցէն

Հետաքրքրական են 13 տարեկան Ֆիդանեանի, Մամիկոնի (Լենինական), Վարդանեան Սայոպալի (Դիլիջան) գործերը։

Վերջինս ճարտարապետի համբերութեամբ արտագծել է Հռոմի եւ Ժողովրդական Տան (Երեւան) նախագծերը՝ մեծ խնամքով ու ճաշակով, բոլոր մանրամասնութիւններով։

Էյֆէլի Աշտարակը, ս. Հայաստանի Երեխաներու Ստեղծագործութիւններէն

Զնչին բացառութեամբ մեր բոլոր պատանի նկարիչները զանգւածային (ոչ-մասնագիտական) դպրոցի աշակերտներն են, որտեղ նկարչութիւնն ընդհանուր առմամբ իր արժանի բարձրութեան վրա չի դրւած։

Կերպարւեստի գործերի թեմատիկան չափազանց բազմազան է ու հարուստ, պարզ նատիւրմորթից մինչեւ խոշոր պատմական կտաւներ ու առաջնորդների դիմանկարներ (Ստալին, Կիրով, Վորոշիլով)։ Մեծ տեղ է տրւած բնութեան տեսարաններին եւ մանկական-պիոներական կեանքին։

ԵՐԳ–ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐ

Կան եւ մանուկ «երգահաններ»,— սաեղծագործողներ եւ կատարողներ: Զոր տաբեկան Վիլլի Սարգսեանը համարում է արտասովոր ընդունակութիւններով տէր երեխա. նա նւագում է ու երգում (երիցայն՝ մօր հետ) սկսած երեք տարեկանից, վերջին ժամանակներս նա յօրինել է 7–8 մեղեդի: Երաժիշտ–մանկավարժ Դ. Զազարեանի

ՎԻԼԻ ՍԱՐԳՍԵԱՆ



«Ծիտիկը վանդակում» Գործ Վիլլի Սարգսեանի

կարծիքով, Լեմկ նրան ցոյց տալ անհրաժեշտ ուշադրութիւնն ու մանկավարժական հսկողութիւնը, «փոքրիկ Վիլլին մենք ապագայում կարող ենք տեսնել տաղանդաւոր սաեղծագործողների շարքում»:

ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ ՍՏԵՓԱՆԵՆՆԵՐ

Ուշադրու է 12 տարեկան Տէր Գաբրիէլեանի սաեղծագործութիւնը՝ «Զուլուսկիներ»–ին նուիրուած:

Վեց եւ աւելի տարեկան Սաեփանեաններն (քոյր եւ եղբայր) նոյնպէս ունեն իրենց սեփական սաեղծագործութիւնները («Վանիկ», «Զատիկ»):

«Երգ–Անիսօն» Գործ՝ Էդիկ Միրզոեանի

13 տարեկան Էդիկ Միրզոեանը դեռ եւս երիտասարդ պրել էր քայլերգ դաշնամուրի համար: Նրա «Երգ–անիսօն» (Ռ. Մելիքեանի յիշատակին) աչքի է ընկնում իր մեղեդիի, սիմֆոնիկ ինքնատիպ կառուցուածքով եւ վառ գոյներով:

ԷԴԻԿ ՄԻՐԶՈԵԱՆ

ՌՈԶԱ ԱՅՎԱԶԵԱՆ

Երգի եւ նւագի կատարման տեսակէտից աչքի է ընկնում երեւանի դպրոցներից տասը տարեկան «փոքրիկ երգչուհին» (Ռոզա Այվազեանը), որն իր չափազանց ուժեղ ձայնով եւ մայեակ նուագի եղանակի յաջող կատարումով հետաքրքրութիւն է արժանացած, Սոֆիկը (տասրուհի), Նաֆիկա Սաֆարովան (քուրդ), Ա. Փամբուկեանը, Դ. Սալախեանը, Հ. Միրզոեանը, Ն. Մելիքսէթեանը, Խ. Եփրեմ–

Եդիկը կարմիր բանակայինն Տարազով

եանը, Տիգիմակը (թաս), Հրանտը (դամփ), Բեազիմովան (թուրք), կոտայքի չրջանում՝ Գէորգը, Վարդուշը, Ժորժիկը, Ազատը, Ալբերտը:

Ունենք եւ չնորհալի արտասանողներ. հիանալի է ութ տարեկան Եդիկի «կարմիր բանակային» արտասանութիւնը- երգը. Էր. Չինեանը կատարեալ վարպետութեամբ է արտասանում «Անդրկովկասը»: Յաջող են՝ Մարուսեան (10 տարեկան), Կարլենը (15 տարեկան), Արտուշեան (15 տարեկան), Յասմիկը (13 տարեկան), Մատևեանն (12 տարեկան), Հրանուշը (Ելզովան), Գառնիկը եւ Սերեոժան (Շահար):

Շատ են չնորհալի պարողները՝ Վարդանոյշը (14 տարեկան), Հրաչիկը (10), Զմրուխտը (12), Շողիկը (10), Զեմման (5), Էլիան (13), Մարուսը (10), Սերեոժան, Լիդան, Շողիկը (կոտայք), 14 տարեկան Զաւէնը իր «անպային նապով» ու երգով (քրդական «Դլու») մեծ անուն է վաստակել:



Նմուշ մը Հայաստանի Պատանի Ստեղծագործողներու Նկարներէն

Ստեղծագործական եւ կատարողական արուեստի զանազանային չարժումից յետ չեն մնում նաեւ արտասահմանից Խորհրդային Հայաստան ներգաղթած աշխատաւորութեան երեխաները, որոնք մեծ հետաքրքրութեամբ մասնակցում էին մրցումին եւ ողիմպիականին:

Նոր Բիւթանիայի զպրոցից 12 տարեկան վաճագն Գալուեանը եւ Շահումեանի անուան զպրոցից (Երեւան) Աղաւնի Թորոսեանն իրենց ոտանաւորնե-

Նմուշ մը Հայաստանի Պատանի Ստեղծագործողներու Նկարներէն

րով յանախ հանդէս են եկել «Պիոներ Կանչի» պատանի ստեղծագործողների էջերում:

Անվիճելիօրէն չնորհալի ոտք է Արամ Արամեանը, որն — ինչպէս վկայում է երիտասարդ նրկարիչ Էդ. Խարէկեանը — ապացուցում են նրա (Արամեանի) յուշագրած երեք նկարները: Մոշոր կատաւ վրա, մեծ աշխատասիրութեամբ, տեղ-տեղ մանրակրկիտութեան հասնող խնամքով օգտագործել է պարզական մինիատիւրան եւ նկարչութիւնը: Նրա միւս նկարը («Ընտրդն անտառում» հետաքրքիր կառուցուածք ու գոյներ ունի: Արամեանը յաջող կերպով նկարում է եւ դիմանկարներ. «Ընկերներ Վորոշիլովը, Կարախանը եւ Բուդեոնին Անկարայում» ինքնուրոյն եւ հետաքրքիր նկար է, թէպէտ անհամաչափ է տրւած առարկաների եւ մարդկանց փոխադարձ մեծութիւնը:

Արամեանին պէտք է զգուշացնել, որպէս զի զգալի արտանկարելուց եւ ուրիշների գործերին մեքենականօրէն հետեւելուց: Նա չնորհով եւ աշխատասէր ոտք է եւ կարող է զարգացնել իր ընդունակութիւնները:

Շատ են մեր մանուկ-պատանի ստեղծագործողները, գեղարուեստական կատարողները, քիչ չեն եւ չնորհալիները ու օժտուածները, որոնց հնչին մասին է դեռ եւս յայտնաբերւած: Խորհրդային իրատարկղը, զպրոցի ու պիոներական ծոցում կը զարգանայ, կը հասունացնի այդ չնորհալիներին եւ նրանց բախտաւոր մանկութեանը կը յաջորդի հասուն, կենսուրախ աշխատանքը:

15 ԱՄԵԱԿԸ ԵՒ ՆՈՐ ԱՒԱՆՆԵՐԸ

ԵՐՋԱՆԻԿ ԿԵԱՆՔԻ ԼՈՒՍԱԻՈՐ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Աւելի քան երեք տարի է, ինչ Խորհրդային Իշխանութեան նախաձեռնութեամբ եւ հսկայական նիւթական ծախսումով առաջ է ընթանում Խորհրդային Հայաստան ներգաղթող աշխատաւորների ընդունման գործը: Այս վերջին երեք տարում, շնորհիւ արագօրէն զարգացող սոցիալիստական տնտեսագիտութեան՝ մենք հնարաւորութիւն ունեցանք նեթս առնելու տասնեակ հազարաւոր աշխատաւորներ. աշխատաւորներ, որոնց անցեալը եղել է դառն արցունքների, սեփական եւ օտարազգի բուրժուազիայի կողմից անլուր կեղեքման մի պատմութիւն:

Ահա թէ ինչու մեր կառավարութիւնը կարեւորացաւ իրապէս, եւ այն էլ հսկայական ծաւալով, ընդառաջել բուրժուական ճնշման եւ դաշնակ թափթփուկների կրունկի տակ հեծող գաղութահայերի սրտաբուղխ ձգտմանն՝ հնարաւորութիւն տալով վերջիններս անմիջականօրէն մասնակից լինելու երկրի սոցիալիստական վերակառուցման մեծ գործին:

Հայ հակայեղափոխութեան ստորաժան պարագլուխ Դաշնակցութիւնը բաղխեց Խորհրդային Հայաստան մեկնող հազարաւոր գաղութահայ աշխատաւորների ալեծուփ չարժման անխորտակ պատնէշին, կրկին ծաւացաւ այդ չարժման դէմ, առատօրէն ցիրկի լուտանքներ թափելով Խորհրդային իշխանութեան այդ ձեռնարկման հասցէին: Ասելին՝ նա վայրագօրէն կրկին կեանքի կոչեց իր բարմամեա չանտաժիստական – տեռորիստական խմբակներին, որպէս զի ամէն կերպ խափանի զէպի սոցիալիստական հայրենիք մեկնող կարաւանների երթը: Սակայն ի զուր: Արտաքսմանի Հայ աշխատաւորութիւնը, լաւ ըմբռնելով Խորհրդային գրութեան տաւտլութիւնները, եւ քաջ դիտակցելով Դաշնակցութեան՝ իմպերիալիզմի այդ գառամեալ պնակլիզնների՝ յիսին նպատակները, հաստատ համոզմամբ որոշեց մեկնել մեր երկիրը՝ ամմիջականօրէն մասնակից լինելու Խորհրդային Հայաստանի սոցիալիստական վերելքի գործին: Եւ այդ ձգտումն այսօր աճում է անսահմի չափերով:

Մեկը միւսի հետեւից Խորհրդային Հայաստան եկան Ամերիկայի եւ Ճունաստանի, Բուլղարիայի եւ Ֆրանսիայի գաղութների բազմաչարչար աշխատաւորները, իմպերիալիստական բուրժուազիայի շահագործման ոտնակոխ հիւծած գաստակերպային մեր եղբայրները: Նրանք եկան վերադնունդի եւ փրկութեան չողշողուն յոյսերով, գիտակցելով իրենց փայլուն հեռանկարները եւ այդ առաջ ունենալով մեր ամման վերելքի որոշ դժուարութիւնները: Նրանք եկան եւ այսօր արդէն զարձել են Խորհրդային մեծ Հայրենիքի արժանաւոր քաղաքացիները: Նրանք եկան, որպէս զի դանուն աշխատանք, հանգիստ եւ երջանիկ կեանք: Նրանք եկան եւ Խորհրդային Իշխանութեան աջակցութեամբ, կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ կերտում են իրենց երջանիկ կեանքը:

Եւ ահա այսօր, Խորհրդային Իշխանութեան շնորհիւ եւ նրա յատկացրած հսկայական նիւթական միջոցներով, արտասահմանի աշխատաւորների աջակցութեամբ, ներգաղթողները զարթնում են իրենց կեանքի երջանկութիւնը՝ ձուլուած Հայաստանի աշխատաւորների եւ հետագաճտնտեսականների երթին: Ահա երեք տարի է, որ նրանք մեկը միւսի հետեւից կառուցում են օրինակելի տներ, հերկում են հազարաւոր հեկտար նոր հողամասեր, տնկում են տասնեակ հազարաւոր ծառեր, անց են կացնում ոռոգներ եւ ջրատար խողովակներ: Այդ կարճատեւ չրջանում, երեւանի չրջակայքում, զովասուն բլուրների եւ ծառաստանների, ինչպէս նաեւ խոպան դաշտերի գրկում ամէնտ ամէն, տարի առ տարի բարձրանում են սոցիալիզմի նոր քաղաքացիների լուսաւոր անակնկալի թռպամասերը:

Ոչ միայն տասնեակ տասնեակներում, այլ եւ մեր սրտիմպաթիաների բոլոր խոշոր միաւորներում, խորհրդային տնտեսութիւններում, գուք կը հանդիպիք ներգաղթողներին, սոցիալիզմի կառուցման հոյակապ գործին լծուած այդ մարտիկներին: Նրանք տասչ են գնում ձեռք ձեռքի, ուս ուսի մեր հաւատարմագիրների եւ հետագաճտնտեսականների հետ՝ դէպի սոցիալիզմի վերջնական յաղթանակը:

Նոր Արարկիրում, Նոր Սերասիայում, «Ա-րագած» արտելում եւ այլն՝ գուք կը տեսնէք այսօր սոցիալիստական մրցութեան անձնուէր հերոսագործների նորանոր գնդեր, որոնք արագ թափով բարձրացնում են իրենց կեանքի մշակութային-նիւթական մակարդակը՝ յաջողութեամբ կատարելով արտադրական պլանները:

Վերցնենք թէկուզ Նոր Արարկիրը: Երբեմնի 13 ընտանիքից բաղկացած այս ուտան այսօր դարձել է երեւանի ամենաառաջաւոր արտարձաններից մէկը: Այս ուտան ունի ջուշկանոց (կիսամեքենայացած) 110 դազգեահներով, որտեղ աշխատում են 500 հոգի. 45 տրիկոտաժի մեքենաներ, հիւսուածքի եւ վերմակի աշխատանոցներ, հօշկակարանոց, դերձականոց եւ այլն: Երբեմնի երեք

հատարակ բնակելի չէնքերի փոխարէն, այսօր մեր առաջ բարձրացել է լուսաւոր եւ մաքուր մի աւան՝ 185 երկյարկանի չէնքերով եւ 500 սենեակներով: Ինչպէս միւս աւաններում, այնպէս էլ այստեղ արագ թափով զարգանում է ներդաշնողների անասնական եւ մշակութային կեանքը: Բաւական է նշել, որ 1927 թւի 8,000 ռուբլի արտադրանքի փոխարէն Ախուրիկին այսօր տարեկան տալիս է երկու միլիոն ռուբլու արտադրանք: Աւանն ապահովուած է ևլեքտրական լոյսով, հօթնամեայ դպրոցով. կառուցում է նոր բաղնիք եւ այլն: Նոր Ախուրիկցիների իւրաքանչիւրն ունի կով, ոչխարներ:

Ահա թէ ինչպէս են կերտում իրենց երջանիկ կեանքը ներդաշնող աշխատաւորները, որոնց տրնկած իւրաքանչիւր ծառը, հիւսած իւրաքանչիւր թելը խոչոգացրն մի հաւատ է մերձ ի մահ Դաշնակցութեանը:

Առաջին հնգամեակի վաստակ յաղթութիւնները, ներքին եւ արտաքին ճակատներում տարած մեր փայլուն յաղթանակները, եկան մի անգամ ընդ միշտ եւ անվերադառնալիօրէն վերափոխելու մեր երկիրը ներդաշնած աշխատաւորների մի մահի մանր բուժուական հոգեբանութիւնը: Այն հանգամանքը, որ ներդաշնող գանգուածը այսօր ամուր կռնկել է Խորհրդային Իշխանութեան սոցիալիստական աները պատւանդանին, ինքնին մեր կուսակցութեան եւ Խորհրդային Իշխանութեան վաստակն յաղթանակներից մէկն է:

Սակայն մեր յաջողութիւնները ներդաշնի կազմակերպման ասպարիզում բնաւ եւ ոչ մի դէպքում չպէտք է վհատն ծառային ոմանց՝ անուսեալ մասնակի բացերն ու թերութիւնները:

Ներդաշնողների նիւթական եւ մշակութային կեանքն աւելի բարեկեցիկ դարձնելու համար անհրաժեշտ է, որպէս զի կուսակցութեան երեւելի կոմիտէն եւ միւս շրջանային կազմակերպութիւնները, Լուսաւորութեան ժող. կոմիսարիատը, Առողջապահութեան ժող. կոմիսարիատը, Մասնաշրջանների ժող. կոմիսարիատը, Հայ Տնտեսդրծադրման Համագործակցականը, Հայ Առեւտուրը, ինչպէս եւ միւս հիմնարկները, կրկնապատկեն իրենց աշխատութիւնն ու ուշադրութիւնը ներդաշնողների նկատմամբ:

Դժբախտաբար, ստիպուած ենք չեշտել, որ Առողջապահական ժող. կոմիսարիատը, կարմիր Խաչը, Լուսաւորութեան ժող. կոմիսարիատը, ինչպէս նաեւ տեղական կուսակցական կազմակերպութիւնները դէպի ներդաշնողները ցուցաբերում են միանգամայն անբաւարար եւ առնձին դէպքերում ոչ հոգատար վերաբերմունք: Մինչդեռ կուսակցութիւնը պահանջում է աւելի հոգատար խնամք, աւելի ջերմ եւ բոլշեվիկեան վերաբերմունք դէպի ներդաշնողների արդարացի պահանջներն ու կարիքները:

Մրագրային կարգով առաջ տանել նոր աւանների չինարարութիւնը, ապահովելով այդ գործը չինանիւթերով, որոշ աւաններում այս իսկ տարի վերջնականապէս լուծել ջրի խնդիրը, ի պատ արմատախիլ անել մի շարք աւաններում տեղ գտած կազմակերպական թերութիւնները, բարւոքել ներդաշնողների բուժ–սանիտարական գործը — այս մեր պարտականութիւնն է որի մէջ թերանում ենք չատ յաճախ անթոյլատրելի կերպով:

Անհրաժեշտ է, որ կուսակցական կազմակերպութիւնները, առանձնապէս կուսակցութեան քաղաքային կոմիտէն, յատուկ ուշադրութիւն դարձնեն ներդաշնողների շրջանում կատարուող քաղաքական–դաստիարակչական, մշակութային աշխատանքի վրա: Նրանց մօտ աշխատելու պէտք է ուղարկել բանիմաց, զգօն, մշակութային եւ կուսակցականօրէն կայուն ընկերներ, խոհեմ կերպով հաշուի առնելով նրանց կենցաղավարութեան առանձնայատկութիւնները, տալ նրանց օրինակելի դրաստարաններ եւ ընթերցարաններ, աւելի ծաւալել արհեստագործական համագործակցականի ցանցը, պատշաճ բարձրութեան վրա դնել մանկապարտէզները ու մսուրները ներդաշնողների մօտ:

Իսկ գաղութներում չնչուած եւ Հայ աշխատաւորութեան կոկորդից արիւն ծծող անատամ գամփռները՝ պարոնայք գաշնակները, Թող առնան արդեան կամենան: «ԴԱՇՆԱԿՆԵՐՆ ԱՅԼ ԵՒՍ ՈՉ ՈՒՔ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՅԱՒԵԼ ԻՐԵՆՑ ՍՏԵՐՈՎ ԵՒ ՍՏՈՐ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ: ԱՅՆՔԱՆ ՊԱՐԶ Է ՈՒ ՎԵՀ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՎԱԿԱՑԻԱՆԵՐԻ ՍՏԻԵՐՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՈՐ ԵՒ Է ՉԱՓՈՎ ՆՍԵՄԱՅՆԵԼ ԱՅՆ: ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՄԱՅՔՆ ՈՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԳՆԱՀՎ ԱՒԵԼԻ ՈՒ ԱՒԵԼԻ ԱՃՈՒՄ Է ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԷՋ» (Ա. ԽԱՆԶԵՆԱՆ):

Թող վայրահաչեն խմփերխալիզմի հլու մանկլաւիկ գաշնակները, իսկ մեր նոր խորհրդային քաղաքացիները ընթանում են եւ կ'ընթանան երջանիկ կեանքի լուսաւոր ուղիներով:

«Ա. Հ.»

ՎԱՀԱՆ ԹՈՓՈՎԵՆՑ

ՆՈՒՊԱՐԱՇԷՆ

ՆԱՆՕՓ.— Վահան Թոփովենց, տաղանդաւոր գրագէտը, «Խորհրդային Հայաստան» թերթին մէջ Նուպարաշէնի մասին գրած է յօդուած մը, որմէ կ'արտատպենք հետեւեալ մասը: ԽՄԲ.

Նուպարաշէնցիները պէտք է քայլեն դաշերի դարչ տարածութիւնից դէպի ներքեւ, Արարատեան դաշտը, այսպէս կոչուած դէպի զմրուխտեա օազին, որպէս զի իմանան որ աշունը եկել է մեր երկիրը, որովհետեւ Նուպարաշէնում դեռ եւս ոչ մի դղում չի դեղնում եւ թաղողի ոչ մի ոդկոյզ չի չորչորում. եղած մի քանի փոքրիկ թփերն արդէն գնդնել են ամառը: Այսպէս է եւ գարունը: Նրանք ուրիշ կանաչազարդ գիւղերից են իմանում, որ գարունը եկել է:

Այս բոլորը նրանից է, որ ջուր չկա եւ ամբողջ տարածութեան վրա իշխում է դաշերի օրէնքը — անջրդութիւնը:

Տարուբդնների իշխանութիւնն իր բուռն ու անողոք պայքարի դրօշը պարզից նախ եւ առաջ դաշերի այդ օրէնքի դէմ, կոտրից այդ օրէնքը, հանգանգեցրից իրեն մեր երկրի դորշ, չամուռ, անդուռ եւ անարդաւանդ տարածութիւնների մի պատկառելի մասը: Այս պայքարն սկսած է եւ այսուեղ,— դաշերի ջրանցքը եկել, հասել է նաեւ Նուպարաշէն, ու ահա մի տարի եւս, կը փչրւի դաշերի չամուռութիւնը: Զանգուռի ջուրը, որ պիտի մտնի ջրանցքի մէջ Արդնիի մօտերքից, պիտի կանաչացնի այս չոր տարածութիւնը: Այդ ժամանակ, եւ այդ ժամանակը չափազանց մօտ է, դմրուխտեա մի օազի եւս, թեւեւս աւելի փարթամ քան Արարատեան դաշտի զմրուխտեա օազին, պիտի պարածանդի այս գարաւոր չոր տարածութիւնը, այն ժամանակ պիտի դեղնեն դղումները եւ պիտի չորչորան խաղողի ոդկոյզները: Այլ եւս նոր աունկների փոքրիկ թփերը ո՛չ թէ պիտի դեղնեն ամրան, այլ ուշ աշնան՝ իրրեւ ընութեան ոսկեւորումը, աւելի երկար քան գարնան ծաղկաթափումը: Եւ այս գորշ տարածութեան մէջ ապրում եւ կատուցում են աշխատաւորներ, որոնք Տարհուրդների իշխանութեան պայքարին լծած մարտիկներ են: Զրի այն գոյդն քանակը, որ հասել է Նուպարաշէն՝ խմելու համար, դիշերը խնայում է եւ ցեմենտա մի աւազանի մէջ լցւում, որպէս զի յաջորդ օրն օգտագործւի աւանի շինարարութիւնն առաջ տանելու համար: Եւ կատուցում է աւանը, բարձրանում են չատ ճաշակաւոր բնակարաններ, յայն փողոցներով, ներքին յարմարութիւններով եւ ձմրան սառնամանիքի դէմ պաշտպանելու նախապատրաստութիւններով:

Մտնում ենք արդէն բնակելի անները — արատկարգ մաքրութիւն, լուցած յատակներ, չարաթը մէկ անգամ ապխտակարած պատեր (այդպէս է այդտեղ բնակող ժողովրդի յատուկ, անփոխարինելի սովորութիւնը), նոր արդուկած եւ չուշանի սպիտակութեամբ անկողիններ եւ բարձեր, անային իւրաքանչիւր ամենափոքր առարկայի վրա մի մօր, մի հարսի կամ մի աղջկա զարմանալիօրէն խնամքոտ ձեռքի չօշափելի հետքերը կան:

Այդպէս է եւ Նուպարաշէնի կառուցման պետի եւ երեւանի Բաղաքային Տարհուրդի լիազօրի ընկեր Արապեանի գրասենեակը, այդպէս է եւ ճաշարանը, բացարձակապէս անճաշակ, այդպէս է պիոներների եւ կոմերիտասականների ակումբը, այդպէս է ամէն տեղ, իւրաքանչիւր քայլափոխում:

Նուպարաշէնցիները քաղաքից ատեն դնալ–դալու համար առաջ կարում էին 28–30 կիլոմետր ճանապարհ, այժմ չինած է նոր ճանապարհ, որն ընդամէնն ութ կիլոմետր երկարութիւն ունի: Պէտք է աշակցել, որ նոր ճանապարհի մի քանի քարկամաւրջներ չինուին, մի փոքր տարածութիւնը փորւի վերջնականապէս եւ խճագոմն ատաւուի: Սա կենսական եւ անյետաձգելի պահանջ է ոչ միայն ատանի, այլ եւ չրջակա մի չարք կիւղերի հատաքական տնտեսութիւնների համար, որովհետեւ հատաքական տնտեսութիւնները եւս երթեւեկում են նոր ճանապարհով՝ խնայելով ժամանակ եւ այժ:

Արդէն Նուպարաշէն է հասցրած եղեքտրական այժ տանելու համար անհրաժ գոդի սիւներէ չարքը, հարկաւոր են մի քանի սիւներ եւս, որպէս զի ատանն ապատւի մթութիւնից: Այս գործի ատարտումը եւս կարօտ է աջակցութեան: Համապատասխան մարմինները չպէտք է թերանան: Լոյսն իր հետ անսահման եռանդ, նոր ոգեւորութիւն կը տանի:

Պայքար է սկսած այնտեղ եւ դաշերի քարերի դէմ — ահա քարերի բնութիւնը կոյտեր ընդարձակ տարածութիւնների վրա: Այդ քարերը հատքել եւ կոյտեր են կազմել իրենք՝ Նուպարաշէնի աշխատաւորները, որպէս զի հնարաւորութիւն տեղ–ծեն բուտհանութեան անարգել ամման համար: Քարերի տակից բացւում է հարուստ արգասաբեր հողի մակերեսը, աքանչելի կարմիր հողը, որ կանաչելու համար ապասում է ջրի, դաշերի ջրանցքին: Մարդ գարմանքով է դիտում չորութեան եւ անբերրիութեան դէմ սկսած եւ յաջողութեամբ տարուած այդ պայքարի արդիւնքները:

Եւ ես պատկերացնում եմ մօտաւոր ապագան — լուսաւոր եւ կանաչավառ մի աւան դաշերի դորշ տարածութեան գրիւում, մի կատարեալ ոասիս դարերի մթութեան մէջ եւ ապագա այգեգան իր հետ քաղաք կը բերի ոսկեայ ուրախութիւնը, խաղողի ողկոյզի չորս եւ կայտառ ու նոր մի սերունդի հոգու ինդութիւնը:

ՆՈՐ ՍԵԲԱՍՏԻԱ

Նոր Սեբաստիան անճանաչելի է դարձել բոլոր նրանց համար, ովքեր վերջին մի քանի ամիսների ընթացքում այնտեղ ոտք չեն դրել: Մենք ուրախ ենք ու հպարտ յայտնելու, որ սոցիալիստական մրցման կարգով մեր Նոր Սեբաստիան հասել ու անցել է իր մի շարք հարեւան նոր ուսանողից:

Աչքի ընկնող չինարարութիւնը, այդ օրինակելի գործոցի չէնքն է (Աբամեանը), որտեղ սովորում են 107 աշակերտներ: Դպրոցն անցեալ տարի տարրական էր, այս տարի դարձել է միջնակարգ: Շէնքն օժտուած է բոլոր յարմարութիւններով եւ բոլոր էլեւունքները տալիս է մեզ հպարտանալու, նոր եռանդով լցւելու: Մշակութային–կրթական ճակատի վրա մեր ձեռք բերած այդ նուաճումին զուգընթաց բարձրանում է մեր կեանքի մակարդակը դէպի բարեկեցութիւնն ու երջանկութիւնը: Արդէն Նոր Սեբաստիան մուտք են գործել՝ ռադիոն, հեռաձայնը, էլեկտրական լոյսը,— մշակութային բարիքներ, որոնք արդիւնք են անտեսութեան բարւոք վիճակի, մեր արդիւնաբերութեան զարգացման:

Բոլորովին անմարդաբնակ, քարքարոտ մի վայրում, ինչպիսին Նոր Սեբաստիայի հողն էր մինչեւ կոմուզգումը, դարձնել բնակելի, կանաչեցնել այն, բարձրացնել չէնքեր, այնտեղ կառուցել Արամեան վարժարանի փառաւոր չէնքը, վերածելով այն միջնակարգ դպրոցի, օժտել ուսանողներին էլեկտրականութեամբ ու ռադիոյով եւ այնքան կարճ ժամանակում, այդ միայն կարելի է խորհրդային երկնակամարի ներքո, միայն սոցիալիստական խնդակառուցութիւնը կարող է այդ հրաշքը կատարել: Այդ կատարած է չնորհիւ ինդարաբանի այն պարզուսին, այն ընդհանուր ոգեւորութեան, որով վարակած է ողջ Խորհուրդների երկրի աշխատաւորութիւնը, չնորհիւ այն բանի, որ մեզ մօտ աշխատողը տեսնում, չօչափում է աշխատանքի արդիւնքը, վայելում է իր կուտակումները: Այդ, չնորհիւ այն բանի, որ մեզ մօտ աշխատաւորութիւնն ինքն է գործի տէրը, վերահսկողը, չնորհիւ այն բանի, որ մեզ մօտ ամէն ինչ կատարւում է ծրագրով, նախապէս գծած պլանի համաձայն, պլան, որ գծւում է հաւաքականի ընդհանուր չահը, համայնքի ընդհանուր բարեկեցութիւնը, անտեսութեան զարգացումը, մշակութային յառաջդիմութիւնը նկատի առնելով:

Նոր Սեբաստիան արդէն քաղաքատիպ ուան է դարձել զարգացման լայն հեռանկարներով: Գիւղատնտեսութեան կողքին զարգանում է մեր արդիւնաբերութիւնը:

Մեր հաւաքականին պատմագրւած 16 հեկտար տարին (խաղող եւ պտղատու ծառ), 3 հեկտար բանջարանոցը եւ 15 հեկտար հացահատիկը մեծապէս օժանդակում են մեր արդիւնաբերութեանը, որ մեր տնտեսութեան հիմնական ճիւղն է հանդիսանում երեւանի ու Հայաստանի, ինչպէս նաեւ Մերձրուսկասի մի քանի քաղաքային կենտրոնների չուկաները ծանօթ են մեր արդիւնաբերական արտադրութեանը: Նոր Սեբաստիայի արտադրանքը՝ մնացակա կոտրներ, դուլպաներ, փուֆայկաներ, գլխարկ եւ չարֆերը արդէն լայն սպառում ունեն չուկայում:

Թիֆատանն արդէն 1936 թուին տալու է իր առաջին արդիւնքը, որով ապահովում է մետաքսի արտադրութեան հումքի բազան: Թիֆատանի կողքին նախատեսել ենք բաց անել չերմասպասուհիների առաջին դործարանը, տեղում օգտագործելու համար հումոյքը:

Այժմ չնորհիւ էլեկտրական հոսանքի, մեր գործարանի ամսական արտադրութիւնը բազմապատկրել է: Առաջ նախնական միջոցներով գործարանն ամսական տալիս էր 82,000 ռուբլու արտադրանք, էլեկտրական հոսանքի չնորհիւ այդ արտադրանքը հասել է 140,000 ռուբլու: 1932–1933 թուերին մենք դեռ եւս հնարաւորութիւն չունէինք մեր հաւաքականի բոլոր աշխատունակ անդամներին աշխատանքով ապահովելու, այժմ բոլորն են աշխատում, բացի այդ, քաղաքից տասնեակներով մեզ մօտ գործում են եւ դեռ աշխատող ուժերի կարիք ենք զգում:

Մեր տնտեսական դրութեան բարւոքումը դէպի երջանիկ կեանք տրած մեր նուաճումների պատճառն է այն, որ Նոր Սեբաստիայից, սրանից տարիներ առաջ հեռացողները նորից վերադարձել, տեղաւորւել ու աշխատում են չատ հանդիստ ու խաղաղ: Մեր հաւաքականի անդամները բացի հաւաքատնտեսութեան ընդհանուր սեփականութիւնից, որից այնքան օգուտներ են քաղում, ուներն էլենց վարելահողը, պահում են՝ կով, աչխար եւ թռչուններ: Ընդհանուր բարեկեցութեան ցուցանիչ է նաեւ Նոր Սեբաստիայի ծնդաբերութեան աճման տոկոսը: Բացած մանկամսուրը հնարաւորութիւն է տալիս մայրերին աշխատե-

Նոր Սեբաստիո Մետաքսի Գործարանը

Կամիս Շէնիճի Պաղտէզի կողմը

լու: Հաւաքածոյնութիւնը տարածուում է եւ կառանց մէջ: Բուլղուլ Սաքալեան, Մարիամ Մինասեան (Ջուլհակներ) եւ շատ ուրիշները հաւաքածոյինների առաջին շարքի վրա են եւ Հոկտեմբեր ամսին աշխատել են 460 ռուբլի: Շինարարութեան մէջ աշխատող օրմնադիր վարպետներ Հմայեակ Օհնիկեան, Անդրանիկ Անտոնեան նոյն ամսին ստացել են 620 ռուբլի:

Մեր համայնքի մշակութային մակարդակը բարձրացնելու նպատակով բացել են դիւրեայնի դասընթացքներ, երբորդ խումբ մեծահասակների համար անգրագիտութիւնը վերացնելու եւ վերապատրաստելու նպատակով:

Այս բոլոր նաւաճումները, որ թւում են թերեւս ակնարկով, միայն նրա համար է, որ մեր արտասահմանի հայրենակիցներին հասկացնենք, թէ որքան մեծ նշանակութ դործ են կատարում նըւիրելով Նոր Սեբաստիայի կառուցման գործին: Նրա համար, որպէս զի Թորխրդային Հայաստանի թշնամիները Նոր Սեբաստիայի կառուցման գործի թշնամիները լինել չունենան, համարձակութիւն չունենան իրենց սեւ գործը առաջ տանելու:

Դեռ չչորացած թանաքը դատարանի այն արձանագրութիւնների, որով Նոր Սեբաստիայի կառուցման գործի թշնամիները ապացուցանել, թէ ինչու չեն ուզում այդ գործը, թէ ինչու նրանք դէմ են Նոր Սեբաստիայի կառուցմանը: Բանտանդիր այդ տարրերին պէտք է դիմահարդել անել ամեն կերպ, ամեն տեսակ, պէտք է աշխատել ցոյց տալու այդ տարրերի հակահայրենադարական դէմքը:

Արտասահմանում եւ յատկապէս Ամերիկայում ցրուած մեր հայրենակիցներն ու նրանց հայրենակցական միութիւնները հսկայական գործ կարող են կատարել, եթէ մտածեն, գիտակցեն, որ Նոր Սեբաստիայի կառուցման գործը պահանջում է աշխատանք, ուժերի համախմբում, միացում:

Այժմ, Ամերիկայում սկսած է «Ջրի եւ ընդերքագործութեան կենտրոնական յանձնաժողովի» նախաձեռնած տասը հազար տոլարի հանգանակութիւնը: Անհրաժեշտ է, որ բոլոր վայրերում, բոլոր հայրենակցական միութիւնները ու անձինք այժմեան, պատերազմական նախաձեռնողների խրախոյսը, մի խնդիր որն այնքան կենսական է եւ անհրաժեշտ՝ Նոր Սեբաստիայի կառուցումը արագացնելու համար: Պէտք է մտածել եւ յուշ կերպով մտածել այն մասին, թէ ինչպէս կարելի է բոլոր միութիւնների եւ հայրենակցականների գործունէութեան մէջ ստեղծել ներդաշնակութիւն, որպէս զի ուժերի ջլատում առաջ չգա, որպէս զի ընդհանուր ուժերով եւ հաւասարապէս ամրապնդուի Նոր Սեբաստիան: Այդ ներդաշնակութիւնը նպաստում է նաեւ այն բանին, որ հակասակորդների, թշնամիների ձեր աշխատանքը ձախողեցնելու փորձերը կը փչանան, ջարդ ու փչացը կը լինեն տեղն ու տեղը: Խօսելով տառնձին հայրենակցականների մասին, մենք կարող ենք այստեղ յիշատակել Դավրացիներինը, Իստանպոլցիները, Զարայինը, Կովսուենինը, Բրաբերդինը, որոնք իրենց տրամադրութեան տակ ունեն պատրաստի դրամագլուխներ եւ ինչ ինչ նպատակներով (նկատառումներ, որոնցից եւ ոչ մեկը հիմք չունի) մնում են անգործադրելի, աւելի ճիշտ օգտագործում են ի վնաս Մարտ. Հայաստանի, ի վնաս Նոր Սեբաստիայի, քանի որ այդ դրամագլուխներից օգտագործողները ու բանկիրներն են եւ բոլոր նրանք, որ թշնամի են մեր աշխատասիրութեանը եւ իրենց «հիմքն» ունեն այդ դրամագլուխը պահելու տրտասահմանում:

Դավրացիները, օրինակ՝ չեն մտածում այն մասին, որ երբ իրենց մօտ անգործածելի վիճակում են դառնում դրամագլուխը, իրենց հայրենակիցներին բաւական թւով ընտանիքներ բնակարանի կարիք ունեն եւ զրկած են վերաշինացի կառուցած բնակարաններում: Այդպէս եւ միւս հայրենակցականները: Ինչո՞վ բացատրել այն՝ որ Եռատասի Հայրենակցականը մինչեւ այսօր դեռ եւս չի ուզարկել դրամագլուխ այն տարրերութիւնը, որ նա պատրաստ է մնում կառուցած երկու ու կէս յարկանի չէնքի հաշւի դիմաց:

Այս օրինակները դեռ կարելի է բերել, բայց այսքանն էլ բաւական է ցուցնելու համար, որ արտասահմանում գտնուող մեր հայրենակիցները ու նրանց հայրենակցական միութիւնները հսկայական գործ կարող են կատարել, եթէ մտածեն, գիտակցեն, որ Նոր Սեբաստիայի կառուցման գործը պահանջում է աշխատանք, ուժերի համախմբում, միացում:



«ԱՑԻ» Պարոցի Շինարարութեան Տեսարան մը

Նոր Սեբաստիա Մանկատունը

տասահմանի մեր հայրենակցական միութիւնների մօտ անասհման չափով հնարաւորութիւններ ու միջոցներ կան նոր թափով, հարւածային թափով կառուցելու, բարձրացնելու, զարգացնելու Նոր Սեբաստիան: Հարկաւոր է, որ ինչպէս ասացի, սահմնի ուժերի համակենտրոնացում, գործունէութեան ներդաշնակութիւն, հարկաւոր է, որ մեր հայրենակիցները դիտակցեն իրենց գործի մեծութիւնը, գոյն որ իրենց նպատակը մեծ է, որ Նոր Սեբաստիան բոլորինն է: Թող Այդի գործունէութեան օրինակը վարակի մեր բոլոր միւս կազմակերպութիւններին, թող նրա գործը որ անմահ է մնայու, օրինակ ծառայի հայրենակցական բոլոր միութիւններին արտասահմանում: Վերաչինացի օրինակը նոյնպէս խրատական է արտասահմանի մեր բարեկամ կազմակերպութիւնների համար: Անհարատտ մութ ու ենթպատար տարրերը երկար ժամանակ աշխատեցին իրենց ազդեցութեան տակ առնել այդ կազմակերպութիւնը, որին մեծ դեր է վիճակուած խաղալու յատկապէս Նոր Սեբաստիայի կառուցման գործում: Նրանք այդ սեւ գործի մէջ յաջողեցան: Բայց այդ յաջողութիւնը երկար չտեւեց, շնորհիւ այն յամառ ու անկոտրում երկար, որ մղեցին Վերաչինացի մեր ընկերները, Նոր Սեբաստիայի կառուցման կոմիտէի անդամները, Մարզպետական Հայրենիքի բարեկամները: Թշնամիների դիմակը պատուհաս եւ կազմակերպութիւնը ազատուեց իր գործունէութեան հունը վտանգող ուղղ անհարատատ տարրերից: Այժմ Վերաչինացը վստահելի ձեռքերում է գտնում եւ մենք վստահ ենք, որ շնորհիւ նոր ղեկավարութեան, Վերաչինացը գործունէութեան նոր ու բեղուն մի շրջան է թեւակոխելու:

Հասարակական կազմակերպութիւնները գործի ձեռնարկելիս՝ պէտք է լրւած լինեն իրենց նպատակի ճշտութեան, օգտագործութեան, մեծութեան գիտակցութեամբ, պէտք է հատաք ունենան այն բանին, որ գործում են աշխատաւորական զանգւածների, իրենց համայնքի, հատքականի ընդհանուր շահերի համար, նրանց ապագայի համար: Աւելի մեծ գործ քան Նոր Սեբաստիայի կառուցումը մենք չենք պատկերացնում: Ցանկալիչ պատրաստւում է նոր կարաւան ներգաղթողների: Կասկած չկա, որ այդ կարաւանում կը լինեն եւ Սեբաստացիներ, ինչո՞ւ համար մենք աւելի չատ պատրաստի չենքեր չունենայինք մինչեւ նրանց գալը: Եւ ոչ միայն այդ, հարկաւոր է նաեւ, որ մենք այժ ատնք մեր գործարանների ընդլայնմանն ու կատարելագործմանը՝ օժտելով նրանց նոր մեքենաներով: Հարկաւոր է գլուխ բերել մեր քաղաքի ջուրը բերելու անյետաձգելի գործը, էլ չենք խօսում մեր աւելի հեռաւոր ծրագրերի մասին, ինչպէս էլեքտրաքարշ կառքի (տրամվայ) կառուցումն է եւ մի նոր երեխաների (տրամվայ) կառուցումն է եւ մի նոր երեխաների նաղալիքի գործարանի հիմնումը, որանց եւ չատ ուրիշ գործերի համար անհրաժեշտ է, որ արտասահմանի մեր հայրենակիցներն այժ ատն միզ, օժանդակեն, կենտրոնացնեն իրենց ջանքերը, պատակելով նպատակի վեհութիւնը եւ գործի մեծութիւնը եւ մեր գործը՝ Նոր Սեբաստիայի կառուցումը՝ կը լինի աւելի արագ եւ օրինակելի: Ահա է կանոնը:

Նոր Սեբաստիայի Շինարարութեան Պետ՝

Յ. ՎԱՐԵԿԵԱՆ

Դեկտեմբեր 3, 1935

Վ. Ս.

ԾԱՂԿՈՂ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՒԱՆՆԵՐ



Նոր Արաբկիրի Գործարանի Հիւսող Մեքենաներ

ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ

Դէպ 1925 թուականին Տաճկաստանի Արաբկիր քաղաքից նեղսպիտակ 13 աշխատաւորական բնակիչների (72 հոգի) նախկին անհատ ատաններ, Նոր Արաբկիրն արդէն դարձել է երեսուն քաղաքի արդիւնաբերական արտադանքից մէկը։ Արաբկիրի հայրենակցական միութեան միջոցներով հիմնադրման օրերին կառուցած 12 սենեակից բաղկացած 3 բնակիչ չէնքի եւ 5 նկատի փոխարէն, այժմ արդէն բարձրացել են մեյարկի եւ երկյարկանի 185 չէնք, ժամ 500 սենեակներով։ Բնակիչների թիւը հասնում է 1200–ի։ 1927 թ. 18 անգամներով կազմակերպուած ջուլհակների արտելը, որը ունէր միայն 10 գազգահ, այժմ վեր է աճել կիսով չափ մեքենայացած խոշոր գործարանի, 110 գազգահներով եւ 500 բանուորներով։ Աշխատում են նաեւ արհեստաժէ 45 մեքենաները։

Ն. Արաբկիր արտելն ունի նաեւ հիւսուածքի, վերմակի գեներ, գեղձակտոց եւ գօշակարանոց։ Բաւական է յիշատակել, որ 1927 թուականի 7–8000 ուբլու արտադրանքի փոխարէն Ն. Արաբկիրն այժմ տարեկան տալիս է ժամ 2 միլիոն ուբլու արտադրանք։

Նոր Արաբկիրի աշխատաւոր բնակչութիւնն առանձին է պարենաւորման սեփական լրացուցիչ միջոցներ։ 225 անհատներից 160 անհատներն ունեն անհատական հողամասեր, բոլոր անհատներն էլ համարեա պահում են կով, աչխարներ, համայնքներ։

Բնակչութեան կուլտուրական կենցաղային ըստպատրաստման գործը օրից օր զարգանում է ունելի բարձր հիմքերի վրա։ Քաղաքորդի միջոցներով կառուցած 7 ամեան գպրոցն արդէն գործում է, գպրոցում սովորում են 130–140 աշակերտներ։ Կա մանկապարտէզ, որտեղ ընդգրկուած են 60 երեխաներ, իսկ մանկամատուրն ունի 70 երեխաներ։

Ամանի եւ էլեկտրական լուսաւորութիւնն ապահովուած է։ Բնակարանների մի մասը միայն էլեկտրականութիւն չունի համապատասխան նիւթերի պակասի պատճառով։ Ամանն ունի ակումբ 200 հոգու տարողութեամբ։ 70 բնակարաններում կա ռադիո–բարձրախոս։ Ջրմուղը վազում է, որ անց է կացուած։ Երեսունի Բաղքորհուրդը ձեռնարկել է նոր բաղնիքի կառուցմանը, որը պատրաստ կը լինի Օդոստոսի 15–ին։ Այդ բաղնիքում օրական լողանալու են 200 հոգի։

Սակայն առօրեա աշխատանքների հետ կապուած որոշ պակասութիւններ կան, որոնց վրա անհրաժեշտ է կանգ առնել։

Առաջին հերթին ուսդպող առաւ անգրագիտութեան աշխատանքը տեղից չի շարժուում։ Մի աշխատանք,

որից կախում է անհրաժեշտ հոդամասերի բնաքանակությունը, եւ մանաւանդ Նոր Արարկիր արտելի գիւղատնտեսական ծառայութիւնը, ինչպէս նաեւ օժանդակ անասնութեան կազմակերպումը: Այստեղ իր խօսքը պիտի ասի Հայաստանի Ջրային անասնութեան վարչութիւնը:

Երկրորդ, Նոր Արարկիրը Երեւան քաղաքի հետ միացնող խճուղին ուղղակի անանցանելի մի ճահճապահ է: Երեւանի Քաղխորհուրդը Հայճանապարհ հետ միասին, ինչ գնով էլ լինի՝ պէտք է կարճ ժամանակում գլուխ բերի այդ գործը:

Նոր Արարկիրը բանւորական ձեռքերի զգալի կարիք ունի: Նոր աշխատաւոր ձեռքեր արտասահմանից բերելու խնդիրն էլ մեծ չափով կապած է բնակարանային չնաշարութեան հետ: Այդ պահասը լրացնելու համար այժմ սկսած են սկզբի տարիներից կեանքի մտցած հինդ չէնքերի կառուցման աշխատանքները: Սակայն չինանիւթերի պակասն զգալի է, որի տառապանքը կաղում է:

Հայմասաան այս գործում անհրաժեշտ ճկնուներ եւ հոգատարութիւն հանդէս չի բերում, ներկայացած հարցերի բաւարարելու համար:

Անհրաժեշտ է Ծողկամասրէի միջամտութիւնը:

ՆՈՐ ԲԻԹԱՆԻԱ

«Երեւան» կայանի մօտ մի նոր թաղամաս է Նոր Բիւթանիան, որը հիմնուել է 1929 թ.: Սկզբի տարիներին Նոր Բիւթանիան ունէր հաւթիւ տներ, իսկ այժմ այնտեղ կա 560 տնտեսութիւն՝ 2,200 հոգով: Բոլոր տնտեսութիւններն էլ ապահովուած են բնակարաններով, որոնք (մօտ 400 բնակելի չէնքեր) կառուցուած են անհատական նախաձեռնութեամբ եւ Երեւանի Քաղաքային Տարհուրդի օժանդակութեամբ: Իւրաքանչիւր տան կից կա փոքրիկ պարտէզ, բանջարանոց: Ամէն տնտեսութիւն պահում է մէկ կով, կամ մի քանի ոչխար: Թաղամասն ունի երկթարկան լուսաւորութիւն, ջրմուղ:

Նոր Բիւթանիայում աչքի է զարնում բնակիր Ս. Տէր Գարեգինեանի անուան զպրոցի չէնքը՝ իր լուսաւոր սենեակներով եւ լայն պատշգամով: Դպրոցում սովորում են 600 աշակերտ:

Նոր Բիւթանիայի բնակիչները միւս տաններին նման տեղական արդիւնաբերութիւն չունեն: Նրանք աշխատում են քաղաքի գործարաններում, մեծ մասամբ ԶԿԲ–Օճառի եւ Բամբակապուիչ գործարաններում:

Նոր Բիւթանիայի Հայբնակցական Միութիւնն տանի կառուցմանն առանձին օժանդակութիւն ցոյց չի տուել:

Մ. Վ.

ՆՈՐ ՄԱԼԱԹԻԱ

Նոր Մալաթիան հիմնուած է 1927 թ. Աչտարակի խճուղու երկայնքին, նրա չորքը գործարանում են Նոր Աբաստան, Նոր Թամարան, Նոր Տիգրանակերտ ու Նոր Կեսարիան:

Այս բոլոր տաններից Նոր Աբաստան եւ Նոր Մալաթիան մեծ քայլերով առաջ են գնացել:

Նոր Մալաթիան աչքի է ընկնում իր քարաչէն կանիկ չէնքերով, որոնք կառուցուած են յատուկ նախագծով: Բոլոր տներուն էլ կա էլեքտրական լոյս, բոլոր բնակարաններն էլ ունեն յարմարութիւններ (խոհանոց, պատշգամբ, նկուղ եւ այլն), իւրաքանչիւր տան կից կա պարտէզ-բանջարանոց: Բնակարաններում նկատուում է մաքրութիւն ու կարգ: Ամէն տեղ նկատում ես պատից կախած տապիս:

Երեւան քաղաքի երրորդ թաղամասը զարձած Նոր Մալաթիան ունի 53 տնտեսութիւն՝ 210 հոգով: Համաքաս բոլոր տնտեսութիւններն էլ ունեն մէկական կով, կամ մի քանի այծ եւ ոչխար: Տան, պարտէզ եւ մէկ կով կամ մի քանի ոչխար միայն ունեն Նոր Մալաթիացիները: Ի՛չ, նրանք ունեն ընկ. Սաակեանի անուան երկնց արդիւնաբերական հաւաքատնտեսութիւնը, որի բազան են հանդիսանում արհեստաւոր գործարանը, 27 հեկտար տարածութեամբ խաղողի այգիները եւ բանջարաբուծութեան համար յատկացուած հոդամասը:

Մալաթից աշխատելու է նոր բացած մետաքսի ոչխատանոցը, որը խորհրդային չուկա է հանելու տեղական մետաքսից պատրաստած գործուածքներ (գուլպա, ժակետ եւ այլն): Աբաւելն ունի նաեւ կօշկակարանոց:

Սպասարկական մբցումն ու հարաւածչութիւնը ծաւալ են տացել տարելի անգամների մէջ, բոլոր տնտեսութիւններն էլ տանց բացառութեան բոլոր տնտեսութիւններն էլ տանց բացառութեան հոդի պարզեւատուել են: Հաւաքատնտեսութեան հոդի պարզեւատուել են: Հաւաքատնտեսութեան հոդի պարզեւատուել են: Հաւաքատնտես

ՊԱՏՐԻԿ ՍԵԼԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ

Ա.

Առաջին անգամ լլլալով ամերիկահայ պատւիրակութիւն մը կ'երթայ ճանաչելու մեր հայրենիքը, որ կը կոչւի Հայաստան Երկիր Խորհրդային, եւ որ գործած է գաղութահայ աշխատասիրութեան սերնդին, եւ որու մասին մարդիկ կը պատմէին այնպիսի բաներ, որոնք հրաշագործութիւններու պէս կը թւէին ամենքին:

Եւ այդ երկիրը այնքան սիրելի էր գործած գաղութահայութեան համար, որ բանուորները, աշխատաւորները, ամենու մտածող մարդիկ — գործատէրերն, արհեստաւորներէն, կանանց բոլոր մարդերէն քով քովի եկան եւ որոշեցին.

— Եթէ կա հայրենիք մը, այդ է որ կա — Հայաստան Երկիր Խորհրդային: Մոռնանք մեր հին ծննդավայրը եւ կառուցենք այնտեղ մեզ համար արդիւնաբերութեան եւ մշակոյթի նոր օճախներ:

Եւ ահա Խորհրդային Հայաստանի լայնածաւալ շինարարութեան մէջ փայլուն կէտերու պէս սկսան երեւիլ ու ծաղիլ Նոր Արաբկիրը, Նոր Մալաթիան, Նոր Սեբաստիան, Նոր Ամասիան, Նոր Խարբերդը, Նոր Բիւթանիան, Նոր Տիգրանակերտը եւ Նոր Կեսարիան:

Եւ գաղութահայ աշխատաւորութիւնը չէր սխալած: Մտած Խորհրդային Հանրապետութիւններու մեծ ընտանիքին մէջ, ընդունակ նախաձեռնութեան եւ աշխատանքի հերոսութեան, խորհուրդ ներու աշխատաւորութեան կղզյական լայն օժանդակութիւնով, Հայաստանը առիղած է մշակութային եւ ուեւեւոր կեանքի բոլոր ուեւոլները երկրի աշխատաւորութեան համար:

Բ.

Գաղութահայ առաջին պատւիրակութիւնը 20-ի պատւիրակութիւնն էր:

Այդ պատւիրակութեան մէկ անդամն էի՝ ես:

Ես պէտք է ներկայացնէի, սակայն, մեծամանակ կեսարիա Վերաշինական Միութիւնը Հայաստանի Խորհրդային Կառավարութեան եւ 20-ի Գլխաւոր Վարչութեան մօտ:

Պատւիրակութեան մէջ անդամը՝ Ընկեր Օգսէն Սարեան՝ վատպուրականցի է: Բայց ան նաեւ հետաքրքրուած չէր կեսարացիներու հարցով: Մեր պատւիրակութիւնը կը գործէր նաեւ որպէս կեսարական պատւիրակութիւն մը:

Այդ փաստի մէջ առաջնորդելով գաղութահայութեան խանդավառութիւնն ու նախաձեռնութիւնը դէպի Խորհրդային Հայաստանը, 20-ը, արտասահմանի մէջ, գործէր է հայրենակցականները մեր աքսորէլի հայրենիքին չաղկապող ամուր օղակը եւ հզօր թեան մը չինարարական գործունէութեան մարդին մէջ:

Գ.

Շատ մեծութիւններ կը գրաւեն այցելուի ուշադրութիւնը երեւանի մէջ, ուր նոր չինարարութիւնները գործած են տիրապետող, աւերի մէջ ձգելով անհետացող, գեհենին փակած գործ երեւանը ծուռ ու մուռ, նեղլիկ փողոցներով:

Նոր Սեբաստիայի Մանկապարտէզի Փոքրիկները ձաշասեղանիներու Շուրջ

Կեդրոնական Գործադիր Կոմիտէ, Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդի Նախագահութիւնը, առանձին Կոմիսարիատներ (Լուսաւորութեան, Հոդային, Առողջապահական, Աւեւտրական, Փոստ-Հեռագրական, Ներքին Գործոց, Պետական Փլանային Յանձնաժողով, Բաղաքային Խորհուրդ), Յիդրոլուտուրայի (Մարմնակրթական) Գերագոյն Խորհուրդ, Գրողներու, Ձարտարապետներու եւ Արուեստագէտներու Միութիւններ, Մշտադրութիւններ, Կուսակցութիւն, Կոմսոմոլ, Պիոներիա եւ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ:

Ահա մեծութիւններ, զորս չէք կարող չնմանել:

Անոնցմէ ամէն մէկը աւելի մեծ է քան ամբարատպական հոյակապ եւ վիթխարի կառուցածքները ի մի դումարած: Անոնց ամրակուպիտնը կը կազմէ խորհրդային պետական մեքենան եւ անոնք երկրի փոխորկալուր վերելքի մղիչ ոյժներն են:

Այդպիսի մեծութիւն է նաեւ ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութիւնը, ուր համախմբուած են ամենայայտնի մարդիկ խորհրդային իրականութեան բոլոր մարզերէն եւ որուն վստահած է հայրենակցական շինարարութիւններու դեկավարութիւնը:

Եւ ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան դրասենեակը դարձեր է իրական կեդրոնական բանակատեղի՝ շինարարական ռազմաճակատներու հայրենակցական խանդավառ ուժերուն համար:

Դ.

Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդի կարգադրութեամբ մեզի տրամադրուեցաւ մասնաւոր օթո՝ Նոր Աւաններու այցելելու համար:

Շատ չանցած մենք արդէն ճամբա ինկած էինք դէպի Նոր Կեսարիա: Մեզի կ'ընկերանար ՀՕԿ-ի վստահակալը եւ անխոնջ նախագահը, Ընկ. Գրիգոր Վարդանեան:

Հովի պէս արագ կը սուրար մեր օթոն Աշտարակ տանող ճամբուն վրա, որ Խորհրդային Հայաստանի լաւ ճամբաներէն մէկն է:

Այդ ճամբու երկու կողմերու վրա կը տարածէին Ղաներու չատ բերքի, բայց անջրդի հողերը, որոնք ուռղման տենդով կը տոչորին եւ որոնց դարաւոր պապակը պէտք է յագեցնէն յորդառատ ջուրերը, որոնք քիչ յետո պիտի հոսին Ղաներու ջրանցքով եւ բերքով ու կեանքով պիտի լեցնեն այս անապատը:

Ե.

Ղաներու այս տարածութեան վրա կը ծագկի Նոր Կեսարիան:

Ընդամէնը քանի մը ամիս առաջ միայն հիմը դրուած էր Նոր Կեսարիոյ: Մարդ անպատմելի պէտք է երեւակայէ որ այդպիսի պայմաններու տակ չափազանց չնչին պէտք է ըլլա այցելուի տպաւորութիւնը Նոր Կեսարիոյէն:

Բայց Նոր Կեսարիան մեծ տպաւորութիւն կը թողու այցելուի վրա:

Լայնածաւալ տարածութեան վրա մենաւոր կառուցածքի մը նման չէ բնաւ Նոր Կեսարիան:

Նոր Կեսարիան կը կառուցուի հայրենակցական աւաններու չրջանակի մը մէջ, ուր արդէն ծաղկեալ կեդրոններ են Նոր Սեբաստիան ու Նոր Մալաթիան: Սկսեւած է Նոր Կեսարիայի հետ միաժամանակ կառուցուիլ Նոր Տիգրանակերտը եւ չատով պէտք է ծլարձակին Նոր Բզին եւ Նոր Երզնկան:

Եւ հայրենակցական աւաններու յառաջաւոր այս չրջանակը ամբողջապէս կը մտնէ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի սահմաններուն մէջ: Այդ մեծ հեռանկարներ կը բանա այդ աւաններու ապագա զարգացման առաջ:

Շատ չանցած Երեւանի երեքարաբաշխը (տրամվայը) պիտի սուրա Աշտարակի ճամբուն վրա եւ մեզ պիտի մօտեցնէ Երեւանի վիթխարի արդիւնաբերութեան, թատրոնին, օփերային, մարտական կրկնոններուն, համալսարանին, դիտական հաստատութիւններուն:

Զ.

Նոր Կեսարիան դուռ դրակից է Նոր Սեբաստիային: Այդ երկու աւանները իրարմէ կ'անջատէ Աշտարակի ճամբան միայն: Բայց բազմաթիւ կապեր Նոր Կեսարիան եւ Նոր Սեբաստիան իրար կը կապեն երկու հարազատներու նման, որոնք իրարու նկատմամբ զերակայութիւնն չեն հետապընդեր: Խորհուրդներու լայնածաւալ երկրի մէջ տիրապետող ժողովուրդներու համերաշխ գործակցութեան ոգին իր ամենափայլուն արտայայտութիւնը կը գտնէ այստեղ:

Սեբաստացիներու Այդ Մութեան նախաձեռնութիւնով ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութիւնը կը կառուցանէ Տասնամեակ հոյակապ վարժարան մը: Դաղութահայութիւնը ծանօթ է այդ վարժարանի չէնքին՝ նախագիծ պատկերով մը: Սակայն պատ կերը չափազանց կը նեմնամա այն մեծութեան մօտ, զոր կը ներկայացնէ այդ չէնքի կառուցածքը: Այդ վարժարանը պէտք է միաժամանակ տարակէտ Նոր Սեբաստիային, Նոր Կեսարիային, Նոր Մալաթիային եւ Նոր Տիգրանակերտին:

Այդ խոր գիտակցութեամբ, եւ ոչ որպէս պերճանք, Հայաստանի կառավարութիւնը հոգեյական դումարներ է յատկացուցած այս չէնքի կառուցման, Այդ Մութեան 5,000 տոլարի դիմաց:

Եւ Սեբաստացին բնաւ նկատի առնէ անգամ չունի այն հանգամանքը որ այդ հոյակերտ Տասնամեան վարժարանը որ Նոր Կեսարիա կը կառուցուի ճամբուն այն կողմը, Նոր Կեսարիայի հողին վրա, Նոր Սեբաստիայի նորաշէն վիթխարի մեւառքի գործարանի դիմաց:

Եւ Նոր Սեբաստիան իր չէնքերէն մէկուն մէջ նուիրագործէն կը հիւրասիրէ Նոր Կեսարիայի վաղ ու թրիքոթաժի գործարանի մէկ փոքրիկ կորիզը, բաղկացած մէկ թրիքոթաժի եւ քան զուլպայի մեքենաներէ: Այստեղ դուք կը հանդիպիք թումարզացի մեր կանանց, որոնք կորովի չարժում-

Ներով մեքենայի թևը ետ ու առաջ կը չարժեն եւ թրիքոյի ու գուլպայի արտադրանքը կ'աճի։

Այս փոքրիկ արհեստանոցը, ունի իր արտադրական ծրագիրը (վլան) եւ ամեն մէկ Թոմարզացի կին առցուած է այդ ծրագիրը կատարելու եւ դերակատարելու ոգեւորութիւնով ու գիտակցութեամբ։

Եւ ահա Ռուս աղջիկ մը, որ այնքան սիրած է իր նոր չրջապատը, այնքան ընտելացած է Թոմարզացիին ու Սեբաստացիին, որ անոնցմէ մէկուն մը պէս է եւ անոնց հետ կը բաժնէ անոնց ոգորումները՝ ծրագիրները կատարելու համար եւ անոնց երջանկութիւնը։

Է.

Ահա եւ Նոր Սեբաստիայի կառուցած հինգ-տրական ենթակայանը, որ պէտք է լուսաւորէ նաեւ Նոր Կեսարիան, պէտք է դարձնէ նաեւ մեր Թրիքոթաժի մեծ գործարանի անիւները։

Ցերեւի փոթորկաբաչ է Հայաստանի վերելքը։

Մեր առաջին այցելութեանը Նոր Սեբաստիան եւ Նոր Թոմարզան դիւերը կը կոչէր խաւարին մէջ։ Ենթակայանը կառուցած էր, բայց դեռ երկբարական հոսանքը չէր անցներ լարերու մէջէն։

Քանի մը չաբաթներ յետո, կէս գիշերը անց, Ապարանէն վերադարձին, մենք պէտք է անցնէինք Աչտարակի ճամբայով Նոր Կեսարիայի եւ Նոր Սեբաստիայի մօտով։ Օթոն կը սուրար ինչպէս գիշերուա ցուրտ քամին Ղուերու տարածութեան վրա։ Ես աչք կտրած օթոյի պատուհաններէն երկու բոպէ կը դիտէի տեսնելու համար մեր գոյդ առանները։

Նոր Կեսարիան եւ Նոր Սեբաստիան ողողած էին էլեքտրական կենսուրախ լոյսերով, գրեթէ չէր կարող հանդչնել եւ ոչ մէկ քամի, որքան ալ կատաղի ըլլար այդ։

Ը.

Երբ օթոյով Աչտարակ երթանք՝ ճամբու ալ կողմի վրա Նոր Սեբաստիան է, ձախ կողմի վրա Նոր Կեսարիան։

Այնտեղ ուր Նոր Կեսարիան է, կա նաեւ Կեսարիան փոքրիկ մխուր մը դեզեցիկ անունով — ՆՈՐ ԹՈՄԱՐԶԱ։

Նոր Թոմարզան չատ սիրելի անուն է ամեն Կեսարացիի համար, որովհետեւ ամենէն առաջ Կեսարիո այս փոքրիկ մէկ կոտրն էր, որ կեանքի կոչուեցաւ Խորհրդային մեր սքանչելի Հայրենիքին մէջ։

Այդ փառաւ մէկ մարմնացած է Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկանները Թոմարզացի Հայրենակիցներու անօրինակ խիզախութիւնը, առեղծուածային նախաձեռնութեան ոգին եւ բոլորանուէր սէրը դէպի մեր վերածորդ Հայրենիքը եւ ասանաղական իրենց եղբայրները, որոնք յիրաւի բախտաւորած են խորհրդային քաղաքացիութիւնով։

Ընդամենը երեք չէնքերէ կը բաղկանա Նոր Թոմարզան, որոնց ամեն մէկը կառուցած է երկու ընտանիք տեղաւորելու հաշուով, ամեն մէկ ընտանիքի համար հաւասի առնելով երկու սենեակ, խոհանոց մը եւ այլ յարմարութիւններ։ Ժամանակաւորապէս, սակայն, այդ չէնքերու ամեն մէկ սենեակը գրաւած էր մէկ մէկ ընտանիք։

Մեւ քարով կառուցած անչուք բնակարանները են Նոր Թոմարզայի երեք չէնքերը, որոնք հետեւանքն են եղած Ցունաստանէն ներգաղթած Թոմարզացի գաղթականներու տեղաւորելու աճապարանքին։

Թօթափելով գաղթականութեան ամեն հետք, յաղթահարելով յետամնացութիւնը, բռնելով ունեւոր կեանքի բախտաւոր ուղին, Թոմարզացի աշխատասէրը կ'ուզէ ոչ միայն յարմար, այլ գեղեցիկ բնակարաններու մէջ ապրիլ։ Կազանովիչի այս կարգախօսը, ինչպէս ամբողջ խորհրդային աշխատասիրութեան, նոյնպէս Թոմարզայի մեր հայրենակիցներու սեփականութիւնը դարձած է։

Այդ երեք չէնքերու դիմաց կը կառուցվի Նոր Թոմարզայի չորրորդ չէնքը, քառաչէն երկյարկանի, բաղկացած վեց բնակարանէ, ամեն մէկը երկու սենեակէ՝ յարմարկից յարմարութիւններով։

Դեռ հիմերը մխայն գրած էին Նոր Թոմարզայի չորրորդ չէնքին, բայց մենք տեսանք անոր կրկնակը Նոր Սեբաստիայի մէջ եւ յարմար, եւ գեղեցիկ։ Եւ մեր բանւորները ամբողջ ձմեռը կը տաշեն քարերը, որպէս զի գարնան, առաջին ձիւնհալին, չարեն Նոր Թոմարզայի չորրորդ չէնքի պատերը, չուտով մեզ տան նոր չէնք մը — գալիքներու համար։

Թ.

Եւ քարակոփները գրաւած էին քարեր տաշելով Նոր Կեսարիա առաջին չէնքի երկրորդ յարկը կառուցանելու գալիք գարնան, եւ հիւսները ըղրաւած էին պատրաստելով դռները, եւ պատուհաններու չրջանակները։

Ոչ մէկ երկրի մէջ ես չեմ տեսեր այնպիսի ինքնաբուա, երջանիկ աշխատողներ, ինչպիսին Թոմարզացի քարակոփներն ու հիւսներն էին։

Երեսանի ձմեռը կարճ է։

Շուտով կը լինի գարուն։

Պէտք է պատրաստել քարը, որ պատերը արագ բարձրանան։ Երբ պատերը բարձրանան, պէտք է անմիջապէս ծածկել տուրը, անցնել չրջանակիներ, փեղկերն ու դռները։

Եւ կառուցել երկրորդը։

Եւ կառուցել երրորդը։

Եւ յիրաւի Նոր Կեսարիան հիմնարկւած է։

Ութ բնակարաններէ բաղկացած այդ կեսուրա չէնքը առիթներով ապաւորութիւն կը թողու իմ վրա։

Այս չէնքը կառուցած է արամբրագրային կարգով։ Նոր Կեսարիան եւ Նոր Տիգրանակերտը մոտ չեն եղեր նախորդ տարւա ծրագիրներու մէջ։

Բայց ճիշտ այն փաստը, որ ՀՕԿ-ի դիմաւորութեամբ մեր հայրենակիցներուն յաջողած է տրամաբաղդային կարգով սկսիլ առաջին կառուցումը, ապացոյց է այն հերոսութեան, որուն ընդունակ են մեր երկրի երջանիկ աշխատաւորները:

Մեր առաջ դրուած է երկրորդ չէնքի յատակագիծը, որ նոյնպէս վէց բնակարաններէ կը բաղկանայ, բայց իր ճարտարապետութեամբ կը տարբերի միւսէն:

Կը յանձնարանենք նաեւ մանկապարտէզի յատակագիծին, այդ այնպիսի յատակագիծ է, որ արդիական մանկավարժութեան պահանջներու տեսակէտէն բաց տեղ չի թողուր:

Մանկապարտէզը կառուցելու պարագային, կը դառնա մէկը երեւանի ճարտարապետական նըշանաւոր մնութիւններէն՝ կրթական մարզին մէջ:

Այդ փոյթի գործադրութիւնը պէտք է արժէ 400.000 ռուպլի: Բայց Սորհ. կառավարութիւնը որոշած է մանկապարտէզը կառուցանել Սարբեան եղբայրներու հովանաւորութեամբ, որ ընդամէնը 2,500 ռուբլի է:

Հայաստանի Տնտեսագործական Համագործակցականը (Հայտնարկոպ), որու մէջ կազմակերպուած են երկրի բոլոր անտեսագործութիւնն ու արհեստանոցները, արդէն իսկ բանակցութեան մէջ է ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան հետ ապրանքի գործարան մը կառուցանելու: Գործարանը պէտք է կառուցի Հայ Տնտեսագործական Համագործակցականի մէջոցներով, իսկ մենք պէտք է օժանդակենք մեքենական սարքաւորման, մանաւանդ սառուցարանի սարքաւորման:

Ժ.

Այնտեղ ուր մենք սկսած էինք Նոր Կեսարիան կառուցանել, այժմ արդէն վերանուանած է ՆՈՐ ԴՂԻ:

Նոր Կեսարիան կը վերակառուցանենք Ղամարլուի չրջանի նորոգող տարաժողովներու վրա, Նուպարաչէնին ոչ շատ հեռու, ուր կառուցած է նաեւ Նոր Մարբերդը եւ պիտի կառուցի Նոր Կիւրինը:

Այստեղ Նոր Կեսարիա գիւղատնտեսութիւնը կը դառնա հաւաքական պարագրուծական տնտեսութիւնը, որու համար մեզի կը տրամադրի Սորհրդային Պետական Տնտեսութեան այգիներու մէկ մասը: Այս նոր միջավայրը մեզի պահեստութիւն կուտա հիմնելու եւ զարգացնելու ապուխտի գործարան:

Մեր նոր միջավայրին մէջ Նոր Կեսարիան կը կառուցանենք բնակարանային բոլորովին նոր յատակագիծով մը:

Այլ եւս չեն կառուցիր ութ ընտանիքանոց չէնքեր: Կը կառուցուին բնակարաններ ամէն մէկ ընտանիքի համար կազմնարաւոր թեք տանիքներով, մի յարկանի կամ երկյարկանի, եւ ամէն մէկ բնակարան իրեն կից կ'ունենայ պարտէզ բանջարանոց մը եւ կաթնատու անասուններ եւ հաւեր պահելու յարմարութիւններ:

Ուրեմն ամէն մէկ ընտանիք, բացի հաւաքական տնտեսութենէն ստացած իր եկամուտին, կ'ունենայ նաեւ իր օժանդակ տնտեսութիւնը: Այդպիսով Նոր Կեսարիացին կ'ունենայ ամէն ինչ ունենալ եւ երջանիկ կեանքով ապրելու համար:

ԺԱ.

Հին Կեսարիայի մէջ մենք ունէինք հարստութիւն, բայց ունէինք նաեւ աղքատներ եւ աղքատախնամ տնտուկներ: Նոր Կեսարիա մէջ մենք կ'ունենանք ունեւոր եւ երջանիկ կեանք, առանց աղքատներու եւ աղքատախնամի:

Համաշխարհային պատերազմը մեզ զրկեց մեր ծննդավայրէն, որ սիրելի էր մեզի համար, եւ զինադադարը մեզի համար խաղաղութիւն չբերաւ: Զինադադարը իր հաւնետմարին մէջ Հայաստանի աղգարնակչութեան համար ՄԱՀ էր արձանագրած:

Սորհրդային կառավարութիւնը խորտակեց ՄԱՀԻՄԱՆ այդ վէմը եւ հաստատեց խաղաղութիւնը: Եւ ահա տասն եւ հինգերորդ տարին է, որ այդ խաղաղութեան պայմաններու տակ մեր երբեմնի յետամնաց երկիրը կը նամնէ լուսաւոր կառարներով յաղթանակներու, եւ մեզ վերստին կ'օժանէ անհամեմատօրէն զերազանց ծննդավայրով մը եւ մեզ կ'արժանացնէ վերածորդ մեր հայրենիքը կերտող ջոկատներու կոչումին:

Բայց պատերազմի չունները արեան ծարաւէն կը գալարին: Անոնք աչխարհը վերստին կ'ուզեն նետել հուլի եւ սուրի բերան ու պատերազմ կը պատրաստեն խորհուրդներու մեր աքանչելի ու բարգաւած հայրենիքի դէմ, ուր կեանքը կը յորդի համայնական լայնածաւալ հունով:

Այժմ, ամէն մէկ աղնիւ Հայ, որ տոգորած է դէպի իր ասատնական հայրենակիցները եւ դէպի իր հայրենիքը անկաշառ սիրով, պէտք է իր բոլոր կամքն յայտնէ ընդդէմ պատերազմական վտանգին գրգռութիւններուն եւ յանուն Սորհրդային Միութեան խաղաղութեան անխախտ քաղաքականութեան:

Եւ թող վստահ ըլլա ամէն մէկ աչխատաւոր, որ Հայաստանի եւ Սորհրդային Միութեան ամէն մէկ մտանոչասի հողը պաշտպանուած է պանծալի եւ աննահանջ Կարմիր Բանակով: Սորհրդային մեր հայրենիքը մինչեւ վերջ կռւելով խաղաղութիւնը պահպանելու համար եւ զօրացնելով երկրի պաշտպանութիւնը, անխոով կը չարունակէ կառուցել խորհուրդներու վիթխարի արդիւնաբերութիւնը եւ հոյակապ մչակութային կեանքը:

Եւ թող խորհուրդներու չինարարութեան եւ մչակութային վերելքի ապահով երկրի մէջ Նոր Կեսարիան, եւ ամէն մէկ նոր աւան, բարգանա որպէս արդիւնաբերական եւ մչակութային նոր օճախ մը՝ ի նչան մեր անսասան սիրոյ դէպի ըմբռնչելի մեր Հայրենիքը:

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ

Ա.

Նոր Խարբերդը կոլխոզ է։

Որպէս այդպիսին, նոր աւաններու կարգին, Նոր Խարբերդը կը կրանէ այցելուի առանձին ուշադրութիւնը։

Մինչեւ բոլոր միւս նոր աւանները, Հայաստանի Ցեղասպանութեան Համազգայնական ցանցին մէջ, արդիւնաբերական մէկ մէկ ուշադրաւ, եռուն բջիջներ են, Նոր Խարբերդը աշխատանքային եռուն այլի է ու պարտէզ, Նոր Խարբերդը կոլխոզ է։

Բայց ի՞նչ է ԿՈԼԽՈԶԸ։

Ցայտնի է, որ 18 տարի առաջ, խորհրդային իրաւակարգն հաստիչ եկաւ, որպէս մարդկային աշխատանքի նեւրագործումը, մարդկային աշխատանքի անձեռնմխելիութիւնով վարակած վատանուն, տխեղծ չհագործողներու նկատմամբ։

Ցայտնի է, որ այդ ամբողջ տարիներու ընթացքին խորհրդային իրաւակարգը քար ու քանդ ըրաւ մարդկային աշխատանքի օրէնքով նեւրականացած աւազակային կողոպուտը, եւ տուաւ մարդկանց նոր սեղմունքներ՝ հասարակութեան աշխատանքային այժը համադրելու մէկ ամբողջի մէջ։ Այդպիսի համադրութիւնը, ըմբռնելին մարդիկ, նախապայման է նաեւելու բնութիւնն ու մեքենականութիւնը, օժտելու մարդը լիառատ կանքով եւ մարքի ու հոգիի անկաշկանդ թռիչներով։

Ցայտնի է, ուրեմն, որ խորհրդային իրաւակարգը, իր նպատակներով եւ նաեւմուներով համամարդկային է։

Աշխարհը չաս դասեր կը սորվի խորհրդային իրաւակարգէն։

Եւ սորվելով իր դասերը, չաս բաներ փոխ կ'առնէ խորհրդային բառամթերքէն, որոնք մինչեւ այդ անյայտ կին մարդկային մշակոյթին, եւ որոնք դարձուած են ամէն ճակատամարտերու մէջ։

Առաջին բառը —

ՍՈՎԼԵՏ։

Բառերէն մէկը —

ԿՈԼԽՈԶ։

Ամէն մէկ խարբերգցի աշխատասէր մարդ, աշխարհի ամէն մէկ անկիւնը, հիմա դիտէ Սովետը, որ սիրելի անուն մըն է, անմիջապէս կապուած Նոր Խարբերդի տեսիլքին հետ։ Երկիւա դպրոցական, արուեստ, մարդկային ամէն իրաւունքներէ եւ արժանապատուութենէ իրաւազրկուած, յետոյ մեռց խարբերգցին, այսօր պետութիւն է։ Ահա ՍՈՎԵՏԸ։

Իսկ կոլխոզը — այդ արհեստակից մշակող դործարան է, պատասխան ծառը արդիւնաբերող դործարան է, գործարան՝ որուն գործին ոսկեհասկերը եւ բամպակի սպիտակ ոսկիները կը ծառկին։ Կոլխոզ, այդ գործարան այլի է, գործարան պարտէզ, գործարան լայնարձակ դաշտ է, որ կը տարածէ կապոյտ երկինքներու տակ ու հոբիղոններէ հոբիղոն, որոնք ամէն օր նոր արեւներով յղի են։

Կոլխոզն այն ընդարձակ տնտեսութիւնն է, զոր մարդիկ կը մշակեն հաւաքարար եւ ամէն մէկը իր բաժինը կ'ստանայ իր գրած աշխատանքի համաձայն, որ կը կոչի աշխօր։

Կոլխոզը՝ հայերէն՝ հաւաքական տնտեսութիւն է։

Բ.

Նոր Խարբերդը Այգեպաղարաձական Կոլխոզ է։

Նոր Խարբերդն իր կեանքն սկսեր է որպէս պաղատու ծառերու փոքրիկ պարտէզ։ Աձեր է խորհրդային տեմպերով։ Ծաւալած է արդէն իսկ 1,500 հեկտար ընտիր, բարեբեր, ուսուելի տարածութեան մը վրա։ Ձեռք է զարկեր երկրորդ աւուր կառուցմանը, որ կ'աւարտի մէկ ու կէս տարի յետո եւ Նոր Խարբերդը կը տիրանա, խաղաղով եւ մերկով յղի չորս անդամ աւելի տարածուն կուսական տարածութիւններու։

Բայց հաւաքական տնտեսութեան մէջ, Նոր Խարբերդը միայն օրինակելի կոլխոզ չէ, որ աչքի կ'ինկա այգեպաղամշակութեան դիտական մեթոտներու կիրառումով, իր արտադրութեան որակով։

Նոր Խարբերդն արդէն Խորհրդային Հայաստանի մշակութային բարդ ցանցի մէկ լուսաւոր հանդոյցն է, իր դոնող կայանով, ուր հողը դիտական հետազոտութեան կ'ենթարկի։

Այդ կայանը, որ 12 աենակներէ կը բաղկանա, իր տրամադրութեան տակ ունի, փորձառական աշխատանքներու համար, հարիւր հեկտար տարածութիւնով հող մը եւ կը դեկավարի Արտաա Տրետսի կողմէ։

Եւ կայանը հետազօտեց Նոր Խարբերդի կուսական հողերը եւ հոդն իր զանոնքները բացատկութեան խորաթափանց աչքերուն տակ։ Նոր Խարբերդցին անդամ մըն ալ նամեց հողը։

Որթատունկերն սկսան ուռճանալ պինդով եւ նեկտարով ծոցուր ամուններու մէջ։

Երեւանի լուսատյծառ բորբ արեւու տակ, հոդն ու որթատունկերը իրարու փարեցան վաղուց ծանօթ մտերմներու պէս։ Եւ որթատունկերը իրենց պրելու ու ամերու իրաւունքները սահմանեցին բոլոր հոդերու երեք չորրորդին վրա։

Եւ հոդերու մնացած մէկ չորրորդի վրա քանի տեսակ միրգեր իրար կը հրմշակեն երեւանի արեւին տակ տպրելու եւ հասունցնելու համար։

Նոր Խարբերդն ունեցեր է պաղատու ծառերու տնկարան մը, վից հեկտար տարածութեան վրա, երեք հարիւր հազար տունկերով։ Աշնան տնկեր էին արդէն հինդ հեկտար նոր տարածու-

թիւն մը երեք հարիւր հազար նոր տուներով: Եւ երբ մենք այցելեցինք Նոր Ֆարբերզ, հաւանական կառոյց ծերպեր կուտեր կը մաքրէին նոր տարածութիւններ բնդմնաւորելու համար: Եւ առանց պայծառ գմբեթը կը ճառագայթէին մաքուր կուտերու վրա, որոնք վաղա ծառերու կորիւնները էին, երջանկութեան ծառը իրենց վաղա ալ առատ բարեկեցիկ աւօրեայքին:

Այդ կանանց աչքերը տարօրինակ կերպով տայտյտիչ էին:

Անոնք կ'ըսէին այցելուին այն մասին, որ տարիներ չարունակ կը ցանկին, գիտութեան մէջոցներէն զուրկ, զուրկ մեքենայէն, եղունգներով կը հերկէին եւ արիւնով ու քրտինքով կը բեղմնաւորէին ժլատ հողերը, բայց հարհամաւաքը կը խլէր, կաւազաւորը կը խլէր, վարխառն կը խլէր, աւազակը կը խլէր եւ զիւղացին պէտք մարդը մեռցորդի վրա: Իսկ ապրելու չափ բան չէր մնար զիւղացիին:

Ինչ որ ցաներ են եւ ինչ որ պիտի ցանեն, խորհուրդներու պանծալի զոհողութեան տակ, տակառայն, իրենց է այսօր: Կ'ապրին լիառատ կեանքով մը: Եւ այդ լիառատութիւնը վաղը զուրս պիտի յորդի առատութեան համար մինչեւ հիմա երեւակայելի բոլոր հունձերէն:

Այդ գիտակցութիւնը իրենց երջանկութիւնն է, որ ընդունակ կը դարձնէ զիրենք աշխատանքի հերոսութեան:

Եւ անոնք ձեզ հետ բարեմաձայն կը խօսին իրենց այդ գիտակցութեան մասին, ձեզ ամչցնելով ձեր զգուշաւոր հարցումին համար իրենց որպէսութեանը նկատմամբ:

— Կ'ամէն կոլխոզը՝ կ'ամէն մէր բարօրութիւնը:

Թող չէն մնա սովետը:

Եւ տեսէք, ինչպէս կ'ընեն, այսպիսի գիտական ցութիւնով լցուած կոլխոզի կառոյք, սոթատած թեւերով:

Կը ցանեն, կը պատասան, կը տերափոխեն տունկերը: Ածուներ կը բանան: Մեղուներ կը բուծանեն:

Նոր Ֆարբերզցին գիտակից կերպարն է Համատանի խորհրդային իրականութեան:

Գ.

Ամերիկայի խորհրդի աշխատաւորութեան դէպքերի նախաձեռնութիւնն է Նոր Ֆարբերզը:

Աշխատաւորութեան այդ նախաձեռնութիւնը դիտաւորեր է Համամարբերզցկանը:

Բայց, ի՞նչ է ուրեր Համամարբերզցկանը եւ ի՞նչ է չիներ Նոր Ֆարբերզի մէջ:

Հայրենակցական չինարարութի՞ւն:

Այո:

Ուրեր բնակելի չէնքեր են անոնք, որոնց ամեն մէկը բաղկացած է ուրեր լուսաւոր օդասուն սենեակներէ: Ամեն երկու սենեակ ունի խոհանոց մը եւ մէջնաց մը: Իւրաքանչիւր չէնքի մէջ կը բնակին հօր ընտանիքը:

Կառուցած է մէկ զոմ:

Ամերիկայի մէջ կարող է մարդուս ծխաղը զալ, երբ կը պարծենանք զոմով: Բայց զոմաշինարարութիւնը նշանաւոր տեղ կը գրաւէ խորհրդային չինարարութեան մէջ: Գոմաշինարարութի՞ւն: Այդ արդէն յառաջատար անասնարուծութիւնը զարգացնելու հիմնական խնդիրն է: Եւ Նոր Ֆարբերզն ունի իր անասունները: Ոչխար՝ 260, կով՝ 22, հորթ՝ 26, ձի՝ 18: Մենք չենք հաշուր իւրաքանչիւր ընտանիքի ունեցած սեփական անասունները: Այս բոլորը կը պատկանին միայն սովխոզին:

Եւ երբ կը խօսինք զոմաշինութեան մասին, պետք է այլ եւս այդ չէնքերը կոչել զոմ: Անոնք անասունները պատսաներ են: Նախկին զոմերու մէջ մարդիկ անասուններու հետ միասեղ կ'ապրէին, իսկ այժմ այդ զոմերն արդէն արդելք կը համարին անասուններու առողջ աճին: Ու կը քանդեն զոմերը: Կը փոխանակեն զոմերը անասուններու պատսաներով, զոր իրենք մշակութային զոմ կը կոչեն:

Կառուցելով մշակութային զոմ մը, ուր 24 մեծ եղջերաւոր անասուններ կը կապեն, ամերիկահայ աշխատաւոր խորհրդցին կարող է հպարտ զգալ իր նախաձեռնութեան համար:

Եթէ Նոր Ֆարբերզի զարգացումը սահմանափակէր հայրենակցական միջոցներով, տեսէք մեր առաջ մենք կ'ունենայինք չատ փոքրիկ գիւղակ մը, ուրեր բնակելի չէնքերով, զոմով մը եւ կարաժով մը:

Դ.

Բայց այդ չէ Նոր Ֆարբերզը:

Գիտութիւնն այնտեղ կառուցած է երկու բնակարան քան եւ չորս սենեակով:

Գահճաս մը՝ հազար հարիւր քառակուսի մեզր տարածութեան վրա:

Անասուններու պատսա մը, ուր կը կապեն 20 ձի եւ երեսուն մեծ եղջերաւոր անասուն:

Գուրկոններու կարաժ մը, 12 գուրկոններու — ձիու կառքերու համար:

Մեքենաներու նորոգութեան արհեստանոց մը, որ կառուցած է 750 քառակուսի մեզր տարածութեան վրա:

Նոր Ֆարբերզը հարուստ է թրաքթորներով:

Կառուցած է թրաքթորներու յատուկ կարաժ, ուր վեց թրաքթորներ կը տեղաւորին: Իսկ Նոր Ֆարբերզն ունի հօթ թրաքթոր, որոնցմէ մէկը թրթրակերպ թրաքթոր է եւ կը պահէի վառանիւթերու պահեստին մէջ: Այդ թրաքթորը կէս թանթերու պէս բան մըն է, որ իր վարքի ընթացքին կը արորէ ամեն խոչընդոտ: Նոր կեանքի համար իր տգած վճռական պայքարի ամրողջ արտայայտութիւնը կը գտնէ Նոր Ֆարբերզցին այս թրաքթորի մէջ:

Վառելանիւթերու պահեստ, որ ոչ նուազ ուշագրաւ չէնք է՝ 450 քառակուսի մեզր տարածութեան վրա:

Կիսով չափ մեքենայացած փուռ, որ կառուցած է 650 քառակուսի մեդր տարածութեան վրա եւ օրական մէկ հաց թխելու տարողութիւն ունի:

Զոնալ կայան, որ Նոր Մարբերդը կը դարձնէ դիտական հանդոյց մը:

ե.

Եւ ահա մեր առջ կանդնած է Նոր Մարբերդի տեխնիկումի չէնքի կառուցումները: Այդ տեխնիկումը Նոր Մարբերդի, Նորագաւթի, Թաղագիւղի եւ Ազամզալուի բախտաւոր սերունդին պիտի տա տասնամեա դասախարակութիւն եւ պիտի ունենայ վերջնական թեքում:

Ընկեր Տաճեր Կարօն մեզ եանդպղին կը ծանօթացնէ դպրոցի յատակագծին հետ: Դպրոցն ունենալու է թատերական եւ մարմնամարզական սրահներ, ձեռարուեստ բաժանմունքներ, երկնց լրիւ մեքենական սարքաւորումով, գրադարան, ուսուցչանոց, լաբորատորիա, ճաշարան եւ բոլոր արդիական պահանջները, դրօս խորհրդային տեխնիկում մը պիտք է լրացնէ այսօր: Այս չէնքի կառուցման համար պիտի յատկացուի մօտ կէս միլիոն ռուպլի:

Ճիշտ է, Համախարբերդցիականի կը պատկանի այս տեխնիկումի նախաձեռնութիւնը:

Բայց Համախարբերդցիականը իր սեփական մէջքներով եւ ուժերով, ո՞ր մասը կարող է կառուցանել այս վիթխարի կրթական հիմնարկութեան:

Խորհրդային իշխանութիւնը միայն կարող է անյայտութենէն կեանքի կոչել այդպիսի հսկայ — ոչխատասուրութեան սահմռկադարձական ուժերը ազատելով բոլոր կաշկանդումներէ:

Այս տեխնիկումի գոյութիւնը, Նոր Մարբերդի մէջ, կը խօսի այն մասին, որ խորհրդային երկիրը անվերապահօրէն անցեր է յետամնացութեան ուղին, քառասնա պարտադիր դասախարակութեան ուղին, եօթնամեա պարտադիր դասախարակութենան ուղին, այժմ արդէն իր զանկներուն կ'զնձեռնէ տասնամեա պարտադիր դասախարակութիւն եւ կը նախապատրաստէ բարձրագոյն պարտադիր դասախարակութենան համար: Շնորհիւ արդէն հանդէս գուգա գիտութենան եւ տեխնիկային տիրացած մէկ տարողի հասարակութիւն:

Եւ եթէ Համախարբերդցիականն այսօր չինարարական ուժէ հետանկար չունի, Նոր Մարբերդը կ'ապրի խորհրդային կեանքով:

Նոր Մարբերդն ունի իր հեռանկարը:

Շնորհիւ արդէն պէտք է կառուցել ընակարանային չէնք մը 24 սենեակով: Ճաշարան մը, որ պիտի սպասարկէ 200 հոգիի եւ Նոր Մարբերդցի կինը պիտի ձերբազատէ խոհանոցային քաշքշիչ տուկական աշխատանքէն: Եւ Նոր Մարբերդցի կինը պիտի գտնա նոր կեանքով ապրող մեր հայրենիքի մէկ նոր, հզօր գործօնը, արժանի ասպետը մեր կառուցողի կոչումին:

Եւ Նոր Մարբերդը հպածուռ է մօր մը պէս դէպի իր պատկներու առողջութիւնը: Նոր Մարբերդն ունի արդէն բուժական, մնայուն բժիշկով մը: Նոր Մարբերդը շուտով կը կառուցանէ իր բաղնիքը, որ մէկ անդամէն կրնա յիսուն հոգիի սպասարկել:

Ամերիկահայ աշխատաւոր Մարբերդցի: Դուն որ քու եւ քու զաւակներու լերկնէն կտրած լուսանկարով մասնակցեր ես Նոր Մարբերդի նախաձեռնութեանը, գիտե՞ս, թէ ինչքան սուղ գնահատած է խորհրդային իշխանութիւնը քու ամեն մէկ լուսան:

Անցեալ տարի խորհրդային իշխանութիւնը Նոր Մարբերդին յատկացուցած է չինարարութեան գծով 130,000 ռուպլի, վերստանաւորութեան գծով՝ 350,000 ռուպլի, իսկ այս տարի կը նախատեսէր յատկացում մը ոչ նուազ քան կէս միլիոն ռուպլիի:

Նոր Մարբերդի հիմնարկութենէն ասդին, հայրենակցականը ուներ է 350,000 ռուպլի, որու կէսը եւ գուցէ աւելին կատարմարութեան կրկնապատկած դումարներն են, իսկ խորհրդային իշխանութիւնը պետական պիւտճէի գծով ուներ է 1,200,000 ռուպլի:

Համախարբերդցիականի նախաձեռնութենան փառապանակը, սակայն, ելեքտրական ենթակայանն է:

Այդ կը խօսի այն մասին, որ Նոր Մարբերդի մէջ կը վառին Լենինի լամբուչիանները, որոնք՝ գիշերային պահերուն կը փոխարինեն մարը մտած աբեւը: Լենինի լամբուչիաններու տակ ապրող ժողովուրդի կեանքը յորդառատ եւ անսպառ կորովի ապրիւր է եւ այդ ժողովուրդը կ'ապրի երջանիկ, անվտառմ գարնանով:

Նոր Մարբերդը, ահա ան, Լենինի լամբուչիաներով լուսաղարդուած հայրենակցական յաղթանակը:

Նոր Մարբերդը, ահա ան, գաղութահայ աշխատաւոր Մարբերդցիներու անկորնչելի գաչինքը Խորհրդային մեծ Միութենան մարտական ջոկատ — իրենց աքանչելի հայրենիքին հետ եւ անոնց անկաշտ ու անպարտելի սիրտ երաչխիքը:

Ա. ՄՈՒՇԵՂԵԱՆ

ՆՈՐ ՔՂԻ

1933 Սեպտ. 26–ին Տիֆրոյիի մէջ հիմնուեցաւ Համաքղեցիական Միութիւնը, նպատակ ունենալով խորհրդային Հայաստանի մէջ կառուցանել Նոր Քղին:

Այս նպատակի իրականացման համար, Համաքղեցիականի չուրջ հաւաքուող աշխատաւորութիւնը ընդհանրապէս, իսկ կեդր. Գործադիր Մարմինը մասնաւորապէս լծուցան եռանդուն աշխատանքի:

Մինչեւ հիմա հիմնուած են 14 մասնաճիւղեր — Տիթրոյթ, Սենթ Քաթարինա, Ուայթհոլլ, Շիքագօ, Տիրպորն, Սենթ Լուիզ, Հայլենա Փարք, Իրի, Թրոյ, Նիւ Եորք, Ֆրէզնօ, Մարսէյլ (երկու մասնաճիւղ)։

Համաժողովականի անդրանիկ համագումարը կայացաւ 1934 Յուլիսին, Տիթրոյթի մէջ։ Կը մասնակցէին 22 պատգամաւորներ եւ Բղիի, Զանաքչիի, Հերտիֆի Վերաչինական Միութիւններու, ինչպէս նաեւ ՀՕԿ–ի կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները։

Համագումարը տեւեց երեք օր եւ նիստերուն մասնակցեցան հարիւրաւոր Բղեցի աշխատաւորներ։

Համագումարին հանդիսաւոր ելոյթներ ունեցան Վերաչինացներու ներկայացուցիչները։

ԶԱՆԱՔՉԻի ներկայացուցիչը յայտնեց, որ իրենց պատգամաւորական ժողովը, որոշած է Խ. Հայաստանի Գիւղատնտեսական Պանկի մէջ պահ դրուած 6,000 տոլարը ամբողջութեամբ յատկացնել Նոր Բղիի կառուցման։

Բղիի ներկայացուցիչն եւս յայտնեց, որ որոշած են Խ. Հայաստանի Պետական Պանքի մէջ պահ դրուած 3,000 տոլարը իր տոհմակներով յատկացնել Նոր Բղիի վերաբերութեան։

ՀԱՐՏԻՖի ներկայացուցիչը յայտնեց, որ վերջին ժողովը որոշած է Միութեան ամբողջ դրամը յանձնել Համահողեգիականին։

ԱՒԵԳ ԳԻՒՂի ՎԵՐԱՇԻՆԱՅԸ նամակով կը յայտնէր Համագումարին, որ իրենց պատգամաւորական ժողովը որոշած է Համահողեգիականի ամեն 400 տոլարի փոխարէն Նոր Բղիին յատկացնել 100 տոլար։ Այս հաշուոյն մինչեւ հիմա յանձնած է արդէն 400 տոլար։

Համագումարը բուռն ծափահարութիւններով ողջունեց Գիւղական Միութենէն այսօրինակ պատասխանատու մասնակցութիւնը Նոր Բղիի կառուցման գործին։

Համագումարը որոշեց կազմակերպել ու ձեռնարկել տասը հազար տոլարի արշաւ մը։ Պատգամաւորները խոստացան իրենց մասնաճիւղերուն բաժին հանած քոթանները լրիւ կերպով կատարել։

Համագումարի որոշումով կեդր. Գործադիր Մարմինը, 1934 Օգոստոս 16–ին դիմեց ՀՕԿ–ի Գլխաւոր Վարչութեան, որ Համագումարի որոշումը հաղորդէ Հայաստանի Խորհրդային Կառավարութեան, ճշդէ Նոր Բղիի վայրը եւ հաղորդէ մեզ մեր ընելիքները մասին։

Գլխաւոր Վարչութիւնը հաղորդեց, տակաւին 1934 Հոկտեմբերին, թէ կառավարութեան որոշումով Նոր Բղին կառուցելու է երեւանէն տասը մղոն հեռու, Թամլայի այգիներու մօտ գտնուած հողամասին վրա, Աչտարակի խճուղիի երկու կողմերը։

Գլխաւոր Վարչութիւնը կը հաղորդէր նաեւ, որ չինարարութեան կը սկսի անմիջապէս որ բացուի Ձորա Թրըք մը եւ կարգադրութիւն բլլայ Խորհ. Հայաստանի պանքներուն մէջ պահ դրուած դրամները փոխանցելու ՀՕԿ–ին։

Թրըքը դնելու համար ՀՕԿ–ի կեդր. Վարչութեան յանձնուած է արդէն 850 տոլար, իսկ դրամներու փոխանցման համար դիմում եղած է պատկան մարմիններուն։

Տասը հազար տոլարի արշաւը ի գլուխ հանելու համար կեդր. Գործ. Մարմինը որոշած է հրապարակ հանել 5,000 հատ մրցանակաւոր նուիրատոմսակներ. տոմսերը ծախել մէկ տոլարի եւ բախտաւոր թիւերուն տալ 300 տոլար արժողութեամբ առարկաներ։

Մենք տարակոյս չունինք, որ Բղեցի աշխատաւորութիւնը պիտի կանգնի կեդր. Գործադիր Մարմնի կոչին եւ պիտի կենսագործէ անոր որոշումները։

Ուրեմն, Բղեցի Հայրենակիցնե՛ր, ՀԱՄԱԽՄԲԻՆՔ ՀԱՄԱԲՂԵՑԻԱԿԱՆի ՇՈՒՐՋ ԵՒ ՇԻՆԵՆՔ ՆՈՐ ԲՂԻՆ ՄՈՐՉ. ՀԱՅԱՍՏԱՆի ՄԷՋ։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԱՇԻՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Տիգրանակերտի Հայրենակցականը հիմնադրուած է 1917–ին, նպատակ ունենալով թրքական ըմպանդէն ազատած Տիգրանակերցիներուն նեղթապէս օգնել։ Հակոպ մէկ, թէպէտ Տիգրանակերցիներու հոկա զանգուած մը Միութեանս հոգածութեան առարկա դարձած է։

Հայրենակցականի ձեռամբ աւելի քան 60,000 տոլարի օգնութիւն եղած է Սուրիա գտնուղ Տիգրանակերցիներուն։

1920, Նոյեմբեր 29–ի յեղաշրջումէն, Հայաստանի խորհրդայնացումէն, Տիգրանակերցիներու մէջ ստեղծուեց նոր հոգեկացութիւն եւ նոր մտայնութիւն, որ մարմին առաւ 1925–ին, երբ կազդ մը Տիգրանակերցիներ հիմնեցին նոր ընկերութիւն մը, որ կոչուեցաւ Տիգրանակերտի Վերաշինական Միութիւն։ Առաջին առթիւ, այս նորաստեղծ ընկերութիւնը առաջ հանդէս մը, որ աւելի քան $700–ի զուտ շահ մը ապահովեց։

Տիգրանակերտի Հայրենակցականը, որ կը պահէր դաշնակիներու հակակշռին տակ, անդորրութեան մատնուեցաւ։ Ի հետեւանս այդ կացութեան, միութենական չարժում մը սկսաւ, եւ կարգ մը բանակցութիւններէ վերջ, երկու ընկերութեանց միացումով, հիմնուեցաւ Տիգրանակերտի Հայրենակցական եւ Վերաշինական Միութիւնը, որուն պաշտոնակերը կրցան իրենց գործունէութիւնը, հանգստաւէտ լինելով Նոր Տիգրանակերտի շինութեան ծրագրին։ Միութեանս 1934–ի Պատգամաւորական

ժողովը վերջնապէս վռնտեց այս խափանարարները եւ յծեցաւ Նոր Տիգրանակերտի չինութեան գործին:

Տիգրանակերտցիներու համար յիշատակելի թուական մը պիտի մնայ 1934, Յուլիս 12 թուականը, երբ հիմնարկեցաւ Նոր Տիգրանակերտը՝ «Այնպէսի խանդավառ ցոյցերով, որոնք բացառիկ էջ մը պիտի գրաւեն ամկականց, նոր աւանիներու կառուցման պատմութեան մէջ»:

Այժմ Նոր Տիգրանակերտն ունի երկու չէնքեր եւ երկու բնակատար ընդհատներ: Ուղարկած է նաեւ երկու դրամագլուխ, զգեստեղէնք եւ այլն: Երեւանէն ջուր տանելու համար դէպի Նոր Տիգրանակերտ, յատկացած է 2,000 տոլար: Մինչեւ հիմա մեր ուսանի չինութեան համար տրամադրած է աւելի քան 13,000 տոլար:

Ս. Հայաստանէ ստացած տեղեկութեանց համաձայն, յատկապէս ներգաղթի կարաւանով 12 Տիգրանակերտցի ընտանիքներ պիտի մեկնին Ջըրախանայէն:

Միութիւնս ունի իր պաշտօնական պարբերաթերթը — «Նոր Տիգրանակերտ»ը, նախապէս «Տիգրիս» — որ մերթ ընդ մերթ կը հրատարակէ:

Բացած է 25,000 տոլարի հանգանակութիւն մը, որուն դրկավարութեան համար կազմակերպուած է Հանգանակիչ Ճանճախումբ մը, «Շինենք Նոր Տիգրանակերտը Ս. Հայաստանի մէջ» կարգախօսով:

ՏԻՐԱՆԱԿԵՐՏԻ Հ. ԵՒ Վ. ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵՆԴ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԲԱԼՈՒԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐ ԲԱԼՈՒՆ

Ամերիկայի ՀՕԿ–երու կեդրոնական Վարչութիւնը իր յաղթական գործունէութեան տասներորդ տարեդարձին առթիւ կը հրատարակէ «Վերելք»ը: Այս առթիւ, չատ մը այլ Մօրհրդային Հայաստանի անվերապահ բարեկամ հասարակական կազմակերպութիւններու չարքին մեր ջերմ ողջոյնները կ'ուղարկենք ՀՕԿ–ի կեդր. Վարչութեան:

ԲԱԼՈՒԻ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԻՒՆ
Քարտուղար՝ Ս. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Բալուի Միութիւնը կազմուած է 19–րդ դարու վերջերը: Այս ժամանակաշրջանին Միութիւնը կրած է ժամանակին համապատասխան անուններ, — դպրոցասիրաց, ուսումնասիրաց, հայրենակցական եւ վերաբնակ, եւ այլն:

Պատմութեան ասպիճանական զարգացման այս ընթացքը ցոյց կուտայ, որ Բալուցին միշտ հաւատացած է կազմակերպուած ուժին եւ հաւաքական աշխատանքին:

Առաջ որպէս գործնական ապացոյց, այսօր մեր Մօրհրդային Հայրենիքին մէջ, Նուպարաշէնի մօտ ունինք 96 անհատներով «Նոր Բալուն», որ կենդանի վկան է մասնաւորապէս երիտասարդ սերունդի գործունէութեան ու պիտակցութեան ասպիճանին:

Բալուի նոր սերունդը, որպէս կազմակերպուած այժ, հրապարակ եկաւ 1923 թուականին: Իր կազմութեան նախընթացին, Միութեան նպատակը գուտ մշակութային էր: Ճեռագային անոր վրա աւելցաւ նաեւ չինարարականը, այս էր Մօրհրդային Հայաստանի պայծառ իրականութեան պահանջը:

Երբ Հայաստանի Օգնութեան Կոմիտէն (ՀՕԿ) Մօրհրդային Հայաստանի մէջ հիմնադրեցաւ եւ սկսաւ բոլոր գաղութներուն մէջ իր ճիւղերը արձակել, Բալուցի երիտասարդութիւնը անգամ խանդավառեցաւ, որ Մօրհրդային Հայաստանի մէջ Նոր Բալուն հիմնելու նպատակին առաջնութեան աւաւ հետեւեալ նշանաբանով. «Նոր Բալուի շինարարութեան գործիզ կանգնիլ ճիւրապէս եւ բարոյապէս»:

«Նոր Բալուի մէջ հիմնել զրադարան–ընթերցարան»:

Մեր յատկապրան այս նպատակներէն որոշ չափով, թէեւ ոչ լրիւ, իրականացած են այսօր:

Ամերիկայի չրջանին մէջ ունեցած մեր երկու մասնաճիւղերը (Նիւ Եորք եւ Փրավիտենս) բոլոր Բալուցիներու զուրգուրանքին առարկան գարձած են այսօր: Նոյնպէս Ֆրանսայի մէջ մեր երիտասարդութիւնը կազմակերպուած է «Բալահովտի Հայոց Վերաշինական Միութիւն» անուն տակ, որ իր գործօն մասնակցութիւնը կուտայ մեր Մօրհրդային Հայրենիքի չինարարութեան վրա գործին: Այս բոլորէն յետոյ, ասկայն, դեռեւնք թէ տակաւին կազմակերպական հակա աշխատանքներ ունինք կատարելիք,— միաձուլել բոլոր Բալուցիական միութիւնները շինարարական դրօշի տակ, վստահեցնել եւ ձեռնհաս դեկավարներու առաջնորդութեամբ Նոր Բալուը յանկարաճեմեցնել հանգիստ բարձրացնել եւ գրադարան–ընթերցարանի կառուցումը իրականացնել:

Ահա մեր անմիջական ընելիքները:

Դէպի գործ:

Քարտուղար՝ Ս. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԱԼԱԹԻՈ ԿՐԹ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Մալաթիա Կրթասիրաց Ընկերութիւնը հիմնուած է 1904-ի սկիզբը Նիւ Եորքի մէջ, նպատակ ունենալով հիմնել ազգային բարձրագոյն դպրոց մը Մալաթիա.մէջ։

Սոյն ազդասիրական վեհ նպատակը իրագործելու համար Կրթասիրացի կանանցմէջը կը պատասխանէ Ընկերութիւնը — ունենալ սեփական շէնք, մէկ կողմէն այդ շէնքի հասոյթներով Ընկերութեան կրթական գործին մղում տալու, մէս կողմէն ամերիկահայոց Մալաթիացիները բոլորելու անոր չուրջ։

Այս նպատակաւ, առաջին պատեհութեամբ, ուսն մը գնուեցաւ Վեսթ Հոպոքընի մէջ (այժմ Իւնըն Սիթի), Նիւ Ձըրզի։ Յետագային այս շէնքը ծախելով Ընկերութիւնը գնեց երեք յարկանի շէնք մը Նիւ Եորք քաղաքի մէջ, որ կը մնայ Ընկերութեանս եկամտաւէտ գլխաւոր ապրիւրը։

Համաշխարհային պատերազմի հետեւանքով, ապահովութեան մը հիմնելու հարցը իրականութեան չէր գար։

Այդ գժբախտ օրերուն, Ընկերութիւնս, որպէս հայրենակցական կազմակերպութիւն մը, իր եղբայրական ձեռքը երկարեց հալածանքներէ եւ ջարդերէ ազատուդաւած իր հայրենակիցներուն։ Կամաւորական չարժման չրջանին, Ընկերութիւնս փրկարար դեր մը կատարեց, տալով 35,000 տարբի օգնութիւն Իթիհատական բռնապետութեան վախճանական տարիներ Մալթիացի բնակիչներուն, որոնք հետզհետէ ազատուած գտած էին Մալթա եւ Պուխտերի մէջ։ Զանոնք պատսպարելու համար Հալէպի մէջ վարձեցինք երկու շէնք եւ բացինք սեփական գպրոց մը մօտ 250 աշակերտներով, իսկ Պէյրութի մէջ գնեցինք սեփական տուն մը, ուր մինչեւ այսօր կտրօտ Մալթիացիները կը պատսպարուին։

Հայկական վերածնունդի առաջին օրերուն իսկ, տեսնելով հայրենիքի լուսաւոր իրականութիւնը, իրատես մեր Ընկերութիւնը, առանց վարանումի, ուխտեցաւ աւելի սրբազան շահերուն ու իր համեստ մասնակցութիւնը բերաւ աւելի շինարարական աշխատանքներուն։

Ընկերութեանս Քրէնըլինի պատգամաւորական ժողովը, 1924-ին, սկզբունքով ընդունեց եւ Քլիվլենտի պատգամաւորական ժողովը, 1925-ին, որոշեց եւ հրահանգեց գործնական քայլեր առնել ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՒ ՆՈՐ ՄԱԼԱԹԻԱՆ ԱՒՐԻՊԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ։ Եւ իրր արդիւնք, մեր հայրենասիրական աշխատանքներուն, 1927-ին ՆՈՐ ՄԱԼԱԹԻՈ ՀԻՄԻ ԴՐԻԵՑԱՒ հայրենի հողին վրայ։

Եւ այսօր Նոր Մալաթիոյ իրականութիւնը բազմերիւր օրինակ մը կը պարզէ Մալաթիացիներու գոհաբերող ոգիին եւ ազգային գիտակցութեան։ Նոր Մալաթիան, օր բան օրէ կը յառաջդիմէ ու կը մեծնայ, եւ նախանձելի դիրք մը կը գրաւէ նոր ուսանելու կարգին։

Ընկերութիւնս, վերջին ութ տարուա միջոցին, Նոր Մալաթիա չհիմնելէնդ, գաղթականներու վերաբնակութեան եւ յարակից ծախքերու համար յատկացուցած է աւելի քան 75,000 տոլարի պատասխանելի գումար մը։ Նոր Մալաթիա մէջ կան 22 շէնքեր, մօտաւորապէս 250 բնակչութեամբ։ Ունի հիւանդանոցներ — գուլպայի գործարան եւ կօշիկի արհեստանոց, ճաղարանոց, ներկատուն, չրմամի գործարան, ինչպէս նաեւ դպրոց, մանկապարտէզ, արհեստական լիճ, հանրային պարտէզ, ակումբ եւ ուրիշ կայան։

1934-ին, մանանձիղերու եւ անդամներու ժրաջան աշխատանքով ու անհուն զոհաբերութեամբ հանգանակեցաւ 5,000 տոլար Նոր Մալաթիա ջուրի խողովակներուն համար։ Խողովակներու տեղադրման աշխատանքներն արդէն սկսած են 2Ծ4-ի Դրխաւոր Վարչութեան ձեռք առած միջոցներով։

Ընկերութիւնս Լիւնինականի եւ Շերակի երկրաշարժի տուիով, օգնութեան հասաւ 1250 տոլարով։

Յառաջիկա գարնան, մեր բարերար կառավարութեան պատուհասմբ, պատասխանելն Նոր Մալաթիա կը փոխադրուին 33 Մալաթիացի ընտանիք, մօտ 100 անձինք։ Ընկերութիւնս այս գաղթականներու ծախքը պիտի հոգայ իր սեփական միջոցներով։

Ընկերութեանս ծախքերով երկու ուսանող կ'ուսանին Հայաստանի Պետական Համալսարանին եւ մէկ ուսանող՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ։ Հայաստանի մէջ մէկ-երկու ուսանողներ եւս կ'օգտուին կրթասիրացի բարոյական եւ նիւթական աջակցութենէն։

Զանազան վայրերու մէջ Ընկերութիւնս կը նպաստէ թէւտ հայրենակիցներու։

Ընկերութիւնս ունի աւելի քան երեսուն մասնաճիւղեր Ամերիկա, Ֆրանսա, Մարսիլ եւ Պուխտերի։

Կրթասիրացի իր հիմնարկութենէն ի վեր ուղեցած է քառորդ միլիոն տոլարի գործառնութիւն։

Ընկերութիւնս իր ամբողջ հարստութիւնը կազմած է Նոր Մալաթիա համայնքի կրթական գործերուն։

Մալաթիա Կրթասիրաց Ընկերութիւնը ի նպաստ հայրենիքի վերելքին իր կատարած չինարար աշխատանքով եւ ի յայտ բերած գործնական արդիւնքներով կը պատկերացնէ ճշմարիտ եւ անկեղծ հայրենասիրութեան տիպար մը։

Իր բոլոր պատմական մարմիններու, ասանց նիւթական ակնկալութեան, անձնիրաբար կը ծառայեն եւ Ընկերութեան գործերը կը կատարեն առանց աւելորդ ծախսերու։

ՄԱԼ. ԿՐԹ. ԸՆԿ ԿԵՆՏՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկահայ ժողովրդական Առաջին Պատգամաւորութիւնը Երեւանի մէջ, Առաջին Շարքին վրա մէջտեղը նստած է Ընկ. ԴՐԻՒՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Խորհրդային Հայաստանի հանդէպ ամերիկահայութեան մէջ աճող հետաքրքրութեան եւ համակրանքի, ու խորհրդային հայաստանեան զոյգ կազմակերպութեանց, ՀՕԿ-ի եւ ՊՀԿՄ-ի, ձեռնարկութեան դնահատելի մէկ պտուղն էր Ամերիկահայ Առաջին ժողովրդական Պատգամաւորութիւնը: Տարիներէ ի վեր Խորհրդային Հայաստանի ամերիկահայ բարեկամները՝ պատգամաւորութիւններ ղրկելու մասին մտածած էին: ՀՕԿ-ի եւ ՊՀԿՄ-ի վերջին համագումարները որոշում անցուցին՝ ժողովրդական բոլոր խաւերը ներկայացնող պատգամաւորութիւն մը ուղարկել Խորհրդային Հայաստան, անոր տանեւէնգամեայ յոբելեանին առթիւ:

1935 Սեպտեմբեր 11-ին Ամերիկայի ՀՕԿ-ի կեդրոնական Վարչութիւնը հրաւէրներ ղրկեց Ս. Հայաստանի բարեկամ բոլոր կազմակերպութիւններուն, որ իրենց մտահոգութիւնը բերեն ժողովրդական պատգամաւորութեան: Մէկ ամսուա կարճ ժամանակի ընթացքին կազմուեցաւ 34 հոգինոց լայն պատգամաւորութիւն մը, որը անհերքելի ապացոյցն է ժողովրդական լայն խաւերու մէջ Ս. Հայաստանի հանդէպ աճող համակրանքին:

Ամերիկահայ Առաջին ժողովրդական Պատգամաւորութեան մասնակիցներն.—

ՀՕԿ-էն՝ Սահակ Զիլեան, Մարաբրոս Ճամեան եւ Յովհաննէս Մկրտչեան:

ՊՀԿՄ-էն՝ Բժիշկ Արշաւիր Իշխանեան, Յովհաննա Պետրոսեան եւ Արշալոյս Փիլաֆեան:

Երեւան-ՀՕԿ-էն՝ Ճորճ Գասարճեան:

ՀԱՄ-էն՝ Նազիկ Մուշեղեան:

Սերտասիս Վերաշինող Միութենէն՝ Հրանդ Մեսիայեան:

Սերտասիս Այգ Միութենէն՝ Մեսրոպ Պաճաքեան:

Արարկիրի Միութենէն՝ Կարապետ Մխալեան, Ամենակ Ճավեան եւ Տիրուհի Ճավեան:

Արագած Արտեզէն՝ Համբարձում Սիմոնեան:

Կիւրինի Հայրենակցական Միութենէն՝ Լեւոն Հէքիմեան եւ Յարութիւն Վէրդիբեան:

Համաքղեցիականէն՝ Արտաւազդ Զիլեան:

Կեսարիա Վերաշինողէն՝ Աստուած Թօփալեան:

Տիգրանակերտի Հայրենակցական եւ Վերաշինական Միութեան կողմէ՝ Յովհաննէս Տիքիճեան:

Համակեսարացիականէն՝ Յովհ. Թաշճեան:

Մալաթիա Կրթասիրաց Ընկերութենէն՝ Յ. Սբպազոյճեան, Փարիզէն:

Վասպուրական Միութենէն՝ Պարոնիկ Պարոնիկեան:

Անհատապէս՝ Անդրանիկ Անդրէասեան, Աթքանդը Գլըճեան, Վարդուհի Երիզոբեան, Սի-

ման Զրավեան, Լիպարիա Սկյլանեան, Փոլ Դարաեան, Տիկին Բիլարճեան, Զաւթի Բիլարճեան, Յակոբ Հացապոդճեան, Սարգիս Վարոյր, Սարգիս Տէրաէլեան եւ Տիկին Թեոբոլեանա Բիա:

Պատգամաւորներու առաջին եւ կարմակերպական ժողովը գումարուեցաւ Հոկտեմբեր 16–ին, Ա–մերիկայի ՀՕԿ–ի կեդրոնական Վարչութեան Գրասենեակը, Նիւ Եորք: Պատգամաւորութեան նպատակի եւ ընելիք գործերու մասին զեկոյցներ տուին ՀՕԿ–ի եւ ՊՀԿՄ–ի պատասխանատու քարտուղարները, Սարգիս Գասպարեան եւ Յակ. Յովհաննեան: Կարմակեցան ինչ յանձնախումբեր մասնաւոր ուսումնասիրութեանց համար եւ ընթացան նախապատրաստութիւն մը, հետեւելով կարգով՝ ընդհանուր գործը զեկավարելու համար.— Նախագահ՝ Սահակ Զիչեան, փոխ–նախագահ՝ Մարտիրոս Ճավեան, քարտուղար՝ Բժ. Ա. Իշխանեսեան, փոխքարտուղար Աղբրանիկ Աղբրեսեան, գանձապահ՝ Համբարձում Սիմոնեան, անդամներ՝ Մեսրոպ Պաճադեան, Լեւոն Հէքիմեան, Հրանտ Մեսխեան եւ Ովսաննա Պետրոսեան:

Բազմաթիւ գործերուն մէջ որուն ողջերթի ցնծագին, յուզող եւ խանդավառ հաւաքոյթներէն վերջ՝ Նիւ Եորքի մէջ որեւցաւ մէկ ընդհանուր ողջերթի երեկոյի ՀՕԿ–ի, ՊՀԿՄ–ի եւ երիս–ՀՕԿ–ի Նիւ Եորքի մասնաճիւղերուն կողմէ, Հոկտեմբեր 16–ի իրիկունը:

Այդ հանդիսաւոր երեկոյին պատգամաւորութեան յանձնեւեցան բազմաթիւ նէյերներ Մարտ. Հայաստանի զանազան հաստատութեանց համար, հինգ հազար տոլարի չէք մը՝ Խորհրդային Հայաստան Օգնութեան Ֆոնդին, չորս հատ մանրագիտակ՝ Գիւղատնտեսական Համալսարանին համար, վիրաբուժական գործիքներ, ֆիլմ, ցուցադրիչ մեքենա, եւ այլն, ՀՕԿ–ի եւ ՊՀԿՄ–ի կեդրոնական Վարչութեանց կողմէ: Պատգամաւորները հանդիսաւոր խոստում տուին ջանք չխնայել ամերիկահայ գաղութի ակնկալութիւնները արդարացնելու համար:

Հոկտեմբեր 17–ին, պատգամաւորութիւնը մեծ ցոյցերու, սիրտ յուզման եւ խանդավառութեան ալիքներու մէջ, Համբա եւլաւ դէպի մեր խորհրդային հայրենիքը, Աբուլհոնիա չոգենաւով:

Նոյեմբեր մէկին Լենինկրատի նաւահանգստին մէջ Խորհրդային Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ, ընկ. Գ. Յովհաննիսեան դիմաւորեց ժողովրդական պատգամաւորութիւնը, որ այդ օրէն սկսեալ արձանացաւ փառաւոր եւ սիրալիր ընդունելութեան Խորհրդային մեծ Միութեան սահմաններուն մէջ: Պատգամաւորութիւնը Լենինկրատի մէջ հիւրասիրեցաւ Համամիութենական Վաստակաւոր Դերասան Վահրամ Փափազեանի «Օթելլոյի» ներկայացման եւ թէյասեղանին: Մոսկվայի մէջ իրենց ի պատիւ արուեցաւ գեղարեւստական երեկոյի Հայ արուեստագէտներու, մտաւորականներու եւ ուսանողներու կողմէ: Ճաւաւկ տեղ տուեցաւ կարմիր Հրապարակին վրա Խորհրդային Միութեան 18–րդ տարեդարձի տօնակատարութեան մասնակցելու: Ճաշկերոյթներ տուեցան ՀՕԿ–ի Դլխաւոր Վարչութեան, Թրոզներու Միութեան, Նոր Սեբաստիա, Նոր Աբարկիրի, Արդնի Ամարանոցին, Քանաքեռի Ելեքտրակայանի, Դավալուի Սիմենտի գործարանին, եւ շատ մը ուրիշ հաստատութեանց կողմէ:

Պատգամաւորութիւնը յատուկ ընդունելութեան արժանացաւ՝ Խորհրդային Հայաստանի կեդրոնական Գործադիր Կոմիտէի Նորելեանական Հանգիստեան Նիստին: Խորհրդային Հայաստանի Նախագահ ընկեր Սերգէյ Մարտիկեան եւ Կոմունիստ Կուսակցութեան պատասխանատու քարտուղար ընկեր Ազատ Յանջեան, Անդրկովկասի Ժող. Կոմիսարներու Խորհուրդի նախագահ Մուսաբեկով, եւ Վրաստանի Ժող. Կոմ. Խորհուրդի նախագահը ընդունեցին մեր պատգամաւորները եւ յատուկ ունկընդրութիւն ունին: Անոնք ամեն տեղ արժանացան ընկերական, եղբայրական հարազատ վերաբերմունքի: Անոնք այցելեցին Խորհրդային Հայաստանի զանազան կողմերը, տեսան բազմաթիւ հաստատութիւններ, գործարաններ, պղպջոցներ, համալսարան, հաւաքական տնտեսութիւններ, նոր ուսաններ, թանգարաններ, թատրոններ, օպերա, տեսնելեան ամեն կարգի մարզերց հետ, այցելեցին բարեկամներու, տեսան անոնց կեանքը, մէկ խօսքով անոնք ծանօթացան Խորհրդային Հայաստանի ժողովուրդի աշխատանքին, ունեցերուն, գժուարութեանց, նւամումներուն, կեանքին եւ յոյսին:

Պատգամաւորութիւնը մասնակցեցաւ Հայաստանի Խորհրդայնացման տասն եւ հինգերորդ յոբելեանական տարեդարձի տօնակատարութեան: Տեսաւ բանուորին, գիւղացիին, ուսանողին եւ կարմիր բանակին յաղթական երթը, ուրախացաւ, խանդավառեցաւ իր հարազատ եղբայրներու երջանկութեան ի տես: Եւ մէկ ու կէս ամիս Խորհրդային մեծ Միութեան, պայքարի, նւամումներու, յառաջդիմութեան եւ նոր մարդավարի ընկերութիւնը կերտող երկիրը ուսումնասիրելէ վերջ՝ անոնք վերադարձան արտասահման: Ընդունելութիւններ՝ Փարիզ, Նիւ Եորք, Պոսթոն, Ֆիլատելֆիա, Փրավիդենս, Տիթրոյթ, Շիքագօ, Լոս Անճելես, Ցրէզնօ, եւ վերջապէս ամեն տեղ:

ՀՕԿ–ի ԼՈՎԵԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ

(ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՋԵԿՈՅՑԸ)

Ընկերներ եւ Հայրենակիցներ,

Կը վերադառնանք մեր սիրելի եւ սքանչելի Սորփրդային Հայրենիքէն:

Զեզ ողջունելով Սորփրդային Հայաստանի, Մեղրկովկասեան Ֆետերացիայի եւ խորհրդային մեծ ժողովուրդներու կողմէ, մեր պատգամաւորութիւնը իր առաջին եւ ուղղ պարտականութիւնը կը նկատէ զեկուցանել խորհրդային պայծառ իրականութեան մասին:

Մեր պատգամաւորութիւնը, որ կը ներկայացնէր ամերիկահայութիւնը Սորփրդային Հայաստանի եւ բովանդակ Սորփրդային Միութեան սահմաններուն մէջ, ծանօթ էր որպէս Ամերիկահայ Առաջին Ժողովրդական Պատգամաւորութիւն: Անիկա իր այդ կոչումը լիովին կ'արդարացնէր իր անձնակազմով, որ բաղկացած էր բազմաթիւ հասարակական եւ հայրենակցական կազմակերպութիւններու ներկայացուցիչներէ, ինչպէս նաեւ Սորփրդային Հայաստանի նկատմամբ բարեացակամօրէն տրամադրուած կազմակերպութիւններու պատկանող անձնաւորութիւններէ:

Մեր պատգամաւորութիւնը սկիզբը դարձաւ Ամերիկայի մէջ ժողովրդական համագործակցութեան: Պատասխանելով ՀՕԿ-ի եւ ՊՀԿՄ-ի կեդրոնական Վարչութիւններու հրաւէրին, 14 կազմակերպութիւններ ընտրած էին իրենց ներկայացուցիչները: Մենք, վերադառնալով Սորփ. Հայաստանէն անհունօրէն խանդավառուած եւ ամրապնդուած հաւատքով, պատճառ ունեցանք նաեւ խանդավառուելու, ուրք դնելով Նիւ Եորքի նաւամատոյցը:

